Հ. ԱՄՍՈՅԱՆ

ՍՈՍԿՈՍՏՄ
ՀԵՐՊԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ

Գիրքը հրատարակվում է
ԳԱԼՈՒՍՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ
հիմնարկության հովանավորությամբ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

YEREVAN STATE UNIVERSITU

Г. АЧАРЯН

ПОЛНАЯ ГРАММАТИКА АРМЯНСКОГО ЯЗЫКА

В СРАВНЕНИИ
С 562
ЯЗЫКАМИ

СЕМАНТИКА, ЛЕКСИКОЛОГИЯ,

СИНТАКСИС

H. ATCHARYAN

UNIVERSAL GRAMMAR OF ARMENIAN

IN COMPARISON
WITH 562
LANGUAGES

SEMANTICS, LEXICOLOGY,
SYNTAX

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
YEREVAN UNIVERSITU PRESS

ЕРЕВАН – 2005 – YEREVAN

ՅՍՅ.198.1

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

Ա II
90693

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ
562
ԼԵԶՈՒՆԵՐԻ

ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՌԱՖՆՈՒԹՅՈՒՆ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2005

ՀՏԴ 809.198.1
ԳՄԴ 81.2Հ
Ա 501

Տպագրության պատրաստեցին
և խմբագրեցին՝
«Իմաստասիրություն»
«Բառաքննություն» պրոֆ. **Ս. ԳԱԼՍՏՅԱՆ**
«Շարահյուսություն» պրոֆ. **Խ. ԲԱԴԻԿՅԱՆ**

Աճառյան Հրաչյա
Ա 501 Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզուների)։ – Եր.։ ԵՊՀ հրատ., 2005, 352 էջ։

Հատորը ընդգրկում է Հր. Աճառյանի անձնական արխիվի այն ամբողջ նյութը, որի հիման վրա վերջնական ձևավորում պիտի ստանային «Լիակատար քերականության» վերջին երեք հատորները։ Դրանք, ըստ նախնական պլանավորման, պետք է նվիրված լինեին իմաստասիրության (8-րդ հատոր), բառաքննության, այդ թվում նաև բառակազմության (9-րդ հատոր) և չարահյուսության (10-րդ հատոր) խնդիրների աճառյանական լուսաբանմանը։ Հատորում պահպանված է նյութի բաշխումը ըստ նշված երեք բաժինների։

4602020100
Ա ———— 2005 թ. ԳՄԴ 81.2Հ
704(02)05

ISBN 5-8084-0697-8

© ԵՊՀ հրատարակչություն, 2005 թ.
© Հր. Աճառյան, 2005 թ.

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ «ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ» ՄԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ «ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՌԱՔՆՈՒԹՅՈՒՆ, ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՏՈՐԸ

Հր. Աճառյանը իր կյանքի վերջին տարիներին վատառողջության և տեսողության խիստ վատթարացման պատճառով զրկված էր աշխատելու հնարավորությունից և ինչպես մյուս լեզվաբանական աշխատությունների, այնպես էլ «Լիակատար քերականության» տպագրության պատրաստելն ու հրատարակելը հանձնարարել էր կատարելու իր գիտական ժառանգորդին՝ ակադեմիկոս Էդ. Աղայանին, որի մեղվաջան աշխատանքի շնորհիվ լույս տեսան նախնական պլանավորմամբ 10 հատորներից 7-ը՝ 8 գրքով՝ նախատեսվածից փոքր-ինչ փոփոխված հաջորդականությամբ: Ըստ որում՝ Էդ. Աղայանը հարկ է համարում նշելու, որ եթե տպագրված հատորների նյութերը «հիմնականում ավարտված էին և հրատարակության համար կարիք ունեին միայն մասնակի լրացումների», ապա «վերջին երեք հատորները (շարահյուսություն, բառաքննություն, իմաստաբանություն) ներկայացնում են անմշակ նյութեր» («Լիակատար քերականություն. ներածություն», էջ XVII):

Համալսարանի հրատարակության կողմից առաջարկություն ստանալով նախապատրաստելու 8–10-րդ հատորների նյութերը Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հովանավորությամբ հրատարակելու նպատակով և խոր ակնածանքով ձեռնարկելով այդ գործը՝ մենք, առաջին հերթին, Հր. Աճառյանի դստեր՝ Քնարիկի միջոցով պարզեցինք, որ հեղինակի անձնական արխիվում պահպանվել են նշված բոլոր երեք բաժինների մեքենագրված օրինակները՝ տարբեր ձեռագրերով կատարված որոշ հավելումներով և ուղղումներով:

Միաժամանակ մեզ տրամադրվեցին նաև «Բառաքննություն» և «Շարահյուսություն» բաժինների ձեռագրերը, մեծ մասը հենց իր՝ Հր. Աճառյանի ձեռքով գրված, մյուսները՝ նրա հանձնարարությամբ մեր վաղամեռիկ երջանկահիշատակ ընկերոջ, երկար տարիներ Հր. Աճառյանի կամավոր ու անշահախնդիր օգնական Գրիգոր Գարեգինյանի կողմից ջանասիրաբար ու հատիկ-հատիկ արտագրված: «Իմաստաբանություն» բաժնի հեղինակային ձեռագրերը չգտնվեցին ցայսօր:

Հր. Աճառյանի ձեռագրերը բանասիրական ու տեքստաբանական հատուկ ուսումնասիրության են արժանի, բայց այդ մեր այսօրվա նպատակից դուրս է:

Հայտնի է, որ բազմավաստակ հայագետը «Լիակատար քերականություն հայոց լեզվի» բազմահատոր մենագրության վրա աշխատել է շուրջ քառասուն տարի, և մեր ձեռքի տակ եղած ձեռագրերը՝ «ստանդարտ» թղթերի երկծալ պատառիկները, անտող և տողավոր տետրերի էջերն ու բազմագույն կազմերը, իր՝ մոմաթղթով բազմացված աշխատությունների չօգտագործված էջերի հակառակ «ազատ» երեսները և նույնիսկ՝ «Արմատականի» առաջին հրատարակության

հերթական հատորը հանձնելիս բաժանորդներից ստացված բաժանորդագնի (1 ռուբլի) ստացականները ևն, իրենց վրա կրում են այդ չորս տասնամյակների տառապանքների և արարումների կնիքը: Դրանք աճառյանական լեզվաբանության ստեղծման կենդանի վկաներն են:

Մեքենագրվելուց առաջ Հր. Աճառյանի ձեռագրերը էջակալվել են, բայց, ցավոք, նյութերը ըստ բովանդակության խստիվ չբաշխելով ըստ երեք թեմաների (իմաստաբանություն, բառաքննություն, շարահյուսություն). շատ են նաև ներբաժնային խախտումները, որի պատճառով նույնիսկ նույն վերնագիրը կրող մասերը մեքենագրելիս հայտնվել են տարբեր տեղերում:

Մի բան ուրախալի էր. բնագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ, բարեբախտաբար, վերջին երեք հատորների բոլոր մասերը չէ, որ «անմշակ նյութեր են»: Դրանց զգալի մասը՝ հաճախ ամբողջական թեմաներ, բաժիններ, հեղինակի կողմից վերջնականապես մշակված ու մաքուր արտագրված են, պատրաստված հրատարակության, կամ էլ արդեն նախապես հրատարակվածի համառոտումը, ընդարձակումը կամ վերաշարադրանքն են, թեև բավականին շատ են նաև տարբեր ժամանակներում բազմաբնույթ թղթերի ու թղթիկների վրա Հր. Աճառյանի ձեռքով կատարված դիտարկումներն ու քաղվածքները՝ գրավոր, հաճախ նաև բանավոր տարբեր աղբյուրներից, նշումները, կոնսպեկտներն ու պլանները...

Մեքենագրության համար էջանշված ձեռագրերի թեմատիկ ոչ լիակատար խմբավորումն ու դասդասումը նկատի ունենալով՝ մենք շատ հատվածների ու դիտարկումների տեղափոխություն-վերաբաշխում ենք կատարել՝ միաժամանակ համեմատելով ձեռագրերի հետ, հասկանալի է՝ առանց հեղինակայինի որևէ փոփոխության: Եվ եթե, այնուամենայնիվ, խստագույն անհրաժեշտության դեպքում պատահականորեն բաց թողնված բառի հավելում, վերնագրի վերականգնում կամ նշում է կատարվել, այդ արվել է անկյունավոր փակագծի՝ [ ] մեջ, ինչպես էդ. Աղայանը՝ Հր. Աճառյանի մահից հետո իր հրատարակած հատորներում:

Հրաչյա Աճառյանի կատարած աշխատանքի գիտական արժեքը ըստ էության բնութագրված և գնահատված է առաջին հերթին նրա գիտական ժառանգորդի և մեր երախտաշատ ուսուցչի՝ ակադեմիկոս էդ. Աղայանի և շատ ուրիշների կողմից (տե՛ս, հատկապես, «Լիակատար քերականության» «Ներածությունը»), և մենք դրան չենք անդրադառնա:

Այս հատորի ընթերցողները պետք է նկատի ունենան հետևյալ մի քանի հանգամանքները:

ա. Տեսության մեջ Հր. Աճառյանը, Մ. Աբեղյանի նման, պաշտպանում էր այն տեսակետը, որ ածանցները, ինքնին վերցրած, աննշանակ՝ իմաստ չունեցող մասնիկներ են, բայց միայն տեսության մեջ: Սույն հատորի համապատասխան բաժիններում նա նշում է բազմիցս, որ «մասնիկները բազմազան նշանակություններ ունեն», ու մանրամասնաբար նկարագրում է դրանց առաջացման հիմնական ուղիներից մեկը՝ նյութական նշանակությամբ բառերի և արմատների վերածումը բառակազմական նշանակություն ունեցող մասնիկների՝ ինչպես հայերենում, այնպես էլ աշխարհի մի շարք այլ լեզուներում: Միաժամանակ հավաստի բազմաթիվ օրինակներով Հր. Աճառյանը ցույց է տալիս, որ, բառերի նման, ածանցները ևս կարող են լինել մենիմաստ և բազմիմաստ:

Միայն կարելի է ափսոսանք հայտնել, որ նա չհասցրեց ավարտել ու ամփոփել հայերենի կոնկրետ ածանցներին վերաբերող իր դիտարկումների բաժինը, բայց այդ վիճակում էլ այդ նյութերը արժեքավոր են, ու մենք զետեղում ենք դրանք հատորում որպես հավելված՝ վերադասավորելով տվյալները ըստ ածանցների սկզբնատառերի այբբենական կարգի:

բ. Բառապաշարի և հատկապես առանձին բառերի գործառական առանձնահատկությունների ու խոսքում ձեռք բերած լրացուցիչ նրբերանգների (դրական, բացասական ևն) մասին Հր. Աճառյանի դիտարկումների մի մասը կատարված է նկատի ունենալով իր ժամանակի՝ Խորհրդային Հայաստանի լեզվամտածողությունը և լեզվավիճակը: Այսօրվա ընթերցողը հեշտությամբ կկողմնորոշվի, որ **տերտեր, բուրժուա, պարոն** և նման բառերի մասին ասվածները լավագույն վկայություններն են այն բանի, թե աշխարհայացքի և հասարակական վերաբերմունքի փոփոխությունները ինչպես են ազդում բառիմաստի զգայական երանգավորման վրա՝ հաճախ պատճառ դառնալով նաև իմաստափոխության:

գ. Հր. Աճառյանը կարողանում էր լեզվաբանական ամենախորքին խնդիրները ներկայացնել բյուրեղյա պարզությամբ և չէր սիրում խաթարել համատեքստը տնաբույծ դժվարըմբռնելի գիտական եզրերով (տերմիններով): Բայց ներկայացվող հատորի նյութերից շատերը գրվել են ավելի քան կես դար առաջ, և, բնական է, որ օգտագործված եզրերի մի մասը հեղինակին ճիշտ հասկանալու համար լրացուցիչ մեկնաբանության կարիք ունի:

1. **Արմատ**-ը Հր. Աճառյանը գործածում է և՛ արդի նշանակությամբ (**կարդ**-ալ, տ-**կար**, **մտ**-ավոր ևն), և՛ որպես ածական՝ արմատական իմաստով («արմատ բառ»)՝ հաճախ վերջին նշանակությամբ նաև բուն՝ **արմատական** բառը դնելով: Բայց **արմատ**-ը Հր. Աճառյանի լեզվում ըստ տեղի նշանակում է նաև **նախագաղափար, բնիմաստ, առաջնային նշանակություն** (էտիմոն) («արմատ գաղափար»):

2. Այսօրվա **երկրորդական բառակազմական ձևույթ,** աբեղյանական **ածանց,** իմաստով Աճառյանը գերադասում է գործածել **մասնիկ,** տեղ-տեղ էլ՝ **ածանց:** Բայց **ածանց**-ը այս հատորում, **արմատ**-ի նման նաև ածական է («ածանց բառ» = ածանցավոր բառ): Հաջորդ նշանակությունն է՝ **ոչ առաջնային, բաղադրյալ, նախատիպ հիմք ունեցող, ուրիշ միավոր(ներ)ից առաջացած՝ կազմված,** այդ թվում նաև **բարդ** (որի մեջ ածանց առհասարակ կարող է չլինել) կամ **բուն ածանցավոր**՝ բառակազմական վերջին քայլում ածանցով բաղադրված («... արմատ բառերի դեմ ոչ ոք ոչինչ չունի, բայց ածանց բառերը շարունակ քննադատվում են»): Այս վերջին նշանակությամբ գործածված են նաև ածանցական, **ածանցյալ** ևն: (Հմմտ. նաև Էդ. Աղայանի դիտարկումը **բարդություն** եզրի մասին. «Լիակատար քերականություն...», հ. III, էջ VII):

3. Հր. Աճառյանը այս հատորում ևս **հնչյուն** իմաստով գործածում է **ձայն** եզրը և նրա բարդ ու ածանցավոր բաղադրությունները, ինչպես որ հրատարակված 6-րդ և մյուս հատորներում (ձայնաբանություն, ձայնախոսություն ևն): Այս հատորում երբեմն երևում է նաև **հնչյուն** եզրը: Բայց **ձայն** բառը այս հատորում գործածված է նաև **հնչյունախումբ, բառի հնչյունական ձև** նշանակություններով («**հարթ** ձայնը ունի երկու իմաստ...»):

Չենք կասկածում, որ ուշադիր ընթերցողը առանց լուրջ դժվարության ըստ համատեքստի կկողմնորոշվի, թե որ իմաստով է գործածված համապատասխան եզրը:

Մի քանի խոսք ձեռագիր-բնագրերի ուղղագրության վերաբերյալ: Նախ պետք է հիշենք պրոֆ. էդ. Աղայանի դիտարկումը, որ «սույն աշխատության վրա հեղինակը աշխատել է տասնյակ տարիներ, որի հետևանքով և ժամանակի կնիքը մնացել է նրա լեզվի վրա» («Լիակատար քերականություն», «Ներածություն», էջ XXXVI)՝ ավելացնելով միայն, որ ասվածը վերաբերում է հատկապես ուղղագրությանը: «Լիակատար քերականության» այս հատորի հեղինակային պահպանված ձեռագրերը (որոշ դիտարկումներ արված են արևմտահայերեն՝ ենթադրաբար Նոր Նախիջևանում ուսուցչության տարիներին) մեր ուղղագրության կեսդարյա վայրիվերումների կենդանի վկաներն են: «Բառաքննություն» և «Շարահյուսություն» բաժինների ձեռագրերի մի մասի ուղղագրությունը, բնականաբար, գրաբարյան է: Այս բաժինների՝ տպագրության համար պատրաստ ձեռագիր հատվածները, մասնավորապես՝ 1940-ից հետո գրվածները (այդ դժվար չէ որոշել մեջբերված օրինակների աղբյուրների լույս տեսնելու թվականների հիման վրա), նաև Աճառյանի հանձնարարությամբ արտագրվածները, շարադրված են նոր՝ բարեփոխված ուղղագրությամբ:

Սկզբնաղբյուրներից մեջբերումներ կատարելիս և օրինակներ դուրս գրելիս Հր. Աճառյանը, որպես սկզբունք, պահպանում է բնագրի ուղղագրությունը, բայց մեքենագրված տեքստում այն կատարողը ծգտել է բոլորը, հաճախ թյուրիմացաբար նաև գրաբարյանը, վերածել նոր ուղղագրության: Ավելորդ է ասել, որ մենք պարտավոր էինք գրաբարյան բոլոր օրինակներում և մեջբերումներում վերականգնել բնագրի՝ գրաբարյան ուղղագրությունը, ինչ որ արել ենք՝ հաճախ համեմատելով և ճշգրտելով դրանք ըստ սկզբնաղբյուրների (Աստվածաշունչ ևն):

Հր. Աճառյանի հեղինակային խոսքը բերվում է լույս տեսած մյուս հատորների ուղղագրությամբ:

Հավատում ենք նաև, որ ժամանակակից գրասերը՝ բարձր դասարանի աշակերտ լինի, ուսանող, ուսուցիչ, հայերենի մասին գրված գրքերը սիրով ընթերցող, թե Հր. Աճառյան–լեզվաբանով հետաքրքրվող, նրանից սովորել ծգտող ասպիրանտ ու գիտնական–հայերենագետ, ներկայացվող հատորում կգտնի հայոց լեզվի իմաստաբանությանը, բառապաշարին, բառակազմությանը և շարահյուսությանը վերաբերող արժեքավոր ու օգտակար շատ բան:

Ս. ԳԱԼՍՏՅԱՆ
Խ. ԲԱԴԻԿՅԱՆ

ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻՄԱՍՏ

Ինչպես բառի ձևը անփոփոխ չի մնում միշտ, այլ ժամանակի ընթացքում ենթարկվում է չարունակական փոփոխության, նույնպես և բառի իմաստը կամ նշանակությունը:

Լեզվաբանության այն ճյուղը, որ զբաղվում է այն հարցով, թե՝ ա) առարկաներն ու գաղափարները ինչ ձևով անուն են ստացել լեզվի մեջ և բ) բառերի իմաստը կամ նշանակությունը ինչ օրենքներով զարգանում ու փոփոխվում է ժամանակի ընթացքում, կոչվում է **իմաստաբանություն** *կամ* **իմաստագիտություն** (sémantique *կամ* sémasiologie):

Սահմանների այսպիսի բաժանումը ենթադրել է տալիս երկու տարբեր գիտություն, մին՝ բառերի հնարման գիտությունը, մյուսը՝ իմաստների փոփոխության: Բայց չատ հաճախ այս երկուսը նույնանում և միանում են իրար հետ: Օրինակ՝ երբ քաղաքավարության պահանջների համաձայն **«կինս»** *ասելու տեղ ասում ենք* **ընտանիքս,** *սրանով մի կողմից «կին» գաղափարի համար ստեղծեցինք մի բառ և մյուս կողմից* **ընտանիք** *բառի իմաստը փոխելով՝ դարձրինք «կին»: Երկու երևույթներ նույնացան և միացան:*

Նույնիսկ չատ հասարակ մի բառ, որ մեզ համար չատ սովորական իմաստ ունի, կամ կարծում ենք, որ ունի, հարուստ է բազմաթիվ նշանակություններով. օրինակ՝

Գլուխ՝ *մարդու, կենդանու, գրքի, սարի, փողոցի, սոխի, կաղամբի, սանդուղքի, իլիկի, նաև կարող է դառնալ ածական և նշանակել «գլխավոր, ընտիր, վարպետ, տեղյակ» և այլն, դարձյալ՝ «հերթ, անգամ, յուրաքանչյուր» նշանակությամբ գործածված:*

Բանալ–*ը կարելի է գործածել չատ ու չատ բառերի համար, որոնք ներկայացնում են տարբեր երևույթներ: Ինչպես՝ դուռը բանալ, բանալիով բանալ, գիրքը բանալ, ախորժակ բանալ, հանդեսը բանալ, արևը բացվել, եղանակը բացվել, ծաղիկ բանալ, հաշիվ բանալ, խոսք բանալ, ժողովը բանալ, միտքը բանալ, աչք բանալ, ճամփա բանալ, երես բանալ, լեզուն բացել...*

Ինչպես անկախ բառերը, նույնպես և մասնիկները բազմազան նշանակություններ ունեն և կարելի չէ նրանք մի գծի տակ դասավորել: Օրինակ, առնենք **–ություն** *մասնիկը, որ մեր լեզվի մեջ ամենից չատ գործածված մասնիկն է և ըստ երևույթին նշանակում է «վիճակ կամ հատկություն» (ինչպես՝ հիվանդություն, քաջություն): Բայց այս երկու հիմնական նշանակություններից դուրս, ինչքան տարբեր նշանակություններ ունի նա: Այսպես, կարելի է հիշել՝*

1) գործ. ինչպես՝ քննություն, մեկնություն, բացատրություն, բժշկություն...,

2) գործի արդյունքը. ինչպես՝ գրություն, աշխատություն, թողություն...,

3) հավաքական իմաստ, ամբողջություն. ինչպես՝ ընկերություն, մարդկություն, ազգաբնակչություն, ուսանողություն, բանվորություն և այլն:

Առնենք մի ուրիշ սովորական մասնիկ՝ **-ցի,** *որ գործածում ենք «բնակիչ» իմաստով. ինչպես՝ գյուղացի, քաղաքացի, կարնեցի, վանեցի, երևանցի, պոլսեցի:*

Բայց բացի այս սովորական նշանակությունից որքա՜ն տարբեր երանգ է ստանում նա և ինչքա՜ն տարբեր իմաստներ ստեղծում. համմտ.՝ ղրացի, աքացի, հայեցի, բերանացի, մտացի, բառացի...

*Կան մասնիկներ էլ, որոնք գործածում ենք իբրև հնից մնացած ավանդական մի բան, առանց գիտակցելու նրանց նշանակությունը, ինչպես՝ տես-***իլ,** *մթ-***ար,** *հավատ-***արիմ** *և այլն:*

-Անոց *մասնիկը ունի զանազան նշանակություններ. ինչպես՝*

1) *տեղ, վայր. օրինակ՝ փայտանոց, գործանոց, աշխատանոց, հարդանոց, գինեզմանոց, ածխանոց, մթերանոց, մսավաճառանոց, պահականոց...*
2) *Շոր կամ զգեստեղեն. օրինակ՝ գոգնոց, փաթթոց, գլխանոց, թիկնոց, օթոց, կրծանոց, ձեռնոց...*
3) *Զանազան գործիքներ. օրինակ՝ հովանոց, սղոց, խարտոց, մատնոց, ակնոց, հատոց...*
4) *Արժեք կամ չափ. օրինակ՝ երկուսանոց, երեքանոց, տասանոց, արշինանոց, կոպեկանոց...*
5) *Գիրք կամ մատյան. օրինակ՝ չարակնոց, գործոց (առաքելոց):*

Մասնիկների գործածության (այն է՝ կցման) եղանակն էլ հաճախ որոշ չէ: Ընդհանրապես ասում ենք, օրինակ, թե **-ություն** *մասնիկը կրում է ածականի վրա. այդպես են, օրինակ՝ մեծություն, լայնություն, հաստություն և այլն, բայց մյուս կողմից ունենք՝ ուսուցչություն, հայրություն, մսավաճառություն, վաճառականություն... Ասենք թե սրանք էլ կազմված են ածականաբար առնված գոյականներից: Իսկ ի՞նչ է* **իմաստություն,** *որ պիտի լիներ «իմաստունություն»: Այսպես նաև շատ ուրիշ մասնիկներ:*

Մասնիկները երբեմն կցվում են առանձին և երբեմն էլ՝ մի ուրիշ մասնիկի հետ միասին, և այն ժամանակ ստացվում է նշանակության տարբերություն կամ երանգ:

Համմտ., օրինակ՝

հաջորդություն և հաջորդականություն,
մահացու և մահկանացու,
անհամեմատ և անհամեմատելի,
անհավատ և անհավատալի:

Մասնիկը նույնն է, կցվում է միևնույն արմատին, բայց արմատը կարող է ըմբռնվել ներգործական կամ կրավորական. ըստ այսմ բառը ստանում է տարբեր իմաստ:

Օրինակ՝ **սպանություն** *նշանակում է թե «չարագործի գործած հանցանքը» և թե «դատապարտյալի կրած մահվան պատիժը»:*

Օրինակ՝ Ո՞վ կազմակերպեց Պապ թագավորի սպանությունը, Մուշեղ Մամիկոնյանի սպանությունը: Կամ՝ Մուրթուշահի սպանությունները չափ ու սահման չունեին:

Ժամանակի ընթացքում մասնիկն էլ կարող է իր նշանակությունը փոխել:

Օրինակ՝ **-ելի** *մասնիկը սկզբում նշանակում էր «գործող անձ», հետո դարձավ «գործածը», որ նախորդի բոլորովին հակառակն է: Այսպես՝* **ատելի** *նշանակում էր «ատող». Համմտ.՝ Մտթ., ե., 44. «Բարի արարէք ատելեաց ձերոց»: Այս գործածության արդյունք են՝* **հոսելի, ունելի,** *ինչպես նաև՝* **հոտոտելիք, չոշափելիք, տեսանելիք, ճաշակելիք, լսելիք** *և այլն բառերը: Իսկ* **-ելի** *մասնիկն ունեցող բառերի մեծագույն մասը այժմ հակառակն է. ինչպես՝ ատելի, փոփոխելի, ուտելի, սիրելի և այլն: Անտարբեր իմաստ ունեն՝ հայելի, գործելի «ածուխ» և նմանները:*

Այս բոլորի արդյունքը լինում է այն, որ երբ մեկը հորինում է մի նոր բառ՝ արդի պայմանների պահանջմամբ, հաճախ ուշադրություն չի դարձնում իմաստին, ընտրում է մի որևէ մասնիկ, բավական է որ ձևով դուրեկան, կոկիկ մի բառ ստացվի:

Այսպես, երբ 1946 թ. կարիք եղավ ռուս. **посол** *«դեսպան» բառի կողքին ստեղծել ռուս.* **посланник** *բառի համազորը, Գ. Ղափանցյանը հնարեց* **դեսպանորդ** *ձևը, որ անցավ լրագրության և բառարանների մեջ «երկրորդական պետության դեսպան» նշանակությամբ: Ուշադրություն չդարձվեց այն հանգամանքի վրա, թե ինչ նշանակություն ունի* **-որդ**-ը և ինչպիսի բառերի վրա է դրվում *(Համմտ.՝* **նախորդ, հաջորդ, հետևորդ, տասնորդ, հարյուրերորդ, որսորդ** *և այլն):*

ԲԱՌԻ ԻՄԱՍՏԸ

Շատ անգամ մարդիկ գործածում են մի բառ՝ առանց իմաստը իմանալու կամ մի անորոշ և ընդհանուր իմաստով, և կամ երբեմն էլ՝ անճիշտ: Օրինակ՝ ամենքս էլ ասում ենք **զահրումար, զահր զիսկում** *և գիտենք, որ վատ կամ անարգական բառեր են: Բայց չգիտենք, թե սրանք պարսկերեն բառեր են և նշանակում են* zahr-i mār *«օձի թույն»,* zahr-i zaqqūm *«թույն դափնիվարդի»* (oléandre), *որ, ըստ մահմեդականների, դժոխքում աճող մի բույս է, և որի դառն և թունավոր տերևներով պետք է ապրեն մեղավորները:*

Սրիկայ *բառը ՆՀԲ մեկնում է «գող, ավազակ, մարդասպան», բայց սրանք իրարից տարբեր բաներ են: Պոլսում այս բառով հասկանում էինք «կանանց հետ լպիրշ հարաբերություններ ունեցող մարդ», իսկ Կովկասում այժմ սրանից մեղմ իմաստ ունի: Որովհետև բառի ծագումը հայտնի չէ, ուստի բուն իմաստն էլ հայտնի չէ: (Ընկ. Գևորգ Ջահուկյանը ենթադրում էր, թե դա ասորերեն փոխառություն է, ինչպես ցույց է տալիս* **այ** *վերջավորությունը, և կապում էր արաբ. sāriq «գող» բառի հետ. սակայն ասորերեն բառարանում նման բառ չգտա)**:

Նման բաներ են նաև ռուսերեն նախալ, սվոլըչ և այլ բառեր, որոնք գործ ենք ածում առանց ճիշտ իմաստը իմանալու:

Իմաստի զարգացման հետաքրքիր օրինակ է ներկայացնում արաբ. Allah *«Աստված» բառը, որից կազմված են մի քանի բառեր և ձայնարկություններ: Սրանք արաբներենից անցել են պարսկերենին և թուրքերենին և սրանց միջոցով էլ՝ ժողովրդական հայերենին: Այսպես՝* Allah-*'ālim, բառացի նշանակությունը՝ «Աստված գիտուն», այն է՝ «Աստված է իմանում», որից՝ «ես չգիտեմ, կարծում*

* *Ակադեմիկոս Գ. Ջահուկյանի հիմնավորումը տե՛ս «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան», էջ էջ 460, 464, 479, 481, 484 (Ս. Գ.):*

ևմ, կարծեմ» (ռմկ. ալլահալէմ ձևով). ռուս.՝ **Бог** *ѣнает, երբեմն էլ արհամարհական ձևով՝* **чёрт его знает** *«սատանան գիտե նրան» (այն է՝ «չգիտեմ»):* Māšāllah *(հյ. մա՛չալլահ), որի բուն նշանակությունը՝ «ինչ որ Աստված կամենա», բայց գործածվում է իբր գովասանական բացականչություն «bravo!, կեցցես» իմաստով:*

Inšallah *«նթե Աստված կամենա». այս է բառիս բուն նշանակությունը: Բայց հետո փոխվելով դարձել է հաջողություն բարեմաղթելու ձև, իբր ռուս.* **дай Бог** *«մաղթում եմ, հաջողություն եմ ցանկանում, տա՛ Աստված, առաջ Աստված»: Հյ. կրքոտ ձևով ասում են նաև* **ի՛չալլահ:**

Bárakallah. *Պարսից Ատրպատականի թուրքերի գործածած ձևն է, որի բուն նշանակությունն է «օրհնեալ Աստված, Աստված օրհնի» և հետո իմաստի զարգացմամբ՝* «bravo, կեցցե» *և այս վերջին իմաստով գործածվում է նաև Կովկասի հայոց և հատկապես Ղարաբաղցոց մեջ:*

Yállah, *բուն նշանակությունը՝ «ո՛վ Աստված», հետո դարձել է բացականչություն «օհ, դևհ» իմաստով, որ է՝ «հայդա». գործածվում է նաև նախատական իմաստով՝ «գնա՛, դո՛ւրս, դո՛ւրս կորիր»:*

Լատիններեն album *(չեզոք ձևն է* albus *«սպիտակ») բառը նախապես նշանակում էր սպիտակ ներկված մի տախտակ, որի վրա արձանագրում էին թանաքով մագիստրատների անունները, տոները և այլն. վերջում դարձավ ամեն տեսակի ցուցակ:*

Լատիներեն calx *«կիր», որից* calculi *«խիճի կտորտանք», որոնցով երեխաներին հաշիվ էին սովորեցնում, որից և* calculus *«հաշիվ»:*

Հնխ. bhrātēr *եղբայր բառը չատ լեզուների մեջ (ինչպես և հայերենում) պահված է, միայն հունարենում դարձել է ἀδελφός, որի բուն նշանակությունն է «միափոր, համարգանդ, միևնույն արգանդից»: Սրա նման է նաև Թրք.* qardaš, *ավելի հին՝* qarəndaš, *որ կազմված է* qarən *«փոր»+*daš *կից «միասին» բառերից. սրա իգականն էլ լինում է* qəz-qardaš *«քույր» (բառացի՝ «աղջիկ-փորակից»):*

Ենթադրում եմ, որ այս բառաձևը արդյունք է այն ժամանակի, երբ հայրը մեկ էր լինում և ունենում էր մի քանի կանայք, որոնցից ծնված զավակները՝ թեև **համահայր,** *բայց զանազանվում էին միմյանցից իբրև համամայր կամ ոչ-համամայր: – Ձեղջման արդյունք է. իբր՝ եղբայր կամ քույր համամայր:*

ԻՄԱՍՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Կառափն *նշանակում է «գլուխ», որից ունենք կառափնատել. այս բառը այժմ նշանակում է «գլխատել», որից էլ կազմել ենք* **կառափնատ** *«կախաղան», բայց Մրկ. ԺԲ, 4 կարդում ենք, Դարձեալ առաքեաց առ նոսա այլ ծառայ, եւ զնա կառափնատեցին եւ արձակեցին անարգեալ:*

Սրանից երևում է, որ **կառափնատել** *չի նշանակում գլխատել, թեև* **-ատել-** *«կտրել» բայի հետ է բարդված, այլ՝ գլխին խփել: Մինչդեռ Մտթ. իէ, 33–34 կարդում ենք. Եւ եկեալ ի տեղին անուանեալ Գողգոթա, որ է տեղի կառափելոյ: Այստեղ էլ* **կառափել** *նշանակում է «գլխատել», թեև չկա* **-ատել** *բայը:*

Մորթել – *ծագում է* **մորթ** *բառից, և բուն նշանակությունն է «մորթազերծ անել, կաշին հանել». այս է նախնական իմաստը. հետո դարձել է* **սպանել, փողոտել,** *ինչպիսի իմաստով գործածվում է այժմ:*

Cabinet կաբինետ *ֆրանսերեն բառը ծագում է* cabine *«սենյակ» բառից, որի նվազականն է, բայց ստանալով զանազան երանգներ, դառնում է «առանձնասենյակ, գրասենյակ, գիտնականի աշխատանոց, մինիստրների կաբինետ» և վերջապես՝ «տնային արտաքնոց»:*

Անգլերեն closet*-ը «ներքնասենյակ» փոխ է առնված ֆրանս.* clos, close *«փակ տեղ» բառից, իսկ նրանից կազմված է անգլերեն* water-closet, *որ նշանակում է «ջրով արտաքնոց»՝ կազմված* water *«ջուր» և* closet *բառերից:*

Ֆրանս. chanter *«երգել», փխբ. «հիմար-հիմար խոսել», ինչ.՝* qu'est-ce que vous chantez? *«ինչ ես հիմար-հիմար դուրս տալիս»: Նաև՝ «մեկին խաբել, խարդախել», որից և* chantage *«խարդախանք», որ գործածական է նաև ռուսերենում և սրանից էլ՝* chantagiste *«խարերա»՝ երկուսն էլ ռուսերենի միջոցով անցած այժմ հայերենին:*

Գրբ. **դուլել** *(նաև՝* **դուղել***) «խմել» բառը կազմված է պահլ.* dōl*-ից, որ և արաբ.* delv *«ջրհոս կենդանակերպը». բուն նշանակությունը՝ ջրի դույլ, հատկապես՝ ջրանիվ, որ* **գետի** *հոսանքի և ջրհորի վրա չինված է և էշի կամ ձիու միջոցով ջուր է հանում պարտեզներում: Գործելու ժամանակ փայտի չորությունից սա ճռռում է, և այդ ճռռոցը ջրի հոսելու ձայնի հետ շատ դուր է գալիս ջրասեր, ջրակարոտ գյուղացուն:*

Քուչակի մեջ մի այսպիսի տող էլ կա.

Քու ձայնդ անուշ կուգայ քան զջրի տալապ:

Նույնը դարձյալ նշանակում է **տան մեջ պահարան,** *որի իմաստի հարաբերությունը դժվար է գտնել:*

Իմաստի տարտամություն: *Ամենահայտնի գրողների մոտ անգամ գտնում ենք երբեմն այնպիսի տեղեր, որոնց իմաստը պարզ, հասկանալի չի լինում: Օրինակ՝ Սմբատ Շահազիզի մի հայտնի բանաստեղծության մեջ («Երազ») կարդում ենք.*

Ես լսեցի մի անուշ ձայն,
Իմ ծերացած մոր մոտ էր,
Փայլեց նշույլն ուրախության,
Բայց ափսոս որ երազ էր:

Ինչ է նշանակում «Իմ ծերացած մոր մոտ էր»: Ոտանավորի չարունակությունից գիտենք, որ հեղինակը երազում տեսել է իր ծերունի մորը, մայրը երգել է, առուն էլ այդ միջոցին հոսում էր, ինքն էլ լաց է եղել, մոր համբույրն էլ է զգացել և հետո երազից արթնացել է: Բայց **մոր մոտ էր** *ինչ է նշանակում. ինքն էր արդյոք մոր մոտ, թե ձա՞յնն էր մոր մոտ: Եթե ինքն էր մոտ, պիտի ասեր՝* **մոտ էի,** *իսկ եթե ձայնն էր մոր մոտ, պիտի ասեր՝* **իմ ծերացած մոր ձայնն էր:**

Գուցե ասվի, թե տաղաչափության արվեստին առավելություն տալով՝ հեղինակը արհամարհել է քերականական օրենքները, բայց այդ էլ չի կարելի ասել, որովհետև ոչ մի արվեստ չկա: Առաջին տողի հանգն է **ձայն,** *երրորդ տողի հանգն է* **ուրախություն,** *որոնց մեջ միայն* **ն** *բաղաձայնն է հանգ, իսկ երկրորդ և չորրորդ տողերի հանգն է միևնույն էական բայը՝* **էր:**

Սրա նման է արևմտահայ գրողներից Պետրոս Դուրյանը, որ համարվում է լավագույն բանաստեղծը: Սրա ամենից նշանավոր մի բանաստեղծության մեջ («Տրտունջք») կարդում ենք.

Ո՛հ, նոքա ամենքը գիս ծաղրեր են...
Աստուծո ծաղրն է աշխարհն ալ արդեն...

Ի՞նչ է նշանակում «աշխարհը Աստուծո ծաղրն է». արդյո՞ք Աստված մարդկանց ծաղրելու համար է ստեղծել աշխարհը, թե աշխարհն է Աստծուն ծաղրում: Ուրիշ խոսքով՝ **Աստուծո** *ծաղրն է, թե Աստուծուն ծաղրանք է, հայտնի չէ:*

Մի ուրիշ տեղ էլ («Դամբանական ի մահ Վարդան Լուբֆյանի») Դուրյանը ասում է. «Զըսենք, թե տիեզերք Աստուծո մը ծաղրն է». բայց այնտեղ էլ նույն երկդիմությունը:

Նույն «Տրտունջք»-ի մեջ կարդում ենք՝

Ելնել աստղերու սանդուղքն անալի:

Այստեղ **անալի** *բառը անհասկանալի է, անշուշտ «առանց աղի-անալի» բառը չէ, որովհետև սանդուղքը աղի չի լինում, որ սա անալի լինի: Ընթերցողները իրարից անկախ հասկանում են «աննկատելի», բայց այդ էլ ճիշտ չէ, որովհետև եթե սանդուղքը աննկատելի էր, ինչպես Դուրյանը հանկարծ բարձրացավ և ասաց.*

Ողջույն քեզ Աստված դողդոջ էակին...

Ըստ իս նշանակում է «անհատակ, շատ խոր», և ծագում է **ալք** *«խորք, հատակ» բառից: Այսպես եմ մեկնել Արմ. բռ., Ա, 58: Եվ նրանից շատ տարիներ առաջ Շուշում հրատարակած* մեր Դուրյանի տաղերի մեջ:*

Սխալ իմաստ: Նոպա *«րոպե» – օրինակ՝ ո՛հ, ինչ երջանիկ նոպա էր այն (Սիրաս, Զգրված օրենք, 446): Թող լինի այնպես, ինչպես նոպաս կը թելադրի (անդ, 526). Ամեն օր, ամեն ժամ, ամեն նոպա ավելանում է միշտ (անդ, 529):*

---

* *1903 թ. Շուշում ես և իմ ընկեր Ավետիս Տեր-Հարությունյանը հրատարակեցինք Պետրոս Դուրյանի տաղերը, առաջարանով, Դուրյանի կենսագրությամբ և դժվար բառերի* **բառարանով:** *Այդտեղ գտնվում է և* **անալի** *բառը, այս բացատրությամբ: Գիրքը տպվեց բողոքական հայ [Մահտեսի Բարայանի] փոքրիկ տպարանում: Գիրքը տպված երեկոյին ընկերս ստացավ Հարյուր օրինակ՝ իրր հոնորար, նույնքան էլ ես պիտի ստանայի, բայց նույն գիշերը հրդեհ պատահեց տպարանում, և բոլոր գրքերը այրվեցին: Ընկերս այդ գրքերը տարավ Նոր Նախիջևան, ուր վաճառեց բոլորը: Մի օրինակ այդ գրքից ուղարկել եմ Վիեննայի Մխիթարյանների վանքը:*

Հ. Աճառյանը տպարանատիրոջ անվան փոխարեն կետեր է դրել (Ա. Գ.):

* * *

Ռազմիկը, հանկարծ սովորելով գրական աշխարհաբարը և բառերի իմաստի համար ուրիշ առաջնորդ չունենալով, նեղն ոչ իր լեզվական զգացողությունը, միայն սխալ իմաստներ հնարեց և յուրացրեց:

Էջմիածնում մի քահանա գալով գյուղից, հրավիրում են նրան սենյակ.

– Տե՛ր հայր, նե՛րս արի:

– Այո՛, այո՛, մանավանդ սա ձին կապեմ գամ:

Ի՞նչ իմաստ ուներ այդ քահանայի բերանում **մանավանդ** *բառը:*

* * *

Գյուղում կատարված ինչ-որ բռնաբարության քննության համար Երևանից մի դատական մարմին է գնում. մի գյուղացի, հարցաքննության ենթարկվելով, ասում է.

– Ի՞նչ պիտի լինի, պարզապես «զնկուցնց»:

Այս «զնկուցնց» բառը գյուղացու բերանում հայտնի է, թե ինչ էր նշանակում: (Հաղորդնց ինձ Մանուկ Աբեղյանը, որին պատմել էր նույն դատական քննիչը):

Նոր Բայազետցի Ադո անունով մի գրող կար, որ **Հորիզոն** *թերթի մեջ զանազան հոդվածներ էր գրում: Այս անձը* **էպիզոդ** *և* **վարիանտ** *բառերի նշանակությունը ճիշտ չէր իմանում և իր հոդվածների մեջ հաճախ չփոթում էր իրար հետ:*

Վերջին օրինակը ցույց տվեց, թե հատկապես օտար բառերի իմաստը անհայտ կամ անորոշ է մեր ժողովրդի համար: Շատերը **կոնկրետ** *բառի իմաստը չգիտեն և կարծում են, որ նշանակում է «համառոտ» (խոսքի համար): Մինչև անգամ մեր համալսարանից մի ուսանող մի օր ասաց ինձ. «Երևանից մինչև Քանաքեռ յոթը կիլոմետր է. բայց կոնկրետ ճանապարհ էլ կա, որ հինգ կիլոմետր է»:*

Իմ աղջիկը (Քնարիկ) տասներորդ դասարանի աշակերտ նղած միջոցին իր մի չարադրության մեջ գրել էր. «Մաքսիմ Գորկուն ձերբակալեցին Պետրոպավլովսկու բանտում»: Ուրեմն նա չգիտեր **ձերբակալեցին** *բառի իմաստը և կարծում էր, թե նշանակում է «բանտարկել»:*

Իմաստի նոր երանգ է տալիս երբեմն բառի միջին ձայնավորի ընդումը: Օրինակ՝ գրաբար ասվում է **աշակերտ**, *և այս ձևը մնում է դպրոցի «աշակերտ» իմաստով, իսկ ա ձայնավորը ընդնելով՝ ստացվում է* **աշկերտ**, *որ նշանակում է «խանութի աշկերտ»: Այս իմաստը թեև բարբառային, բայց անցնում է նաև գրականին, հատկապես՝ արևմտահայ գրականում: Այսպիսի բառեր են.*

վերանալ – վերնալ,

փոխանորդ – փոխնորդ (առաջինը մի անձ՝ տեղակալն է, իսկ երկրորդը՝ փոխելու նոր սպիտակեղեն)

Հ 90693

չատանալ – չատնալ, ավերիլ – ավրել,
սովորել – սորվիլ, նեղանալ – նեղնալ,
համարել – համրել, համարիչ – համրիչ,
հավանիլ – հավնիլ բանավոր – բանվոր,
ճանապարհ – ճամփա, վայելել – վայլել,
այլ – ալ (Էլ):

ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Polysémie *ասելով հասկանում ենք մի բառի մի քանի տարբեր նշանակություններ ունենալը. այս երևույթը չպետք է չփոթել համանունության* (homonymie) *հետ: Երկուսի տարբերությունն այն է, որ* polysémie *նույն բառն է, որ իմաստի զարգացմամբ հասել է այս աստիճանին, իսկ համանունները բոլորովին տարբեր բառեր են, բոլորովին տարբեր իմաստներով, որոնք իրար հետ ամենևին կապ չունեն և միայն ձայնական օրենքների պատճառով հասել են նույն ձևին: Առաջինը պատկանում է իմաստագիտությանը, երկրորդը՝ զուտ ձայնաբանական է: Այսպես՝ երբ ֆրանսերեն* **sœur** *ձայնը 10 տարբեր գրչություն ունի, 10 տարբեր նշանակություն և ներկայացնում է 10 անկախ բառ,* homonymic *է, իսկ երբ* opération *բառը նշանակում է*

1) աստիճան՝ վիրաբուժական գործողություն,

2) աստիճան՝ նվամտական գործողություն,

3) աստիճան՝ թվաբանական գործողություն,

4) աստիճան՝ զինվորական գործողություն, սա polysémie *է:*

Բառարանը լիքն է այսպիսի օրինակներով:

Երբ տեղի, կլիմայի կամ հանգամանքների փոփոխությամբ որևէ բան փոխվում է, նրա անունը մնում է հաճախ անփոփոխ, բայց ստանում է նոր նշանակություն: Այսպես՝ հմ. դավոյ, որ **տավար** *բառն է, նշանակում է «այծի և ոչխարի հոտ»: Տավարի նախիրը Կիլիկյան լեռների վրա այլևս գոյություն չունենալով՝ նրա տեղ անցել է ոչխարի և այծի հոտը:*

Ըստ այսմ՝ մեր այսօրվա ամենասովորական բառերը, ինչպես՝ **հաց, չապիկ, կոշիկ, ձվածեղ** *և այլն և այլն, կարող էին բավական տարբեր բաներ նշանակել, քան ինչ որ այժմ հասկանում ենք:*

Ֆրանսերեն boulevard *(հին* bollewerk՝ *հոլանդականից անցած) նշանակում էր նախ քաղաքի չուրջը չինված մարտկոցների վրա հողալից հարթ տեղերը: Ավելի ուշ, երբ այդ մարտկոցները ջնջվեցին և վերածվեցին լայն ճանապարհների և հասարակական վայրերի, բառը մնաց նույնը, բայց ստացավ* **ճեմելիք, ծառուղի** *նշանակությունը:*

Polysémie*-ի համար շատ հետաքրքրական օրինակ է ֆրանսերեն* bureau, *որի նշանակությունները չղթայաշար՝*

1) bure *կոչված բրդե հասարակ կտոր (ծածկում են սեղանը),*

2) սեղան, որ նույն սփռոցով ծածկված է,

3) գրելու հատուկ որևէ սեղան,

4) սենյակ, ուր գտնվում է այդ սեղանը,
5) այդ սենյակում կատարված գործերը,
6) անձինք, որ զբաղվում են այդ գործերով,
7) վարչական բաժանումը:

Նշանակությունների աճումը կարող է կատարվել զանազան ուղղություններով: Մի որևէ երկրորդական իմաստ կարող է ինքը դառնալ կենտրոն, և այստեղից կսկսեն ծնունդ առնել նորանոր իմաստներ.

օրինակ՝ bordeau ...

Լատիներեն materia դարձավ maderia և նշանակում է՝ 1. շինության փայտ, 2. կղզին, ուր կար շատ անտառ՝ շինանյութով հարուստ, կոչվեց Մադեյրա (Madeira), 3. գինին:

* * *

Գերմանացի պարոնը, նստած իր բազկաթոռում, լրագիր է կարդում: Ներս է մտնում սափրիչը և բարևելով պարոնին, ասում է,

Morgen – (բարի լույս):

Պարոնը պատասխանում է.

Morgen – (Աստծու բարին):

Սափրիչը հանում է իր աճելին և մոտենում է պարոնին, սափրելու համար: Պարոնը բթամատը հետ չարժելով՝ ասում է.

Morgen – (վաղը):

Սափրիչը հարցնում է.– (վաղը):

Morgen – Պարոնը պատասխանում է.– (վաղը):

Սափրիչը հավաքելով իրերը գնում է դեպի դուռը և խոնարհ ողջույնով ասում է.

Morgen – (մնաք բարով):

Պարոնը պատասխանում է.

Morgen – (երթաք բարով):

Այս անեկդոտի մեջ morgen բառը գործածված է 6 անգամ, 5 տարբեր իմաստով:

* * *

Բազմիմաստության հետ չպետք է չփոթել համանուն բառերը: Տարբեր իմաստով զանազան բառեր կարող են նույն ձևին հասնել, բայց ձևի նույնությունը ծագման նույնություն չի նշանակում: Այսպես՝ հայ. **սան** «իր մեծացրած աշակերտը» և **սան** «կաթսա» իրարից տարբեր ծագում ունեն և հետևաբար առանձին բառեր են, ուստի չենք կարող **սան**-ը բազմիմաստ մի բառ համարել: Նույնպես Սվեդիայի բարբառով **բիւք** նշանակում է «1. համբույր, 2. պահք, 3. սոխի գոլ»: Բայց սա ոչ թե բազմիմաստ բառ է, այլ այդ երեք տարբեր իմաստները տարբեր ծագմամբ տարբեր բառեր են: Այսպես՝ «համբույր» իմաստով առաջանում է **պաւք** բառից, «պահք» իմաստով առաջանում է պահք > պաք բառից, «սոխի գոլ» իմաստով առաջանում է **պոկ** բառից:

Polysémie-ից տարբերացում: *Բազմիմաստությունը պատճառ է դառնում, երբեմն, երկդիմությունից խուսափելու համար զանազան իմաստներից մեկը պահելու և մյուսի համար տարբեր ձև հնարելու: Այսպես՝ հայերեն* **լեզի** *նշանակում է իբր գոյական «լեղապարկի հյութ» և իբր ածական՝ «դառն»: Այս երկուսը իրարից զանազանելու համար չատ բարբառներ* **լեզի** *ձևը պահում են միայն երկրորդ իմաստով, իսկ առաջին իմաստի համար հնարել են* **լեզուցք** *ձևը:*

ԲԱՌԵՐԻ ՆԱԽԱՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր լեզվի մեջ բառերը ներկայանում են մեզ որոշ նշանակությամբ, որ ավանդությունը հասցրել է մեզ: Սակայն յուրաքանչյուր ավանդություն անհրաժեշտ չէ որ լինի ստույգ, այսինքն՝ ներկայացնի իրողության հարազատ և հնագույն վիճակը: Մյուս կողմից գիտենք, որ բառերի ինչպես ձևը, նույնպես և նշանակությունը մշտապես կայուն վիճակի մեջ չեն: Այս երկու հանգամանքները ստիպում են մեզ մտածել բառերի նախանշանակության մասին: Ի՞նչ միջոց ունենք բառերի այդ նախանշանակությունը երևան հանելու:

Եթե լեզուն ունի հնագույն գրականություն, առաջին միջոցը, բնականաբար, այդ հնագույն գրականությունը պրպտելով բառերի ավելի հին նշանակությունը իմանալն է: Եթե **վազել** *բառը գրաբարի մեջ նշանակում է «ցատկել», ուրեմն այս է նրա նախանշանակությունը, իսկ արդի «ընթանալ» իմաստը նոր է առաջացել:*

Երկրորդ միջոցն է պատմությունը կամ մանավանդ քաղաքակրթության պատմությունը: Ոչ մի միջոց չպիտի բացատրեր մեզ **բորդո** (bordo) *«չառագույն կարմիր» բառի ծագումը, եթե այլուստ չիմանայինք, թե Ֆրանսիայում կա Bordeaux քաղաքը՝ նշանավոր իր գինիներով, և «չառագույն կարմիրը» ծագել է այդ գինու գույնից:*

Պատմական տվյալներն են, որ բացատրում են մեզ, թե, օրինակ՝ **պալատ** *«ապարանք» բառը ծագում է Հռոմի Պալատինյան սարի անունից: Այս սարի վրա Ներոն կայսրը մի ոսկյա ապարանք կառուցեց, որ և լեռան անունով կոչվեց* palatium, *հետո նույնը, ընդհանրանալով, նշանակեց «արքունիք», «թագավորական պալատ» և այս իմաստով տարածված է բազմաթիվ լեզուների մեջ, ինչպես՝ հուն.* παλάτιον, *իտալ.* palazzo palais, *ֆրանս.* Palast, *ռուս.* **палата** *և այլն:*

Լատ. Cohors *նշանակում էր «բակ, տավարի համար առանձնացրած տեղ», հանրապետության ժամանակ դարձավ «զինվորների մի խումբ», ուշ հռոմեական չրջանում՝ «կայսրների զինվորական հետևորդ խումբ», որից էլ՝ «պալատ, արքունիք» (ֆրանս.* cour *և այլն)* (Wundt, Völkips, I, 438):

Լատ. salarium *ծագում է* sal *«աղ» բառից, որ փոքրարժեք բաների համար իբր փոխանակության միջոց էր ծառայում. հետո՝ «գործավորի փոքր վարձ», հետո՝ զինվորի վարձը, վերջապես՝ ընդհանրապես «վարձ, վճար»:*

Բայց ամեն լեզու չունի հին գրականություն և եթե ունենա էլ, ոչ մի գրականություն չի կարող հասնել լեզվի հնագույն վիճակին: Միևնույն ժամանակ պատմությունը և քաղաքակրթության պատմությունը ունեն որոշ սահման, և չի կարելի այդ սահմանից այն կողմ եղած երևույթների բացատրությունը որոնել այդ գիտությունների մեջ:

Ուստի անհրաժեշտ է ուսումնասիրել տարբեր միջոցներ էլ հասնելու համար բառերի հնագույն վիճակին: Այդ միջոցներն են ստուգաբանությունը, արմատների քննությունը և համեմատական լեզվաբանությունը, որոնք, եթե հիմնված լինեն ձայնաբանական հաստատուն օրենքների և տրամաբանական ուղիղ դատողությունների վրա, կարող են հասցնել մեզ որոշ ճշմարտության:

Հնագույն հնդեվրոպագետների մեջ չատերը կային, որ ամեն գնով աշխատում էին գտնել բառերի նախանշանակությունը: Ըստ այդ գիտունների՝

Հնխ. patēr «հայր» ծագում էր pā «պահել, պահպանել» արմատից և նշանակում էր «տան, ընտանիքի պահապանը».

māter «մայր» ծագում էր ma «արտադրել, ստեղծել» և այլն արմատից և նշանակում էր «արտադրող, ծնող».

dhughtér «դուստր» ծագում էր dhugh «կաթ, կթել» արմատից և նշանակում էր «ընտանիքի համար կաթ կթողը».

bhrātēr «եղբայր» ծագում էր bher «կրել, բերել» արմատից և նշանակում էր «կրող, պահող» (որ հոր մահից հետո մորն ու քույրերին պիտի պահեր).

stēr «աստղ» ծագում էր stēr «ցրվել» արմատից և նշանակում էր «երկնքի երևսին սփռված»:

Այս բոլորը համարվում են սխալ, և այժմ այս ստուգաբանություններից ոչ մեկը չի ընդունվում: Բոլոր նման դեպքերում չգիտությունը խոստովանելը իմաստնագույն ելքն է:

ԲԱՌԻ [ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԻ] ԵՎ ԻՄԱՍՏԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Թեև մենք մանրամասն քննեցինք և հաստատեցինք, որ բառի արտաքին ձևի և նրա իմաստի միջև որևէ կապ չկա, բայց դա **արմատական** բառերի համար էր, այսինքն՝ այն առաջին պայմանական նշանների, որ նախնական մարդիկ մեզանից մի քանի տասնյակ հազար տարիներ առաջ հատկացրին առարկաներին ու գաղափարներին: Բայց այնուհետև, երբ արդեն մի առարկա կամ մի գաղափար ստացավ իր պայմանական նշանը, դա նրա հետ կապվեց այնպիսի հաստատուն կապով, որ մարդիկ անընդունակ դարձան մեկը առանց մյուսին ըմբռնելու: Երբ ասում ենք **ջուր** և հասկանում ենք ծանոթ հեղուկը, այս երկուսը իրար հետ արդեն այնքան ամուր կապված են, որ այլևս մեզ համար ջուր ձայնը դադարել է պայմանական նշան լինելուց և մի բնական կոչում է դարձել: Այս հանգամանքից բխում է՝

1) Ինչքան էլ որ բառի ձևը ձայնապես փոփոխվի, նա կապված է իր նշանակության հետ, և այդ նշանակությունը մնում է անփոփոխ. **ջուր, ջիւր, ճուր, ճիւր** և այլ բոլոր ձևերի համար էլ (ամեն մեկը իր տեղում և այսինչ ժամանակ) «ջուր» նշանակությունը նույնն է:

2) Ամեն մի ածանցական գաղափար, որ առաջանում է առաջին ձևից, անհրաժեշտաբար կապված է նրա հետ և այլևս ոչ թե պայմանական նշան է, այլ ունի տրամաբանական կապ իր կազմիչ մասերի հետ:

Եթե գիր գրելու հեղուկը կոչվում է **թանաք**, *այդ հեղուկը պարունակող ամանն էլ պետք է կոչվի* **թանաքաման**: *Այն կարելի է բոլորովին մի նոր պայմանական նշանով կոչել* **կաղամար**, *բայց ոչ բնավ՝* **ջրաման**, *որովհետև բառը այս դեպքում կապված պիտի լինի* **ջրի** *գաղափարի հետ:*

Սրա համար է, որ արմատ բառերի դեմ ոչ ոք ոչինչ չունի, բայց ածանց բառերը չարունակ քննադատվում, ընդունվում ու մերժվում են: Բացի սրանից, որչափ ժամանակ որ մարդիկ ըմբռնում են այդ կապը, ձևական նույնությունը պահում են երկուսի մեջ, ինչպես՝ գյուղ–գյուղացի, խանութ–խանութպան:

3) Կարող է պատահել, որ բառի արմատական ձևը անհետանա լեզվից: Այդ ժամանակ, բնականաբար, ածանց ձևի և մայր ձևի միջև կապը կտրվում է, և ածանց ձևը կարող է համարվել անկախ գաղափար:

Օրինակ՝ մեր բարբառներում **հայել** *բառը ջնջված է, բայց կա նրանից ածանցված* **հայելի** *բառը, որ դարձել է* **հայլի, հիլե, խիլի** *են: Հին հայերը անչուշտ զգում էին* **հայել** *և* **հայելի** *բառերի կապը, բայց նոր բարբառները չեն կարող զգալ այդ և* **հիլի** *կամ* **խիլի** *արմատ գաղափար է նրանց համար: Այսպիսի խզումը ածանց բառի և արմատ գաղափարի միջև պատճառ է դառնում, որ ածանց բառը ավելի անձուկ կապերով կապվի ածանց գաղափարի հետ և լինի նրա անհրաժեշտ պայմանական նշանը: Այսպես են վերի* **հիլի** *և այլն ձևերը: Նույնպես են նաև՝ ընթեռնուլ, ըմբռչխննլ, հնոց, անդունդ:*

4) Կարող է բառի նշանակությունը, հետզհետե զարգանալով, բոլորովին հեռանալ առաջին նշանակությունից, և այն կապը, որ զոդում էր բառը իր առաջին նշանակության հետ, բոլորովին կտրվել, բայց դրա համար ոչինչ չի փոխվում, և բառի նոր նշանակությունը կապված է մնում բառի հետ: Օրինակ՝ plume *հավի փետուրն է, հետո եղել է* **գրիչ**, *հիմա էլ՝* **գրչածայր**: *Առաջինի և երկրորդի մեջ կապ կար, բայց վերջին նշանակությունը այլևս չի կապվում* plume *գաղափարի հետ, սակայն չարունակում է իր գոյությունը՝ իբրև նոր պայմանական նշան:*

Միևնույն ժամանակ խզումը միջոց է տալիս ածանց բառին՝ զարգանալու ազատորեն և ստանալու բոլորովին նոր առում:

Օրինակ՝ լատիներեն captivus *«գերի» բառը ամեն մի լատիներեսոս անձի համար ածանցյալ էր և սերտորեն կապված* capere *«բռնել»,* captus *«բռնված» բառերի հետ: Այս բառերի կապակցությունը չէր թողնում, որ «գերի» իմաստը կորչի կամ ձևափոխվի: Բայց նորլատին լեզուների մեջ* capere *«բռնել» բառը գործածությունից վերացվեց, որով և երկուսի կապը խզվելով՝* captivus *«գերի» բառը ազատ մնաց: Այն ժամանակ «գերի» իմաստը փոփոխելով՝ վերջապես դարձավ «թշվառական, ողորմելի, վատ», այսպես՝ իտալերեն* cattivo *«վատ», ֆրանսերեն* chétif *«չնչին», պրով.* cheti *«վատ»:*

Գերմ. schlecht *և* schlicht *նշանակում էին «հարթ, պարզ, հասարակ» և կապվում էին* schlichten *«հարթել, ողորկել» բային. սրանցից* schlicht*-ը, կապված մնալով* schlichten *բայի հետ, իր իմաստը պահում է մինչև այժմ, բայց* schlecht *ձևով բաժանված լինելով՝ նաև հատկացվեց «հասարակ» ժողովրդին՝ ռամիկին, հետո ստացավ «վատ» իմաստը:*

Որովհետև մարդիկ խոսում են իրարից մի բան հասկանալու և ոչ թե զանազան աննպատակ ձայներ հանած լինելու համար, ուստի և ամեն լեզվի մեջ էլ

Էականն ու կարևորը բառի իմաստն է, իսկ ձայնը երկրորդական նշանակություն ունի: Առանց իմաստի բառ չկա, այլ աղմուկ: Օր.՝ **ի, ո** *ձայնները արդի հայերենի մեջ ուրիշ բան չեն, եթե ոչ աղմուկ, որովհետև զուրկ են որևէ նշանակությունից: Բայց ուրիշ լեզուների մեջ կարող են դառնալ բառ՝ հենց որ որևէ զանազանություն ստանան: Այսպես՝ գրաբարի մեջ* **ի***-ն բառ է, որովհետև նշանակում է «մեջ, դեպի», ռուսերենի մեջ նույնպես բառ է, որովհետև նշանակում է «և, ու»:* **O** *ձայնը ֆրանսերենի մեջ բառ է, որովհետև նշանակում է «ջուր»: Տաճկերենի մեջ նույնպես բառ է, որ նշանակում է «նա» և այլն: Սրանից հետևում է, որ եթե երկու բառ միևնույն իմաստն ունեն, ըստ որում ձայնով տարբեր են, հոմանիշ են:*

Սրանից հետևում է նաև, որ, եթե մի ձայն ունենա մի քանի իմաստ, այնքան բառ է, որքան իմաստ ունի: Այսպես՝ հայ. **հարթ** *ձայնը ունի երկու իմաստ (տափակ և դարման), ուստի երկու տարբեր բառ է (հարթ և հարդ): Ոմանք այս բանը ավելի առաջ տանելով, ուսուցանում են, որ միևնույն բառի նշանակության տարբերություններն էլ առանձին բառեր են. տարբեր բառ է* **մարդու գլուխ** *և տարբեր բառ է* **սոխի գլուխը, մարդու աչքը** *կամ* **կամրջի աչքը** (Vendryes, La langage, 208):

Նշանացի խոսակցությունը մի լեզու է, որ իմաստ ունի, բայց ձայն չունի, սակայն այստեղ էլ ձայնի տեղ ձևն է, որ իմաստին մարմին է տալիս: Եթե հնարավոր լիներ խոսելու միջոցին ամեն առարկա և ամեն գործողություն ուզած ժամանակ և ուղած արագությամբ մատնանիշ անել, ձայնավոր լեզուն չէր ծնվի: Բայց որովհետև այդ անկարելի է, ուստի մարդիկ էլ հնարել են այդ ձևը՝ իբրև հաղորդակցության միջոցներից ամենակարճը և ամենակատարյալը:

Յուրաքանչյուր բառ մի գաղափարի արտահայտություն է. ուստի բառը չկա, եթե գաղափարը չլինի նախապես: Հնագույն ժամանակներում, երբ մարդիկ դեռ վայրենի էին և գաղափարների կողմից էլ շատ աղքատ, իրենց լեզուն էլ շատ աղքատ էր: Քանի առաջադիմեցին, այսինքն՝ քանի նորանոր գաղափարների տիրացան, իրենց լեզուն էլ այնքան հարստացավ: Հին լեզուներից ամենահարուստն անգամ չունի և չի կարող ունենալ այն բառերը, որոնք մի նոր քաղաքակրթության արդյունքն են, ինչպես՝ չոգենավ, չոգեկառք, երկաթուղի, հեռագիր, հեռախոս, հեռաձայն, հնծանիվ, մանրադեստ և այլն:

Հոգեբանությունը սովորեցնում է մեզ, թե գաղափարների ըմբռնումը նյութական պատկերների միջոցով է հասնում մեր մտքին և ոչ թե վերացական դատողությամբ: Նույնիսկ ամենավերացական գաղափարներ արտահայտող բառերը ամեն լեզվի մեջ էլ կազմված են շատ նյութական թանձրացյալ գաղափարներից: Օրինակ հայերեն **ըմբռնողություն, վերացականություն, հասկացողություն, զգացում** *և այլն բառերը, որոնք բացարձակ վերացական գաղափարներ են, ծագում են* **բուռն** *«ձեռք», վեր «բարձր տեղ», հասնել, գալ թանձրացյալ գաղափարներից:* **Ըմբռնել** *ասելով հասկացվում է մի էակ, որ ձեռքը՝ բուռը, երկարելով բռնում է գաղափարը,* **ըմբռնում է:** *Այսպես նաև մյուսները:*

Յուրաքանչյուր առարկա անվանելու համար ուրեմն պետք է ունենանք այն պատկերը, որ վերարտադրի մեր Հիշողության մեջ այն առարկայի գաղափարը: Բայց չափազանց երկար և թերևս ավելորդ ծանրաբեռնություն կլիներ լեզվի համար հնարել այնպիսի անուններ, որոնք առարկայի ամբողջ պատկերը, այսինքն՝ նրա ամբողջ արտաքին ու ներքին բովանդակությունը, ներկայացնեին իրենց մեջ:

Այս պատճառով մարդիկ աշխատել են գտնել առարկայի ներքին ու արտաքին բովանդակությունից կամ նրա գործածությունից մի այնպիսի գիծ, որ ամենից բնորոշը համարվեր և դրանով էլ կարողանար վերհիշել տալ մեզ նույն առարկան: Օրինակի համար, հայ. **կայծքար** բառը ներկայացնում է մեզ մի առարկա, մի չատ կարծր քար՝ սպիտակ կարմրաչորթ գույնով, կոտրելիս ձևացնում է սուր ծայրեր, և այս պատճառով վայրենիները այն գործ էին ածում իբրև զենք: Այս քարը, ընդհարվելով ուրիշ մի կարծր մարմնի, կայծեր է արձակում, որի համար էլ գործ են ածում իբրև կրակ հանելու դործիք:

Այս բոլոր հիշվածները՝ ձևը, գույնը, քարի տեսակը, հատկությունը և գործածությունը, չատ կարևոր բաներ են, բայց այդ բոլորի մեջ ամենաբնորոշը կայծ կամ կրակ հանելու հատկությունն է, հետևաբար և չատ լավ ընտրություն է արված, երբ առարկան կոչված է **կայծքար**: Կարելի էր անչուչտ նկատի առնել նրա մյուս հատկությունները և, օրինակի համար, կոչել կարծրաքար, սրաքար, զինաքար և այլն: Բայց այս բոլորը այնքան հարմար անուններ չէին լինի, որովհետև ուրիշ չատ քարեր էլ կան, որոնք կարծր են կամ սուր են և կամ զենքի համար կարող են գործածվել և այլն:

Ֆրանսերեն sauterele «մարախ» (մորեխ) ծագում է **ցատկել** բայից: Թեև միայն մարախը չէ, որ ցատկում է, այլ լուն և այլն: Բայց, որովհետև մարախի գլխավոր հատկանիշը ցատկոտելն է, իսկ լվինը՝ արյուն ծծելը, ուստի մարախն է այդպես կոչվել:

Թեև առարկաներն ամեն տեղ նույն հատկություններն ունեն, բայց մարդիկ ամեն տեղ էլ պարտավոր չեն նույն հայացքով մոտենալ առարկային: Այս է պատճառը, որ միևնույն առարկան կարող է մի տեղ մի տեսակ կոչվել, մի ուրիշ տեղ՝ ուրիշ տեսակ, կամ ընդհակառակը, այսինչ պատկերով մի տեղ ըմբռնել այսինչ առարկան, մի ուրիշ տեղ՝ ուրիշ առարկա: Բնական է, որ այս զանազան անունների մեջ մեկը հաջող, մյուսը նվազ հաջող եղած լինի: Բայց այս բոլորը չի խանգարում բնավ, որ մենք, այնուամենայնիվ, միևնույն առարկան պատկերացնենք մեր մտքի մեջ: Այս իրողությունը ճշմարիտ է ոչ միայն ժողովրդական հասարակ բառերի, այլև նույնիսկ գիտական արվեստական բառերի համար: Օրինակ՝ ճանապարհորդական միևնույն գործիքը կոչվում է ֆրանս. biciclette կամ vélocipède, գերմ. Rade, հայ. **հեծանիվ**: Առաջինը կազմված է լատ. velox, ֆրանս. véloce «արագ» և pedis «ոտք» բառերից, ուստի բուն նշանակում է «արագոտն» կամ «ոտնարագ», և այնչափ հաջող բառ չէ: Ավելի լավ է biciclette, որ բուն նշանակում է «երկանվակ» և ներկայացնում է առարկայի ավելի հաջող պատկերը՝ իր երկու անիվներով: Գերմաններեն Rade, որ բուն նշանակում է «անիվ», կիսատ պատկեր է և կարող է հարմարվել ամեն տեսակ անիվի: Լավագույն բառը հայերենն է, որ ներկայացնում է մեզ անիվը, որի վրա հեծնում են մի տեղ գնալու համար:

Հուն. կատուն կոչվում է ἀίλουρος «պոչ չարժող», մինչդեռ մեզ համար պոչ չարժողը չունն է և, փոխաբերաբար, նաև չողոքորթ, քծնող, կեղծավոր մարդը:

Այսպիսի բառակազմության ժամանակ երբեմն պատահում են այնպիսի ձևեր, որոնք անբավարար, նույնիսկ ծիծաղելու լինելու չափ անհաջող են լինում: Օր. ռուս. «կզակը» կոչվում է подбородок, որ բուն նշանակում է «միրուսի տակը»:

Իրոք որ կղակը միրուսի տակն է: Բայց ոչ ոք չի անդրադառնում, թե որքան անհաջող է այս բացատրությունը. նախ՝ որ միրուս ունենալը անհրաժեշտ պայման չէ կղակ ունենալու համար, և կղակը ավելի առաջ է, քան միրուսը, երկրորդ՝ նրնխանները և պատանիները միրուս չունեն, բայց կղակ ունեն, երրորդ՝ բնավ ի նկատի առնված չէ իգական սեռունդը, և մի կնոջ մասին էլ խոսելիս՝ ծիծաղելի ձևով պետք է ասենք՝ «այս կնոջ կղակը», այսինքն՝ «այս կնոջ միրուսի տակը»: Բայց այս բոլորը ոչ մի նշանակություն չունի, որովհետև բառը պայմանական մի նշան է, և բավական է, եթե այդ նշանով այն գաղափարն է հասկացվում:

Պատկերներ ստեղծելու և միևնույն ժամանակ լեզուն նորանոր բառերով չծանրաբեռնելու միջոց է փոխաբերությունը (métaphore), որ գաղափարների զուգորդությամբ ներկայացնում է մեզ այս կամ այն առարկան: Օրինակ՝ մարդու կամ ոչխարի գլուխ ասելուց հետո՝ փոխաբերությամբ ասում ենք՝ **կաղամբի գլուխ, շաքարի գլուխ, սոխի գլուխ, սխտորի գլուխ, դրամագլուխ, զորքի կամ բանակի գլուխ,** *մարդու կամ անասունի աչք ասելուց հետո՝ փոխաբերությամբ ասում ենք՝* **կամուրջի աչք, ղարակի աչք, խանութի աչք, կչեռքի աչք, հացի կամ պանրի աչք, պատուհանի աչքերը, կացնի կամ ուրագի աչքը** *և այլն:*

Որչափ հետաքրքրական է, որ երբ ասում ենք **կամուրջի աչքը,** *սրանով փոխաբերությամբ մենք կամուրջի չենքը նմանեցնում ենք մի մարդկային գլխի. նրա վրայի աղեղնաձև կամարները, կարծես, մարդկային կոր ունքերն են, որոնց տակ փայլող աչքերն էլ՝ կամուրջի բացվածքները: Այսպիսի պատկերներ են նաև* **գետի ճյուղը, խաչխաչի կաթը, լեռան լանջը, լուսնի բակը, սեղանի ոտքը, պտուկի ոտքը, աթոռի մեջքը, զրքի կողքը, տետրակի շապիկը, հրավառության ձեռքը** *և այլն:*

Պատկերների և փոխաբերությունների արդյունք են, հատկապես, անձնական և տեղական հատուկ անունները՝ Արուսյակ, Հրաչյա, Լուսիկ, Մանիչակ, Շուշանիկ, Թուխծամ, Ոսկեհատ, Վարդգես, Կորյուն, Վարդուհի և այլն, որոնք սքանչելի պատկերներ են: Հատուկ անուններից հիշենք մի քանի գեղեցիկ օրինակներ, ինչպես՝ Երկնիստ (Կարնո գյուղերից), որ իբրև թե լեռան լանջի երկու կողմերը նստած է, Ջիթհող (Կարնո գյուղերից), որի հողը ձեթի գույն ու փափկություն ունի, Կամարակապ (Ակնա գյուղերից)՝ կամար կապած և այլն:

Այս հանգամանքից է ծագում այն երևույթը, որ ձայնը չարունակ փոփոխվում է լեզուների մեջ, իսկ իմաստը շատ քիչ փոփոխության է ենթարկվում: Հնագույն սերունդները չէին նկատում ձայնի մեջ եղած փոփոխությունները, բայց դրանք, թեև շատ փոքր, սակայն նույնպես էական են, որ ղարեր հետո կազմում են ահագին տարբերություն և պատճառ են դառնում նոր լեզուների ձևացման:

Analogie-ն [համաբանություն, նմանակություն] *նույնպես ոչ միայն պատճառ է դառնում ստեղծելու բառի մեջ ձայնական ձևափոխություններ, այլ նոր հոլովում, նոր խոնարհում, նոր մասնիկ...*

Ֆրանսերեն omnibus *ունի լատիներեն ծագում, նշ. «բոլորին» (լտ. հոգ. տր. հոլով): Կար մի տեսակ կառք, որ կոչվում էր* un carrosse omnibus, *որից, առաջին բառը կրճատելով, եղավ* omnibus, *երբ հնարվեց* automobile-*ը, և սա բոնեց* omnibus *կառքի տեղը, կոչվեց նրա օրինակով* autobus. *Հիմա էլ չինվում է* aerobus. *և այսպես՝ հոգ. տր.–* bus *մասնիկը դարձավ փոխադրական միջոց կազմող մի մասնիկ (*Marouzeau, Lk ling., *էջ 84):*

Գերմ. sehr «չատ հույժ» առաջանում է հրգ. sêr «ցավ» բառից և բուն նշանակում է «ցավագին». ցավը ըմբռնելով իբրև ուժեղ տպավորություն, բառի իմաստը անցել է «ուժգին»-ի (Wundt, Volkerps. I, բ մաս, էջ 505):

ԻՄԱՍՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Ինչպես որ ձայնական փոփոխությունները ունեն իրենց ժամանակը և մանավանդ՝ հաջորդական կարգը, նմանապես և իմաստի փոփոխությունները:

Ֆրանսերեն Bordeau բառը քաղաքի անուն է. նա կոչվում է այսպես, որովհետև չինված է ջրի ափին (ֆր. bord ափ, ափեր և eau ջուր, սեռ. d'eau ջրի): Այս բառի երկրորդ և երրորդ նշանակություններն են «գինու մի տեսակ, որ պատրաստվում է այդ քաղաքում» և «թունդ կարմիր գույն»: Այս երեքից առաջինը իրոք էլ նախավորն է և հիմնականը, առանց որի մյուս երկուսը չպիտի լինեին. բայց մյուս երկուսից էլ առաջինը (գինին) ավելի առաջ է, քան **թունդ կարմիրը:** Բորդոյի գինին, ունենալով թունդ կարմիր գույն, ստացվել է երրորդ հերթին այս իմաստը: Եթե մի օր հնարվի ինչ-որ մի սպեղանի, որ թունդ կարմիր գույն ունենա կամ բորդոյի գույնով պատրաստվի, և հնարողը այն սպեղանին կոչե **բորդո,** այդ կլինի չորրորդ իմաստը՝ ըստ հերթի:

Թուղթ բառը երկու իմաստ ունի հայերենում. 1) այն նյութը, որի վրա գրում ենք, 2) գիր, գրություն, նամակ:

Իմաստաբանորեն ո՞րն է սրանցից նախնականը:

Բոլոր բառարաններն էլ առաջին իմաստը դնում են նյութը, որից հանում են «գրվածք, գրություն, նամակ» իմաստը: Այսպես են Հայկազյանը, Առձևոնը և Արմատականը: Սակայն ճիշտ չէ այս:

Թուղթ բառը երկրորդ իմաստով գործածված է մեր մեջ հենց ե դարից՝ «Պաւղոսի առաքելոյ առ Կորնթացիս Թուղթ առաջին և Թուղթ երկրորդ»: Իսկ առաջին իմաստով գտնում ենք նախ Վրք., Հց., Ժր.՝ «եղրարքն որ գիտէին գործել Թուղթ» (Ժբ դար):

Թուղթը հնարված էր չինացիների մոտ չատ վաղ ժամանակ: Ն. Ք. 123 թվին Գայ Լուն՝ նախարար երկրագործության, հանձնարարեց թղթի չինարարությունը Չինաստանում: Շատ ավելի ուշ՝ 8-րդ դարում միայն, սկսեց տարածվել Արևմտյան աշխարհում հետևյալ ձևով:

751 թվին, չինացիք արշավեցին Սամարղանդի վրա, որ պատկանում էր արաբներին: Արաբները դուրս եկան նրանց դեմ, չինացոց դուրս քշեցին և բռնեցին նրանցից գերիներ: Գերիների մեջ կային թուղթ չինող վարպետներ, որոնց արաբները օգտագործեցին Սամարղանդում թղթի գործարան բանալու համար: 794 թվին մի գործարան էլ Բաղդադում բացվեց, որից հետո թղթի գործածությունը տարածվեց ամբողջ Արաբական խալիֆայության մեջ: 9-րդ դարից հասել են մեզ բազմաթիվ արաբերեն ձեռագրեր՝ գրված թղթի վրա: ԺԱ դարի վերջում թղթի գործածությունը հասնում է Պոլիս և տարածվում է 13-րդ դարի կեսից սկսած, ավելի ուշ անցնում է Իսպանիա, Սիցիլիա, Անգլիա և 17-րդ դարումն էլ՝ Ամերիկա:

Եթե ոչ 9-րդ, գոնե 10-րդ դարում թղթի գործածությունը մտած պիտի լինի Հայաստան, որովհետև արդեն 976 թվից ունենք թղթե մի ձեռագիր, որ պահվում է մեր Մատենադարանում (№ 2679):

Այս բոլոր ասվածներից երևում է, որ Ե դարում Հայաստանում և առհասարակ Արևելքում թուղթ չկար դեռ, և հետևաբար **թուղթ** *բառի առաջին և նախնական իմաստը ոչ թե* **թուղթ** *նյութն է, այլ «գրություն, գրվածք»:*

Քննությունից երևաց նաև, որ իմաստի ժամանակը որոշելու համար ընդհանուր դատողությունները քիչ են, և հարկավոր է նաև դիմել պատմությանը:

ՀԱԿԱՌԱԿ ԻՄԱՍՏ

Ինչպես բառի ձևը ժամանակի ընթացքում հետզհետե փոփոխվելով հասնում է մի այնպիսի ձևի, որ առաջինի և վերջինի միջև եղած նմանությունը բոլորովին անհետանում է, նույնպես և բառի իմաստը:

Որևէ բառ գործածության մեջ կարող է երբեմն ստանալ բոլորովին հակառակ նշանակություն, և այս բանը լինում է՝ 1) ծաղրի կամ կատակի միջոցով, 2) փոխաբերությամբ կամ այլաբանությամբ և կամ իմաստի աստիճանական զարգացմամբ: Առաջինը անմիջական է, երկրորդը ձևանում է ժամանակի ընթացքում:

Օրինակ, երբ հասարակ խոսակցության մեջ գործածում ենք **խելոք, դու չատ քաջ ես** *և այլն ծաղրական ձևով, դրանք դառնում են հակիմաստ բառեր: Այսպես՝ հայտնի է* **Խելոք Դավիթը,** *որ, անշուշտ, նշանավոր մի պարզամիտ մարդ է եղել, և որի անունը այժմ գործ է ածվում «ապուշ» իմաստով:*

Նույնպես՝ երբ ասում ենք՝

– Այս ինչ տեղը գնացե՞լ ես կամ այս ինչ բանը արե՞լ ես և այլն...

– Հա՛, ինչպե՞ս չէ, գնացել եմ, արել եմ և այլն... այս բոլորը, ծաղրական ձևով գործածված, դառնում են հակիմաստ բառեր. Հա նշանակում է «ոչ» և այլն:

Երկրորդ կարգի հակիմաստ բառերը ավելի դժվար է ճանաչել, որովհետև հակառակ իմաստներից մինը կամ մյուսը ստիպված է տեղի տալու: Այնուամենայնիվ հակառակ իմաստով են՝

ֆր. apprendre *սովորել և սովորեցնել.*

ֆր. chasser *«վռնդել» և «որսալ» (ա-ն դուրս են անում, բ-ն՝ ձևը բերում).*

ֆր. défender *արգելել և պաշտպանել.*

լտ. venio, *անգլ.* come *«գալ»-սանս.* gačchāti *երթալ.*

լտ. plumare *«փետրազարդել» – ֆր.* plumer *«փետրատել»*

գերմ. köpfen *«գլխատել» (մինչ ձևը ցույց է տալիս «գլուխ դնել»).*

ֆր. sentir, *անգլ.* smell, *հոլ.* ruiken, *ֆր.* flaire *թե «հոտ արձակել, բուրել» է և թե «հոտ առնել, հոտոտել».*

ֆր. voyant *«լավ տեսնող» և «լավ տեսանելի».*

անգլ. hateful *«ատող, ատեցող» և «ատելի, ատեցյալ».*

ֆր. vue *«տեսողություն» և «տեսարան».*

լտ. aspectus, *անգլ.* sight *«նայվածք» և «երևույթ»:*

Այսպես և հայերեն՝ ատելի, գործելի՝ թե «ատող և ատեցյալ» և թե «գործող և գործված» (հին հայերենում):

Արաբական մի բարբառում՝ balā *«առանց», որից* balha *«այո՛, անչուշտ»* (MSL, 23, 340):

Հակառակ իմաստը արտահայտվում է երկու ձևով.

1) բացասական ձևով. 2) հականիշ ձևով. այսպես՝

մեծ — բացաս.՝ ոչ մեծ, հակ.՝ փոքր,
փոքր — -»- ոչ փոքր, «մեծ»,
երկար — -»- ոչ երկար «կարճ»,
կարճ — -»- ոչ կարճ «երկար»:

Առաջին դեպքում դրվում է որևէ ժխտական մասնիկ, երկրորդ դեպքում դրվում է բոլորովին նոր բառ:

Ժխտական մասնիկներն են **ոչ, չ, ան, ապ, տ, ղժ,** *որոնցից միայն առաջինն է, որ գործածվում է իբրև և զուտ բացասական, մյուսները բոնում են բացասականի և հականիշի միջին տեղը:*

Օրինակ՝ անմիտ, տգեղ, տգետ, ապերախտ, ղժգույն և այլն:

Բացի սրանցից՝ հակառակ իմաստը կարող է սաստկացվել կամ տկարացնել զանազան օժանդակ բառերով, ինչպես՝ ոչ մեծ, ոչ այնքան մեծ, ոչ չատ մեծ, ոչ չափազանց մեծ. փոքր — բավական փոքր, չատ փոքր .... Նույնիսկ կրկնությամբ՝ ոչ այնքան մեծ և ոչ այնքան փոքր:

Բառը երբեմն զարմանալի և նույնիսկ անտեղի կերպով փոխում է իմաստը:

Օրինակ, Թրք. yešil *«կանաչ» բառը փոխառվել է լատիններենի մեջ* yešili *ձևով, բայց ոչ միայն նշանակում է «կանաչ», այլև «կապույտ»* (Adjarian, Etude sùr la langue laze, 645): *Նույնի կրկնությունը տեղի է ունեցել նաև ինդոնեզական լեզվախմբի մեջ, ուր ըստ* Brandsteter, *«կանաչ» և «կապույտ» բացատրվում են միևնույն բառով, թեև ժողովուրդը այս գույները չի չփոթում իրար հետ* (BSL, № 77, *էջ 214*):

Բրըտոն լեզվով glas *՝ «կանաչ» և «կապույտ»:*

Ազգագրական զանազան սովորություններ պատճառ են դառնում բառին մի նոր իմաստ տալու: Այսպես՝ արաբները երդվելու ժամանակ փոխադարձաբար բոնում էին իրար աջ ձեռքը. այստեղից էլ արաբերենի մեջ yamin, *որ նշանակում է «աջ», ստացավ նաև «երդում» նշանակությունը (Կամուս, Գ., էջ 722):*

Հականիշը երբեմն միջին աստիճաններ էլ ունի, ինչպես՝

տաք — գոլ — սառը,
բավ — միջակ — վատ,
հարուստ — բարեկեցիկ — աղքատ:

Երբեմն երկու բացասական է դրվում.

Այդ բանը մեզ թվաց ոչ անկարելի՝
Անկարելի չերևաց:

Հաճախ հայտնի չէ, թե ինչպես է ստացվել հակառակ իմաստը:

Օրինակ՝ լատիններեն valetudo *1. «առողջություն», 2. «հիվանդություն»: Ֆր.* tranchee *«խրամատ, փոս» իմաստով է, հիմա հասկացվում է «թումբ» իմաստով* (Carnoj, La sciece dụ mot, *էջ 161*):

Սրան հակառակ ֆր. motte «հողաթումբ» դարձել է անգլ. moat «փոս, խրամ» (անդ, էջ 161)։ Նույնպես անգլ. ditch «փոս, խրամ» նույն բառն է, ինչ որ հսլ. dijk և թր. digue «թումբ» (անդ, 161)։ Ֆր. hote և հուն. ξένος թե հյուր-ն է և թե հյուրընկալը (էջ 162)։ Միջին դարում ֆր. aumônier «ողորմություն ստացող»-ն էր, հիմա՝ «բաշխողը» (էջ 162)։

Այս կարգի հակառակ իմաստները բացատրելու համար Carnoy-ը (էջ 160) ասում է, թե հակառակը բուն գաղափարի լրացուցիչն է, և մեկի մասին խոսել անկարելի է՝ առանց նաև մյուսի մասին մտածելու։

Այսպես՝ երբ ասում ենք «դատարկ», մտածում ենք միաժամանակ «լիք»-ի մասին, և երբ մի որևէ զգացմունքի մասին է խոսքը, անչուշտ նրա առարկան էլ միասին է մտածվում։ Երբ այսպիսով երկուսը միասին ներկայացնում են մտքին, չահագրգռվածությունը ուր որ հակի, բառն էլ այդ իմաստը կստանա։

ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ՆՅՈՒԹԱԿԱՆԻՑ ՎԵՐԱՑԱԿԱՆ

Ամեն մի վերացական գաղափարի խորքը նյութն է։ Բառը իր ստուգաբանությունը կամ ծագումը կորցնում է. եթե մի պատկեր է, մոռացվում է և ընդունվում է իբրև բնական։

Ստուգաբանն է միայն, որ կարող է բառի ծագումը գտնել, և այդպես է, որովհետև մեզ ծագումը հարկավոր չէ, այլ իմաստը։

Այսպես՝ anecdote հն. նշանակում էր «չհրատարակված», հիմա հազարներ կան տպված. բառը չարունակվում է մնալ.

gymnastic – gymnos «մերկ» բառից, բայց հիմա հատուկ չոր ունեն։

Ellipse-ի այս սովորությունը չափազանց ընդարձակվում է օրեցօր մանավանդ Եվրոպայում։

Բույսերի անունները՝ reine claude (կանաչ սալոր է)՝ Ֆրանսուա Ա-ի կնոջը ի պատիվ. ռուս. ренклод.

dahlia (գեղեցիկ ծաղիկ է) – չվեդացի բուսաբան Dahl-ի անունով.

napoléon – *տանձի տեսակ։*

Ֆիզիկայից՝ նշանավոր ֆիզիկոսների անունով.

ampère,

volte։

Նկարների և երկասիրությունների անուններ. *ինչպես՝*

Rubens, Raphael, *Վերգիլիոս, Բաֆֆի։*

Ավտոմոբիլների տեսակները՝ ըստ ֆաբրիկանտների.

մի ford, *մի* citroën, *մի* benz և *այլն։*

Գոյականը կարող է դառնալ ածական։ *Օրինակ՝*

պղինձ (աման),

ոսկի (դրամ),

արծաթ (դրամ) և այլն։

Հետո ենթադրվում է գոյականը ընդված և նորից գոյականը դառնում է գոյական՝ այլ իմաստով. այլևս **պղինձ** նշանակում է ոչ թե «պղինձ», այլ որևէ կաթսա, գդալ («փայտյա»):

Ինչ որ ասացինք բառի համար իբրև մի ամբողջության, նույնը պետք է հասկանալ նաև մասնիկների համար, որոնք միացած են բառին: Սրանք էլ կարող են ժամանակի ընթացքում փոխել իրենց նշանակությունը, որով առաջանում են հետևյալ երևույթները.

1) Միևնույն մասնիկը հնապես ուրիշ բան էր նշանակում, այժմ ուրիշ իմաստ ունի:

2) Միևնույն մասնիկը միևնույն ժամանակ տարբեր իմաստներ ունի: Օրինակ՝ **աչակերտություն** նշանակում է թե՛ «աչակերտ լինելու վիճակը» և թե՛ «աչակերտները ամբողջը միասին վերցրած, աչակերտներ». ուրիշ խոսքով **-ություն** մասնիկը **ա.** դեպքում վերացական է, **բ.** դեպքում՝ հոգնակի [հավաքական]:

3) Միևնույն մասնիկը տարբեր դեպքերում տարբեր իմաստ ունի: Օրինակ՝ **տանձենի** «տանձի ծառ», **այծենի** «այծի կաշի», **քաղքենի** «քաղաքի բնակիչ»: Կամ **-որդ** մասնիկը **որսորդ, բաժանորդ, հաջորդ, երկրորդ** բառերի մեջ:

Սրա համեմատ էլ միևնույն մասնիկը տարբեր լեզուների մեջ կարող է տարբեր նշանակություններ ստանալ. այսպես՝ **փետուր** (լտ. pluma = ֆր. plume) բառից կազմելով բայ՝ ստանում ենք՝ հայերեն **փետրիլ** և ֆրանսերեն plumer «փետուրները պոկել», իսկ լատիներեն՝ plumare «փետուրներով զարդարել»:

ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Նշանակության փոփոխությունը կարող է լինել արդյունք մասնավոր մի պարագայի և կամ ընդհանուր մի վիճակի, օրինակ՝ լտ. moneta և pecunia բառերը երկուսն էլ ստացել են «ցրում» նշանակությունը: Առաջինը Juno moneta աստվածուհու անունից է: Յանոնը Արամազդի քույրն ու կինն էր, որը մի անգամ հայտարարեց հռոմայեցիներին, թե երկրաշարժ պիտի լինի: Հռոմայեցիք տվին նրան moneta «ծանուցող, հայտարարող» տիտղոսը (լտ. moneo «հայտարարել, հիշեցնել, ծանուցանել» բայից), և նրա տաճարն էլ կոչվեց moneta: Հետո այս տաճարում սկսեցին դրամ կտրել, որով moneta բառը ստացավ «դրամահատություն» և հետո՝ «դրամ» նշանակությունը: Սրանից առաջացան իտալ. moneta, ռուս. монета (մանեթ), իսպ. moneda, ֆր. monnaie, անգլ. money, գերմ. münze «դրամ» բառերը:

Իսկ pecunia-ն հնխ. բառից է, որ նշանակում էր «արջառ, տավար»: Արջառը, լինելով հարստության գլխավոր նյութը և վաճառականության առարկան, ստացավ հետո «ապրանք, դրամ» իմաստը, և այս վիճակը չարունակում է լատիներենը:

Առաջինը մի մասնավոր դիպվածի արդյունք է, երկրորդը՝ մի տնտեսական երևույթի. առաջինի բացատրությունը կտա մեզ **բառի** պատմությունը, երկրորդինը՝ **քաղաքարի** պատմությունը (Wundt, Völkerps, *I* մաս, էջ 431):

կարող է նաև բոլորովին կորչել առաջին նշանակությունը և մնալ միայն երկրորդական նշանակությունը: Այսպիսով բառի ու նրա երկրորդ նշանակության միջև ոչ մի կապ չի մնում. ինչպես՝ **երեց** *նշանակում էր՝ 1. տարիքով մեծը, 2. քահանա: Ըստ որում, հին ժամանակ տարիքոտ անձանց էին ընտրում քահանա: Հիմա ոչ* **երեց** *«մեծ» նշանակությունն է մնացել ժողովրդի մեջ, և ոչ էլ մեծերին քահանա ընտրելու սովորությունը, բայց մնում է* **երեց** *«քահանա» նշանակությունը և թերևս ավելի հաստատուն կերպով, քան թե* **երեց** *նշանակեր նաև «մեծ»:*

Այսպիսի ձևափոխության օրինակները են՝ volume *գրքի «հատոր» (առաջ գլանի պես ոլորելուց). անգլ.* book *«գիրք» (առաջ* hêtre *ծառի փայտի կտոր էր).* papier *«թուղթ» («պաղալ». նրանք էր* papyrus). gazette *«լրագիր» (հիմա մի վեներիկյան sou-ի չեն ծախում).* banque *«դրամատուն» (հիմա չուկայում մի հասարակ սեղան չէ).* banqueroute *«սնանկ» (էլ սեղան չեն կոտրում, այլ շատ ուրիշ պատիժ են տալիս).* candidat *«թեկնածու» (այլևս սպիտակ չեն համարում).* cuivre *«պղինձ» (էլ Կիպրոս կղզուց չի գալիս).* mousseline *«կտորը» (այլևս Մուսուլից չի գալիս),* լուսնոտ *«դիվահար» (այլևս չեն համարում «լուսնի արդյունք»)*

(Whitney, La vie-du Lang. *էջ 65): Այսպիսի դեպքերում մեկը, որ չի քննում կամ միջոց չունի քննելու նշանակության ծագումը, անշուշտ պիտի կարծե, թե այդ նշանակությունը բառի հիմնական իմաստն է, և չպիտի էլ կասկածի նրա մասին:*

[ԱՆՊԱՅՄԱՆԱԿԱՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԿԱՆԸ]

Հաճախ պատահում է լեզվի մեջ, որ նախապես անպայմանական բառերը վերածնում են պայմանականի:

Այս դեպքերն են՝

1) Լեզվի ածանց բառերը, ենթարկվելով պայմանական փոփոխությունների, այնքան անճանաչելի են դառնում, որ իրենց արմատի հետ ունեցած կապը անհետացած է դառնում, և մարդիկ, չկարողանալով գտնել այդ կապը, համարում են պայմանական: Այս երևույթը տեղի է ունենում հատկապես, երբ հին լեզուներից առաջանում են նոր լեզուները: Օրինակ, ունենք՝

լտ. vervex *«ոչխար», որից* vervecarius *«հովիվ»՝ դարձած ժող. լտ.* berbix *և* berbicarius, *որոնց մեջ ածանցման զգացմունքը կա, բայց սրանից՝ ֆրանս.* brebis *և* berger *այնքան տարբեր են իրարից, որ այլևս կարծես ածանցը չէ* brebis *բառի, և նոր պայմանական ձև է: Նմանապես լտ.* decem *«10» և* undecim *«11», որոնցից՝ ֆրանս.* dix *«10» և* onze *«11», որոնք ոչ մի տառով կամ գույնով իրար նման չեն և դարձել են առանձին պայմանական բառեր:*

2) Արմատից ածանցված զանազան բառերը, որոնց կապը ըմբռնելի է քանի արմատը կա, արմատի զնդչմամբ բաժանվում են իրարից և դառնում են անկախ, ինչ.՝ հյ. պղպել և դուռն, երկուսն էլ հնխ. doru *«փայտ» արմատից: Ճիշտ այսպես նաև ֆր.* abricot *«ծիրան» և* precoce *«կանխահաս», որոնք միևնույն բառերն են:*

3) Ածանցման կանոնները կորցնում են իրենց այժմեականությունը. հետևաբար մարդիկ չեն կարող զգալ ածանցների կազմությունը, ինչպես՝ **ընտիր** – ընդ դիր:

Սրանց համաձայն, հնդեվրոպական շատ բառեր, որ ածանց են եղել, այժմ համարվում են արմատ, ինչպես՝ հայր, մայր և այլն: Այն լեզուները, որոնք ունեն շատ արմատ բառեր, ինչպես և շատ փոխառություններ, մեծագույն տոկոսով պայմանական են: Իսկ նրանք, որ ունեն շատ ածանցական ձևեր, պայմանականության տոկոսը իջեցրած են լինում: Առաջին կարգին են պատկանում չինարենը իր արմատներով ու տոներով, երկրորդին՝ հունարենը: Բայց այս երկրորդ խումբն էլ վտանգի տակ է այն տեսակետից, որ գաղափարների փոփոխությամբ ածանցը անիրական և անհամապատասխան կդառնա. օրինակ՝ **чернила** և հայերեն թանաք կամ մելան:

Կա նաև այն հանգամանքը, որ ածանցները կորցնում են իրենց սկզբնական գաղափարը և նորից դառնում են պայմանական, օրինակ՝ ռուսերեն **дождь, плащ, ястреб** և այլն:

Մարդկանց համար բառը մի նշան է, որ սովորությամբ այնպես է կապված գաղափարի հետ, որ մին առանց մյուսի չի կարող ըմբռնվել: Բայց մարդու համար ոչ մի արժեք չունի, թե ինչպես է կազմված այդ բառը, որ ինքն ամեն օր գործածում է: Օրինակ՝ Ի՞նչ են **քար, ծառ, փայտ** բառերը, Ի՞նչ է նրանց ծագումը:

Հազվագյուտ հետաքրքրությամբ օժտված մարդիկ միայն կուզեին իմանալ այդ բառերի ծագումը: Հաճախ մարդիկ ավելի գոհ են լինում, երբ չեն իմանում որևէ բառի ծագումը, որովհետև ծագումը իմանալու դեպքում գտնում են տգիտության պակասը:

Օրինակ՝ ռուսերեն **подбородок** «կզակ» բառը շատ սովորական և բնական մի բառ է նրա համար, որ չգիտեն բառի ծագումը, բայց հենց որ բացատրենք, թե դա նշանակում է իրապես «միրուսի տակ», տեսնք, թե որքան հիմար և անմիտ է դուրս գալու: Այսպես են նաև օտար բառերից շատերը, որոնց համար ոչ մի առարկություն չկա, բայց հենց որ նույնը թարգմանաբար կազմենք մեզ ծանոթ մի լեզվի (օր. հայերենի), իսկույն անմիտ և ծիծաղելի պիտի երևան:

Երբ մեզ տրված են լինում մի ինչ-որ բառի գնչուերեն, պարսկերեն և ֆրանսերեն ձևերը համեմատության համար, մենք աշխատում ենք գտնել նրանց հնագույն վիճակը (այն է՝ սանսկրիտ, հին պարսկերեն և լատիներեն համապատասխան ձևերը), որպեսզի ավելի ճիշտ լինի մեր կատարելիք համեմատությունը: Այսպես էլ երբ մենք ուզում ենք քննել որևէ բառի հարաբերությունը իր նշանակության հետ, պետք է առնենք այդ նշանակության հնագույնը և այդ միայն համեմատենք բառի հետ: Հակառակ պարագային սխալներն ու թյուրիմացությունները անխուսափելի են: Այսպես, օրինակ, **Հրեչտակ** նշանակում է. «այն հրեղեն էակները, որոնք երկնքում կանգնած են Աստուծո ծառայության համար»: Եթե այս լիներ բառի առաջին նշանակությունը, անշուշտ **Հրեչտակ** բառի առաջին երկու ձայնների մեջ պիտի սկսենք փնտրել **Հուր** բառը: Բայց վերի իմաստը երկրորդական առում է միայն՝ քրիստոնեության ժամանակ ստեղծված: Բառի հնագույն իմաստն էր «պատգամավոր». օրինակ [Հրեչտակ տնառն, Հրեչտակք այ]: Այս իմաստը գտնելուց հետո՝ պարզվում է մեզ համար հայ. **Հրեչտակ** և պհլ. [*frēštak] բառերի հարաբերությունը: **Պատարագ** բառը նշանակում է քրիստո-

նեական մի արարողություն՝ ի հիշատակ հաղորդության առաջին երեկոյին: Ձեռք առնելով այս իմաստը և փնտրելով **պատարագ** բառի մեջ, մենք ոչ մի ճշմարիտ արդյունքի չենք հասնի, որովհետև այս նշանակությունը նոին քրիստոնեական շրջանում ձևացած մի առում է միայն: **Պատարագ**-ի առաջին նշանակությունն է «նվեր, ընծա», և այս իմաստն է, որ կարող է և պետք է որևէ հարաբերություն ունենա **պատարագ** բառի հետ:

ԻՄԱՍՏԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Փիլիսոփայական ճշմարտություն է, թե բնության մեջ ոչինչ չկա բացարձակ, և ամեն ինչ հարաբերական է:

Այսպես է նաև լեզվի մեջ:

Երբ մեկին հարց տանք, թե ինչ է նշանակում **մեծ**, նա պիտի պատասխանի, թե ինչ որ փոքր չէ, մեծ է: Բայց ինչպես **փոքր** և **մեծ** իրար հետ համեմատած, նույնպես և ամեն մեկը իրեն վերաբերող առարկայի համեմատ՝ բազմաթիվ տարբեր աստիճաններ ունեն: **Մեծ** է փիղը, **մեծ** է քաղաքը, **մեծ** է աշխարհը, **մեծ** է տիեզերքը: Սրանցից յուրաքանչյուրի մեջ **մեծ** բառը տարբեր իմաստ ունի:

Այս տարբերությունը կոչվում է իմաստի **հարաբերականություն**:

Իմաստի հարաբերականությունը հատուկ չէ միայն ածականներին, որոնք այս դեպքում ամենից ավելի օժտվածներն են, այլ նաև՝ բայերին և նույնիսկ գոյականներին, դերանուններին և մակբայներին:

Ասում ենք՝ **մարդը սլացավ**. գնդակը սլացավ. ժամանակը սլանում է. երկրագունդը սլանում է տիեզերքի տարածության մեջ և այլն, և այս բոլոր **սլացումները** տարբեր բաներ են: Ասում ենք **քար** և կարող ենք հասկանալ փողոցում ոտքի տակ պատահած մի կտոր **քար**, կամ գերեզմանի վրա հաստատված մի **քար** և կամ լեռան լանջին կանգնած մի **քար** և այս բոլոր **քարերը** էապես տարբեր-տարբեր բառեր են:

Ասում ենք **մենք**, և այս բառի տակ կարող ենք հասկանալ երկու հոգի, որ խոսում են, մի քաղաքի ամբողջ բնակչությունը, մի երկրի ամբողջ ժողովուրդը կամ ամբողջ մարդկությունը:

Օրինակ՝ Ես ու եղբայրս գնում էինք, երբ մենք հասանք մեր տան առաջ... Մենք՝ երևանցիքս, այժմ խմելու ընտիր ջուր ունենք: Մենք՝ հայերս, նոր ենք մտնում կուլտուրական կյանքի մեջ: Մենք ներկա մարդկությանը նայում ենք անցյալ ու ապագա դարերից...:

Ասում ենք **այստեղ** և կարող ենք հասկանալ մի միլիմետր տարածություն կամ ամբողջ տիեզերքը: Օրինակ՝

Այստեղ պետք է մի միջակետ դնել:
Այստեղ՝ այս սենյակում, մոծակ չկա:
Այստեղ՝ այս քաղաքում, շատ տաք է:
Այստեղ՝ այս երկրում, տպագրությունը չի զարգացած:
Այստեղ՝ տիեզերքի այս անհուն տարածության մեջ,
արևը և բոլոր արևները մի-մի չնչին կետեր են:

*Դերանունը կարող է փոխարինել նաև ուրիշ մասունք բանիների և կամ նույնիսկ մի ամբողջ նախադասության կամ նախադասությունների, օրինակ՝ Ինձ արգելվում է քայլել, որովհետև **դա** ազդում է ոտքիս վերքին (**դա** = քայլելը).*

*Բանակ կոչվածները հավաքվեցին. **նրանք** մարմնացած ուրախություն ու ժպիտ էին (**նրանք** = բանակ կոչվածները).*

Եվ-ը, ու-ն, իսկ-ը *չաղկապում են համադաս անդամներ և նախադասություններ.* **դրանք** *համադասական չաղկապներ են (**դրանք** = եվ, ու, իսկ):*

*Կոմունիստական մանիֆեստը վերջանում է այսպես. «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք». **դա** ամբողջ աշխարհի աշխատավորության նշանաբանն է (**դա** = ամբողջ նախադասությունը)[1]:*

Հաճախ բառի իմաստը ընդհանրանում և անորոշ է դառնում, և այդ բանը կարող է լինել ըստ տեղի և ժամանակի: Օրինակ՝

սիրտ. *այժմ անորոշ իմաստ ունի, երբ ասում ենք* **սիրտս դառնում է, սիրտս խառնում է, սիրտ չունեմ.**

մանուկ. *գրաբարում թե՛ փոքրիկ երեխան է, թե՛ պատանին և թե՛ երիտասարդը (ըստ ժամանակի).*

տղա. *արևմտահայերի համար փոքր-ն է, արևելահայերի համար մեծ-ն է:*

Իմաստի հարաբերականությունը որոշելու համար մենք ունենք երկու միջոց.

*1) **Համեմատություն,** երբ երկու նման առարկաներ հիշվում են միասին, և երևան է հանվում մեկի տարբերությունը մյուսից.* **Արշակը Լևոնից մեծ է:**

*2) **Կապակցություն,** երբ բառի հետ անմիջապես հիշվում է նրան վերաբերող բառը, և այդ երկուսի կապակցությամբ միտքը իսկույն ըմբռնվում է (առանց այլ միջոցների) իմաստի հարաբերական աստիճանը. մեծ քար, Մասիսը մեծ է, փողոցի քար, գերեզմանի քար:*

Նույնիսկ երկրորդական տրամաբանական կապը, որ ստեղծվում է ածանցված բառի և նշանակության միջև, կարող է կորչել, և բառը կդառնա անտրամաբան կամ նույնիսկ հակառակ տրամաբանությամբ: Բայց դարձյալ նա իր գոյությունը չարունակում է:

Օրինակներ՝ ռուս. чернила *«թանաք» կազմված է «սև» բառից, և հարմար է անշուշտ, երբ թանաքը սև է. բայց ասում են և «կարմիր թանաք»:*

Հյ. **ջաղացք** *միայն ջրի համար է, բայց հիմա ասում ենք՝ քամու ջաղաց, կրակով ջաղաց, ձեռքի ջաղաց և այլն:*

Ֆր. les mûes sont rouges quand elle sont vertes.

Ֆր. la rivière court dans son lit *(փոխանակ հանգստանալու էր անկողնում):*

Ֆր. la tête de la rivière la bouche *(իրարից չատ հեռու են գլուխը և բերանը):*

Գետը մարդ է, ունի tête, branche, bras, côté. *մի տեղում իմաստները հետզհետե չատանում են, մի ուրիշ դեպքում իմաստները հետզհետե կրճատվում են (ինչպես ֆր.* croissant *«մահիկ», բայց միայն լուսինը չէ, որ կաճի):*

---

[1] *Օրինակները քաղված են Գ. Սևակի «Խոսքի մասերի ուսմունքը» աշխատությունից, էջ 234:*

ՆՈՐ ԻՄԱՍՏԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Նոր իմաստի տարածման միջոցներն են.

*1) **Նմանողություն**, երբ մեկը հնարում է կատակով, հեգնանքով, սրախոսությամբ և այլն մի նոր առում կամ իմաստ, որ իր սրությամբ ուշադրության արժանի է դառնում, հենց սրանով էլ տարածվում է: Լսողները իսկույն յուրացնում են նույն դարձվածը և կրկնում են իրենք էլ. այսպես նոր իմաստը տարածվում է:*

*2) **Մանուկների միջոցով:** Երբ մի բառ փոխաբերությամբ ստանում է մի նոր իմաստ, և այս իմաստը ուրիշի գործածական է, մանուկները փոխանցմամբ լեզուն ստանալու ժամանակ չեն լսում առաջին անգործածական կամ նվազ գործածական իմաստը և միայն երկրորդն են սովորում: Սրանով էլ հինը ջնջվում է, և նորը անցնում է հաջորդ սերնդին: Այսպես ֆր. saoul նչ. «կուշտ, հագեցած», որ պատկերավոր մի դարձվածքով սկսվեց գործածվել հարբածների համար, իբրև թե՝ «գինով հագեցած»: Հների համար պատկերը պարզ էր, և որոնք որ գործ էին ածում այդ բառը «հարբած» իմաստով, գիտեին, որ այդ բառը մի տեսակ euphémisme է. բայց մանուկները լսելով միայն այս իմաստով, բառը կապեցին նոր գաղափարի հետ, և առաջինը իսպառ մոռացվեց:*

Ամեն նորմուծության համար կարող ենք ասել, որ ունի երեք խավ. ա) հները, 60–90 տարեկան մարդիկ, որոնք գործ են ածում միայն հին ձևը և նոր ձևը անգիտանում են. բ) միջին սերունդ, 30–60 տարեկան անձինք, որ հավասարապես գիտեն թե հին և թե նոր ձևերը. գ) նոր սերունդ, մինչև 30 տարեկան պատանիներ և երիտասարդներ, որոնք գործ են ածում միայն նոր ձևը և անգիտանում են հինը: (Jespersen, Mankind, Wation..., *էջ 28*):

ԻՄԱՍՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Բառի [ձայնական] փոփոխության և իմաստի փոփոխության մեջ երեք կական տարբերություն կա.

1) Մինչդեռ բառերի ձայնական փոփոխությունը հարատև է և գործում է չարունակ, նշանակության փոփոխությունը չատ ավելի սահմանափակ է: Հնխ. dékm բառը այսօր հարյուրավոր ձևեր է ընդունել զանազան ժառանգ լեզուների մեջ, բայց նրա նշանակությունը («տասը») մնում է ամեն տեղ անփոփոխ և անչուշտ այդպես էլ պիտի մնա:

*2) Բառերի ձայնական փոփոխությունները ընդհանուր են. մի որևէ ձայնական օրենք, որ գործում է այսինչ չրջանում, ընդհանուր է լեզվի բոլոր բառերի համար և չգիտե բացառություն: Իմաստի փոփոխությունները բոլորովին մասնական բնույթ ունեն: Օրինակ՝ Սեղևջի մեջ (Բուլթանիա) ծառ նչանակում է «ձիթենի», և Սվեդիայի մեջ **պտուղ** նչանակում է «ձիթապտուղ». երկուսի մեջ էլ ընդհանուր բառը մասնավորի է վերածվել: Բայց այս **մասնավորացման** օրենքը ոչ միայն ընդհանուր չէ նույն բառերի համար ուրիչ բարբառներում, այլև նույն գավառականների մեջ՝ ուրիչ նման բառերի համար:*

3) Ձայնական փոփոխությունները կույր են և, իբրև արդյունք բնական՝ բնախոսական պայմանների, չեն ենթարկվում բնավ մարդկային գիտակցական գործունեության: Իմաստի փոփոխությունները, ընդհակառակը, հոգեբանական են և մեծապես ենթակա մարդկային գիտակցական գործունեության, խորհրդակցության և կամավոր փոփոխության: Ըստ այսմ՝ բառերի ձայնական փոփոխությունը միշտ ենթակա է կանոնավոր օրենքի, և բացառիկ դեպքերը մասնավոր պարագաներ են: Իմաստի փոփոխության մեջ ընդհակառակն է, և դեռ չի կարելի գտնել այնպիսի ընդհանուր օրենքներ, որոնք կառավարեին իմաստագիտությունը:

4) Երբ մի բառի հնչումը փոխվում է, միշտ նախորդը ջնջվում, և նոր ձևն է բռնում նրա տեղը. մարդիկ չգիտեն մինչև անգամ թե այսինչ բառի նախկին ձևը (ավելի ճիշտ՝ բազմաթիվ ձևերը) ինչ էին:

Այսպես՝ հնխ. dékm *ձևից մինչև հայերեն* **տասն** *նշած բոլոր միջին ձևերը մեզ անծանոթ են: Բայց այսպես չէ նշանակության փոփոխությունը: Կարող է պատահել, որ մի բառ մի նոր նշանակություն ստանա, և հին նշանակությունը բոլորովին կորչի: Օրինակ՝* **զզուել** *հին հայերենում նշանակում է «հարստահարել», նոր հայերենում ստացել է «գարշել» իմաստը: Առաջին իմաստը հիմա բոլորովին կորել է, և գործածական է միայն երկրորդը: Բայց սրանք բացառիկ երևույթներ են: Ընդհանրապես բառը իր առաջին իմաստը պահում է երկրորդ, երրորդ և այլ նշանակությունների հետ կողք-կողքի:*

5) Երբ բառի նախկին հնչական վիճակը տեղի է տալիս միշտ նորին, ուրեմն և ամեն մի ժամանակ էլ բառը միայն մի ձև ունի, իսկ իմաստը, հետզհետե զարգանալով, կարող է հասնել տասնյակների, որոնք միասին և միաժամանակ գոյություն ունեն: Այս վիճակը կոչվում է բազմանշություն (polysémie)*:*

ԻՄԱՍՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Այն բոլոր փոփոխությունները, որոնք առաջանում են բառերի իմաստի մեջ, կարող ենք բաժանել երեք մեծ խմբի.

1) Իմաստի փոփոխություններ՝ համաձայն բառի գործածության նախադասության մեջ:

2) Իմաստի փոփոխություններ, որոնք առաջանում են նշանակած առարկայի փոփոխության պատճառով (կուլտուրական փոփոխություն):

3) Իմաստի փոփոխություններ, որոնք առաջանում են բառի գործածությունը մի ընկերական միջավայրից մի ուրիշ միջավայր փոխադրելու պատճառով (սոցիալական փոփոխություն):

Այս երեք պատճառները անվերծանելի են, այսինքն՝ չունեն ոչ մի ընդհանուր կողմ, և նրանց միությունը կայանում է միմիայն արդյունքի միության մեջ, որ է նախորդից տարբեր մի իմաստ:

Առաջին կարգի փոփոխությունները թվով մեծ չեն: Որոշ բառեր, համաձայն նախադասության կազմության, ստանում են իսկականից տարբեր մի առում, որ հետո սովորական դառնալով՝ գալիս է նույնիսկ ջնջելու առաջինը: Այսպես՝ **մարդ**

ասելով հասկանում ենք առհասարակ «մարդ էակը», կամ մի կնոջ բերանում՝ «ամուսինը»: Բայց երբ ասենք **մարդ չկա, մարդ եկավ**, հասկանում ենք «որևիցե **ոք**»: Այս կարգի նախադասությունների մեջ **մարդ** գոյականը դառնում է անորոշ անուն: Այսպես են նաև գոթ. manna, գերմ. Man, անգլ. man և վերջապես լատ. homo «մարդ», որ ֆրանսերենի մեջ այս անորոշ իմաստով դարձել է pas: Rien, personne սովորական գոյականներ են ղրական իմաստով. գործածվելով ne բացասականի հետ, ստացան բնականաբար բացասական իմաստ, որից հետո ne-ն, ավելորդ դառնալով, վերոհիշյալ ղրականները վերածվեցին բացասականի: Այդպես նաև հայերեն **բան մ'ալ**, նշանակում է ղրական իմաստով «այլ սա մի բան», բայց գործածվելով **բան մ'ալ չկա, բան մ'ալ չեմ տար** և այլ նման բացասական նախադասությունների մեջ, բնականաբար, ստացել է բացասական իմաստ, և այժմ երբ ասում ենք՝

– Ի՞նչ կուզես:

– Բան մ'ալ,– հասկացվում է «ոչինչ, ոչ մի բան»:

Իմաստի տարբերությունը կարող է առաջանալ խնդրառությունից. օրինակ՝ **եկնել** բայը կարող է նշանակել թե դուրս գալ և թե բարձրանալ, ինչպես՝ **տնից եկավ** նշանակում է տնից դուրս եկավ, իսկ **ծառը եկավ** նշանակում է ծառը բարձրացավ:

Այս շփոթության առաջն առնելու համար է, որ **եկնել** բառը առաջին իմաստով ջնջել են և նրա տեղ դրել են **դուրս գալ**: Ասում են ոչ թե **տնից եկավ**, այլ **տնից դուրս եկավ**, մինչև անգամ ասում են **դուրս եկավ դուրս**, որ է՝ **դուրս եկավ**: Սրա նմանությամբ՝ **ներս եկավ ներս**, փոխանակ ասելու՝ **ներս եկավ**:

Երկրորդ կարգի փոփոխությունները ավելի բազմաթիվ են: Բառի նշանակած առարկան զանազան պատճառներով փոխվում է, բայց բառը, մնալով նույնը, հատկացվում է դարձյալ նոր առարկային: Հին ժամանակ **գրիչը** սագի փետուր էր և այս պատճառով էլ կոչվում է ֆրանս. plume, գերմ. Feder, ռուս. перо: Այնուհետև սագի փետուրը վերացվեց, և նրա տեղ նկավ երկաթե գրիչը, առարկան փոխվեց, բայց նույն լեզուների մեջ բառը չարունակում է իր գոյությունը՝ տարօրինակ հարաբերություն մտցնելով առարկայի և նրա անվան միջև:

Ֆր. orgeat և իսպ. horçhata զովացուցիչ խմիչքներ են, որոնք պատրաստվում են առաջինը նուշի, երկրորդը chufa կոչված հունդի թուրմից, բայց երկուսն էլ առաջանում են «գարի» բառից, ըստ որում, հին ժամանակ այդ երկու տեսակի խմիչքներն էլ պատրաստվում էին գարիով. հետագայում գարին բոլորովին վերացավ, բայց բառերը դեռ չարունակում են իրենց գոյությունը:

Լտ. cohors նախապես նշանակում էր «ցանցով պատած մի տեղ, ուր տավար են պահում»: Հանրապետության ժամանակ նշանակեց «ձիավոր զորաց մի խումբ», կայսրության շրջանում դարձավ «կայսերական չքախումբ», որից անցավ «պալատ» իմաստին (ֆր. cour) և այստեղից էլ՝ «մեծարանք, սիրաբանություն»:

Այսօր մենք շատ բան ըմբռնում ենք այն իմաստով, որ մեզ հասել է գործածությամբ, և կարծում ենք, թե բառի հետ առարկան էլ նույնն է եղել միշտ: Բայց որքան սխալվում ենք: «Հաց» կոչում ենք ամենօրյա այն ուտելիքը, որի պատրաստությունը և ձևը անչուշտ հնագույն ժամանակներից սկսած մինչև այժմ

տարբեր-տարբեր է եղել, բայց միշտ էլ հաց ենք կոչել և կոչում ենք: Այսպես նաև ամեն մի առարկա՝ թե նյութական և թե վերացական:

Իմաստի փոփոխությունների ամենամեծ թիվը պատկանում է միջավայրի փոփոխությանը: Այս ընդհանուր բառով հասկանում ենք ոչ միայն իրապես տեղը կամ վայրը, այլև բոլոր ընկերական խավերը, դասակարգերը, արհեստակցությունները և այլն: Քանի ընկերությունը ապրում է վայրենական կյանքով, նրա հասարակական կազմակերպությունն էլ միատեսակ է: Բայց երբ գալիս ենք գիտության ու քաղաքակրթության, ընկերության մեջ առաջանում են բազմատեսակ բաժանմունքներ, և ամեն մեկը դրանցից ունի իր չահերը, իր պահանջները, իր պայմանները, իր գաղափարները և իր հասկացողությունները: Սրանց համեմատ էլ զանազան է լինում լեզվի ըմբռնողությունը: Միևնույն բառը հաճախ ուրիշ գունավորում է ստանում կրոնավորի, իչխանավորի, զինվորի, արհեստավորի, գրականագետի ու երկրագործի բերանում, նույնպես նաև՝ երիտասարդի կամ ծերի, տղամարդու կամ կնոջ բերանում: Միևնույն operation բառը վիրաբույժի համար նչանակում է «անդամահատություն», զինվորականի համար՝ «պատերազմական գործողություն», նկարագետի համար՝ «ղրամական գործածություն», մաթեմատիկոսի համար՝ «թվաբանական չորս գործողությունները», գինեգործի համար՝ «գինիների խառնուրդ» և այլն:

Քանի բառը մի ընդարձակ չրջանից անցնում է մի ուրիչ նեղ չրջան, նրա իմաստն էլ այնքան ամփոփվում է և ընդհակառակը՝ մի բառ քանի նեղ չրջանից անցնում է մի ավելի լայն չրջան, նրա իմաստն էլ այնքան ընդարձակվում է: Ամեն մի խմբակցություն լեզվի ընդհանուր բառերը օգտագործվում է իր մասնավոր պայմանների համեմատ: Այսպիսով՝ բառերը գտնվում են երկու հակադիր ուժերի չարունակական ազդեցության ներքո, մի կողմից՝ ստանալով ընդհանուր և միօրինակ իմաստ ընդհանուր ընկերության համար, մյուս կողմից՝ մասնավոր և անջատ մի իմաստ մասնավոր խմբակցությունների համար: Այս երկուսից առաջինը, այն է՝ ընդհանուրը, ավելի ուժեղ է, տևական և փոփոխությունների նվաղ ենթակա, ըստ որում՝ համայնքի մեծության համեմատ անհատի դերը դառնում է չնչին և նորամուծությունների դեմ հակազդեցությունն ու դիմադրությունը՝ ավելի ուժեղ, իսկ երկրորդը, այն է՝ մասնավորը, ավելի տկար և ենթակա չարունակ փոփոխվելու, ըստ որում՝ անհատի դերը ավելի ուժեղ է, և համերաչխության զգացմունքն էլ պահանջ է դնում չուտ հարմարվելու: Բայց հենց որ բառը մասնավոր չրջանի մեջ ստացավ իր նոր գունավորումը, արդեն պատրաստ է փոխառությամբ նաև մյուս խմբակցությունների մեջ տարածվելու, և որքան այդ չրջանը լինի ազդեցիկ կամ ուժեղ, բառի տարածումն էլ կլինի ավելի արագ ու ապահով:

Մասնավորից ընդհանուրին անցնելու և մասնավոր իմաստի փոխարեն ընդհանուր իմաստ ստանալու գեղեցիկ օրինակ է ֆրանս. arriver-ը: Այս բառը սկզբում գործածական էր նավաստիների չրջանում՝ «ցամքին մոտենալ» (rive «ցամք» բառից), որ է «հասնել»: Նավաստիներից բառը անցավ ընդհանուր լեզվին, բայց այստեղ այլևս նչանակում է ոչ թե միայն նավի ժամանելը, այլ ընդհանրապես «հասնել»: Շատերը այս կարգի բառերի մեջ տեսնում են բանաստեղծական մի պատկեր, և այդ, իհարկե, ճիչտ կլիներ, եթե մենք նիք ընդհանուր լեզվից: Բայց, ինչպես ասացինք, բառը նախապես ընդհանուր լեզվի սեփակա-

նություն չէր, այլ առանձին լեզվի, և նավային լեզվի համար «եղերքին մոտենալը» ոչ մի բանաստեղծական պատկեր չի ներկայացնում, այլ իրերի պարզ բացատրություններն է:

Նույնիսկ այնպիսի բառեր, որոնք հատուկ անունից են կազմված, դարձյալ մասնավորից ընդհանուրին անցնելու ճանապարհով են տարածված: Օրինակ՝ **բոյկոտ** բառը: 1880 թվին՝ իռլանդական ազգային շարժման ժամանակ, Boycott անունով իռլանդացի մի կալվածատեր, հակառակ կանգնելով շարժմանը, դատապարտվեց իռլանդացի հարևաններից, որոնք որոշեցին ամեն մի հարաբերություն կտրել նրա հետ: Այդ օրից կազմվեց անգլ. to boycott բառը իռլանդական ազգային կուսակցության մեջ: Այս մասնավոր շրջանից անցավ անգլերեն ընդհանուր լեզվին և այստեղից էլ՝ ուրիշ եվրոպական լեզուների, ինչպես՝ ֆրանսերեն boycotte, գերմաներեն boycotten և հայերեն **բոյկոտի ենթարկել**, որ և ավելի ընդհանուր իմաստ ունի, քան ուներ Իռլանդիայի ազգարակներում այն ժամանակ: Նույնը կենթադրվի է նաև nicotine (Nicot – եղավ ծխախոտ ներմուծողը), և galvanisme (հնարեց ֆիզիկոս Galvani) և այլն:

Մասնավորից ընդհանուրի անցնելու դեպքում կատարվում են երբեմն իմաստի այնպիսի փոփոխություններ, որոնք զարմանալի են: Լտ. lecur «foia» բառը, որ ընդհանուր է շատ հնդեվրոպական լեզուների մեջ, կորել է բոլոր նորալատին լեզուների մեջ: Նրա տեղը անցել է ficatum բառը, որ նշանակում է «թուզով լցրած»: Լատին խոհարարների լեզվով դա մի կերակուր էր, որ պատրաստվում էր foie «լցնելով թուզով», այնուհետև այս բառը խոհարարների լեզվից անցավ ընդհանուրին, և ինչ-որ կերակուրի անունը դարձավ մարմնի մի գործարանի անուն:

ՆՄԱՆՈՂՈՒԹՅԱՄԲ ԱՆՎԱՆՈՒՄ

Անկարելի չէր մարդու համար այն բոլոր առարկաները, որոնք չրջապատում էին նրան, անվանել առանձին-առանձին արմատ բառերով: Բայց դա ինչպիսի ծանրաբեռնություն պիտի լիներ մարդկային մտքի համար: Նվազագույն ճիգի օրենքով մարդը մտածեց ուրևմն թեթևացնել իր բեռը զանազան միջոցներով: Այդ միջոցներից առաջինն է **նմանողությամբ անվանումը:**

Ամեն մի առարկա կարող է մի ուրիշ առարկայի հետ նման գծեր ունենալ. կարող էր ուրևմն մարդը վերցնել այդ նման գիծը և նրանով էլ անվանել՝ ավելացնելով, իհարկե, տարբերիչ հանգամանքը:

Այսպես՝ ֆրանսերեն chien de mer – հայերեն «ջրշուն, ծովային խոզ», գերմաներեն Meerschwein, «գետնախնձոր» – pomme de terre, հայերեն սղոցի ատամները, սեղանի ոտքը, գետի ճյուղը, չինքի թևը:

Ապագայում կարող է տարբերիչ բառը ջնջվել և բառը պահում է դարձյալ իր իմաստը: Օրինակ, ֆրանսերեն pomme de terre կամ պարզապես pomme (գետնախնձոր), երբ խոհարարի լեզվով խոսենք:

ՍԵՌԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՏԵՍԱԿ

Ձիապանը. խոսելիս երբ ասում է «անասունս», հասկանում ենք «ձի», իսկ երբ հողագործն է ասում, հասկանում ենք «եզ»:

Անգլերեն bird *(թռչուն) որսորդների լեզվով նշանակում է «կաքավ»:*

Տղան՝ *ֆրանսերեն* garcon-*ը, անգլերեն* boy *նշանակում է «ծառա». հունարեն ἄλογον «անասուն» > «ձի»:*

Մաշին (machine) *ասելով հասկացվում է* «locomotive», *«վելոսիպեդ», «ավտոմոբիլ», «կարի մեքենա», «պրիմուս», և այլ որևիցե մեքենա, որ սովորական է խոսողների համար:*

Նշանակությունները այսպես զարգանում են ըստ արվեստի, նաև՝ ըստ տեղի. ինչպես՝ թատրոնում ունենք balcon, parterre, baignoire, paradis...

Հուն. ὄρνφ (թռչուն) և հայ. հավ «թռչուն», այժմ «poule»:

Ֆրանս. labourer *(աշխատել) նշանակում է «հերկել»:*

Փոխառության ժամանակ բառը տարբեր առումով կարող է անցնել մի ուրիշ լեզվի. ինչպես՝ ֆրանսերեն solide *«ամուր» > գերմաներեն* solid *«լուրջ»,* moderne *«արդի», գերմաներեն «մոդայի»:*

ՏԵՍԱԿԻՑ ՏԵՍԱԿ

Անգլ. corn *բառը, որ նշանակում է «ցորեն», Սկանդինավիայում դարձել է «հաճար», Ամերիկայում՝ «եգիպտացորեն»:*

Հնխ. perqu *նշանակում է «կաղնի», և այս բառն է լտ.* quercus, *գերմ.* Ferch *և այլն: Բայց անգլ.* fir, *որ նույն բառն է, ստացել է «եղևնի, սոճի» նշանակությունը:*

Այս ձևափոխության ճամփան ընդհանուրից մասնավորի անցնելն է. **կաղնի***-ի վրա այլևս չեն նայում իբրև* **կաղնի,** *այլ բարձր անտառային ծառ, որով և անցնում են մի ուրիշ տեսակի, որ նույնպես անտառային բարձր ծառ է, ցորենին նայում են իբրև հացահատիկ և այլն:*

ՏԵՍԱԿԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՍԵՌ

Լինում է այն դեպքում, երբ այդ տեսակը նույն սեռի մեջ ամենասովորականն ու հաճախ պատահածն է. ինչպես՝ Մրղ. «ճունջուղ» նշանակում է ընդհանրապես թռչուն, որովհետև ամենասովորական թռչունը ճնճղուկն է եղել: Այսպես է նաև իսպան. pajaro *«թռչուն», որ լտ.* passer *«ճնճղուկ» բառից է առաջանում:*

Պրս. gul, *և նրա նմանությամբ Թավրիզի բարբառով* **վարդ,** *նշանակում է ընդհանրապես «ծաղիկ»: Այսպես նաև Հարավսլավական լեզուներում* roza *նշանակում է «ծաղիկ»:* (Carnoy, La mot, *էջ 117): Նորմանդիայում* pommier *«խնձորենի» է կոչվում ամեն տեսակի ծառ (անդ, էջ 117):*

ԲԱՌԻ ԻՄԱՍՏԻ [ՓՈԽՎԵԼԸ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՄԲ]

Բառերի իմաստը փոխելու ձևերից մեկն էլ տեղի փոփոխություն կամ փոխանակություն է: Ամենքս էլ առավոտը իրար տեսնելիս ասում ենք «բարի լույս», իսկ երեկոյան և գիշերը՝ իրար ճանապարհ դնելիս՝ «լույս բարի»:

Մահմեդականները իրար բարևելիս ասում են՝ **«սալամ ալաքում»,** *իսկ նրա պատասխանն է՝* **«ալաքում սալամ»:**

Ինչքան տարբեր արտահայտություններ են հայերեն **ո՛չ թե** *և* **թե ոչ.** *ինչպես՝*

Ո՛չ թե դու ես բերել, այլ ես:

Թե ոչ՝ քեզ տնից դուրս կանեմ:

Տաճկերենում **սուլթան** *բառը, երբ նախադաս է անունից, նշանակում է «թագավոր, սուլթան», իսկ երբ ետադաս է, դառնում է «թագուհի». օր. Սուլթան Ահմեդ, Սուլթան Սուլեյման, բայց Վալիտե Սուլթան «Մայր թագուհի»:*

Պարսկերենում **միրզա,** *որ բառացի նշանակում է «իշխանուհի», անձնանունից առաջ դրված, հասարակ պատվանուն է, ինչպես՝ Միրզա Հուսեին, Միրզա Կարապետ և այլն, իսկ երբ հետադաս է, ցույց է տալիս «արքայորդի»: Օր. Ֆաթհալի շահի որդին էր Աբբաս միրզան, որ ռուսաց դեմ չարունակեց պատերազմը մինչև լիակատար պարտվելը. Մեհմեդ-Ալի շահի որդին էր մանկահասակ «Ահմեդ միրզան», որ հետո գահ բարձրացավ:*

Ռուսերենում թվական ածականը դնելով գոյականից առաջ՝ նշանակում է ճիշտ թիվը, իսկ հետադաս՝ ցույց է տալիս մոտավոր թիվը:

Ռուսերենում տարբեր խոսքեր են՝ собака у меня *և* у меня собака. *առաջինը նշանակում է «շունը ինձ մոտ է», իսկ երկրորդը՝ «շուն ունեմ»:*

Ֆրանսերենում կան մի քանի ածականներ, որոնք նախադաս և ետադաս տարբեր իմաստ են ստանում: Այսպես են՝ bon, grand... *Տաճկերենի մեջ* sultan *նախադաս արական է, ետադաս՝ իգական:*

Այս կարգի օրինակներ հայերենում. **կոչեցյալ՝** *նախադաս նշանակում է «հռչակավոր, հենց այդ բանի համար կանչված», ինչպես՝ կոչեցյալ բժիշկ Կարապետյանը... ետադաս՝ «անունով միայն, անարժեք»՝ Բժիշկ կոչեցյալ Կարապետյանը:*

Այսպես է նաև **անվանի** *բառը, որ ռամիկ լեզվով ետադաս նշանակում է «անունով», ինչպես՝ Անվանի բժիշկ է: Կարապետ անվանի մի տղա կար:*

Նույնպես և բարդ բառերի մեջ՝ լուսահոգի — հոգելույս, արժանապատիվ — պատվարժան:

ՄԱՍՆԱՎՈՐԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ
(extension *կամ* génération, généralisation)

Աջ *«սրբի ձեռք». ընդհանրապես աջ ձեռքը լինելու պատճառով ստացել է այս իմաստը: Բայց կա մինչև անգամ ձախի համար ասված* **աջ.** *օրինակ՝ Ասաց վասն*

Լուսավորչի Աջոյն. զայդ որ Լուսավորչի Աջ ասես. աջո՞յ Աչն է թէ ձախոյ. մեք ասացուք թէ աջոյ Աչն է. Առաք. պտմ. 320. (գլխատառ գրվածները նչանակ. ձեռք, մանրատառը՝ «աջ»):

Պրսկ. čārkūši *բուն նչանակում է «քառակուսի». այս բառով հասկացվում էր առաջ «գինու մի տեսակ քառակուսի աման», բայց ավելի հետո ընդհանրանալով՝ գինու ամեն աման կոչվեց:*

Մասնավորից ընդհանուր իմաստ անցնելուն չատ հարմար են բայերը: Օրինակ՝ **առնել** *բայով ասում ենք՝ առնել (մեկի տվածը), առնել (գնել), մի դեղ առնել, սուրճ առնել, ցուրտ առնել, սիրտը առնել, գլուխն առնել գնալ, մի տոմսակ առնել..., և այս բոլորի մեջ խնդիրն է, որ երևան է հանում բայի իսկական իմաստը, ապա թե ոչ միայն բայով չատ անորոշ հասկացութիւն կկազմվեր:*

Vauxhall *Լոնդոնի մի արվարձան էր, որ ծառայում էր իբր զբոսավայր: Երբ առաջին անգամ երկաթուղի գցեցին, առաջին կայարանը այստեղ էր. մասնավորը դառնալով ընդհանուր՝ նրա անունը տարածվեց բոլորի վրա, որից և ռուսերեն* **вокзал** *«վակզալ»:*

Մասնավորից ընդհանուրին անցնելու լավ օրինակներ են ֆրանսերեն pas, mie, goutte, point *բառերը, որոնք բնապես նչանակում են «քայլ, փչրանք, կաթիլ, կետ», իսկ այժմ հասարակ և ընդհանուր բացասական բառեր են:*

Նախապես ասել են՝

je ne marche pas *չեմ առնում մի քայլ (անգամ),*
je ne vois point *չեմ տեսնում մի կետ (իսկ),*
je ne mange mie *չեմ ուտում մի փչրանք (իսկ),*
je ne bois goutte *չեմ խմում մի կաթիլ (անգամ),*

ապա այդ գոյականները վերածվել են բացասական նչանի, և ընդհանուր առումով ասվում է, օրինակ, je ne bois pas *ես չեմ խմում,* je ne marche point *ես չեմ քայլում բնավ և այլն:*

Ընդհանրացման ավելի խոչոր օրինակներ են՝

ռուս. **крестянин** *«քրիստոնյա», այժմ՝ «գյուղացի».*
ֆրանս. commère *«կնքամայր», այժմ՝ «կին որևէ».*
բարբր. **մի կաթ** *«մի քիչ», բուն՝ «մի կաթիլ».*
դուրս (բուն՝ դռան առջև), այժմ՝ ամեն բանի համար.
Հուն. ἔνδογ *«տանը, ի տուն», այժմ՝ ամեն բանի «մեջ»:*

Թավրիզում «վարդ» ասելով հասկանում են «ամեն մի ծաղիկ». այսպես և տեղացի թուրքերը (gül), *պարսիկները* (gol), *հարավային սլավոնները, ինչպես՝ սլովեն.* roža, *խորվաթ.* rožica *«ծաղիկ», որոնց սահմանակից գերմանացիք էլ չգիտեն* blume *բառը և ունեն միչտ* rose, *այսպես և մերձակա իտալացիք:*

Այսպիսի փոփոխութիւններ լինում են անասունների անունների մեջ, բույսերի, մարմ...*

Մի հատկանիչ ամբողջի տեղ.

օր. ամուսնանալ ասելու փոխարեն՝

Հայ. պսակվել = Հուն. στεφανώνομαι, Թրք. էվլէնմէք.
Ֆր. obtenir la main de quelqu'un *(ձեռքը սեղմելուց).*

* *Մեքենագրված օրինակում այստեղ 65-րդ էջը բացակայում է (Ս. Գ.):*

լատ. conjugium, *հուն.* συζευεω ποιεῖσθαι.
լատ. uxorem ducere, *հուն.* εις οἶμον ἄγεδαι, *իսպ.* casar.
հայ. կին առնել (աղջիկը իր տունը բերելուց).
անգլ. wedding *(պայման կնքելուց).*
հուն. ἄλοχος *(մեկ անկողին պառկելուց).*
լատ. confarreatio, *ֆր.* conduire à l'autel *(եկեղեցական կարգից):*

Մասնավորը դառնում է ընդհանուր: *Օրինակներ.* Moka-*ն մի քաղաք է, որտեղից լավ սուրճ է դուրս գալիս, բայց ամեն տեսակի սուրճ* moka *է կոչվում:*

Ֆր. panier *էր այն* ուռի-*ից չինված կողովը, որի մեջ հաց էին դնում. ընդհանրացմամբ ամեն կողով հետո կոչվեց* panier:

Ռուս. комната *«սենյակ» է, լատ.* caminata *«վառարանավոր», այն սենյակը, ուր վառարանն է չինված. հետո ընդհանրացել է:*

Գերմ. behenken *«նվիրել» նշանակում է բուն «բաժակում լցնել», իմա՝ «խմելու բան տալ»* (Klunge, *էջ 418), հետո ընդհանրացած:*

Ֆր. saison *«եղանակ». ծագում է լատ.* satis *«ցանել» բառից, ուրեմն հարմար է միայն այն եղանակին, երբ ցանքն է լինում. հետո դարձավ՝ «տարվա բոլոր եղանակներին», և հետո էլ ավելի ընդհանրանալով՝ «ամեն բանի ժամանակին»:*

Ֆր. arriver *«ցամքը» բառից է, և սկզբում միայն նավի համար էր. այժմ ամեն բանի համար՝ «հասնել»:*

ԸՆԴՀԱՆՈՒՐԻՑ ՄԱՍՆԱՎՈՐ
(restriction *կամ* spécialisation)

Ընդհանուր անունը հատկացվում է մասնավորին, երբ այդ մասնավորը խոսողի համար կարևորագույն նշանակություն ունի, և երբ վստահ է, որ անշուշտ պիտի հասկանան: Այս միջոցին տեսակը հատկապես ճշտել ավելորդ նեղություն է լինում, և մոտավոր բառն էլ բավական է: Օր.՝ երբ ագարակում տերը հրամայում է «անասուններին» ներս տանել, իսկույն հասկացվում է, որ դաշտի կովերի համար է խոսքը: Իսկ երբ մի հովիվ կամ մի կառապան է խոսում, հասկանալի է, որ խոսքը ոչխարի կամ ձիու մասին է: Երբ ասում են opération, *ամեն մի մասնագետ իր ուղած ձևով է հասկանում. (բժիշկը՝ վիրահատություն, ելևմտագետը՝ դրամական, ռազմագետը՝ կռվի հարձակում, անտառաբույծը՝ կըտրելիք ծառերը, մաթեմատիկը՝ խնդիր լուծել: Նույնպես՝* saison *սրճարանատերի համար,* villa *ունեցողի համար, չոր կարողի և այլն) և այսպես շատ բառեր:*

Մի գյուղացու համար **եկեղեցին, ջաղացքը, գետը, առուն, սարը** *մասնավոր գաղափարներ են դարձած: Այսպես նաև մի նշանավոր քար, ծառ, լճակ և այլն, և այս անունները որպես տեղի հատուկ անուն են գործածվում, որովհետև, մի հատ լինելով, չեն կարող չփոթվել: Այսպես նաև երբ գյուղացիք իրար պատահելիս հարցնում են՝ «գյո՞ւղ ես գնում», հասկացվում է իրենց այսինչ գյուղը:*

Այս գործածությամբ է, որ հին հույները և լատինները **քաղաք** *ասելով հասկանում էին Աթենք և Հռոմ, վրաց. քալաքը Թիֆլիսն է:*

Այսպիսի բաներ շատ սովորական են հատուկ անունների մեջ, և շատ անգամ միևնույն բառը զանազան լեզուներով տարբեր տեղեր է նշանակում. օրինակ՝

Monastir, Münster, Montreux, Moûtiers – *բոլորը «վանք» են.* Napoli, *Νεα πολυ, Են չհիր,* Новгород, *«նորաքաղաք», Նավչհիր և այլն – բոլորը «նոր քաղաք» են,* Anatoli, Xorasan – *«Արևելք» են,* Vindo-bonna (=Vienne) *կելտական լեզվով «սպիտակ քաղաք» է, որ այլուր դարձել է* **Բելգրադ, Բելից գորոդ, Հիք չահիր** *և այլն:*

Կոտրիչ *կարող է շատ բան նշանակել, բայց հասկանում ենք ընկույզի, չաքարի կամ կաղինի կոտրիչ:*

Ունելի՝ *միայն կրակի մաչա:*

Հյուսիսային Իտալիայում «ծառ» ասելով, որ ընդհանուր անուն է, հասկացվում է «չագանակենին» (BSL 33, № 100, *էջ 95*), *որովհետև գլխավոր ծառը չագանակենին է:*

«Հաց» բառի իմաստը հայտնի է ամենքիս, բայց որովհետև նա մեր հիմնական սնունդն է, ուստի նա ստացել է «ճաշ, ուտելիք, ընթրիք» իմաստները, օր.՝ ասում ենք՝ **հաց կերե՞լ ես** = *«ճաշե՞լ ես»,* **իրիկնահաց** = *«ընթրիք»,* **հաց տվեց** = *«ճաշ տվեց, հացկերույթ սարքեց»: Եվ այս բանը ոչ միայն այսօր ենք ասում, այլ հնուց էլ հայտնի է: Օրինակ՝ Անդէն իսկ ի հացին քարշին զալիսն Արգամայ – Խոր. Բ. 48 (ճաշի վրա հենց Արգամի միրուսն են փետում):*

Արկէ՛ք հաց՝ Ծն. ԽԳ, 31 (այսինքն՝ սեղան բացեք), սրանից էլ ունենք **հացկերույթ,** *ուր ոչ միայն հաց են ուտում, այլև բազմատեսակ կերակուրներ.* **մեծահաց** *«մեծ հացկերույթ, խրախճանք», Պատրաստիցէ առնել ուրախութիւն կոչնոց ընկերաց, մեծահաց գործիցէ Բ. 28, ուր են «կոչանք կամ գիներրուք»: Այսպիսի ձևեր անըմբռնելի են, օր., ռուսաց, ուր չի կարելի ասել* ...*

xarās *համապատասխանում է գրբ.* **երկան իչոյ** *ձևին: Սկզբում այդպիսի ջաղացքը էչով էին պտտացրել: Բայց այժմ Պարսկաստանում* xarās *է կոչվում ամեն ջաղացք, լինի դա էչով պտտացրած, ձիով, թե եզով (Գևորգ Դպիր. Պրս. բառ. Պոլիս, 1826, էջ 179 բ):*

ԻՄԱՍՏԻ ՄԵՋ ԶԳԱՑՆՈՒԹՅՈՒՆԸ

Միայն քաղաքագետներն ու գիտնականներն են, որ իրենց գործածած լեզվի մեջ զգուշանում են դնել այնպիսի մի ձև, որ հայտներ իրենց ներքին զգացմունքը (համակրանքը կամ հակակրանքը) տրված հարցի վերաբերմամբ: Առաջինների այս զգուշությունը ննջամտության, երկրորդներինը՝ գիտական սառն ու ճիշտ վերաբերմունքի պատճառով է: Բայց, սրանցից դուրս, ամեն ոք էլ իր խոսակցության կամ լեզվի մեջ անհրաժեշտորեն դնում է մի այնպիսի ձև, որով հայտնում է, թե ինքը ինչ վերաբերմունք ունի դեպի այդ հարցը: Առանց զգացության լեզուն մի մեռյալ մարմին է և չի ծառայում իր նպատակին, որ է՝ մտքերի ու զգացմունքների կենդանի արտահայտիչը լինել երկու խոսակիցների միջև:

Այս վերաբերմունքը կոչում ենք **զգայնություն:**

Զգայնությունը ըստ բովանդակության երեք տեսակ է՝ **համակրանք, հակակրանք և չեզոք վերաբերմունք:**

* *Մեքենագրված օրինակում բացակայում է 7 տող* (**Ս. Գ.**):

Այսպես՝ երբ ասում ենք **թեթև**, *հայտնում ենք մեր համակրանքը,* **ցուցե՝** *հակակրանքը,* **կարելի է՝** *չեզոք է:*

Ըստ ձևի զգայնությունը արտահայտելու համար կան հետևյալ եղանակները.

1) Զգայնության արտահայտության ամենահասարակ ձևը **խոսողի տոնն է.** *միևնույն* **այո** *կամ* **ոչ** *բառը կարելի է արտասանել սրտով, խանդագին, ուրախությամբ, հաճույքով կամ տխրությամբ, ակամա, դառնացած, բարկացած, լիասիրտ, կեսբերան, հեգնությամբ, քնքշությամբ, իսկույն կամ երկար սպասելուց հետո և այլն, և այլն:* **«Ինչ բախտ».** *կարելի է հասկանալ թե լավ (բարեբախտություն) և թե վատ (դժբախտություն) իմաստով:*

2) **Գործածության տեղը կամ հարակից բառերը**

Կան բառեր, որոնք առանձին վերցրած կամ հակակրական են և կամ չեզոք, բայց գործածվելով այսինչ կամ այնինչ բառի հետ՝ փոխում են իրենց զգայնության տեսակը: Այսպես՝

մահապարտի **աթոռը**	–	*հայրապետական* **աթոռ.**
ճառագայթներ	–	*հույսի* **ճառագայթներ.**
վայրենի *ձիթենի*	–	**վայրենի** *բնազդներ.*
անձրևի *կաթիլ*	–	*թույնի* **կաթիլ.**
գետը **հոսում է**	–	*գաղափարները* **հոսում են.**
չար **բախտ**	–	*բարի* **բախտ.**
հաջող **պատահմունք**	–	*դժբախտ* **պատահմունք.**
բարեհաջող **պայմաններ**	–	*դժբախտ կամ վատ* **պայման.**
լավ **սովորություն**	–	*վատ* **սովորություն:**

Լտ. tempestas *նշանակում է ընդհանրապես «ժամանակ». բայց հետո՝ «լավ եղանակ, պայծառ օր» և՝ «վատ եղանակ, փոթորիկ», որից ֆրանսերեն* tempête *«փոթորիկ»:*

Առանձին գործածված՝ այս կարգի բառերը լինում են, նույնիսկ առանց որևէ տոնի, համակրական կամ հակակրական և կամ չեզոք:

Համակրական են՝	[*Հակակրական՝*]
Բախտ ունես.	*Բախտ չունես:*
Ճաշակ ունի.	*Ճաշակ չունի:*

Տնսք չունի. Տեսք «գեղեցիկ» (համմտ. լատ. formosus, *իսպ.* hermoso, *սանսկ.* rúpavant – *բուն նշանակ.՝ «ձև ունեցող», հետո՝ «գեղեցիկ», ինչպես հայ. ձևավոր):*

3) Առանձին բառեր, որոնք հենց իրենց նշանակությամբ էլ համակրական են կամ հակակրական: Այսպես, երբ մի կուսակցական խոսում է իր կուսակցության և կամ հակառակ մի կուսակցության մասին, և կամ երբ մեկը խոսում է գիտության և տգիտության մասին, օրինակ՝

Մեր կուսակցության մարտիկները, խմբակները, առանդը...

Նրանց ոհմակը, չայկան, նրանց ինտրիգները...

Տրված օրինակները ցույց են տալիս իմաստի համակրական կամ հակակրական և չեզոք գործածությունը միևնույն բառի համար, միևնույն ժամանակ: Բայց ավելի հետաքրքրական են իմաստագիտության տեսակետով այն բառերը, որոնք լեզվի զարգացման ընթացքում տեղափոխել են իրենց իմաստը զգայության տեսակետից և մեկից անցել մյուսին:

Այսպիսի փոփոխությունները կարող ենք դասավորել հետևյալ ձևով.

1) Իմաստի հակառակությունը առաջանում է **հանգամանքների** *և* **դեպքերի** *բերմունքով:*

Օր.՝ **ազգասեր** *«իր ազգը սիրող» համակրական բառ է, բայց այն չարաչահելու հետևանքով, որով ժամանակին զանազան մարդիկ ազգասիրական դիմակի տակ ուտում էին ազգային դրամները, բառը այսօր ստացել է հակակրական իմաստ:*

Ֆրանսերեն précieuse *«թանկագին» ստացել է ծաղրական իմաստ, ըստ որում, ժե դարում այս անունով մի խումբ տիկիններ լեզվի ու արտաքին ձևերի մեջ գործ էին դնում ծիծաղելի նորելուկ ձևեր:*

Ֆրանսերեն jésuite *«հիսուսական կրոնավոր», հայերեն ճիզվիտ, եզվիտ նշանակում է «խարդախ, խաբերա, խորամանկ, նենգամիտ»:*

Հուն. πειράω *նշան. «փորձել», երկրորդաբար՝ «կռվի ժամանակ հարձակման փորձ կատարել թշնամի բանակի կամ բերդի վրա», ավելի հետո՝ «կռվի վրա», որից առաջացան* πειρατής, *ֆրանս.* pirate *«ծովահեն», բուն՝ «փորձող»:*

Արաբ. hikāyat *նշան. «պատմություն»: Ըստ որում, հաճախ պատմությունները լցված էին լինում սուտ ու անհավատալի դեպքերի նկարագրությամբ, ուստի* **հեքիաթ** *նշան.՝ «սուտ ու մտացածին պատմություն»:*

Հայ. **դեղ** *նշանակում էր* **խոտ**, *բայց որովհետև խոտերը հին ժամանակ գործածվում էին իբրև բժշկական միջոց, ուստի ստացավ «դեղ, դարման» իմաստը և հետո էլ, որովհետև այդ դեղերը, ի չար գործ դրվելով, հաճախ մահացու էին դառնում, ուստի* **դեղ** *նշանակեց «թույն» և* **դեղել**՝ *«թունավորել»:*

«Զարգացած» բառը վատ իմաստով է առնվում այժմ:

2) Իմաստի հակառակությունը առաջանում է ժողովրդական հոգեբանության ընկերային կազմակերպության փոփոխության և դասակարգային չերտավորության պատճառով. ինչպես՝

Հին ժամանակ **ազնվական, իշխան, բուրժուա, արիստոկրատ,** (bourgeois, aristocrate), **տերտեր, տիրացու, պատվելի, վարժապետ, պարոն** *համակրական բառեր էին, իսկ* **գեղջուկ, գյուղացի, չինական, ռամիկ, բանվոր** *և այլն՝ հակակրական բառեր: Այսօր կարգերի փոփոխությամբ առաջիններն դարձել են հակակրական, երկրորդները՝ համակրական:*

Արհեստների մեջ **բախկալ, փինաչի, դալլաք** *նախատական բառեր են, այսպես նաև ֆրանս.* chimiste *(քիմիկոս),* architecte *(ճարտարապետ),* épicier *(բախկալ),* պորտ. tratante *(վաճառական) նշանակում է* **խաբեբա:**

Ֆրանս. charlatan *նշանակում էր նախապես «հասարակական վայրերում դեղորայք վաճառող կամ ատամ քաշող». այժմ ընդհանուր դարձած բառ է «շառլատան, խարերա» նշանակությամբ:*

3) Ազգային հակառակության և կրոնական տարբերության պատճառով. ինչպես՝ թուրք, հույն, լազ, քուրդ, ղազախ, հրեա, ջհուդ:

Այս զանազան եղանակներով ու պատճառներով առաջացած զգայական երևույթները հետևյալներն են.

1. Քաղաքավարական բացատրություն կամ պարկեշտաբանություն (euphémisme).

2. Քնքշանք կամ փաղաքշական լեզու.

3. Իմաստի բարձրացում կամ աղնվացում, որոնց հակառակներն են.
4. Նախատական կամ արհամարհական լեզու.
5. Ստորացում:

ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՊԱՐԿԵՇՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (euphémisme)

Ամոթ համարված բառերի տեղ մի ուրիշ ձև դնելն է. օր. **կին** *ասելու փոխարեն՝ նշանածս, քույրդ, ընտանիքս:*

Ֆրանսերեն épouse, *որ է «կին», ծագում է լատիներեն* sponsa *«նշանած» բառից. նույնպես անգլերեն* bride *թե՛ նշանած է, թե՛ կին:*

Համմտ. ոտաչոր,
փափուկ տեղեր,
բամբակ:

Ֆրանս. gorge՝ *կնոջ ստինքների համար, հայերեն՝ կուրծք: Ամերիկայում* smoking room, barber, men's waiting room, lavatory *և այլն՝ «արտաքնոց»:*

Ղրբ., Շմխ. **սոխ** *բառը ջնջված է, ըստ որում տեղական Թրք. այդ ձևը նշանակում է այլ բան: Նոր Նախիջևանում պատահել եմ մեկին, որ զգուշացնում էր գործածել հյ.* **պզդիկ**, *որովհետև ռուսերենով վատ իմաստ էր դուրս գալիս, պետք էր ասել* **փոքր** *(և իրոք այս է Նոր Նախիջևանում ընդունված ձևը): Սրան ի հաստատումն գտնում եմ այժմ* **Ашмарин, Матер.**, *382 տրված մի նկատողություն, ըստ որում, ադրբ. Թրք.* säksän *40 բառը ջնջված է և փոխանակված պրս.* heštab *բառով, և չուվաչ* xuy *«ինքը» բառը ջնջված է լեզվից նույն պատճառով:*

Ամենանվիրական համարված բառերը կարող են իմաստից իմաստ անցնելով հասնել մի շատ անպարկեշտ նշանակության: Օրինակ, Երբ. dbir *բառը, որ նաև հայերենի մեջ փոխառնվելով՝ դարձել է* **դաբիր**, *նշանակում է «երբայական տաճարի երրորդ մասը, սրբություն սրբոցի վերջին սենյակը, որ համարվում էր վայր աստվածխոսության, և ուր քահանայապետը միայն մուտք ուներ»: Նույն է արաբ. >ḍ>*dubur *«յետոյք, նստոյ տեղի»: Երկուսի էլ ընդհանուր իմաստն է «հետևը»:*

Հյ. **դաստառակ**, *որ հին հայոց մեջ նշանակում էր «Քրիստոսի անձնառագործ նկարը», որ ինքը, թաչկինակի վրա նկարելով, ուղարկել էր Եղեսիայի Աբգար Թագավորին. պաշտվում էր իբր ամենամեծ սրբություն, և այժմ ևս Իտալիայի իտալական մի եկեղեցում իբրև սրբություն պաշտվում է, դարձել է պոլսահայ բարբառում* **դասդառագ** *«մասն վարտեաց որ զառակասն ծածկէ»:*

ԻՄԱՍՏԻ ՄԵՂՄՈՒԹՅՈՒՆ

Ներկա քաղաքավարական ձևերի մեջ ամենից զգալին է **փափուկ** *լեզվի ձևը, որ մենք կոչնցինք այս վերնագրով: Օրինակ՝ չենք ասում կամ անհարմար ենք գտնում ասել «սուտ ես ասում», այլ՝ «ձեր ասածը չի համապատասխանում ճշմարտության». կոպիտ է ասել՝ «քնած է», և պետք է ասել մեղմ ձևով՝ «հանգըստանում է»:*

Իմաստի մեղմությունը այնքան բազմազան ձևեր է ստանում, որ անհնարին է դասավորել և մի ընդհանուր կանոնի տակ դնել: Երբեմն այդ մեղմությունը չափազանցության է հասնում:

Արևմտահայ գրող Եղիա Տեմիրճիպաչյանը, որ անձնասպանությամբ վերջ տվեց իր կյանքին (1908 թ.), իր խելագարության չրջանում հոդվածներ էր գրում «Արևելք» թերթում (թե՞ «Բյուզանդիոն»), որոնց մեջ «թչնամիներ» էր որոնում: Մի հոդվածում գրում է. «Կղերոնականի տեսուչ պր. Մոստիչյանն ալ ինձ ծաղրած լինելու երևույթին ուննալ կթուի կարծես». ամբողջ չորս անգամ մեղմացրել է ծաղրելու գաղափարը.

1. Ոչ թե՝ **ծաղրելու**, այլ՝ **ծաղրած լինելու**, *որ արևմտահայ լեզվի մեջ առաջինի մեղմ ձևն է.*

2. **Երևույթին ունենալ**, *որ իրականությունից չատ ցածր է, փոխանակ ասելու՝* **ծաղրել.**

3. **Կթուի** *և ոչ թե՝* **է.**

4. **Կարծես.** *բոլորովին ևնթաղրական:*

Մեղմ արտահայտության սովորական մի ձև է, հատկապես արևմտահայոց մեջ, ֆրանսերենի նման գործածել անցյալ անկատարի ձևը, փոխանակ ներկայի:

Օրինակ. փոխանակ ասելու՝ «խնդրում եմ ձեզ ընդունել իմ առաջարկը». ասում են. «կուզեի խնդրել ձեզ, որ ընդունեիք իմ առաջարկը»:

ՀԵԳՆԱՆՔ (Ironie)

Պատկերավոր բացատրության երկրորդ գիծն է հեգնանքը: Ժողովուրդը սիրում է իր խոսակցության մեջ դնել զվարճալի բացատրություններ: Օրինակ՝

Ֆրանսերեն Galetas *նշանակում էր Պոլսի Ղալաթիա թաղը և այնտեղի մեծ աշտարակը, որ Պոլսի ամենաբարձր չենքն է. հեգնանքով* galc tas *դարձավ «աղքատի ողորմելի բնակարան»:*

Երևելի՛ մարդ... (գնչ մտքով):

ԴՐԱԿԱՆԸ ԲԱՑԱՍԱԿԱՆ

Հակառակ իմաստ ստացած բառերի մեջ հետաքրքիր են նրանք, որոնք դրականից վերածվել են բացասականի. այսպես՝

Ֆրանս. pas, point, rien, personne, jamais, *որ նշանակում են՝*

ոչ, բնավ, ոչինչ, ոչ ոք, երբեք, նախապես դրական բառեր էին:

Pas «քայլ» *բառից է* personne. *նշանակում է ստուգել, պարզապես «անձ»,* jamais *նշանակում էր «մի ժամանակ»:*

Այսպես նաև հյ. ունենք **բնավ, ամենևին, երբեք, ոգի,** *որոնք ոչ միևնը բացասական միտք չունեն ի բնե:*

Գերմ. մի բարբառում jawohl *նշանակում է այո, իսկ սրանից* awol՝ «ոչ» (MSZL, 23, 340):

Ամերիկյան bakaïri *լեզվով բացասականով կազմված հականիշ բառեր, ինչպես՝*

kxura *լավ*, kxura-pa *վատ.*
iwaye *հնոռ*, iwaye-pa *մոտ:*
(Steinen, 403)

Երկու լեզուների կամ զանազան բարբառների համեմատությամբ կարելի է գտնել նրանց գոյությունը: Օրինակ՝

Նոր Նախիջևանի հայոց բարբառով **ջումալ** *նշանակում է «տգեղ, տձև, այլանդակ». այս բառը ծագում է արաբ.* jamāl *«գեղեցիկ» բառից:*

Հայերենից օրինակներ տալու համար հիշենք **Երիմյան Հայրիկին.** *այս նշանավոր գործիչը ժողովրդի կողմից ստացել էր գեղական* **Հայրիկ** *տիտղոսը: Երբ կաթողիկոս եղավ,* **Հայրիկ** *բառը այնպես սովորական դարձավ, որ այլևս նշանակից կաթողիկոս և հաջորդ կաթողիկոսներին էլ կոչեցին Հայրիկ, ինչպես Իզմիրլյան Հայրիկ և այլն:*

Ինչպես ձայնական դրությունը կարող է այնպես լինել, որ բառի ստուգաբանությունը անորոշ մնա, նմանապես բառի իմաստը կարող է այնպիսի աստիճանի հասնել, որ նշանակությունը անորոշ մնա: Գր. **Հասակ** *բառը նշանակում է թե* **բարձրություն** *և թե* **տարիք:** *Հին հայերենում կարդում ենք.*

Իսկ արդ ո՞ ի ձէնջ առ հոգալ իւրում յաւելուլ կարիցէ ի հասակ իւր կանգուն մի (Մտթ., Զ, 27):

Բայց միևնույն ժամանակ ունենք. Վասն հասակի տղայութեան նորա: Մատաղ հասակաւ (Եւս. պտմ. և քր.):

Այսօր էլ ասում ենք **բարձրահասակ** *և* **մեծահասակ** *(առաջինը բարձրության համար, երկրորդը տարիքի համար), ինչպես և* **մանկահասակ:** *Միևնույն ժամանակ ասում ենք* **կարճահասակ** *(բարձրության համար), իսկ* **փոքրահասակ** *(տարիքի համար):*

Գուցե այս անորոշության համար է, որ **հասակ** *բառը ջնջվել է բարբառներից, և նրա փոխարեն գործածվում է* **տարիք** *և* **բոյ** *(վերջինը թուրքերենից փոխառյալ):*

ՍԱՍՏԿՈՒԹՅՈՒՆ

Expressif *լինելու պահանջի լավ օրինակներից մեկն է բացասականը: Հնխ. ձևն էր* ne, *որ պահում են սանսկ.* na, *հսլ. և լիթ.* ne, *գոթ.* ni: *Այս բառը չատ կարճ էր և անարտահայտ: Բացասականը այնպիսի մի արտահայտություն է, որ բնապես պահանջում է սաստկություն, ուժգնություն: Խոսողը միշտ ցանկություն ունի տպավորություն թողնելու իր խոսակցի վրա, ուստի զանազան ձևերով սկսեցին զորացնել այս բառերը. գերմաներենում և լատիներենում ավելացրին «մի» բառը, իբր «ոչ մի», որով կազմեցին լտ.* noenum, *գերմաներեն* nein (neein): *Իսկ այս լատիներեն* noenum *ձևն էլ, չատ գործածվելով, եղավ* nôn, *որ կորցրեց իր արտահայտչությունը: Ֆրանսերենը ստիպվեց նոր ուժ տալու համար ավելացնել ուրիշ փոքր բառեր, և եղավ* non pas, non point, *այժմ էլ* pas

դարձավ թույլ, և զորացրին նոր ձևերով, pas du tout, absolument pas, կամ ինչպես արգոտներն՝ tu penses, s'il sat venu!, որ է՝ «չի եկել»:

Այսպես ուրեմն սաստկացումը ու թուլացումը չարունակ կրկնվող երևույթներ են:

ԳԳՎԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Ֆինքչանք կամ փաղաքչական լեզու

Սիրված երևույթ է խոսակցության մեջ գործածված բառերին տալ մի մեղմ ու սիրելի արտահայտություն, որոնց առաջին և սովորական միջոցը նվազական մասնիկով կազմված բառերն են, որ, ըստ այմ, փաղաքչական են, ինչպես՝ թաթիկ, տոտիկ, աչիկ, հացիկ...

Ֆրանսերեն շատ բառեր լատինականի նվազականից են, ինչպես՝ oreille *(ականջ),* soleil *(արև),* taurean *(ցուլ),* mulet *(ջորի),* cochon *(խոճկոր),* ganou *(ծունկ) և այլն: Օրինակ՝* soleil*-ը լատիներեն* sol *բառի նվազականն է, որ հիմա իր նվազական իմաստը կորցրել է:*

ԻՄԱՍՏԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԿԱՄ ԱԶՆՎԱՑՈՒՄ

Ինչպես կա լեզուների մեջ ստորացում, նույնպես կա և բարձրացում:

Ֆրանս. marichal, *որ զինվորական բարձրագույն աստիճանն է, առաջանում է գերմ.* marahscale *«ձիապան» բառից. (հ. գերմ.* marah *«ձի» +* schalk *«ծառա»): Ձիապանը դարձավ ախոռի տնօրէն, հետո՝ պատերազմական հրամանատար, հետո՝ մարշալ: Ֆրանսերեն* marquis, *որ բնապես նշանակում էր* **սահմանապահ,** *հետո եղավ իշխանական մի աստիճան:*

Եպիսկոպոսը՝ բուն «վերատեսուչ», եղավ մեծ կրոնական աստիճան. նրից՝ պարզապես «մեծ», հետո եղավ **քահանա.** *իտալ.* duomo *(բուն՝ լատ.* domus *«տուն») – հիմա՝* **մայր եկեղեցի:**

Ֆրանսերեն pionnier*-ը՝ բուն նշանակությունը՝ «հետևակ զինվոր», որ ցույց էր տալիս այն հասարակ զինվորները, որոնք, բանակի առաջից գնալով, ծանր ու դժվար աշխատանքով հարթում էին ճանապարհները: Այնուհետև սկսեց նշանակել այն առաջին գաղթականները, որոնք, անտառները կտրտելով, չիներ ու քաղաքներ հիմնեցին Նոր աշխարհում: Իրենց այս գեղեցիկ գործը բարձրացրեց իրենց արժանիքը, և բառը ստացավ իմաստի աղնվացում:*

Bravo*-ն միջազգային բառ է դարձել և նշանակում է «կեցցե». ծագում է իտալ.* bravo *«քաջ» բառից, և այսօր էլ՝ լատ.* barbarus *«բարբարոս» բառից: Իտալական* bravi*-ները իրենց քաջագործությամբ արժանացան ժողովրդական համակրանքի, մոռացվեց, որ նրանք ավազակներ էին, և «բարբարոսը» դարձավ «քաջ, կեցցե»:*

Minister-ը, կազմված minor բառից, իբր «փոքրագույն», նշանակում է «ծառա». ֆրանսիական պալատում պաշտոնյայի անուն դարձավ և վերջապես հասավ նախարարի պաշտոնին:

Ազնվացման ձևերից նախատական բառերը՝ սիրելիների ու մտերիմների հետ խոսակցության ժամանակ կարող են դառնալ փաղաքշաբար գործածվածներ: Այսպես՝ ֆրանսիացի մայրը երևույթին զուրգուրելիս ասում է monstre, vaurien, ուսանողները և աշակերտները իրենց ընկերներին անվանում են cochon, salaud, chameau: Նման բառեր են նաև bon bougre, pauvre diable[1]: Գերմանացի մայրը իր մանուկին անվանում է «ոջլոտիկս»: Նույնպիսի ձևեր են հայոց մեջ **չան որդի, սատկես դու, լակոտ:**

Կամ երբեմն էլ, ասելու, բայց իբր թե չասելու ձևով, բացասական՝ **չմեռնես դու, չսատկես դու, մերդ չմեռնի....**

ՆԱԽԱՏԱԿԱՆ ԿԱՄ ԱՐՀԱՄԱՐՀԱԿԱՆ ԼԵԶՈՒ

Հակառակն է euphémisme-ի՝ բերան – ռնիս, պառկել – չնթռնել, ուտել – լափել, որդի – լակոտ...

ՍՏՈՐԱՑՈՒՄ ԿԱՄ ՀՈՍԵՑՈՒՄ

Կյանքի հասարակ երևույթներից մեկն է այն, որ ամեն բան, չարունակ գործածվելով, հետզհետե մաշվում և ի վերջո անպետք է դառնում ու դեն ձգվում: Այսպես է նաև լեզվի մեջ՝ որոշ դեպքերում: Ներածության, ձայնաբանության ու ձևաբանության մեջ մենք արդեն տեսանք այս երևույթը բառերի ու մասնիկների նկատմամբ: Շատ հաճախ գործածվող բառերը կրում են տարօրինակ սղումներ ու կրճատումներ, որոնք չի կարելի սովորական ձայնաբանական օրենքներով բացատրել, նմանապես երկրորդական բառերը իրենց չատ հաճախ գործածության պատճառով վերջ ի վերջո վերածվում են պարզ մասնիկների: Այս բոլորը պատկանում է բառի ձևի մասին, որ նրա արտաքին կողմն է:

Բայց նույն երևույթը տեսնում ենք բառի ներքին կողմի, այն է՝ նշանակության մեջ: Ուրեմն որոշ բառեր, որոնք, այսպես ասած, ունեն բարձր ու ճոխ նշանակություն, հաճախակի գործածությամբ հետզհետե կորցնում են իրենց նշանակությունը, բարձրությունը և դառնում են հասարակ: Այս հանգամանքը պատճառ է դառնում մի կողմից նոր սաստկության, քնքշանք, հեգնանք տալու համար. ստեղծված բառերը կորցնում են իրենց պատկերավորությունը, և պատկերը դառնում է բնական ու սովորական մի բառ: Մյուս կողմից՝ ամոթ բառերը, չատ գործածվելով, սովորական են դառնում, դրդում պատկերներ փնտրելու, այսինքն՝ նոր բառեր հնարելու և մյուս կողմից՝ եղածը ջնջելու: Ահա այս կարգի երևույթների մի քանի օրինակ:

Պարոն բառը Արևմտյան Եվրոպայում իշխանական մի աստիճան է ներկայացնում. այս բառը գերմ. barv «ազատ, ազնվական, ռազմիկ» ձևն է, որ հետո

[1] I. Carnoy, La science du mot, 150.

անցավ միջին լատիններենի, baro, baronis ձևով (բոլորովին տարբեր բառեր են բուն լատ. boro, baronis «ապուշ, տխմար» համանունները)։ Միջին դարերում՝ Ռուբինյան իշխանության ժամանակ, մտավ Կիլիկիա ու հատկացվեց որոշ իշխանական աստիճանի և հատկապես՝ արքայորդիներին. ինչպես՝ պարոն Թորոս և պարոն Լևոն ..... Այն հետզհետե դարձավ սովորական և արևելյան հայոց մեջ եղավ ամեն մի քաղաքացու կամ գյուղացու տրված պատվանուն։ Արևմտյան հայոց մեջ գործածվում էր միայն դպրոցական աչակերտների համար։ Խորհրդային Հայաստանում այսօր արհամարհված և գործածությունից դուրս է վտարված։

-ուհի-ն իբրև մասնիկ հին հայոց մեջ հատուկ էր միայն աստվածներին ու կամ իշխանական տոհմերին. ինչպես՝ Դիցուհի, Թագուհի, Համազասպուհի, Տիգրանուհի և այլն։ Այժմ դարձել է սովորական իգական մասնիկ, և ամեն մի բառ կարող է ստանալ նույն մասնիկը. կարելի է ասել մինչև անգամ լվացարարուհի, պարտիզպանուհի, կաթնավաճառուհի, թրքուհի և այլն։

Ճիշտ նրան նման՝ **տիկին** և **օրիորդ** բառերը, որոնցից առաջինը հին ժամանակ հայոց թագուհիներին և երկրորդը թագավորի աղջիկներին էր հատկացված, հիմա դարձել է սովորական պատվանուն, որ տրվում է ամեն մի կնոջ ու աղջկա։

Սրանց նման է պրսկ. xān բառը, որ xaqan «կայսր» բառից կրճատված է համարվում։ Համենայն դեպս xān ձևը մի տիտղոս է, որ տաճկաց մեջ կրում էին միմիայն սուլթանները. պարսիկների մեջ հասարակ իշխանական տիտղոս է, իսկ Սպահանում պարսիկները ամեն մի ինտելիգենտ հայի տալիս են xān տիտղոսը։ Ճիշտ հակառակը՝ ağa «աղա» պարսիկների մեջ իշխանական տիտղոս է, իսկ տաճիկների մեջ տրվում է հասարակ արհեստավորներին։

Լատ. ingens «չատ մեծ, անհուն» անարժեք դառնալով՝ հետո ջնջվեց։

Փորձ բառից ստացվում է **փորձանք, փորձություն,** երկուսն էլ հոռի իմաստով. այնպես է նաև լատ. periculum՝ 1. «փորձ». 2. «փորձանք, վտանգ», որից ֆրանս. péril։

Արարած – գնչ մտքով
տիպ – գնչ տիպ
հրաչալի – Նախ. սոսկալի գնչ։

Կան բառեր, որոնք իրենց աղնվություններից իջնելով՝ ստացել են նախատական իմաստ, բայց միևնույն ժամանակ կրում են քաղաքավարական բացատրության երևույթ։

Այսպես՝ հայ. **աղիճ** նախապես նշանակում էր «կույս աղջիկ», որի նվազականն է **աղջիկ**. բայց հետո **աղիճ** ստացավ «բոզ» նշանակությունը։ Այսպես նաև հայ. **բոզ**, որ կովկասյան փոխառություն է, բուն նշանակում էր «աղջիկ»։ Նույն երևույթը տեսնում ենք նաև ֆրանս. fille, գերմ. Mädchen, թրք. qəz, ռուս. **девочка** և այլ բառերի մեջ։ Գերմ. hure, անգլ. whore, հոլ. hoer, հհյուս. hóra բառերը, որոնք նշանակում են «բոզ», նախապես «սիրելի, սիրական, բարեկամ» իմաստն ունեին, և ցեղակից են լատ. carus «սիրելի», հիռլ. cara «բարեկամ», caraim «սիրում եմ» բառերին (Kluge, 227)։

Այսպես նաև այժմ սիրող, սիրեկան, ֆրանս. ami, amie «բարեկամ, բարեկամուհի» ստանում են վատ իմաստ։

Իմաստի փոխ առ փոխ բարձրացման ու ստորացման օրինակ է հնխ. «կին» բառը, որ հայերենի և հունարենի մեջ ունի սովորական (չեզոք) իմաստ, սանսկրիտի մեջ (gnā) ստացել է «երկնային կին, աստվածակին» իմաստը, անգլերենում (queen)՝ թագուհի, հոլ. Kween և անգլոսաքս. cwēne «բոզ» (Carnoy, La science du mot, էջ 150):

Պոլսում կան թուրք գրավաճառներ, որոնք Ղուրան (մահմեդականների սուրբ գիրքը) են վաճառում: Երբ գնորդ գնա սրանց մոտ և ասի՝ «Ղուրանը քանիսո՞վ ես ծախում» կամ՝ «Մի Ղուրանին քանի՞ ղուրուշ տամ», աններելի սրբապղծություն արած կլինի: Պետք է ասել. «Ինդրում եմ ինձ մի Ղուրան նվիրիր, ես էլ, ինչքան կարող եմ, մի գումար կնվիրեմ քեզ»: Խանութպանը կտա Ղուրանը: Գնորդն էլ, ննթադրենք, պահանջված գնից քիչ ղրամ տվեց. վաճառողը չի կարող ասել. «Մի Ղուրանին այսքան քի՞չ փող կտան...» կամ՝ նման մի այլ ձև, որ նույնպես սրբապղծություն կլիներ: Այլ պիտի ասի. «Ես քեզ այսպիսի մի թանկագին գիրք ընծայեցի, և դու ինձ այդքան փոքրի՞կ նվեր ես տալիս. գոնե (այսքան՝ պահանջելի գումարը) տայիր»: Գնորդը կտա և գիրքը կստանա: Այսպիսով Ղուրանը վաճառքի հաննելու և մի քանի ղուրուշով ծախելու սրբապղծություն գործված չի լինի:

Նույն ձևը եղել է նաև հին հայոց մեջ: Բոլոր տեսակի Սուրբ գրքերի (Սաղմոս, Ավետարան, Շարական և այլն) ձեռագրերի հիշատակարաններում գործածվում է «ստացա, ստացավ» բառը, որով պիտի հասկանանք «գնեցի, գնեց»:

*Օտար բառերը, իբրև անսովոր, իմաստի սաստկություն են ստացել. հայ. երբ ասում ենք **հարց, խնդիր,** կամ ռուս.՝ вопрос, задача, սրանք այնքան ուժեղ չեն երևում, բայց երբ ասում ենք ֆրանս. problème, իմաստը սաստկանում, բարձրանում է, դառնում է **դժվարին, անլուծելի խնդիր,** մինչդեռ ֆրանսերենում այդպես չէ. problème նույնպես մի խնդիր է, և, օր., ասվում է problème d'algebre «գրահաշվական մի խնդիր»:*

Սրա համար է, որ բազմաթիվ նախատական բառեր մուտք են գործել մեր լեզվի մեջ, իբրև ավելի ուժեղ, քան մեր սովորական բառերը. ինչպես՝ ռուս. նախալ, պաղլեց, սվոլըչ, միրզավեց և նմանները:

Կարճ բառերը ուժ ստանալու համար կարող են իրար հետ միանալ. ֆրանսերեն sain et sauf (առանձին չեն գործածվում):

Այս բոլորը բառի ձևի մաչվածությունն էր: Կա և իմաստի մաչում, երբ բառը շատ գործածվելով հասարակ դառնա. մարդիկ ուզում են մի շատ մեծ արտահայտություն դնել, օրինակ, հֆր. moult «շատ» եղավ beaucoup. Հիմա թուլացել է, դնում են՝ un grand nombre, une foule, des quantités, des tas, des flottes և այլն: Très գերադրականը թուլացել է, ուստի parfaitement, complètement, absolument, tout à fait, furiesement, terriblement և այլն բազմաթիվ ձևեր են օրեցօր հնարում: Հայ. ևս՝ փէք, լափ, պինդ և այլն. վիթխարահսկա մեծություն (Խորհրդային Հայաստան, 1928, հուլ. 12, էջ 1, սյունակ ա):

*Այսպես և **վատ, հիմար, ուժեղ, մեծ** և այլն զանազանող բառերը չարունակ մաչվում են և նորանոր ձևերով են արտահայտվում:*

Որոշ բառեր ջնջվում են ընկերական ըմբռնումների պատճառով, ինչպես՝ ամոթ բառերը, որոնք փոխարինվում են ուրիշներով, որոնք իբր ամոթ չեն. ինչպես՝ լատ. mingere, ֆր. pisser – հիմա uriner, որ անշուշտ մի օր ջնջվելու է:

ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

Հոմանիշները երբեմն բացարձակ չեն, ինչպես՝ **թանաք** *և* **մելան**, *այլ ցույց են տալիս զանազան աստիճաններ՝ թե՛ միջակ, թե՛ դևպի ցածր և թե դևպի բարձր: Օրինակ՝* **հավատացյալ**–*ը որոշ զգացմունքի սովորական պատկերն է. սրանից մի աստիճան վերև՝* **բարեպաշտ**, *ավելի վեր՝* **ջերմեռանդ**, *դուցե ավելի վեր՝* **խստակրոն**: *Հավատացյալից ցած աստիճանի վրա են՝* **թերահավատ**, **դյուրահավատ**, **անհավատ**. *իսկ նախատական աստիճանի է հասնում* **մոլեռանդ**–*ը, որ* **ջերմեռանդ**–*ի հակապատկերն է:*

Նույնպիսի աստիճանավորումներ են ցույց տալիս հետևյալ չարքերը.

խնդրել, աղաչել, աղերսել, պաղատել, թախանձել (վերջինը ձանձրացնելու աստիճան).

մեռնել, վախճանվել, հոգին ավանդել.

գանել, զզվել, գարշել, պժգալ.

ձանձրանալ, տաղտկալ:

Հրացան *ասելով հասկանում ենք ծանոթ հրազենը. բայց նա միայն հուր չի ցանում, այլ մանավանդ որ գնդակ է արձակում, որոտում և այդ գնդակի միջոցով մարդ է սպանում: Այս բոլորը սակայն չի կարելի տեղավորել մի բառի մեջ, ուստի բավական է* **Հրացան**:

Հայերեն ասում ենք **սեղանի ճրագ** *և ամենքս էլ հասկանում ենք, թե ինչ է դա: Ռուսերեն նույն դևպքում ավելի մանրամասնելով, ասում են* **настольный** *(օրացույց, բառարան և այլն): Այստեղ* **на** *«վրա» բառը դուցե ավելորդ էր, որովհետև ոչ ճրագը, ոչ օրացույցը, ոչ էլ բառարանը չեն դրվում սեղանի տակ: Բայց, որովհետև չատ կարճ է բառի ամբողջությունը, ուստի տանելի է դարձնել:*

ՏԱՐԱՆՇԱՑՈՒՄ

Երբ որ մի բառ այս կամ այն պատճառով երկու տարբեր ձևի տակ ներկայանում է լեզվի մեջ, որպեսզի իր գոյությունը պահի, պետք է կրի իմաստների տարբերություն, ինչպես՝

Հճ. էշգէյտ (խանութի աշակերտ) – չագիյդ (դպրոցի).

Պլ. աշգերդ -»- -»- – աշագերդ -»-

Հճ. բաշօյ (պաշար ձմռան) – բեշօյ (ճամփի ուտելիք).

Հճ. արօչ (տեղով առաջ) – արաչ (ժամանակով առաջ).

Հճ. դագոյ (փեսա) – թաքավոյ:

Գրական լեզվի մեջ՝ համրել – համարել, վայրել – վայելել, չատնալ – չատանալ, վանցի – վաննցի, վարպետ – վարդապետ, ավրել – ավարել, հղանալ – հղիանալ:

Ղրբ. սանդ (քարից) – հավանդ (մետաղից), թեև պրս. hāvan *ընդհանուր է:*

Տարանշացման երևույթը մեծ չափերով գտնում ենք անգլերենում: Սկանդինավյան արշավանքից հետո Անգլիայում կողք կողքի ապրել սկսեցին երկու իրար

չատ նման լեզուներ. անգլերենը բազմաթիվ փոխառություններ կնքեց սկանդինավյան լեզվից: Նման բառերից մեկը կամ մյուսը պիտի ջնջվեր: Այստեղ գործել սկսեց տարանչացման երևույթը, այնպես որ այսօր անգլերենը ունի բազմաթիվ բառեր, որոնցից մեկը անգլերենն է, մյուսը՝ սկանդինավյանը, ծագմամբ՝ նույն, հնչմամբ՝ մերձավոր, իմաստով՝ զանազանված, ինչպես՝ shirt *չապիկ –* skirt *քղանցք,* shriek *պոռալ –* screak *կանչել,* whole *ամբողջ, անվնաս,* hale *առողջ –* hale *կորովի, առույգ և այլն* (Jespersen, Growth and structure, 62):

Նույն երևույթը մեծ չափով գոյություն ունի ֆրանսերենի մեջ: Լատիներեն բառերը ժամանակի ընթացքում ձևափոխվելով դարձան ֆրանսերեն: Բայց հետո ֆրանսերենը լատիներենից բազմաթիվ փոխառություններ կնքեց: Այսպիսով լատիներեն չատ բառեր երկու ձևով ապրում են ֆրանսերեն լեզվի մեջ կողք կողքի, մեկը՝ հարազատ ժողովրդական ձևով, մյուսը՝ գիտական լատինական ձևով. տարանչման օրենքով երկուսը պահում են իրենց գոյությունը:

Օրինակ՝ լատ. causa *ձևից* chose *բառը և* cause *«պատճառ».*

fragilis *ձևից՝* frêle *«թույլ, տկար» և* fragile *«դյուրաբեկ».*

securitas *ձևից՝* sûreté *«վստահություն» և* sécurité *«ապահովագրություն»:*

Սխալ թարգմանություն: *Այս երևույթը կարող է պատահել միայն օտար լեզուների ազդեցությամբ: Այսինչ մի լեզվից մի բառ փոխ առնելով մի երկրորդ լեզվի մեջ և պատահաբար համանուն կազմելով՝ մի երրորդ լեզվի կողմից թարգմանվում է երկրորդ լեզվի հոմանունով:*

Օրինակ՝ պարսկերեն ne *«ոչ». մտել է թուրքերենի մեջ և սովորական գործածություն ունի կրկնավոր ձևով. այսպես է՝* ne ben, ne sen *«ոչ ես, ոչ դու»: Բայց բուն թրք.* ne *նշանակում է «ինչ», որի հետ հոմանուն է կազմում՝ առանց որևէ կապ ունենալու նրա հետ: Ղրիմի հայոց բարբառում, չփոթելով երկուսը իրար հետ և թարգմանելով առաջինը երկրորդի ձևով՝ առաջացել է* **ինչ** *«ոչ». այսպես՝* **ինչ ես, ինչ դուս:**

Շատ բարբառներում կա **փոչի** *բառը, որ նշանակում է՝ մի տեսակ չոր, որով կանայք իրենց գլուխն են ծածկում: Սա պրսկ.* pūšī *«ծածկոց» բառն է, որ հայերենի մեջ* **փոչի** *բառի հետ համանուն է կազմում:* **Փոչի** *բառի տեղ չատ տեղ գործածվում է թրք.* **թոզ:** *Թևհրանի հայերը՝ կարծելով, թե այս փոչին երկրորդ փոչու հետ նույնն է, գլխածածկը կոչում են* **թոզ:**

Պրսկ. su *«կողմ», փոխառնվելով թուրքերենի մեջ, կազմված է մի ոճ. օր.՝* saat beš su-laranda *«ժամը հինգի կողմերը»: Բուն թրք.* su *նշանակում է «ջուր», և* sularanda *՝ «ջրերում»: Պոլիսի հայերը, չփոթելով երկուսը իրար հետ, թարգմանել են՝ «ժամը հինգին ջուրերը»:*

ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Դանիերեն knee soette en mening– *«որդեգրել մի կարծիք կամ մի գաղափար». բուն նշանակում է ծունկի վրա նստեցնել, որովհետև հին օրենքով հայրը ծնունդից հետո մանուկին նստեցնում էր իր ծնկան վրա, որով և դարձնում էր իր որդին. նույնպես և, երբ մի ուրիշ տղա որդեգրեր: Բայց հետո ծունկի գա-*

դափարը մոռացվեց և մնաց միայն որդեգրելու գաղափարը: Որով և կարելի է ասել՝ «մի կարծիք ծնկին վրա նստեցնել»:

Փոխաբերաբար անասունների անունները մարդկանց վրա դնելը. հմ. խոզ, տավար, ավանակ, ոչխար...

Բառերի նշանակությունների փոփոխությունները վերածվում են 3 տիպի՝

réstriction, extansion, déplacement:

Réstriction-ն նշանակում է ընդհանուր իմաստից անցնել մասնավորին (ֆրանս. pondre).

extension՝ մասնավորից անցնել ընդհանուրին (ֆրանս. arriver).

déplacement՝ նման իմաստների մեջ տեղափոխություն, որոնք են՝ պարունակողից անցնել պարունակյալին, պատճառից՝ արդյունքին, նշանից՝ նշանակյալ բառին և փոխադարձաբար այս բոլորը:

Déplacement-ի տեսակներն են՝

métaphore, synecdoque, métonymie, catachrèse և այլն:

Ամենքս էլ գիտենք այն պատկերավոր բացատրությունները, որոնցով բանաստեղծները զարդարում են իրենց գրվածքները: Նրանց համար վերջալույսը մի հրդեհ է, ամպերը՝ բամբակի քուլաներ, կուրծքը՝ մարմար և այլն: Այս պատկերները տալիս են բանաստեղծները՝ իրենց նկարագրած առարկան նմանությամբ ավելի գեղեցիկ կամ ավելի վսեմ և այլն ցույց տալու համար:

Բանաստեղծ է նաև ժողովուրդը, որ գիտի նույնպիսի նմանություններով ստեղծել գեղեցիկ պատկերներ:

Այսպես՝ ժողովրդի սովորական պատկերներից են՝ **ծով աչքեր, ծով մազեր, կամար ունքեր, վարդ այտեր, լուսնակ երես, զառան նման երեխա, օձի կծած, սատանա մարդ, կարկուտի պես արցունք** *և այլն: Շատ բառեր առաջացել են ուղղակի այդպիսի պատկերներից, օրինակ, բույսի անուններ – առյուծբերան, գիներբուկ, կենդանիներ – օձասանդր: Շատ բառեր սովորական գործածության մեջ իրենց արժեքը կորցնելուց հետո իսպառ չեն ջնջվում, այլ որևիցե դարձվածի, ոճի կամ ասացվածի մեջ մնում են, ոմանք էլ դառնում են մասնիկ, դերանուն, մակբայ, կամ որևէ քերականական միջոց. ինչպես՝ ֆրանսերեն* on *և գերմաներեն* man *«մարդ» բառերը, որոնք դառել են անորոշ ենթակա:*

Ուրիշները, եթե ունեն մի քանի նշանակություն, որոնք չղթայաբար կապված են իրար, ժամանակի ընթացքում կորցնում են դրանցից մեկը կամ մի քանիսը, և այսպիսով նրանց հաջորդական կապը մեզ համար ընդհատված է լինում: Մանուկը, որ սովորում է լեզուն, անչուշտ անուշադրության է մատնում երկրորդական նշանակությունները, որոնք կարգով նախնական են, և սովորում է ամենից ուժեղ նշանակությունը:

Գրականությունը, որ ձայնական փոփոխության մեջ կատարում է արգելիչ դեր, աշխատում է կասեցնել բարեշրջության ընթացքը, ընդհակառակը՝ իմաստների զարգացման մեջ ավելի զարկ է տալիս, ինքն իսկ ստեղծելով նորանոր անվանումներ ու նշանակություններ:

MÉTONYMIE [ՓՈԽԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ], SYNECDOQUE

Սրանք հռետորական ձևեր են, որ նշանակում են՝

1) Ընդհանուրը մասնավորի տեղ՝ անդամ (առնի):

2) Ամբողջը մասի տեղ՝ մի castor *առնել (իմա՝* castor*-ի մորթով չինված գըլխարկ):*

3) Պատճառը կամ միջոցը արդյունքի տեղ՝ Նա ապրում է իր աշխատությամբ (իր աշխատության արդյունքով). լեզու (խոսվածք), ձեռք (գիր). մամուլ (հրատարակություն), գրիչ կամ ոճ (գրվածք), զարնել (սպանել), լատ. invenire, *հոլ.* na-iti *(գտնել), բուն՝ երթալ (գտնելու համար), լատ.* succurrere *(օգնել), իմա՝ վազել մոտ. հուն. φαγειν (ուտել, բուն՝ բաժին ստանալ),* embrasser *(համբուրել). նհուն. φιλω (համբուրել, բուն՝ սիրել), իսպան.* querer *(սիրել. բուն՝ փնտրել).* naif *միամիտ (լատ.* nativus *«դեռ նոր ծնված»):*

4) Սևը տեսակի տեղ:

5) Մի հատկանիշ ամբողջի տեղ. chercher *(լատ.* circare *պտտվել), հայ. ման գալ (որոնել), նհուն. γυρεύω* craindre *(նխ. «դողալ»), բարձրահոն՝ հպարտ:*

6) Տեսակը սեռի տեղ:

7) Արդյունքը պատճառի տեղ. փիցուկ «սատկած» (փայտանալը պատճառ չէ մահվան, այլ արդյունքը), ոտները երկարել, ճողկլ, avoir la chavi de poule *(վախենալ), գոտին պնդացնել (լավ ուտել):*

8) Միջոցը նպատակի տեղ և հակառակը:

ՄԱՍԸ ԱՄԲՈՂՋԻ ՏԵՂ

Փոխանակ ամբողջը հիշելու առնում ենք նրա այն մասը, որ ամենակարևորն է, և որի հետ կատարված գործողությունը անշուշտ ամբողջի վրա պիտի տարածվի, օրինակ՝

Նա իր կաշուց է վախենում:

Դու քո գլխով պատասխանատու ես:

Այս գյուղը 100 մարդ է:

Հայրենի օջախը (տունը):

Բարձրագույն դուռը (Տաճկաց). Դուռը (Պարսից):

Հարևան տանը 6 հոգի են (անձ):

Իմ հացը իմ քրտինքով եմ չահում (որովհետև մեզ համար ամենակարևոր սնունդը հացն է, իսկ անգլ. ասում են bread and butter *«հաց ու կարագ»):*

Այբուբեն (ամբողջ տառերը միասին):

Այսօր անճաու՝ նորաստեղծյալ, կռունկ և այլն ներկայացնում են ամբողջ կարգը և այլն: Այսպես նաև լատ. credo, gloria, ave, pater, *զննդ.* Ahuna vairya:

Ֆրանս. cent voiles *(այն է 100 նավ):*

Ֆրանս. drapeau *(նախապես դրոշի չորն էր, հիմա ամբողջն է):*

Էջ *«գրքի երես» բառը ծագում է* **էջ, իջանել** *արմատից, բայց ինչպես պետք է կապել «գրքի երես» գաղափարը «իջնել» գաղափարի հետ: Անչուշտ տողերի չարքն է, որ գրքի վերևից իջնում է մինչև ցած, կամ աչքն է, որ կարդալու ժամանակ գրքի վերևից իջնում է մինչև ցած: Այս ձևով ստեղծվում է պարունակողի և պարունակյալի կամ մասի և ամբողջի հարաբերությունը: Էջը նյութը չէ, որովհետև միայն երեսն է, դրա համար էլ երկու երեսը միասին կոչվում է* **թուղթ**, *որ այս դեպքում նյութն է ներկայացնում:*

ՊԱՐՈՒՆԱԿՈՂԸ ՊԱՐՈՒՆԱԿՅԱԼԻ ՏԵՂ

Փչացած քաղաք *(այսինքն՝ միջի բնակիչները):*

Խմում եմ այս բաժակը:

Ֆրանս. bourse *(միջի փողը):*

Մանեթ = լատ. moneta *(ֆր.* monnair, *անգլ.* money*) առաջանում է լատ.* moneta *բառից,* Junon, *որ Արամազդի քույրն ու կինն էր, լուր տվեց մի անգամ հռովմեացիներին, որ երկրաշարժ պիտի լինի: Դրա վրա հռովմեացիները տվին նրան* moneta *տիտղոսը, որ է՝ «գուշակող, լրատու»՝* moneo *«լուր տալ, իմացնել, գուշակել» բայից: Այնուհետև նրա տաճարն էլ կոչվեց* Moneta, *իբր տեղի հատուկ անուն: Այս տեղում ավելի հետո սկսեցին կտրել դրամը, որով և* moneta *նշանակեց «դրամ»:*

Պարտեզ. *գենդ.* pairidaeza՝ *բուն նշանակում է «շրջապատ, պարիսպ», այսպես նաև ֆրանս.* parc *«պարտեզ», գալիս է* barricum *«ցանկապատ» բառից:*

Chemin de fer = *երկաթուղի և* tramway, *նշանակում են միայն ճանապարհը. մենք հասկանում ենք այժմ գնացքը:*

Ֆրանս. chambre *«սենյակ» իմա՝ ամբողջ երեսփոխանական ժողովը: Հայ. տուն «թագավորական տունը» (ամբողջ տոհմը), այսպես նաև՝* Westmister*-ը անգլիական պառլամենտն է:*

Սպիտակ տունը *Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահն է և այլն:* **Տուն, առևտրական տուն** *նշանակում է վաճառատուն և վաճառականական ամբողջ մի ընկերություն:*

Առևտրական հրապարակ:

Փարիզի salon*-ը (նկարների համար, որ ցուցադրված են):*

Զգեստների զանազան մասերը անվանվում են մարմնի մասերի անունով, ինչպես՝ շապկի **վիզը, թևը, մեջքը,** *վարտիքի* **ոտքը,** *գուլպայի* **թաթը,** *կոշիկի* **կրունկը,** *դիմակի* **քիթը՝ եռևը** *և այլն: Սրանք կարող են առաջացած լինել կամ իբր պարունակող պարունակյալի տեղ և կամ նմանությամբ.*

bourse – *բորսա (բուն նշանակում է դրամի քսակ).*

budget – *բյուջե, անգլիացած է ֆրանս.* bougette *«փոքր քսակ» բառից և նշանակում է այժմ մի ամբողջ վարչության կամ պետության հաշիվը.*

bureau *(գրասեղանի վրա ղրված սփռոցն է).*

comptoir *(փոքրիկ կտավ, որ փռված էր այն սեղանի վրա, ուր անում էին արդուզարդը).*

banque *(հին լումայափոխների սեղանն էր).*

comptoir *ֆրանս. «խանութպանների սեղանն» է. հիմա նշանակում է «դրամսենյակ».*

cabinet *«փոքրիկ սենյակ». Հասկացվում է նաև ամբողջ պետության բոլոր նախարարությունները միասին.*

εκχλησία հունարեն նշանակում էր «ժողով», հետո դարձավ «այն տեղը, ուր կատարվում էր քրիստոնյաների ժողովը»՝ «տաճար», որից լատիներեն ecclesia, *ֆրանսերեն* église, *հայերեն եկեղեցի.*

poste *նշանակում էր նախապես «գիրք, գրություն». ամբողջ մի հաստատություն է.*

chappele *«մատուռ» (մի սուրբի* chape *«վերարկուն» բառից, որ պահում էին այստեղ):*

ELLIPSE [ԿՐՃԱՏՈՒՄ, ՋԵՂՋՈՒՄ]

Մի ձև է, որով բարդ ասացվածքները պարզվում, ավելորդ բառերը ջնջվում և պահվում է միայն՝ ինչ որ կենսական է: Գաղափարաց զուգորդությունը երկու հարակից բառերի միջև այնքան անձուկ է լինում, որ մեկը բավական է՝ հիշեցնելու համար մյուսը, որ ջնջվում է:

Հապավման ժամանակ մերթ խնդիրն է ջնջվում, մերթ խնդրառուն, որը որ համարվում է երկրորդական. օրինակներ՝

ամսական՝ *փխ. ամսական ռոճիկ,*

ընդծովյա՝ *փխ. ընդծովյա նավ,*

ճեպընթաց՝ *փխ. ճեպընթաց կառախումբ,*

երկտող՝ *փխ. երկտող գրություն. այս ձևերի մեջ գոյականն է, որ հապավված է:*

Լտ. prunus persica *«սալոր պարսկական»՝ «դեղձ»:*

dpêche *(ջնջված է ած.* telegraphique):

caseus formaticus *պանիր կաղապարյալ >* ֆր. fromage *«պանիր»:*

ֆր. chef (de gare), chef (d'orchestre), chef (de cuisine) *ձևերի փոխարեն, կարելի է զանց առնել փակագծերում դրվածները և* chef*-երը կհասկացվեն *ըստ տեղին պահանջված իմաստով:*

Անգլ. fall (of leaves), water (fall, Fall of timber) fall (of man) *ասելու տեղ միայն* fall *ասելով՝ կարելի է հասկանալ ըստ տեղին «աչուն, ջրվեժ, ջարդած փայտ, մեղանչում»:*

Ջէ՞ = այնպես չէ՞:

Այսպիսի կրճատման մի ուրիշ ձևն այն է, որ գրականության մեջ կոչվում է **զեղչում** (ellipse). *զույգ և ավելի բառերի մեջ կրճատվում է այն, ինչ որ ինքնին հասկանալի է, և մնացածը գործածվում է ամբողջի իմաստով. օրինակ՝ աջ, ձախ – ֆր.* a droite, a gauche. *Հասկացվում է* **աջ կողմ, ձախ կողմ.**

ֆր. timbre – *իմա՝* timbre-poste *նամականիշ,*
voie – -»- voie ferrée *երկաթուղի,*
bock – -»- bière de Bock *գարնջուր:*

Այս կարգին են պատկանում բույսերի, պտուղների, գործվածքների և ամանների անունները, որոնք հատուկ են այսինչ կամ այնինչ տեղին: Օրինակ՝

խորասան – խորասանի գորգ.
սավան – [«կտավ» (Սաբան գյուղաքաղաքի անունից) (Բաղդադի մոտ)].
լահոս – լահոսի չալ.
թարաբլուս – թարաբլուսի կարմիր գոտի.
պնդուկ, արաբ. findiq – [«պոնտական կաղին»].
ֆր. peche, ռուս. персик – [«պարսկական սալոր», ղևոնդ].
մանուսա – մանուսայի գործվածք:

Առարկայի անունը ղրվում է ըստ նյութի, որից շինված է, օրինակ՝

տարգալ, դգալ, գտալ < «փայտ» բառից.
արծաթ, argent «փող» (արծաթից).
ոսկի (ոսկի փող).
անգլ. glasses «ակնոց» (ապակուց).
անգլ. mahogany «հնդուն» (փայտի անունից).
լատ. taxus if ծառն է, հուն. τόεον «աղնդն է» (որ շինվել է այդ փայտից).
հուն. δορυ «փչակ» է («փայտ» բառից).
գերմ. Buch (գիրք) < Buche hêtre ծառից, որովհետև չնքերը առաջ այդ ծառի տախտակներից էին:

Ellipse *հաճախ հասնում է մեծ չափերի: Օրինակ՝*

pantalon – *չոր այն ձևի, որ կրում էր իտալական մի կոմեդիայում որոշ մի տիպ (իտ. pantaleone).*

cravate – *(վզի թաշկինակ, որ կրում էին խորվաթ զինվորները 30-ամյա պատերազմի ժամանակ).*

moise – *նորածին մանկան անկողին (նման այն կողովին, որի մեջ պառկեցրել էին Մովսեսին).*

jodas – *փոքրիկ հայելի, որի մեջ կարելի է տեսնել իրեն՝ առանց ուրիշից տեսնվելու, ինչպես պիտի աներ Հուդայի պես մատնիչը.*

lombard – *«փոխառության տուն», ինչպես ունեին Իտալիայում լոմբարդացիք հին ժամանակ.*

belladone *(իտ. bella donna) – բույս, որ գործ էին ածում գեղեցիկ տիկինները իրենց բիբը մեծացնելու համար.*

Parchemin *լտ. pergamena (charta) – պերգամայի թուղթ, մագաղաթ.*

Mousseline – Mossoul-*ի կտորեղեն.*

florin – Florence-*ի դրամ.*

dollar *(= հլ. daalder, այն է՝* joachimsdaal der – *Յոհիմթայի* Joachimstal-*ի հանքի արծաթ.*

café *(սրճարան) – տեղ, ուր խմում են* café.

havane – cigare de la Havane.

bronze < Brundusium *քաղաքից (այժմ* Brindisi), *ուր կազմեցին բրոնզի առաջին խառնուրդը.*

madère (vin de Madère) – *[գինին].*

craie (< *լտ. czeta, կրետե կղզու անունից).*

canari *(կանարյան կղզու թռչուն).*

անգլ. turkey – *հնդկահավ. կարծել են, թե այս թռչունը Թուրքիայից է գալիս. մենք էլ ասում ենք* **հնդկահավ**, *մինչդեռ գալիս է Ամերիկայից.*

hermine (Arménia *բառից):*

ԲԱՌԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Մ ՈՒ Տ Ք

Ներածության մեջ տեսանք, որ առարկաներն ու գաղափարները նախապես ինքնին գոյություն ունեցող բաներ են, առաջինները՝ մեր շրջապատում կամ բնության մեջ, երկրորդները՝ մարդկային մտածողության մեջ: Այդ առարկաները ճանաչելուց և այդ գաղափարները հղանալուց հետո մարդ տակը դնում է նրանց անունները, որ է **բառ**: *Բառը, ուրեմն, ձայների այն գումարն է, որ օժտված է որոշ նշանակությամբ: Ըստ այսմ, բառը ունի երկու կողմ, առաջին՝ ձայն կամ հնչյուն (բառի ձևը), որ բառի արտաքին կողմն է և երկրորդ՝ իմաստ կամ նշանակություն, որ բառի ներքին արժևքը կամ նրա էությունն է: Կարող է լինել նշանակություն առանց բառի, բայց չկա բառ առանց նշանակության: Օրինակ՝ նշանակություններ են առանց բառի այն բոլոր առարկաները և վերացական գաղափարները, որոնք մենք տեսնում կամ մտածում ենք, բայց մի առանձին բառով չենք ճանաչում կամ ճանաչում ենք ընդհանուր տեսակի բառով (խոտ, բույս, քար, որոշ զգացմունք, ինչ-որ գաղափար և այլն): Բայց երբ բառը կա, ու նրա նշանակությունը չկա, նա այլևս բառ չէ, այլ աննշանակ ձայն կամ աղմուկ:*

Ա Ր Մ Ա Տ

Եթե իջնենք մանրամասնությանց, այնպիսի մի լեզու, ինչպես հայերենն է, ունի իր բառարանում 7 տեսակի բառ.

1) Արմատ բառեր, ինչպես՝ ջուր, ծառ, արոր, դիր:

2) Ածանց բառեր, որոնք կազմվում են արմատներից՝ որևէ մասնիկի հավելումով, ինչպես՝ ջրոտ, անջուր, ջրային:

3) Բարդ բառեր, որոնք կազմվում են երկու արմատների կապակցությամբ, ինչպես՝ ջրկիր, ջրշղջ, ջրցան, ջրհոս և այլն:

4) Կրկնավոր բառեր, որոնք կազմվում են միևնույն արմատի կրկնությամբ, ինչպես՝ մեծամեծ, չարաչար, ծանրածանր:

5) Հարաբարդ բառեր, որոնք կազմվում են երկք արմատ բառերի բարդությամբ, ինչպես՝ հեռախոսագիծ, հեռագրալար, գլխարկավաճառ, գրաշարապետ և այլն:

6) Բազմաբարդ բառեր, որոնք կազմված են չորս կամ ավելի արմատ բառերի բարդությամբ, ինչպես՝ հեռագրասյունաշարք:

7) Բարդածանց բառեր, որոնք կազմված են որևէ բարդ բառի (կրկնավոր, հարաբարդ կամ բազմաբարդ) վրա ավելացնելով որևէ մասնիկ, ինչպես՝ ժամանակագրական, մարդասիրություն, գլխարկավաճառություն և այլն:

Այս 7 տեսակի բառերը ամեն լեզվի համար էլ պարտադիր չեն: Կան լեզուներ, որոնք չատ հարուստ են բարդ կամ հարաբարդ և կամ բազմաբարդ բառերով.

այսպես է գերմաներենը, որ չատ հարուստ է բազմաբարդ բառերով: Կան նաև լեզուներ, որոնք չատ աղքատ են կամ բոլորովին իսկ զուրկ են այս կարգի բառերից, ինչպես է Թուրքերենը: Հայերենը միջին տեղ է բռնում. նա չատ հարուստ է բարդ բառերով, բայց հարաբարդ բառերի թիվը մեծ չէ նրա մեջ, իսկ բազմաբարդ բառերի թիվը չատ սահմանափակ է:

Ինչ էլ լինի, վերոհիչյալ 7 տեսակի բառերը վերջիվերջո վերածվում են 3 մեծ խմբի, այն է՝ արմատ, ածանց և բարդ:

Այս երևքի աղբյուրը, ամեն լեզվի մեջ էլ, արմատն է, որից բխում են բոլոր մնացած տեսակի բառերը: Արմատները անլուծելի կամ անվերծանելի են, ինչպես քիմիայի մեջ ուննենք միլիոնավոր բաղադրյալ մարմիններ, որոնք գոյանում են ... պարզ մարմինների խառնուրդով, իսկ պարզ մարմինները մնում են **անվերածելի** տարրեր. նույնպես են նաև լեզուների մեջ արմատները:

Բայց նույնիսկ քիմիայի մեջ գիտունները կասկած հարուցին պարզ մարմինների անվերածելիության մասին և գտան զանազան պարզ մարմիններ, որոնք բաղադրված էին նույնպես պարզ մարմիններից:

Այնուամենայնիվ, պարզ մարմինները, թեև ավելի սակավաթիվ, մնացին ու մնում են: Այսպես պիտի լիներ նաև լեզվաբանության մեջ: «Անչուշտ ներելի է կարծել,- ասում է Ռենան,- որ արմատների այդ պարզությունը առերևույթ է միայն, և թե նա թաքցնում է մեզանից մի ավելի ներքին բաղադրություն: Բայց այստեղ կա մի քննություն, որ արգելված է գիտության համար, որովհետև այդ վերլուծելի առարկան մեզ համար ոչ մի կերպով մատչելի չէ: Լեզուների արմատները երևում են մեզ ոչ իբրև բացարձակ միություններ, այլ հաստատուն իրողություններ, որից այն կողմ անցնել ներելի չէ մեզ» (Renan, Hist. des lang. sémit. I 4, 1863, էջ 450):

Ռենանի ասածը ճիշտ է, և նրա ճշմարտությունը կարող ենք հաստատել հետևյալ հասարակ օրինակներով:

Անդունդ բառը հայերենի մեջ արմատ բառ է. կարելի էր կարծել, որ նա բացասական բառ է՝ կազմված **ան** – մասնիկով, բայց այդպիսի բան եթե կարելի էլ լիներ կարծել, հավատալ անկարելի էր, որովհետև անկարելի էր հաստատել: Այժմ քննիչները ցույց տվին, որ, իրոք, դա այդպես է: Զանազան լեզուների մեջ «անդունդ» նշանակող բառերը կազմված են «ան-հատակ» բառից. այսպես՝ հուն. ἄ–βυσσος, հսլ. bez-dŭna, ռուս. **бездна**, գերմ. ab-grund, գալլ. au-nwfn և այլն հոմանիշներով: Այսպես է մինչև անգամ հայ գավառականներից Երևան, Վան՝ **անտակ** «անդունդ», ինչպես՝ **անտակը գնաց:**

Հայերեն **անդունդ** բառի արմատն է **դունդ** «հատակ», որ ծագում է հնխ. bhundhos «խորք, հատակ» բառից. համմտ. լատ. fundus, իռլ. bond, սանսկ. budhnás, հուն. πύνδαξ, հբգ. bodam, գերմ. boden և այլն: (Ավելի մանրամասն տե՛ս Արմ. բռ., Ա., 315)*: Այսպես է հայերենի մեջ, ուր **անդունդ** բառը համեմատական լեզվաբանության չնորհիվ կարելի եղավ վերլուծել: Բայց հայերեն բառը փոխառյալ է նաև Թուրքերենի մեջ, ուր ուննենք «անդունդ», և ինչպե՞ս կարելի պիտի լիներ մեկնել Թրք. բառը, եթե հայերենի օգնությունը վրա չհասներ:

* Նշվում են Արմատականի առաջին հրատարակության էջերը (Ա. Գ.):

Հնոց բառը հայերենի մեջ պարզ արմատ է, որի **-ոց** հանգը կարող էր կարծել տալ, որ դա մասնիկ է, բայց **Հն-** ձևով արմատ չունենք: ՆՀԲ-ի մեկնությունը իբրև ***Հրնոց** ընդունելի չէր: Ուղիղ մեկնություն տվեց Հյուրշմանը՝ գտնելով, որ արմատն է հնխ. pūn կամ pōn «կրակ» բառից. հմմտ. գոթ. fōn, հսլ. funi, հպ. pintis «կրակ»: Այսպիսով **Հնոց** բառի արմատը դարձավ ***Հուն** «կրակ»:

Հայերենի մեջ **նիստ** պարզ արմատ է, բայց մի հասարակ համեմատություն, սանս. sad, լատիներեն sedeo, sedo, հին սլավոներեն saidim, կիմր. seddu, գոթերեն sitan «նստել» բառերի համեմատությունը անմիջապես ցույց է տալիս, որ **նիստ** ծագում է ni մասնիկով sed «նստել» արմատից, ինչպես ունենք սանսկրիտերեն niśīdati՝ զենդերեն niśhīdaiti, պարսկերեն nišastan, nista «նիստ» և այլ հոմանիշներով:

Ուրջու-ն «խորթ որդի» հայերենի չմեկնված բառերից է. երբ համեմատենք այդ բառը գրբ. **հօրու** և **մօրու** համազոր բառերի հետ («խորթ հայր», «խորթ մայր»), կտեսնենք, որ սա էլ սրանց պես կազմված է **ու** մասնիկով: Բացի սրանից, **հօր, մօր** սեռականները են **հայր, մայր** բառերի: Կարող չէ՞ լինել, որ **ուրջ**-ը ևս սեռական լինի: Սեռականի **ջ** վերջավորությունը գտնում ենք **կնոջ** (նաև՝ **քրոջ, տալոջ** և այլն) ձևերի մեջ, որոնք այսօր մասնիկի բնավոր ձևերն են, իսկ **ջ**-ն նրանց անբուռնն է, որ գտնում ենք նաև **գեղջ** սեռականի մեջ: Ուրիշ դեպքերում էլ **ղ** և **ր** վերջացող բառերը նման ձևով են հոլովվում, ինչպես՝ **աստղ—աստեղ, տարր—տարեր** և այլն: Ուրեմն **ուրջ** ևս սեռական է, և նրա ուղղականն է ***ուր**, որ պիտի նշանակի **որդի**: Այսպես գտնում ենք մի նոր կորած բառ կամ արմատ հայերենում: Այդ բառն էլ մեկնվում է ճիշտ հնխ. putro — «որդի» բառով, որի մեջ նախաձայն p-ն կորել է (հմմտ. pōlo **ուլ**), և t-ն դարձել է r-ից առաջ ւ (հմմտ. mutro > **մուր**, aratrom > **արաւր**, patros > **հաւր**): Ավելի ընդարձակ տե՛ս իմ Հայկականք Ե, 34:

Գոտի-ն (գօտի//գաւտի), ըստ իս, բարդ բառ է. նրա երկրորդ մասն է **տի**, որ նշանակում է «կապ» և գտնվում է նաև **սամիտի, կալոտի, ոստէն, վզտա, կամնտայ, բերանտայ, լամտա** բառերի մեջ: Դա հնխ. dé «կապել» արմատն է: Մնում է **գաւ**, որ բոլորովին անծանոթ արմատ է և պիտի նշանակի «մեջք», ճիշտ ինչպես ունենք գվո. **մէջկապ — գաւտի**: (Ավելի ընդարձակ տե՛ս Արմ. բառ., է, 119):

Հովիւ հայերենում առանձին արմատ է, բայց նա ծագում է հնխ. ovi-pā «խաչնարած» ձևից, որ մի հին բարդություն է՝ կազմված ovi «ոչխար»+pā «պահել» բառերից: Այսպիսով գտնում ենք հայերենում մի նոր արմատ՝ **հով**, որ է «ոչխար» (տե՛ս Արմ. բռ., Դ, 377):

Նման մի ենթադրությամբ հայերեն **Գաբեզին** անունն էլ, որ դեռ չի մեկնված, մեկնում եմ «թանկագին», որով ստացվում է հին հայերեն մի նոր բառ՝ ***գարեզի** «թանկ, սուղ» (տե՛ս իմ Հայկականք, Ա, № 7):

Եպիսկոպոս, կաթողիկոս, պատրիարք — պատկեր, նկար, հրավեր, պատվեր, նվիրակ, հրապարակ — այս բոլորը մեր լեզվի համար արմատ բառեր են: Բայց նրանց երկարությունը ասում է, որ արմատ չպիտի լինեն: Եվ իրոք, եթե դիմենք այդ բառերի աղբյուրին, կգտնենք որ նրանք ծագում են [ածանց՝ բաղադրյալ բառերից — **Ս. Գ.**]:

Փոխառյալ բառերի մեծագույն մասը, հենց որ մի քիչ երկար են լինում, անպատճառ ածանց բառեր են, և ձևապես միայն արմատ են համարվում փոխառու լեզվի մեջ:

Տասնյակ հազարավոր տարիներից ի վեր մարդիկ դադարել են արմատներ չինելուց. պահում են նրանք այն արմատները, որ նախնիք ավանդել են իրենց և այն էլ ոչ ամբողջովին, այլ մի մասը կորել է և կորչում է: Կան նույնպես արմատներ, որոնք թեև գործածական են ածանցված ձևի տակ, բայց առանձին չեն գործածվում, և նույնիսկ հայտնի չէ, թե ինչ ձև ունեն: Այսպես՝ **դղրդել** *բայի արմատը դրվում է* **դղորդ**, *բայց այս ձևից կարող է առաջանալ* **դղորդիլ** *և ոչ բնավ* **դղրդել**. *այս վերջինը ենթադրում է* **դղիրդ** *կամ* **դղուրդ** *արմատը, և կան, որ գործածում են* **դղիրդ** *ձևը, օր.՝ դղիրդով տապալում է (Սիրաս. Զգրված օրենք, 173):*

ԱՆՊԱՐԿԵՇՏ ԵՎ ՊԱՐԿԵՇՏ ԲԱՌԵՐ

Անպարկեշտ մի բառ կամ խոսք գործածելուց առաջ սովորություն է ասել **Հեռու լողաց, Հեռու սուրբ երեսիցդ, Հեռու սուրբ սեղանից, խոսքս ամոթ,** *որով խոսողը նախապես ներողություն է խնդրում իր ասելիք բառի համար:*

Եթե կան նվիրական բառեր, որոնց անունը տալ արգելված է սրբապղծություն չկատարելու համար կամ վախից ու սարսափից (ինչ որ հնների թաբուն է կազմում), այժմ էլ ունենք ամոթի զգացմունքը, որ արգելում է մեզ հասարակության առաջ գործածել զանազան անմաքուր համարված կամ անպատշաճ բառեր:

Առաջին հերթին հիշենք մարմնի զանազան արտաթորությունների անունները: Սրանց մեջ ոմանք մինչև մի աստիճան թույլատրելի են, ինչպես՝ թուք, մաղաս կամ խուխ (բալղամ), թարախ, խլինք և այլն: Բայց սրանք էլ՝ որոշ պարագաներում: Օրինակ, ճաշի ժամանակ անպատշաճ է արտասանել՝ պժգանք չպատճառելու համար ճաշողներին: Ավելի վատ են ուրիշ տեսակ արտաթորությունների անունները, ինչպես՝ **չեռ** *և* **քաք**, *սրանց փոխարեն կարելի է այժմ գործածել* **մեզ, կղկղանք, արտաթորություն,** *որոնք բժշկական լեզվի բառեր են համարվում, իսկ ժողովրդական՝ ջրվաթ, դուրս գնալ, ջուր թափել, գործ:*

Երկրորդ հերթին պետք է հիշել մարմնի ծածուկ մասերի անունները, որոնք թվով չորսն են, իսկ եթե միացնենք սրանց նաև **արգանդը,** *կլինեն հինգ: Սրանք պարկեշտ բառով կոչվում են* **ամոթուք, առականք, ծածուկ անդամներ, արական** *կամ* **իգական սեռական** *(կամ սերական)* **անդամներ** *և այլն: Առաջինը, որ հատուկ է երկու սեռերին, պարկեշտ բառով կոչվում է* **նստոց տեղի, Հետուք,** *Երևանի ժողովրդական բառով՝* **փափուկ տեղեր** *(օր. փափուկ տեղերի վրա ընկան), պոլսահայ կատակարան լեզվով՝* **որոզայթ**, *որ գրագետների ձեռքով գրր. համանուն բառից է առնված և թեև իր իմաստով (թակարդ, թալակ) ոչ մի կապ չունի նրա հետ, բայց գոնե իր առաջին վանկով հիշեցնում է ըուն բառը:* **Կարելի է ասել նաև տակը** *կամ առ առավելն մանկական բառով՝* **տուտուզ** *(Երևան): Զարմանալի է, որ նույն բառի աննզական ձևը՝* **ոռք,** *բոլորովին ազատ գործածություն ունի, ինչպես՝* **ամանի ոռքը, պղնձի ոռքը ընկել է, անտառի ոռքը** *և այլն: Այդպես և նաև ֆրանսերեն* cul, *որի սովորական գործածությունը աննկարելի է, բայց սովո-*

րական է ասել՝ cul d' artichaut, cul de bouteille, cul-blanc, culbuter, cul-de-jatte, cul-de-lampe, cul-de-sac, reculer «յետ գնալ, յետ նահանջել» և այլն:

Իգականի համար Պոլսում չինված գիտական բառ է **բունոց**, որ բժշկական լեզվով ազատ գործածություն ունի: «Արգանդ» իմաստով ժողովրդական բառեր են **ծնաման, զավակատուն**, որոնց գործածությունը ներելի է, ինչպես և՝ **փոր:**

Սվեդիայի բարբառը մի չատ հետաքրքիր օրինակ է տալիս պարկեշտ բառի գործածության:

«Բունոց» նշանակող բառի տեղ դրված է **վրտ.** սրանով մարմնի մի անդամի անունը փոխարինված է լինում մի ուրիշով, իբր թե **աչք** ասելու տեղ **ականջ** ասեինք: Բայց այն փոխանակված անդամի համար էլ պետք էր մի անուն դնել:

Ժողովրդական բառեր են նաև **բան** (երկսեռ), **թերմաչ, բամբակ, ծիրան, չոչոն** և այլն:

Պարկեշտ ընտանիքներում անվայել էր գործածել **էրիկս, կնիկս** բառերը, և նրանց փոխարեն ասում էին **տղոցս հայրը, տղոցս մայրը, քույրդ, մեր ընտանիքը** «կինս» կամ առ առավելն՝ **նշանածս.** կուլտուրան եկավ այժմ մտցնելու **«ամուսինս, կինս»** բառերի ազատ գործածությունը:

Անպարկեշտ է համարվում նաև գործածել մի բառ, որ թեև բոլորովին անմեղ իմաստ ունի, բայց մի որևէ հարևան և ծանոթ լեզվով անպարկեշտ իմաստ ունի: Այս դեպքում ջնջվում է այդ բառը և փոխանակվում է մի ուրիշ բառով: Նոր Նախիջևանի բարբառում ջնջված է **պզտիկ** բառը, և նրա փոխարեն գործածում են **փոքր,** խուսափելու համար ռուսերենի համանուն մի բառից: Համշենի բարբառում թեև կա **կոթ** բառը (հնչում է **գէօթ**), բայց խուսափում են գործածելուց և ասում են **պոչ,** որովհետև թուրքերեն համանուն բառը անպարկեշտ է: Ճիշտ այս պատճառով է, որ Նոր Բայազետի մերձակա մի գյուղը, որ հին հայոց մեջ կոչվում էր **Կոթ,** դարձել է **Աղիյաման** (թրք. նշանակում է «անունը սոսկալի»): Այս մասին տե՛ս իմ Հայկականք № 13: Ղարաբաղի և Շամախիի բարբառներում ջնջված է **սոխ** բառը, և նրա տեղ դրված է՝ առաջինում թրք. **սօղան,** երկրորդում՝ հայ. **կծու:** Պատճառը մանրամասն տե՛ս Արմ. բռ. **սոխ** բառի տակ: Թվի, թե **սխտոր** բառն էլ պիտի ջնջվեր, եթե Ղարաբաղի բարբառում **խստոր** ձևը չունենար:

Ինչպես Ղարաբաղի և Շամախու բարբառներում հայ. **սոխ** բառը ջնջված է, նմանապես պարսկերենում ջնջված է բնիկ ɪe «սոխ» բառը և փոխարենը գործածվում է թրք. soğan sopn հոմանիշը:

Գրաբարի **կլանել** բայը, որ կը ճյուղի բարբառներում **կլլել** ձևն ստանալով՝ լինում է հրմ. **կլլէ,** սրանով էլ ազատվել է ջնջումից, մինչդեռ Երևանի բարբառում դարձել է **կուլ տալ,** հրմ. **կո'ւլ տուր** (համմտ. հրմ. վառի'ր, գրի'ր, խոսի'ր և այլն):

Մինչև անգամ մեր այժմյա գրողները խուսափում են գրել **փնտռել** և գրում են **փնտրել,** ինչպես նաև՝ **ունեմ,** փոխանակ ասելու **ունիմ:** Պատճառը հասկանալի է:

Երբ անպարկեշտ բառերի փոխարեն կազմում են պարկեշտ բառեր, ժամանակավոր է նաև այդ պարկեշտ բառերի կյանքը, որովհետև եթե սկզբում այն, անսովոր լինելով, պարկեշտ էր, ապա սովորական դառնալով՝ դարձյալ անպարկեշտ է դառնում:

Արաբ. **հաջաթ** *նշանակում է «կարիք» և ընդունված է Երևանի բարբառում «գործիք» իմաստով: Նույնը նաև ստացել է «առնի» իմաստը, անչուչտ իբր ծածուկ իմաստով գաղտնի բառ: Բայց ապա դարձել է սովորական, և այժմ այդ էլ է ամոթ:*

Սվեդիայի բարբառով իգական անդամի բուն անունը ջնջվելով՝ տեղը դրված է **վըռ,** *որի իսկական նշանակությունն է* **հետույք,** *բայց այստեղ իմաստը փոխվել է: Իսկ* **հետույք** *իմաստի փոխարեն գրել են* **էտիվ,** *որ է* **ետև, յետև:** *Վերջապես* **«յետև»** *իմաստի համար էլ դրել են* **էտըղ'էն,** *որ է* **յետի դին** *(ինչպես ասում ենք՝ ասդին, անդին, վերի դին, վարի դին):*

Այսպիսով մի բառի պատճառով երեք ամբողջ բառ տեղափոխվել և իմաստից դրկվել են պարկեշտաբանության համար:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Այս անվամբ հասկանում ենք այն մի խումբ բառերը, որոնք ունեն բնաձայն և մանկական բառերի ձևեր և հնարված են ժողովրդի կողմից, կատակով և այլն, Համմտ. ֆր. méli-mélo, mic-mac, *թրք. խըվըռ-դրվըռ:*

ՆԱԽԱՏԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Հին հայերը նախատական կազմելու համար բառասկզբում դնում էին է բացասականը, ինչպես՝ **չերեց, չքահանա:**

Կամ դիտմամբ փոխում էին բառի գրչությունը, օր. չատ գրիչներ, իրենց **աբեղա** *տիտղոսը չարաբոխելով, գրում են* **խաբեղա,** *այսինքն՝ «խարվեցի, խարերա եղա» իբր նշան համեստության (անձին նախատինք):*

Արդի բարբառներում այս ոճով կազմված նախատական բառեր չատ կան, այսպես՝ Պոլսի բարբառից՝

Պատրիարք > պատին քարը,
թագավոր > թագավոռ, քաքավոռ,
տերություն > տեռություն,
Avocat *> արուքաթ > Հավու քաք,*
մաղմաղել «օրիորդ» > Պլ. մատ մը չեռ,
Երև. քուրիկ > քուռիկ:

Նույնիսկ մի տառի փոփոխությամբ կարելի է բառը վերածել նախատականի: Պոլսի հայերենում **Ակնեցի** *և* **Վանեցի** *«պատվավոր» բառեր են, իսկ* **Ակնցի** *և* **Վանցի՝** *նախատական, նույնիսկ կա մի այսպիսի առած. վանցի, թուք երեսը՝ անցնի: Նորերս էլ* **եղբայր** *բառը արևմտահայ* **ախպար** *ձևով վերածվեց նախատականի:*

* * *

Նախատական կամ արհամարհական բառերի գործածությունը երբեմն էլ քաղաքավարության արդյունք է՝ հին գեղջկական ըմբռնումով, օրինակ, **երեխա** *նշանակելու համար ասում են* **տխմար, լակոտ, անասուն:**

Այսպես նաև ֆրանսիացի գյուղացիք իրենց երեխաներին կոչում են «ma drôlesse», «la chetite» (չնչին) (Meillet, BSL № 67, *էջ 246):*

ԱՐԳԵԼՎԱԾ ԲԱՌԵՐ

Ներածությունից գիտենք, թե ինչ է tabou*-ն, սրա հետ միասին՝ այն բառերը, որոնք կրոնական նախապաշարմամբ, երկյուղով և կամ քաղաքավարական պահանջների համեմատ արգելվում են գործածել: Այս տեսակ բառերի փոխարեն ստեղծվում են բոլորովին նոր բառեր, և կամ հենց իրենք ձևափոխվելով նոր կերպարանք են ստանում:*

Առաջինները վերաբերվում են իմաստազիտության, երկրորդները՝ ձայնաբանության: Քննենք մի քանի օրինակներ:

Աննամեցոց մեջ քաղաքավարությունը պահանջում է չարտասանել մի նշանավոր մարդու անունը, կամ՝ այն մարդու, որին ուզում է հարգել, ինչպես և՝ գյուղի պահապան ոգու ու հանգուցյալ նախնիների:

Բայց հաճախ այդ անունները լինում են լեզվի մեջ սովորական հասարակ բառեր. այս պարագային բառերի արգելքից ազատելու համար ձևափոխում են նրան՝ փոխելով նրա ձայնավոր տառերը (Cadierè, Phonétique annamite, Paris, 1901, Roudet 328):

Առաջանում է վախից կամ ամոթից:

Վախից, օրինակ, **սատանա** *բառը ջնջվելով՝ շատ տեղ փոխանակվել է ուրիշ բառերով. միջին դարում ֆրանս.* l'ennemi, l'esprit, le vilain, le malin, l'autre, *այժմ հայերեն՝* **մենե աղեկները, հակառակ** *և այլն:*

Միջին դարում martre mineur *կենդանու վրա սոսկալի նախապաշարմունքներ կային, ուստի անունը փոխել էին, ֆրանսերեն* belette *(սիրուն), գերմաներեն* jüngferchen *(փոքրիկ օրիորդ),* schöntierlein *(գեղեցիկ, փոքրիկ անասուն), անգլերեն* fairy:

Ամոթից փոխված բառը կոչվում է euphémisme *(գեղեցիկ բառով խոսել): Օրինակ՝* **անել–ընել** *բայը գործածվում է զգուշալի բառերի համար, այսպես՝* **ընել՝** *1. մերձավորել: 2. կղկղել, ճիշտ ինչպես լատիներեն՝* 1. facere «coire». 2. «cocare»:

Արջ: *Այն ամբողջ հողամասի վրա, որ պատմական շրջանում բռնած էին հնդեվրոպական ժողովուրդները, արջը գոյություն ուներ (տե՛ս* Keller, Thiere des classischen Alterthums, 106): *Նա կոչվում էր մի ընդհանուր բառով, որի ներկայացուցիչներն են սնս.* rksa–, *զնդ.* arso, *հուն. ἄρκτος, լատ.* ursus, *ալբ.* ari *և հայերեն արջ: Այս բառը պակասում է ամբողջապես բալթիկ-սլավականում և գերմաներենում, որոնց մեջ գտնում ենք այլ դարձվածներ, ինչպես՝ ռուս.* медведь *«մեղրակեր», լիթ.* lokys *«լիզող», հպրուս.* clokis *«մոթմոթացող», գերմ.* Bär

«գորշ»: Սրանց հետ համմտ. հյուսիսային Եվրոպայի ուգրո-ֆիննական զանազան լեզուների տված անվանակոչությունները, ինչպես՝ «անտառի փառք», «ծերուկը», «մեղրն փառավոր թաթ», «մազոտը», «լայնոտն», «սպիտակ մրջյուն ուտողը» և այլն: Իռլանդերենի մեջ թեև արջ բառը կար, բայց նրա հետ 12 այսպիսի բառեր կան արջի համար: Հայերենի մեջ էլ ունենք **արջ** *բառի հետ միասին* **լեռան ծաղկակոխ, տանձակեր, քեռի:** *Այս բոլորը ցույց են տալիս, որ հին հնդևրոպացոց մեջ արջի անունը* tabou*-ի էր ենթարկված, որի արդյունքն է եղել կամ ամբողջ բառի ջնջումը և կամ ձևափոխումը (ինչպես հայերեն* **արջ***):*

Օձ-*ը չատ ազգերի մեջ* tabou*-ի է ենթարկված: Սկբաստացիք, երբ* **օձ** *բառը արտասանում են, իսկույն նրանից հետո արտասանում են լեզվի մի չաչոց, որ նշան է «գնա, քայլիր» ասելու և գործ է ածվում անասունների համար: Այսպես էր նաև հնդևրոպացոց մեջ, այնպես որ ժառանգ լեզուներում գտնում ենք «օձ» իմաստով զանազան բառեր, որոնց յուրաքանչյուրը բռնում է մի փոքր սահման, ինչպես՝*

1) իժ՝ սնս. áhi, *գնդ.* aži, *հյ.* iz *իժ, հուն.* échis:

2) լտ. anguis *(սլ., լիթ., լատ.).*

3) լտ. natris *(գոթ., իռլ., լատ.):*

Սրանցից դուրս կան նաև «սողացող» (լտ. serpens*, նաև սնս.* áhi-*, հուն.* ὄφις*), «հողային, ցամաքային» (ռուս.)* **змея** *«փորի վրա սողացող» (սանս.), «կանաչ» (լիթ.), «գարչելի» (հսլ.):*

Tabou *եղած են նաև* **մուկը** *(պակասում է բալթ. և կելտ., որոնք ասում են* **«գորշ»**, *այսպես նաև Շվեդիայում):*

Այսպես նաև **աղվեսը?, եղջերուն** *(որսի ժամանակ), սրա հնխ. անունն էր* elen- *(որից հայերեն* **եղն***), բայց թաբուի ենթարկվելով՝ դարձավ եղջերու (եղջերավոր). այսպես են լտ.* cervus*, հպրուս.* ragingis*, գալլ.* carw *և այլն:*

Այս բոլորը վերաբերում է անասունների անուններին, և հեշտ է նրանք գտնել և հաստատել: Բայց նույնպիսի երևույթ գտնում ենք նաև ուրիշ սովորական բառերի համար:

Սումատրայի մոտ՝ մալայան մի կղզում, որսի եղանակում **աչքի** *մասին խոսել արգելված է. անշուշտ այստեղ արգելքը չար աչքի հավատքի պատճառով է: Այսպիսի մի բան պետք է վերագրել իռլանդացոց, որոնց մեջ հնդևրոպական* **աչք** *ընդհանուր բառի տեղ գործածում են «արևգակ» (իռլ.* suil*): Բայց նույնիսկ «ակն, աչք» բառը բոլոր հնդևրոպական լեզուների մեջ տարբեր-տարբեր երևույթներ է ստացել, որոնցից ամենացայտունն է գերմ.* Auge*: Այս բանն էլ պիտի վերագրել* tabou*-ի:*

«Աչ» բառը (հնխ. deks-*) պահված է զանազան ժառանգների մեջ, բայց «ձախ»-ը չատ տարբեր է և կազմում է զանազան փոքրիկ խմբակներ, ինչպես՝ սնսկ.* savya *(գնդ., հսլ.), հսլ.* lěvŭ *(հուն., լտ.), լտ.* scaevus *(հուն.) և այլն:*

Այսպես պետք է լինելին նաև զանազան հիվանդաց և մարմնական պակասությանց անունները, որոնց համար միակ ընդհ. հնխ. բառեր չունենք, նոքաները կրճատել են tabou*-ով:*

Լուսին *բառը հնդևրոպացոց ժամանակ* tabou *եղավ, [ուներ] ազդեցություն մարդկանց վրա, ուժեղ և վտանգավոր էր, ուստի անունը փոխեցին, հին անունով էր լտ.* mensis*, հայերեն* **ամիս***, հույները սրա տեղ դրին «լուսին»* luna *և այլն:*

Լուսնոտություն *Հիվանդությունը վախի պատճառով փոփոխված է շատ տեղ: Օրինակ, ֆր.* le bon mal, *իտալ.* il male santo *(սուրբ տառ), սում.* alteale *«մյուսը» և այլն:*

Tabou *նղած մի բառ, երբ տարածվի և սովորական դառնա, կարող է երկրորդ անգամ* tabou *դառնալ. օրինակ՝ ռուս.* **медведь**, *ինքը* tabou *է, բայց այժմ էլ նոր* tabou*-ով ասում են* **мишка, хозяин.**

Այսպիսի փոփոխությամբ ֆրանս. diable *«սատանա» դարձել է* diantre, Dieu *դարձել է –* bleu՝ corbleu, morbleu *բառերի մեջ:*

Հայերենի մեջ ունենք՝

կամուրջ,

արջ:

Հետաքրքրական են նաև՝

որոգայթ Պլ.,

նստիմ Պլ. (ծծկր.),

բարի բան՝ Ալաց.,

Քրիստոս մեջերնիս՝ Պլ.,

էն անանունը (Լոռի), նշանակում է «կարկուտ»:

Արդի Ֆրանսիայում opération *բառը վախ է պատճառում, ուստի բժիշկները գործ են ածում* intervention, *որ վախենալու բան չէ* (Vendryès, Le Langage 258).

Interdiction *(ըստ հին ըմբռնմանց՝ վայրենյաց): Օրինակ՝* **ձախը** *վատ նշան էր, ուստի չէին ասում.* **աջ** *բառը հնդեվրոպական է, բայց ձախ-ը՝ չէ:*

Երբեմն մի երկու տառ փոխելը բավական է արգելված բառի ուժը կոտրելու համար:

Մի նոր գյուտ մոռանալ է տալիս հին առարկան և նրա հետ բառը:

Օրինակ՝ գոթ. hlaifs *«հաց» շատ տարածված մի բառ էր (որից փոխառյալ է լիթ. և սլավ.), բայց դա անխմոր հացն էր, հենց որ սովորեցին խմորել հացը, բառը փոխվեց և տեղը դրվեց* brod:

Կա և չիքն լեզու:

Օտար փոխառյալ բառերից շատը չիքի համար է և չէ թե նոր առարկաների անուն:

Մուր: *Պոլսի հայերը, թեև ընդհանրապես հայախոս, բայց ռամիկ լեզվի մեջ ունեն շատ օտար բառեր: Երբ ստիպված են լինում խոսել մի օտարազգիի մոտ և չեն ուզում, որ նա հասկանա, իրենց չիմացած հայերեն բառի տեղ կազմում են մի նոր բառ, նույն իմաստով: Օրինակ սովորաբար ասում են* **քէօմիւր,** *իսկ ծածուկ խոսակցության մեջ, չիմանալով* **ածուխ** *բառը, գործ են ածում* **մուր ունի՞ս** *«ածուխ ունի՞ս»**:

ARGOT

Գրական և սովորական խոսակցական լեզվից դուրս կա ընտանեկան ռամիկ լեզու և ծածկալեզու, այս երկուսը պետք է զանազանել իրարից: Cohen BSL, № 67, *էջ 249, առաջարկում է ֆրանսերենում առաջինը կոչել* slang, *իսկ երկ-*

* *Բոնպա Բայյա սօրյա րիմ նրդու տիպի սագ՝ պարոն Հրաչեայ, այսօր մեր տունր պիտի գաս:*
Լսել եմ Ախալցխայի մի ընտանիքում:
Մօ իլր, Կարապետ– իլր և այլն ....

բորդը՝ argot: *Առաջինը ընդհանուր է բոլորի համար, երկրորդը հատուկ է որոշ խավերի մարդկանց և հատկապես չարագործներին:*

Argot *ունեն նաև զանազան արհեստավորներ, ինչպես մեր մեջ գզրարները, որոնք մասամբ իրենց մասնագիտությանը հատուկ բառերից, մասամբ էլ ձախ նպատակով ստեղծել են մի* argot: *Այսպիսի* argot*-ներ չատ կան ֆրանսիացիների մեջ, և նրանք հրատարակել են զանազան հավաքածուներ:*

* * *

Մածկալեզվի ամենից ավելի կենդանի տիպարն է կազմում Երևանի խուժանների լեզուն, որոնց ուսումնասիրությամբ զբաղվեց մի ժամանակ իմ ուսանողներից Տիգրան...

Նա իմ առաջարկությամբ կազմեց խուժանների բառարանը (չուրջ 50 բառ), որոնց վրա գրում էր առանձին դիսերտացիա: Այնուհետև մչակված նյութը կորավ, և աշխատությունը թողեց անավարտ: Վերհիշելով տվել է ինձ հետևյալ բառերը:

1. **Եայվա** *«վտանգ չկա, ապահով եղիր»*
2. **Զեքս**
3. **Զազէն**
4. **Աթանդան**

Այս վերջին երեքը նուն նշանակությունն ունեն և նշանակում են «վտանգ չկա, փախիր»: Հնագույն և սովորական ձևն էր **զեքս,** *բայց երբ սա ամենքին հայտնի դարձավ, գործածությունից վերացվեց, և նրա տեղ եկան* **զազէն** *և* **աթանդան** *ձևերը: Վերջինը, կարծում եմ, ֆրանսերեն* attendons *«սպասենք» բառից է, որով ընկերը զգուշացնում էր չարագործին՝ չարունակելու իր արարքը:*

5. **Պրիստավկա** *«գրավ կամ պատանդ դրված անձ»: Երբ դումար խաղալու ժամանակ մեկը մյուսին պարտք է մնում և չի կարողանում վճարել, պարտատիրոջ կողմից հայտարարվում է* **պրիստավկա:** *Դա նշանակում է, որ պարտապանը պարտատիրոջ տրամադրության տակ է գտնվում: Պարտատերը կարող է և իրավունք ունի վարվելու նրա հետ, ինչպես ցանկանա: Օրինակ՝ սպանել, աշխատեցնել, հետը սեռական հարաբերություն ունենալ և այլն: Իհարկե, ռուսերեն* приставка *«հավելում, նախամասնիկ» բառն է, որ իմաստի զարգացմամբ հասել է այս նշանակությանն:*

6. **Դաչխոչ** *«գողացած մի բանից տրված բաժին»: Երբ փոքրիկ խուժանը մի բան է գողանում, և այդ միջոցին մի մեծ խուժան վրա է հասնում, այս վերջինը նրանից բաժին է պահանջում: Եթե փոքրիկը տվեց, լավ, ապա թե ոչ՝ բռնի վերցնում է:*

Ծանոթություն.— *1927 թվին Երևանից դեպի Ղամարլու տանող խճուղու վրա գտնվող գերեզմանատունում տեղի ունեցավ խուժանների մի մեծ խորհրդակցություն, ուր ներկա էին նաև Բաքվից և Թրխիսիից եկած ներկայացուցիչներ: Այդտեղ* **դաչխոչի** *հարցը քննվելով՝ որոշվեց վերացնել՝ իբրև ապօրինի արարք: Ով գողանա, նա էլ վայելի իր աշխատանքի պտուղը:*

Բառիս ծագումը ընկ. Տիգրանը իրավացի կերպով բացատրում է ռուսերեն даш *«կտաս», թրքերեն* xoš *«լավ», այսինքն՝ «եթե կտաս՝ լավ, ապա թե ոչ՝ բռնի կվերցնեմ»:*

ԾԱԾԿԱԼԵՋՈՒ

Պոլսում սրիկաների գործածած ծածկալեզուն կոչվում է todi *(Թոդի), որ ձևացել է մի տեսակ գնչու լեզվի բառերով: Այս մասին տեղեկութիւն է տալիս մեզ Հակոբ Մ. Հաճյան «Բերայի գիչերներ» վեպի մեջ (Պոլիս, 1885, էջ 507 ծան.): Դժբախտաբար հեղինակը ոչ մի բառ չի բերում իբր օրինակ, բայց խոստանում է, որ ապագային. «Տաճկաբարբառ նոր վեպ մը պիտի հրատարակեմք, որոյ մէջ պատեհութիւն ունենամք առաջին անգամ հիշեալ գողերու գործածած* **թօտի** *լեզուին վրայ գաղաբար մը տալ ընթերցողաց»: Գիտեմ, թե հեղինակը կատարել է իր խոստումը, բայց հիշում եմ, որ կարդացել եմ մանուկ հասակումս Պոլսում մի վեպ հայատառ տաճկերեն լեզվով՝ «Իքի գարու յողդաչլարը», ուր կային Պոլսի գողերի լեզվով խոսակցութիւններ:*

ԾԱԾԿԱԼԵՋՎԻ ՁԵՎԵՐ

Կամայական կրճատում բառասկզբի (apherèse), *բառամիջի* (élision) *կամ բառավերջի* (apocope). *ինչպես՝*

capitaine > pitaine,
municipal > cipal,
champagne > champe,
maréchal des logis chof > marchef,
ֆր. labo, *անգլ.* lab < laboratory,
անգլ. gym < gymnasium, *անգլ.* maths < mathematics,
ֆր. desse < geimétrie descriptive:

Դանիայում դպրոցական մի ծածկալեզու կա, որ չինվում է՝ ա) բառի առաջին մասին կցելով վերջամասը և ջնջելով միջինը, այսպես՝ tykmoelk *դառնում է* toelk, tykmoelkkonen *դառնում է* tonen (Jespersen, Mankind 152), *բ) ձևափոխութեամբ, ինչպես՝ ֆր.* mairerie *փխ.* gendarmerie, *Հյուսիսային Իտալիայում* Valsoana-*ն (մոտ է* Turin-*ին) խոսում է մի բարբառ, որ ուրիշ բարբառներից չատ տարբեր չէ, բայց երբ ուրիշ մարդիկ գալիս են, անհասկանալի դառնալու համար գործ են ածում առանձին ծածկալեզու, որ չինվում է մերթ միջարկելով* ods, ads, ids, orl *վանկերը, մերթ ավելացնելով* u, os, eri, ulji *վերջավորութիւնները և մերթ դնելով բոլորովին նոր ու պատկերավոր բառեր* (Jespersen, Mankind 198):

Ծածկալեզուների մեջ ամենանշանավորներն են գողերի և այլ հանցագործների լեզուները (ֆրանսերեն argot, *անգլերեն* flash *կամ* cant. *այս վերջին բառը արդեն 1566-ին կար):*

Սրանք կազմվում են՝

1) Գերմանիա՝ վանկերի տեղափոխությամբ, ինչպես՝ pecho > chepo,

2) Հոլանդիա՝ vinger > regniv, vistar > tisvar, rafelen > nelefar,

3) Լոնդոն՝ ten net, fifteen netevif, sixteen > netexis, woman > namow:

Գողերի լեզուն ունի նաև հին, վաղնջական բառեր, որոնք դեռ պահել են օտար լեզուներից փոխառյալ բառեր, հատկապես գնչուների լեզվից:

ԾԱԾԿԱԼԵԶՈՒՆԵՐ

ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

M-gibbelish – *ավելացնում են* m *ձայնը.*
going out today > goming mout tomday.
S-gibberish – *ավելացնելով* s *ձայնը.*
going out today > gosings outs todays.
marrowskying *կամ* hospital Greek – *բառի նախաձայնները փոխանակելով.*
renty of hlain < plenty of rain
flutterby < butterfly
Ziph *կամ* hypernese – *երկու նախաձայն բաղաձայններից առաջինի առաջ դնում է* wa *կամ ներմուծում է* p *կամ* g. *օրինակ՝* breeches > wareechepes
penny > pegennepy

ԴԱՆԻԱ

du er et lille asen > dupu erper etpet lilpillepe apasenpen durbe erbe erbe lirbelerbe arbeserbe

ԳԵՐՄԱՆԻԱ

Ներմուծելով p *կամ ավելացնելով* erbse.
այլ ձև՝ vater > vabateber

ՀՈԼԱՆԴԻԱ

de schoone Mei > depé schoopoonepé Meipéi

ՖՐԱՆՍԻԱ

javanais – je vais bien je-de-que vais-dai-gai bien-den-gen

ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ MAORI-ՆԵՐԸ

au ki riera > te-a te-u te-ki te-re te-i te-ra
(Jespersen, Language, *էջ 150*):

Կան Եվրոպացոց մեջ բազմատեսակ ծածկալեզուներ, օրինակ՝ աչակերտական, զորանոցի, կարուհիների, լվացարարուհիների, հանքահանների, նավաստիների, չարագործների... Անգլիայում կա գերձակների լեզու, կաթսայագործների լեզու և այլն, որոնցից ոմանք հին արհեստի գաղտնիքներից են:

Այս լեզուները կազմված են՝

1) Մայրենի լեզվի բառերից՝ փոխված իմաստով:

2) Օտար փոխառություններից:

3) Մայրենի լեզվի բառ՝ նոր մասնիկով փոփոխված վերջից,

ինչպես՝ ֆր. épicier > épismar, parisien > parigot,

գերմ. kaufmann > kofmich,

ֆր. auvergnat > auverpin,

4) loucher bème *լեզվի մեջ* boucher *ձևով, նախադասը տանել վերջը, մասնիկը՝ սկիզբը,*

5) jzvznais *լեզվում բառի մեջտեղը մի նոր վանկ* (ar, oc, al, em), *բայց մնաց* av, va, *որի համար էլ կոչվում է* javanais: *Խոսում են դպրոցներում, կա Ֆրանսիա, Գերմանիա և սլավոնների մոտ:*

6) Penjab-*ում կա մի գողերի լեզու, որ բառը կեղծելու համար մեջտեղը դնում է* ma: *Ե դարում Իոլանդիայում մի քերականագետ հնարեց մի ծածկալեզու, որ հետո փոփոխվելով՝ առաջ բերավ մի լեզու, որ կոչվում է «բանաստեղծների լեզու» և Իոլանդիայի դպրոցներում գոյություն ուներ:*

Ծածկալեզուների հետ պետք է հիշել Ս. Հոգուց ներշնչված խոսքերի մարգարեական լեզուն, կամ այն ջղային հիվանդի աղջկա (որ քննել է Fournoy), *որ խոսում էր Մարսի էակների լեզուն և այլ մասներ: Այս բոլորը մեծերի լեզվից կեղծված բաներ են:*

[Ծածկալեզուն] կոչում են ճնճղուկի լեզու, ագռավի լեզու, կոկերեն՝ բոլորն էլ թռչունների անուններ, ինչպես ունենք նաև **աղավնագիր** *(ծածկագիր), որ հետո դարձել է Աղվանից գիր (տե՛ս իմ Հայոց Գիրը, էջ 478):* **Աղուանք** *և* **աղավնի** *բառերի չփոթության համար ամենազվարճալի օրինակն է Աղվանից կաթողիկոսը, որ Միքայել Լևքը ֆրանսացի պատմիչի մոտ դարձել է* Columbarum *(Աղուանյաց). տե՛ս Զամչյան Գ., 885:*

Այնպիսի երկրներում, ուր բնակվում են զանազան ազգի ժողովուրդներ, մեկը մյուսի ազգի անունը տալու ժամանակ զգուշության համար դիմում է մի որևէ ծածուկ բառի: Այսպես՝ Պոլսում հայերը ֆրանսացիներին կոչում են **տիտոն,** *անգլիացիներին՝* **տաքարուն,** *հույներին և ռուսներին՝* **ձուկ ուտող:** *Տիտոն բառը ֆրանսերեն* dis donc *«ասա ուրեմն» ձևից է. այս ձևով դիմում են ընկերները իրար կանչելու համար, ինչպես ռուսները՝* слушай: **Տաքարուն**-*ը անգլիացիների համար ոչ թե ծաղրական ձև է հակառակ իմաստով, այլ որովհետև նրանք ունեն չատ չոգենավ:* **Ձուկ ուտող** *կոչվում են հույները նրա համար, որ մեծ պասին ձուկ են ուտում: Պոլսում Մուհամմեդի անունը տալու համար ծածկալեզվով ասում են* **կունդ** *(ակնարկելով գլխի խոշոր փաթթոցը), մզկիթը կոչվում է* **վճարանք:** *Նկատենք, որ պարսկերեն* **նամազ անել** *«աղոթել» ասելու փոխարեն ասում են* namaz guzar dan *«նամազ վճարել»: Զինվորը Պոլսում առաջ կոչվում էր* **փատվոր** *«որ ձեռքին փայտ ունի»: Ղարաբաղցիք ծածկալեզվում թուրքերին*

կանչում են **ծանի.** այս բառը առաջանում է **կածան** բառից, որ նշանակում է նեղ ճանապարհ, նաև՝ թուրքերի գլխի գագաթից մինչև ճակատը ածիլած նեղ անցքը, որից էլ կրճատվել է **ծանի** ձևը: Կովկասում ռուսներին **սոխ** են կոչում, նրա համար, որ նրանց եկեղեցիների գմբեթը բյուզանդական ոճով սոխաձև է: Այսպիսի մի ծածկաբեղվից առաջացած պետք է համարել քրդերեն **ֆլա,** որ նշանակում է **հայ,** բայց բուն իմատն է **երկրագործ,** ըստ որում հայերը ընդհանրապես երկրագործ են եղել: **Տեառն պիտոյ** (էչ) գործածվում է Պարտիզակում. աղբյուրն է՝

Երթայք դուք ի գեղն... գտանիցէք յաւանակ կապեալ... լուծէք զնա... եւ եթէ ոք հարցանիցէ զձեզ թէ ընդէ՞ր լուծանէք, այսպես ասասջիք ցնա թէ Տեառն իւրում պիտոյ է... Ասեն տեարքն նորա ցնոսա, Ջի՞ լուծանէք զյաւանակդ: Եւ նոքա ասեն, Տեառն իւրում պիտոյ է: (Ղկ., յթ. 30–35):

ՍՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Սրախոսությունը մի հատկություն է, որ խոսակցությանը թարմացնում և զվարճալի է դարձնում: Ամեն տեղ էլ ժողովրդի մեջ, գյուղացի թե քաղաքացի, նկատելի է սրախոսելու տրամադրությունը: Սրախոսությունը կախված է երկու խոսակիցներից, և գլխավոր պայմանն այն է, որ խոսողի սրախոսությունը խոսակիցն էլ ըմբռնի, որով երկու կողմերն էլ թարմություն և զվարճություն կրստանան: Սակայն եթե խոսակիցը բավական թանձրամիտ է և չի հասկանում խոսողի պատմությունը, այն ժամանակ խոսողը նրա համար դառնում է անմիտ, թեև ինքն է բթամիտ:

Սրախոսությունը կախված է բնականաբար խոսողի ընդունակություններից, բայց նաև լեզուն ինքը մեծ բաժին ունի այստեղ:

Կան լեզուներ, որոնք ունեն բազմաթիվ նմանահնչյուն կամ համանուն բառեր, որով ինքներն առիթ են ներկայացնում սրախոսություններ կազմելու: Այս կողմից նշանավոր է ֆրանսերենը, որի մեջ կան բազմաթիվ բառեր, որոնք ունեն մինչև հինգ կամ ավելի համանուն ձևեր, օրինակ cinq *(5),* saint *(սուրբ),* sain *(առողջ),* sein *(կուրծք),* scène *(տեսարան),* ceint *(գոտեվորված),* Seine *(Սենա գետը),* verre *(բաժակ),* ver *(որդ),* vert *(կանաչ),* vers *(դեպի),* vers *(ոտանավոր),* vin *(գինի),* vingt *(20),* vint *(եկավ),* vain *(զուր),* veine *(երակ) և այլն:*

Այնքան շատ է այսպիսի բառերի թիվը, որ նրանց համար հատուկ բառարան է կազմված ֆրանսերենում: Բազմաթիվ են նաև այդպիսի բառերից կազմված սրախոսությունները, ինչպես օրինակ՝ հետևյալ նախադասությունը, ուր կա 5 տեսակ **սի.**

Si si six scies scient six cyprès, six cent six scies scient six cent six cyprès.

Այո (իհարկե), եթե վեց սղոց սղոցեն վեց կիպարիս (նոճի), վեց հարյուր վեց սղոց սղոցում են վեց հարյուր վեց նոճի:

Եթե հնչենք **սանտէ,** *կարող ենք հասկանալ հետևյալ իմաստները (գրության տարբերությամբ).*

santè «առողջություն», sans thé «առանց թեյի», sanst «առանց t տառի», cent t «հարյուր հատ t» (տառը), cent thés «հարյուր տուփ թեյ», santait «զգում էր», santé «զգացած»:

Հայերենը այսպիսի «հարստություն» չունի, և հետևաբար չի կարող կազմել չարունակ նման սրախոսություններ, որոնք վերջ ի վերջո հանգում են բառախաղի: Այնուամենայնիվ, մեր ժողովուրդն էլ ունի իրեն հատուկ սրախոսությունները: Ասացինք, որ սրախոսությունը մասամբ էլ կախված է անձից: Մեր մեջ սրախոս են հատկապես պոլսեցիք, նոր նախիջևանցիք, տփղիսեցիք և այլն: Եթե հայերեն լեզուն լիքը չէ համանուններով, այս ղեպքում օգնության են հասնում նաև հարևան լեզուները: Օրինակ, Պոլսում կա մի առած՝ տունը չունի տաք ապուր, դուրսը կըլլա (կլինի) էքապուր, որի իմաստն է, թե «չատ աղքատ է, տանը մինչև անգամ տաք ապուր չունի, բայց դուրսը ցույց է տալիս իրեն գոռոզ և հպարտ»: Այստեղ **էքապուր** *բառը արաբերեն է* kebīr, **մեծ** *բառի անկանոն հոգնակին է, որ է* ekābīr «մեծեր, մեծամեծք». *ավելի սովորական է* kúbera.

Ութսունական թվականներում Պոլսում հարց հարուցվեց, թե գրաբարով սրախոսություն կարելի՞ է անել: Վեճը անչուշտ մեջտեղ բերին աչխարհաբարյանները, և իրենց բուն միտքն էր ծաղրել գրաբարը, իբրև անընդունակ սրախոսության: Զգիտեմ, թե վեճը ինչ վախճան ունեցավ, բայց հիշում եմ, որ Դավիթ Շաքարյան անունով մեկը հայտնեց ինձ, թե Եղիշեի պատմության Ա նղանակի սկզբում ասված այս խոսքը **եւ թագավորն Թէոդոս, քանզի խաղաղասէր էր ի Քրիստոս...** *սրախոսություն է և հեգնանք: Հաջորդ տողերում պատմում է Եղիշեն, թե ինչպես կայսրը մերժեց օգնել հայերին պարսից դեմ պատերազմի ժամանակ (Վարդանանց պատերազմը), որովհետև խաղաղասեր էր ի Քրիստոս:*

Ծանոթություն.— *Դավիթ Շաքարյանը Վանեցի մի երիտասարդ էր, աչխույժ և վառվռուն: Նա ուսուցիչ էր հայ լեզվի Սամաթիա թաղի Նունեյան-Վարդուհյան աղջկանց դպրոցի ստորին դասարաններում: Իբրև աղգասեր երիտասարդ՝ աչակերտում հիներին ոչ միայն սովորեցնում էր հայ լեզուն և հայ անցյալի պատմական դեպքերը, այլև վանեցոց ժողովրդական երգերն ու հեքիաթները: Մեռավ թարմ հասակում, 80-ական թվականների վերջերին:*

Հայերենի համանուն բառերի ցանկը կազմել եմ և գրել նախորդ էջերում: Տալիս եմ նաև հեգնական և ծաղրական բառերի ցուցակը, որոնք բոլորը արդյունք են ժողովրդական սրախոսության:

Միջազգային սրախոսությունների կարգն է անցած anatomie ou autonomie *խոսքը, որ ասել է մի ֆրանսիացի քաղաքագետ օսմանյան կայսրության հասցեին: Այսինքն, օսմանյան կայսրության հպատակ փոքր ազգերի վիճակը բարելավելու համար կամ պետք է ամեն մեկին անկախություն տալ և կամ՝ օսմանյան կայսրության հպատակությունից հանելով հանձնել մի ուրիշ պետության:*

Հին հայ գրականությունը լուրջ սեռեր միայն գիտե՝ աստվածաբանություն, պատմություն, կրոնական բանաստեղծություն, գիտական գրվածքներ, որոնց մեջ սրախոսություն կամ հեգնանք տեղ չունին: Ուստի ավելորդ է թերևս որոնել նրանց մեջ այսպիսի հատվածներ: Բայց ամենքին հայտնի է, որ 1243 թվին, երբ տեղի ունեցան մոնղոլական արշավանքները, և Հայաստանը նրանց ավերածության զոհ դարձավ, պատմագիրները «ողբ» կոչեցին այդ տարին, որովհետև հայոց թվականն էլ այդ տարին ՈՂԲ էր:

Միջին Հայերենի շրջանում, երբ գրականությունը ավելի ժողովրդական դարձավ, և մտան նրա մեջ առակներ, հանելուկներ և ուրիշ զվարճալիք, կարող էին երևան հանվել զանազան հեգնական գրվածքներ և սրախոսություններ, ինչպես որ կան:

Պոլսում ժողովրդական լեզվով կա **մանթար** *«սուտ» բառը, որից էլ* **մանթար նետել** *«սուտ ասել»: Նույնը կա նաև թրք.* mantar *և* mantar atmaq *ձևով: Կարծում եմ, թե այս բառը փրանս.* mentir *«խաբել, սուտ ասել» բառին համապատասխան իսպան.* mentar *ձևից է, որ Պոլսի իսպանախոս հրեաների լեզվից անցել է մեզ և թուրքերին:*

Մինչև անգամ մեր նոր սերնդի ուսումնականների ձեռքով սարքած մի բացատրություն է **մանտարատ դը սուտ,** *որ նույնպես նշանակում է «սուտ խոսք»: Այս ձևը կազմված է փրանս.* carbonade de soude *դեղագործական բառից՝ հայերեն* **սուտ** *բառը վերածելով փրանսերենի և միացնելով նորահնար մանտարատ (*mantarate*) բառի հետ: (*carbonade *փրանսերեն բառը չատ սովորական է Պոլսի հայ ժողովրդական լեզվի մեջ, ասվում է, օրինակ,* **քարպոնատ մը առ** *«մի քիչ սողա խմիր» իմաստով): Այսպիսով, այս մի բառը կազմելու համար դիմել են 4 լեզվի խառնուրդի:*

Սրախոսություններից չատերը անպարկեշտ բացատրություններ են և հատկապես գործածվում են հայհոյանքների մեջ, այսպես, օրինակ Պլ. **մորուքիդ վրա նստիմ,** *ինքնին անպարկեշտ խոսք չէ և մի քիչ էլ անմիտ է, որովհետև միրուսի վրա կարելի չէ նստել: Բայց երբ այս խոսքը թարգմաննենք թուրքերենի, կտանանք՝* saqalənən üstüne oturayəm: *Վերջին բառը նշանակում է «նստիմ», իսկ երբ այս բառի մեջ* t *դարձնենք* s, *կստացվի* osurayəm, *որ է «փքոց արձակել»:*

Այսպիսով՝ թուրքերեն հայհոյական մի բառի մի տառի փոփոխությամբ ստացված **նստիմ** *փոխառությունը դառնում է նրբարանություն:*

*Անպարկեշտ բառի այն ժամանակամիջոցը, որ որոշել էի հայերեն «արտաքնոց» բառի համար, կարող ենք ասել, թե նոր է նաև ռուսերենի համար: Պոլսի բարբառում մի անձի կյանքի մեջ գտել էինք չորս բառ (հասարակ, հարկավոր, գործարան, պետքարան), նույնքան նաև գտնում ենք նաև ռուսերենում այն բառի համար (*сортир, нужник, заход, уборная*):*

Կ Ա Տ Ա Կ

Կատակով բառերի չարք են մտնում օտար լեզուներից դիտմամբ կեղծ թարգմանությամբ ձևացած բառերը: Այս կարգի բառերը գործածելու ժամանակ ասողն էլ գիտակից է կեղծիքին և ասում է միայն զվարճության համար: Այսպես՝ Պոլսում գործածում էին հետևյալ կեղծ բառերը.

Աղջիկ մ'ավելնար *«մսի ժարկո, տապակած միս»՝ իբր Թրգմ. Թրք.* qəzartma *«կարմրեցրած (միս)» բառից, բայց եղծելով զարձրած* qəz *«աղջիկ»* artma *«մի՛ ավելանար»,* **վարտիք մի կայներ** *«պաղպաղակ, մարօժնի»՝ իբր Թրգմ. Թրք.* donduzma *«սառեցրած, որ է պաղպաղակ» բառից, բայց եղծելով զարձրած* don *«վարտիք»+*durma *«մի՛ կանգնիր».* **Թանձր մօրեղբայր** *«նա, որ իր կեղծ արտա-*

քինով և երևակայած ուժեղությամբ պարծենում է». Թրք. qabə «թանձր»+dayə «քնոի, մորեղբայր»:

Եվրոպական լեզուների մեջ կան նման բառերի հավաքածուներ, հիշատակվում է հատկապես Farmer Henley, Dictionary of Slang and its Analogues, London, 1905 (7 հատոր): Այսպիսի հավաքածուների համեմատական ուսումնասիրությամբ կարելի է քննել ազգերի հոգեբանական ընդհանուր գծերը և պատկերավորության նմանությունները: Օրինակ, գլուխ բառը նմանեցնում են զանազան պտուղների. դան. poer, անգլ. nut, coconut, onio, ֆր. poire, noisette, coco, citron, citronille, գերմ. Kürbis, Հայերեն դդում, սոխ, գոգրա:

Պլ. ճերմակ–ճերմակ (իբր թե մանկական)
Պլ. մօրուքիդ վրա նստիմ (Թրք. սթուրայըմ)
Պլ. մանթարաթ դը սուտ «սուտ»
Պլ. մանթար նետել «ստել»
Պլ. հաւու քաք = avocat
Պլ. գիտնական–քիմնական «քիթը մեծ»
Պլ. Bismark իբրև թշնամի հայոց դարձրել են Պլ. փխ մարդ:

ԿԱՏԱԿՈՎ ԲԱՌԵՐ

Կատակով բառերը նրանք են, որ ժողովուրդը հորինում է որևէ պատկերավոր բացատրությամբ. սովորական բառերը ձանձրացնում են նրան, կատակը գալիս է նոր զվարթություն մտցնելու: Այսպիսի բառերը, երկար մնալով, էլի ձանձրալի են դառնում, ուստի ընդհանրապես ջնջվում են, բայց կան և կենդանի մնացողներ: Շատ բառեր հաճախ չատ տեղական բնույթ ունեն, այնպես որ երկու մոտիկ քաղաքներ կարող են իրար չհասկանալ: Jespersen, Mankind, էջ 151 ասում է, թե Ֆիլադելֆիայի և Նյու Յորքի համալսարանները չհասկացան իրարու կատակով բառերը, թեև այդ քաղաքները երկաթուղով 2 ժամ միայն իրարից հեռու են: Կատակ բառերից ոմանք ընդունվում և մնում են լեզվի մեջ, ինչպես՝ ֆր. tête «գլուխ», գերմ. Kopf:

Մարդասիրական «ռևոլվեր».
ճղել «փախչել».
համակերպել «գողնալ».
զնկուցել.

այտուրմասիոն «սարքովի բան». չինված է Թրք. այտուրմա «կեղծիք, չինծու բան», ֆրանսերեն tion «ություն» մասնիկով. սուլուսիոն «թացիկ մարդ» նույն ձևով կազմված է Թրքերեն սուլու «ջրոտ» բառից:

ԲՆԱՁԱՅՆ ԲԱՌԵՐ

Բնաձայն են կոչվում այն բառերը, որոնք կազմված են բնության ձայների նմանությամբ: Այս նմանությունը, բնականաբար, չի կարող լինել կատարյալ, այլ միայն մոտավոր, որովհետև բնության ձայները աղմուկներ են, և կարելի չէ այդ աղմուկը հողավոր ձայնով դուրս բերել: Այս պատճառով էլ ամենահայտնի

բնական ձայները ազգից ազգ տարբեր ձևով են ներկայացվում (տե՛ս Ներածություն):

Բնաձայնները լինում են միավանկ. չռաֆկ.

Հաճախ կրկնական են, ինչպես՝ concon, clonclon.

կրկնության մեջ հաճախ ձայնավորը փոխվում է i-a *կամ* i-o *ձևով. ինչպես՝* cric-crac, tric-trac, flic-floc, *և կամ* i-a-u, *ինչպես՝* pif-paf-ponf, bim-bam-bum.

Պետք չէ կարծել թե բնաձայն բառերը լեզվի ձայնական օրենքներից դուրս են. ըստ Grammont-*ի, նրանք էլ ենթարկվում են նույն ձայնափոխություններին, ինչպես մյուս սովորական բառերը: Միայն թե, երբ նրանք այդ ձայնափոխությամբ կորցնում են իրենց բնաձայնական նկարագիրը, ժողովուրդը ստեղծում է նրանց փոխարեն նոր՝ իսկական բնաձայններ: Այսպես՝ հնխ.* klak *դառել է գերմ. ըստ օրինի* hlah, *որով կորցրել է իր բնաձայնական նկարագիրը: Գերմանական լեզուները հնարել են նոր բառեր, որոնք կրում են այն հնչյունը, ինչպես՝* klingen, klangen *և այլն:*

Ըստ որում, բոլորովին ճիշտ չէ այժմ զանազան լեզուների մեջ նկատված բնաձայն բառերը իսկույն հանել մինչև նախալեզուն և հնարել նախալեզվյան ընդհանուր արմատը:

Առարկան անվաններու ամենանախնական ձևը նրա հանած ձայնի համեմատ կոչելն է: Մանկիկը, որ դեռ նոր լեզու է սկսում, ինքնաբերաբար կոչում է չուներ **հավ-հավ**, *կատուն՝* **միաու**, *չոգենավը կամ չոգեկառքը՝* **փոֆ-փոֆ** *և այլն: Այսպիսի բառերը կոչվում են բնաձայն: Բնաձայն բառերը երկու կարգի են բաժանվում. իսկական բնաձայն բառեր, որոնք հենց իրենք էլ ներկայացնում են որևէ ձայն, և երկրորդ՝ զանազան իրեր կամ էակներ, որոնք կարող են այդ ձայնը հանել: Առաջին կարգից են խշխշալ, տժտժալ..., բ կարգից են կկու, հոպոպ, ազռավ, ճոռան...*

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Սուխումցի չորս տարեկան մի ռուսախոս հայ երեխա ասում էր լիլամատ, փխ. լիմոնադ, ուր նկատում ենք նախ **ո** *ձայնավորի նմանեցումը* **ա**-*ի հետ և* **մ** *դառնում է* **լ**՝ *նմանությամբ նախաձայնի և կամ տարանմանությամբ* **ն**-*ի:*

Երևանում երեք տարեկան ուկրաինացի մի երեխա ասում էր՝ мунага, *փխ.* бумага, *ուր նախաձայնը* **м**-*ից ազդվելով դարձավ* **м**, *իսկ միջին* **м**-*ն չ-ի ազդեցության տակ դարձավ* **г**, *և նախաձայն* **м**-*ի պատճառով ավելացել է մի* **н**: Vazmi «возьми» *բառը նույն երեխան դարձրել էր* мази, *ուր նախաձայն* **v**-*ն իր տեղը զիջել է* **м**-*ին:*

Ամեն երկրի և ամեն ժողովրդի մեջ էլ մանուկները խոսում են մի լեզվով, որ թե բառերի և թե քերականական ձևերի կողմից մեծերի խոսած լեզվից բավական տարբեր է:

Մանկական բարբառը բաղկանում է երկու որոշ տարրերից. 1) մանկական ձևեր, 2) ընդհանուր ձևեր:*

---

* *Առանձին մի ուսումնասիրություն տե՛ս իմ «Մանկական բարբառ», Փարիզ, 1901, տե՛ս և Ներածություն, գլ. է:*

Մանկական ենք կոչում այն ձևերը, որոնք հատուկ են միայն այս կամ այն մանուկին, հարմարեցված են այդ մանուկին կամ նրան չրջապատողների և մեծերի գործածած բառերի այլաձևությունն են: Փոքրիկ նղբայրս գործ էր ածում **ճումաչ** *բառը, որ նշանակում էր «չվան» և «սանձ» և ձևափոխված էր հայերեն* **չուան** *(Պլ. չուվան) բառից: Մի ուրիշ երևյա, սակայն, եթե ունենար նույն բառը իր լեզվի մեջ, պարտական չէր անպատճառ* **ճումաչ** *ձևով հնչելու, այլ կարող էր դարձնել* **չումա, ճումա, չուվա, չուվի, չուվչուվ** *և այլն, և այլն: Ըստ, որում, մանկական բարբառի մասնական ձևերը անթիվ են և չափազանց բազմազան:*

Ընդհանուր ձևերը նրանք են, որ հասարակաց են նույն բարբառը կամ լեզուն խոսող ժողովրդի բոլոր մանուկներին և ամենքի համար էլ հավասարապես հասկանալի: Օրինակ, պոլսեցի ամեն հայ մանկիկ bu *կամ* əmbu *բառով կիմանա «ջուր», մինչև իսկ սրանցից առաջինը հասարակաց է նաև Ակնի, Վանի, Թավրիզի, Կարնո և այլ մանկական բարբառներին: Նույնպես Պոլսի, Թավրիզի, Մշո, Կարնո, Ակնի, Ղազախի, Ուրմիո բոլոր մանուկների համար* **քխ** *ունի «կեղտոտ», «անմաքուր» նշանակությունը:*

Ընդհանուր ձևերը միևնույն լեզվի մեջ ներկայացնում են առանձին և անկախ բառարան:

Կարծում են ոմանք, որ մանուկների գործածած այս մասնավոր ձևերը բոլորովին ինքնաբուխ և ինքնահնար են՝ հորինված հենց մանուկների կողմից: Ուշադիր քննությունը ցույց է տալիս, սակայն, որ այս կարծիքը սխալ է: Բոլոր այդ կարգի բառերը որևէ թյուրիմացությամբ դասավորված են մեծերի լեզվի մեջ գոյություն ունեցող մի որևէ բառից աղավաղությամբ. բոլորն էլ նղբորս գործածած ճումաչ բառի նման են: Այսպես օրինակ՝ մի ռուս մանուկ «կաթ» գաղափարի համար գործածում էր fsʸ, *որ բոլորովին տարբեր է ընդհանուր մանկական* mo *«կաթ» բառից: Մի գերմանացի մանուկ «միս» գաղափարի համար գործածում էր* fsʸ, *փոխանակ սովորական* mo *ձևի: Առաջինը ծագում էր ռուս.* **всё** *«բոլոր» բառից: Երբ մանկիկը կաթ խմում էր, մայրը կամ դայակը հարցնում են* **всё***? «բոլորն էլ խմեցի՞ր», և ահա մանկիկը հորինել էր սրանից* **всё***-ն՝ հարցը կապակցելով կաթի հետ: Նույնպես գերմանացի մանուկը* fŝ *«միս» բառը հարմարեցրել էր* fisch *«ձուկ» բառից, որին տվել էր ընդհանուր նշանակություն*:*

Այստեղ հավաքում ենք մեր զանազան բարբառների մեջ գտնված մանկական ընդհանուր բառերը՝ բաժանված ըստ տեսակների:

1. Անձի անուններ

Աղջիկ – աղի
Հայր – պապա, տատա
Հարս – պուպուկ
Մայր, մամ – աղդա, մամա, նանա
Մանկիկ – բիբի (բիբիկ, բէբէ, բէբէկ), ընղա, կուկու, պլիկ
Մարդ, մօրեղբայր – աբար (աբեր, աբօ, ափի), պապիր, դայդայ
Կին, մորաքույր – կոքքոր

* **Р. Шор,** Язык и общество, *1926, էջ 39:*

2. Մարմնի անդամներ

Ատամ – կծ (կտի)
Արական անդամ մանկիկի – զոզոն
Գլուխ – գոլոխ, կուճիկ (կուճի, կոճի, կոկոճ)
Իգական անդամ մանկիկի – բամբակ
Կզակի ծայրը – կուկուլ
Ձեռք – թաթիկ (թաթ, թաթան, զազի)
Ոսկոր – օկօր
Ոտք – տոտի (տոտիկ, տոտոխ)
Ստինք – ծիծիկ, մկմկ

3. Ուտելիք և խմելիք

Ընկույզ – կոկոկ
Թեյ – չաչայ
Խաղող – լոլոկ
Հաց – փափա
Միս – բիժի (բժիկ, բժ)
Մրգեղեն – մամախ, կակա (կուկու)
Շաքար – կաքար
Ուտելիք – արուջիկ, հափ (հափափ, հափի, հուփպա), մամա (մամախ, ըմ-մախ), փնմֆա (փֆիւ, փիւհիւ), կակա (կուկու), ուֆու
Ջուր – ըմպու (բիւա, բու, փու)

4. Կենդանիներ

Աքլոր – կուկուլիկկու (կուկուլիկու–կուքկուլուլու)
Գայլ – լսօ
Էշ – չու
Կատու – փխսիկ (փխսփխս, փիչիկ, փչո, փչ, փչիկ, փչի, փսիկ)
Կով – ումմա, բիժի-բիժի (բժի-բժի)
Հավ – պիլի (պիլիկ), ճուճու (ճիվ-ճիվ, ճուլ-ճուլ)
Ձի – տախտախ (տուհ, տաքաք, տոհտոհ), չոչո, հոզոչ
Ճնճղուկ – ճուճուղիկ
Միջատ – պլօ
Շուն – քուչիկ (քուչու, քուչուն, քուչիկ, քուչուկ, կուտի, կուճիկ), օչի (օչիկ, օչօ, օչօլ)
Ոչխար, այծ, գառնուկ – մկ, տիվտիվ (տիվ–տիվրմա) փիվ, փուչիկ, կիտի (կտիկ), բիժի-բիժի (բժի-բժի)

5. Առարկաներ

Գիր, գիրք – ա, թաթա
Գլխարկ – թաթախ
Դրամ – պիպիշ
Կոշիկ – տոտիկ, փափուլ
Ճրագ – ճիճիր (ճրճր)
Շոգենավ, չոգնկաոք – փոփփոփ
Ջութակ – տզտզ

6. Խաղեր

Բղա, բօօ, հուփ (հուփպա), ճա, ճիկ – ծիկ, ճորճոր (ճորճոր, պարպար), նա-նայ-նանայ, պուրպուր, պժ, տանտան (տանտանա, բերեկ)

7. [Սաստկական բնէ.]

Խօ, պէս, պիւճիւկ, պռպոս – (գործածվում են վախեցնելու համար)

8. Ածականներ

Գեղեցիկ, նոր, փայլուն – ավօ, զիզի, ճիճի, չոնչոն, պուպուչ (պիպիշ, պուչ, պչիկ), վուվու
Կեղտոտ – ա, այիկ քլս (քլսա, լս), պիվճիվկ, ընըն, փիվհ (փիվ)
Մեծ – կոպպալ, հոհհա, պոլլօ
Տաք – պու

9. Գործողություններ

Այրել, վառել – ճղ, պժ, տզ (տիզ)
Ապականել – հը (ըհ)
Բռնել – բիննել (բննլ, բնի, միննել), հափ
Ելնել, կանգնել – պուփպալլա, մն, տայ, տանտան, տոտի
Ընկնել – թափ, հա, փաթ
Խածնել, կծել – խած (խածն), կծ (կզ), հուփ (հուփուփ, հաֆ)
Խմել – տե՛ս ջուր
Խնչել – խմ, փն
Ծամել – մամի
Ծնծել – ախ, թխ, ծնծէ (ծնծէ/ծնծն)
Կոտրել – քթ
Կտրել – խիչի (խչ), խոթ (խրթ, խրթխրթ), կճի, փխ (փխփխ)
Հալ – ընդան (ընկա)

Համբուրել – պաչ (պաչի, պաչիկ, պապաչ, պապագ, մազի), ապիս, արի
Հյուր երթալ – հոփպա, տարտար
Ձի հնծնել – ճորճոր
Մարել, հանգցնել – փուֆ
Միզել – լուլու, չիչչչ (չիչա, չիչի), պզպզ
Նստել – տիտի (տիտիկ, տիտիլ, տտիկ, տիտիչ)
Ուտել – տե՛ս վերը
Պահել – պահպահ (պապախ)
Պառկել, քնել – լ. նանի (նննննի, նանիկ, նանա), պաճի (պաճի պաճի, պաճիկ, պոճիկ), տարտար
Պատմել հանցանքը (հայրիկին) – պիրպիր
Պատռել – ճոթ (ճրթ)
Վերջանալ – հափափա
Ցատկել – հոփպալաճիկ
Ցավել, վերք – վավա, փափա, ուվի (ուֆ, ուֆու, ուֆայ)
Փոնչտալ – հևփչու
Փքալ – ճոթ (ճրթ), պոթ
Ֆայլել – աթ (աթիտոտի), ափս, թաթ, մէնմէն (մէնմէն տատիս), չոչ, տոտիկ (տոտիկ, տատէ, տատիս)

Բոլորի գումարն է 276, որոնցից դուրս հանելով միևնույն բառի զանազան արտասանական ձևերը (որոնք նշանակված են փակագծի մեջ), կունենանք 160 բառ, որոնք պատասխանում են 77 գաղափարների:

Մենք պիտի քննենք այստեղ թե այս 160 բառերը ինչ ծագում ունեն կամ ինչ ձևով են կազմված: Վերոհիշյալ մեր աշխատության մեջ յուրաքանչյուր բառի, եթե ծանոթ է, ստուգաբանությունը արդեն տրված է: Այդ ցուցակից երևում է, որ այդ բառերը 3 տեսակ ծագում ունեն.

1. Բնաձայն բառեր, որոնք առնված են առարկայի կամ գործողության հանած ձայնից, ինչպես՝ փոթփոթ «չոգենավ, չոգեկառք», որ առնված է չոգենավի անիվների ջրին խփելու կամ չոգեկառքի հանած ուժեղ չոգու ձայնից: Այս երկուսն էլ ուրիշ դեպքերում ևս, նաև մանչերի խոսած լեզվով, բացատրվում են փոֆ-փոֆ ձայնով: Օրինակ՝ «Շոգենավը փոֆ-փոֆ անելով կերթա, չոգեկառքը փոֆ-փոֆ, փոֆ-փոֆ կվազե կերթա»: Տզտզ «ջութակ»՝ կնտնտոցի՝ լարերին քսվելու ձայնից, կուկուլիկկու «աքլոր»՝ սրա երգից առնված, ինչպես որ ուրիշ լեզուներ ևս ունեն, համմտ. ֆր. coquerico, տախտախ «ձի»՝ սմբակների հանած դոփյունից. Ա «գիր, գիրք, գրութիւն»՝ ա գրի հանած ձայնից. մէ «ոչխար»՝ մայելու ձայնից. ճոթ «պատռել», փուֆ «հանգցնել»՝ այս գործողությունների ձայնից առնված:

2) Հայերենից (մանչերի խոսած լեզվից) կրճատված, փափկացրած ու նրբացրած բառեր. օրինակ՝ ազի – աղջիկ, արար – եղբայր, գոլոխ – գլուխ, օկօր – ոսկոր, կոկոկ – պոպոկ, կաքար – չաքար և, այլն և այլն:

3) Օտար լեզուներից փոխառյալ բառեր, որոնք ժողովրդական հայերենի միջոցով անցել են նաև մանկական բարբառին, բայց նույնպես նրբացած, ինչպես՝ պապա – թրք. baba, ռուս. папа, տայտայ < թրք. dayə, փիսիկ < pcšk, pisik, փափուլ < պրս. papāš, մէմէ < թրք. meme, ճիճի < թրք. jiji, չաչայ < թրք. čay, պուպուլ < քրդ. buk և այլն:

Այս երևքից դուրս մնում են մի խումբ անծանոթ բառեր, ինչպես՝ ադդա, լուլու, չոչոն և այլն, որոնք, եթե մնկնվեն, կամ այս երևք տարրերից մեկին պիտի պատկանեն ու կամ առնված պիտի լինեն հայ գավառական մի բարբառից, ինչ որ իսկապես դարձյալ երկրորդ կետն է:

Վերոհիշյալ երևք կարգերի մեջ էլ մանկական բարբառը հետևյալ հատկություններն է ընծայում.

1) **Երկավանկություն:** Մանկական բառերի ամենամեծ մասը երկավանկ է, քիչ չեն թեև միավանկ բառեր, բայց սրանք էլ երկավանկի վերածելու ձգտումը մեծ է, ինչպես՝ փխ. կամ փխփխ, խրթ կամ խրթխրթ, չու կամ չուչու և այլն: Միավանկների մի մասն էլ այսպես երկավանկելով է արտասանվում, որ միավանկությունից հեռանում է, ինչպես՝ ՀՀՀՀ «պառկել, քնել», չիչչչ «միզել, մեզ» խսխսխս կամ քխքխ «կեղտոտ» և այլն: Մեր հաշվի մեջ չեն մտնում այն բառերը, որոնք իբրև ձայնարկություն են գործածվում և այս պատճառով էլ միավանկ պիտի մնան, ինչպես՝ ճու, ճիկ, պես և այլն: Գալով նռավանկ և քառավանկ բառերին՝ դրանց թիվը տասի չի հասնում և հետևյալներն են՝ աբուչիկ, կուկուլիկկու, ճուճուլիկ, տիվտիվմա, տանտանա, հոփպալա, հափափ, հափպալաճիկ և աթիտոտի, եթե նկատողություն չառնենք, թե վերջինը հատկապես երկու բառ է:

Երկավանկության հասնելու համար մանկական բարբառը գործ է դնում հաջորդ երկու միջոցները:

2) **Կրկնություն:** Մանկական բարբառի մանավանդ նախնական շրջանի սիրական ձևն է. այս միջոցով է կազմված երկավանկ բառերի ամենամեծ մասը: Կրկնությունը ամեն լեզվի մեջ էլ կա, ինչպես և հայերենի մեջ, բայց ամեն լեզվի մեջ էլ կրկնված ձև ունեն այն բառերը միայն, որոնց նշանակության մեջ իմաստի սաստկություն կամ տևականություն կա, ինչպես՝ հայերեն ծածանիլ, տանտղնել, ցնցուղ, բաբախել, պապակել և այլն: Մանկական բարբառի մեջ, սակայն, կրկնական ձև են ստացած այնպիսի բառեր, որոնք իմաստի սաստկության կամ տևականության հետ ամենևին չեն կարող գործ ունենալ: Այսպես են՝ կոկոճ «գլուխ», տայտայ «մորեղբայր», չուչայ «թեյ», չոնչոն «սիրուն, քնքուշ» և այլն: Այսպես նաև ֆրանսահայոց մանկական լեզվով՝ lolo «կաթ», lait, dodo «քնել», dormir և այլն: Այս կետը երևան է հանում այն, թե մանկական բարբառի մեջ կրկնությունը նպատակ է ոչ թե իմաստի ներրության, այլ ավելի քաղցրահնչյուն, փափկաձայն և նրբալսոս մանկական բառեր ունենալու համար, և կամ՝ կրկնությամբ բառն ավելի դևրուսույց ընծայելու համար նորավարժ դևռալսոս մանկիկին:

3) **Նվազական կամ փաղաքշական ձևեր:** Եթե կրկնական բառերը չատ սիրելի են մանկական բարբառի նախնական վիճակին, նվազական կամ փաղաքշական բառերն էլ ոչ նվազ սիրելի են նրա զարգացման երկրորդ շրջանին, ուր ամեն միավանկ բառ **–իկ, –ուկ** մասնիկն ունի առհասարակ, ինչպես՝ հացիկ, մոմիկ, աչուկ, քիթիկ, թուչիկ, փորիկ, քուրիկ, բևռնիկ, տատիկ, թաթիկ և այլն: Սակայն նախնական շրջանում էլ քիչ չեն այն բառերը, որոնք ստացած են նվազական մասնիկը: Օրինակ՝ աբուջիկ «կերակուր», այիկ «վատ, գեշ», կուճիկ «չնիկ», կտիկ «գառնուկ», պիլիկ «հավ, վառնիկ» և այլն:

Նվազական մասնիկ են առնում ոչ միայն գոյականները կամ ածականները, այլ նաև բայերը, ինչպես՝ տիտիկ «նստել», պաճիկ «պառկել, քնել», տոտիկ «քայլել», հոփպալաճիկ «ցատկել»:

4) **Նմանաձայնություն:** *Եթե կրկնությունը առանձնապես սիրելի է մանկական բարբառին, զարմանալի չէ, որ նույնը լինի նաև նմանաձայնություն, որովհետև կրկնությունը և նմանաձայնությունը իսկապես միևնույն բառերն են. կրկնությունը գործողություննն է, նմանաձայնությունը այդ գործողության անբաժան հատկությունը կամ բնական արդյունքն է: Երբ, օրինակ,* **պահ** *արմատը կրկնվի, բնականորեն* **պահպահ** *նմանաձայնությունը առաջ պիտի գա: Նմանաձայնությունն ուրեմն բնական է պահպահ, պիպիչ, փխփխ, փոփփոփ, տայտայ և այլն կրկնական բառերի մեջ, բայց արվեստական է կոկիկ «պոպոկ», կաքար «չաքար», կոքքոր «մորաքույր» և այլ բառերի մեջ, որոնք միևնույն բառի կրկնությամբ չեն ձևացած, այլ* **պ, չ, մ** *նախաձայները վերածելով դիմամբ* **կ**-*ի՝ արվեստական կերպով նմանաձայնություն առաջ բերելու համար:*

5) **Բացավանկություն:** *Մանկական բարբառի բառերը եթե բազմավանկ են, ընդհանրապես առաջին վանկը բաց է, այսինքն՝ վերջանում է ձայնավորով, ինչպես՝ պապուկ, տատիս, կուճիկ և այլն: Վերոհիշյալ ցանկի մեջ, ուր ունենք 276 բառ, միայն 65 հատն է միավանկ, մնացած 211 հատը երկավանկ են (մի քանիսն եռավանկ): Այդ 211 բառից դուրս հանելով նախ բնաձայն կրկնությունները (պզպզ, փխփխ, թխրթխ, փիսփիս, տախտախ, տոհտոհ, ճրճր, փոփփոփ, տզտզ), մի քանի նման կրկնություններ (ճորճոր, պարպար, տարտար, ճուլճուլ, պահպահ, պիրպիր, մննմնն, չոնչոն, տանտան, տանտանա) և մի քանի ուրիշ բառեր (բամբակ, ընղա, փոչիկ, հնփչու, ըմպու), ընդամենը 24 բառ, մնացյալը առաջին վանկում բացավանկ է, հետևյալ ձևով:*

ա) Առաջին վանկում **ը** *ձայնավոր՝ ունեն 17 բառ (բժի, բժիկ, պլիկ, կտի, փքի, փչո, փչի, փչիկ, փսիկ, պլո, կտիկ, պչիկ, քխու, բննլ, բնի, կճի, տտիկ):*

բ) Բաղաձայնի կրկնությամբ են 12 բառ (աղղա, կոքքոր, հափպա, ըմմախ, ումմա, հափպալա, հափպալաճիկ, կոպպալ, պոլլօ, բիննել, միննել, նիննի):

գ) Մնացյալը, որ կազմում է ամբողջությամբ կեսից ավելին, առաջին վանկում ղուտ բացավանկ է, և այն էլ երկու վանկի մեջ էլ նույն ձայնավորի կրկնությամբ (մեծագույն մասամբ): Ինչպես՝ լոլոկ, փափա, չաչայ և այլն: Այս վիճակին հասնելու համար է, որ մանկական բարբառը ջնջել է անխտիր այն բոլոր բաղաձայնները, որոնք խճողում էին առաջ բերում. այսպես՝

աղվոր – ավր,
աղջիկ – աչի,
նղբայր – աղբար, արար, ափի,
ապրիս – ապիս,
մօրքուր – կօքքօր,
բոննլ – պիննել, բիննել, միննել,
ոսկոր – օկօր և այլն:

Ներդաշնակ լեզուների մեջ առաջին տեղը տրվում է իտալերենին. իտալերենի հատկությունն է բաղաձայնների պարզումով կամ կրկնությամբ ստեղծել ճիշտ այնպիսի բառեր, ինչպես են վերջի երկու տեսակի բառերը, օր.՝ popolo, cittape: *Մանկական բառը հետևել է ճիշտ նույն դրության: Նմանությունը ավելի ևս կատարյալ կլինի, երբ նկատենք, որ* **-իկ** *նվազականով վերջացող բառերն էլ*

կարող են դյուրությամբ ջնջել իրենց վերջին բաղաձայնը. Համմտ.՝ տոտիկ – տոտի, քուչուկ – քուչու, փխիկ – փխի, աղջիկ – աչի և այլն: Այս ձևով ստացվում են դուտ ձայնավորով վերջացող բառեր, ինչպես է միշտ իտալերենը:

Մանկական բարբառի կազմության այս զանազան հանգամանքները քննելու հետ, մնում է մեզ քննել նրա ծագումը: Արդյոք մանկական բարբառը մանկա՞ն ստեղծագործություն է, թե մոր և չրջապատի:

Կան մարդիկ, որ կարծում են, թե մանկական բարբառը երևույթի հնարած բանն է, թե մանկական բարբառի **տղ, հափ, օկօր** և այլն թոթովանքները նրա կիսկատար, տխեղծ լեզվի իսկական արտահայտությունն են:

Այս կարծիքը ճիշտ չէ: Եթե մանկական բարբառը մանկան հնարածը լիներ, բոլոր երկրների մանուկներն էլ միանման լեզու պիտի ստեղծեին և ոչ թե յուրաքանչյուր լեզվի կողքին մի առանձին մանկական բարբառ: Բայց նույնիսկ եթե ենթադրենք, թե մանուկը իր չրջապատի խոսած լեզվի վրայից է չինում իր լեզուն, դարձյալ այդ ենթադրությունը ճիշտ չէր լինի, հետևյալ պատճառաբանությամբ: Մեր մանկական բարբառի մեջ մենք ունենք այժմ գործածությունից ընկած հին գրաբար բառեր (մէնդէն, ըմպու), նմանապես ֆրանսերեն (բէբէ), թուրքերեն (տայտայ, պապա, չիչչ, նանա, մէմէ, ճիճի), պարսկերեն (չաչայ, նանիկ, փխիկ, փափուլ), արևելյան թուրքերեն (մաչի) և քրդերեն (պուպուկ) բառեր: Տեսանք բառերի կրկնության մի առանձին դրություն, որ համեմատ է ոչ միայն հին հայերենի, այլև սրանով նաև հնդեվրոպական նախալեզվի կրկնողության օրենքներին, որոնք վերջերս միայն պարզվեցին չնորհիվ լեզվաբանական գիտության և որոնք անծանոթ էին հին ժամանակի նույնիսկ մեծագույն քերականներին: Տեսանք նմանաձայնության, երկավանկության, բացավանկության, փաղաքչական և փափկացած բառերի առանձին դրույթներ, օրենքներ և կանոններ, որոնց գիղեցիկ, քաղցրալուր, պարզ և մանկավարժական հորինվածությունը խելահաս մտքի և մտածող անձի արդյունք միայն կարող է լինել: Անկարելի բան է ընդունել, թե դեռատի մանկիկը կարողանար միանգամայն հին հայերեն, ֆրանսերեն, արևելյան և արևմտյան թուրքերեն, պարսկերեն և քրդերեն լեզուները իմացած լինել, մանավանդ լեզվաբան և մանկավարժ ծնված լինել, ինչպես ընդունելու էինք, եթե համարևինք, որ մանկիկն է ստեղծողը մանկական բարբառի: Այս բոլորից հետևում է, թե մանկական բարբառը ստեղծագործություն է հայր – մայրերի, և թե մանկիկը նրա հորինման մեջ ոչ մի դեր, ոչ մի հեղինակություն չունի, բացի այն կրավորական դիրքից, որ ունեցած է մանկիկը մոր հանդեպ՝ ծառայելով նրան իբրև մի տեսակ կաղապար, որի վրա չափած թափած, ձուլած, ձևակերպած և հարմարեցրած է մայրիկը իր գործածած խոսակցական լեզուն: Երբ մայրիկը ուզած է հայերեն **ոսկոր** բառը սովորեցնել մանկիկին, մտածած կամ տեսած է, թե **ս** ձայնը ջնջելով՝ երկու բաղաձայնների ծանրությունը թեթևացրած պիտի լիներ, որով բառը դյուրահնչյուն, դյուրուսանելի պիտի դառնար մանկիկին, ուստի **ս**-ն ջնջած և բառը վերածած է օկօր ձևին: Այսպես պետք է իմանալ նաև մյուս բոլոր բառերի համար, ուր մի ջնջում, կրճատում կամ ձայների հավելում, վերջապես՝ որևիցե ձայնաբանական փոփոխություն կա:

Մայրիկը, ինչպես ասացինք, իր գործածած խոսակցական լեզուն է հարմարեցրած մանկիկին և այս՝ բառի իսկական նշանակությամբ: Այլևայլ գավառների մանկական բարբառների մեջ մենք տեսանք թուրքերեն, ֆրանսերեն, պարսկերեն կամ քրդերեն բառեր, որոնց ներմուծումը մանկական բարբառի մեջ լոկ այն պատճառով է, որ նրանք արդեն գոյություն ունեին մայրիկի գործածած խոսակցական լեզվի մեջ:

Հաստատելուց հետո, թե մանկական բարբառը հայ մայրերի ստեղծագործությունն է միայն, կարող ենք ձեռնարկել քննելու, թե ե՛րբ կարող է նա չինված լինել և ո՛ւր:

Ուղիղ բանավորությունը չի թողնում ուրանալ, թե մանկական մի բարբառ, ինչ ձևով էլ որ գոյություն ունեցած լինի, միշտ [պետք է լիներ] հին դարերի մեջ: Բարեբախտաբար այս ի հառաջագույնն տրված ենթադրությանը համաձայն են գալիս նաև իրողությունները, այսինքն՝ մանկական բարբառի արդի վիճակը: Օրինակի համար՝ գիտենք, թե հին հայերենի **ըմպել** *բառը չատոց արդեն գործածությունից ընկած է: Բայց երբ մանկական արդի բարբառներում գտնում ենք* **պու, ըմպու, պուա, փու** *ձևերը, որոնք նույն* **ըմպել** *բառից են ծագում, ստիպված կլիներնք ընդունելու, թե սրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ նախկին մանկական բարբառից մի հետք, մի մնացորդ, ապա ուրեմն և այդ բարբառի գոյությունը հաստատող մի նշան նախկին տարրերի մեջ, երբ դեռ* **ըմպել** *բառը խոսակցական լեզվի մեջ գործածությունից չէր ընկած: Այս մասին մեզ համար ավելի զորեղ մի ապացույց էլ այն է, որ մանկական բարբառով քանի-քանի բառեր միևնույն ձևով գտնվում են իրարից բոլորովին հեռու և անջատ գավառներում: Այսպես, օրինակ՝* **տոտիկ** *«ոտք» բառը գործածական է Վանի, Կարնո, Մշո, Ղազախի, Ուրմիայի, Նոր Նախիջևանի, Ակնա և Պոլսո մեջ,* **ուֆ** *«ցավել, վերք»՝ գործածական է Վանի, Երևանի, Ուրմիայի, Ղազախի, Պոլսո մեջ,* **փխ** *բառը «կտրել, կոտրել»՝ Վանի, Պոլսո, Մուշի և Ուրմիայի մեջ,* **փափա** *«հաց»՝ Կարնո, Երևանի, Մուշի, Ագուլիսի և Ղազախի մեջ և այլն, և այլն՝ առանց հաշվելու այն երկրորդական ձևերը, որոնք սրանցից մի քիչ միայն տարբեր են և գործածական ուրիշ գավառներում: Այս բառերն անշուշտ իրարից փոխ չեն առնված, այլ կազմված են այն ժամանակ, երբ Պոլսո, Նոր Նախիջևանի, Ուրմիայի, Թավրիզի և ուրիշ տեղերի հայերը դեռ խմբված ապրում էին նույն մեր երկրում և հայկական բարբառը հնչում էր ամենուրեք:*

Հաստատելով հանդերձ, թե մանկական բարբառը ծագում է առած հայաստանում ամենահին ժամանակները, չենք ուզում ասել, թե ծագած է ամբողջովին և մեկ ժամանակի մեջ և մինչև այժմ սերունդից սերունդ ժառանգություն մնալով՝ անփոփոխ անցած է մեզ: Ընդհակառակը: Մանկական բարբառն էլ, իբրև մի լեզու, մյուս լեզուների նման ծնած, տակավ առ տակավ զարգացած, վերջապես, իր հստակ կյանքը ապրելով, հասած է մինչև մեզ: Մանկական բարբառի կյանքը մյուս լեզուների կյանքից դեռ ավելի բարդ և ավելի փոփոխական է, որովհետև, եթե մյուս լեզուները ինքնուրույն և ազատ կերպով էին ընթանում իրենց բարեշրջության գծի մեջ, մանկական բարբառը ոչ միայն իր բնական բարեշրջության ընթացքը պիտի ընթանար, այլև միևնույն ժամանակ պիտի հետևեր նաև մեծերի

խոսած լեզվի բարեշրջությանը: Սրա համար է, որ յուրաքանչյուր գավառի մանկական բարբառը նույն գավառի խոսակցական լեզվի պատկերն է ներկայացնում, յուր ձայնական դրությանը բովանդակում է միայն այն ձայները, որ այդ բարբառն է բովանդակում: Մեծերի խոսած լեզվի ձայնական օրենքները կրկնվում են մանկական բարբառի մեջ և քերականությունն ու չարադասությունը նույնն են մեծերի խոսակցական լեզվի քերականության ու չարադասության հետ: Եթե Պոլսի մանկական բարբառում ասվում է **պահպահ** *«պահել, ծածկել», իսկ Վանում* **պախպախ**, *պատճառն այն է, որ այդ բառը Վանա բարբառի մեծերի լեզվի մեջ եղած է* **պախել**: *Այսպես պետք է հասկանալ ոչ միայն հայերենի, այլև բոլոր լեզուների մանկական բարբառների համար: Սրա համար է նույնպես, որ այն պարսկերեն, թուրքերեն, քրդերեն և ֆրանսերեն բառերը, որ վերջին ժամանակներս մտել են մեր ժողովրդական լեզվի մեջ և սովորական են դարձել, անցել են նաև մանկական բարբառին, մի բան, որ տեղի չպիտի ունենար, եթե մանկական բարբառը սկզբից ի վեր անփոփոխ մնացած լիներ:*

Մանկական բարբառ գոյություն ուներ նաև հնխ. շրջանին, որի մանկական բառերից մի քանիսը վերականգնված են: Սրանք, ժառանգ լեզուների մեջ ենթարկվելով սովորական ձայնափոխությունների, կորցրին իրենց բառական նկարագիրը: Այն ժամանակ լեզուները նորից ստեղծեցին նման մանկական բառեր. համմտ. լատիներեն* pappa *դարձավ ֆրանս.* pape, *որ կորցրել է թե իր առաջին նշանակությունը և թե իր մանկական նկարագիրը, ուստի ժողովուրդը նորից չինեց* papa: *Այսպես նաև հնդեվրոպական նախալեզվյան բառերը.*

օրինակ՝ հնխ. atta *«հայրիկ»,* tata, teta *«հայր» կամ մայր և այլն:*

Մանկական բառեր այլ լեզուներից

ֆր.	titite *միս* = *լտ.* titia	*մանկ. միս*
անգլ.	tum-tum	*ստամոքս*
	gee-gee	*ձի*
	ta	*չնորհակալ եմ*
ռուս.	ам-ам *չուն,* мо	*կաթ*
գերմ.	bau-bau » papp	*միս*
ռուս.	bai-bai }	
ֆր.	do-do }	*քնել*
ֆր.	pan-pan	*խփել, զարնել*
-»-	mou-mou	*կով*
-»-	fanfan «enfant»	
	fifille	*աղջիկ*

Սրանցից ոմանք անցել են գրականին, ինչպես՝

ֆր. bonbon, joujou *և այլն.*

լատ. mama *«ծիծ»,*

ֆր. մանկ. dada *«ձի»,*

-»- -»- lolo *«կաթ»:*

* *Ինչպես* atta, *որ դարձավ ռուս.* отец, *այրան.* at *(Հայր):*

SUBSTRAT

Լեզուների մեջ նկատված այս երևույթը այժմ այնքան լուրջ ուշադրության է արժանացել, որ նույնիսկ ստացել է նորանոր աստիճանավորումներ կամ տեսակավորումներ, որոնք զանազանվում են substrat, superstat, adstrat բառերով:

Հայերենը, ինչպես չատ կետերում, նույնպես և այստեղ, իր կենդանի օրինակով կարող է լավ ծառայություն մատուցանել գիտությանը:

ԳԱՎԱՌԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Գավառական են կոչվում այն բառերը, որոնք գործածական են այս կամ այն բարբառում, կամ նույնիսկ մի քանի բարբառներում, բայց գրական լեզվի մեջ ընդունված չեն:

Գավառական բառերի մեջ կան այնպիսինները, որոնք այսինչ կամ այնինչ գրական բառի մի նոր հոմանիշն են ներկայացնում, իմաստի վերաբերմամբ ոչինչ նոր բան չեն ավելացնում, հետևաբար և բոլորովին ավելորդ են, որովհետև ազգի մեծամասնության համար անհասկանալի են: Այսպես, օրինակ, **ճղոպուր, պոպոկ, կակալ** նշանակում են «ընկույզ», առաջինը՝ Ղարաբաղի բարբառով, երկրորդը՝ Երևանի բարբառով, երրորդը՝ Տփղիսի, Համշենի և Կարնո բարբառով:

Որքան որ կարևոր և հնարավոր է գավառական բառերի երկրորդ տեսակի գործածությունը, այնքան էլ անթույլատրելի և վնասակար է գավառական ձևերի գործածությունը գրական լեզվի մեջ: Գրականության մեջ գավառաբանություն է կոչվում այս երևույթը (գավառական ձևերի գործածությունը գրական լեզվի մեջ), որ և խստիվ դատապարտվում է, ըստ որում՝ գրական լեզուն վերածվում է գռհհկության:

Բայց գավառական բառերի երկրորդ տեսակի ազատ գործածությունն էլ պահանջում է, որ նրանք վավերացված լինեն մի գիտական ակադեմիայի կողմից: Մինչև այդ՝ յուրաքանչյուր հեղինակ, որ ստիպողական կարիք է զգում մի այդպիսի բառ գործածելու, պարտավոր է գոնե փակագծով նրա բացատրությունը տալու, ապա թե ոչ՝ պիտի մնա անհասկանալի:

Օրինակի համար «Տարերք հոգևփոխության» անունով մի գրվածքի մեջ (Հեղինակ Արիս Տեր-Մկրտչյան, Ամերիկա, 1945, էջ 44) կարդացի հետևյալ տողերը.

«Հող կարկտուք ըրած է և այդ պատռուածքը դիրար զօթելու (իմա՛ զօդելու)— միացնելու չատ վարպետ կութեր զարկած է»:

Երբ ես կարդացի, անմիջապես հասկացա, որ հեղինակը խարբերդցի է և **կութ** ասելով հասկանում է **կուտ** «կարելու ժամանակ ասեղի մեկ անգամ ելնել իջնելով կարած կարը, կարի հատը»: Գրքի վերջում, էջ 52, տեսա, որ հեղինակը իրոք Խարբերդի Սուրսուր գյուղից է: Բայց քանի՞ մարդ հասկացավ այդ կութերը:

Գավառական բառերի երկրորդ չարքն են կազմում այն բառերը, որոնց հոմանիշը պակասում է գրական լեզվի մեջ, ուստի և լրացնում են լեզվի թերի մի կողմը, հետևաբար հարստության նոր աղբյուր են գրական լեզվի համար: Այսպես, օրինակ, Ղարաբաղի բարբառով **թոզծ** նշանակում է «մի գերան մի ուրիշ գերանի վրա նստեցնելու ժամանակ՝ ծայրին անկյունաձև տաշված փոսը»:

Սրանից էլ կա **թործել** *«գերանի վրա ուրագով այդպիսի փոս (թործ) բանալ»: Սրանք հյուսնության և առհասարակ շինարարական արհեստի համար շատ կարևոր բառեր են:*

Պետք չէ շփոթել գավառական բառը գավառական ձևի հետ: Գավառական ձև է կոչվում այն բառը, որ թեև գործածական է այս ու այն բարբառում, բայց նա գրական լեզվի մեջ ընդունված մի բառի այլ պատկերն է, որ սովորական բացատրությամբ կոչվում է «աղավաղյալ բառ»: Օրինակ՝ **ճչզուհալ** *գավառական ձև է, որ գտնվում է պոլսահայ բարբառում և ներկայացնում է գրական լեզվի* **ղժղտհել** *բառի աղավաղությունը:*

Շատ բարբառներ գիտեն **աղունիկ** *ձևը, որ* **աղավնի** *բարբառ բառի աղավաղությունը և միաժամայն նրա փաղաքշական ձևն է:*

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՍՔԵՐ

Այս անվան տակ ուզում եմ հավաքել մի խումբ ձևեր, որոնք արդյունք են ժողովրդական ստեղծագործության: Այսպես՝ զվարճալի դարձվածներ, պատկերավոր բացատրություններ, առածներ, նույնիսկ առակներ և այլն: Այս բոլորը նյութ են կազմում ազգագրության, հատկապես՝ ֆոլկլորի: Նրանք խոսակցության մեջ հիշատակվում են մե՛րթ իբրև զվարճալիք, մե՛րթ իբրև օրինակ, մե՛րթ իբրև սրախոսություն կամ սրամտություն, որով համեմում են խոսակցությունը:

Ժողովրդական ձևերի առաջին և գլխավոր հատկանիշը հանգավորությունն է: Նույնիսկ ամենակարճ մի խոսքի մեջ, որ երկու բառից է բաղկացած, ժողովուրդը գիտե ստեղծել այնպիսի հանգավոր ձևեր, որ ամենամեծ բանաստեղծի էլ նախանձը պիտի չարժեր: Հանգավորության հետ համընթաց և անբաժան չէ զարձվածի կարճությունը, որով ամփոփվում է մի իմաստուն միտք առանց երկարաբանության: Ինչ կա ավելի կարճ, ավելի արագ ու ավելի հանգավոր, քան հետևյալ փշրանքը, որ միայն 4 բառից է բաղկացած.

Տոտիկ, տոտիկ, գյուղն է մոտիկ:
Նորանից տարբեր չէ ռուսերեն ծանոթ առածը՝
Типе едешь, дальше будешь.

Երկուսի էլ նպատակը ճապարանքի դատապարտությունն է, ռուսերեն առածը ենթադրում է ձիով ճամփորդությունը, և այս շատ պատշաճ է Ռուսաստանի նման ընդարձակածավալ մի երկրի համար, ուր գյուղերը իրարից հեռու են և իրարից անջատված են լայն հողամասերով: Իսկ հայկական առածը ենթադրում է մարդու կամ թերևս նաև էշի տոտիկ-տոտիկ գնացքը՝ հասնելու համար հեռավոր գյուղը:

Նույն առածի միտքը (այն է՝ ճապարանքի դատապարտությունը) գտնում ենք նաև ուրիշ զանազան առածների մեջ, որոնց ոչ մեկը, սակայն, չի հասնում նախորդ երկուսի սեղմությանը, արվեստին և պատկերավորությանը, ինչպես.

Շտապողը շուտ չի հասնիլ:
Վռազողին տղա չի լինիլ:
Կամաց գնա, որ շուտ հասնես:
Поспешишь, людей насмешишь,
արաբ. el– caǰeletu min eš-šeytāni *«Ճապարելը սատանայից է»:*

Առածները, ինչպես և առակները, միջազգային բնույթ են կրում. միևնույն առածը կամ առակը կարելի է գտնել զանազան ազգերի մեջ: Օրինակ՝ «սարը սարին չի հանդիպի, մարդը մարդուն կհանդիպի» առակը գտնում ենք հայերեն, ռուսերեն, տաճկերեն (dağ dağa qavusmaz, insan insana qavuşur), *պարսկերեն* (kuh be-kuh ne miresed, adem be-adem mi resed), *նաև իտալերեն:*

Ո՞վ է այսինչ առածի կամ առակի հեղինակը. անշուշտ մի անձ է, բայց անհնարին է գտնել այն: Իհարկե հեղինակները շատ են եղած, բայց ժողովուրդը ով գիտե որքան է մաղել, ավելորդները և անհաջողները լռության է մատնել, լավագույնները, գուցե հետզհետե սրբագրելով, կյանքի է կոչել և գործածական է դարձրել: Այսպիսով՝ հեղինակը դարձել է վերջիվերջո ժողովուրդը և ոչ թե անհատը:

Ազգագրական գիտության է պատկանում որոնել առակների ծագումը: Մենք այստեղ նրանց մասին այլևս չենք խոսի, բայց առածներն էլ, անշուշտ, սկիզբ են առել այս կամ այն լեզվի մեջ և ապա թարգմանաբար անցել ուրիշ լեզվի կամ լեզուների: Նախատիպը գտնելու համար այստեղ էլ ընդհանրապես հանգն է որոշիչ:

Հանգը կարող է լինել թե վերջից և թե առջևից, կամ նաև՝ երկու կողմից: Երբ առածն ասում է սքանչելի արվեստով՝

Սևին սապոնն ինչ անև,
Խևին խրատն ինչ անև,

այստեղ ոչ միայն կրկնվում է «ինչ անև» հանգը երկու տողերի ծայրերին, այլև տողերի սկզբից՝ սևին ու խևին, բայց նաև՝ սևի հետ սապոն և խևի հետ խրատ, որոնք առաջին բառի նախաձայնն են արձագանքում:

Այս առածի պարսկերենը հետևյալ ձևն ունի. zengi be susten sefid ne seved *«խափչիկը լվալով սպիտակ չի լինիլ»:*

Պարզ է, որ հայերեն առածն իր ճոխ հանգերով նախատիպ լինելու նրաչխիքն ունի, քանի որ պարսկերենը ոչ մի հանգ չունի:

Սակայն նույն առածի ռուսերենն էլ լավ հանգավոր ձև ունի.

Чёрного вола не домоешь до бела.

Հայերեն առածը, որ գոյություն ունի արևմտահայոց մեջ, չի կարող ռուսերենից թարգմանված լինել, ուստի երկուսը իրարից անկախ են:

Այստեղ տալիս եմ մի քանի այլ առածներ էլ՝ ընտրելով միայն հանգավորները:

Գեղ կանգնի՝ գևրան կկուտրի:

Տունը չունի տաք ապուր, դուրսը կըլլայ էքապուր (-արար. Kabir «մեծամեծ»)*:*

Մարդ մարդու քահանա, մարդ մարդու սատանա:

Դուրսը քահանա, ներսը սատանա:

Երևլեն մահանա, մերը կչտանա:

Ասեմ՝ զնչ եմ, չասեմ՝ էչ եմ:

Էչն ինչ գիտե նուշը, կերթա կկրծև փուչը:

Համրերև, պապան բան բերև:

Ես աղա, դուն աղա, մեր ջաղացքը ով աղա:

Որդիք չեղաք, որդունք եղաք:

Ունիս՝ տուն ես, չունիս՝ չուն ես:

Խաչ չէ հանիր, չէ հանիր, հանիր է նե՝ աչքն է հանիր:

Մեկը լավ է, երկուքը բավ է, երեքը ցավ է. այս առածի թրք. ձևն է՝ biri yarar, ikisi qarar. *Թրքերենը շատ լավ հանգ ունի, հայերենն էլ լավ հանգավոր է, բայց որովհետև ժողովրդի մեջ* **բավ է** *ձևը գործածական չէ, ուստի ենթադրում եմ, որ թուրքերենից նոր թարգմանություն է՝ գրագետների ձեռքով կազմված:*

ԱՌԱԾ

Երբեմն մի պարզ առածը մի ամբողջ առակի համառոտությունն է:

Մեկը գնացել է չուկա, մեղր և չամիչ է գնել, մինչև տուն հասնելը մեկ մատ մեղր, մեկ հատ չամիչ ուտելով չարունակ, երբ տուն է հասել, նկատել է, որ բան չի մնացել: Այս ամբողջ պատմությունը ամփոփված է հետևյալ առակի մեջ.

Պլ. Հատ-հատ չամիչիկ,
Մատ-մատ մեղրիկ,
Տուն նկանք դարտակիք:

Երևան. նորահարսին առաջարկել են մի բան կարել, հարսը չգիտե կարել, բայց իր տգիտությունը ծածկելու համար ասում է.

— Հորանց տան ասեղը չէ:

Սրանով իր տգիտությունը ուզում է ծածկել, իբր թե՝ եթե հորանց տան ասեղը լիներ, պիտի կարողանար կարել:

Փռշտալու ժամանակ սովորություն է փչռտացողին ասել՝ **առողջություն,** будьте здоровы, *նույն բարեմաղթությունը կատարելու համար ֆրանսիացիները ասում են՝* à vos souhaits.

Բացի բարդ և ածանց բառերից ժողովուրդը գիտե նաև խոսակցության մեջ գործածել հարմարավոր առածներ: Դրանք բացի այն, որ խոսքին տալիս են առանձին պատկերավորություն, նպաստում են նաև խոսքը հաստատելու:

Հայերեն առածների մեծագույն հավաքածուն կազմել է Արամ Ղանալանյանը՝ ժրաջան, վաստակավոր բանահավաքն ու ազգագրագետը: Այդ հավաքածուն ունի 35.000 առած, առանց հաշվելու ամեն մի առածի մինչև տասը տարբերակները:

Բացի հայկական առածներից, ժողովուրդը գիտե գործածել նաև թուրքերեն առածներ:

Թուրքերեն առածների մեծ ու փոքր ժողովածուներ անշուշտ կան, բայց դրանք ինձ ծանոթ չեն, ուստի չեմ կարող նրանց թվի մասին խոսել: Ենթադրվում է, թե նրանց թիվը չափազանց մեծ է, բայց այդ հաստատելու համար իրական փաստ է հարկավոր, մանավանդ, երբ այժմ գիտենք, որ հայերեն առածների թիվը հասնում է 40.000-ի: Թուրքերեն առածները շատ են հարգված մեզանում: Նրանց մասին նույնիսկ կա հայերեն այսպիսի առած. «Թուրքն անիծած, խոսքն օրհնած»: Երբ մեկը իր խոսակցության ժամանակ ուզում է մեջ բերել թուրքերեն մի առած, նախ այս առածն է ասում:

Ուսումնասիրություններ չլինելու պատճառով չենք կարող ասել, թե հայերեն և թուրքերեն համապատասխան առածներից ո՞րն է նախնականը, այսինքն՝ հայերե՞ն է թուրքերենից թարգմանված, թե ընդհակառակը: Այս հարցը դեռ քննելի է:

Սակայն ինչ էլ որ լինի, ես հաստատ համոզված եմ, որ թուրքերենն առածների մի մասը անպատճառ հայ մտքի հորինվածք է, այսինքն՝ հեղինակը հայ է, որ թուրքերենը գործածել է իբրև Արևելքի միջազգային լեզու: Իմ այս ասածը ապացուցելու համար տալիս եմ հետևյալ պատճառաբանությունը:

Կան թուրքերենն առածներ, որ հայերեն բառերով են և հայերեն իմացող մարդու ձևոքով չինված բառախաղ, օրինակ՝

հունվար unən var ?
փետրվար petin var ?
մարտ martəm čəxdi, dardəm čəxdi.

Այս առածները հայտնի կերպով կազմված են հայերենի վրայից: Հունվար, փետրվար, մարտ հայերեն ամսանուններ են, unən var ? *նշանակում է «ալյուր ունի՞ս»,* petin var ? *ոչ միայն կազմված է հայերեն* **փէտ** *բառից, այլև ամբողջը թուրքերեն նշանակում է «փայտ ունի՞ս»: Իսկ երրորդ առածը ամբողջովին թուրքերեն է և նշանակում է «մարտս գնաց, դարդս գնաց»: Երկքն էլ բառախաղով կազմված են հունվար և* un *«ալյուր», փետրվար և փէտ, մարտ և* dard *«ցավ» բառերից:*

Պոլսում կա տաճկերեն մի առած՝ górqma qəšan yarəsəndan, qorq abrilin bešinden *«մի վախնար ձմեռվա կեսից, վախեցիր ապրիլի հինգից»: Այստեղ, թեև ամբողջ առածը թուրքերեն է, բայց ապրիլ ամսանունը հայերեն է, այն էլ՝ արևմտյան հնչումով հնչված* abril **աբրիլ**, *մինչդեռ համապատասխան ամիսը թուրքերեն կոչվում է* nišan.

Թուրքերը ապրիլ չեն գործածում և եթե գործածելին էլ, ալիտի ասելին ֆրանսերեն ձևով՝ avril:

Համբարձման վիճակի երգերը ամեն տեղ հայերեն են, բայց Պոլսում թուրքերեն են առանց բացառության: Չգիտեմ, թե Տաճկաստանի թուրքերն էլ վիճակի երգեր ունեն, թե չէ: Բայց կա թուրքերեն վիճակի երգերի մեջ մի տուն Քրիստոսի անունով.

Փէչկիր-փէչկիր իսթիւնէ,
Փէչկիր տիզիմ իսթիւնէ,
Օթուրմըղ նազը նազար
Քրիստոսըն էչկինէ:

Թրգմ. «*Սրբիչը սրբիչի վրա,*
Սրբիչը ծունկիս վրա,
Նստեր է գիր կգրե
Քրիստոսի սիրուն»:

Այս երգի հեղինակը անչուշտ հայ է, որովհետև քրիստոնյա թուրք չկա, հետևաբար և վիճակի երգերը բոլորն էլ կարող են կազմված լինել հայերի ձևոքերով:

Ամբողջ Տաճկաստանում, ինչպես և Կովկասում, բոլոր կերակուրների անունները ընդհանրապես թուրքերեն են: Բայց Պոլսում բոլոր խոհարարները հայ են, հատկապես փաչաների և բոլոր մեծամեծների տնային խոհարարները վաննցի հայեր են, ուրեմն և բոլոր տեսակի կերակուրների անունները, եթե հայերեն չեն, պետք է ենթադրել, թե հայերի ձևոքով կազմված թուրքերեն է:

1912 թվին Պոլիս էի գնացել և այնտեղ մի թուրք անուշարարից լսեցի հայերեն **թերթ** *բառը (իբր խմորեղենի թերթ): Երբ զարմանք հայտնեցի, թե ինչու հայերեն բառ ևք գործածում, պատասխաննեցին, թե «հիմի թուրքերը հայերեն թերթ բառն են ընդունել»:*

ԱՍԱՑՎԱԾՔ

Ասացվածքները ապրում են շատ երկար, նույնիսկ մնում են դեռ, երբ պայմաններն ու միջավայրը բոլորովին փոխվում է: Պոլսում մնում է դեռ «վերի արտի ցորենն ես» ասացվածքը, որ Հայաստանում շատ սովորական է և նշանակում է «դու ի՞նչ առավելություն ունես ուրիշների վրա»: Հայաստանում, ուր ցորենի արտեր շատ կան, և ուր գյուղը վերի թաղում ուրիշ արտ և ներքի թաղում ուրիշ արտ ունի, կարող է ունենալ այսպիսի առած, իսկ Պոլսում ոչ արտ կա, ոչ ցորեն են ցանում, և ոչ էլ վերի արտի ցորենն կա:

Գագրիում համշենցիք գործածում էին **արազ** *բառը «հեղեղ» իմաստով, մինչդեռ այդ բառը Հայաստանի Արաքս գետն է, ուր համշենցիք ապրում էին շատ դարեր առաջ:*

ՀՈՄԱՆԻՇՆԵՐ

Հոմանիշ ասելով հասկանում ենք այն բառերը, որոնք ունեն միևնույն նշանակությունը: Այսպես՝ **ղեղարան** *և* **ղեղատուն** *հոմանիշներ են, որովհետև երկուսն էլ ճիշտ նշանակում են այն խանութը, ուր դեղեր են պատրաստում և ծախում:*

Այս նկատողությունը թե ճիշտ է և թե սխալ:

Եթե առնենք որևէ լեզու իր բնական վիճակի մեջ, իրոք կտեսնենք, որ հոմանիշ չկա. բոլոր այն բառերը, որոնք հոմանիշ լինելու երևույթին ունեն, իրապես ներկայացնում են իրենց մեջ մի որևէ զանազանություն: Այսպես. հայերենի մեջ հոմանիշ ենք համարում ագի, դմակ, ձետ, տտուն բառերը, որոնց բոլորն էլ **պոչ** *իմաստն ունեն: Բայց եթե խորը քննենք, կտեսնենք, որ անկարելի է մին մյուսի տեղ գործածել: Այսպես, կարելի չէ ասել* **ձիի դմակը** *կամ* **ոչխարի տուտը** *և կամ՝* **թռչունի ձետը,** *այլ* **ագի** *հատկացնում ենք ձիի, էշի, կովի, եզան համար,* **դմակ՝** *ոչխարի համար,* **ձետ՝** *աղվեսի կամ չան համար,* **տտուն՝** *թռչունի, ձկան կամ օձի համար: Գործածության այս զանազանությունը կամայական չէ: Կարևոր է, արդյո՞ք, հոմանիշների գոյությունը լեզվի մեջ, թե չէ: Այս մասին երկու կարծիք կա, մին՝ դրական, մյուսը՝ բացասական:*

Ոմանք հոմանիշները համարում են լեզվի հարստությունը: Մարդկային միտքը գիտե զանազանել գաղափարի կամ առարկայի զանազան երանգներ, որքան միտքը ավելի զարգացած է, ավելի էլ ընդունակ է ըմբռնելու այդ երանգները և լեզուն, որ մտքի արտահայտիչն է, եթե ունի հատուկ բառեր այդ երանգները բացատրելու համար, բնականաբար ավելի զարգացած պիտի համարվի: Այսպիսով հոմանիշները լեզվի զարգացման արտաքին նշաններն են, ուրեմն և որքան շատ է լեզվի մեջ հոմանիշների թիվը, այնքան էլ զարգացած է լեզուն:

Ընդհակառակը, ուրիշները կարծում են, թե հոմանիշը ավելորդ ծանրաբեռնություն է լեզվի համար: Եթե բառը ստեղծված է մի որևէ միտք արտահայտելու համար և միայն այդ միտքը արտահայտելու համար, ուստի և երկու բառ միևնույն նպատակի համար ավելորդ է:

Ճիշտ են կարծել, թե մարդկային միտքը ընդունակ է ըմբռնելու առարկայի բոլոր երանգները և եթե ըմբռնում է, միայն համեմատաբար և հարաբերաբար: Օրինակ, ջրի բարեխառնության 0 աստիճանից մինչև 100° կա 101 երանգ, առանց հաշվելու անթիվ կոտորակները: Մարդ կարող է զանազանել, եթե իրար մոտ դնենք, 10° և 12° բարեխառնությունը, բայց առանձին, առանց համեմատության, այդ երկուսը միևնույնն է նրա համար: Դրա համար մարդկային լեզուն ունի **սառն, գոլ, տաք** *և* **եռման** *բառերը միայն և մյուս աստիճանների համար պիտի ասե համեմատական ձևով՝* **չատ** *սառն,* **քիչ** *տաք,* **չատ** *տաք,* **բավական** *տաք և այլն, առանց որոշ բառերի:*

Մեկնելով այս դատողություններից՝ չատ գիտուններ ընդունում են, որ որևէ լեզվի մեջ հոմանիշ չկա:

Կենդանաբանությունը տալիս է մեզ այս տարբեր գործածության լավ պատճառը. **ագին** *երկար թելերով կամ մազերով կազմված պոչն է,* **դմակը** *լայն մսի կտոր է,* **ձետը** *բրդե կազմված պոչն է՝ մեջը աճառային մասերով,* **տտուն** *մարմնի անբաժան չարունակությունը կազմող ոսկոր է կամ փչե պոչն է:*

Իսկ ի՞նչ է պոչը: **Պոչը** *ընդհանուր անունն է, որ հավասարապես գործածական է բոլոր տեսակների համար էլ:*

Բայց մյուս կողմից ունենք ուրիշ բառեր, որոնց համար որևէ տարբերություն չենք տեսնում. այսպես են, օրինակ, **պարզև, ընծա, նվեր, ձոն, ձիր** *(հատկապես՝ առաջին երկքը): Հավասարապես կարող ենք ասել՝ «այս գիրքը ուղարկում եմ քեզ իբրև ընծա կամ իբրև նվեր»: Բայց արդյո՞ք այսպես էր նաև հին ժամանակ, երբ ընկերական հարաբերությունները ավելի չհստված էին, քան հիմա:*

Այս օրինակից մենք կարող ենք հետևցնել, թե հոմանիշներն էլ իրենց կյանքն ունեն. մի ժամանակ կարիք է զգացվել զանազան երբություններ որոշելու համար տարբեր բառեր հորինել: Ժամանակի փոփոխությամբ ավելորդ են համարել այդ երբությունները, հոմանիշները հետզհետե դարձել են իրապես հոմանիշ և այն ժամանակ իբրև ավելորդություն սկսել են կորցնել իրենց գոյության իրավունքը: Ոմանք իբրև հնության մնացորդ չարունակվում են դեռ ապրել, ուրիշները բոլորովին ջնջվել են: Ագի, ձետ, դմակ, տտուն, պոչ բառերի տարբերությունը մեզ համար այլևս ավելորդ է, և չգիտենք էլ: Պոչ բառը իբրև ընդհանուր գաղափար հաղթել է բոլորին: Այսպես՝ **ագին, ձետ** *և* **տտուն** *բառերը բոլորովին ջնջվել են,* **տտուն** *(տուտ) գոյություն ունի միայն «ծայր» իմաստով, իսկ* **դմակ***-ը անաղարտ մնում է, որովհետև մինչև այժմ էլ մեր տնտեսության մեջ առանձին կարևոր նշանակություն ունի ոչխարի դմակը, որի համար էլ ստեղծել ենք* **խարխզի** *կամ* **խարխնծի** *բառը:*

Նույն բանն է նաև **պարզև, ընծա, նվեր, ձոն, ձիր** *բառերի համար, որոնցից* **ձիր***-ը բոլորովին ջնջված է,* **ձոն***-ը իբրև գրական ձև գործածվում է ուսումնականների շրջանում (գրքի ձոն և այլն),* **ընծա** *և* **նվեր** *բառերից առաջինը սովորական է արևելյան հայոց մեջ, իսկ երկրորդը՝ համարյա անգործածական. ընդհա-*

կառակը, արևմտյան հայոց մեջ երկրորդն է ավելի սովորական, իսկ առաջինը՝ անգործածական, **պարզև** *բառը մոտավորապես «վարձատրություն» իմաստով կա դեռ՝ թեև նույնպես գրական չրջաններում միայն ամփոփված:*

Հոմանիշների գոյությունը, ուրեմն, լեզվի մի նորագույն չրջանում մնացորդ է հնության և դատապարտված է կորստի:

Հոմանիշները չատ անգամ արդյունք են ներքին կամ արտաքին փոխառության. մի որևէ գավառ կարող է ունենալ մի որոշ բառ, որ տարբեր է ընդհանուր լեզվից: Հանգամանքների բերմամբ այդ բառը տարածվում և մտնում է ընդհանուր լեզվի մեջ. այստեղ սկսվում է հոմանիշը: Նույնպես մի օտար բառ՝ քաղաքական կամ քաղաքակրթական հանգամանքների բերմամբ կարող է թափանցել մի լեզվի մեջ և կազմել մի նոր հոմանիշ: Առաջին դեպքի համար իբրև օրինակ առնենք **աքաղաղ, աքլոր, որձակ** *բառերը: Առաջինը ընդհանուր հայ ձևն էր, գավառական* **աքլոր** *ձևը նկավ ցցվեց նրա կողքին, իբրև զուտ հոմանիշ: Ղարաբաղի, Ագուլիսի և Սյունիքի ժողովուրդներն էլ ունեն* **որձակ** *ձևը, որ գործ են ածում առաջինի և երկրորդի հետ միասին, իբրև զուտ հոմանիշ: Մեր վերի օրինակի համար ունենք սառն, ցուրտ, պաղ — գոլ, արևգոլ, եղկ, գաղջ, եղմ — տաք, ջերմ — եռման, եւի հոմանիշները: Երկրորդ դեպքի համար օրինակները մեր լեզվի մեջ անթիվ են.* **օձիք** *բառի մոտ իջել չարվել են նախ թրք. յախա և հետո ռուս. վարատնիկ ձևերը, կրունկ բառի մոտ թուրք. դաբան և ռուս. կարլուկ և այլն: Այս պարագաների մեջ սովորաբար սկսվում է մրցումը, և վերջիվերջո մեկը կամ մյուսը ջնջվում է: Հոմանիշների գոյությունը թեև իրոք փաստ է, բայց ժամանակավոր է միայն, և նրանց ջնջումը՝ անխուսափելի:*

Մեր արդի լեզվի մեջ հոմանիշները երբեմն առաջանում են բոլորովին արհեստական կերպով. մի որևէ նորակերտ բառ հորինելու ժամանակ մեկը առաջարկում է այսինչ ձևը, մյուսը՝ այնինչ ձևը. երկուսն էլ ընդունվում են լեզվի մեջ և մնում իբրև իսկական հոմանիշներ, մինչև որ ժամանակը մեկը կամ մյուսը վերջնականապես նվիրագործեն և երկրորդը վերացնեն գործածությունից: Այստեղ կարևոր դեր է խաղում մեր երկու հատվածների բաժանումը: Իբրև օրինակ հիշենք **ղեղարան** *և* **ղեղատուն** *բառերը, որոնցից առաջինը արևմտյան հայոց նախասիրած ձևն է, երկրորդը՝ արևելյան հայոց:*

Զարգացած լեզուների մեջ կան հոմանիշների բառարաններ, որոնց մեջ հավաքված, դասավորված են հոմանիշ բառերը և նրանց տարբերությունը նշանակված: Տարբերությունների մի խոշոր մասը անչուշտ գրագետների և ակադեմիաների հնարած բանն է, բայց արդեն մտած է գրական լեզվի մեջ: Մենք ոչ միայն ուսումնասիրած, որոշած և նվիրագործած չենք դեռ մեր բազմաթիվ հոմանիշների տարբերությունը, այլև նույնիսկ նրանց մի հասարակ հավաքածու չունենք: Այս աշխատությունը սպասում ենք մեր ապագա լեզվաբաններից:*

Հոմանիշներն երկու տեսակ են լինում.

---

* *Հ. Աճառյանի հանձնարարությամբ այդ գործը հաջողությամբ կատարեց նրա ասպիրանտ, այժմ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Ա. Մ. Սուքիասյանը, որի հոմանիշների երկրորդ՝ «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանը» (Երևան, 2003, 1240 էջ, 130000 հոմանիշ բառ և դարձված) հրատարակվեց Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության բարձր հովանավորությամբ և 2004 թ. արժանացավ ՀՀ նախագահի մրցանակին (Ա. Գ.):*

1) Հոմանիշներ, որոնք բոլորովին տարբեր են, իսկ իմաստով հոմանիշ, ինչպես՝ **նվեր** *և* **ընծա:**

2) Հոմանիշներ, որոնք իմաստով նույնն են և կազմությամբ միայն տարբեր, իսկ իմաստով ներկայացնում են հայտնի տարբերություն, ինչպես՝ դեղատուն և դեղարան, ընթերցատուն և ընթերցարան, պահանջկոտ և պահանջող, պահանջատեր:

Մտածողություն, մտածություն, մտածմունք— *առաջինը մտածելու պրոցեսն է, որի այս կամ այն ձևն է մտածելակերպը, իսկ վերջինը՝ նրա արդյունքը.* **դատողություն, դատաստան—** *առաջինը պրոցեսն է, երկրորդը՝ արդյունքը:*

Հոմանիշները, որպեսզի ապրեն, պետք ունեն իմաստի տարբերացման, օրինակ, Հճ.՝ թափիլ «լեցնել» և վէդ՛ել «թափել».

Հճ.՝ փոռնչտալ «փռնչտալ՝ ոչխարի, այծի» և փոռընքդօլ՝ «մարդու».

Հճ.՝ բ՛էժնել «բաժնել, աղքատներին հաց են բաշխել» և գիսել «բաժնել, անջատել».

Հայ.՝ բուրել և հոտիլ (ա՝ լավ, բ՝ վատ), թեև հնապես երկուսն էլ միևնույն էին, ինչպես՝ բուրեն զանուշահոտութիւն, Երզ., Եր., ե., 13, Ելցէ չարաւ նորա, և բուրեսցէ հոտ նորա, Յովել., բ., 20:

Սիր *(ռուս.)՝ եվրոպական պանիր, իսկ պանիր (այսպես է թեր. և ռուս.)՝ «հայկական պանիր»:*

Հոմանիշների մեջ տարբերացում՝

արքայություն *և* **թագավորություն** *նույնն են, օր.,*

Սպան զնա Տէր և դարձոյց զարքայութիւնն ի Դաւիթ (Նորագիւտ, Ա. Մնաց., ժ., 14, մյուսն ունի զթագաւորութիւն): Բայց հիմա **արքայություն** *կնչանակէ «երկնից արքայություն, դրախտ»:*

Դարձուցանել զարքայութիւնն իշխանութեանն Շաւուղի (Ա. Մն. ժր., 23, հին թրգմ.՝ դարձուցանել զթագաւորութիւնն Սաուղայ):

Ըստ ձևի հոմանիշ են՝

անհաս, չհաս, տհաս:

Սրանք տարբերացման օրենքով ստացել են առանձին իմաստ, մինչև իսկ իրար հակառակ իմաստ (անհաս — տհաս) և այս պատճառով էլ չարունակում են իրենց առանձին գոյությունը:

Լեզվի մեջ բացարձակ հոմանիշներ կա՞ն, թե ոչ:

Анненков *անունով ռուս հեղինակը կազմել է մի բուսաբանական լավ բառարան: Նա տալիս է նախ բույսի գիտական (լատիներեն) անունը, ապա՝ նրա հոմանիշները զանազան լեզուներով, որոնց մեջ կան ֆրանսերեն, ռուսերեն, վրացերեն և նույնիսկ հայերեն անուններ: Ռուսերեն հոմանիշները շատ բազմաթիվ են ընդհանրապես, և նրանց կողքին գրված է այն գավառի անունը, ուր գործածական է այն բառը: Այս բանից մենք կարող ենք հետևցնել երկու հետևյալ ճշմարտությունները:*

1) Բացարձակ հոմանիշներ, ուրեմն, կան լեզվի մեջ, բայց նրանք գոյություն ունեն այս կամ այն բարբառում և հետևաբար մի ուրիշ բարբառում չկան:

2) Եթե հոմանիշները միայն մի բարբառում են պահվել, ուրեմն մյուսներում ջնջվում են, ինչ որ նշանակում է, թե լեզվի մեջ բացարձակ հոմանիշի գոյությունը ավելորդ է:

3) Հոմանիշները ըստ ընտրության կամ ըստ պատահման կարող են չարունակել իրենց գոյությունը այս կամ այն բարբառում, ինչ որ նշանակում է, թե նորից ջնջվում են մյուս բարբառներում:

Հին հնդեվրոպական լեզուների մեջ մեկ տարին ու մի քանի տարիները տարբեր բառերով էին արտահայտվում: Այս մասին տե՛ս և ա՛ռ Արմ. բռ. **ամ** *և* **տարի.** *Հայերեն էլ ունենինք* **տարի** *և* **ամ** *բառերը, որոնցից առաջինը նշանակում էր մեկ տարի, իսկ ամ՝ հոգնակի էր: Կարելի չէր ասել՝* **բազում տարիս,** *այլ միայն՝* **բազում ամս:**

Ավելի ուշ այս երկու իմաստները չփոթվեցին. օրինակ՝ ասում ենք **ամ մի,** *ի հինգետասաներորդի* **ամի** *տէրութենն Տիբերեայ կայսեր (Ղկ., գ, 1) (տասնհինգերորդ տարին մեկ տարի է): Վերջապես հոմանիշներից մեկը կորավ և այժմ պահել ենք միայն* **տարի** *բառը:*

Ցամէ եւս *(Ղկ., ժգ, 9). նշ.՝ «մի տարի հետո»:*

Բացի առանձին բառերից, ամբողջական նախադասություններ էլ կարող են իրար հոմանիշ լինել, օրինակ՝

Երբ ես անցնում էի.
Անցնելու ժամանակս.
Անցնելիս, որոնց վրա կարող ենք ավելացնել՝ արևմտահայ լեզվով՝
Անցնելու ատենս:

Լսել եմ, որ երբ **Հ. Եղ. Հիւրիմիւզը** *թարգմանեց և հրատարակեց ... շատեր չնորհավորել են նրան իր հաջող թարգմանության համար: Նա պատասխանել է. «ես կարող եմ թարգմանել այդ գիրքը ութ անգամ՝ տարբեր-տարբեր բառերով»: Այս խոսքը մեծ մի կողմից ցույց է տալիս իր հայերենագիտության չափը, մյուս կողմից ցույց է տալիս, թե որքան հարուստ է հայ լեզուն հոմանիշ բառերով և բացատրություններով:*

Հոմանիշների իմաստի տարբերությունը կախված է ոչ միայն բառից, այլ երբեմն էլ մասնիկից: Ով չգիտե **քաղաքական** *և* **քաղաքային** *բառերի տարբերությունը: Առաջինը նշանակում է «պետական», այսինքն պետությունների կազմին վերաբերյալ, իսկ երկրորդը՝ մի որևէ քաղաքի ներքին կյանքին. օրինակ՝*

Այս ամսաթերթը քաղաքական բաժին չունի:
Եվրոպայի քաղաքական կացությունը ծանր է:
Լրագրի այսօրվա համարում մի ընդարձակ քաղաքական հոդված կա:
Թատրոնը գտնվում է քաղաքային այգում:
Մեր քաղաքային չինարարությունը օրեցօր զարգանում է:
Քաղաքային կայարանը կիրակի փակ է լինում:

Հոմանիշներ են **տհաս, անհաս, չհաս,** *բայց երեքն էլ իրարից տարբեր են:* **Տհասը** *այն պտուղն է կամ անձը, որ դեռ խակ է և հետո պիտի հասնի:* **Անհասը** *այն է, որին մարդկային միտքը չի հասնում, անհասանելի է:* **Չհասը** *այն անձն է, որ ամուսնական օրենքի համաձայն իրավունք չունի ամուսնանալու իր մի ազգականի հետ: Սրանից դուրս կան նաև՝* **թերահաս, վաղահաս,** *և եթե կարիք լիներ, կարելի էր կազմել նաև* **ապահաս,** *ինչպես ունենք՝* **ապաժաման** *(չժամանած, չհասած, հետ մնացած). օրինակ՝ ապաժաման լուից եղևալ (Մագիստրոս):*

Լեզուներ կան, որոնք միևնույն բայի համար զանազան բառեր են հատկացրած՝ նայելով, թե այդ բայը ինչ գոյականի հետ պիտի կապվի: Օրինակ՝ հընդկական naga *լեզվում «լուալ» բայի հոմանիշներն են.*

ephyopala	*լվալ*	*ընդհանրապես,*
etsiala	*-»-*	*չորեր,*
süala	*-»-*	*պնակներ,*
myuala	*-»-*	*երեսը,*
phiala	*-»-*	*ոտները,*
ntsakala	*-»-*	*ձեռները:*

(Mills, *էջ 219*)

ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ՇԱՐՔԵՐ

Ծանոթ, քաջածանոթ, տեղյակ, լավատեղյակ, հմուտ, խորահմուտ, ներհուն, գիտուն, գիտնական, ուսումնական, ուսյալ:

Խնդրել, աղաչել, աղերսել, պաղատել, թախանձել, գվո. գերկուկնալ:

Ռուս. **просить, умолять:**

Ռուս. տիպլո, գարյաչի, ժարկը:

Հայ. միայն **տաք** *(նոման, վառման, չոգ), Զթ. չող:*

Յուրահատուկ, յուրատեսակ, առանձնահատուկ, սեփական, աչոգի, առաչոգ (տե՛ս Արմ. բո., Ա.):

Ուր որ հոմանիշներ կան, լեզուները աշխատում են տարբերել նրանք իմաստի որևէ երանգով: Այնպիսի սովորական մի բառ, ինչպես է «երկրորդ» դասականը, ֆրանսերենում ունի երկու հոմանիշ՝ second, deuxième: *Ըստ երևույթին կարելի չպիտի լիներ այսպիսի հասարակ իմաստով մի բառի մեջ որևէ երանգ մտցնել, բայց լեզուն կարելի է համարել դնել առաջինի տակ «երկրորդ և վերջին» իմաստը, իսկ երկրորդի՝ երկրորդ (բայց չարունակելի), օրինակ՝* Pour la seconde fois de la soirée, pour la deuxiéme fois de sa vie.

Երևույթը երկրորդն էր թե այդ երեկո և թե ամբողջ իր կյանքում. բայց որովհետև այդ երեկոյին այլևս տեղի չունեցավ, ուրեմն երկրորդն ու վերջինն էր (seconde), *բայց որովհետև կյանքում մի որևէ ուրիշ անգամ էլ պիտի պատահեր, ուստի երկրորդ և չարունակելի* (deuxième) *էր: Բառարանը եթե միայն երկու հատոր է, երկրորդ հատորը կոչվում է* seconde, *իսկ եթե երրորդ հատոր էլ ունի, կոչվում է* deuxième.

Հայերենում ունենք **սանդ**, *որի վրա եկավ ավելացավ պրս.* **Հավան**: *Պոլսի հայոց բարբառում* **սանդ**-*ը տեղի տվեց օտարին և ջնջվեց, իսկ Կովկասի հայոց բարբառում, երկուսն էլ մնալով, կարիք եղավ տարբերակում մտցնելու:* **Սանդ**-*ը վերապահվեց խոշոր քարե սանդին, որի մեջ ծեծում են մեծ քանակությամբ բաներ (ցորեն, ձավար, աղ), իսկ* **Հավան**-*ը (արտասանվում է* **Հավանգ**) *գործածվում է փոքր, առձեռն սանդ իմաստով, որի մեջ ծեծում են քիչ քանակությամբ բաներ: Համմտ. սեր և դայմաղ:*

Լինում են դեպքեր, երբ օտար փոխառյալ բառը բնիկ բառի հետ կցված միասին է գործածվում. օրինակ՝ ինդոնեզյան լեզուների մեջ սանսկրիտ կամ պարսիկ փոխառությունները՝ բնիկ մալայան բառերի հետ, ինչպես մալայերեն՝ jawhar-manikam «ջոկատ» բառի առաջին մասը պարսիկ է, երկրորդը՝ նույնի մալայան հոմանիշը:

Նոր Նախիջևանում՝ հայերեն **չուտ մը թեզ**, առաջինը՝ հայերեն, երկրորդը՝ թուրքերեն*:

ՀԱՄԱՆՈՒՆ

Հոմանիշի հակառակ երևույթն է համանունը. առաջինը ցույց է տալիս երկու կամ ավելի բառեր, որոնք միևնույն իմաստն ունեն, երկրորդը ցույց է տալիս երկու կամ ավելի տարբեր իմաստներ, որոնք միևնույն բառն ունեն, այսպես՝

հարկ – յարկ,
հուտ – յուտ,
պառկացնել – բարկացնել,
եգիպտացորեն – եգիպտացերեն
փղչտացի – փռչտացի
յաղթեցի – ախտեցի
տան դուռ – դանդուռ
համառոտ – յամառոտ
*անմեռուկ – անմոռուկ***:

ՓՈԽԱՌՑԱԼ ԲԱՌԵՐ

Գիտենք, որ փոխառյալ բառերը երկու տեսակ են՝ ժողովրդական և գրական, կամ այլ տեսակներով նայած՝ ուղղակի կամ անուղղակի:

Ինչ տեսակ էլ լինեն, փոխառյալ բառերը փոխառու լեզվի մեջ կրում են զանազան ձայնափոխություններ՝ հարմարվելու համար այդ լեզվի պահանջներին:

Ժողովրդական փոխառությունների մեջ, եթե փոխատուն ներկայացնում է այնպիսի ձայներ, որոնք չկան փոխառու լեզվի մեջ, վերածվում են համապատասխան մի ծանոթ և սովորական հնչման: Այսպես՝ իտալ. և իսպան. բառերը անցնելով ֆրանսերենին, իրենց č, ǰ, ž, y ձայները վերածել են š, ž, s, z, այսպես նաև հայերեն բառերը փոխ առնվելով թուրքերենի մեջ՝ ձ, ծ, ց վերածվել են z, s:

Ռուսերեն փափուկ ձայները, չգտնվելով հայերենի մեջ, վերածվում են սովորական ձևի, ինչպես՝ վալս (և ոչ վայլս, որ հայերեն չէ), բայլևիկ (և ոչ բայլևիկ):

Նույնպես, եթե փոխատու լեզուն ունի այնպիսի բարդ ձայնավորներ, որոնք հակառակ են փոխառու լեզվի ոգուն, ջնջվում կամ պարզվում են. այսպես՝ գերմ. landsknecht, անգլ. biffeck վերածվել են ֆրանս. lansquenet, biffeck.

---

* Երկրի վրա տեղ կա, որ գետինը մեղի համար բանջար չի բուսցնէ. Թրք. երեքն էլ (բէր) կլինի (Այտրն., Քնն. քեր., 272):
Ես աս ալ ունիմ որ կը վառիմ ու չեմ էրիր (անդ, էջ 272):
եանմաք եանմաք

** Բերված են և՛ համանուն, և՛ հարանուն բառերի օրինակներ (Ս. Գ.):

Շեշտի կողմից էլ կատարվում են հարմարեցումներ. եթե փոխատու լեզվի և փոխառու լեզվի շեշտադրության սիստեմի մեջ կա հիմնական տարբերություն: Այսպես, եթե փոխառու լեզուն ունի չարժական շեշտ, իսկ փոխատուն վերջավանկի վրա շեշտ, փոխառու լեզուն կամ անփոփոխ պահում է փոխատուի վերջավանկի շեշտը և կամ տեղափոխում նախորդ վանկերի վրա, ինչպես՝ ֆրանսերեն lieutenant «տեղակալ» > գերմաներեն léutnant, անգլերեն lietenant > ռուսերեն **лейтенант**, բայց ֆրանսերեն machine > անգլերեն machine, գերմաներեն Machine, ռուսերեն **машина**:

Եթե փոխառու լեզուն ունի վերջավանկի վրա շեշտ, իսկ փոխատուն չարժական շեշտ, կամ փոխատուի շեշտը փոխադրվում է վերջավանկի վրա և կամ, ձայնավորի ընդումով, շեշտը պահվում է այն տեղում, բայց դարձվում է վերջավանկ:

Օրինակ՝ իտալ. soldato > ֆրանս. soldato,

իտալ. gazzetta > ֆրանս. gazette և թրք. γazeta:

Գրական փոխառությունները շատ ավելի հավատարիմ են լինում մայր ձևին, այստեղ պահվում է տառ առ տառ փոխատու ձևը, սովորական տառադարձությամբ, միայն շեշտվում և կարդացվում է փոխառու լեզվի օրենքներով՝ հաճախ ավելացնելով համապատասխան մի վերջավորություն, որ հատուկ է փոխառու լեզվին, ինչպես՝ ռևոլվեր (revolver), վագոն (wagon), բրավո (bravo), բիսիկլետ (bicyclette) և այլն:

Իրենց այդ հատկություններով գրական փոխառությունները լեզվի մեջ չուտ են ճանաչվում, իսկ ժողովրդական փոխառությունները այնպես են կոկվում, հարմարվում նոր լեզվի կաղապարի վրա, որ անկարելի է լինում նրանց օտար լինելը ճանաչել: Որքան ժամանակ հայերենի իրանական փոխառությունները բնիկ են կարծվել, և այսօր էլ դեռ կան բառեր, որոնց համար գիտությունը դեռ չի կարողանում վճիռ տալ՝ հայ են, թե իրանական:

Թեև փոխառյալ բառերը լեզվից լեզու անցնելով պարտադիր կարգով պետք է կրեն որոշ ձայնական փոփոխություններ, բայց շատ դեպքեր էլ կան, երբ՝ 1) փոխառյալ բառը փոխ առնող լեզվի մեջ ավելի հարազատ ձևով է պահված, քան փոխատու լեզվում. 2) նույնիսկ ընդված է փոխատու լեզվի մեջ, իսկ փոխառու լեզվի մեջ մնում է կենդանի:

Երկրորդ երևույթի համար օրինակներ: Ֆրանս. pomme d'or-ը (բառացի «ոսկի խնձոր») այն հանրածանոթ բույսն է, որ փոխառությամբ դարձավ ռուս. **помидóр**, հայերենի մեջ էլ գործածական դարձավ **պամպղոր, պամիդոր** ձևով: Նոր ֆրանսերեն բառը արևմտահայերը թարգմանելով կազմել էին **ոսկիխնձոր**, բայց հետո, գավառական բարբառում գտնելով **լոլիկ**, ընդհանուր գործածական դարձրին առաջինի փոխարեն:

Սակայն ֆրանս. pomme d'or այժմ բոլորովին ընդված է լեզվից:

Ռուսերենում կան **нужник** և **заход** բառերը, երկուսն էլ «արտաքնոց» իմաստով: Երկուսն էլ ունի Даль-ի բառարանը, Ушаков-ի բառարանը գիտե միայն **нужник** և չունի **заход**: Այժմ այս երկու բառերն էլ ընդված են ռուսերենից, և նրանց փոխարեն տարածված է **уборная**: Հայերեն բարբառներում գործածական է սակայն **զախօդ** «արտաքնոց» բառը, ինչպես՝ Ղարաբաղ և Մեղրի:

Փոխառյալ բառերի սխալ թարգմանություն: Պրս. sū նշանակում է «կողմ» որից կազմված է čārsū «չուկա, վաճառանոց» (խաչաձև փողոցի վրա գտնվելով՝ որս կողմ ունենալու պատճառով, որից ժողովրդական չարչի): Այս բառից թրք. փոխառությամբ կազմվել է sularənda «կողմները», բայց որովհետև թրք. su նշանակում է նաև «ջուր» (գրվում է sū), ուստի ժողովուրդը, չփոթելով իրար հետ, կազմել է ջրերը «կողմները, շուրջ, մոտավորապես», օրինակ, ժամը երեքին ջուրերը (միայն ժամանակի համար է ասվում):

Ֆրանսերենում կար surtout «սովորական չորերի վրայից հագնելու հատուկ սև չոր»: Այս բառը փոխառյալ է նաև ռուսերենում **сюртук** ձևով և նույն նշանակությամբ, որից նաև հայերեն **սերտուկ**: Ֆրանսերենում հին բառը գործածությունից ընկավ, և նրա տեղ եկավ pardessus, սակայն ռուսերենում ավելի երկար շարունակեց իր գոյությունը, մինչև որ չորի գործածությունը վերանալով (սև չոր, պոչավոր վերարկու), բառն էլ հետը ջնջվեց: Պետք չէ կարծել, թե ամեն օտար փոխառություն ուժեղի ազդեցության արդյունքն է: Երբեմն էլ հոգեբանական պատճառները գալիս միանում են սրան: Մարդիկ փնտրում են հնացած, թուլացած, սովորական դարձած տկար բառերի փոխարեն մի ուժեղ բառ գործածել: Լեզվի մեջ գործածված ամենօրյա բառերը թույլ են համարվում. այս պատճառով էլ կամ դիմում են հին (գրաբար) մոռացված մի արտահայտության, կամ (ավելի ճիշտ մի միջոց)՝ օտար բառի փոխառության: Օրինակ՝ նկատված է, որ նյութական ու բարոյական պակասություն նշանակող բառերը լեզվից լեզու ճամփորդում են: Եվրոպայում անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն ու գերմաներեն այս կարգի բառերը իրարից են փոխ առնվել, նույնպես նաև մեր մեջ: Օրինակ թրքերեն ախմախ, սարսախ, չաչ, հայվան և այլն բառերը ավելի ուժեղ են թվացել, հատկապես իրենց նոր փոխառնելու ժամանակ, քան նրանց համապատասխան բնիկ բառերը: Այժմ էլ նախատողը ավելի ազդեցություն գործած է կարծում, երբ գործածում է ռուս. միրզավեց, պաղլեց, սվոլիչ և այլն բառերը, որոնց արժեքը ճիշտ չգիտեն և հաճախ նշանակության խորն էլ չի թափանցում, քան նեղ գործածներ նրանց համարժեք զանազան բառեր:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՌԵՐ

*Միջազգային բառեր ասելով պիտի հասկանայինք այն բառերը, որոնց հորինման համար մասնակցել են բոլոր ազգերը կամ գոնե՝ բազմաթիվ ազգեր: Այսպիսի երևույթ չկա դեռ աշխարհում, ուստի և իրապես միջազգային բառ չկա: Միջազգային կոչվելու իրավունք պիտի ուներային թերևս, օր., **մայր, տուն, տատ** և նման բառեր, որոնք գործածական են հարյուրավոր լեզուների մեջ (հնդեվրոպական լեզվախումբ), բայց սրանք էլ ճիշտ նույն ձևով պահված չեն լեզվից լեզու, և նրանց հորինողները ոչ թե այդ զանազան ազգերն են, այլ նրանց նախնիքը, որոնք հորինման ժամանակ մի միակ ազգ էին կազմում, ուստի սրանք էլ միջազգային չեն: Նրանք միջազգային են միայն լեզվաբանների համար և լեզվաբանական մտքով, այն էլ՝ որոշ աշխարհամասի համար:*

Սովորական գործածության մեջ միջազգային ասելով հասկացվում են այն բառերը, որոնք գործածական են բոլոր կամ բազմաթիվ լեզուների մեջ, միևնույն

ձևով և միևնույն իմաստով: Այսպես. օրինակ, **վագոն** (չոգնկաոգի) միջազգային բառ է:

Բոլոր «միջազգային» կոչված բառերը իրապես պատկանում են մի լեզվի, որից փոխառությամբ տարածվել են և տարածվում են ուրիշ լեզուների մեջ: Այսպես՝ վերոհիշյալ **վագոն** բառը անգլերեն է և նշանակում է պարզապես «բեռնասայլ»: Շոգնկաոգի հնարիչները լինելով անգլիացիք՝ նրանց բառն էլ տարածվել է ամեն կողմ:

Ժողովուրդները չեն հետաքրքրվում բառի միջազգայնականությամբ: Եթե նրանք բառերը վերցնում են իրարից, ուրիշ չարժառիթ չունեն, եթե ոչ նվազագույն ճիգի օրենքը: Պատրաստ բառը աշխատանք չի պահանջում: Ընդհակառակը, «միջազգային» բառը, մտնելով դանազան ժողովուրդների մեջ, հենց որ առարկան չատ գործածական է դառնում, «միջազգային» բառն էլ հալվում է: Այսպես՝ **ավտոմոբիլ** բառը միջազգային էր, այժմ ֆրանսիացիք դարձրել են auto կամ voiture, անգլիացիք՝ moyor-car կամ car, ամերիկացիք՝ automobile կամ ford, գերմանացիք՝ Kraftwagen կամ wagen, դանիացիք՝ bil և այլն (BSL 33, № 100, էջ 115):

Ո՞ւր մնաց միջազգայնությունը՝ նույնիսկ երկու անգլիախոս ժողովուրդների միջև:

Բառերի միջազգայնությամբ հետաքրքրվում են միայն գիտնականները և մեկ էլ՝ ընկերավարական գործիչները:

Գիտնականները փնտրում են իրենց հնչտությունը: Անչուշտ դժվար է նրանց համար սովորել յուրաքանչյուր ազգի լեզվով ichtiologia, meteriologia և այլ բառեր: Մի ընդհանուր գիտական ձև փրկում է նրանց նեղությունից: Բայց նրանք իրենց սահմանափակ չահերի համար նկատի չեն առնում հասարակ ժողովրդի ահռելի բանակը, որ այդ «գիտական» բառերից ոչինչ չի հասկանում, բայց իսկույն, կամ քիչ մտածումով ըմբռնում է, երբ ասում են՝ հնէաբանություն, երևութաբանություն և այլն:

Գալով ընկերավարական գործիչներին, որոնք ավելի անկեղծ են, բնում են «ժողովուրդների չահերից», բայց սխալվում են, կարծելով, թե մի քանի, թեկուզ մի քանի հարյուր, այդպիսի գիտական բառերի միջազգայնացմամբ կարող է լեզուն միջազգային դառնալ:

ՆՈՐԱԿԵՐՏ ԲԱՌԵՐ

Այսպես ենք կոչում այն բառերը, որ 18-րդ դարից սկսած հնարեցին մեր հեղինակները՝ լրացնելու համար նոր կյանքի պահանջները և նրանցով հարստացրին հայ աշխարհիկ լեզուն: Հին Հայկազյան բառարանը, ինչպես և Նոր Հայկազյանը իրենց բառամթերքի մեջ չեն վերցրել այսպիսի բառեր: Բայց Հենց Ջախջախյանի բառարանից սկսում են նորակերտ բառերը մուտք գործել աստղանիշ նչանով: Նույնը ավելի ընդարձակ չափով չարունակվում է Փեչտըմալճյանի բառարանում, որ և ընդհանուր սովորություն է դառնում այնուհետև բոլոր բառարանների համար:

Խոսքը, անչուշտ, հատկապես հայերեն բառարանների համար է (հայերենից հայերեն), իսկ երբ հարցը գալիս է օտար լեզուներից հայերեն բառարանների մասին, նորակերտ բառերի քանակը անվերջ աճում է:

Տեմիրճիպաշյանի ֆրանսերենից հայերեն գրպանի բառարանում, ինչպես հեղինակը խոստովանում է առաջաբանում, կա հազար նորակերտ բառ, բոլորն էլ իր կազմած: Լուսինյանի Ֆրանսերեն-հայերեն բառարանում այնքան մեծ է նորակերտ բառերի թիվը, որ կարելի է նրանցով մի նոր հայերեն բառարան կազմել: Յ. Շավարշ քննադատը (Բազմ., 1897, 395), խոսելով Լուսինյանի բառարանի բազմաթիվ նորակերտ բառերի մասին, տալիս է հետևյալ հավաքածուն:

Հատուցակարգել, նմանաձուլուհի, ջրշեղջյուր, ջրամբարաջուր, կապարագրչաքար, վկակոչասէր, երկոտասանատեսակ, դերձակամկրատ, մկրատապատեան, ոսկերչամկրատ:

Բարեբախտաբար այս կարգի արտառոց բառերը մեծավ մասամբ չեն մտնում լեզվի մեջ. լեզուն իբրև ավելորդ տարր դուրս է չպրտում իր միջից այս բառերը, միայն պիտանի, նոր պահանջները լրացնող, արվեստով կազմված և գեղեցիկ բառերն են, որ մտել են լեզվի մեջ:

Ավելորդ է ասել, թե մեր բոլոր նորակերտ բառերը կազմված են եվրոպական, հատկապես ֆրանսերեն և ռուսերեն բառերի կաղապարով: Բայց չատ հաճախ նրանց գերազանցում են: Օրինակ՝ **համերգ** բառը կազմված է ֆրանս. concert բառի վրայից՝ նույն նշանակությամբ: Բայց concert իսկապես նշանակում է «համաձայնություն» և իհարկե ակնարկում է երաժշտական գործիքների և երգիչների համաձայնությունը, բայց ամեն համաձայնություն երգ չէ, ուստի concert բառը ճիշտ չէ, չատ ավելի լավ է հայերեն **համերգ**, որ կազմված է **համ** «միասին, ամբողջական» և **երգ** բառերից, այսինքն՝ «խմբական երգ», «միասին կազմված երգեցողություն» և այլն:

Restaurant ֆրանսերեն նշանակում է «կազդուրիչ»: Օրինակ՝ le vin est un bon restaurant «գինին լավ կազդուրիչ (բան) է»: Բայց ուրիշ կազդուրիչ բաներ չատ կան, և restaurant վերցնել **ճաշարան** իմաստով նշանակում է մի չատ ընդարձակ իմաստ սահմանափակել մի չատ մասնավոր իմաստի մեջ: Այս restaurant բառը գործածվում է նաև անգլերենում և ռուսերենում, և նույնը մտնում է նաև առանց ուշադրության առնելու բառի անհարմար կազմությունը: Շատ ավելի լավ է ռուս. **столовая**, որ գոնե հիշեցնում է ճաշարանի սեղանները, որոնց վրա չարվում են կերակուրները:

Բայց ավելի լավ է հայերեն **ճաշարան**, որ ներկայացնում է առարկայի կատարյալ պատկերը:

Հարց է, թե ինչո՞ւ մեր նորակազմ բառերը այսպես ավելի լավ են, քան եվրոպական զանազան բառեր, և թե ինչո՞ւ եվրոպական անճահ բառերը կարողանում են տեղ գրավել մեր մեջ:

Ավելի լավ են, որովհետև նախ՝ իրենց առաջ ունեն առաջին կաղապարը, որի վրա կազմում են նոր բառը՝ աչքաստելով բնականաբար գերազանցել այդ կաղապարից: Երկրորդ՝ միչտ էլ մեր բառը մեր ժողովրդի համար լավ հասկանալի է և եթե «անճահ» է, չի ընդունվում ժողովրդի կողմից, մինչդեռ եվրոպական բառերը, հաճախ լատիներենից կազմված լինելով, ժողովրդի համար անհասկանալի են և չեն ենթարկվում քննադատության, ճիչտ՝ ինչպես որ այդ նույն օտար բառերը հալած յուղի տեղ ընդունվում են մեր մեջ, որովհետև մեր ժողովուրդը ամենևին չի կարող թափանցել այդ օտար բառերի ներքին կազմության

մեջ: Cours ֆրանսերեն նշանակում է **ընթացք ջրի, աստղերի, կյանքի** և այլն, բայց նաև, փոխաբերաբար՝ «ուսման տևողությունը»:

Այս վերջին իմաստը բավական հեռացած է առաջինից, ուստի չատ հարմար է կազմված հայերեն **դասընթաց** բառը, որ թե նույն **ընթացք** բառն է, վրան ավելացրած **դաս** կարևոր բառը: Ռուսերեն ասվում է **курс** – կուրս, և ժողովուրդը չի թափանցում բառի ներքին իմաստին:

Շանթարգելը ֆրանկլինի հնարած այն գործիքն է, որով չենքերը պաշտպանվում են կայծակի (շանթի) հարվածից:

Ֆրանսերեն ասում են paratonnerre, որ կազմված է parer «կասեցնել» և tonnerre «որոտում» բառերից:

Անգլերեն նույնը կոչվում է lightning-rod, որ կազմված է lightning «փայլակ» և rod «ձող» բառերից: Ռուսերեն էլ ասվում է **громоотвод**, որ կազմված է **гром** «որոտում» և **отвод** «հետ դարձնել» բառերից: Բայց շանթարգելը ոչ որոտումն է արգելում և ոչ փայլակը: Ավելի լավ է իտալ. parafulmine, որ կազմված է fulmine «կայծակ» բառից: Հիանալի է հայերեն **շանթարգել**-ը թե՛ իր կարճությամբ, թե՛ ներդաշնակությամբ և մանավանդ՝ իմաստի ճշտությամբ:

Ֆրանսերեն **uniforme** ածական է և նշանակում է «միաձև, միատեսակ, միանման». իբրև գոյական նշանակում է որոշ խմբի մարդկանց միատեսակ զգեստը, որ ռուսերեն՝ ավելի կարճ ձևով ասվում է **форма** (նշանակում է պարզապես ձև): Սքանչելի է հայերեն բառը՝ **համազգեստ** և տեղիք չի տալիս ոչ մի թյուրիմացության:

ԲԱՐԴ ԲԱՌ

Բառը բարդվելուց հետո իր կազմիչ մասերի գիտակցությունը կորցնում է և ստանում է իր համար անկախություն: Այլևս նա իր անկախ կյանքը և անկախ գործածությունը ունի: Ֆրանսերեն ասում են bonjour *օրվա որևէ ժամին*, թեև jour արմատը ավելի առավոտվա համար է: Շոգենավ բառը, այն ժամանակ, երբ կազմվեց, միայն շոգիով գնացող նավերի համար էր, այժմ հնարված է ջերմությամբ կամ էլեկտրականությամբ գործող նավ, բայց անխոհեր-դարձյալ կոչում ենք **շոգենավ**: Վերջերս հնարեցին **ջերմանավ** բառը, բայց ընդհանուր գործածություն չունի դեռ, իսկ **էլեկտրանավ** բառ գոյություն չունի:

Ամեն ածանց բառ, արմատից բաժանվելուց հետո ձգտում է անկախության, այսինքն կորցնում է կապը իրեն ծնունդ տվող արմատի հետ, և մինչև անգամ լինում են դեպքեր, երբ այդ կազմիչ արմատն էլ է կորչում և մնում է միայն ածանցը:

Այս վերջին դեպքի համար լավ օրինակ են հայերենում **Հնոց** և **Հրդեհ**, որոնց բուն արմատները (հուն «կրակ» և դեհ «վառել») առանձին գոյություն չունեն հայերենում, և նրանց գոյությունը լեզվաբանական քննությամբ միայն կարելի է երևան հանել:

Նմանապես **ուրջու** «խորթ որդի» և **ուստի** «որտեղից» բառերի մեջ **ուր** «որդի» putra և **ու** «ուր, որտեղ» արմատները բոլորովին անհայտ են մնում:

Դզալ *բառի մեջ* daru *«ծուռ փայտ», Հովիվ բառի մեջ* **ոչխար** *և* owi *«պահել», ինչպես և* **ժպիրհ** *բառի մեջ* aži *օձ* oz *և* pidra *«հայր» բոլորովին ծածուկ են մնում:*

Ածանց բառը, կորցնելով իր արմատը, կարող է նաև իր նշանակությունը կորցնել և մինչև անգամ փոխանակ արմատի՝ միայն մասնիկը պահել:

Սրա համար լավ օրինակ են հատուկ անունները:

Ավետիք *բառի հայցականը՝* **Ավետիս** *(բարի լուր), դառնալով անձնանուն և ստանալով Ղրր. Վիտիս ձևը, այլևս շատ է հեռացել նախնականից:*

Աստուածծատուր *կրճատվելով դարձել է Աստ, ուր ոչ «Աստուածծ» կա և ոչ «տուրք», իսկ* **Տատուր**-*ը այնպես է փոխվել, որ նույնիսկ հայտնի չէ, թե* **Աստուածծատուր** *բառից է, թե* **Տիրատուր:**

Հարություն *բառը դեռ պահել է իր առաջին իմաստը (մեռելի կենդանանալը), բայց* **Արթին, Արութ, Թիւնի** *ձևերի մեջ մեկ մասնիկն է կիսած, մեկ արմատն է անհետացած, մեկ էլ միայն մասնիկի վերջին կեսն է պահած:*

Միևնույն ածանցյալ բառը լեզվից լեզու անցնելով կարող է իմաստը փոխել: Օրինակ **աքսոր** *բառը հունարեն է, կազմված է՝ ἐξ – «դուրս» նախդիրով ὄρος «եղերք», «սահման» բառերից և նշանակում է «սահմանից դուրս»: Անցել է նախ ասորերենին, ուր* aksoria *ձևը ստանալուց հետո ապա անցել է հայերենին, ուր դարձել է* **աքսոր,** *որի իմաստը հայտնի է: Իսկ նույն բառը, հայերեն ձևով դառնալով արտասահման, այժմ բոլորովին հակառակ արժեք ունի:*

ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Մակրայն ու նախադրությունը կարող են դառնալ գոյական, ինչպես՝ ֆրանսերեն.

le pour et le contre,
le bien,
les alentours,
l'arrivre,
le devant:

Հյ. Ետևը, առջևը.
Թեր և դեմ (նխ. – ած.).

Անորոշ դերբայը դառնում է գոյ.:

le boire et le manger
un déjeuner, un diner, un souper, le devoir *«երթալ-գալ չուննք»:*

Անցյալ դերբայը դառնում է ած., գյ., մկ.:

Օրինակ՝ անցեալն Լանց.
կատարյալ մարդ.
դարձյալ նկավ:

Իմաստի փոփոխություն առաջանում է նաև համանունության պատճառով:

Օրինակ՝ ֆրանս. կար երկու բառ harpe *ձևով, մեկը «ճանկ» նշանակությամբ և մյուսը «քնար» նշանակությամբ. առաջինից կազմվել է գողերի լեզվով պատկերավոր մի բացատրություն* pincer de la harpe, *այն է՝ «բանտարկվել», բայց որովհետև կա նաև* harpe *նվագարանը, ուստի համանունության պատճառով առաջացել է* pincer de la guitare *կամ* du viola *նույն իմաստով:*

Իմաստի փոփոխություն առաջանում է նաև հոմանիշների պատճառով: Երբ մի բառ ստանա մի որևէ նոր նշանակություն, իր հոմանիշն էլ ստանում է նույն նշանակությունը:

Օրինակ, ֆրանսերեն՝ nettoyer *«մաքրել» բառը ծծկր. նշանակում է «գողանալ», ուստի* polir *«հարթել, հղկել» բառն էլ, որ առաջինի հոմանիշն է, ստացավ «գողանալ» իմաստը:*

Այս երկուսի խառնուրդն է ներկայացնում հետևյալը. տճկ. կա երկու տեսակ բառ ne *հնչումով, առաջինը բուն տաճկական ծագմամբ* ne?, *որ նշանակում է «ի՞նչ», երկրորդը՝ պարսկական փոխառությամբ* ne, *որ նշանակում է «ոչ»: Ըրիմի հայերը, տեսնելով այս երևույթը, իրենք էլ հայերեն* **ինչ** *բառին տվին նաև «ոչ» նշանակությունը, օրինակ, ինչ ես, ինչ դու «ոչ ես, ոչ դու»:*

ՄԱՐԴՈՒ ԱՆՈՒՆԻՑ ԲԱՌ

Ֆրանս. maillechort *մի խառնուրդ է ցինկի, պղնձի և նիկելի, որ նմանում է արծաթի, հնարել են* Maillot *և* Chorier, *որոնց անունով էլ* melchior *«մելքիոր», ասում են նաև «մելխիոր», որ սխալ է:*

Փիլիպպոս «առնի»
լովեն
սիլուետ
մանսարդ
Chevrean *(կաչի)*

Սովորական է դանազան արդյունքներ անվանել արտադրողի անունով, ինչպես՝ հորթ (հորթի միս), ոչխար (ոչխարի միս), թեյ (թեյից ըմպելիք), խահուն, absinthe, *ջրաներկ (ջրաներկով նկարած նկար):*

Այս կարգին են պատկանում հեղինակների անունով կոչվող իրերը, ինչպես՝

Mansarde *(17-րդ դարում մի նշանավոր ճարտարապետի անունով, որ առաջին անգամ չինեց այդ):*

Guillotine *(1789 թվից, երբ չատացան սպանությունները, չարչարանքը նվազ տաժանելի դարձնելու համար այս անունով մի բժիշկ հնարեց):*

Pamphlet *(ժողովածու գործոց* Pamphilus*-ի, որ միջին դարում շատ էին կարդում):*

Silhouette *(1759-ին* Silhouette *անունով կար մի ֆինանսական «կոնտրալյոր», որին ծաղրելու համար նկարեցին կողմնանկարը չվաքով):*

Balthazar *«խնջույք» (նման այն խնջույքին, որ տվեց Բաբելոնի թագավորը Բաղդասարին):*

Macadam *(ծեծած քարով խճուղի՝ հնարեց* Mac-Adam *չոտլանդացի գիտնականը):*

Sandwich *(բուտերբրոտ. կարագով քսված հացի երկու չերտ, մեջտեղը դրած մի չերտ միս, երշիկ և այլն:*

18-րդ դարում կար անգլերեն comte de Sandwich, *որ այնքան խաղամոլ էր, որ չէր ուզում թողնել խաղասեղանը նույնիսկ ճաշելու համար և բերել էր տալիս այդ ձևով ուտելիք: Այժմ նմանությամբ (հեգնանք) ֆրանսերեն* sandwich *են*

ասում նաև այն մարդոց, որոնք մի հայտարարութիւն կրծքին և մյուսը մեջքին կպցրած ման են գալիս փողոցում, մարդը ինքը դառնում է միս կամ նրչիկ. հայտարարությունները՝ հաց:

Grog *(ջրով և շաքարով խառն ոում). անգլիացի ծովակալ* Vernon, *մականվանյալն* Grogram, *հրամայեց այսպես մատուցել իրեն ոոմը, և անունը մնաց* grog, *բայց* grogram *բառն էլ մի տեսակ կոպիտ կտորեղեն է, որ ծագում է ֆրանս.* gros grain *«խոշորահատ» բառից:*

Spencer *(անթափանց կարճ վերարկու. 19-րդ դարու սկիզբը* Lord Spencer *1-ին անգամ մանտո քցեց):*

Macfarlane *(«մի տեսակ անթև վերարկու. անգլիացի ֆաբրիկանտի անունով):*

Guillemet *«չակերտ» (ոմն* Guillemet *անուն մարդու, որ նվազական է* Guillemet*-ի և որ գործածեց առաջին անգամ այս նշանը):*

Անունից կազմված բառեր՝

չովինիզմ,
բոյկոտ,
mansarde,
silhouette,
guilletine,
chemise La Coste:

ՏԵՂԱՆՈՒՆԻՑ ԲԱՌ

Փարոս «նավերի համար ուղեցույց աշտարակ՝ ծովափի վրա». ֆրանս. phare, *ռուս.* маяк: *Փարոսը առաջին անգամ չինվել է Ալեքսանդրիա քաղաքի առաջ գտնված փոքրիկ* Pharos *կղզում, որից էլ տարածվել է ամեն կողմ:*

Կիլիկիա – լտ. cilicium > *ֆր.* cilice *«մի տեսակ կոշտ կերպաս՝ այծի մազից չինված»:*

Սավան – Բաղդադի մոտ Սարան գյուղի անունից:

Սարտիլա (ձուկը) < ֆր. < sardine < sarda, sardina < sardus *վայրանունից:*

գալոշ. galosh, *լտ.* gallica *– ծագում է* gaulois *բառից.*

medica, *μηδική* «luzerne *բույսը» < Մարաստանից.*

pergamum *միջնաբերդ <* Pergamum *քաղաքի անունից.*

pergamena *«մագաղաթ» <* Pergama*-ի եվմինեսի հնարածը համարվելով.*

լտ. sinopis *մի տեսակ յուղաներկ < Սինոպ քաղաքից.*

bronze < Brundusium.

cuivre < *Κύπρος:*

Ամերիկայի անունով է մի տեսակ հասարակ կտոր, որ Պոլսում կոչվում է «ամերիքան բէզի» և (բուն ձևն է արաբերեն bezz, *որից Թրք.* bez, *որ նշանակում է «չոր») ռամիկ ձևով՝* **ամելիքա:** *Կովկասում տարածված է* **ամիրքանը,** *որ այժմ վերացել է, և ասվում է ռուսերենով* **бязь.**

* * *

Ամեն մի մարդ իր մայրենի լեզուն մանկութեան շրջանից սկսած այնպես լավ սովորած է, որ նրա բոլոր բառերն ու ձևերը թվում են ամենաբնական բանը: Երևանում 70-ամյա մի պառավ թուրք կին ասաց ինձ մի օր. «Մեր թուրքերենից ավելի ուղիղ լեզու չկա, հացին «չօրևք» ենք ասում, ջրին «սու»: Մյուս ազգերը ծուռ ու մուռ բաներ են ասում. օրինակ, ռուսները հացին «խլեբ» են ասում, հացը չօրևք է, սկի խլեբ կլինի՞, ջրին՝ «վադա», «սու» չեն ասում, իսկի «վադա» կլինի՞»:

Այս տգետ կնոջ խոսքը իրական զգացողության ճիշտ արտահայտությունն է: Մայրենի լեզուն բնական է մարդուն. նրա նույնիսկ թերությունները, անկանոնությունները, բացառությունները, արտասանության դժվարությունները՝ այդ բոլորը վերանում, ջնջվում, հարթվում և հնչտին, բնական ու դյուրալուր են դառնում: Ընդհակառակը՝ ամեն մի չեղում կամ նորմածություն, հին կանոնների խախտում, արտասանության փոփոխություն անընդունելի են: Սրա համար է, որ երբ մի նոր բառ ներմուծվում է լեզվի մեջ, ենթարկվում է գիտակից քննադատության, եթե նա լեզվի նախկին սովորական կանոններին համապատասխան չէ: Վերջերս մեկը հնարեց մի բառ՝ տրամվայի «աստանովկա» իմաստի համար (կանգառ): Այս բառը ինքնին շատ կոկիկ, դյուրահնչյուն, ճիշտ կազմված բառ է և նյութին էլ շատ համապատասխան: Ջնայած դրան, դժվարության հանդիպեց շատերի կողմից, որովհետև կանկառ «փուչ» բառի հետ համանուն էր:

*Սակայն մի ուրիշ բառ՝ **համայց**, որ ես հնարեցի հիվանդանոցում պառկած ժամանակս, ռուս. արխօդ (բժիշկների ընդհանուր այցելություն հիվանդանոցի հիվանդներին) իմաստով, հաճույքով ընդունվեց, որովհետև հայերենի հին կանոններին բոլորովին համապատասխան էր և որևէ նման բառի հետ համանուն չէր կազմում:*

Սրանից է բխում այն երևույթը, որ մենք ոչ մի քննադատության չենք ենթարկում մի օտար բառ, որ աղոռակում է մեր լեզվի մեջ, եթե նույնիսկ անմիտ ու անչնորհք մի բառ լինի: Օրինակ, մենք՝ հայերս, ռուսները, վրացիք և այլք, անայլայլ և անտարբեր սիրում ենք գործածել ռեստորան «ճաշարան» բառը, որ զուտ ֆրանսերեն է և ստուգաբանորեն նշանակում է «կազդուրիչ»: Գինին կազդուրիչ է, այդ հասկանալի է, բայց ճաշարանը կոչել կազդուրիչ, մենք երբեք չպիտի դիջնինք, եթե որևէ մեկը հայերենի մեջ համարձակեր մտցնել: Ֆրանսերեն բառը կարելի եղավ մտցնել չնորհիվ այն բանի, որ մենք, ֆրանսերեն չիմանալով, չէինք կարող ստուգաբանել նույն բառը և, հետևաբար, քննադատության բովից անցկացնել:

Այստեղ է ահա օտար բառերի ազատ փոխառության գաղտնիքներից մեկը և թերևս՝ գլխավորը:

Ֆրանսերեն chirurgien «վիրաբույժ», որ նաև ռուսերեն ձևով գործածվում է և ռուսերենից էլ անցել է կովկասի հայերին, բուն հունական ծագում ունի (χειρουργια) և նշանակում է «ձեռագործ»: Ամեն տեսակ ձեռքի աշխատանք կոչվում է նույն հունարեն բառով, նույնիսկ՝ բանվորի աշխատանքը: Եթե հայե-

բննով **խիրուրգ**-*ը կոչինք ձեռագործ, անչուչտ ծիծաղելի պիտի լիներ: Շատ ավելի հարմար է հայերեն* **վիրաբույժ**, *որ նշանակում է թե «վերքերը բուժող» և թե «վիրահատմամբ բուժող»:*

Դանդիռն *«մթություն». այս բառը մի անգամ է գործածված (Սոփերք, հտ. Գ., էջ 20), հիշված ՆՀԲ և ավելի մանրամասն՝ Արմ. բռ.: Իմաստը թեև վերի ձևով նշանակված էր, բայց անստույգ կամ անապահով էր, Մանանդյանը, գըտնելով Թևսնի հայ թարգմանությունը և հրատարակության տալով, գրքի վերջում դնում է նորագյուտ և անծանոթ բառերի մի չարք: Սրանց մեջ կան կողք-կողքի* **դանդիռն** *և* **մառախուն**. *Հրատարակիչը ժամանակ չէ ունեցած մի անգամ փընտրելու ՆՀԲ-ի կամ Արմ. բռ.-ի մեջ* **դանդիռն** *բառը, որով թե այդ բառի իմաստը պիտի իմանար և թե* **մառախուն** *անծանոթ բառով պիտի ուղղեր* **մառախուղ**: *Վերջին բառով ստուգվում է առաջին բառի էլ իմաստը, որ և գործածել է Ե. Տեմիրճիպաչյան՝ «Դանդիռն գևրեզմանաց, Նիրվանա»**:

ԲԱՑԱՐՁԱԿ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ, ՊԱՅՄԱՆԱԿԱՆ

Ներածության մեջ տեսանք, որ բառը այսինչ կամ այնինչ իմաստի համար ընդունած պայմանական նշանն է, և լեզուն այդպիսի պայմանական նշանների մի ամբողջություն է: Բառը կազմող ձայների և առարկայի նշանակության մեջ որևէ կապ չկա:

Ամեն պայմանական նշան ի բուն երկու տեսակ է, որ կարող ենք կոչել հարաբերական և բացարձակ:

Երբ ասում ենք, թե երկաթուղու վրա կարմիրը նշան է վտանգի, իսկ կանաչը՝ ապահովության, այստեղ կանաչն ու կարմիրը թեև պայմանական նշաններ, բայց ներկայացնում են իրողության պատկերը: Շոգեկառքի վտանգը երևակայվում է իբրև բախում, որ է մահ կամ հրդեհ, մեկը՝ արյուն, մյուսը՝ բոց, որոնք կարմիր գույնն ունեն: Ապահովությունը երևակայվում է այնպես, որ իր գնացքը գնում է մարմանդ դաշտերի միջով, որոնք կանաչ գույնն ունեն: Երկու դեպքում էլ պայմանական նշանը հարաբերական է:

Երբ գրում ենք արաբական 0, 1 կամ լատինական I, II, III թվանշանները և ընկերացնում ենք ոչնչությունը կամ թվական գաղափարները, դրանք հարաբերական են, որովհետև ներկայացնում են առաջինը՝ (0)՝ մի սնամեջ բան, դատարկություն, մյուսները՝ մեկ կամ երկու կամ երեք անհատ միություններ, որոնք մեր առաջ կանգնել են:

Նույնպես՝ երբ գրում ենք 0 տառաձևը և ըմբռնում ենք 0 ձայնավորը, դա նույնպես, թեև պայմանական նշան, բայց հարաբերական է, որովհետև ներկայացնում է բերանի կլոր բացվածքի պատկերը:

Բայց երբ գրում ենք երկու, հինգ, անհուն գաղափարների համար՝ 2, 5, ∞ և կամ բ, գ, դ ձայների համար հիշյալ տառաձևերը, այս դեպքում պայմանական նշանը չի կապվում որևէ հանգամանքի հետ, ուստի և նա բացարձակ է:

---

* *Այս մասին տե՛ս իմ հոդվածը. Արմֆան, 1942, էջ 106:*

Պայմանական նշանները երբեմն խառնուրդ են բացարձակի և հարաբերականի, այնպես որ լատինական VI, VII, VIII նշանների մեջ առաջին նշանը (V) բացարձակ պայմանական է, իսկ I, II և III-ը հարաբերական են:

Հաճախ է պատահում, որ բացարձակ պայմանական նշանը առ երևույթս միայն բացարձակ է, և եթե որոննք նրա ծագումը, նույնպես կգտնենք, որ հարաբերական է: Այսպես, դոների վրա դրված 00 կամ 100 նշանը հայտնի է ամենքին, և ամենքն էլ պիտի կարծեին բացարձակ պայմանական, բայց մի քիչ ավելի մտածելով՝ կարելի է գտնել, որ սա հարաբերական պայմանական է: Ջինական, ասորեստանյան և եգիպտական գաղափարանշանները, որոնք այսօր զուտ բացարձակ պայմանական նշաններ են, առաջանում են հնագույն հարաբերական նշաններից, ուրիշ խոսքով՝ գաղափարագիրը պատկերագրի չարունակությունը կամ նրա զարգացած վիճակն է:

Հայերեն **Մ** տառը այսօր բացարձակ պայմանական նշան է, բայց երբ որոննք նրա հին ծագումը, կտեսննենք, որ զարմյալ հարաբերական պայմանական նշան է: Այսպես՝ **Մ**-ն ծագում է հունական M (Μ) ձևից, այս էլ՝ իբրև վերջին աղբյուր առնված է եգիպտական ~~~~ ma տառաձևից (սխալ է եգիպտական ~~~~ n): Արդ՝ եգիպտական ~~~~ ma-ն, իբրև գաղափարանշան, ներկայացնում է եգիպտական ma «ջուր» բառը, և այս զիգզագն էլ, իբրև թե ջրի օձապտույտ, ոլորապտույտ գնացքն է ներկայացնում:

Հայերեն **Ռ**-ն բացարձակ պայմանական նշան է, բայց դա զումարն է երկու **ր**-ի (իբր Ρր), որ ներկայացնում է ուժգին **ր**: **Ր**-ն առաջանում է հունարեն P տառաձևից, իսկ սա էլ*...

Մեր արդի գիտական և ընկերային կյանքի մեջ ընդունած պայմանական նշանները ամենամեծ մասամբ կամ հարաբերական են և կամ հարաբերական նշաններից առաջացած ձևեր:

Այժմ հարց տանք, թե ինչպես են լեզվի պայմանական նշանները (բառերը կամ մասնիկները)՝ բացարձա՞կ, թե հարաբերական:

Հարաբերական պայմանական նշանները առհասարակ ինքնին ճանաչելի են, ինչպես 0, 1 և այլն, լեզվի մեջ էլ՝ փսփսալ, խռխռալ, կռկռալ, հռռոալ, կկու և այլ բնաձայն բառերը: Բացարձակ պայմանական նշաններն են, որ մնում են անվերլուծելի, և երբ ասում ենք, թե լեզվի բառերը պայմանական նշաններ են, հասկանում ենք բացարձակ պայմանական:

Բայց ինչպես տեսանք, կան բացարձակ պայմանական նշաններ, որոնք այժմ միայն այդպես են, իսկ սկզբնապես եղել են հարաբերական: Այդպես օրինակ՝ գաղափարանշանները:

Լեզվի բառերն էլ արդյո՞ք նույն կարգին չեն պատկանում, այսինքն՝ թեև այսօր բացարձակ մեզ համար, բայց արդյոք նախնական հարաբերական պայմանական նշաններ չեն եղել, որոնք կորցնելով իրենց հարաբերականությունն ամեն մի հետք դարավոր անցյալի մեջ, հասել են այսօր մեզ բոլորովին անվերլուծելի ձևի տակ:

Առարկան մեր ներքին աշխարհի հետ հաղորդակցելու համար հինգ միջոց ունի, այն է՝ մեր հինգ զգայարանները՝ չոշափելիք, տեսանելիք, հոտոտելիք,

* Բնագրի հատվածը այստեղ ընդհատվում է (Ս. Գ.):

ճաշակելիք և լսելիք: Ամեն մի զգայություն իր համապատասխան զգայարանն ունի, և ոչ մի զգայություն չի կարելի բացատրել մի ուրիշ զգայությամբ, օրինակ, չի կարելի ասել, թե վարդի հոտը այսինչ առարկայի համն ունի, կամ թե մանուշակի գույնը նման է մի կլոր մարմնի, և կամ՝ փոխադարձաբար: Ըստ այսմ, առարկան, որ ներկայանում է մեզ մի որոշ փափկությամբ կամ կարծրությամբ, ձևով կամ գույնով, հոտով կամ համով, չի կարող բացատրվել որևէ ձայնով, որ միայն լսելիքի զգայությունն է: Առարկաների միայն ձայնն է, որ կարելի է նմանողությամբ արտադրել և ձայնով էլ բացատրել, որ և ականջի միջոցով հասնում է մեր զգայությանը: Սրա համար էլ հնարված են և ամեն լեզվի մեջ էլ կան ընաձայն բառեր, որոնք տալիս են այն առարկայի պատկերը, որ հանում է այդ ձայնը: Բայց դրանք կան և կարող են լինել միայն այն առարկաների համար, որոնք ունեն որևէ ձայն, իսկ այն առարկաները կամ այն հասկացողությունները, որոնք չունեն կամ չեն կարող ունենալ ձայն, հետևաբար չունեն և չեն կարող ունենալ ձայնական նմանողությամբ բացատրություններ:

Հաճախ պատահում է, որ մենք բառի պատկերից զաղափարի պատկերն ենք ստանում, ուրիշ խոսքով՝ բառի հնչման և նշանակության մեջ կապ ենք զգում: Օրինակ՝ սիրել, դուրեկան, փափուկ, հարթ, միապաղաղ, սահուն, սիրուն և այլն տալիս են մեզ քնքուշ տպավորություն: Ընդհակառակը, խիստ, սոսկալի, զարհուրելի, խոշոր, խոժոռ, զզվելի, գարշելի, նողկալի՝ տալիս են մեզ անախորժ տպավորություն, հսկա, վիթխարի, ահավոր, վսեմական, ահեղ, վեհ՝ տալիս են ուժեղ տպավորություն, իսկ ճղճիմ, փոքրիկ, մանրիկ պստլիկ և այլն՝ տկար տպավորություն: Բայց այս բոլորը կեղծ է, մենք գտնվում ենք ենթակայական տպավորության տակ և ոչ թե առարկայական: Այդ տպավորությունը ոչ թե գտնվում է բառի հնչման, այլ նրա իմաստի մեջ, որին գիտակցելով՝ մենք տալիս ենք բառին մի այնպիսի տոն, որ համապատասխանում է իմաստին, որից էլ հակադարձաբար ստեղծում ենք մեզ համար այդ տպավորությունը:

Բանաստեղծները հաճախ օգտվում են այդ կեղծ տպավորությունից և գրում են այնպիսի տողեր, որոնց մեջ հնչումը իմաստի պատկերը լիներ, դա կոչվում է **նմանողական ներդաչնակություն** (harmonie imitative), *օրինակ՝*...*

Բայց այս բոլորը կեղծ է և արդյունք մեր ենթակայական զգացողության: Ցույց տալու համար, թե հնչման այս տպավորությունը ենթակայական է միայն, հիշենք մի քանի բառ, որոնք տարբեր լեզուներում տարբեր զգացողություն են տալիս:

Ֆր. pouah! *արտահայտություն է զզվանքի, բայց արևելյան թուրքերեն* pah pah!*-ը գովասանական է, գերմ.* igitt! *արտահայտություն է նույնպես զզվանքի, մինչ Թրք. նշանակում է «քաջ, կտրիճ» և շատ գովասանական բառ է: Անգլ.* cake *ընտիր եվրոպական խմորեղեն է, մինչդեռ նույնահնչյուն հայերեն բառը միայն զզվանք է արտահայտում, բայց նույնիսկ միջին հայերենում ունենք* **քաք «չոր հաց, պաքսիմատ»:** *Շնորհալին գրում է (ագռավի հանելուկի մեջ)՝*

Ջիդ ասորի իրենց կարդայ,
Ուտե չոր քաք ու թարխանայ:

Դարձյալ կա հայերեն **քակոր, թրիք** *և* **քաքար** *(խմորեղեն): Ասացինք, թե միայն ընաձայն բառերն են, որոնք կարող են տալ առարկայի պատկերը. այսպես՝ կկու, հոպոպ, ագռավ, քչքչալ, խռխռալ, խռմփալ և այլն, և այլն:*

* *Բնագիրը այստեղ ընդհատվում է, և օրինակներ չկան (Ս. Գ.):*

Բայց նույնիսկ այնպիսի բառեր, որոնք մեր վրա բնաձայնական տպավորություն են թողնում, իրապես բնաձայն չեն, և զգացողությունը խաբուսիկ է:

Օրինակ՝ հայերեն **սղոց,** *որ բնավ կապ չունի իր հանած ձայնի հետ և առաջանում է սուղ «կարճ» բառից:* **Շրափնել** *բառը, որ այնքան համապատասխան հնչյուն ունի իր նշանակած առարկային, պարզապես մի անգլիացու անունն է, որ հնարել է նույն կործանիչ առարկան (Marouzeau, La ling, էջ 37):*

Այս դատողությունից բնականորեն բխում է այն, որ լեզվի բառերը չեն և չեն կարող լինել հարաբերական պայմանական նշաններ, այլ միմիայն բացարձակ:

Բայց բառի բացարձակ պայմանականությունը միայն արմատի համար է. հենց որ անցանք բարդ և ածանց բառերին, այստեղ այլևս սկսվում է հարաբերական պայմանականություն: «Ջորքոտանի» գաղափարի համար կարող էինք ունենալ մի բոլորովին անկախ արմատ, և այն ժամանակ այդ բառը կլիներ բացարձակ հարաբերական, ինչպես, ենթադրենք, **զազան** *բառը: Բայց նա կազմված է* **չորք** *և* **ոտք** *բառերից, ինչպես պարսկերեն čārpā կամ ֆրանսերեն quadrupède հոմանիշները, և մենք մինչև այժմ էլ գիտակցում կամ զգում ենք այդ, ուստի նրանք մեզ համար հարաբերական պայմանական բառեր են:*

Բայց արդյոք ամեն մի բարդ կամ ածանց բառ այդպես է: Ո՛չ:

Այն րոպեին, երբ կազմվեց **մածուն** *բառը մեր մեջ, այն ներկայացնում էր իրողության ճիշտ պատկերը (հեղուկ կաթի* **մածուցումը** *մակարդի միջոցով), և մարդիկ հասկանում և ըմբռնում էին այդ պատկերը: Բառը նրանց համար հարաբերական պայմանական էր: Այդ օրվանից մինչև այժմ անցել է ով գիտե ինչքան ժամանակ:* **Մածուն** *բառը գրականության մեջ գործածել է նաև Մագիստրոսը (1059), ուրևմն 900 տարվա հնություն ապահով է, բայց* **մածունը** *ևս Գրիգոր Մագիստրոսի օրով չհնարվեց: Այսքան երկար ժամանակի մեջ այդ բառը այնպես կորցրեց իր ածանցական բնույթը, որ բոլորովին վերացավ նրա հարաբերական պայմանականության էլ զգացումը: Այսօր մեր ժողովուրդը ոչ միայն չգիտե, թե* **մածուն** *բառը կազմված է* **մած**-նուլ *արմատից* **-ուն** *մասնիկով, այլև* **մածնուլ** *բառի գոյությունն էլ չգիտե: Այսօր մենք ամենքս էլ գործ ենք ածում այդ բառը իբրև արմատ, այսինքն՝ իբրև բացարձակ պայմանական բառ, ճիշտ այնպես, ինչպես փոխառու ժողովուրդները (վրաց. მածონի, Թրք. mazum, Հուն. μαζούν, ռուս.* **мацони,** *անգլ. mazoon):*

Ռուս. **надоедать**-*ը «ձանձրացնել» չատ զարմանալի բառ է այս տեսակետից: Կազմված է «ուտել» արմատից,* **на** *և* **до** *մասնիկներով: Բայց ինչ կապ ունի «ուտելու» գաղափարը «ձանձրանալու» գաղափարի հետ: Բայց նա սկզբում առնվել է միայն ուտելղենի համար: Շարունակ ուտելով միևնույն բանը՝ մարդ ձանձրանում է. սրանից առաջացել է «ձանձրանալու» գաղափարը: Այնուհետև բառը գործածվել է ոչ միայն ուտելղենի մասին, որ բնական էր և հասկանալի, այլև ամեն մի բանի համար, որ ուտելու հետ կապ չուներ և, հետևաբար, բնական չէր: Ավելի հետո առաջին իմաստը ջնջվել է և այսօր ամենևին էլ չի զգացվում: Շատ ռուսների հարցրել եմ ես բառի ծագումը, և նրանք չեն իմացել, կամ երբ հրավիրել եմ նրանց ուշադրությունը, նոր միայն անդրադարձել են: Այսպես, ուրեմն, պայմանական հարաբերականության գաղափարը, որ սկզբում գոյություն ուներ, այժմ բոլորովին անհետացել է:*

Ամեն մի ածանց բառ, որ դուրս է գալիս ժողովրդական դարբնոցից և մտնում է ընդհանուր գործածության, ձգտում է անկախության: Այս երևույթը առաջանում է հատկապես այն ժամանակ, երբ բառի նախնական իմաստը կորչում է և մնում է միայն երկրորդ կամ երրորդ իմաստը, որ փոխաբերության արդյունք է:

Այսպես են, օրինակ՝

Պարապուխս. *առաջ պարի առաջնորդն է եղել, այժմ ամեն մի խմբակցության համար ասվում է, բայց պարի առաջնորդի համար չի ասվում:*

Ճյուղագրություն. *ազգատոհմի ցուցակն է ներկայացնում. կազմված է ճյուղ (ծառի) բառից, բայց այդ բառը գործածողները այժմ ամենևին չեն մտածում ոչ ծառի ճյուղի և ոչ գետի ճյուղի մասին:*

Հովանոց. *առաջ գործ են ածել միայն արևի դեմ պաշտպանվելու համար, այժմ այնչափ չի գործածվում արևի դեմ, որչափ՝ անձրևի դեմ: Վերջինիս համար չատ անտեղի է Հով-անոց բառը, բայց ոչ ոք չի անդրադառնում դրա վրա, որովհետև բառը դարձել է այլևս պայմանական նշան:*

*Ցույց տալու համար, թե ինչպես պայմանական հարաբերական բառը ավելի ուշ կորցնում է իր ծագման գաղափարը և վերածվում բացարձակ պայմանականի կարելի է աչքի առաջ բերել աղավաղյալ բառերը: **Կուսակցություն** բառը աղավաղվելով դարձել է **կուսացկուլթյուն**, ուրևմն ամենևին չի էլ զգացվում «կցվելու, միանալու» գաղափարը: **Հակաճառություն** բառը աղավաղվելով դարձել է **Հաճակառություն**, և եթե այդպես է, էլ ինչ ճառել, էլ ինչ հակա...:*

Ածանց բառերը իրենց կազմությամբ նման են չենքի կազմության: Շենքի մեջ մաս ունեն քար, ավազ, երկաթ, գաջ ու կիր, փայտ, գամ և այլն, բայց երբ չենքը չինվում վերջանում է, մասերը իրենց անհատական գաղափարը կորցնում են, բոլորը կազմում են մի ամբողջություն, և ոչ ոք չի մտածում առանձին մասերի մասին. չենքը ըմբռնվում է իբրև մի անկախ առարկա:

Անատոլիա, Ճապոն և **Խորասան** *աշխարհագրական անուններ են, երեքն էլ նշանակում են «արևելք»: Հունաստանի հույները իրավամբ Փոքր Ասիան կոչեցին Անատոլիա, որովհետև նա գտնվում էր իրենց երկրի արևելյան կողմը: Ատերպատականցիք իրավամբ կոչեցին Խորասան (պրս. xōr արևելք, asan ելնող, ծագող), որովհետև այդ գավառը Ատրպատականի արևելյան կողմն էր. նույնպես չինացիք կոչեցին Ճապոնիան այդպես (չին. ճա «արև» «պոն» ծագել), որովհետև այդ երկիրը գտնվում էր իրենց արևելքում, բայց այսօր ոչ մեկս չի մտածում այդ մասին, և նույնիսկ ասում ենք այսպիսի* absurde *խոսքեր. Խորասանը գտնվում է Ճապոնիայի արևմուտքում, կամ Խորասանը Անատոլիայի արևելյան կողմն է, այսինքն՝ «Արևելքը գտնվում է Արևմուտքում», «Արևելքը Արևելքի արևելյան կողմն է»: Հարաբերական պայմանականը, կորցնելով իր նախկին արժեքը և ստանալով անկախություն, դարձել է բացարձակ պայմանական բառ:*

ԼԵԶՎԻ ԿԱՊԸ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Հաճախ խոսված է այն մասին, թե լեզուն կապ չունի տրամաբանության հետ: Այս բանը կարելի է հասկանալ և բացատրել մի քանի տեսակետով: Կարո՞ղ է լինել մի միտք, կամ մի նախադասություն, որ տրամաբանության բոլորովին հակառակ լինի: Իբրև օրինակ հիշում են հետևյալ նախադասությունները.

35-ին գումարելով 27. կստանանք 61: Գերմաներենի մի ուսուցիչ իր աշակերտներին թարգմանել է տվել հետևյալ նախադասությունները.

Ես կծնցի իմ մակատը:

Նստել էի իմ և իմ եղբոր միջև (Vendryès, BSL, 27, էջ 4)*:*

Սրանք սխալ և նույնիսկ անմիտ նախադասություններ են. բայց սխալը նախադասության մեջ չէ, այլ մտքի մեջ: Նրանք քերականորեն ճիշտ են բոլորովին այնպես, ինչպես եթե ասեինք՝

35-ին գումարելով 27՝ կստանանք 62:

Ես կծնցի իմ մատը:

Նստել էի իմ հոր և իմ եղբոր միջև:

Պարոնյանը «Մեծապատիվ մուրացկանները» սկսում է հետևյալ ձևով.*

«Հազար ութը հարյուր յոթանասուն ... չեմ հիշեր՝ քանիին, սեպտեմբեր երեսունըմեկին,- ներեցեք, երեսունին պիտի ըսեի, վասնզի սեպտեմբերն երեսուն օր միայն ունի — երկար և ընդարձակ թիկնոցի մը մեջ փաթթված միջահասակ և գիրուկ մարդ մը ... նավակ մը յուր սնտուկները հանել կաչխատեր» ...

Սրանք էլ իրրև նախադասություն ճիշտ են. թեև տրամաբանական չեն, որովհետև ըստ իմաստի սխալ են: Եթե այդպես չլիներ, ուրեմն սխալ և անտրամաբան պիտի լիներին բոլոր երգիծաբանների գրվածքները, որոնք գավեշտի և զվարճության համար են գրված: Սխալ և անտրամաբան պիտի լիներ ամբողջ հին ազգերի մատենագրությունը, որ համապատասխան չէ արդի գիտության և այլն:

Սխալ և անտրամաբան չէ նախադասությունը նաև այն դեպքում, երբ մտքերի չարակցությունն է սխալ: Օրինակ Սաղմոսի ԿԸ, 2 համարը բողոքականների աշխարհաբար թարգմանության մեջ այսպես է. «Ինչպես որ ծուխն փչանում է, փչացրո՛ւ նրանց» (տպ. Զմյուռնիա, 1843, Պոլիս, 1906), (ավելի լավ է գրաբար թարգմանությունը՝ Որպէս պակասէ ծուխ՝ պակասեսցին): Կամ՝ Առակաց գիրք. ԻԶ, 2. «Ինչպես որ ճնճղուկը թռթռում, և ծիծեռնակը թռչում է, այնպես էլ դուր անեծքը չի կատարվիլ»: (= գրբ. Որպէս թռչունք և ճնճղուկք թռանին, նոյնպես անէծք դուր ումեք ոչ լինի»):

*Ոճերն ու բառերն էլ կարող են լինել սխալ ու անտրամաբան. օրինակ՝ գրաբար ասվում է **գան ըմպել**, որ է աշխ.՝ **ծեծ ուտել** (թրք. ևս* dayaq yemek *ծեծ ուտել), բայց ծեծը ոչ կուտեն և ոչ էլ կկամեն,* подбородок *կոչվում է «ծնոտը», որի բուն նշանակությունն է «միրուքի տակը», բայց միթե՞ ամեն մարդ պարտավոր է միրուք ունենալ, և կամ՝ կանայք ու երեխաները միրուք ունե՞ն:*

Հաճախ սխալ ու անտրամաբան են լինում նաև քերականական ձևերը: Ամեն լեզվի մեջ էլ օրենք է, որ Հոգնակի ննթական ստանա Հոգնակի բայ: Բայց տաճկերենում, երրորդ դեմքի Հոգնակի ննթական պահանջում է եզակի բայ, օրինակ՝ Ermeniler geldi *«Հայերը եկավ», և եթե ասենք* Ermeniler geldiler *«Հայերը եկան», դա կլինի «Հայաբանություն» և ոչ թե տաճկաբանություն:*

Արաբերենում մի օրենք կա, որ ասում է. «Ամեն անկանոն Հոգնակի իգական է». ըստ այսմ արաբ. աքլորներ, եզներ, ցուլեր, քահանաներ և այլն, նույնիսկ տղամարդիկ իգական են: Ո՞ւր է այստեղ տրամաբանությունը:

---

* *Բնագրի յուսանցքում մատիտով գրված է՝ «օրինակները գրքից». մեզ թույլ ենք տալիս մեջբերելու առաջին նախադասությունը (Ա. Գ.):*

Լեզվի ամենից ավելի անտրամաբան կողմը, որ և քերականության այս մասի գլխավոր նյութն է կազմում, բառերի արտաքին ձևի և ներքին բովանդակության կապն է: Այդպիսի կապ գոյություն չունի:

Հյ. լոյս, բոյս, կոյս, խոյս, յոյս.
գերան, բերան, կերան, մերան.
արդ, բարդ, մարդ, գարդ, վարդ, յարդ, սարդ, ցարդ, ինչպես և՝
թարթ, կարթ, հարթ, մարթ.
պարտ, մարտ, արտ, քարտ:

Այսպես նաև մյուս բոլոր լեզուները, օրինակ, ֆրանսերենն՝

banc,	pan,	van,	faon,	dent,
նստարան,	*քղանցք,*	*մաղ,*	*ձագուկ,*	*ատամ,*
dans,	temps,	sang,	sans,	sent,
մեջ,	*ժամանակ,*	*արյուն,*	*առանց,*	*զգում է,*
vent,	vend,	gens,	champ,	gent,
քամի,	*ծախել,*	*մարդիկ,*	*դաշտ,*	*ժեռնոց,*
camp,	lent,	rang,	met,	paon,
ճամբար,	*դանդաղ,*	*չարք,*	*ստել,*	*սիրամարգ,*
tant,	tend,	chant,		
այնքան,	*տարածել,*	*երգ:*		

Այս բոլորը (հյ., թե ֆրանս.) թեև իրար մեջ այնքան նման, ոչ մի կապ չունեն ոչ իրար հետ և ոչ էլ իրենց նշանակած առարկայի հետ: Այս է լեզվի ամենաանտրամաբան կողմը, որի համար մինչև այժմ ոչ մի բացատրություն չէ գտնված և չպիտի էլ գտնվի, որովհետև այդ բոլորը պատահականության արդյունք են: Ինչքան նոր է լեզուն, այնքան էլ շատ է այդ նմանաձայն բառերի չարքը, բայց քանի որ հինը գնանք, այդ բոլորը իրար ետևից կջնջվեն:

Օրինակ՝ ֆրանսերենը համեմատելով լատիներենի հետ՝ chant *կդառնա լատիներեն* cantus, *ֆրանսերեն* gens *կդառնա լատիներեն* gens *և այլն:*

Իսկ եթե պատահաբար գտնվեր մի այնպիսի անձ, որ ուզեներ այդ հընչումների և նրանց իմաստի միջև որևէ կապ գտնել, իհարկե պիտի ամփոփվեր այդ բառերի առաջին բաղաձայնի մեջ և պիտի եզրակացներ, թե «երգը կամ դաշտը» s է, քամին v է, սուտ խոսելը m *է և այլն:*

Որպիսի՜ անիմաստ բան:

ՍԵՌ ԵՎ ՏԵՍԱԿ ԲԱՌԻ ՄԵՋ

Ամենքը գիտեն, որ ծիրանին, դեղձենին, սալորենին, բալենին, կեռասենին և այլն բույսեր կամ ծառեր են, կայծքարը, որձաքարը, մարմարիոնը, բազալտը և այլն՝ քարեր, իշխանը, կողակը, բախտակը և այլն՝ ձկներ: Առաջինները կազմում են բնության թագավորության մեջ տեսակներ, իսկ բույս, քար, ձուկ՝ սեռեր, այսինքն՝ բոլոր նույն տեսակները ըմբռնող ընդհանուր անվանակոչություն:

Մարդկային միտքը ընդունակ է ինչպես նման իրերի միջև եղած նուրբ տարբերությունը նկատելու, նմանապես և մասնավոր տարբերությունները երևակայությամբ վերացնելու և բոլորին միացնող ընդհանուր բնորոշ հատկությունները

գտնելու: Առաջին երևույթը կոչվում է մասնավորացում, երկրորդը՝ ընդհանրացում. երկուսն էլ մարդկային խորաթափանց մտքի արտահայտություններն են:

Հայ գյուղացին գիտե զանազանել միևնույն ծիրանի բազմաթիվ տեսակները (դառնակորիզ, քաղցրակորիզ, աղջանաբաթ, խոսրովչահի, թաբարզա և այլն), կամ միևնույն խաղողի հարյուրավոր տեսակներ (խարջի, ասկարի, թավրիզենի, իծապտուկ, նզանդարի, քիչմիշի և այլն, և այլն):

Թեև տարբեր բույսեր են նրա համար չլորը, գավալուն, ալուչան, դամբուլը, կոկամը, ալիբուխարան և այլն, որոնք միևնույն սալորի տեսակներն են: Գիտուն ոչ միայն միացնում է այս բոլոր սալորների տեսակներն իբրև մի տեսակ, այլև ծիրանը, դեղձը և դեռ ուրիշ բույսեր էլ համարում է մի ընտանիքից և ծիրանը կոչում է prunus arménian (հայկական սալոր), դեղձը՝ prunus persica (պարսկական սալոր) և այլն:

Լեզվաբանության մեջ հարց է տրված, թե արդյոք նախնական մարդիկ իրերը իբրև տեսա՞կ ըմբռնեցին, թե իբրև սեռ: Շատերը ասում են, թե այսօր էլ վայրենի ժողովուրդները ճանաչում են միայն տեսակներ և ոչ բնավ՝ սեռ: Օրինակ, նրանք տալիս են բույսի, քարի, ձկների, թռչունների զանազան տեսակներին առանձին-առանձին անուններ, բայց ընդհանուր սեռ ցույց տվող **բույս, քար, ձուկ, թռչուն** և այլ բառեր չունեն:

Այսպես պիտի լիներ նաև նախամարդոց լեզուն:

Այս կարծիքն ինձ համար անճիշտ և տարօրինակ է թվում: Եվ այն օրինակները, որ բերված են վերոհիշյալ լեզուներից, հավաքիչների անծանոթ լինելու արդյունք են: Օրինակ, հոտենդոտների նամա լեզուն, որ ամենից ավելի վայրենի մի ժողովուրդի լեզուն է, գիտե heib «ծառ», uis «քար», anis «թռչուն», oub «ձուկ» և այլն ընդհանուր բառերը: Նույնպես նրա հարևան herero լեզուն գիտե omuti «ծառ», eue «քար», ondera «թռչուն», chundyu «ձուկ» և այլն: Պետք չէ իբրև օրինակ հիշել բասկերենը, որ arbolia «ծառ», animale «անասուն», loze «ծաղիկ» ընդհանուր բառերը փոխ է առել սպաներենից (Jespersen, Language, 210), որովհետև բասկերենը ռոմանական չրջապատից չափազանց ազդված մի լեզու է, և զարմանալի չէ, որ այդ բառերը, ինչպես և շատ ուրիշ բառեր, փոխ է առել նրանցից: Ընդհանուր բառերի փոխառությունը նույնիսկ այդ բառերի կարևորությունն է ցույց տալիս:

Միայն մասնավոր բառեր ունենալու և ընդհանուր բառերից զուրկ լինելու գաղափարը արդեն ինքնին անըմբռնելի է: Ինչպիսի՞ զարհուրելի հարստություն պետք է ունենա այդպիսի մի լեզու, որ ճանաչե բոլոր տեսակի քարերը, բույսերը, թռչունները, ձկները, խոտերը և այլն: Մարդկային միտքը ինչքան ծանրաբեռնված պիտի լիներ դրանով: Ընդհանուր բառը մի միջոց է մարդկային միտքը այս ծանրաբեռնությունից ազատելու:

Նույն ենթադրության հակառակ է նաև իրերի բնական ընթացքը: Ենթադրենք մի րոպե, որ մարդը ստեղծեց առանձին-առանձին անուններ բոլոր տեսակի առարկաների համար: Օրինակ, նա ճանաչում է բոլոր ծառերը առանձին և **ծառ** ընդհանուր գաղափարը չգիտե: Իսկ ինչպես պիտի անվանե, երբ տեսնի ծառերի մի խումբ, որոնք բաղկացած են ոչ թե մի տեսակից, այլ մի քանի տեսակներից: Ավելի ևս, ինչպես պիտի անվանե, երբ տեսնի մի կամ մի քանի

ծառ այնքան հեռվից, որ չկարենա որոշել, թե կնձնի՞ են, թե թզենի, բարդի՞, թե կամ ուրիշ ծառ: Չէ՞ որ այս պարագային ստիպված է ծառ ընդհանուր բառը տալու և նրան չունի՝ ստեղծելու:

Միևնույն ժամանակ գիտենք, թե ամեն լեզվի մեջ էլ ոզ ու կով, աքլոր ու հավ, խոյ ու մաքի, հովատակ ու զամբիկ և այլն, որոնք միևնույն անասունի արուն ու էգն են ներկայացնում, առանձին անուններով են կոչվում: Միևնույն ժամանակ կան նաև նրանց ընդհանուր անունները (տավար, ոչխար, ձի և այլն):

Հայ գյուղացին զանազանում է մինչև անգամ հորթը, երինջը, մոզին, մին՝ ընդհանուր, մին՝ արական, մյուսը՝ իգական:

Այս բոլորը կշռելով ու համեմատության դնելով իրար հետ՝ կարող ենք ասել թե՝

1) Մարդիկ այն բոլոր առարկաների համար, որոնց հետ շատ մոտիկ հարաբերություն ունեին և նրանցից լայն չափերով օգտվում էին իրենց առօրյա զանազան պետքերի համար, հնարել են մասնավոր, նույնիսկ շատ մասնավոր բառեր՝ տեսակ առ տեսակ, երբ հարկ է եղել:

2) Այն առարկաները, որոնց ընդհանրապես միայն ծանոթ էին, կարիք չեն զգացել առանձին-առանձին որոշելու և անվանել են ընդհանուր անուններով:

3) Ընդհանուր անուններ հատկացրել են նույնիսկ առաջին կարգի առարկաներին, երբ հարկ է եղել խոսել նրանց մասին ընդհանրապես:

Լեզվի զարգացման ապագա ընթացքում մասնավոր տերմինները վերանում են, և ընդհանուրը տարածվում է:

*Օրինակ՝ շատ լեզուների մեջ կա «մարդ» էակի համար երկու բառ, մին՝ ընդհանուր, մյուսը՝ մասնավորապես արուի համար: Այսպես՝ հյ. **այր** և **մարդ**, գերմ. mann և mensch, սնս. mánsua և virá, հուն. ἀnrhrōpoς և anêr, լիթ. žmū̃, výras, հսլ. člověkŭ և mǫžĭ, գոթ. guma և wair, իռլ. duine և fer, լտ. homō և vir:*

Ապագայում տեսնում ենք, որ այս զանազանությունը հետզհետե վերանում է, և ընդհանուր ձևը հաղթում է. այսպես՝ հայերեն մարդ, անգլերեն man, ֆրանսերեն homme, իտալերեն uomo և այլն:

Ձի-ն հայերենում ուներ իր զանազան մասնավոր ձևերը՝ հովատակ, նժույգ, զամբիկ և այլն:

*Այսօր միայն մնում է **ձի**:*

Հայերենի համար էլ իմ ուսուցիչը (Meillet) *զարմանք էր հայտնում, որ գիտե **մորեղբորորդի, հորեղբորորդի, հորաքրոջորդի, մորաքրոջորդի**, բայց չգիտե մի ընդհանուր բառ, ինչպես է ֆրանս. cousin: Բայց այս գաղափարները այնպես տարբեր բաներ են իրարից, որ զարմանալի է ո՛չ թե դրանց համար առանձին բառեր ունենալը, այլ միասին մի ընդհանուր անուն ունենալը: Այն ժամանակ մի ընդհանուր անուն պիտի ունենայինք նաև **քույր** և **եղբայր** գաղափարների համար, մինչդեռ ամեն մի լեզվի մեջ էլ առանձին բառեր կան:*

Ըստ Pilhofer *(էջ 20–21) Աֆրիկյան kâte լեզուն, որ papua խմբին է պատկանում, չափազանց հարուստ է բառերով. բարդվում են անվերջ, ամեն տեսակ նոր առարկայի համար իսկույն մի նոր բառ են չինում: Բույսերի, մրջյունների, ճանճերի, մողեսների և այլն զանազան տեսակների համար հատուկ-հատուկ բառեր կան: Բայց այս է զարմանալին, ասում է հեղինակը, որ մինչդեռ մասնավոր*

գաղափարների համար առանձին բառեր կան, բայց ընդհանուր գաղափարների համար բառ չկա: Օրինակ, չկա ընդհանրապես tragen «կրել, տանել» բառը, բայց կան՝

âsicke	կռնակով (չալակած) տանել
amecke	կրծքի վրա տանել
upecke	վզի չուրջը տանել
huhucke	գլխի վրա տանել
fitacke	թևի տակ դրած տանել
alecke, lupe	ուսից կախած տանել
de	տանջել պարկով (Netzsack) (um die Stirn):

Սրա հակառակ, միևնույն բառով են արտահայտում «ուտել, խմել, ծխել», նույնպես «մեռնել, ուժասպառ լինել, սաստիկ փափագել»: Գույներից զանազանում են սպիտակ, սև, կարմիր, դեղին, իսկ կապույտ, կանաչ, թուխ և այլն սևի մեջ են:

Դնում եմ այստեղ Jespersen-ի Language աշխատությունից (էջ 429–431) մի խումբ օրինակներ:

Թասմանացիք ոտինի, wattle-ի և ուրիշ ծառերի ամեն մի զանազանության համար (variety) մի առանձին բառ ունեն, բայց «ծառ» իմաստի համար ընդհանուր բառ չունեն: Ջունեն նաև որակ արտահայտող բառեր, ինչպես՝ կարծր, կակուղ, տաք, ցուրտ, երկար, կարճ, կլոր և այլն:

Մոհիկանները զանազան բաներ կտրելու համար տարբեր բառեր ունեն, բայց պարզապես «կտրել» գաղափարի համար բառ չունեն:

Զուլուսները «կով» բառը չունեն, բայց գիտեն «կարմիր կով», «սպիտակ կով» և այլն:

Bakaïri-ում (Կենտրոնական Բրազիլիա) ամեն մի թութակ իր մասնավոր անունն ունի, բայց ընդհանուր թութակ բառը իսպառ անծանոթ է:

Լիթվանացիք գույների համար ընդհանուր անուն չունեն, բայց մասնավոր բառեր շատ ունեն. ինչպես՝ կա առանձին «գորշ» բրդի և սագերի համար, մի ուրիշը՝ ձիերի համար, մի ուրիշը՝ տավարի, մի ուրիշը՝ մարդու և որոշ անասնոց մազերի համար, այսպես և մյուս գույները:

Կան լեզուներ, որ «եղրայր» բառը չունեն, բայց գիտեն «ներց եղրայր» և «կրտսեր եղրայր»:

Cherokee լեզվում «լվալ» բառը չկա, բայց կան զանազան առարկաների համար զանազան բառեր, ինչպես՝ kutuwo «լվացվում եմ», kulestula «գլուխս եմ լվանում», tsestula «մեկի գլուխն եմ լվանում», kukuswo «երեսս եմ լվանում», tsekuswo «մեկի երեսն եմ լվանում», takasula «ձեռքերս կամ ոտքերս եմ լվանում», takunkela «չորերս եմ լվանում», takutega «պնակներն եմ լվանում», tsejuwu «մի երեխա եմ լվանում», kowela «միս եմ լվանում»: Մելանեզիայում ամեն մի առարկայի համար տարբեր թվանշան կա, ինչպես a buku niu «2 կոկոս», a buru «10 կոկոս», a koro «100 կոկոս», a selavo «1000 կոկոս», a uduudu «10 նավակ», a bola «10 ձուկ» և այլն: Այսպես պիտի լիներ նաև նախամարդոց լեզուն:

Huron-ների լեզվով զանազան բառեր կան «ուտել» նշանակությամբ մսի, հացի, ապուրի համար և այլն*:

Այսպես էր նաև Սուդանի մի քանի ժողովուրդների մեջ, բայց հետո «բրինձ ուտելու» բառը դարձավ ընդհանուր գաղափար: Էսկիմոսները ամեն մի տեսակ ձուկ որսալու համար ունեն առանձին բառ: Մի քանի հնդկական բարբառներ 12 տարբեր բառ ունեն «տանել, կրել» նշանակությամբ՝ նայելով թե ինչպիսի բեռ են տանում: Չինարենում «ջուր» նշանակությամբ 12 բառ կա, որոնք են՝

ts'ien	քիչ խոր ջուր
chen	խոր ջուր
yuan	անդունդի ջուր
yang	ընդարձակ ջուր
fen	նռացող ջուր
pow	ծփան ջուր
mien	մեծ ալիքներով հոսող ջուր
wu	պղտոր և ցած ջուր
tchen	վճիտ ջուր
chang	վարար ջուր
lao	ճամփի կողքի առուների ջուր
tchu	աղի ջուր

ԲԱՌԻ ՀՈՐԻՆՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Որևէ պայմանական նշան պարտավոր է ունենալ չորս պայման.

1) Պիտի լինի ըստ կարելվույն հնչտ գործադրելի.

2) Ըստ կարելվույն հնչտ ըմբռնելի.

3) Տարբեր ուրիշ պայմանական նշաններից.

4) Պայմանավորյալ կողմերի համար ընդհանուր**:

Եթե գործադրենք այս չորս ընդհանուր պայմանները բառի վերաբերմամբ, կգտնենք, որ՝

1) Բառերը պիտի լինեն ըստ կարելվույն կարճ և ձայնավորների ու բաղաձայնների մի այնպիսի խառնուրդ ներկայացնեն, որ արտասանության համար դժվարություն չպատճառեն: Այս պատճառով ահա ամեն մի նախալեզվի մեջ էլ արմատ բառերը միավանկ են կամ երկավանկ: Անչուշտ 10–20–30 վանկերից բաղկացած արմատները անհեթեթ պիտի լինեին: Գալով հնչտ արտասանության, դա, անչուշտ, ըստ զանազան ժողովուրդների ընդունակության կարող է զանազանվել իրարից. ֆրանսացին ու իտալացին կարող չեն արտասանել խ, բայց հայի, ռուսի, վրացու համար ամենասովորական բանն է: Շատ աղգեր չեն կարող երկու բաղաձայն իրար կողքի արտասանել, մինչդեռ ուրիշները բաղաձայնների մեծ խճողումներ կարող են հնչտությամբ արտաբերել: Այնուամենայնիվ չենք կարող ասել, թե նախալեզուները սկզբում ևեթ հնարած լինեին միայն բաղաձայնների անհնչելի խճողումներից բաղկացած արմատներ, այլ ձայնավոր-

* Այս և հաջորդ օրինակները տե՛ս Carnoy, La Science du mot, 124:

** Carnoy, La Science du mot, II.

նների և բաղաձայնների այնպիսի միացումներ, որոնց արտասանությունը նույն ժողովրդի համար բավական հնչտ լիներ: Բաղաձայնների ավելի բարդ խմբումները սովորաբար արդյունք են ձայնավորների անկման՝ լեզվի զարգացման ընթացքում:

2) Հնչտ ըմբռնելի լինելու հանգամանքը կապված է լսողության հետ: Թե ձայնավորների և թե բաղաձայնների արտասանության մեջ կարելի է դնել չափազանց մանր նրբություններ:

Օրինակ՝ ֆրանսերենի մեջ կա 7 տեսակ o, կարելի է դնո ուրիշ տեսակներ էլ գտնել: d կամ t բաղաձայնի համար կարելի է գտնել 5 կամ ավելի զանազանություն, բայց նույնպիսի նուրբ զանազանություններ դժվարըմբռնելի պիտի լիներին պայմանական նշանների համար: Ուստի կարելի չէ ընդունել, թե մարդիկ նախալեզուն հնարելու ժամանակ օգտագործած լիներին ձայների այնպիսի նուրբ տարբերակները, այլ միայն հիմնական ձայները: Ձայների նուրբ զանազանությունը առաջացած են լեզուների բարեհնչության հետագա չրջանում և արդյունք են չնչտի, ձայնավորների ու բաղաձայնների նոր հարադրության և փոխադարձ ազդեցության, սղման և այլն:

3) Ուրիշ պայմանական նշաններից տարբեր լինել՝ նշանակում է չուննալ համանուններ և բազմանիշ բառեր: Եթե միևնույն sen *ձայնախումբը պիտի նշանակե 10 տարբեր գաղափար (այսպես է ֆրանսերենում), կամ միևնույն ձայնը 10 նշանակություն պիտի ունենա և կամ* li *պիտի նշանակե «տանձ, սալոր կամ շագանակ» (այսպես է չինարենում), ուրեմն պայմանական նշանները շատ անորոշ են և տեղի պիտի տան թյուրիմացության ու տարբեր հասկացողության: Լեզվի նախնական վիճակում չէր կարող այդպիսի բան լինել: Եվ արդարև, նույնիսկ այն լեզուների մեջ, ուր կան այդպիսի համանուն բառեր, եթե կատարենք լեզվական քննություններ և այդ համանունների ծագումը որոնենք, կգտնենք, որ քիչ հեռավոր անցյալում նրանք իրարից տարբեր հնչումներ ունեին:*

Այսպես, օրինակ, ֆրանսերեն sen *ձայնը «սուրբ» (saint) իմաստով գալիս է լատիներեն* sanctus *ձևից, «առողջ» իմաստով (sain)՝ լատիներեն* sanus *ձևից, «կուրծք» իմաստով (sein)՝ լատիներեն* sinus *ձևից, «ստորագրություն» իմաստով (seing)՝ լատիներեն* signum *ձևից, «ուրկան իմաստով (seine)՝ լատիներեն* sagena *ձևից, «տեսարան» scène իմաստով՝ հունարեն skênê ձևից և այսպես՝ մյուս բոլոր ձևերը, ինչպես նաև չինարենի հարյուրավոր համանունները*: Այս բոլորից հետևում է, որ համանունները լեզվի հետագա չրջաններում առաջացած երևույթներ են, արդյունք և գոյություն չէին կարող ունենալ ձայնավորների և բաղաձայնների զանազան փոփոխությանց նախալեզուների հորինման ժամանակ: Միևնույն բանը պիտի ասել նաև բազմանշության համար, այն է՝ միևնույն բառի տարբեր առումները, որոնք արդյունք են գաղափարների հետագա զարգացման, նոր պատկերավորությանց և այլն:*

4) Պայմանավորյալ կողմերի համար ընդհանուր լինելը մի այնպիսի կարևոր պայման է, առանց որի լեզուն գոյություն չպիտի ունենար. խոսողը ուրիշ բան պիտի ասեր, լսողը ուրիշ բան պիտի հասկանար: Այս հանգամանքից է առա-

* *Բնագրի այս հատվածի լուսանցքում մատիտով գրված է. «Լեզուն խուսափում է համանուններից և մին ջնջում է. վեր-վերև» (Ա. Գ.):*

ջանում լեզվի միությունը ամեն մի համայնքի մեջ, որ անհրաժեշտ պայման է: Ուրիշ խոսքով՝ լեզուն ընկերային երևույթ է, և անհատը ոչ իրավունք ունի հնարելու իր ուզածը և ոչ ուժ ունի ենթարկելու նրան իր ուզած ձևափոխության:

Իսկ թե մենք տեսնում ենք, որ լեզուները չարունակ փոփոխվում են և առաջ բերում չարունակ իրարից քիչ թե շատ տարբեր բարբառներ ու ենթաբարբառներ, մյուս կողմից էլ տեսնում ենք, թե ինչպես նորից ձգտում են նրանք միանալու, խառնվելու, ձուլվելու և մեկի վերածվելու: Առաջին երևույթը բնության օրենքների կույր գործադրության արդյունք է, երկրորդը՝ ընկերության գիտակից գործունեության արդյունք:

Առաջին երեք պայմանների գումարն է ներկայացնում այն հանգամանքը, որ լեզուն չի օգտագործել ձայնական բոլոր հնարավորությունները. ուրիշ խոսքով՝ իրրև արմատ կամ իրրև բառ չեն ընդունված այն բոլոր ձայնախմբերը, որ կարող էր կազմել մարդը: Եթե այսպես չլիներ, մենք պիտի ուննայինք բառերի կամ արմատների մի այնպիսի ահռելի թիվ, որ նույնիսկ ընդունակ չպիտի լիներինք հիշելու: Օրինակ առնենք միայն հայերենը: Մեր լեզվի մեջ ընդունված ձայներից վերցնենք թեկուզ միայն 5 ձայնավոր (ա, ե, ի, ո, ու) և 30 բաղաձայն (բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ): Վանկեր կազմելով միայն ա ձայնավորով, և երկու կողմ դրված մի-մի բաղաձայններով (բար, բագ, բադ և այլն), կունեննանք 30×30=900 վանկ, մյուս ձայնավորներով միասին՝ ընդամենը 4500 վանկ: Իսկ եթե թույլ տայինք այս միավանկների վրա մի-մի ձայնավոր ևս ավելացնել (բարա, բարի, բարո և այլն), կունեննանք 4500×5=22500 բառ: Զեմ ասում այլևս, թե ինչ կլիներ մեր վիճակը, եթե այդ բոլորի վրա մի-մի բաղաձայն ևս ավելանար, այն է՝ բարբար, բարագ և այլն (22500×30=675000):

Այս զարհուրելի քաոսի չի դիմել լեզուն, այլ, ընդհակառակը, նա բավականացել է չատ ավելի սահմանափակ թվով: Walde-Pokorny հնդևրոպական բառարանում նախալեզվյան բառերի ընդհանուր գումարը 2223 է, և այս թիվը դեռ չի ներկայացնում հնդևրոպական նախալեզվի արմատները ամբողջապես, այլ նրանցից չատերը աճած կամ ածանց ձևեր են ավելի սակավաթիվ արմատներից:

Ինչ որ ասացինք ձայնավորների համար, նույնը պետք է հասկանալ նաև գաղափարների համար: Կարելի է մարդկային գաղափարների թիվը անհունապես չատացնել: Տեսանք, որ արաբերենում 153 բառ կա «խմել» գաղափարի համար, գլխի պատռվածքի համար 14 բառ կա, էսկիմոսերենում «ձյուն» գաղափարի համար կա չորս բառ (Boas, Handbook of ind. lang., էջ 25). նստած ձյունը կոչված է aput, վերևից թափվելիս՝ qana, քամիների հոսանքով քշվածը՝ pigsirpoq, իսկ բուքը՝ qimuqsuq: Եթե մարդիկ այս ոճով չարունակեին, կարող էին մի գաղափարը անհունապես ընդարձակել և մի բառի տեղ չատ բազմաթիվ բառեր ստեղծել:

Օրինակ՝ ռուսերեն **пойти** *նշանակում է «ոտքով գնալ» և* **ехать** *«ձիով կամ կառքով գնալ», բայց կարելի է ավելացնել դեռ՝ «սայլով գնալ», «գնացքով գնալ», «նավակով գնալ», «նավով գնալ», «չոգենավով գնալ», «ջրի ափով գնալ» և այլն, և այլն, ինչքան որ ուզեք: Բայց այսքան «հարստությունը» չափազանց դժվար պիտի լիներ մարդկային մտքի համար, և մենք անկարող պիտի*

լինելինք հիշել այդ բոլորը: Դրա համար էլ յուրաքանչյուր լեզու, նայած տեղական պայմաններին ու պահանջներին, ստեղծել է առանձին բառեր իր կարևոր դատած գաղափարների համար, իսկ նրանց հարակիցները կամ մերձավորները կամ անտես է արել և կամ զանազան մասնիկներով կամ հարակից բառերով արտահայտել:

Օրինակ՝ կայուն կամ հոսուն ջրերի համար ունենք հայերեն ծով. լիճ. մոր (մօր), ճահիճ, գետ, առու, վտակ և սրանցից՝ ծովակ, լճակ. գետակ, առվակ, մեծ ծով, փոքր լիճ, բարակ առու, մեծ վտակ, պղտոր առվակ, հսկայական ծով, ծանծաղ մօր, լեռնային վտակ, բարձրադիր լճակ և այլն, և այլն, որոնց համար առանձին բառեր չկան: Տավարի զանազան աստիճանների համար, սկսելով ամենափոքրից, ունենք՝ **հորթ** «մեկ տարեկան ձագ», **մոզի** «երկու տարեկան հորթ», **երինջ** «երկու տարեկան էգ հորթ», **ցլիկ** «երեք տարեկան էգ հորթ», որ այլևս ցուլին մոտեցած լինելով՝ հաջորդ տարին ծնունդ պիտի ունենա, **կով, եզ, ցուլ, արջառ, տավար,** բայց չունենք «մեկ տարեկան էգ հորթ», «մեկ տարեկան արու հորթ» և այսպես յուրաքանչյուր տարվա համար՝ արու և էգ առանձին-առանձին, և նրանց երկու սեռերի համար ընդհանուր բառեր: Զանազան աստիճանների համար, սկսելով բարակ թելից, ունենք՝ թել, թելեղան, չաղամաթ, ասղանի, նարոտ, դևրձան, լար, առասան, առատուկ, աղավանդակ, չվան, թոկ, պարան, ճոպան, կառան, տղոն, մալախ և այլն, բայց չկան սրանց միջին զանազան աստիճանները, որ կարելի էր դևո շատ երկարել: Եզ ու կով, հովատակ և զամբիկ, խոյ և մաքի, աքլոր ու հավ, նղջերու և նղնիկ զանազանված են իրր արու և էգ, բայց կատու, առյուծ, վագր, փիղ, բադ և այլն արու և էգ չեն զանազանվում: Այսպես հասկանալ նաև բոլոր մյուս ընդհանուր և մասնավոր գաղափարների համար, որոնք յուրաքանչյուր լեզվի մեջ կազմում են միշտ մի սահմանափակ թիվ և միայն տեղական պայմանների ու պահանջների համեմատ կարող են լեզվից լեզու որոշ չափով ավելանալ ու պակասել՝ առանց հասնելու չափազանցության:

ԲԱՌԵՐԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բառերի քանակությունից տարբեր է բառերի գործածության քանակությունը կամ չափը, այսինքն՝ թե որևիցե բառ որչափ շատ գործածական է մեր լեզվի խոսակցության կամ գրականության մեջ:

Այս է որ կոչում ենք մի բառով **հաճախականություն:**

Անշուշտ ամեն մի մասնագիտություն ունի իր սեփական բառարանը, և ամեն մի խոսք պատվում է մի նյութի և նույն նյութին հարակից իրերի չուրջը, հղում է ու չարունակ կրկնում նույն բառերը: Այսպես, երբ մի դասախոս խոսի «սեռը լեզվի մեջ» նյութի մասին, բնականաբար չարունակ պիտի գործածե սեռ, լեզու, արական, իգական, չեզոք և նման բառեր: Երբ կարդանք մի բնախոսական գրվածք, բնականաբար չարունակ պիտի պատահենք այնտեղ մարմին, արյուն, թոք, սիրտ, ջիղ, շնչառություն և նման բառերի: Երբ կարդանք թվաբանական մի գրվածք, միշտ պիտի պատահենք թիվ, գումարել, հանել, բազմապատկել, հավասար, մեծ կամ փոքր, եզր, հավասարում, աստիճան և այլն բառերի: Այսպես նաև մյուս մասնագիտությունները:

Մի փոքրիկ գործնական օրինակ տալու համար առնենք Խորհրդային Հայաստան, 1927 փետրվարի 23 մի փոքր հոդվածը՝ «Կարմիր բանակի զորությունը» (Աչոտ Հովհաննիսյանի), որ բռնում է երկու կիսատ սյունակ, 165 տող, պարունակելով ընդամենը չուրջ 570 բառ: Այսքանի մեջ ունենք **բանակ** *բառը 16 անգամ, տնտեսական 6, ռազմական 5, նոր 5, մասսա 6, տեխնիկա 5, սոցիալիստական 9, բուրժուազիա 1, պրոլետարիատ 3, տերիտորիալ 1, իմպերիալիստական 3, դիսցիպլին 1, ինդուստրացում 2, կոոպերացիա 2, գեներալ 1, պարտիզան 1, բլոկադ 1, լոզունգ 2, կապիտալիստական 2, սիստեմ 1, կոմունիզմ 1:*

Բայց, այնուամենայնիվ, այս բոլոր մասնագիտություններն էլ, ուրիչ խոսքով մարդ էակը ընդհանրապես, իր խոսակցության մեջ ունի մի խումբ այնպիսի բառեր, որոնք սովորական և գործածական են ամեն դեպքում և մյուսներից ավելի:

Մարդկային մտքի հետազոտության և լեզվական ուսումնասիրության տեսակետից հետաքրքիր է անշուշտ իմանալ, թե որոնք են այն բառերը, որ մենք ամենից ավելի հաճախակի գործ ենք ածում մեր կյանքի մեջ:

Այս նյութի վրա մի աշխատանք է կազմել ամերիկացի մի կին (Helen Eaton), *որ չորս լեզվով կարդալով (անգլ., ֆրանս., գերմ. և սպան.) մի միլիոն բառ պարունակող գրականություն, կազմել է միաժամանակ չորս լեզուների մեջ էլ ամենից ավելի շատ գործածված առաջին 1000 բառերի ցուցակը* (Comparative frequency list. A study based on the first thousand words in English, French, Spanish and German frequency lists. 1934). *Այս աշխատանքը ես չեմ տեսել. ծանոթ է ինձ մի փոքր մատենախոսականից, որ հրատարակված է* BSL, 36, № 108, *էջ 7:*

Այսպիսի մի վիճակագրություն կազմելու համար անշուշտ ամենակարևորն այն է, թե ինչ բովանդակության գիրք կամ գրքեր պետք է բառաքաղել, որպեսզի արդյունքը ճիշտ լինի և միակողմանի չլինի, քանի որ, ինչպես քիչ առաջ ասացինք, ամեն մի մասնագիտություն ունի իր սեփական բառապաշարը: Քննադատը իր վերոհիշյալ մատենախոսականի մեջ հայտնում է, թե ամերիկուհին չի տվել իր բառաքաղած գրքերի ցանկը: Բայց ինչ էլ որ լինի, ընտրությունը բավական դժվար է, և միակողմանիության երկյուղը միշտ կա:

Այս միակողմանիությունից խուսափելու համար կարծում եմ, թե կա երկու միջոց. առաջին միջոցն այն է, որ բառաքաղենք ամեն տեսակ մասնագիտության պատկանող գրքերը, երկրորդ միջոցն է՝ բառաքաղել այնպիսի գրքեր, որոնց բովանդակությունը, որևէ նեղ մասնագիտությունից հեռու, վերաբերում է հասարակ և սովորական կյանքին, ինչպես պարզ լեզվով և ոչ շատ բանաստեղծական ոճով գրված մի վեպ:

Ամերիկուհին անշուշտ շատ երկար ժամանակ վատնած պիտի լինի իր ընտրած գրքերը կարդալու և բառաքաղելու համար: Ես նույն աշխատանքը շատ ավելի կարճ ժամանակում կատարելու համար որոշեցի բառաքաղել Աստվածաշունչը: Այս ընտրությունը կատարելու համար ես ունեի երկու պատճառ. 1) գիրքը, կարելի է ասել, գրված է միջակ ոճով, չունի այն վերամբարձ ոճը, որ իրրեև բարձր գրականության հատկանիշն է կազմում. 2) գիրքը թեև համարվում է ընդհանրապես կրոնական, բայց նա պարունակում է շատ գրական սեռեր՝ նա բացի կրոնականից է նաև պատմական, իրատական, բանաստեղծական, իմաստասիրական, ճանապարհորդական, ժամանակագրական, ճարտա-

բապետական, չինաբարական և այլն: Կարող ենք գտնել այնտեղ բազմաթիվ բույսերի, կենդանիների, քարերի անուններ և այլն: 3) Արդեն պատրաստ կա Թադեոս վրդ. Աստվածատրյանի Համաբարբառը (տպ. Երուսաղեմ, 1895), որ Աստվածաչնչի ամբողջական բառարանն է, և որի վրայից կարելի է կատարել վիճակագրություն անհամեմատ ավելի հեշտ ձևով և կարճ ժամանակում: Ինչ վերաբերում է բառաքաղված նյութերի քանակին, Աստվածաչունչը, անշուշտ, ոչ միայն պակաս չէ Հելեն Իտոնի (Helen Eaton.) բառաքաղած գրքերի քանակից, այլ մինչև իսկ կրկինն է: Հ. Իտոնը բառաքաղել է մի միլիոն բառ պարունակող գրականություն 4 լեզվով, որով յուրաքանչյուր լեզվին կընկնի 250,000 բառ: Աստվածաչունչը իր ամբողջության մեջ ունի կես միլիոն բառ, որ հաշվում ենք հետևյալ ձևով: Առնենք Վենետիկի 1860 թվի հրատարակությունը, որ ունի ընդամենը 1223 էջ: Հանելով այս թվից 229 դատարկ էջերը (ամբողջ գրքի մեջ), ցանկերը և նախագրությունները, կունենանք ընդամենը 994 էջ: Յուրաքանչյուր էջը ունենալով երկու սյունակ և յուրաքանչյուր սյունակը 54 տող, ընդամենը կունենանք 1988 սյունակ և 107,352 տող: Ամեն մի տողում միջին հաշվով դնելով 5 բառ, կունենանք ամբողջ Աստվածաչնչի մեջ ընդամենը 536,760 բառ:

Հաջորդ ցուցակի մեջ ընթերցողը պիտի գտնի Աստվածաչնչի մեջ ամենից հաճախ գործածված բառերը, որոնք թվով 266 հատ են: Ցուցակը կազմել եմ հետևյալ ձևով: Համաբարբառը յուրաքանչյուր բառի տակ դնում է Աստվածաչնչի մեջ պատահած բոլոր վկայությունները: Բայց այնպես, որ մի վկայությունը բռնի մի տող (բացառություններ, երբ վկայությունը մի տողից ավելի տեղ բռնի, չափազանց քիչ են): Համաբարբառի յուրաքանչյուր սյունակը ունի 60 տող, հետևաբար, երբ մի բառի վկայությունները բռնեցին մի սյունակ, ուրեմն վկայությանց թիվն է 60, այս համեմատությամբ պետք է հաշվել նաև ավելին: Ես իմ ցուցակի մեջ առել եմ միայն բառերը, որոնք Համաբարբառի մեջ առնվազը երեք լրիվ սյունակ վկայություն ունեն (այն է 180 անգամ գործածված): Ցուցակիս յուրաքանչյուր բառի դեմ դնում եմ մի թվանշան, որ դնում է 3-ից մինչև 70: Այս թվանշանները ցույց են տալիս, թե Համաբարբառի մեջ համապատասխան բառը քանի՞ սյունակ վկայություն ունի: Ցուցակիս թվանշանը բազմապատկելով 60-ով, կստացվի վկայությանց թիվը:

Բայց թվանշանների մոտ կան նաև ½, plus և minus նշանները. առաջինը նշանակում է 30 վկայություն. plus (+) նշանը՝ 15 վկայություն, իսկ minus (−) նշանը՝ 15 պակաս վկայություն: Օրինակ՝ ամ 9−(540−15=525 վկայություն), երկինք՝ 10+(600+15=615 վկայություն):

Համաբարբառը անշուշտ թերություններ ունի. Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանի մի քննադատությունից երևում է, որ մոռացումները բավական մեծ չափերի են հասնում: Մենք նկատեցինք, օրինակ, որ **ասել** և **բազում** բառերը չկան Համաբարբառի մեջ: Կարծում ենք, սակայն, որ հեղինակը դիտմամբ դուրս է դցել այս բառերը՝ նրանց թվի մեծությունից սոսկալով, ինչպես արել է նաև և, կամ, **թե, եթե, որ, զի, առանց, որպես, իբրև, այսչափ, այդչափ, այնչափ, որչափ, զօրէն, մինչև, ի վերայ, բայց** բառերի համար: Այս բառերը պետք է համարել լեզվի ամենից ավելի հաճախ գործածված բառերը:

աղգ	18	բազում	–	գորություն	13
աթոռ	3½	բան	14½	ըմպել	5
ածել	8	բանալ	3	ընդունել	5
ակն	4	բանակ	4	ընկեր	3
ահա	5½	բառնալ	4½	ընտրել	4
աղաղակել	4	բարիք	7	թագավոր	19
աղաչել	4	բարկություն	4½	թագավորել	4
աղօթք	6	բերան	6	թագավորություն	5
ամ	9	բերել	3½	թշնամի	8
ամբարիշտ	4	բնակիլ	8	թողուլ	9
ամիս	3	գալ	21	ժամ	3
այլազգի	4½	գէտ	3½	ժամանակ	10
այսօր	5	գինի	4	ժառանգել	3
այր	34	գիչեր	4½	ժառանգում	4
անապատ	6	գիտել	15	ժողովել	8
անասուն	3	գիրք	4	ժողովուրդ	34½
անիրավություն	4	գլուխ	8	իմաստութիւն	7
անկանիլ	10	գնալ	14	իմաստուն	4½
անձն	18½	գործ	10½	իշխան	12½
անուն	17½	գործել	7½	իշխանուհի	3 +
անցանել, ոտն	9½	գունդ	3	իջանել	
անօրէն	3	գտանել	9½	իջուցանել }	8½
անօրէնություն	5	գրել	6		
աչակերտ	4	դառնալ	12	իրավունք	6
աչխարհ	6	դատաստան	5	լեառն	10½
աչք	8½	դատել	4	լեզու	3
ապրիլ,- եցուցանել	6	դարձուցանել	6½	լինուլ	5
աջ	3	դնել	12	լոյս	4 +
առաջի	20½	դուռն	8½	լսել	27
առաջին	4	դուստր	8	խաղաղություն	7
առաւօտ	4	ելանել	24	խնդրել	12
առաքելիլ	14½	եկեղեցի	3	խորան	6
առնել	25	եղբայր	15½	խորհիլ	4 +
առնուլ	16½	երդնուլ	3	խորհուրդ	7
ասիլ*		երես	12½	խոսիլ	25
Աստուած, ք	26	երևիլ	4	ծածկել	4
արդար	6½	երթալ	14	ծառայ	16
արդարություն	7½	երկինք	10	ծառայել	3
արյուն	7	երկիր	45	ծեր	4
արծաթ	6½	երկնչիլ	6½	ծնանիլ	8
արկանել, իլ	6½	երկու	5	ծով	7
արձակել, իլ	6	եօթն	4	կալ (մնալ)	8
արտաքոյ,- քս	3	զավակ	4	կամիլ	8 +
արքայ	21½	զոհ	4	կատարել	4½
բազմություն	3	զորք	7½	կարել	5½

* Բնագրում թվանշան չկա (Ս. Գ.)։

(կարննալ)
կացուցանել 4½
կեալ 3 +
կեանք 6½
կենդանի 6½
կերակուր 3½
կին 19
կողմն 5
կոչել 12½
կոտորել 3½
կործանել 3 +
կորնչիլ 3
կորուսանել 4
համարել 4
հայիլ 5½
հայր 25
հանդերձ (չոր) 3
հանիլ 12
հասանել 9 +
հաստատել 7
հատուցանել 8
հարկանել 9
հարցանել 4
հաց 5½
հաւատք 4½
հաւատալ 5
հնթանոս 6
հոգի 7½
ոգի 4½
հուր 8
հրամայել 4½
հրաման 3
հրեշտակ 8
ձայն 9
ձեռն 31
ճանաչել 8 –
ճանապարհ 15
ճշմարտութիւն 5 –
մահ 7
մայր 5½
մանուկ 4½
մատնել 6
մատուցանել 7
մատչիլ 3½
մարգարէ 8
մարդ, իկ 18
մարմին 8½
մեծ 5½
մեծամեծ 4
մեղանչել 4
մեղք 9 +
մեռանիլ 11½
մերժել 3
մերձենալ 4
միտք 6
մնալ 4
մտանել 19½
յառնել 9½
յաւիտեան 7½
յիշել, իչուցանել 5 +
յուսալ 4
նեղութիւն 4
ննջել 3½
նչան 3½
նստիլ 9
չինել 8½
չնորհ 5
չրջիլ 4
ողորմութիւն 6 –
ողջակէզ 4½
ոչխար 3
ոսկի 7½
ոտն 6 +
որդի 70
ուխտ 6
ունել 8
ուտել 14
ուրախ 4½
ուրախութիւն 4
չար,- իք 11
չարութիւն 3

պահել 9½
պաչտել 3½
պատասխանի 8
պատարագ 4½
պատերազմ 9
պատմել 10 +
պատուիրան 4½
պատուիրել 6 –
պատրաստել 4
պարիսպ 4 –
պղծել 4 –
պտուղ 4 +
ջուր 12
սահման 4 +
սատակել 7½
սեղան 8½
սէր 3
սիրել 6 –
սիրտ 20
սկսել 4 +
սուր 6
սուրբ 8
սպանանել 7
սրբել 5½
սրբութիւն 8½
սրտմտութիւն 4 +
վաղվաղակի 5 +
վէմ 3
վկայութիւն 6½
տալ 29 –
տուեալ լինել 1½
տաճար 6½
տանիլ 4 +
տապանակ 3
տեղի 6½
տեսանել 29
աեսիլ 3½
Տր Ած 20 –
տուն 31½
ցեղ 4½
ցուցանել 4½
փախչել 3½
փայտ 4
փառք 9
փոխանակ 5½
փրկել 8
փրկութիւն 5
քահանայ 12 +
քահանայապետ 3
քաղաք 25 +
օտար 3
օր 21
օրէնք 11
օրհնել 9
օրհնութիւն 3

Դնում եմ այստեղ նույն ցուցակը բառերի հաճախության կարգով: 3,3 + 3½, 3¼ (այն է 180–195 վկ.)

աթոռ
ամբարիշտ
ամիս
անասուն
անօրէն
աջ
արտաքոյ,- քս
բազմութիւն
բանալ
բերել
գնտ
գունդ
նկեղեցի
նրդնուլ
դավակ
ընկեր
ժամ
ժառանգել
իշխանութիւն
լեղու
ծառայել
կնալ
կերակուր
կոտորել
կործանել
կորնչիլ
կորուսանել
հանդերձ
հատուցանել
մատչիլ
մերժել
ննջել
նշան
ոչխար
չարութիւն
պաշտել
պարիսպ
պղծել
սէր
վաղվաղակի
վէմ
տապանակ
տեսիլ
փախչիլ
փայտ
քահանայապէտ
օտար
օրհնութիւն
4-ից 6 — (240–345 վկ.)
ակն
ահա
աղաղակել
աղաչել
այլազգի
այսօր
անիրաւութիւն
անօրէնութիւն
աչակերտ
առաջին
առաւօտ
բանակ
բառնալ
բարկութիւն
գինի
գիշեր
գիրք
դատաստան
դատել
նրևիլ
նրկու
նօթն
զոհ
ըմպել
ընդունել
ընտրել
թագաւորել
թագաւորութիւն
ժառանգութիւն
իմաստուն
լնուլ
լոյս
խորհիլ
ծածկել
ծնր
կատարել
կարել
կացուցանել
կողմն
համարել
հայիլ
հարցանել
հաց
հաւատք
հաւատալ
հրամայել
ճշմարտութիւն
մայր
մանուկ
մեծ
մեծամեծ
մեղանչել
մերժննալ
մնալ
յիշել
յուսալ
նեղութիւն
չնորհ
չրջիլ
ողորմութիւն
ողջակէզ
ուրախ
ուրախութիւն
պատարագ
պատուիրան
պատուիրել
պատրաստել
պտուղ
սահման
սիրել
սկսել
սրբել
սրտմտութիւն
տանիլ
ցեղ
ցուցանել
փոխանակ
փրկութիւն
6-ից մինչև 10 — (այն է՝ 360–585)

ածել
աղօթք
ամ
անապատ
անցանել
աչխարհ
աչք
ապրիլ
արդար
արդարութիւն
արիւն
արծաթ
արկանել
արձակել
բարի
բերան
բնակիլ
գլուխ
գործել
գտանել
գրել
դարձուցանել
դուռն
դուստր
երկնչիլ
դօրք
թշնամի
թողուլ
ժողովել
իմաստութիւն
իջանել
իրաւունք
խաղաղութիւն
խորան
խորհուրդ
ծնանել
ծով
կալ
կամիլ
կնանք
կենդանի
հասանել
հաստատել
հարկանել
հնձանոս
հուր
հրաման
հրեչտակ
ձայն
ճանաչել
մահ
մատնել
մատուցանել
մարգարէ
մարմին
մեղք
միտք
յառնել
յաւիտեան
նստիլ
չինել
ոսկի
ոտն
ուխտ
ունել
պահել
պատասխանի
պատերազմ
սատակել
սեղան
սուր
սուրբ
սպանանել
սրբութիւն
վկայութիւն
տաճար
տեղի
փառք
փրկիլ
օրհնել
10-ից մինչև 20 (20 չառած) (այն է՝ 600-1200 վկայություն)
ազգ
անկանիլ
անձն
անուն
առաքել
առնուլ
բան
գիտել
գնալ
գործ
դառնալ
ղնել
եղբայր
երես
երթալ
երկինք
դօրութիւն
թագաւոր
ժամանակ
իչխան
լեառն
խնդրել
ծառայ
կին
կոչել
հանել
հոգի, ոգի
ճանապարհ
մարդ
մեռանիլ
մտանել
ուտել
չար
պատմել
ջուր
քահանայ
օրէնք
20-ից մինչև 30 (այն է՝ 1200-1800 վկ.)
առաջի 20½
առնել
արքայ
գալ
եյանել
լսել
խօսիլ
հայր
սիրտ 20
տալ
տեսանել
քաղաք
օր

Այս հաշվով ամենաշատ գործածված բառերն են՝ որդի (4200), Աստուած (2745) և երկիր (2700): Բայց այս բառերի մեջ նկատելի է, որ՝ որդի բառը շատ անգամ հատուկ անվան փոխարեն է գործածվում. այսպես Որդի Մարդոյ, կամ Որդի Աստուծոյ՝ իբր «Քրիստոս», Որդիք Իսրայելի «իսրայելցիք», ինչպես և բոլոր սեմական ցեղերի անունները: Մի առ մի հաշվելով և դուրս հանելով այս կարգի որդի-ները, կունենանք զուտ «որդի» նշանակությամբ ընդամենը 2527 վկայություն:

Երկիր բառը թեև ունի 45 այլնական, բայց սրանցից 3½ երկիր պագանել ոճի մեջ է գործածված, որ առանձնացնելով՝ երկիր բառի համար կունենանք 41½ (=2475 վկայություն):

30-ից վերև (1800 և ավելի վկ.)
այր 34 (2040 վկ.)
երկիր 45 (2700 վկ.)
ժողովուրդ 34½ (2070 վկ.)
ձեռն 31 (1860 վկ.)
որդի 70 (4200 վկ.)
տալ 30 + (815 վկ.)
Աած 46 – (2745 վկ.)
տուն 31½ (1875 վկ.)

Վերոհիշյալ ցուցակի 266 բառերը դասակարգել ավելորդ և թերևս աննպատակ համարելով՝ բավականանում ենք տալով մի քանի խմբեր միայն: Բայեր: Ածել 8, աղաղակել 4, աղաչել 4, անկանիլ 10, անցանել 9½, ապրիլ 6, առաքել 14½, առնել 25, առնուլ 16½, ասել ?, արկանել 6½, արձակել –6, բանալ 3, բառնալ 4½, բերել 3½, բնակիլ 8, գալ 21, գիտել 15, գնալ 14–, գործել 7½, գտանել 9½, գրել 6, դառնալ 12½, դատել 4, դարձուցանել 6½, դնել 12, ելանել 24, երդնուլ 3, երևիլ 4, երթալ 14, երկնչիլ 6½, ըմպել 5 +, ընդունել 5½, ընտրել 4½, թագադրել 4½, թողուլ 9, ժառանգել 3 +, ժողովել 8, իջանել 8½, լնուլ 6, լսել 27, խնդրել 12, խորհիլ 4, խօսիլ 25, ծածկել 4, ծառայել 3, ծնանիլ 8, կալ 8, կամել 8 +, կատարել 4½, կարել 5½, կացուցանել 4½, կնալ 3 +, կոչիլ 12½, կոտորել 3½, կործանել 3 +, կորնչել 3, կորուսանել 4–, համարել 4, հայել 5 +, հանել 12, հասանել 9 +, հաստատել 7, հատուցանել 3, հարկանել 9, հարցանել 4, հավատալ 6–, հրամայել 4½, ճանաչել 8–, մատնել 6, մատուցանել 7, մատչիլ 3½, մեղանչել 4, մեռանիլ 11½, մերժել 3, մերձենալ 4, մնալ 4, մտանել 19½, յուսանել 9½, յիշել 6 +, յուսալ –4, ննջել 3½, նստել 9, չինել 8½, չրջիլ 4, ունել 8, ուտել 14, պահել 9½, պաչտել 3½, պատմել 10 +, պատուիրել 6–, պատրաստել 4, պղծել 4–, սատակել 7½, սիրել 6–, սկսել 4 +, սպանանել 7, սրբել 5½, տալ 38 +, տանել 4 +, տեսանել 29, ցուցանել 4 +, փախչել 3½, փրկել 8, օրհնել 9:

Կրոնական բառեր: Աղօթք 6, Աստուած 46–, եկեղեցի 3, երդնուլ 3, երկինք 10 +, ոգի 4 +, խորան 6, հավատք 4½, հավատալ 6–, հնձանոս 6, հրեշտակ 6, մարգարե 8, մեղանչել 4, մեղք 9 +, ողջակեզ 4½, ուխտ 6, պաչտել 3½, պատարագ 4½, սեղան 8½, սուրբ 8, սրբել 5½, սրբութիւն 8½, վկայութիւն 6½, տաճար 6½, տապանակ 3, քահանայ 12 +, քահանայապետ 3, օրհնել 9, օրհնութիւն 3:

*Կրոնական բառերի այսքան փոքր քանակը ցույց է տալիս այն, ինչ որ ասցինք նաև վերևում, թե Աստուածաչունչը՝ թեև կրոնական գիրք, բայց նաև աշխարհական կյանքի ընտիր աղբյուր է և բառերի վիճակագրության համար չատ հարմար: Նրանք, որոնք զուտ աշխարհական կյանք են ուզում առնել ի նկատի, կարող են այս բառերը չեղյալ համարել: Բայց միևնույն ժամանակ ի նկատի պետք է ունենալ, որ կրոնական համարված այս բառերի մի մասը նաև աշխարհիկ բովանդակություն ունի: Օրինակ՝ երդնուլ (երդվում եմ, ֆր. je vous jure՝ ճշմարիտ եմ ասում իմաստով), երկինք, խորան («վրան» իմաստով), հաւատալ հնթանոս («օտար աղգեր»), հրեչտակ («պատգամավոր» իմաստով), մեղանչել («վնասել» իմաստով), մեղք («հանցանք». ինչպես՝ ես մեղք չունեմ), պաշտել (ծառայել), պատարագ (նվեր), սեղան (սովորական ճաշի սեղան), սուրբ (մաքուր), սրբել (մաքրել), վկայութիւն (կրոնական իմաստով է միայն Հրևից վկայության խորանը), տաճար (սեղանատուն): Ընդհակառակը, կրոնական իմաստ ունեն **որդի** բառը՝ Որդի Աստուծոյ կամ Որդի Մարդոյ ձևի մեջ և **նշան** («հրաշք» իմաստով):*

Մարդու մարմինը: *Ակն, անձն, աչք, աջ, արիւն, բերան, գլուխ, երես, լեզու, ձեռն, մարմին, ոտն, սիրտ:*

Ուտելիք և խմելիք: *Գինի, ըմպել, կերակուր, հաց, ուտել, պտուղ, ջուր:*

Կարասիք: *Աթոռ, սեղան:*

Ժամանակ: *Ամ, ամիս, այսօր, առաւօտ, գիշեր, ժամ, ժամանակ, յաւիտեան, օր:*

Ընտանիք: *Այր, անձն, դուստր, եղբայր, զաւակ (ծառայ), կին, հայր, մայր, մանուկ, մարդ, որդի:*

Պետություն և պատերազմ: *Ազգ, այլազգի, արքայ, բանակ, գունդ, դատաստան, դատել, երկիր, զօրք, թագաւոր, թագաւորել, թագաւորութիւն, թշնամի, ժողովուրդ, իշխան, իշխանութիւն, իրաւունք, պատերազմ, պարիսպ, սուր:*

Ածականներ: *Ամբարիշտ, անօրէն, առաջին, արդար, բազում, բարի, իմաստուն, ծեր, մեծ, մեծամեծ, ուրախ, չար, սուրբ, օտար:*

Տեղ: *Անապատ, աշխարհ, առաջի, արտաքոյ (արտաքս), գետ, երկիր, լեառն, ծով, կողմն, ճանապարհ, պարիսպ, սահման, տեղի, քաղաք:*

Կենդանի: *Անասուն, կենդանի, ոչխար:*

Մետաղներ: *Արծաթ, ոսկի:*

ԲԱՌԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Որովհետև մենք մեր թե ձեռագիր և թե տպագիր գրության մեջ, գրված կամ տպված նախադասություններում միշտ տեսել ենք բառերը իրարից առանձին ու անջատ, մեր գիտակցության մեջ կազմվել է բառերի անջատ գոյության, այսինքն՝ անհատականության գաղափարը:

Շատ գիտնականներ կարծում են, որ սա մի ենթակայական գաղափար է, որ արդյունք է գիտական տրամաբանական դատողության և մեր մեջ ընդունած գրչական սովորության: Իրապես, խոսողի մտածողության մեջ բառերը առանձին գոյություն չունին, և կան միայն նախադասություններ: Նույնիսկ առանձին գործածված մի հատիկ բառը մի նախադասություն է, իբրև մի առանձին միտք:

Արդարև, նթե կան լեզուներ, որոնք բառերը անջատելու սովորություն ունեն, կան նաև լեզուներ, որոնք այդ սովորությունը չունեն և ամբողջ նախադասությունը գրում են միահար: Այսպես են հին հայերեն և հին հունարեն ձեռագրերը:

Հին պարսկական բևեռագրությանց մեջ ամեն մի բառ անջատվում է նախորդից Y նշանով, իսկ սանսկրիտ լեզվում ամբողջ նախադասությունը իբրև մի բառ է գրվում: Այսպես նաև լատիներեն ձեռագրերում, ամեն մի բառ անջատվում է միջակետով:

Կորևական լեզվով գրելու ժամանակ երկու ձևերն էլ ընդունված են. կամ բառերը գրում են իրարից անջատ և կամ իրար միացած: Սրա համար էլ առանձին կանոն չկա. մեծ մասամբ գրում են երկրորդ ձևով (Холодовичъ, էջ 15): Կան այբուբեններ էլ, որոնց մեջ այս կամ այն տառը բառասկզբում և բառամիջում ուրիշ ձև ունի, իսկ բառավերջումն էլ ուրիշ, որով բառի անջատ գոյությունը հասկացվում է: Այսպես՝ հունարենում ս (s) ձայնը առաջին դեպքում գրվում է σ, երկրորդ դեպքում՝ ς: Արաբերենի, ինչպես նաև արաբական տառերը գործածող բոլոր լեզուների, ինչպես և ասորական, մոնղոլական, պահլավական լեզուների մեջ, ինչպես հայտնի է, գրչության մեջ կա տառերը կրճատելով իրար կպցնելու սովորությունը: Սա ոչ թե լոկ խնայողության համար է, այլև նպատակ ունի ամեն մի բառը նախադասության մեջ անջատել և իբրև առանձին միություն ցույց տալ: Ըստ այսմ, ամեն մի բառի տառերը կցվում են իրար, իսկ վերջին տառը մնում է առանց հաջորդի հետ կապակցության. այսպիսով նախադասության բոլոր բառերը ներկայացնում են մեզ իրարից բոլորովին անջատ:

Գրեթե նույն բանը մենք էլ կատարում ենք ձեռագրի մեջ, ուր բառի բոլոր տառերը կպցնում ենք իրար իբրև մի ամբողջություն: Ինչ վերաբերում է բառերի միացման, այսօր մեզ մոտ թեև սովորություն է բառերը անջատել իրարից, բայց մեր հին ձեռագրերում (ինչպես ուրիշ ազգերի էլ) ամբողջ նախադասությունը միահար էր գրվում և. այդ պատճառով էլ հաճախ սխալ ընթերցման տեղիք տալիս:

Օրինակ, Ընդդեմ հերձուածոց ձեռագրում գրված է **այսքանկարէ**, *որ հրատարակել է Ե. վ. Տեր-Մինասյանը՝* **այսք անկար է**. *մի նախադասություն, որ ոչ մի իմաստ չունի, և ըստ Դուրեան, Ուսումն., 204, պետք է կարդալ* **այսքան կարէ**: *Նույնպես՝* **Կնիք Հավատոյ** *(Հրտր. Կարապետ Եպս. Տ. Մկրտչեան, Էջմիածին, 1914, էջ 54, տող 32)՝* **իսկարիոս**. *ըստ Դուրեան, Ուսումն., 377, պետք է կարդալ՝* **իսկ Արիոս**: *Այժմ էլ շատեր թեև տպագրության ժամանակ գրում են* **ասում է, գրում է**, *բայց ձեռագրի մեջ գրում են* **ասումէ, գրումէ**:

Այս գաղափարի պաշտպանության համար իբրև լավագույն օրինակ են ծառայում տգետների գրությունը ֆրանսերեն և նման լեզուներից: Օրինակ, տգետը գրում է ֆրանսերեն՝ lé zome vien til? *կամ* lezome vientil?՝ *փոխանակ գրելու՝* les hommes viennent ils?: *Այստեղ ոչ միայն բառերը չեն բաժանված իրարից, այլև բառի մի կեսը կտրված միացված է հաջորդի հետ: Նույնպես, երբ մենք ուշադրությամբ լսենք մի օտար, անծանոթ լեզվով խոսակցություն, կարող ենք հեշտությամբ զգալ, թե ո՛ւր է վերջանում նախադասությունը և սկսում մի նորը, բայց չենք կարող ամենևին որոշել, թե ո՛ւր վերջացավ բառը, և ուր սկսվեց նորը:*

Այսպես նաև մեր սովորական խոսակցության մեջ, ուր նախադասությունից նախադասություն թեև կա դադար, բայց բառից բառ ոչ մի դադար չկա: Բոլոր բառերը թվում են մեզ իբրև մի միահար ամբողջություն, իբրու անբնդհատ շարահարություն: Սրանից հետևում է նույնպես, որ մեր մեջ կա նախադասության անկախության գիտակցությունը, բայց բառի անհատական գոյության գիտակցությունը չկա: Ոմանք քերականագետներ այնպես են տոգորված այս գաղափարով, որ նույնիսկ դպրոցական քերականության մեջ սկսում են սովորեցնել լեզուն ամբողջական նախադասություններով և հետո իջնում են բառերի (տե՛ս BSI, № 111, էջ 90)*: Այս կարծիքը ձայնաբանների ընդունած կարծիքն է, որ անչուշտ իրավացի է ձայնական կամ լսողական տեսակետով: Արդարև, ամեն մի նախադասություն, դադարից դադար, կազմում է ձայների անբնդհատ մի շարահարություն և բառից բառ որևէ անջատում չկա: Դրա համար, երբ մեկը արտասանեն* **ձուկ ուտեմ** *կամ թե* **ձու կուտեմ,** *լսողի համար միևնույն է, և* **ձուկ առնեմ** *կամ* **ձու կառնեմ:**

Բայց բառի էությունը միայն ձայնից չէ կազմված, այլ նաև մի գաղափարից, որի ներկայացուցիչն է, և այն առնչությունից, որով կապվում է մյուս բառի կամ բառերի հետ: Լեզվաբանի համար յուրաքանչյուր բառ՝ իբրև մի գաղափարի ներկայացուցիչ, ունի իր անկախ գոյությունը: Պետք է, սակայն, այստեղ էլ տարբերություն դնել այն բառերի մեջ, որոնք բնավ անջատորեն չեն ըմբռնվում, և այն բառերի միջև, որ կարող են նաև անջատ գործածվել: Իրոք, տգետը գրում է le zome vien til? *կամ* lezome vientil?, *բայց նա չի գրում* lezo mvie ntil?: *Նշանակում է, թե նրա համար* lezome*-ը մի անկախ գաղափար է և* vientil*-ը՝ ուրիշ անկախ գաղափար, որոնք չեն կարող իրար հետ խառնվել, այլ միայն միանալ:*

Եթե բառերի անջատ ըմբռնողությունը բոլորովին գոյություն չունենար մարդկային մտքի մեջ.

1) կարելի չպիտի լիներ կազմել այնպիսի տեղափոխություններ, ինչպես, օրինակ, հետևյալ նախադասության մեջ.

Պողոսը նիրում է Պետրոսին.
Պողոսը Պետրոսին սիրում է.
Սիրում է Պողոսը Պետրոսին:

2) Նախադասության մեջ ամեն մի բառ ունի մի չեչտ (կամ մի տոն)՝ գլխավոր կամ երկրորդական, որ ազդում է բառի այսինչ կամ այնինչ քանակի վրա: Նույնիսկ նախահար կամ վերջահար բառերը, որոնք դրկված են չեչտից, որոշ պարագաներում կարող են նորից չեչտ ստանալ, երբ խոսողը ցանկություն ունենա առանձին ուշադրություն հրավիրել նրանց վրա: Եթե բառի միության գիտակցություն չլիներ, յուրաքանչյուր բառ առանձին չեչտ (կամ տոն) չպիտի ունենար, այլ կամ ամբողջ նախադասությունը միայն մի չեչտ պիտի ունենար, և կամ մի բառի մեջ մի քանի չեչտեր պիտի գոյություն ունենային միաժամանակ, օրինակ՝ **քաջ** *և* **արթուն** *առանձին բառեր են, որոնք իրար հետ բարդվելով կարող են տալ* **քաջարթուն,** *որ նույնպես առանձին բառ է: Արդ, իրարից տարբեր են* **քա՛ջ, արթո՛ւն մարդ է** *և* **քաջարթո՛ւն մարդ է** *(առաջինը երկու չեչտով երկու*

բառ, երկրորդը մի չնչտով մի բառ): Շնչտը, այսպիսով, դառնում է բառերի բաժանարար նշան և որոշում է նրանց անհատականությունը: Այս պատճառով է նաև, որ եթե **ձու կուտեմ**-*ը և* **ձուկ ուտեմ**-*ը մեզ վրա նույն տպավորությունն են թողնում, ոչինչ չենք հասկանում, եթե մեկը ասի՝* **ձուձուկսեր,** *բայց իսկույն ըմբռնվում է, որ բառի անհատականությունը չնչտելով՝ ասի՝* **ձո՛ւ, ձո՛ւկ, սե՛ր:**

3) Երբ նախադասության մեջ ուզում ենք դնել դադար կամ դադարներ չնչի կարճության պատճառով, բառերը կամ ավելի իմանալի դարձնելու համար և կամ մեր մտածողության ճանապարհ գտնելու նպատակով, դադար ենք դնում ո՛չ թե բառերի կեսերքում, այլ միշտ բառերի վերջում, որից հետևում է թե կա՛ մեր մեջ բառի միության գիտակցություն:

4) Զանազան լեզուների մեջ ձայնական փոփոխության օրենքները ուսումնասիրելիս տեսնում ենք, որ բառամջը տարբեր ձայնափոխության [ավելի] ենթակա է, քան բառասկիզբը կամ բառավերջը. սրանից հետևում է, որ մարդու գիտակցության մեջ կա ո՛չ միայն բառի անջատ գոյության գաղափարը, այլև նրա սկզբի, միջին մասի և վերջի:

5) Հաճախ խոսակցության մեջ պատահում է, որ խոսակիցը մեր խոսքը ամբողջովին հասկացած չէ լինում և կարիք է զգում թերի հասկացած կետերը լուսաբանելու հարցեր տալ: Սովորաբար այդ հարցերը ամբողջական նախադասություններով են լինում, բայց հաճախ պատահում է, որ հարցերը կատարվեն անջատ բառերով: Օրինակ.

Այսօր Սերոբը երկու հավ է գողացել: Խոսակիցը հարցնում է՝ Սերոբը – այսօր – երկու հավ – գողացե՞լ է:

Կամ՝

Ո՞վ – Սերոբը.
Ե՞րբ – այսօր.
Ի՞նչ է գողացել, ի՞նչ – երկու հավ.
քանի՞ – երկու...

Երբեմն էլ խոսակիցը պատասխանում է խոսողին շատ լակոնական ձևով: Օրինակ՝ – Եթե վաղը ռոճիկներս ստանանք, միասին գյուղ կգնանք, այնպես չէ՞. – Եթե:

Կամ՝

– Պիտի գնամ, ամեն ինչ պիտի բացատրեմ և պահանջներս պիտի ստանամ:
– Պիտի՞...:

Այս օրինակների մեջ տեսնում ենք, որ նույնիսկ այնպիսի բառեր, որոնք, իբր երկրորդական, անկախ գոյություն չունեն, գործածվում են առանձին: Այսպես նաև հետևյալ խոսքերի մեջ՝ **Մեջտեղը** *մի և կա. Առանց* **բայցի** *չի լինում և այլն:*

6) Եթե տգետների կամ սպենկրիտ գրության և կամ հին հայ ձեռագրերի միահար գրչության եղանակը իրրև ապացույց բերվի անջատ գրչություն ունենալու դեմ, այն ժամանակ մենք կարող ենք հիշել պատկերագիր գրությունները (եգիպտական, չինական և այլն), որոնք յուրաքանչյուր բառի համար դնելով մի նշան, ապացուցանում են, որ բառը իրենց համար ունի անկախ գոյություն:

Նույնիսկ այսօր երբ համրերը խոսում են դանադան չարժուձևերով, մի բառին տալիս են մի նչան:

7) Կան մարդիկ, որ սովորություն ունեն խոսակցության միջոցին ըրը՛ անելով պատրաստություն տեսնել հաջորդ բառերի արտասանության համար: Այդ ը-երը (եթե խոսողը կակաղ չէ) դրվում են միայն բառերի վերջում և ո՛չ թե կեսերքին, ինչ որ ապացույց է, թե նրա մտածողության մեջ բառը գոյություն ունի իբրև մի ամբողջություն

Այսպիսի մի փորձ կատարեցի ես մեր համալսարանի դասախոսներից Ա. Քալանթարի վրա, որ պաշտոնական և հանդիսավոր խոսակցությանց ժամանակ սովորություն ունի հաճախ ըրըը-եր դնել բառերի միջև: Հնագիտական պեղումների մասին մի զեկուցում էր, որ տևեց 85 րոպե, որի ժամանակ գործածեց 305 ըրը՛ր, այսինքն՝ մի րոպեում մոտավորապես 3½ անգամ կամ, որ նույնն է, յուրաքանչյուր 17 վայրկյանում մի անգամ: Այս ըրը՛-երի գործածությունը տեղի ունեցավ հետևյալ հանգամանքներում.

1. Այսինչ կամ այնինչ անձի անունը հիշատակել ուղելով և անմիջապես չհիշելով՝ գործածեց ըրը՛ — 12 անգամ:

2. Մի բառ ասելուց հետո՝ գտնելով, որ դա սխալ է, փնտրեց և դրավ նորը կամ ուղիղը, այս առթիվ գործածած ըրը՛ — 19 անգամ:

3. Պարբերությունը վերջացնելուց հետո և մի րոպորովին նոր պարբերություն սկսելու ժամանակ, իբր մտքերը հավաքելու միջոց գործածված ըրը՛-եր — 4 անգամ:

4. Նախադասությունը ամբողջացնելու նպատակով վերջին բառը փնտրելու համար գործածված ըրը՛-եր — 77 անգամ:

5. Ածականը ասելուց հետո գոյականը փնտրելու համար՝ 39 անգամ:

6. Հատկացուցիչը դնելուց հետո հատկացյալը փնտրելու համար՝ 7 անգամ:

7. Իր, նրա ստացական ածականից հետո հաջորդ գոյականը փնտրելու համար՝ 8 անգամ:

8. Այո, ահա, այս, այդ, այն ցուցականներից հետո գոյականը փնտրելու համար՝ 26 անգամ:

9. Նոր նախադասություն սկսելու ժամանակ՝ ահա, և, որովհետև, բայց, որ բառերից հետո ամբողջ մնացյալ նախադասությունը ձևակերպելու համար՝ 99 անգամ:

10. Բարդ բառերի մեջտեղում երկու եղրերը իրարից բաժանելով (այսպես՝ չրջա...ըրը՛... պարիսպը, կավա...ըրը՛... չերտի, կավա...ըրը՛... չաղախ)՝ 3 անգամ:

11. Բառի առաջին վանկից հետո ձայնավորի սխալը ուղղելու համար, այսպես (չը...ըրը՛... չինարարություն)՝ 1 անգամ:

Այս վերջին մի դեպքը, իբր դուտ սխալման արդյունք, դուրս ձգելով՝ մնացյալ 304 դեպքերը կարելի է բաժանել հետևյալ ձևով. № № 1, 2, 5, 6 ապացույց են բառի անկախ գոյության, նույնիսկ այնպիսի դեպքերում, երբ ածականը գոյականի հետ կամ հատկացուցիչը հատկացյալի հետ մի ամբողջություն պիտի կազմեն: № 3, ըստ երևույթին, ապացույց պիտի լիներ նախադասության անկախ գոյության, բայց որովհետև ո՛չ թե նախադասությունից նախադասություն է տեղի ունեցած ընդհատումը, այլ պարբերությունից պարբերություն, ուստի ոչինչ չի ապացուցանում: № 4 ապացույց է բայի՝ իբրև անկախ բառի գոյություն: № 7

և 8 չափազանց բնորոշ են և ցույց են տալիս, որ նույնիսկ ստացական, ցուցական և նման բառերը, որոնք բոլորովին անանջատ մասն են կազմում գոյականների և նրանց հետ իբր մի բառ էլ կարող են գրվել (տունս, տունդ, տունը և այլն), նույնիսկ դրանք մարդկային մտքի համար անջատ գաղափարներ են:

№ 9, եթե նույնիսկ ուզենանք իբրև ապացույց գործադրել այն բանի համար, թե գլխավոր նախադասությունը մի ամբողջություն է կազմում, միաժամանակ և ամենի գորավոր ապացույց է այն բանի համար, թե **ահա, և, բայց** և այլն չաղկապներն անգամ անկախ գոյություն ունեն մարդկային մտածողության մեջ:

Ամենից ավելի վճռական արժեք ունի № 10: Եթե խոսողը բարդության երկու եղրերը բաժանում է իրարից այդպիսի երկար դադարով և փնտրում է երկրորդ եղրը, նշանակում է, թե բացարձակապես ընդունում է բառերի անջատ գոյությունը և նույնիսկ ծածկված դևպքերում աշխատում է գտնել այն:

Շատ լեզուներ բառի նախաձայնի և վերջաձայնի համար ունեն որոշ կանոններ:

Օրինակ, հայերենի մեջ **ը, ո, ղ** բաղաձայններով կարելի չէ բառ սկսել, մինչդեռ բառամեջն ու բառավերջը ազատ է. օր.՝ **տաը, տաո, տաղ:**

Նույնպես հայերենի մեջ բառասկզբում կարելի չէ երկու բաղաձայն միասին արտասանել, այլ միշտ մեջտեղը մի ձայնավոր է մտնում. օրինակ՝ **գրել** (այս պարագային արաբերենը ձայնավորը բառասկզբին է դնում. օրինակ Platon > էֆլաթուն), մինչդեռ բառավերջում կարելի է, օրինակ՝ **հարս, հարց, գանձ, ամպ** և այլն:

Ջինարենում և ուրիշ շատ լեզուների մեջ բառը կարող չէ վերջանալ բաղաձայնով, այլ միայն ձայնավորով, մինչդեռ բառասկզբում բաղաձայն միշտ կարող է գտնվել և այլն, և այլն: Այս բոլոր զանազանությունները, որոնք բառի սկիզբը և վերջն են որոշում, որոշում են նաև բառը իբրև անջատ միություն, ինչ որ չպիտի տեղի ունենար, եթե բառը ոչ թե անջատորեն, այլ միայն ամբողջական նախադասությամբ միայն ըմբռնվեր (Die Sprachfamilien, էջ 288–309):

Ալթայական և ուգրո-ֆիննական լեզուների մեջ կա բառերի ներդաշնակության օրենքը: Ձայնավորները բաժանվում են երկու կարգի՝ ծանր և թեթև. եթե բառի առաջին վանկը ունի ծանր ձայնավոր, նույն բառի բոլոր ձայնավորներն էլ ծանր են լինում, իսկ եթե առաջին վանկը թեթև ձայնավոր է, նույն բառի մնացյալ բոլոր վանկերն էլ ունենում են թեթև ձայնավոր: Նույնիսկ մասնիկները, հոլովական և բայական վերջավորությունները լինում են միշտ երկու կարգի՝ ծանր և թեթև. ծանր բառերի վրա դրվում է ծանր մասնիկ, թեթև բառերի վրա դրվում է թեթև մասնիկ:

Առնենք մի օրինակ մեզ ծանոթ թուրքերենից:

Թուրքերենը ունի 8 ձայնավոր, որոնցից ծանր են a, ə, o, u, որոնց համապատասխան թեթևներն են՝ e, i, ö, ü: Ամեն մի բառ կամ ամբողջովին ծանր է լինում, կամ ամբողջովին թեթև:

Օրինակ՝ geje «գիշեր», geldi «նկավ», bekledim «սպասեցի», beklediler «սպասեցին» [թեթև են], իսկ aldəm «առի», aldələr «առին», sabahdan «առավոտվանից», odalarə «սենյակները» ծանր են:

Նախադասության մեջ գտնված բառերը կարող են ծանր լինել և թեթև լինել, բայց մի բառ, որ թեթև կամ ծանր է, չի կարող ազդել հաջորդ բառի վրա: Իբր օրինակ կազմում եմ հետևյալ նախադասությունը, որի մի բառը թեթև է, հաջորդ բառը՝ ծանր. Այսպես ամբողջ նախադասության մեջ.

ben bu geje o evde qalajaγəm
1 2 3 4 5 6

«Ես այս գիշեր այն տանը մնալու եմ»

Այս նախադասության մեջ թիվ 1, 3, 5 բառերը թեթև են, իսկ թիվ 2, 4, 6 բառերը ծանր են: Դիտմամբ դրել եմ հաջորդաբար ծանր ու թեթև բառեր, ցույց տալու համար, թե նախադասության ամեն մի բառը անկախ է մյուսից: Եթե այսպես չլիներ և բառերը իրար վրա ազդելու կարողություն ունենային, ամբողջ նախադասությունը կամ ծանր կլիներ, կամ թեթև: Այսպես վերի նախադասությունը կլիներ՝ ծանր լինելու դեպքում՝ Ban bu gaja o avda qalajaγəm, *թեթև լինելու դեպքում՝* Ban bü geje ö evde kelejerim.

Տեսնում ենք, որ առաջին դեպքում բոլոր ձայնավորները ծանր եղան, երկրորդ դեպքում բոլոր ձայնավորները թեթև եղան: Նույնիսկ o «այն» բառը, որ մի տառից է բաղկացած, ծանր դեպքում լինում է o և թեթև դեպքում՝ ö, *առանց ազդվելու նախորդ կամ հաջորդ բառի ձայնավորից:*

Եթե նախադասության մեջ բառի անջատ կամ անկախ գոյության գիտակցությունը չլիներ, ամբողջ նախադասությունը վերի օրինակով կամ ծանր պիտի լիներ կամ թեթև: Իսկ եթե այդպես չէ, և յուրաքանչյուր բառ մյուսներից անկախ ծանր է կամ թեթև, ուրեմն բառի անկախ գոյությունը գիտակցվում է ամբողջ նախադասության մեջ:

... և ոչ թե մի բառին երկու տարբեր նշաններ, կամ երկու տարբեր բառերի համար միայն մի նշան:*

*Այս բոլորը ապացուցանում են, որ թեև մարդը խոսում է միշտ նախադասություններով, բայց մարդկային մտքի համար բառն էլ ուրույն ու անջատ գոյություն ունի, ինչպես որ առարկաները ունեն անջատ գոյություն, և եթե մենք այսօր կասկածում ենք Ներա մասին, դրա պատճառը նոր լեզուները կամ, ավելի ճիշտ, նոր լեզուների գրության եղանակն է: Ստեղծվել են դանադան հոդեր կամ օժանդակ բառիկներ, որոնք իրապես մասնիկներ են և, իբր մասնիկ, բառերի հետ միասին կցված պիտի գրվեին: Նոր լեզուները այդ բառիկները գրում են անջատ, մենք տեսնում ենք նրանց իբրև առանձին բառ, բայց մեր գաղափարում ճանաչում ենք նրանց իբրև ո՛չ բառ**:*

Բանտուն առանց տառանիշի բառ չի ըմբռնում. բառն ու տառանիշը մեկ են, և մին առանց մյուսի գոյություն չունի, ինչպես որ մեր մեջ արմատը առանձին գոյություն չունի:

Վերլիկերեն լեզվի մեջ մի խումբ գոյականներ (հատկապես ազգականական տերմիններ, մարմնի մասեր) առանց ստացական հոդի գոյություն չունեն: Այսպես՝ a/s — *սիրտս,* go/s — *սիրտդ,* ä/s — *նրա սիրտը,* mo/s — *նևրա սիրտը,* me/s —

---

* *Այստեղ ձեռագրում էջակալման հերթականություններ չի խախտված, բայց, ակնհայտորեն, պակասում է նախադասության սկիզբը (1 էջ ?) — Ս. Գ.:*

** *Բնագրից ինչ-որ հատված հանված է (Ս. Գ.):*

մեր սիրտը, ma/s – *ձեր սիրտը*, o/s – *նրանց սիրտը. բայց չկա առանձին «սիրտ»* (Bleichsteiner, WBKL 1, 301):

Նմանապես կովկասյան լեզուներից աբխազ և ուբիխ լեզուները ունեն որոշ-յալ կամ անորոշ հոդով և կամ ստացականով միացած բառեր, բայց առանձին գոյական չգիտեն:

Օրինակ՝ աբխազերեն՝ a-bla *աչքը*, bla-k *ə մի աչք*, səbla *աչքս*, ubla *աչքդ և այլն, որոնց պիտի հետևեր* bla *«աչք», բայց այսպիսի ձև չկա* (Dirr, Einfür. 38–39):

Այսպես է նույնիսկ ֆրանսերենը. ժողովուրդը չգիտե eau *«ջուր», որ բառա-րանի մեջ միայն կա, այլ կա՛մ* l'eau *«ջուրը» և կամ* de l'eau *«ջուր ինչ»:*

Այս բոլորի պատճառը, ինչպես ասացինք, գրության եղանակն է, որից և սկսվում է հակասությունը:

Բառի և նախադասության կապակցության համար իբրև լավ օրինակ կարող է ծառայել քայլն ու քայլվածքը. մի քայլը անհատ բառի պատկերն է, ամբողջ քայլվածքը՝ նախադասության: Ով քայլում է, չի մտածում անհատ և առանձին քայլերի մասին, բայց այնուամենայնիվ անհատ քայլերը գոյություն ունեն, և չի կարելի ասել, թե ով քայլում է, չի կարող նաև մի անհատ քայլ անել:

Բառի անջատ ու անկախ գոյությունը այնպիսի իրողություն է, որ մանուկը երբ խոսել է սովորում, սկսում է անջատ բառերով: Եվ մենք էլ, երբ սովորում ենք մի նոր լեզու, սկսում ենք առանձին-առանձին բառերով: Իբր թե ամբողջ նա-խադասություններով սովորելու մեթոդը ոչ մի արդյունք չի տալիս:*

Վերջապես՝ նույնիսկ անասունները գիտեն անջատ բառի գոյությունը: Ըստ Դարվինի, կապիկների խոսակցությունը բաղկացած է մի անջատ բառից, որ կրկնում են չարունակ, և մարդը երբ խոսում է անասունների հետ, գործածում է միայն մի անջատ բառ: Իբրև վերջին ապացույց բառերի անկախ գոյության, դիմենք Abbé Rousselot*-ի փորձառական դրության:*

Իր Principes de Phonétique expérimental *աշխատության մեջ (հտ. 2, էջ 973) նա զբաղվում է նաև այս հարցով և տալիս է 3 գծագիր: Առաջինի մեջ ներկա-յացված է՝* apte à tout faire *«ընդունակ ամեն ինչ անելու» և* aptitude *«ընդունա-կություն»: Այստեղ առանձին բառի ի ձայնը ունի ավելի մեծ* occlusion *և մի թեթև* explosion, *որ պակասում է* aptitude *բառի մեջ, ուրեմն ավելի ուժով է:*

Երկրորդը ներկայացնում է՝

le comte Roland *«կոմս Ռոլանը»,* le contrôleur *«վերաստուգիչը»: Առանձին* comte *բառի վերջաձայնը, միացած հաջորդ բառի* R*-ի հետ* (tr), *գծագրի մեջ ներ-կայացնում է ավելի լիություն* (ampleur), *քան բառամիջի* tr *խմբի մեջ:*

Երրորդը ներկայացնում է՝

donne à Pierre *«տուր Պետրոսին»*

donna Pierre *«տվնց Պետրոսը»:*

Այստեղ էլ թյուրիմացություն չկա, և մինչև անգամ հասարակ ականջը զանա-զանում է շնչառի տարբերությամբ բառերի էլ տարբերությունը:

Մի վերջին օրինակ տալու համար բառի անջատ գոյության նախադասության մեջ, առնենք մի առանձին ոչխար և մի հոտ: Ոչխարը առանձին անկախ գոյու-

* **Meillet**, Linguistique*-ի* De la Methodedans les Sciences, *էջ 271–272:*

թյուն ունի, իսկ երբ խառնվում է հոտի մեջ, անկախ գոյությունն չունի՞, թեև մաս է կազմում ամբողջ հոտի: Երբ հովիվը ուզենա, կարող է կեռ գավազանը երկարել և ոչխարի վզից բռնելով՝ դուրս քաշել:

ԲԱՌԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նախորդ գլխում տեսանք, որ բառը նախադասությունից դուրս էլ անկախ է, ցորչափ կարող է մեն-մենակ գործածվել:

Այսպես է հայերենի, ռուսերենի և նման որևէ լեզվի մեջ:

Բայց երբ առնենք որևէ անջատական լեզու, այստեղ բոլոր բառերը առանձին ու անկախ են, որովհետև հոլովական կամ խոնարհական մասնիկներով կամ վերջավորություններով կապված չեն իրար հետ, և միայն տեղն ու դիրքն է, որ որոշում է նրանց կապը մյուսների հետ: Բայց երբ բառը առանձին է, այսինքն՝ անջատ կամ անկախ, բնականաբար այլևս կապ չկա, և, հետևաբար, բառի իմաստն էլ փոխվում է:

Օրինակ առնենք չինարենը.

wo ai ni,

նշանակում է «ես սիրում եմ քեզ», ուր բառերը մեկ-մեկ վերցրած նշանակում են wo ես, ai սիրում եմ, ni քեզ: Բայց այս այսպես է միայն նույն ամբողջական նախադասության մեջ, իսկ առանձին wo ոչ միայն նշանակում է «ես», այլ նաև «ինձ, ինձ», ai ո՛չ միայն նշանակում է «սիրում եմ», այլև «սիրել», կամ նաև «սիրվել» բայի որևէ ժամանակն է և դեմքը, բայց մանավանդ նշանակում է **սեր** (գոյական), նմանապես ni նշանակում է ո՛չ միայն «քեզ» (հայցական), այլև՝ «դու», եթե փոխենք նրա տեղը և դնենք բայից (ai) առաջ, բատ որում, անջատական լեզուներում բառի դիրքն է, որ որոշում է իմաստը:

Այս հանգամանքներում, փոխվում է նախորդ գլխի մեջ մեր կազմած զատափարը՝ գոնե անջատական լեզուների համար:

Անգլերենը անջատական լեզու չէ, բայց նա էլ դարերի ընթացքում փոփոխվելով՝ այժմ ստացել է անջատական լեզվի կերպարանք, պահելով միայն հոլովման և խոնարհման հետքերը (ինչպես՝ հոգնակի s, անցյալ անկատար և կատարյալ -ed և այլն): Ըստ այսմ՝ բառը նախադասությունից դուրս (այսինքն՝ անկախ) ունի անորոշ մի իմաստ, և միայն նախադասության մեջ է, որ ստանում է ճիշտ իմաստը:

Օրինակ՝ light նշանակում է **լույս, լուսավոր** և **լուսավորել**. այնպես որ, երբ ասենք՝

a light *մի լույս,*

a light room *լուսավոր սենյակ,*

to light the room *լուսավորել սենյակը:*

Այսպես ուրեմն՝ անգլերենում էլ, ինչպես չինարենում, անկախ կամ անջատ բառը նախադասությունից դուրս ունի տարատամ կամ ընդհանուր մի իմաստ և միայն նախադասության մեջ է, որ ստանում է իր ճիշտ իմաստը:

Ավելին կա:

Անգլերենում, ինչպես և ֆրանսերենում, շատ համանուն բառեր կան:

Համանուն կոչվում են այն բառերը, որոնք հնչմամբ նույնն են, բայց իմաստով տարբեր: Հայտնի են ռուսերենում мир «աշխարհ» և мир «խաղաղություն» բառերը: Հայերենում էլ ունենք **Հարկ** «տան դստիկոն» և **Հարկ** «տուրք»: Հին ուղղագրությամբ այս բառերը տարբեր գրչություն ունեին. ռուսերեն міръ «աշխարհ» և миръ «խաղաղություն», հայերեն **յարկ** «դստիկոն» և **Հարկ** «տուրք»: Նոր ուղղագրությամբ այս բառերը չփոթեցին իրար հետ, և հաճախ մինչև անգամ տեղից էլ չի իմացվում, թե խոսքը ինչի մասին է: Օրինակ՝

տան հարկերը (գրր. յարկ) բարձրացան,
տան հարկերը բարձրացան:

Բարեբախտաբար, թե հայերենում և թե ռուսերենում համանուն բառեր չատ քիչ են: Ընդհակառակը, թե անգլերենում և թե ֆրանսերենում չատ են համանուն բառերը:

Այսպես՝ նույն light բառը, որ անգլերենում նշանակում է «լույս, լուսավոր, լուսավորիչ», իբր հոմանուն ունի light թեթև: (Սրանք ծագմամբ էլ տարբեր են. light «լույս» համապատասխանում է գերմ. licht «լույս» բառին, իսկ light «թեթև» համապատասխանում է գերմ. leicht «թեթև» բառին): Ըստ այսմ՝ այս կարգի լեզուների մեջ բառերի անկախ կամ անջատ գործածությունը իմաստի կողմից սահմանափակված է, և նախադասության մեջ գործածվելու պահանջը հաճախ անհրաժեշտ է դառնում:

Գիտունների մեջ հարց է ծագում, թե մարդկային լեզուների մեջ գոյականներն են առաջ, թե բայերը. ոմանք առաջինների կողմն են, ուրիշները՝ երկրորդի: Բայց այսպիսի վեճ բնականաբար ավելորդ է. կան բառեր որոնք գոյական ծագում ունեն և հետո ստացել են նաև բայական նշանակություն, կան էլ, որ ընդհակառակը, բայական ծագում ունեն, այն է՝ ներկայացնում են մի գործողություն, որից հետո կազմված են գոյականներ: Սեմական լեզուների քննությունը ցույց է տալիս, որ այստեղ նախ գոյականն է ավելի առաջ, որից զարգացել է հետո բայական իմաստը (Brocklelm. Vréeis 125).

ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ՁԵՎԵՐԸ

Առարկան երևում է մեր աչքին կամ մեր մտքին 3 ձևով. առաջին՝ առարկան իբրև նյութ. երկրորդ՝ նրա հատկությունը. երրորդ՝ նրա վիճակը:

Այս երևքից ամենից ավելի չոչափելին ու թանձրացյալը առաջինն է: Երկրորդը նրա վերացականն է, որովհետև պետք է երևակայությամբ առանձնացնել նյութից, իսկ երրորդը ավելի վերացական է, որովհետև նրա մչտական հատկություններից պետք է առանձնացնել այն հատկությունը, որի մեջ գտնվում է նա տվյալ րոպեին, որ է վիճակը: (Համմտ. Wundt, Vökerps. բ մաս, էջ 480):

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐ

Միլտոնը գործածել է 7–8000 բառ,
Հոմերոսը (Իլիական և Ոդիսական միասին)՝ 9000 բառ,
Հին Կտակարանը – 5642 բառ (Հաշիվը կատարել է Leusden-ը, Եբրայական բնագրի վրա, տե՛ս Renan, Hist. des langues semitiques 1, 140):

Max-Müller-ը ասում է, թե անգլիացի գյուղական անգրագետ մի հովվի բառապաշարը 300-ից չի անցնում: Ըստ Wood-ի՝ միջակ մարդը գործածում է չուրջ 400 բառ: Ըստ Wundt-ի՝ 2 տարեկան մի աղջիկ գիտեր 489 բառ և մի ուրիշը՝ 1121 բառ (տե՛ս էջ 187): Ամերիկացի երեխան (17 ամսական) գիտեր 232 բառ և 6 տարեկան՝ 2688 բառ (տե՛ս Լեզվի փոխանցումը): Օտար լեզու սովորեցնող դպրոցական դասագրքերը առաջին տարում ունեն 700 բառ: Մի միսիոներ Հրո Երկրում վայրենիների Yaagan լեզվով կազմել էր 30.000 բառերի բառարան: Այս վերջին կետն ի նկատի ունենալով՝ Jespersen-ը (Growth and..., 196) չի հավատում, որ պարզ գյուղացին միայն 300 բառ ունենար, որովհետև սայլի ու արորի մասերը, երկրագործական գործողությունները, թռչունները, բույսերը և ուրիշ բնական առարկաներ ահագին թիվ են կազմում: Smedberg-ը, քննելով չվեդացի գյուղացոց լեզուն, գտավ առնվազն 26.000 բառ, և դանիացի բարբառագետ Kristensen-ը հաստատում է այն: Պրոֆ. Holden-ը քննել է Webster-ի բառարանը և գտել է, որ ինքը գիտե 33.456 բառ: Babbit-ը (Wundt, Völkerps, 1 հտ., բ մաս, էջ 308) մի փորձ է արել իր ուսանողների վրա և տեսել է, որ չատը գիտե մինչև 60.000 բառ: Իր կարծիքով հասարակ կրթությամբ մի մարդ գիտե 25–35.000 բառ, մինչև իսկ՝ 50.000:

Շեքսպիրի գործածած բառերի թիվը հաչվում են 21.000 (առանց հաչվելու թեքյալ ձևերը) կամ ըստ այլոց՝ 24.000 կամ 15.000, իսկ նորագույն անգլերենի բառարանները ունեն 100.000 և ավելի բառ:

Դժբախտաբար, այս հաչիվները անգլերենի վրա կատարված լինելով՝ չատ անորոշ են, ըստ որում՝ միևնույն բառը անգլերենում թե գոյական է և թե բայ, և չգիտենք, թե հաչվողները ինչ են ի նկատի ունեցել:

Ես անձնապես հաչվեցի երկու լեզու՝ հայերեն և թուրքերեն: Պոլսեցի մի տաճիկ, որ որևէ կրթություն չէ ստացած և որևիցե մասնագիտություն էլ չէ սովորած (ոսկերչություն, կոչկակարություն, մեքենագիտություն և այլն), գիտե 10.000 բառ: Առաջնորդ եմ ունեցել Պետրոս Ջևքի Կարապետյանի օսմ.-հայ. բառարանը, տպ. Պոլիս, 1912, որ ունի ընդամենը 29.320 բառ: Հաչվել եմ այս բառարանից միայն այն բառերը, որոնք գործածական են Պոլսի հասարակ մի տաճկի լեզվում և գտել ճիչտ հաչվով 10.108 բառ: Բնական է, պակասում են այստեղ երկրագործության, անասնապահության, բույսերի և այլն վերաբերյալ մի խումբ բառեր, որ գյուղացի թուրքը պիտի իմանար: Բայց գյուղացին էլ չպիտի իմանար մի խումբ կրթական, քաղաքավարական բառեր, որ Պոլսի թուրքերենում սովորական են: Ըստ ինքեան՝ պակասն և ավելին իրար չեզոքացնում են, և միջին թիվը մնում է 10.000 բառ:

Ավելի դժվար էր հայերենի հաչիվը, նախ՝ որովհետև մի ամբողջական բառարան չունենք դեռ, և երկրորդ՝ հայերեն գավառական բարբառները չատ տարբեր ունեն իրենց մեջ. բացի հայերենից՝ պարունակում են նաև թուրքերեն, ֆրանսերեն, իտալերեն, պարսկերեն, նոր հունարեն և այլ բառեր, որոնք պետք էր յուրաքանչյուրը հաչվել առանձին և առնել նրանց գումարը:

ԼԵԶՎԻ ՀԻՄՔԸ ՆՅՈՒԹԱԿԱՆ Է

Թվերը հիմնված են մատների համրանքով, և սրա վրա է կազմված տասնորդական դրությունը: Ուստի բոլոր մաթեմատիկան մատների համեմատ է. եթե ութ մատ ունենայինք, այլ բան պիտի լիներ: Կան ըստ ձևի վերացական բառեր, որոնք սակայն նույնպես նյութական են, ինչպես՝ Աստվածություն, մարդկություն, գերմ. Schönheit *«գեղեցիկ կին»,* Gottheit *«Աստված»,* Dunenheit *«հիմարություն, հիմար բան կամ խոսք», ֆրանսերեն* Connaissance *«ծանոթություն» > ծանոթ անձ: Լատիներեն* agitator*-ի բուն իմաստն է «կառապան կամ գրաստ քշող»:*

Օրինակ՝ agitator aselli *էշ քշող. այժմ ստացել է բարոյական իմաստ. հայերեն* **ըմբռնել** = *ֆրանսերեն* comprendre = *գերմաներեն* begreifen *և այլն՝* **բռնել, բուռ** *բառից, ֆրանսերեն* penser = *լատիներեն* deliberare՝ *կշռել բայից (լատիներեն* libra *«ֆունտ»): Հայերեն* **տպավորություն:**

Վեճ կա, թե հնխ. արմատները անվանական էին, թե բայական. ոմանք այս, ոմանք այն կողմն են: Հարցը լուծում է մի այնպիսի վայրենի լեզվի քննությունը, ինչպիսին է ինդոնեզիականը: Այստեղ նույն արմատը ծառայում է թե մեկի և թե մյուսի համար, և այսպես պիտի լիներ նաև հնխ. (Meillet, BSL, № 103, 236): *Հնխ. մեջ գոյականների մի մասը առանձին ու անկախ է և կապ չունի բայական արմատների հետ. այնպես որ նրանք վերլուծել կարելի չէ (այսպես են ազգական անունները, մարմնի մասերը և այլն, ինչպես՝ հայր, մայր, ոտք, օր....):*

Ավելի շատ են այն բառերը, որ բայերի հետ կազմում են մի ընտանիք: Նույնիսկ այնպիսի գոյականներ, որոնք այժմ բայերի հետ, թվում է, թե ոչ մի կապ չունեն, լեզվաբանական քննությամբ հասնում են բայական արմատի: Օրինակ **ձեռք**՝ *հնխ.* g'hers – *ծագում է* g'her – *«բռնել» արմատից* (Meillet, Traité, 164):

Նույնիսկ քերականական ձևերը վերջիվերջո հանգում են նյութականի, որովհետև նրանք բոլորը կազմված են մասնիկներից, մասնիկներն էլ բառերից, որոնց յուրաքանչյուրը մի նախավոր նյութական գաղափարի նշանն է: Այսպիսով լեզվի բոլոր վերացական կողմը ծագում է նյութականից:

ՆԱԽ ԳԱՂԱՓԱՐ, ՀԵՏՈ ԲԱՌ

(Որ է՝ նախ առարկա, հետո առարկայի անունը)

Ներածության մեջ արդեն խոսեցինք այն մասին, որ գաղափարները բառից առաջ են և չկա բառ, եթե նրան նախորդող գաղափարը չկա: Նախնական ազգերը, որոնք մտածողությամբ, գաղափարներով և իրերի ճանաչողությամբ աղքատ էին, աղքատ էին նաև բառերի կողմից: Ապագա զարգացումը տվավ նրանց նոր գաղափարների հետ նաև նորանոր բառեր: Այսպես, մարդը իր նախնական վիճակում չուներ ինչ-որ գերագույն էակի գաղափարը, հետևաբար և պակասում էր նրան **Աստված** *բառը, ինչպես նաև կրոն, կրոնավոր և այլն: Այսպիսի վիճակում*

են գտնվում դեռ մի քանի չատ վայրենի ժողովուրդներ: Բողոքական քարոզիչները, որոնք ուզում են նրանց մեջ քրիստոնեություն տարածել և պետք ունեն Ավետարանը թարգմանելու, չգիտեն՝ ինչպես հասկացնել նրանց գերագույն էակի գաղափարը և ինչպես ստեղծել Աստված բառը:

Կարիք չկա ապացուցանելու, թե առարկանները, իրերը, գործողությունները և ամեն տեսակ երևույթներ տիեզերքի մեջ գոյություն ունեն, ինչպես և՝ իրենց գոյությունը պայմանավորված չէ մեր գիտակցությամբ կամ ըմբռնողությամբ:

Ճառագայթները կամ ռադիումը գոյություն ունեին ի բուն, մեր ճանաչելուց էլ չատ առաջ, ինչպես որ այսօր էլ գոյություն ունեն նրանք՝ հակառակ այն բանի, որ չատ ու չատ վայրենի ժողովուրդներ չեն ճանաչում նրանք, և կամ նույնիսկ մենք չգիտենք նրանց կազմության էությունը: Այստեղից բնականաբար հետևում է այն, որ իրերն ու գաղափարները էապես ավելին են, քան նրանց տրված բառերը. բայց միևնույն ժամանակ առաջանում է այն հարցը, թե ե՞րբ առարկան կամ գործողությունը պիտի ստանար իր անունը կամ նշանակիչ բառը լեզվի մեջ:

Պատասխանը չատ պարզ է. առարկան կամ գործողությունը ստանում է իր անունը լեզվում այն ժամանակ, երբ մարդը հասած է արդեն նրան գիտակցելու կարողության: Բայց պարզ գիտակցությունը կամ ճանաչողությունը բավական չէ դեռ, այլ պետք է, որ նա ունենա առանձին կարևորություն կամ մեր կյանքի մեջ կատարած առանձին դեր: Այսպես, ամեն տեղ և ամեն ժամանակ էլ մարդիկ կարող էին մի տեղ հավաքվել և խոսել. բայց Parliament *(խոսարան) բառը ստեղծվեց այն ժամանակ, երբ պառլամենտական կյանքը ստեղծվեց: Այսպես նաև զանազան քարեր, խոտեր, բույսեր կամ մետաղներ անուն ստացան, երբ նրանք առանձին կարևորություն ունեցան կամ որևէ կարիք լրացրին մեր կյանքում:*

Գաղափարի ճանաչողությունը պետք չունի անպատճառ ճիշտ կամ ճշմարիտ ու իրական լինելու, որպեսզի բառ կամ անուն ստանա: Նույնիսկ սուտ կամ կեղծ և անիրական գաղափարներն ու առարկանները անուն են ստանում, եթե նրանք մեր մտածողության մեջ գոյություն ունեն իբրև իրական: Այսպես, **սատանա, ոգի, աև, հուրի, փերի, հրեշ** *և այլ բազմաթիվ երևակայական էակներ ունեն իրենց անունը, որովհետև գոյություն ունեն մեր իրականության մեջ**: *Եվ ո՞վ գիտե որքան մեծ է թիվը այն բառերի կամ գաղափարների, որոնք մեր գիտության այժմյան հասողությամբ իրական բաներ են, բայց ապագային պիտի զրկվեն իրենց գոյության իրավունքից, լինեն դրանք զուտ վերացական ըմբռնողություններ և կամ նույնիսկ՝ նյութական առարկաներ, ինչպես՝ քիմիական տարրեր, հիվանդություններ, միկրոբներ և այլն:*

Գաղափարից բառ անցումը այնքան արագ է, որ մենք հաշվել չենք կարող: Իբր օրինակ կարելի է տալ նայելու, տեսնելու գործողությունները համեմատությամբ լուսանկարի: Մենք կարող ենք նայել և չտեսնել, կարող ենք երկար նայել

* *Հոգին ոմանք համարում են առանձին գոյն ունեցող մի բան, ուրիշներ՝ .... մարմնի այսինչ վիճակի մի երևույթ: Բայց մին կամ մյուսը չի խանգարում, որ գործածվի բառում, քանի որ նա գոյություն ունի մեր գիտակցության մեջ: Նա կջնջվի միայն այն ժամանակ, երբ ջնջվի մեր գիտակցությունից իբրև գաղափար:*

և հետո միայն տեսնել, բայց նայելը նախորդում է տեսնելուն, ուրիշ խոսքով տեսնելը հետևանք է նայելուն: Թեև կարելի է տեսնել պատահաբար՝ առանց նայելու, բայց դարձյալ կա ակնթարթային նայվածք, որ կատարվում է դիտելու: Իսկ լուսանկարը, որ ունի մեքենական արագություն, ակնթարթի մեջ նայում է, տեսնում և նկարում այնքան մանրամասնություն միաժամանակ, որ մենք շատ երկար դիտելուց հետո հազիվ պիտի կարողանայինք նկատել: Միտքը նման է լուսանկարին:

ԲԱՌԵՐԻ ԿՑԱՆՔԸ

Լեզվի երեք տարրերը՝ **ձայն, ձևակ** *և* **բառ,** *նույն տևականությունը չունեն: Լեզվի փոխանցման միջոցին ինչ ձայներ և ինչ քերականություն որ սովորում ենք մենք, դա մնում է մինչև մեր կյանքի վերջը և* **գրեթե** *նույն ձևով անցնում է հաջորդ սերունդին: Բայց այդպես չէ լեզվի բառական հարստությունը: Այստեղ սահման ու ժամանակ չկա: Նայած ընդունակության, դիրքին և պայմաններին՝ ամեն մի մարդ հավաքում է որոշ բառապաշար, որ չարունակ փոփոխում է մինչև կյանքի վերջը, թեպետ ամեն օր: Բառերից ոմանք կամ նշանակություններից ոմանք նորաձևությունից ընկնում են (démodé) և մոռացվում. բայց ավելի շատ են այն դեպքերը, երբ նորանոր բառեր գալիս հավաքվում են նախկին պաշարի վրա. այդպես են օտար փոխառությունները, նոր առարկաների համար հնարված բառերը և այլն: Վերջին մի քանի տարվա մեջ որքա՜ն բառ սովորեցինք և ավելացրինք մեր բառապաշարի վրա, սկսած ժողկոմ-ներից մինչև հայցը... Մարդկային միտքը անընդհատ գործողության մեջ է:*

ԲԱՌԵՐԻ ՄՐՑՈՒՄ

Միևնույն ժամանակ լեզվի մեջ երևան են գալիս մի քանի բառեր նոր իմաստի համար, և որովհետև լեզուն ավելորդ ծանրաբեռնություն չի սիրում, նրանցից մեկին միայն նախընտրություն է տալիս, մյուսները կորչում են: Այս վիճակը կոչվում է բառերի մրցում:

Բառերի մրցում առաջանում է հոմանիշների միջև, նշանակությանց, բարձրացման, ստորացման, պատկերավորության, սաստկության պատճառով և այլն:

Օրինակ **հուր և կրակ.** *այժմ հաղթել է* **կրակ**-*ը:*

Բառերի իմաստը [ևս], հաճախ գործածությամբ, սովորական և անհրապույր է դառնում. նա նման է մի դրամի, որ ձեռքից ձեռք գործածությամբ լորձվում է (Dauzat, La philosophie du language, 89): *Ժողովուրդը սիրում է ունենալ այնպիսի բառեր, որոնք մի նոր, կենդանի, ուժեղ և ազդու պատկեր տային իրեն: Այս պատճառով տկարացած ու թուլացած հների տեղ չարունակ նոր պատկերներ է ստեղծում:*

Օրինակ, լատիներեն caput «գլուխ» *եղավ հետո* testa «պտուկ», *որից իտալերեն* testor, *ֆրանսերեն* tête: *Ֆրանսերենի մեջ* tête *բառը, պտուկի նշանակությունը խպառ կորցնելով, եղած է պարզապես «գլուխ», ուստի ժողովուրդը*

Հնարել է նոր պատկերներ և կոչում է boule «գնդակ», poire «տանձ», fiole «սրվակ», citron «լիմոն»: *Այսպես՝ ժողովուրդը չի սիրում բուն գիտական բառերը, որոնք ոչինչ չեն ասում իր սրտին և հնարում է նրանց համար այլ բառեր, ինչպես՝* ballon, *փխ.* aérostat, dépêche, *փխ.* télégramme*: *Լրագրական լեզուն հատկապես բռնված է այս մարմաջով և սիրում է դնել այրող վերնագրեր ընթերցողների ուշքը սևեռելու համար: Այս կարգին են պատկանում* **այրող հարց, ծառանալ, ապրումներ** *և այլն:*

Ապագայում պատկերը, չարունակ գործածվելով, կորցնում է իր պատկերի հանգամանքը: Եթե այսպես է, ուրեմն և կան լեզվի մեջ բառեր, որոնց եթե հին ծագումը իմանայինք, պիտի տեսնեինք, որ մի պատկեր է: Բայց այս զաղափարը պետք չէ չարաչահել և աչխատել ամեն բան պատկերներով մեկնել: Երբեմն էլ մի բառ կարող է բնավ պատկեր չլինել, այլ իրական բացատրություն, բայց անցնելով մի ուրիշ գործածության՝ դառնալ պատկեր:

Օրինակ, arriver «հասնել» *նավային բառ է և նչանակում է «եզերքին մոտենալ», անցնելով ընդհանուր գործածության, դարձել է պատկեր: Ֆրանս.* niais *նախապես նչանակում էր «բույնից նոր դուրս եկած (թռչուն)», հետո՝ «անմարթակ թռչուն», հիմա նչանակում է միայն մարդոց համար՝ «պարզամիտ»:*

Իր գործածած բառերին ուժգնություն տալու տենչը երբեմն հասցնում է չափազանցության, փոխանակ ասելու՝ «Քանիցս անգամ ասի քեզ», ասում ենք՝ «Հազար անգամ...» և այլն:

Սաստկության չևերից մեկն է որոչ բառերի գործածությունը, ինչպես՝ il est terriblement beau, *գերմաներեն* furchtbar schön *«սարսափելի գեղեցիկ է». ֆրանսերեն* nous sommes au complet *ասելու փոխարեն՝* nous sommes au grand complet:

ԲԱՌԵՐԻ ՋՆՋՈՒՄԸ [ՄԱՀԸ]

Ամեն մի բառ, որ գոյություն է ունեցել որևէ լեզվի այսինչ շրջանում, պարտական չէ իր գոյությունը հավիտյան չարունակելու: Զանազան պատճառներ գալիս են չեզոքացնելու նրա գործածությունը կամ իսպառ հեռացնելու ասպարեզից (բառերի մահը):

Այս պատճառներից թվենք ավելի սովորականները.

1) Մի որևէ առարկայի ջնջումը, կամ գործածությունից ընկնելով և կամ մի ուրիչով փոխանակվելով, պատճառ է դառնում, որ ջնջվի նաև նրա անունը. այսպես է նաև սովորություններ, նախապաչարմունք, հին գիտություն և այլն: Հայության ամեն մի անկյունում ծանոթ և սովորական է լավաչ հացի հետ և **լավաչ** *բառը: Բայց Պալուի հայերենը չգիտե այդ բառը, որովհետև լավաչը փոխանակված է փափուկ հացով: Կոապաչտության ժամանակի բառերը հիմա*

* *Այս տեսակետից նկատելի են գերադրական ածականները, առաջ գործ էինը ածում չատ, յոյժ, խիստ, հետո եղավ չափազանց, հիմա չափազանց բառը սկսել է դգացվում, և ասում ենք* **սարսափելի** *գեղեցիկ,* **սոսկալի** *գեղեցիկ են: Այս բառերից յուրաքանչյուրը ինքնին վերցրած չատ նորանոր արտահայտություն է, և այդպես էլ գործ էինք սկզբում, բայց սովորական դարձան, իրենց ուժը կորցրին, և այն ժամանակ մտածեցին մի բոլորովին նոր ստեղծել:*

չկան, հին աստղարաշխների բառը հիմա չգիտենք: Միայն դրանցից ոմանք, խուսափելով և իմաստի փոփոխությամբ, մնում են դեռ:

2) Հոմանիշների գոյությունը պատճառ է դառնում ավելորդ ձևը ջնջելու: Սրա հետևանքով է, որ մի օտար բառ փոխառնվելով մի լեզվի մեջ՝ պատճառ է դառնում բնիկ բառի ջնջման:

Օրինակ՝ անկարելի բան է, որ հին հայերը չունենային **կարմիր, սև, սպիտակ** *գույները նշանակող բառեր. բայց այդ բառերը ջնջվել վերացել են, որովհետև նրանց տեղ եկել են պարսկերենից փոխառյալ* **կարմիր, սև, սպիտակ** *բառերը:*

3) Ձայնական օրենքների միջոցով երբեմն առաջանում են նույնանուն բառեր, որոնք չփոթություն են առաջացնում իմաստի կողմից. այդ բառերից մեկը ջնջվում է:

Օրինակ՝ Հարավային Ֆրանսիայի մի բարբառում լտ. gallum *«աքլոր» բառը վերածվել էր* gat, *միևնույն ժամանակ* *gattim *«կատու» բառն էլ դարձել էր* gatc, *այնպես որ այս երկու տարբեր կենդանիները միևնույն անունն էին ստացել: Շփոթությունից խուսափելու համար ջնջեցին* gat *«աքլոր» բառը և տեղը դրին տարբեր բացատրություններ (*Meillet, La méthode comp., *էջ 69):*

Ոչ մի խտրություն չի դրվում բառերի արժանիքի, կարևորության, ծագման, հարազատության և նման հատկությունների մեջ, և ջնջվում է բառը, երբ գալիս են այլ հանգամանքներ և առաջացնում բառի կորուստը:

Այսպես **դուստր** *բառը, հնդեվրոպական նախալեզվի սքանչելի մնացորդներից մեկը, հայ լեզվի հարստություններից մեկը ջնջվել է մեր բոլոր բարբառների մեջ և մնում է միմիայն հայերենից և հայ երկրից չատ հեռու ապրող մի բարբառում: Միայն Սուչավայի բարբառն է, որ գործածում է այս բառը* **դ'ուստրը** *կամ* **դ'րուստ** *ձևերով և այն էլ սեռ.* **դ'ըրըստեր,** *նույնիսկ* **դը'ստեր** *հին ձևով: Մնացյալ բոլոր հայ բարբառներում գործածում են* **աղջիկ** *բառը, որ* **աղիճ** *կամ* **աղիջ** *բառի փաղաքշականն է: Ամենևին ուշադրություն չենք դարձնում այն հանգամանքի վրա, որ սրանով մասնավորը և ընդհանուրը խառնվեցին իրար, և, օրինակ,* **Հորեղբորս աղջիկը** *կամ* **մի աղջիկ տեսա** *ազատորեն գործածում ենք, ճիշտ ինչպես ասում ենք* **կինս** *և* **մի ինչ-որ կին:** *Գերմաններենը զանազանում է* tochter *և* mädchen, weib *և* frau, *անգլերենը՝* daughter *և* girl, wife *և* woman, *ռուսերենը՝* **дочь** *և* **девушка, жена** *և* **женщина:** *Այս բոլորը նրանից է, որ պրս.* zan *հավասարապես թե՛ կին է և թե ամուսին,* duxtar *՝ թե՛ դուստր է և թե աղջիկ, նմանապես թրք.* qəz *՝ թե դուստր է, թե աղջիկ: Այսպես նաև լատիներենը, որի հետևանքով էլ ֆրանս.* fille *թե աղջիկ է և թե դուստր,* femme *՝ թե կին է և թե ամուսին:*

Սրա նման է հայերեն **ղրացի** *բառը, որ ծագելով* **դուռն** *արմատից, հարազատ հնդեվրոպական հայ բառ է: Բայց այս բառը հայկական հարազատ երկրում ջնջվել է՝ փոխանակվելով պարսկերեն* **հարևան** *բառով, իսկ պահված է հեռավոր Պոլսում կամ Նոր Նախիջևանում:*

Հեռավոր գաղութները պահել են **առնել** *և* **զնել** *բայերը իրենց իսկական նշանակությամբ, իսկ մայր երկրի մայրաքաղաքի (Երևանի) բարբառը ջնջել է: Այսպես՝ Պոլիս, Նոր Նախիջևան և այլն ասում են* **առնել,** *իսկ Երևանը՝* **վերցնել,**

որ, օրինակ, Պոլսում նշանակում է «վեր բարձրացնել» կամ նաև «վերացնել, մեջտեղից հանել, ջնջել»: **Առնել** բայը Երևանում նշանակում է «գնել» և իր բուն իմաստով պահված է միայն առանձին ոճերում: Նոր Նախիջևանը .... գիտե **գնել** «դրամով առնել» բայը, իսկ Երևանը չգիտե և ասում է **առնել** (նույնպես Պոլիս և այլն): Այսպիսով երկու սքանչելի հնդեվրոպական բառեր (**առնել** և **գնել**) ջնջվել են: Սրա պատճառն է թուրքերենը, որ չունի «գնել» իմաստով բառ և ասում է satən almaq «ծախու առնել», կամ պարզապես՝ almaq, իսկ արևելյան թուրքերենը նույնիսկ almaq բառի տեղ գործ է ածում aparmaq, որ է «վերցնել»:

* * *

Խոսելով լեզվի բնախոսության մասին, տեսանք, որ խոսողությունը կենտրոնացած է ուղեղի որոշ մասում, թե յուրաքանչյուր ծանոթություն տեղավորված է մի բջիջի մեջ, թե բոլոր կենտրոններն ու բջիջները հաղորդակցության մեջ են իրար հետ զուգորդության թելերով: Բայց կա նաև մի ներքին ուժ, որ ուզած ժամանակ այն բջիջների ներքին բովանդակությունը երևան է հանում, հիշողության առջև բերում: Կարող է լինել, սակայն, որ այն բջիջի արձանագրությունը նույնպես մաշված լինի, որ նրա բովանդակությունը դժվարավ երևան գա կամ բնավ չգա: Այդ ժամանակ կլինի մոռացումը:

Հոգեբանությունը մեզ սովորեցնում է, որ հիշողության կենդանության համար կա երեք պայման. 1) **նախնական տպավորության ուժը** կամ զորությունը, որ առաջ է գալիս կամ էակի ուժեղ բանականությունից և զգայությունից, և կամ առարկայի կարևորությունից, նորությունից և հետաքրքրականությունից: Որքան կարևոր, նոր կամ հետաքրքրական է առարկան, այնքան էլ ուժեղ է նրա թողած տպավորությունը բջիջների վրա: 2) **Ուշադրություն.** ինչքան ուշադիր եղած լինենք դեպի առարկան, բնականաբար մեր ստացած տպավորությունն էլ այնքան ուժեղ կլինի: 3) **Կրկնություն.** ինչքան հաճախ կրկնվի նույն առարկայի հիշողությունը, բնականաբար նրա տպավորությունն էլ ավելի կզորանա, որովհետև հիշողությունն էլ մի սովորություն է:

Լեզվի մեջ էլ նկատվում է նույն երևույթը. այն բոլոր բառերը և ձևերը, որոնք չեն ներկայացնում հիշյալ պայմանները, ջնջվում են: Մեր կյանքի ամենասովորական և պիտանի առարկաների անունները ստիպված ենք կրկնել չարունակ, ուստի նրանք չեն կարող ջնջվել լեզվից (ինչպես՝ ես, հաց, ջուր, մեկ, հինգ, աչք, այսօր և այլն): Ընդհակառակը՝ անզործածական առարկաների անունները ուշ կամ կանուխ պետք է ջնջվեն:

Գյուղի կյանքը, վերածվելով քաղաքի կյանքի և հետևաբար՝ զրկվելով գյուղատնտեսական ու երկրագործական զանազան գործիքներից, կորցնում է և նրանց անունները. քաղաքացին չգիտե **հորիկը, սամին, սամեթելը, մանկուռը** և այլն: Նույնպես գյուղացին գիտե և ճանաչում է զանազան խոտեր, բույսեր, թռչուններ, աստղեր, քարեր, հողի տեսակներ և այլն, որոնք իրեն համար կարևոր են: Այս բոլորը ջնջված են քաղաքացու լեզվի մեջ, որովհետև նրա համար կարևորություն չունեն: Զանազան մասնագիտություններ հարուստ են իրենց բառերով, որոնք մյուսների մեջ չկան: Այսպես՝ նավավարը գիտե իր արհեստի

բառերը, ձկնորսը՝ իր արհեստի, մեքենագետը՝ իր արհեստի և այլն: Մի նոր և հետաքրքրական բառ կամ պատկեր, որ մտնում է լեզվի մեջ, իսկույն տարածվում է և արմատ բռնում. այսպես՝ մեր այսօրվա գրական լեզվի մեջ՝ **բնորոշ, մտայնություն, ծառանալ, ապրումներ** *և այլն, բայց երբ նրանք կորցնում են իրենց հետաքրքրականությունը, կամաց-կամաց կորչում են:*

Նույն պատճառաբանությամբ կարելի է մեկնել նաև օտար փոխառությունները նվաճված ազգի լեզվի մեջ:*

[ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ]

Մի նոր առարկայի ստեղծագործությունը ստիպում է կամ մի նոր բառ հնարել և կամ մի որևէ հին բառի վրա մի նոր իմաստ ավելացնել: Օրինակ՝ **պաղպաղակ** *հին լեզվի մեջ նշանակում էր «բյուրեղ». նոր լեզվի մեջ ավելացրին ծանոթ սառցրած քաղցրեղենի նշանակությունը.* **օդապարիկ** *նշանակում էր «օդի մեջ սավառնող (թռչուն)», այժմ ավելացավ «ballon» իմաստը:*

Երբ մի առարկա ջնջվում է, նրա հետ էլ ջնջվում է բառը:

Օրինակ՝ **կապարճ, կապարճակիր, վաղակավոր, հարցուկ:**

Երբ մի առարկա հետզհետե զարգանում է ձևով կամ կազմությամբ, բառը հետը պահվում է, բայց իմաստը փոխվում (օրինակ, ֆրանսերեն fusil *հրահան քարն էր, որ հիմա ամեն տեսակի հրացան է նշանակում. հինգ օրվան քարանթինա՝* quarantaine *40 բառից է,* plume de fer *կարմիր մելան) և կամ հարմարացվում նոր նշանակության:*

Օրինակ՝ ֆրանսերեն plume, *ռուսերեն* **перо** *բուն նշանակում են «փետուր», և որովհետև հին ժամանակ փետուրը գործ էր ածվում նաև իբրև գրիչ, ուստի նշանակում է և «գրիչ»:*

Հիմա այլևս գրիչը փետուրից չէ, բայց այդ բառերը չարունակում են իրենց գոյությունը: Նույնպես պարսկերեն, թրքերեն, արաբերեն qalam *«գրիչ» բուն նշանակում է «եղեգ», որովհետև արևելքի մեջ գրիչը եղեգ էր. հիմա շատ տեղ մետաղյա գրիչն է գործածվում, բայց բառը պահվում է:*

Առևտրի մեջ մտած զանազան ապրանքներ կոչվում են իրենց ծագած երկրի անունով. ինչպես՝ ֆրանսերեն pêche *և ռուսերեն* **персик** *«դեղձ» բուն նշանակում են «Պարսկաստան», ֆրանս.* baïonnette *«սվին» ծագում է* Bayonne *գավառի անունից,* calicot *«կտավ» ծագում է Հնդկաց Կալկաթա քաղաքի անունից,* cravate *ծագում է Խորվաթիայից, այսպես և* Champagne, Cachemire, damas՝ *«մի տեսակ գործվածք կամ դագույն» (Դամասկոս քաղաքի անունից),* Bordeau՝ *1. «գինու տեսակ, 2. այդ գինու նման թունդ կարմիր գույն» (Ֆրանսիայի Բորդո քաղաքի անունից), Հայոց մեջ՝ Մանուսա (Մանիսա քաղաքի անունից), Բաղդադի «գլխին կապելու թաշկինակ» (Բաղդադ քաղաքի անունից), Եվդոկիայում* **աղը** *կամ* **աղամանը** *կոչվում է «սևբաստացի», որովհետև աղը այդտեղից է գալիս:*

Երբեմն բառը կրում է իր հնդինակի անունը. ինչպես՝ guillotine *«կախաղան»* Guillotin *անձի անունով,* mansarde *«տանիքի տակ սենյակ», որ կրում է Ֆրան-*

---

* *Ձեռագիր բնագրում չարունակությունը (1 էջ ?) բացակայում է (էջակալումը չի խախտված) (Ա. Գ.):*

սիայի ճարտարապետ Mansard-ի անունը, eustache «կոչտ դանակ՝ փայտյա կոթով»՝ նշանավոր ֆրանսիացի դանակ չինող Eustache Dubais-ի անունով: Կրունկի մի տեսակը կոչվում է Պոլիս **լուքեն**, որ է Louis XV թագավորի անունով:

Երբեմն մեկի անունը մի պատահական հանգամանքով կցվում է մի առարկայի: Այսպես ընդհանուր **քննիչ** Etienne de Silhouette-ի, որ այն ժամանակ չատ սիրված էր, անունը դարձավ silhouette «ուրվագիծ», «պատկեր», և եթե այս մասին ժամանակակից վկայություն չլիներ, ոչինչ կարելի չէր գուշակել: Անգլիացի Boycott գորապետի անունը 1880 թվին դարձավ հասարակ անուն (բոյկոտ անել):

Այս կարգի բառերը հորինելու համար հանգամանքները երբեմն այնպես մասնակի են լինում, որ բառը սահմանափակված է լինում մի քաղաքում կամ գյուղում, մինչև իսկ՝ մի ընտանիքում: Ինչպես՝

Սերաստիայի «աղ, աղաման» հատուկ է միայն Եվդոկիո: Թյունի «ապուչ» ծանոթ է միայն Ղարաբաղցոց, որ, անչուշտ, մի նշանավոր տիպի անուն է: Պոլսի Սամաթիա թաղում որոշ չրջանի մեջ կար **Փիլիպոս** բառը «մեծ առնի» իմաստով՝ անչուշտ համանուն մի անձի անունից: **Խըրայել** Պոլսում նշանակում էր «ցնցոտիներ հագած մարդ», **Բաքու**՝ մեր տան մեջ, գործածական էր **խոսրով** բառը «ապուչ» իմաստով. օրինակ՝ **խոսրով-խոսրով** մի՛ խոսիր. Սա չատ **խոսրովի** է «չատ տխմար է» և այլն: Այս կարգի բառերի մի քիչ ավելի հասարակական տիպն են որոշ մասնագետների գործածած բառերը, որ միայն իրենք գիտեն:

Ընկերային ըմբռնումները, պատչաճության օրենքները և քաղաքավարությունը, ինչպես տեսանք, նշանակություն ունեն բառերի գործածության մեջ: Ոմանք դատապարտվում են անգործության, և այն ժամանակ լեզուն ստեղծում է նոր բառեր:

Օրինակ՝ **վարտիք** բառը ժողովրդի մեջ տգեղ էր արտասանել, ուստի կազմվեց «չապկրնկեր», «ոտաչոր», որոնք քաղաքավարական ձևեր են:

Ժամանակ անցնելով՝ նույն քաղաքավարական բառը դառնում է սովորական, այնպես որ երբ բուն նշանակություններ անբաժան կերպով կպչում է բառին, նա էլ ջնջվում է, և փնտրվում է նոր ձև: Այսպես՝ **վարտիք**-ից հետո, անչուշտ, հնարված էր **փոխան**, որ նշանակում էր բուն «փոխարեն, փոխանակ կամ փոխելիք չոր»: Շատ քաղաքավար, չատ անմեղ մի բացատրություն էր, բայց չատ գործածությամբ նա դարձավ սովորական և հիմա անցած է անպարկեշտ բառերի չարքը, ուստի ջնջվել է և տեղը դրվել «չապկրնկեր, ոտաչոր»: Մի փոքրիկ քննություն ցույց է տալիս, որ այս կարգի բառերը մոտավորապես քառորդ դար կյանք ունեն: Պոլսի բարբառում հնապես գործածական էր տճկ. **հալէ**, որ է արար. xalā «դատարկ, պարապ». սրանից bayt-ul-xalā «արտաքնոց» (բուն նշանակում է՝ դատարկ տուն), հետո՝ **վհնեֆ** բառը «արտաքնոց» նշանակությամբ. բառը հետո անպարկեշտ դարձավ, և նրա տեղ դրվեց մի նոր՝ քաղաքավարական բացատրություն՝ **հասարակ**: Այս բառը գործ էր ածվում տատս* խոսակցության մեջ: Բնականաբար իր կազմությամբ չատ անմեղ բառ էր, բայց հետո դարձավ անպարկեշտ: Այն ժամանակ հնարվեց հարկավոր, որ

* Հռիփսիմե Քեմհաճյան, ծն. 1820 թ., Պոլիս՝ Սամաթիա թաղում, † 1895:

գործածում էր մայրս* իր խոսակցության մեջ՝ իբրև պարկեշտ բառ, հակառակ **հասարակ** բառին: Իմ** փոքրությանս սովորական էր **գործարան** բառը: 1895 թվին հեռացա Պոլսից և երբ 1910 թվին նորից այցելեցի, տեսա, որ **գործարան** բառն էլ վերացել, և նրա տեղ, իբր պատշաճական բացատրություն, դրվել էր **պետքարան**: Այսպես, ուրեմն, մոտ մեկ դարու ընթացքում իրար էին հաջորդել 4 բառ (**հասարակ, հարկավոր, գործարան, պետքարան**):

ԱՐՄԱՏՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏԸ

Ամեն լեզվի մեջ էլ, ուր հին գրականություն կա, նկատելի է, որ արմատների քանակը հնում ավելի է, քան նորում: Ուրիշ խոսքով, հին գրականության մեջ կան արմատներ, որոնք նոր լեզվում այլևս գործածական չեն: Օրինակ, առնենք հայերենը: Ըստ իմ Հայոց լեզվի պատմության մեջ, հտ. Բ, էջ 600, կատարված վիճակագրության, հայ լեզվի արմատների քանակն է 11.000, որոնցից, օրինակ, հին հայ գրականությունից հայտնի է **պսեմն** «վարդի փուչ» բառը, որ մի անգամ գործածված է Ոսկերևրանի մոտ, մի անգամ էլ՝ Վաստակոց գրքում (ԺԲ դար): Այժմ այդ բառը գոյություն չունի ոչ մի բարբառում. մեր գրական հայերենն էլ չի գործածում: Գտնվել է միայն մի խելոք անձ, որ Մասիս ամսաթերթում 90-ական թվերին հրատարակել է 3 տնից բաղկացած մի ոտանավոր, որի առաջին տունը վերջանում է **վսեմը** բառով, երկրորդը՝ **նսեմը**, երրորդը՝ **պսեմը**: Բանաստեղծը գրել է անչուչտ այս ոտանավորը, ցույց տալու համար բոլորին, թե գիտեն այդ **պսեմ** բառը, որ, իհարկե, Առաձեռն բառարանումն է տեսել: Բայց գիտենք, որ մեր բարբառներում կան շատ արմատ բառեր, որոնք հին գրականությունից հայտնի չեն: Սկզբունքով ընդունելով, որ լեզուները նոր արմատներ չեն չինում, ուստի ստիպված ենք ընդունել, թե բոլոր այդ նոր արմատները նոր չեն, այլ կային նաև հին ժամանակ և պատահաբար միայն չեն մտել գրականության մեջ: Այս բանը կարելի է ապացուցել նրանով, որ այդ արմատների մի մասը արդեն կարելի է մեկնել իբրև հնդեվրոպական ծագումից (տե՛ս Հայոց լեզվի պատմ., Ա, էջ 23–100):

Դժբախտաբար դեռ չէ կազմված «Հայ բարբառների Արմատական բառարանը», որով պիտի իմանայինք մի կողմից հայ բարբառներում գոյություն ունեցող բոլոր արմատները (և նրանց քանակը), մյուս կողմից՝ նրանց ծագման համար բոլոր հնարավոր ենթադրությունները:

Ինչ էլ որ լինի, քանի որ հնդեվրոպական արմատների թիվը ըստ Walde-Pokorny բառարանի 2223 է (տե՛ս Հայոց լեզվի պատմ., Ա, էջ 33), և նրանցից միայն 909 հատը պահված է հայերենում, ուստի կարող ենք ասել, թե հնդեվրոպական արմատների կեսից ավելին կորած է հայերենում:

Նման կամ գրեթե նման երևույթ պիտի գտնենք նաև ուրիշ լեզուներում:

Եզրակացություն. նոր արմատներ չեն ծնվում, բայց հները մեռնում են, ուստի միշտ պակասում են: Մեր ասածը կարելի է հաստատել գործնականապես մի շատ հասարակ օրինակով:

---

* **Ընծա Աճառյան**, ծն. 1853, Պոլիս՝ Նարլը-Գափու թաղը, † 1921:

** **Հրաչյա Աճառյան**, ծն. 1876 մարտ 8, Պոլսի Սամաթի Նոր թաղում:

Ամենքիս Հայտնի և չատ սովորական **Հովիվ** *բառը ըստ* Müller-*ի և* Bugge-*ի ծագում է Հնխ.* ovipā *«Հովիվ» բառից, որ կազմված է* ovi *«ոչխար» և* pā *«արածել» բառերից: Այս երկու արմատներն էլ գոյութիւն չունեն Հայերենում, ուստի Հնդեվրոպական այդ կրկին արմատները մնում են Հայերենում, թեև նրանց մի բարդ ձևը մնացել է:*

Հերու *(անցյալ տարի) = սանս.* parut, *Հն.* περῦτι, *կազմված է Հնխ.* per *«անցյալ» և* ut *«տարի» բառերից. այս երկու արմատներն էլ կորած են Հայերենում, իսկ ուրիշ լեզուների մէջ Հազիվ իրենց հետքը պահած:*

Հարց է, թէ Հին արմատներից որո՞նք են կորչում, և նրանց փոխարէն ի՞նչ է գործածվում:

Առաջին Հարցի պատասխանը չատ պարզ է. կորչում են Հոմանիշ արմատներից նրանք, որոնք այլևս ավելորդ են դարձել:

Օրինակ՝ գրաբար ունենք՝ **Հաց, նկան, նկանակ, գրտակ, պղակունդ** *և այլն. բացի առաջինից բոլորը ավելորդ են դարձել և ջնջված են: Քիչ առաջ Հիշված* **պսեմ** *բառը ջնջված է, և մնում է իր Հոմանիշ՝ սովորական* **փուչ** *բառը, իսկ իր մյուս Հոմանիշը՝* **տատասկ,** *բանաստեղծական արտահայտութիւն է:* **Ոչխար** *և* **օղիք** *Հոմանիշ են. առաջինը մնում է, երկրորդը անգործածական է դարձել և մնում է: Քիչ մարդ կա, որ իմանա* **Հոր** *«մեկի աղջկա ամուսինը» բառի գոյութիւնը, որ Հին մատենագրութեան մէջ էլ միայն երկու անգամ է գործածված (Փիլ., էջ 187), և որի ծագումն էլ ոչ ոք չգիտե: Այդ անսովոր բառը ջնջված է լեզվից, փոխանակվելով իր սովորական Հոմանիշ* **փեսա** *բառով:* **Օժիտ** *բառը ունի 4 Հոմանիշ ձևեր, որոնք են՝* **պաչտատական, պռոյգ, տուայը, մահր.** *չորսն էլ կորած են, և մնում է միայն առաջինը՝* **օժիտ:**

Անդունդ *բառը կազմված է* **ան-** *բացասականով,* **դունդ** *= լատիներեն* fundus *«Հատակ» բառից և նշանակում է բուն «անՀատակ».* **դունդ** *արմատը կորած է:*

Գրաբարի մէջ կան մի խումբ պակասավոր բայեր. ինչպես՝ **գամ, գաս, գոյ... բամ, բաս, բայ...** *և այլն: Նման պակասավոր բայեր կան նաև ուրիշ լեզուների մէջ: Աչխարհաբարում այդ պակասավոր բայերը ջնջված են, Հազիվ իրենց հետքերն են պահում: Բայց այս բոլորը ցույց են տալիս, թէ արմատները ու բառերը ամբողջովին կարող են ջնջվել:*

Ախաւեղազէս *բառը, որ նշանակում է «այունագլուխ», անչուշտ արմատ չէ, որովհետև այսքան երկար արմատ չի կարող լինել. Համարվում է բարդ բառ. կազմված* **ախաւեղ** *«այուն» +* **գէս** *«խոյակ» բառերից. երկուսն էլ կորած են մեր լեզվից:*

Երկրորդ Հարցի պատասխանը բխում է առաջինից. Հոմանիշներից մեկը, Հաղթելով մյուսներին, բռնում է նրանց տեղը: Այս նորեկը կարող է լինել մի ուրիշ լեզվից փոխառութիւն, ինչպես է **ոչխար** *(վրացականից): Հայերեն ամիսների անունները բոլոր վտարված են, և նրանց տեղ եկել են լատին ձևերը՝ իրր նոր արմատ:*

Շատ բարբառներում ջնջված է **ներ** *ազգականական բառը, և նրա տեղ կազմված է* **տագերակին,** *որ բարդված է* **տագր + կին** *բառերից:*

Վերջապես նախկին կորած արմատների տեղ կարող են Հաջորդել նորանոր բարդ և ածանց բառեր, այսինքն՝ մի ուրիշ Հին արմատից կամ արմատներից

կազմված բառեր: Օրինակ՝ գյուղացու համար ամենասովորական **կոզի** *բառը ջնջվել է, և նրա տեղ համատարած տիրում է* **կաթագ** *բառը (պարսկերենից):*

Ջնջված է **ուրջու** *բառը, որ, ըստ իս, կազմված է հնագույն հյ.* ****ուր** «որդի» բառից, որ ապա կորել է, և այդ* **ուրջու** *բառի տեղ նոր բարդությամբ կազմված են* **որդեզիր, հոգեորդի, հոգեզավակ** *կամ նույնիսկ՝* **խորթ որդի** *ձևերը:*

Սուտ արմատներ չինվելու մասին արդեն խոսել ենք. տե՛ս վերը **սուրճ, խոհիկ տալ, գչիր** *և այլն:*

Հայերենի մեջ ունենք բազմաթիվ բառեր, որոնք մեր իմացումով պարսկերենից փոխառյալ պետք է լինեն. այսպես՝ **աշտանակ, աշտարակ, ամբաստան** *և այլ հարյուրավոր բառեր: Եթե պահլավական գրականությունը ճոխությամբ մեր ձեռքը հասած լիներ, կարող էինք վստահորեն ասել, թե այդ բառերի մեծ մասը պիտի գտնեինք պահլավերենում: Բայց պահլավերեն գրականությունը հենց պարսիկների ձեռքով այրված լինելով՝ մենք չենք կարող այդ ասել կամ անել:*

Բայց եթե պահլավ գրականությունը ոչնչացված է, կենդանի է միշտ պարսկերեն լեզուն՝ իր բազմաթիվ բարբառներով և ցեղակից անկախ լեզուներով (աֆղաներեն, բելուջերեն, քրդերեն, օսերեն և այլն): Ինչո՞ւ այդ մեր որոնած բառերը սրանց մեջ էլ չկան: Նշանակում է՝ նրանց համազոր բառերը, եթե պահլավերեն գրականության մեջ գտնված լինեին էլ, պարսկերենից և նրա ցեղակից այլ լեզուներից ջնջվել էին:

Ահա մի մեծ թիվ բառերի և արմատների ընդհանուր կորուստ իրանական լեզուների մեջ:

ԲԱՌԵՐԻ ԿՈՐՈՒՍՏԸ

Շատ բառեր կորան գրաբարից աշխարհաբար անցնելու ընթացքում: Դրանց մեծագույն մասը կարելի էր կոչել ավելորդ. օրինակ՝ բազմահազար ածականների առատությունը, մանավանդ նրանք, որ ճամարտակ հեղինակների չինած չինծու բառերն էին: Այսպես Քոթենավորի հորինած բառերից...: Ավելորդ կարելի էր կոչել նաև բազմաթիվ համանիշ բառերի առատությունը, եթե մանավանդ նրանք մասնավոր իմաստով տարբերացված չէին, և կամ եթե էին, մեզ համար այդ տարբերությունը անծանոթ էր: Այսպես՝* **ագի, ձետ, տտուն,** *որոնք տեղի տվին մի միակ* **պոչ** *բառի մեջ: Այդ խմբի հոմանիշներից պահվել է միայն* **դմակ,** *որ մեր տնտեսության համար չատ կարևոր մի բան է ներկայացնում:*

Երբեմն այս կարգի բառերի կորուստը մեզ դժվար դրության մեջ է գցում: Օրինակ՝ գրաբարը ուներ **տի** *(տիք) բառը, որով հասկացվում էր մարդու տարիքը: Այժմ մենք չունենք այդպիսի բառ և գիտենք միայն* **տարիք** *և* **հասակ:** *Առաջինը միայն մեկի ապրած տարիքն է, իսկ երկրորդը տարատամ իմաստ ունի. թե՛ նշանակում է մեկի ապրած տարիքը և թե հասակի բարձրությունը: Ասում ենք, օրինակ, 20 տարեկան հասակում:*

Ծանոթ երգը ասում է՝

Հասակս քսան տարեկան և այլն:

---

* *Բնագրում օրինակների տեղը բաց են թողնված (Ս. Գ.):*

Մյուս կողմից ասում ենք՝ բարձրահասակ «բարձր. հասակը բարձր»,
մեծահասակ «տարիքը չատ»,
կարճահասակ «հասակը ցած»,
փոքրահասակ «տարիքը քիչ»,

իսկ **միջահասակ** *նշանակում է միայն «միջակ հասակով, ոչ բարձր և ոչ ցած», չի նշանակում «միջին տարիքի», որի համար առանձին բառ չունենք:*

Ահա այս անպատեհության պատճառով է, որ ժողովուրդը փոխ է առել թրք. բոյ (boy) բառը՝ «բարձրություն» իմաստով և նրանից էլ ազատորեն կազմում է **մարդաբոյ, բոյով** *բառերը:*

Գրաբարը գիտե նաև **տիւ** *բառը, որ ցերեկվա 12 ժամն էր նշանակում, և նրա դեմ կար* **օր,** *որ ամբողջ 24 ժամն էր նշանակում, այն է՝ «տիւ և գիշեր»:*

Այժմ բոլորովին ջնջված է այս **տիւ** *բառը: Հների համար գուցե այնքան էլ կարևոր չլիներ այս բառի գոյությունը, որովհետև գիշերային կյանք չկար: Բայց այժմ, երբ նույնիսկ գիշերային ճամփորդություններ ենք կատարում հազարավոր կիլոմետրների վրա,* **տիւ** *և* **օր** *բառերի գոյությունը անհրաժեշտ է, և մենք ստիպված դիմում ենք ռուսերենին, որից փոխ ենք առել չատ հարմարավոր կարճ և նշանակալից* **սուտկա** *բառը (24 ժամվա իմաստով): Այժմ էլ խանգարում է* **օր** *բառը, որ թե 24 ժամվա ընթացքն է նշանակում և թե միայն 12 ժամվա չրջանը:*

Բառերի ջնջման պատճառներից մեկն էլ համանունն է: Օրինակ, **Հաւ** *նշանակում է թե՛* **պապ՝** *հոր հայրը կամ մոր հայրը և թե* **թռչուն:** *Անչուչտ ծիծաղ էր առաջանում, երբ մեկը հարցնում էր. «Հաւը նե՞րսն է». այս պատճառով* **Հաւ** *«պապ» բառը ջնջվեց, և նրա տեղ փոխ առնվեց հունարենից* **պապ** *բառը:*

Հին հայերեն **ազանիմ** *բայը ուներ երկու իմաստ՝ «չորերը հագնել» և «գիշերը մի տեղ օթևանել». այս երկուսի չփոթության առաջքն առնելու համար էր, ահա՛, որ առաջինը ստացավ Հ նախաձայնը, բայց, այնուամենայնիվ, այս փրկիչ միջոցն էլ չօգնեց, և «օթևանել» իմաստը ջնջվեց:*

Բառերի ջնջման պատճառներից մեկն էլ euphémisme*-ն էր, որ է* **պարկեշտաբանություն:** *Գիտենք, որ անպարկեշտ բառերը հանվում են լեզվից կամ առնվազն վերապահվում են մասնավոր գործածության, բայց ուր որ հնարավոր է, անպարկեշտ մի բառի նմանություն ցույց տվող բառերն էլ երբեմն հանվում են լեզվից՝ փոխանակվելով մի ուրիշ բառով: Այսպես Նոր Նախիջևանում* **կչռել** *բառը ջնջված է՝ չչփոթելու համար* **չռել** *բայի հետ, և տեղը դրված է* **քաշել:** *Նույնպես ասում են* **փոքր** *և չեն ասում* **պզտի, պզտիկ,** *խուսափելու համար համանուն ռուսերեն մի բառից:*

ԱՆՎԱՆ ՓՈՓՈԽՈՒՄ

Երբ մի լեզվի հին ու նոր վիճակները համեմատենք իրար հետ, կտեսնենք, որ թեև չատ բառեր նույն են, բայց կան էլ, որ փոփոխվում են: Ինչպես՝

Հուն.	Հաց	Հինը	ἄρτος	Նորը	ψωρί
	գինի		οἶνος		κρασί
	ջուր		ὕδωρ		γερό
	տուն		οἶκία		σπίτι

աչք	ὀφθαλμός	μάτι
թռչուն	ὄρυις	ποιλί

Սրանց պատճառները.

1) Շատ մաշված բառերը ջնջվում են. լատիներեն os «բերան» *շատ կարճ էր, ուստի ոչ մի ռոման լեզվի մեջ չկա, տեղը ուրիշ բառեր են դրված.*

2) կամ կյանք ստանալու համար նոր մասնիկով երկարում.

լատիներեն apis, auris, sol > *նոր լատիներեն* apicula, auricula, soliculus > *ֆրանսերեն* abeille, oreille, soleil.

3) համանուններից խուսափելու համար.

լատիներեն serrare «սղոցել» *և* serare «գոցել» *իրար նման էին, ուստի* serrare *շատ տեղ ջնջվեց և փոխանակվեց ուրիշ բառով. ֆր.* scier (=secare). «ծես, կանոն, կարգ», sü «բան, առարկա», tay «վարպետ, տեր, ուսուցիչ», tö «արվեստավոր», viek «աշխատանք» և այլն:

Օրինակներ՝

troỷ	*մեջ*	–	be troŋ	*ներքինը*
an	*ուտել*	–	do an	*ուտելիք, պարեն*
uoŋ	*խմել*	–	do uoŋ	*ըմպելիք, խմիչք*
mai	*կարել*	–	t'ö mai	*դերձակ*
lam	*աննել*	–	viek lam	*գործ, արարք ?*
ghet	*ատել*	–	buŋ ghet	*ատելություն*
t'at t'a	*պարզ*	–	loŋ t'at t'a	*անկեղծություն*
toan	*հաչվել*	–	fer toan	*թվաբանություն*
tçet	*մեռնել*	–	sü tçet	*մահ*
yay	*ուսուցանել*	–	hok	*ուսանել* – t'ay yay hok *պրոֆեսոր*
le	*հանդես*	–	kua le	*նվեր**

[ԲԱՌ ԵՎ ՄԱՍՆԻԿ]

Նկատելի է վերի օրինակների մեջ, որ բառերից չատերը, մասնիկ դառնալով, դեռ իրենց առաջին նշանակությունից չատ հեռացած չեն: Այս պարագային կարող ենք ածանց բառերը բարդ բառ համարել, ինչպես՝ to mai «դերձակ» *(իբր «կարելա+վարպետ»): Բայց կան, որ բոլորովին հեռացել են, ինչպես՝ «փոր» և «սիրտ» բառերը, որոնք դարձել են վերացական մասնիկ՝ «-ություն»:*

Միջին տեղ են բռնում, օրինակ, վոթյակերենի մասնիկները, որոնք ոչ բարդ բառեր կազմելու չափ անկախ դիրք ունեն և ոչ էլ մասնիկ կոչվելու չափ դիմազուրկ են: Այս կարգի մասնիկները Емельянов-*ը* (Грам. вотского языка, 62) *կոչում է* **հետադիր** *(հակառակը* **նախադիր** *բառի, որովհետև կցվում են բառի ծայրին):*

Գրեթե նույնպես է դրավիդյան լեզուների մեջ: Օրինակ՝ թամուլերեն an, al *արականի և իգականի վերջավորություններն են, ինչպես՝* ill-ān *ամուսին, այր.* ill-al *տանտիկին, կին. առաջանում են* ān-u→*տղամարդ և* āl-u *կին բառերից, իսկ* il *նշանակում է «տուն», որով վերի մասնիկները միաժամանակ կարելի է ըմ-*

* **Dirr**, Gram Annam., *էջ 9 և 37:*

բրոնել թե իբր մասնիկ և թե իբր բառ, որով illān, illāl, *կարող են համարվել թե բարդ և թե ածանց* (Caldwell, 227)։

Աֆրիկյան հաուսա լեզվի մեջ da *նշանակում է բուն «ունեցած», կցվում է գոյականներին և կազմում է ածական. ինչպես՝* rua *«ջուր»,* da rua *«ջրալի»,* nono da-rua *«ջրոտ կաթ»,* anfani *«օգուտ»,* da anfani *«օգտակար»,* yaro da anfani *«օգտակար տղա»* (Marré, Spr. der Hausa, 47)։

Կարող է դարձյալ մասնիկը առաջացած լինել մի բառից, որ լեզվից բոլորովին անհետացած է, և որ միայն ցեղակից լեզուների օժանդակությամբ կարելի է քննել ու երևան հանել։ Այսպես, օրինակ, հունարեն ἀνδρόμεος «մարդկային» կազմված է ἀνδρο «մարդ» բառով և μεος մասնիկով, որ ոչ մի բացատրություն չունի հունարենում, բայց անչուշտ նույն է սանս. maya – *«ձև, երևույթ» բառի հետ, որով սանսկրիտի մեջ կազմվում են բազմաթիվ բարդ բառեր* (Meillet, Traité, 342)։

Ինչպես որ բառերը կրճատվելով մասնիկ են դառնում, ճիշտ նրա հակառակը լինում են դևպքեր, երբ մասնիկը առանձնանալով դառնում է անկախ բառ։

Ամենքս էլ ասում ենք **ցը** *և հասկանում ենք «ցտեսություն», բայց* **ցը** *միայն մի նախդիր է, հագիվ իբր մասնիկ։*

Առտիալի բարբառով **պի** *և* **կի** *առանձին բառեր են և նշանակում են «այո»։ Առտիալցին հարցնում է.*

– Կի տա՞ս, կամ՝ Պի տա՞ս «կտա՞ս, պիտի տա՞ս»։

Խոսակիցը պատասխանում է.

– **Կի** *կամ* **Պի,** *այսինքն՝ «կտամ կամ պիտի տամ», որ է՝ «այո՛»։*

Ունենք **ուստ** *մասնիկը, որ կազմում է բացառական. օրինակ՝ երկնուստ, այլուստ, հանկարծուստ, ի վերուստ և այլն, բայց ունենք և* **ուստի,** *որ նշանակում է «ո՞րտեղից»։ Ո՞ւր է մասնիկին կցված արմատ բառը. չկա, հետևաբար ենթադրում եմ, որ պետք է լինի* ***ու՝** «ուր, որտեղ», որ միանալով հաջորդ* **ու** *ձայնավորի հետ՝ հալվել է։ Այսպիսով* **ուստ** *մասնիկը դարձել է առանձին անկախ բառ։*

Ամենքս գիտենք, որ հայերեն երեսուն, քառասուն, հիսուն.... թվականները կազմված են **–սուն** < *հնխ.* kontə *ձևից, որ առանձին բառ է և նշանակում է «տասն»։ Բայց* **սուն** *մեր մեջ դարձել է մասնիկ, իսկ* **հիսուն** *բառը, որ է «հինգսուն», կորցնելով իր նախավանկը, որոշ բարբառներում դարձել է միայն* **սուն** *«50». այսպիսով* **սուն** *բառը հասավ մասնիկի աստիճանին, ապա* **սուն** *մասնիկը դարձավ անկախ բառ։*

Լեզվի հետագա ընթացքում քանի ձևերը մաշվում են, այնքան էլ մասնիկները անճանաչելի են դառնում։ Ուրեմն մասնիկների զարգացման ընթացքն է նախ՝ բառ, հետո՝ կիսանկախ բառ և ավելի հետո՝ մասնիկ։ Այսպես, օրինակ՝ լատիներեն cum *«հետ, միասին» առանձին նախադասություն է, իբրև նախամասնիկ դառնում է* com, con, co, *որոնց հետ նույն է նաև գերմ.* ge- *նախամասնիկը, բոլորովին անճանաչելի։ Ճապոներենում ածականը որոշ դեպքերում կցվում է* mono *«իր, բան» բառին, բայց այս* mono *կրճատվելով դարձել է* no, *նույնիսկ* n. *օրինակ՝* samui *«ցուրտ»,* sammui no, samui-n *«ցուրտ բան, ցուրտ»* (Plaut, 25)։

Հայերենն էլ (թե գրաբարը և թե մանավանդ աշխարհաբարը) գտնվում է նույն վիճակի մեջ. ունի՝

1) մասնիկներ, որոնք իրենց ինքնուրույնը չեն կորցրած, և կարելի է թե բառ համարել և թե մասնիկ.

2) մասնիկներ, որոնք դեռ խախուտ դրություն ունեն և՝

3) նրանք, որ միայն իբրև մասնիկ են գործածվում:

Առաջին կարգից հիշենք **պես** *և* **որեն** *(պէս, օրէն), ինչպես՝ գերազանցորեն, քաջապես, մեծապես և այլն, որոնք կարող ենք համարել թե բարդ բառ և թե ածանց: Գրեթե նույնը կարելի է ասել* **-կից** *բառի համար, որից ունենք գրաբար* **ծառայակից, ուղեկից** *և այլն. տարբերությունը որոնց մեջ իմաստի համար է:*

Երկրորդ կարգից կարելի է հիշել **-բար** *«կերպով, ձևով, եղանակով» մասնիկը. ինչպես՝* **հայկաբար** *«հայկի պես՝ քաջությամբ»,* **հսկայաբար, դյուցազնաբար** *և այլն: Առաջացած է* **բարք** *«բնավորություն» գոյականից: Նույնպես են* **ներ-, արտ-** *նախամասնիկները. օր.՝* **արտասահման, ներգործել,** *որոնք բարդ բառի ձև ունեն, բայց նախամասնիկ են, ըստ որում դրանց հնդիկական (Դավիթ Անհաղթ կամ մի ուրիշը) հնարել է իբր նախամասնիկ, և* **արտ** *«դուրս» և* **ներ** *«ներս» ձևերը իբրև առանձին բառ գոյություն չունեն:*

Այստեղ կարելի է դնել նաև **թող** *և* **պիտի** *բառերը, որոնք ծառայում են իբրև մասնիկ հրամայական և ապառնի կազմելու համար և կարող են դրվել բայից թե առաջ և թե հետո՝* **պիտի երթամ, երթամ պիտի, թո՛ղ երթա, երթա՛ թող:** *Վերջին հանգամանքը ցույց է տալիս, որ դեռ նրանք բացարձակ մասնիկներ չեն համարվում (գոնե որոշ բարբառներում), ապա թե ոչ մեկը կամ մյուսը ընդունված կլիներ վճռապես:*

Որոշ բարբառներում դրանք վերածված են լիակատար մասնիկների և այնքան կրճատված, որ մինչև անգամ հասել են **թ, պ, տ** *բաղաձայններին, ինչպես՝* **տերթամ** *«պիտի երթամ»,* **պերթամ** *«պիտի երթամ»,* **թերթա** *«թող երթա»:*

Երրորդ կարգին է պատկանում մասնիկների ստվար մասը, որոնցից ոմանց ծագումը պարզվում է միայն լեզվաբանական քննությամբ, իսկ մյուսները մնում են բոլորովին անհայտ: Այսպես, օրինակ -(ա/վոր), (ա/ւոր) «կրող, ունեցող» մասնիկը (օրինակ թագաւոր, մեղաւոր, երկնաւոր) հնխ. bher > *հայերեն բերել արմատի ο ձայնդարձն է (ինչպես՝ հունարեն φόρος, լատիներեն* fer, *համմտ. հունարեն λείχο – φόρος «սպիտակազգեստ», լատիներեն* lucifer *«լուսավոր» բուն նշանակում են «լուսաբեր» և ծագում են հնխ.* bhorā *ձևից):*

*Մասնիկներ կարող են առաջանալ նաև թյուրըմբռնումով (*fausse perception*), որով բառի բոլորովին աննշանակ մի տարրը նշանակությամբ օժտված է ենթադրվում և բաժանվելով բառի ամբողջությունից՝ վերածվում է մասնիկի:*

Սրա համար լավ օրինակներ են անգլերեն -en *և գերմ.* -er *հոգնակերտ մասնիկները՝* oxen, ochsen, bücher, chldren *և այլն բառերի մեջ: Անգլերեն* oxen *կամ գերմաներեն* ochsen *ձևերի մեջ* n*-ն պատկանում է բառին և համապատասխանում է սանս.* uksán *«եղն» ձևի* an *հանգին: Բայց որովհետև* oxen=ochsen *եղակիի մեջ չեն գործածված, այլ միայն հոգնակիում, սխալմամբ կարծվել է, որ* -en*-ը հոգնակի մասնիկ է: Այսպես նաև գերմ.* -er, *որ բների սովորական* -s *վերջավորությունն է: Ինչպես՝ լատիներեն* genus, *սեռական* generis *ձևի մեջ*

s-ն դարձել է r, նմանապես գերմանական ընտանիքի մեջ դարձել է r, միայն թե եղակիում այդ r-ն ջնջվել է, հոգնակիի մեջ՝ պահվել, ինչպես՝ Հ. անգլերեն lamb, lambe, lambes, հոգնակի lambru, lambrum, lambra: Սրանից հետևցրել են, թե -er հոգնակիի մասնիկ է և անալոգիայով տարածել են չատ բառերի վրա:

Պոլսի բարբառով կա **-լիանոս** մասնիկը, որ կարելի է կցել զանազան ածականների վրա, ինչպես՝ **չարլիանոս, քյոռլիանոս** «ապուշ», **խոզլիանոս** «տխմար» և այլն: Այս մասնիկը ծագած է թյուրըմբռնումով՝ Հուլիանոս Ուրացող կայսեր անունից: Նախ կազմվել է իբրև **չար-Հուլիանոս:** Եվդոկիոց բարբառով՝ **չար-լիանոս,** որի մեջ հետո Հուլիանոսի գաղափարը կորչելով, կարծվել է **-լիանոս** մասնիկ է՝ **չար** ածականը չափավորող: Դրանից հետո անալոգիայով տարածվել է նաև ուրիշ բառերի վրա: Զարմանալի է անչուչտ, որ Հռոմի կայսեր անունը Հայերենի մի բարբառի մեջ մասնիկ դարձած լինի, բայց լեհերենում նույնիսկ **Աստված** մասնիկ է դարձել: Այս լեզվի մեջ բայի ըղձականը կազմելու համար բայից առաջ դնում են bodaj կամ bodajby, որ համապատասխանում է ռուս. **Бог дай** «Աստված տա» դարձվածին, իբր Հայերեն **երանի թե:** Բայց այս ծագումը լեհերենում մոռացված է, և [առնվում է] իբր մի բառ, այն էլ հասարակ ապառով է գրվում, bodajbym cie nigdy nie- naf «երանի քեզ ճանաչած չլինեի» (Joel, 272):

Մասնիկը կարող է նաև իր ձևը փոխել և մի նոր կերպարանք ստանալ նմանողությամբ և թյուրըմբռնումով: Այսպես՝ ֆրանսերեն կան lait-ier, cabaret-ier և այլն բառերը, որոնց մեջ մասնիկն է ier, իսկ t-ն պատկանում է բառին: Բայց որովհետև առանձին հնչելու ժամանակ այդ բառերը արտասանվում են lé, cabaré, ուստի կարծվել է թե մասնիկն է tier, և այսպիսով ձևացել է մի նորաձև մասնիկ tier ձևով, որով և կազմվել են չատ բառեր, ինչպես՝ bijoutier, ferblantier, cafetier և այլն: Այսպես նաև անգլերեն -ling մասնիկը առաջացած է հին edil-ing, vesl-ing, lytl-ing բառերի վրայից, կարծվելով թե մասնիկն է ling, մինչդեռ l-ն պատկանում է բառին և մասնիկն է միայն -ing:

Այս բոլոր դատողությունները անչուչտ վերաբերում են նաև Հնդեվրոպական նախալեզվին, այստեղ էլ մասնիկները առաջացած պիտի լինեն նախաւոր անկախ բառերից, բայց նրանք աչքին այնպես մաչված են, որ ամեն մի փորձ նրանց նախկին անկախ վիճակը վերականգնելու՝ ապարդյուն է:

Հնդեվրոպական բառերի վերջավորությունները նույնպես կրճատված-հապավված և փոփոխված են Հայերենի մեջ այնպես, որ չատ դժվար է ճանաչել ու վերականգնել մասնիկների նախաւոր վիճակը, հատկապես այն պատճառով, որ մասնիկները հենց վերջավորություններն են կազմում (տե՛ս Meillet, BSL, № 68, էջ 21):

Բառից մասնիկի անցնելու կարևոր հանգամանքն այն է, որ բառը այլևս իր ձևաբանական հատկությունները կորցնում է և մասնավորի տեղ ընդհանուր արժեք է ստանում: Այսպես՝ բուլղարերենի մեջ **ща** «ուզել» բայը դարձել է ապառնի կազմելու միջոց և բայի հետ միասին խոնարհվելով՝ լինում է եղակի և հոգնակի երեք դեմքերի համար առանձին առանձին՝

ща неса	щемъ несемъ
щешъ несешъ	щете несете
ще несе	щатъ несатъ

իրր թե հայերեն ասեինք՝

ուզում եմ տանեմ,
ուզում ես տանես,
ուզում է տանի և այլն:

Բայց սա մասնիկի հատկությունը չէ. ուստի հետո եզ. III դեմքի այն ձևը ընդհանրացել է բոլորի համար և այժմ խոնարհվում է՝

ще неса, ще несешъ, ще несе.

ще несемъ, ще несете, ще несатъ (Лавровъ, 74, 78):

*Հայերենի մեջ էլ **կը**, **եթե կամ** բայի խոնարհյալ ձևն է...*

Միևնույնը սերբերենում ուրիշ ձև է ստացել. օժանդակը այստեղ դարձել է tću և խոնարհվում է մյուս բայի հետ՝ դրվելով նրանից կա՛մ առաջ, կա՛մ հետո. առաջ դրվելու դեպքում բայը դրվում է անորոշի ձևով, իսկ հետո դրվելու դեպքում՝ դրկվում է իր վերջավորություններից:

Այսպես՝

ya	tću	siušati	*կամ* sluša-tću
ti	tćeš	»	sluša-tćes
on	tće	»	» -tće
mi	tćemo	»	» -tćemo
vi	tćecte	»	» -tćete
oni	tće	»	» -tće

Առաջին դեպքում դեռ օժանդակ է, որ հետո բուլղարերենի (Беленький, 42) նման պիտի հասնի նախդիրի աստիճանին, երկրորդ դեպքում արդեն վերածվել է հետամասնիկի կամ վերջավորության: Նախամասնիկները չատ սովորական են սեմական և հարավ կովկասյան լեզվաընտանիքներում. մեծ քանակությամբ կան նաև հնդեվրոպական լեզուներում ինչպես՝ հունարեն ..., լատիներեն ..., գերմաներեն ..., ռուսերեն ...:*

*Այսպես նաև հայերենի մեջ՝ **ապ, արտ, ներ, տ, ղժ** և այլն, և այլն: Դրանք առանձին բառիկներ կամ նախդիրներ են, որ հետո կցվել են բառին և վերածվել նախամասնիկի: Այսպես՝ նույնիսկ գերմ. ge- և ver- առանձին անկախ բառեր էին, բայց այս բոլորը ավելի նոր ժամանակի և ձևափոխության արդյունք են: Հնդեվրոպական նախալեզուն չուներ նախամասնիկ: Իբրև նախամասնիկ կարելի էր արդարև հիշել **ան-** բացասականը և բայերի e նախահավելվածը, բայց սրանք հնդեվրոպական նախալեզվի համար մասնիկներ չեն: Նախահավելվածը բային կցված և նրանից անբաժան մաս չէր համարվում, նույնիսկ հունարենի մեջ համարվում է բայական նախդիր, այսինքն՝ հին անկախ բառ. և այս երևում է նրանից, որ չի թույլ տալիս, որ բառի չեչտը վրայից անցնի:*

*Հայտնի է, որ հունարենում չեչտը առաջին բայական նախդիրներից այն կողմ չի գնում. այսպես՝ πνρ-έν-θΣζ" և ո՛չ թե πάρ-εν-θες, նմանապես ասվում է παρ-έ-σχον և ո՛չ πάρ-ε-σχον, կամ εν-ῆσάν, և ո՛չ թե ἔν-ησαν, որից երևում է, թե նախահավելվածն էլ նախդիր է և ոչ նախամասնիկ: Նմանապես **ան-** բացասականը:*

* *Բնագրում օրինակները բացակայում են (Ա. Գ.):*

Մինչդեռ ամերիկյան լեզուները ընդհանրապես գործածում են նախամասնիկներ, ընդհակառակը՝ mivok *լեզուն սիրում է հետամասնիկներ: Օրինակ՝ ոչ միայն բայի խոնարհման մեջ դերանվան դնմքերը իբր հետամասնիկ են ընդունվում, այլև բայական բոլոր ձևերը կազմվում են հետամասնիկներով. ինչպես՝ անցողականը, ըղձականը, չարունակականը, կարողականը, կրավորականը, բայի դանազան ժամանակները, մինչև իսկ բացասականը և հարցականը* (Kroeber, 283, 287):

Այսպես է նաև նրա հարակից yuki *լեզուն, ուր ոչ նախամասնիկ կա և ոչ էլ միջամասնիկ. ամեն ինչ հետամասնիկով է (անդ, էջ 350): Պոլինեզյան լեզուների մեջ հոլովման և թվի մասնիկները բոլոր սկիզբն են դրվում: Բանտու լեզվաց մեջ հետամասնիկները գործ են ածվում արմատի իմաստը զարգացնելու համար, նախամասնիկները՝ քերականական առնչություններ որոշելու համար: Նրանք այնքան չատ են, որ չատերը բանտու լեզուները կոչում են նախամասնիկային լեզուներ: Բայց այս կողմից չափազանց մեծ աստիճանի է հասած ամերիկյան* carrier *լեզուն, որ 500 նախամասնիկ ունի (տե՛ս վերը):*

* * *

Ճապոներեն մասնիկներ: -do, -to, -udo *մարդ, որից արհեստ և այլն ցույց տվող բառեր, ինչպես՝* rari *որս* – kariudo *որսորդ,* mes *բռնել* – meŝiudo *բանտարկյալ.*

-ya *տուն՝ թե տեղ և թե արհեստավորը.* honya *գրատուն,* pan *հաց* > panya *հացի խանութ,* sumi > *ածուխ* sumiya *ածխավաճառանոց.*

o- *նախամասնիկ (<* okii *մեծ բառից), կազմում է մեծ ցույց տվող բառեր, ինչպես՝* ō-ame *մեծ անձրև,* ō-bune *մեծ նավ.*

ko- *նախամասնիկ (<* ko *տղա բառից). նվազական է չինում, ինչպես՝* ko-gawa *գետակ,* ko-gatana *դանակ* (katana *թուր*), ko-bune *նավակ* (fune- *նավ*) *և այլն: Նույն* ko *նշանակում է ձագը և դրվում է սեռականով նատազասական, ինչպես* neko *կատու,* ko-neko *կատուիկ,* neko no ko *կատվի ճուտ:*

Տաբասարան լեզվի *մեջ բառից մասնիկ ծագելու օրինակ է տալիս* **Жирков**, *80 հետևյալ ձևով՝*

ul *աչք՝ դարձել է մասնիկ «առջև».* kyal *մեջք՝ դարձել է իբր մասնիկ «ետև».* kan *գարչապար > «տակ»:*

Գոյականից մասնիկի անցնելու երևույթը բնականաբար ավելի լավ պիտի ցույց տան վայրենի լեզուները: Այսպիսի լեզուներից է, օրինակ, ամերիկյան wappo *լեզուն, որի ուսումնասիրությունն ունի* Radin (A grammar of the wappo language, Berkeley, 1929): *Հեղինակը այստեղ (էջ 32–33) ի միջի այլոց խոսում է* me *«ձեռք»,* pe *«ոտք»,* nan *«բերան»,* hu *«գլուխ» բառերի մասին, որոնք անփոփոխ կամ քիչ փոփոխությամբ վերածվել են բայական նախամասնիկի: Այսպես՝*

hupeniski	«he carrieg on his head»
hukuiše	«he bumped his head»
hukališe	«he thinks»
hukalše	*«նա մոռանում է»*
hukaya	«he guesses»

mepičeski	«he folded his arms»
mekuyeski	*«ձեռքերը գրպանումն է»*
mewiti	«to catch with hand»
meka	«to feel with hand»
memanuma	«he picks up flat object with hand»
mekaluma	«he picks up concave object with hand»
piteketa	«he tripped»
pikata	«he touched with the foot»
pitsapise	«he mashed with foot»
anapišoloya	«I whisper»
nakate	«to strike with mouth, teeth»
naweleski	*«բերնով ներս է քաշում»*
nopalse	«he yelled»

Նույնպիսի երևույթ նկատում ենք նաև բայական վերջադիր մասնիկների մեջ, ինչպես՝

omesi *«աննել, չինել»* *սովորական բառ է լեզվի մեջ, նախաձայնի կրճատումով կցվում է բային իբրև մասնիկ և կազմում է պատճառական բայ (էջ 45):*

ya *«գնալ»* *հին բայ է. մտնում է զանազան մասնիկների մեջ և դրվելով բայի ծայրին՝ կազմում է մի քանի տեսակ ապառնի (էջ 46):*

Շատ տեսակ բառեր կարող են վերածվել մասնիկի, օր. ամերիկյան takelma *լեզվի մեջ մարմնի անդամների անունները դարձել են նախամասնիկ, ինչպես՝* dak' *գլուխ,* da *բերան,* dā *ականջ,* sin *քիթ,* dī *սրբան* (anus), ha *բունոց* (vulva), sal *ոտք,* dīal *ճակատ և այլն: Այս կարգի նախամասնիկների թիվը այդ լեզվում 17 հատ է* (Boas, *Հտ. 2, էջ 73–86):*

Միջամասնիկ: *Հնդկական* santali *լեզվի մեջ կան մի քանի միջամասնիկներ, օրինակ,* k, *որ դրվում է բառի առաջին ձայնավորից հետո և կազմում է սաստկական բայ, օրինակ՝*

âl *գրել* âk' âl,
agû *բերել* ak' gū,
benas *աննել, չինել* bek' nas:

կազմում է նաև բաշխական՝

cāc 7, ek' āc *7-ական,*
irāl 8, ikrāl *8-ական:*

Միջամասնիկը կազմում է անձներական՝

bar 2, banar *երկոքեան,*
pä 3, pänä *երեքեան,*
pon 4, ponon *չորեքեան:*
(Grierson, IV, 39)

Միջամասնիկի կեղծ երևույթ է ցույց տալիս մենգլերենը, ուր նախամասնիկը արմատական առաջին բաղաձայնի հետ տեղափոխված է. ինչպես՝ muša *«աշխատել»,* pirk'i *«մտածել»* *արմատներից՝* *v-mušenk' > mu-v-šenk', mubšenk' *«աշխատում եմ»,* *b-p' irk' enk' > p'i-b-rk' enk', p'ip'rk'enk' *«մտածում եմ»:*

Morris-ը մալայան mentawai լեզվում գտնվում է միայն մի միջամասնիկ (in), որի համար ասում է, թե հազվագյուտ է և իբր օրինակ տալիս է երկու հատիկ բառ, իսկ մյուսները մերժում է (Morris, էջ 10):

Միջամասնիկներով հարուստ են ավստրա-ասիական լեզուները: Օրինակ՝ չամ լեզուների մեջ ունենք՝

p—	lök	կանգնեցնել	—	lepök	չենք,
	sa	ուտել	—	səpa	կերակուր,
	maraŋ	լավ	—	maparaŋ	չատ լավ,
	dal	զարնել	—	dapal	իրար ծեծել,
	tam	ցած գցել	—	tapam	իրար ցած գցել.
mn	kāč	չար	—	kumnac	չարություն,
n	kiau	տատ	—	kəniau	ծեր, պառավ:

(Rieckess, էջ 115)

Միջամասնիկը երբեմն սխալ է հասկացվում:

Հայերեն **սիրվել** (սիրուել) ձևի մեջ **վ** (ու)-ն միջամասնիկ չէ: Արաբերեն իֆթեալ նույնպես միջամասնիկ չէ, որովհետև, ըստ իս, սեմական լեզվաց մեջ պետք է լինի իֆթիալ:

Օրինակ՝ **սիրել** բայից եթե կազմում ենք **սիրեցուցանել**, կարելի չէ ասել, թե **սիր** արմատի և **ել** մասնիկի միջև մտել են **եց-ուց-ան** մասնիկները, այլ սրանք էլ նույնպիսի մասնիկներ են, ինչպես **ել**:

Միջամասնիկը շատ սովորական երևույթ է սեմական լեզուների մեջ: Օրինակ՝ արաբերեն hsb «հաչիվ», xyr «ընտրել», hrq «այրել» արմատներից կազմվում են iḫtisāb «հաչվել», ixtiyār «ընտրել», ihtirāq «այրել» և այլ բայերը, նույնպես՝ hml «բեռ կրել», atr «անուշահոտություն», jrh «վիրավորել», nqš «նկարել, նախշել» արմատներից կազմվում են hammāl «բեռնակիր», attar «փերեզակ», jarrah «վիրաբույժ», naqqāš «նկարիչ» և այլն գոյականները:

Ճավայերենում բայի մի տեսակը կազմվում է -um- միջամասնիկով. ինչպես՝ ŕjää «թագավոր», ruṁājä «իրեն թագավոր համարել», saré «բուն» > sumaré բնել (Bothatta, Jav. spr., 60): Արդի հնդեվրոպական լեզուները այսպիսի բառակազմություն չգիտեն, նրածներն էլ երևութական են միայն, ինչպես՝ հայերեն ոսկր — ոսկեր, տարր — տարերային և այլն:

Սակայն հնդեվրոպական նախալեզուն ուներ միջամասնիկի դրությունը, գոնե մի դեպքում. այն է՝ -ne-, որով կազմում էր բայերի ենդային միջամասնիկով բները. ինչպես՝ leikʷ- «ծողոպ» արմատից linkʷ կամ linekʷ-, որից են սանս. rinākti, դնդ. irinaxti, լտ. linquo, հպրուս. -līnka և այլն: Այդ մասնիկը ծառայում էր երբեմն նաև կազմելու համար գոյական. ինչպես՝ wed «ջուր» արմատից (հայերեն գետ), բայց լատիներեն unda և սանսկրիտերեն u-na-t-ti «թրջում է»:

* * *

Մալայան ple-temer լեզվում, որ նախնական մի լեզու է, կա an, en միջամասնիկ.

cōgn զարնել, canugn մուրճ, cənib արահետ, cib երթալ, cer կտրել, cəner դմելի, kərjer պարել, kəṅərjer պար (Schebesta, JRAS 1931, 646):

Նախդիր և բայ: *Քիչ նախդիրներ կան, որոնք կցվելով բային, կազմում են ածանցյալ բայեր՝ հակառակ հունարենի, որ լիքն է նման բայերով: Եվ երբ ոսկեդարյան հեղինակները հանդիպում են այդպիսի ձևերի իրենց թարգմանության մեջ, իսկույն բաժանում են բայը և նախդիրը վերածում մակբայի. օրինակ՝*

περιεβέπτο	*չուրջ հայէր.*
εἰσελθὼν	*մտեալ ի ներքս.*
παραλαρβάνει	*առնու ընդ իւր.*
κἄι διαπεράσαντες	*և իբրև անցին յայնկոյս.*
περιβραμόντες	*ընթացեալ այսր անդր.*
ἀπεδήμισζ	*գնաց ի տար աշխարհ*

(Թիրեաբեան, Հայ – Երան, 176):

Երբեմն էլ առանց մակբայի՝ պարզ բայով, ինչպես՝

ϖαταϖιριεύοντιν	*– տիրեն,*
κατεξουσια ζνισι	*– իշխեն,*
επαναστήσονται	*– յարիցեն,*
ὅ ἐστι μεθερμηνευύμινον	*– որ թարգմանի (անդ, 179):*

Նախամասնիկ: *Նախամասնիկներով հարուստ է վրացերենը, ուր ունենք օրինակ* svl *«տեղից տեղ չարժվել» արմատից՝*

mi-svl-a hingehen,
mo-svl-a kommen,
a-svl-a hinaufgehen,
da-svl-a hinabgehen,
c' a-svl-a weggehen,
ča-svl-a hinuntergehem,
šc-svla hineingehen,
a-mo-svla heranfkommen,
čc-mo-svla heroinkommen,
gada-svla übengehen,
gad-mo-svla herüberkommen,
ča-mo-svla herabkommen,
mi-mo-svla hin-und hergehen:
(Dirr, Einf. 78)

Նախամասնիկով հարուստ են ամերիկյան լեզուները, որոնցից օր. tsimshian *լեզուն ունի 182 նախամասնիկ* (Boas, Handbook, *էջ 340): Սրանցից չատերը կցվում են բային և տալիս են նրան մակբայական պարագաներ՝ չափազանց մանրամասն, ինչպես՝* men- *«վերև օդի միջոցով»,* den- *«ցածր օդի միջոցով»,* bax- *«վերև գետնի երկարությամբ»,* iaga- *«ցած՝ գետնի երկարությամբ» և այլն:*

Լազերենի նախամասնիկները ըստ Марр, Грамматика чанского языка, 37. *ա) պարզ նախամասնիկներ.*

գա – прочь
գև – вниз, низ –
գո – вдоль, про
տո, դև – вниз

է – դնպի վեր
չև – անհայտ իմաստով

բ) բարդ նախամասնիկներ.

ամա – դնպի ներս
գամա – դնպի դուրս, դնն
գալև – » » »
գնլև – վերևից ներքև
գնծև – » »
գոծո – пред
դոլո, դոլև – դնպի ցած, դնպի ներս
էլև – ցածրից վերև
էկ – под-, вон, прочь
էչկև, էչև – դնպի դուրս
էծև – ցածրից վեր

Նախամասնիկները վրացերենում ծառայում են բայը երանգավորելու. դրանք են՝

աղ, ա – ցածրից վեր (auf),
դա – վերևից ցածր (nieder),
չև – դրսից ներս (ein),
ձա – վերևից ներքև մի բանի մնջ,
գադա – անցնելով մի բանով, միջով (durch, über),
ծա – հեռանալով մի բանից (weg):

Սրանցից դուրս կան՝

mo – *դնպի այս կողմ,*
mi – *դնպի այն կողմ,*

որոնք կարող են կցվել վերի 7 մասնիկներին և կազմել նոր խառնուրդներ: Ավելի ճիշտ խոսնլով՝ վերի մասնիկները կարող են միանալ mo *ևնին, իսկ առանց միացման՝ այդ 7 մասնիկները տալիս են իրր թե* mi*-ով միացածի նշանակություն: Օրինակ՝*

աղմո – ցածից վեր՝ այս ուղղությամբ (herauf),
*աղ (իմա՛ *աղմի) – տանից » այն »* (hinauf):

(Vogt, 260)

Հարց է թե մի մասնիկ կարող է միաժամանակ կցվել դոյականի և բայի. օրինակ՝ թրք. -msə, *որից* ajəmsə tatləmsə *«դառնավուն, քաղցրավուն» և* gülümsemek *«ժպտալ»:*

Ավելի հարուստ է մասնիկներով ամերիկյան kwakiutl *լեզուն, ուր կա 228 մասնիկ (հետամասնիկ)՝ մեծ մասամբ մակրայական նշանակությամբ և այնպիսի զարմանալի մանրամասնությամբ, որ դուր է փնտրել ուրիշ լեզուների մեջ: Օրինակ՝*

– usta *«դնպի գետն ի վեր»*
– nsa *«ջրի տակ»*
– wäla *«ջրի վրա կանգնած»*
– l°e *«ջրի վրա չարժվելով»*

– tl «տանը մեջ՝ հատակի վրա»
– xs «նավակի մեջ»
(Boas, Handbook 1, 512)

Ամերիկյան chinook *լեզուն այնքան շատ է սիրում նախամասնիկները, որ մի բառը կարող է 6 նախամասնիկ ունենալ* (Boas, Handbook 1, 572):

* * *

Նախամասնիկներով շատ հարուստ է բայը գերմաներենում.

durch,	ab,	an,	auf,	aus,	bei,	dar,	ein,
միջով,	*դեն,*	*ի,*	*վրա,*	*դուրս,*	*հետը,*	*դեպի, առ*	*ներս,*
fort,	her,	heim,	hin,	los,	mit,	nach,	nieder,
մեկդի, հեռու	*մոտ,*	*տուն,*	*դեպի, առ*	*բաց,*	*միասին,*	*ետևից,*	*ցած,*
uber,	unter,	um,	vor,	weg,	wieder,	zu,	
վրայից,	*տակը,*	*չուրջ,*	*առաջը,*	*դեն,*	*նորից,*	*դեպի:*	

Սրանցից բաղադրյալ ձևեր՝ bevor, dabei, daher, daran, darauf, davon, davor, dazu, dazwischen, einher, entgegen, entzwei, herab, hinab, heran, herauf, hinauf, heraus, hinaus, herein, hinein, herûber, hinüber, herunter, hinunter, herbei, herzu, heruni, umher, hervor, hintan, hinweg, hinzu, überein, voran, voraus, vorher, vorbei, vorüber, zurük, zusammen:

Այս բոլորը գրեթե իրը մակբայ են կցվում բային և այդ պատճառով էլ կարող են որոշ ժամանակներում բաժանվել բայից. ինչպես՝ aufgehen, *բայց* ich gehe auf:

Բոլորովին անբաժանելի և արմատի մեջ իրը մեկ մարմին կազմած մասնիկներ են՝ be, emp, er, ent, ver, zer, ge, miss, voll, hinter, wilder:

Նույնպիսի մասնիկներ, բայց ոչ այնպես զարգացած ձևով, ունի նաև անգլերենը, ինչպես՝ up, out, down, after, with, on, for, by *և այլն: Սրանք բայից հետո դրված ժամանակ բաժանված են, իսկ առաջ դրված ժամանակ՝ ծառայում են իրը անբաժան նախամասնիկ: Կարող են նաև տարբեր դիրքով բոլորովին հակառակ նշանակություն դուրս բերել, ինչպես՝* to upset *«տապալել»,* set up *«կանգնել, հաստատել»:*

Նախամասնիկներ եղել են նաև հին չինարենում, որոնք առաջ են բերել հետո մի տարօրինակ արդյունք: Չինական նախամասնիկները եղել են սովորաբար մի բաղաձայն, որ կցվել է արմատի սկզբից և ձևափոխել արմատի նշանակությունը, գրեթե այնպես, ինչպես աճումը հնդեվրոպական նախալեզվում: Ապագայում, որովհետև չինական լեզուն չէր կարող բառասկզբում կրկին բաղաձայն տանել, զույգ բաղաձայններից մեկը ջնջվել է: Հաճախ երկրորդ բաղաձայնն է, որ ջնջվում է և, որովհետև նախամասնիկը առաջին բաղաձայնն է, իսկ երկրորդ բաղաձայնը արմատի հիմնական բաղաձայնն է, դուրս է գալիս, որ արդի չինարենում մասնիկն է հաղթել, իսկ արմատի հիմնական մասը անհետացել է: Այսպես, օրինակ՝ lâm^{2} *«նայել», հին չինարենում* k *նախամասնիկով* *klàm^{3} > *չինարեն* kàm^{3} *1. հայելի, 2. վերատեսչություն անել:*

Այս տարօրինակ դրութիւնը բոլորովին անճանաչելի է դարձնում արմատի կերպարանքը, և լեզվաքննական աշխատանքներն էլ անհնարին պիտի դառնային, եթե չլինեին մի կողմից գաղափարագիր գրութեան ձևը, որ արմատի առաջին պատկերը ածանցների մէջ դեռ պահում է մի նոր հավելումով և մյուս կողմից՝ ցեղակից լեզուները, որոնցից ոմանք պահում են կրկին բաղաձայնները և կամ առաջինն են ջնջում: Այսպես նաև սիամերենը: Օրինակ՝

հին չին.	*չին.*	*սիամ.*
*p-lòk[4]	pòk[4] *կեղևել, կճպել*	plöck *կեղև*
*x-luet[5]	xüiet[4] *արյուն*	löed[3] *արյուն*

(H. Maspero, MSL, 23)

Մասնիկը մի որևէ լեզվի մէջ կարող է ունենալ զանազան նշանակութիւններ: Համաչ լեզվից լեզու դրանք նշանակութեամբ համապատասխանում են իրար, բայց երբեմն էլ՝ ոչ:

Օրինակ՝ թրքերեն pəq, lik *և հայերեն* **-ութիւն** *համապատասխան մասնիկներ են, բայց* lik *նշանակում է նաև՝*

«-նոց», ինչպես՝ čičeklik *ծաղկանոց,*
«-ական», ինչպես՝ ayəq *ամսական,*
«-անոց», ինչպես՝ ikilik *երկուսանոց,*

որոնք համապատասխան չեն հայերենին:

ԱԾԱՆՑՈՒՄ

Սկսած նախալեզվից կամ նախալեզուներից մինչև նորագույն բարբառները, անշուշտ, լեզվի բոլոր ածանց, ինչպես նաև բարդ կամ բարդաճանց, բառերը միանգամից չստեղծվեցան, այլ նրանցից մի մասը հորինվեցին սկզբում, ժամանակի ընթացքում նրանց օրինակով նորերը ավելացան, հներից ոմանք ջնջվեցին և այսպես շարունակաբար: Նորագույն գաղափարները և նորահնար առարկաները բնականաբար պահանջում էին նոր բառեր (օրինակ՝ բարձրախոս, հեռագիր, հեռադիտակ, ռադիո, մանրադէտ, սավառնորդ և այլն), իսկ հնացածները և ասպարեզից քաշվածները, բնականաբար, ջնջվում էին (ինչպես՝ պատկերամարտութիւն, անապականացուական և այլն):

Հունարենի մէջ δοφός *«իմաստուն» բառից* σοφώτερος *«իմաստնագույն» հին կազմութիւն է, բայց նրա օրինակով* αγαθός *«բարի» բառից* αγαθωτερος *«բարեգույն» նոր է:*

Հայերենի մէջ **ամենազետ, ամենազոր** *հին բառեր են, բայց նրանց օրինակով կազմված* **ամենահաստ, ամենաբարակ,** *մանավանդ՝* **ամենաէժան, ամենաթանկ** *բառերը բոլորովին նոր են:*

Բայց ավելի զարմանալին այն է, որ լեզվի մէջ երբեմն միայն ածանց բառն է, որ գոյութիւն ունի և նրա վրայից չինված է արմատական ձևը:

Այսպես՝ ֆրանսերեն charge, couche **«արմատները»** *կազմված են* charger *«բեռնավորել» և* coucher *«պառկել» բայերից, որոնք հառաջանում են լատիներեն* caricare, collocare *բայերից. լատիներեն* pugna *«պատերազմ» կազմված է* pugnare *«կռվել» բայից, որ ածանցված է* pugnus *«բռունցք» բառից. գերմաներեն*

frauenkranke հոգնակի «կանացի հիվանդությամբ հիվանդացածներ» տարօրինակ բառը կազմված է frauenkrankhei «կանանց հիվանդություն» բառից:

Այս կարգի ածանցները կոչվում են հետադարձ ածանցում (dérivation rétrograde) (Brugmann, Abrégé, էջ 307–308):

Հետադարձ ածանցումների մեջ ձայնաբանական սխալներ և անկանոնություններ սովորական են:

Հայերենի մեջ հետադարձ ածանցում է **ծածք** բառը: Սրա հին արմատն է **ծածուկ**, որից կազմված են **ծածկել, ծածկոց** և այլն: Սրանցից ննթադրվել է, թե արմատն է **ծածկ** և որովհետև այս ձևը չատ հայկական կերպարանք չունի, ուստի դարձրել են **ծածք**, և ստեղծել են **հողածածկ, կղմինդրածածկ** և այլն:

Հայերենն **խռկել, խրկել** «ուղարկել» – արմատը սուտ՝ **խռիկ**:

* * *

[Գրաբարում] ածանցման ժամանակ վերցնում ենք բայարմատը, որ ստանում ենք բայի aoriste-ի և անցյալ դերբայի վրայից, ինչպես՝ կնալ (նկնաց, կնցնալ) – չկնցու, չկնցութիւն: **-եմ, -իմ** լծորդության մեջ, եթե դերբայը ունի **-ցեալ**, բայարմատը ունի **-ց-**, իսկ եթե դերբայը ունի **-եալ**, բայարմատը չունի **ց-**, ինչպես՝ բնակիմ (բնակեցի, բնակեալ) – բնակիչ.

հայիմ (հայեցայ, հայեցեալ) – հայեցուած:

Միավանկ բայերը լինում են երկու ձևով. ինչպես՝ լալ (լացի, լացեալ), լալիւն, լալումն, ... լաց.

կալ (կամ, կացի, կացեալ) – անկայ, ... կաց:

-Ամ լծորդության մեջ հաճախ նույնպես բայարմատը **ց** չունի. ինչպես՝

խնդամ – խնդացի – խնդութիւն,

որսամ – որսացայ – որսորդ,

դողամ – դողացի – դողացեալ – դողումն:

-Անամ լծորդությունը պահում է **ց**-ն.

մոռանամ – մոռաց:

ԳՈՅԱԿԱՆԻՑ ԿԱՄ ԱՇԱԿԱՆԻՑ ԿԱՋՄՎԱԾ ԱՇԱՆՑՆԵՐԸ

Վերցնում են միչտ ուղ-հայց. ձևը.

քաղցր (քաղցու) – քաղցրութիւն,

տէր – (տեառն) – տիրական, տերութիւն,

հայր (հօր) – հայրենի:

Ն հանգող բառերի մեջ հաճախ մուծվում է **ա.**

մատն – մատանի,

ակն – ականողիք:

Ր հանգող բառերի մեջ՝ **ե.**

եղր (եղեր) – ծովեզերեայք:

Քիչ անգամ ածանցումը լինում է բառի հին բնից. ինչպես՝

զնն (զինու) – զինվոր,

չահ (չահիւ) – չահեկան (<*չահիական):

ՄԱՍՆԻԿՆԵՐԸ [ՀԻՆ ՀԱՑԵՐԵՆՈՒՄ]

Մասնիկ է կոչվում մի ձայն կամ մի քանի ձայններից բաղկացած մի ձայնախումբ, որ առանձին նշանակություն և գործածություն չունի, բայց կցվելով մի բառի՝ տալիս է նրան հավելյալ մի իմաստ, այսպես՝ **թագ** *բառից* **թագավոր՝** *նշանակում է «այն անձը, որ կրում է թագ»:*

Մասնիկները շատ անհրաժեշտ և օգտակար են լեզվի մեջ՝ մտքի ծանրաբեռնության և աշխատանքի խնայողության տեսակետից: Եթե չլինեին մասնիկները, մենք ստիպված պիտի լինեինք կամ հնարել մի նոր բառ, որ պիտի ծանրաբեռներ միտքը, և կամ պիտի մի երկար զարձվածով բացատրեինք, որ պիտի լիներ ավելորդ աշխատանք ու ժամանակի կորուստ: Այսպես՝ **թագավոր** *բառի դեպքում ասենք* **արքա** *(ինչպես է գրաբարի մեջ) և կամ՝ «նա, որ իշխում է ամբողջ երկրի վրա և թագ ունի գլխին»:*

Ամեն լեզվի մեջ էլ կան տասնյակներով մասնիկներ, որոնցից կազմված են հազարավոր ու տասնյակ հազարավոր բառեր. ինչ պիտի լիներ մարդկային մտքի դրությունը, եթե այդ բոլորի փոխարեն մի մի առանձին արմատ ունենայինք և կամ զարձվածներով բացատրեինք:

Ինչպես ներածության մեջ ասել ենք, մասնիկները նախավոր անկախ բառեր են, որոնք հաճախակի գործածության մեջ չափազանց մաշվելով և իրենց ինքնությունը կորցնելով՝ դարձել են մասնիկ: Այս բանը շատ հայտնի կերպով ցույց են տալիս անջատական լեզուները, որոնք չունեն դեռ թեքում և ածանցում և թեքման ու ածանցման փոխարեն գործ են ածում զանազան բառեր, որոնք միևնույն ժամանակ իրրև անկախ ձևեր էլ գոյություն ունեն ընդհանրապես:

Կարելի չէ ամեն մասնիկ ամեն մի բառի վրա ուզած ժամանակ կպցնել. հատկապես՝ մեռած մասնիկները և այն մասնիկները, որոնք գրաբարին են հատուկ և աշխարհաբարը չգիտե, օրինակ՝ անսովոր կերևա **իւն** *մասնիկով* **ցատկիւն,** *թեև կա գրաբար* **ոստիւն,** *որովհետև ցատկել աշխարհաբարին հատուկ ձև է և անհարմար է կպցնել նրան գրաբար մասնիկ:*

Կան մասնիկներ, որոնք հնառաջացած են նախավոր բառերից, ինչպես՝ **-ւոր** *«կրող, ունեցող» (***թագավոր, մեղավոր, երկնավոր***)* **բեր***-ել արմատի* **ո** *ձայնդարձն է (համմտ. հուն. φόρος),* **-բար** *«կերպով, ձևով»՝ հայկարար,* **բար, բարք** *գոյականից առաջացած ձև է:*

Ինչպես տեսնվում է, այս կարգի մասնիկները նախապես բարդության երկրորդ եղրն էին կազմում. հետո, հաճախակի գործածության պատճառով, մասնիկ դարձան:

-Աբար *– աշխարհաբար, օրինակ՝ Աշխարհաբար վաճառ մի՛ առնիլ և չահեցուցանիլ. Մտթ., եագր., 55, (ասում է քահանաներին, այսինքն՝ աշխարհիկ ձևով առևտուր մի անիլ):*

Մասնիկները կարող են ըստ պարագայի ունենալ տարբեր իմաստներ, ինչպես– **նոց՝** *թե՛ գործիք է, թե՛ չոր, թե՛ տեղ՝ ձեռնոց, գոգնոց, ածխանոց: (***Ան-** *մասնիկը այնպես կենդանի է այժմ Երևանում, որ մինչև անգամ ասվում է անկուխանի, անպաղվալ, անուտել, անխմել և այլն):*

Մասնիկները դրվում են ո՛չ միայն արմատական, այլև հոլովյալ ձևերի վրա, ինչպես՝ կանանցկան «կանացի»՝ Վրք. հց. ա. 299, 305, «կնոջական»:

Մասնիկները կարող են դրվել թե՛ սկիզբը, թե՛ վերջը և թե երկու կողմը միասին, ինչպես՝ ապ-օրին-ություն:

* * *

Հայերեն լեզվի մասնիկների հիմնական մասը կազմում է, բնականաբար, Հնդեվրոպական նախալեզուն:

Նախալեզվի մասնիկները կարող ենք վերածել երկու տեսակի՝ միավանկ և երկավանկ: Միավանկ մասնիկների մի խումբ արդեն տեսել ենք անվանական ու բայական բունների չարքում: Այս մասնիկների մեծագույն մասը թեև գոյություն ունի Հայերենի մեջ, բայց ստացած է մի այնպիսի ձև, որ այլևս բառի անբաժան մասը համարվելով՝ իր ինքնությունը կորցրած է. ուրիշ խոսքով հայերենի համար մասնիկ չէ: Այսպես է, օրինակ, նոր **զգեստ, մարդ, զարդ, բան, ման** *և այլն բառերի վերջաձայնը:*

Երկավանկ մասնիկները, որոնք Հնդեվրոպական նախալեզվի մեջ առաջիններից աճած ձևեր էին, կարողացել են պահել իրենց ինքնությունը և այսօր էլ համարվում են մասնիկ: Օրինակ՝

-ի. *ազգի ազգի, արի (քաջ), մատանի (սեռ. -ւոյ) < Հնխ. -iyos:*

-ին. *առաջին, վերջին, մեջին, խորին, սեռ. նոյ., Հնխ. ino, Համմտ. Հն. ἀγχιστ-ῖνος «մերձավորագույն»:*

-ոյթ. *երևոյթ, գործ.* **ութիւ-** *< Հնխ. eu-ti, որի առաջին մասի համար Համմտ. Հունարեն τελ-ευ-τή «վերջ»:*

-ութ. *ծանաւթ (արմատը՝ ծան, ծանևայ), աղաւթ (արմատը՝* **աղ-աչ-ել***), սեռական աղաւթից, < Հնխ. au-ti:*

-ստ. *< Հնխ. s-ti, ինչպես՝ արուէստ (գործ.-իւ), առագաստ (գործ.-իւ), արմատը՝* **աղ,** *որից ագանել:*

-ցի. *հիմնվում է Հնխ. -sko- մասնիկի վրա, Համմտ. Թոխար. -ṣṣe, որ կազմում է* adjectif de provenance, *ինչպես՝* hirandaṣṣe «de ricin» *«Հնդկական իւղև»* (Lévi և Meillet, Etude des documents Tokhariens, *էջ 64):*

Հայ. **-ացի** *ներկայացնում է Հնխ. -a-sk-iyo, որ երկու երկրորդական մասնիկ է պարունակում և կազմվում է -ā բունից:*

-ք *< Հնխ. ko ձևից. Համմտ. Հին սլավոներեն -ko-, Հնդիկ-իրան. -ka-: Օրինակ՝ Հին սլավոներեն ązŭkŭ «անձուկ», Հայերեն բարւոք (բարի բառից):*

-մն *(վերացական բառերի ծայրին, ինչպես՝ չարժումն, սեռ. չարժ(ու)ման) = Հունարեն -μα, լատիներեն -men:*

-իչ *(բունը ա). ցույց է տալիս գործող անձ և դրվում է բայական բների վրա, ինչպես՝ անիծանեմ — անիծիչ, առաքեմ — առաքիչ, առնեմ (արարի) — արարիչ, ուսուցանեմ — ուսուցիչ, տամ (ետու) — տուիչ, ստանամ — ստացայ — ստացիչ, ծնուցանեմ — ծնուցիչ:*

-ող *(բունը ա), ող և օղ. դրվում է բայաբների վրա և գրեթե նույն իմաստն ունի, ինչ որ -իչ: Օրինակ՝ տուիչ — տուող, չարժիչ և չարժող. -իչ-ը ցույց է տալիս ավելի հատկություն:*

-աւղ < Հնխ. ātl. Համմտ. Հին սլավոներեն -tel- մասնիկը, որ ցույց է տալիս գործող անձ: Այնուհետև չփոթվելով գրվել է — ող: Սրա հետ նույնն է կամիս. tal- «ող», որ մյուս լեզուների մեջ -ter- ձևն ունի:

Օրինակ՝ ուտեմ (կերայ) — կերող, արբենում (արբեցայ) — արբեցող:

Համախ. կանոնի հակառակ, դրվում է ներկայի բնի վրա և գործ է ածվում իբր դերբայ. ինչպես՝

տեսանեմ (տեսի) — տեսանող,
լսեմ (լուայ) — լսող,
անիծանեմ (անիծի) — անիծանող,
կարեմ (կարացի) — կարող:

Սրանից էլ առաջանում է հայցականով՝

զհայր և զմայր անարգողաց (Տիմ. Ա. 9.):

-ող և **-օղ** ձևի վրա ձեռագիրները տատանվում են: Օր.՝ **ծնողք** և **ծնաւղք**, նկատելի է **որսող՝ որսամ** բայից:

[ՓԱՂԱՓՇԱԿԱՆ, ՆՎԱԶԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՎԵԼԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՆԵՐ]

Սրանք գործածում են նվազական ու փաղաքշական բառեր կազմելու համար: Հին գրականության մեջ թեև կան օրինակներ, բայց չափազանց շատ չեն, բատ տեղի պահանջի, բայց անչուշտ ժողովրդական լեզվի մեջ շատ ու շատ գործածական են, ինչպես և այժմ, օրինակ՝ հայր — հայրիկ, մանուկ — մանկիկ, փոքր — փոքրիկ, ճանճ — ճանճիկ (Համմտ.՝ Ոսկ. ա. դիմ., էջ 123–128՝ Ոմն հացիկ և աղիկ և ոմանք իւղիկ ևս յաւելուն և որ ևս տկարագոյնք իցեն՝ բանջարիկ ևս խառնեն (բոլորն էլ «մի քիչ» իմաստով). որդի — որդյակ, ծով — ծավակ, նավ — նավակ, աղավնի — աղավնյակ, մժեղ — մժղուկ, մաչկի — մաչկյակ:

1) Նույն մասնիկը ցույց է տալիս նաև գործող անձ, ինչպես՝

մարտնչիմ — մարտիկ,
երգեմ (երգեցի) — երգեցիկ,

2) Կազմում է ածական՝

խառնակ, բոլորակ, պաբարակ:

3) Կազմում է գոյական՝

ավերակ, երկվորյակ:

Պետք չէ չփոթել սրանց հետ պահլավերեն վերջավորություններր, ինչպես՝ պատվիրակ, հրավիրակ, նվիրակ, պարսիկ և այլն:

4) Բոլորովին անտեղի ձևով՝ որակ, քանակ և այլն:

5) Անարգական կամ նախատական, ինչպես՝

գրչակ, սկանակ, դիակ*:

Հնդկական panjābī լեզվով անչունչ առարկաների նվազականը կազմելու համար արականը վերածում են իգականի, ինչպես՝

Chappā երկար թի,	chappī թիակ,
bēṛā նավակ (մեծ),	bēṛī փոքր նավակ,
ghaṛa հողե մեծ աման,	gharī հողե փոքր աման:

* Լավ իմաստով լինում է դի, օրինակ, չի կարելի ասել Տրդատի կամ սրբի դիակը (Ե. Դուրյան, Ուսումն. և քնն. եմ, 1935, էջ 68), բայց կարելի է ասել ձիու դիակը և այլն:

Բասկերենում բառի բաղաձայնը քմայնացնելով (y)՝ կազմում են փաղաքչական-նվաղական, երբեմն էլ նախատական բառեր (Lingua, I, N, I, էջ 64, 69):

Հնդևրոպացոց **նվազական** *մասնիկներն են՝*

-lo-, -ko-, ino-, -eino-, *կամ երկուսի միացմամբ՝ հունարեն* k-io-, *լատիներեն* culo, lulo, porculus, *հարգ.* farheli, *գերմաներեն* lina, *լիթ.* parseli, *«խոզուկ» սանսկրիտերեն* vrsalas *մարդուկ, հունարեն* ἄρκτιπος *արջուկ, սանսկրիտերեն* maryaká *մարդուկ,* ajakā *այծիկ, հին սլավոներեն* synuku *որդեակ, հունարեն* ὄρνιθιον *թռչնիկ և այլն:*

Նվաղականը անցնում է մի կողմից փաղաքչականի, մյուս կողմից նախատականի:

ա ձևից կազմվում են հատուկ անուններ, ինչպես սանսկրիտերեն Bhanu, la-s, *հուն.* θρασύ-λν-s, *գոթ.* Wulfi-la, *սանս.* Deva-ka-s, *հունարեն* λύκα-ς: *Կարող է հետո նվազական դաղափարը մոռացվել և համարվել դրական, օրինակ, հսլ.* otici *հայրիկ (հուն.* ἄϊτα *պապա), որ սովորական բան է:*

Ակ, իկ, ուկ, *որոնք գտնվում են իրանական բառերի ծայրին և նվազական չեն, ինչպես՝ կռնակ, դաստակ, տրցակ, մահիկ, չատուկ, հնդիկ, պարսիկ, խափչիկ, պարիկ, թոռնիկ, իսկ պրս. նվազական են, ինչպես՝* masya > *պահլավերեն* maȟiK.:

կան – *պհլ.* kaȟ,
depkaȟ – *դևհկան*
vaẑārkaȟ – *վաճառական*
groKaȟ – *գրավական*
– ndak > *անդակ (ներկա դերբայ)*
bawandak – *հյ. բովանդակ*
šāyēndak «passand»
žīvandak > *պհլ.* zindah
-kēn (-k-aina) *կազմում է ածական.*
sārmken *ամոթալի,* bimKeȟ *ահավոր*

-աւոր, *որ* < *պհլ.* ovar, var
ganjovar – *գանձավոր*
dādovar – *դատավոր*
kēnvar – *քինավոր*

-կար – kār *(հինը* kāra)
vināskar, ziyānkar, kāmkār *կամակար (իր կամքն անող)*

-րան < *պհլ.* dān

-ստան *պհլ.* stān, *դնդ.* stāna *«տեղ», ինչ. պհլ.* aspstān = *դնդ.* aspōstāna
երկիր Guržistān *Վրաստան* Nīrangistan
Tapuristan Zadmistān

պան < pān *հինը* pāna, pāvan *«պահող»*
grēvwān «Halsberge» – *պրս.* girēbān *օձիք*
stōrvān – *եղնարած*
šuwan *չոբան* – fšu-pāna-
maržwān – *մարզպան*

ա, ան = պհլ. a, an
an-ōšak *անմահ – անուշակ*
h < hu
hu-xēm *լավ բարքով*
դժ < duš
duš-xēm *վատ բարքով*
ապ – apē, պրս. bī
Համ – ham
hamatōxmak *համատոհմիկ*
hamrāž *գաղտնակից*

Նվազական և առավելական *կազմելու հետաքրքիր մի ձև ունի ամերիկյան* Chinook *լեզուն, ուր բառի բաղաձայնն է ուժեղանում կամ թուլանում, այսպես օրինակ՝* p, t, k, s, ç, c **նվազական** *են, իսկ* b, d, g, š, č, č **առավելական** *են, օրինակ՝*

inigəlčim	«I hit him with it»			
inigəlcim	»	»	»	*(մի երկխայի)*
inikəlčim	»	»	»	*(փոքր բանով)*
inikəlcim	»	»	»:	

Boas, Handbook 1, 635–645

Բերբերական kabyle *լեզվում արական բառի* **նվազականը** *կազմելու համար թե եղակին և թե հոգնակին վերածվում են իգականի, ըստ այմ՝ իգական բառերը նվազական չունեն իրենց համար: Օրինակ՝* ir zer *առու,* thir zerth (Hanoteau, 47): *Ճիշտ նույն երևույթը գտնում ենք նաև սրա աղգակից* tamachek *լեզվում* (Handbook, 29):

Կովկասյան լակ լեզուն չունի **նվազական** *մասնիկ, ասվում է՝* **փոքր տուն, փոխանակ՝ տնակ** (Услар, Лак. язык, 47): *Լատինն ունի երկակի նվազական, ինչպես* porcus porculus porcellus: *Զինարենում նվազական մասնիկներն են* cə *(ծը) «որդի» և* örī *«տղա» բառերը՝ նույնիսկ անչունչ իրերի համար: Օրինակ՝*

kou[1]	*փոս*	–	kou[1]-cə	*փոսիկ*
lü[2]	*էշ*	–	lürl	*իշուկ*
xuā[1]	*ծաղիկ*	–	xuarl	*ծաղկիկ*

Սրանցից առաջինը՝ cə, *այնքան հաճախ է գործածվում, որ այլևս նվազական արժեքը կորցնելով՝ դարձել է սովորական գոյականակերտ, այնպես որ բառի բուն ձևը այլևս գործածական չէ (գոնե ժողովրդական լեզվի մեջ)* (Seidel, Chin. gram. 40–41):

Նվազական մասնիկ նշանակում է՝

1) իրական նվազական՝ թռչուն – թռչնակ.

2) ևնթադրյալ՝ գնդակ, ռուս. ручка *«գրչածայր»,* ножка (у стола), головка *քորոցի գլուխ.*

3) ծագմամբ » – » матка = *լտ.* femella = weibchen *«մատակ, էգ».*

4) փաղաքշանք.

5) բոլորովին զուր տեղը ստացած նվազականը, այսինքն՝ արժեքը կորցրած:

Հնդկական լեզուներից guzrati *լեզուն ունի մի հետաքրքիր սովորություն իգականը իրր նվազական գործածվելու, ինչպես՝* ţekro՝ *արական «սար» -tekrī իգական՝ «բլուր». māto – արական՝ «աքաչ», māţī – իգական՝ պտուկ (BSL, № 105, 38):*

Հրեական ժարգոնի մեջ կա **նվազականի** *ավելի ուժեղ մի տեսակը, որ կազմվում է* alo *կամ* ele *վերջավորությամբ, որով ստացվում է նաև փաղաքշական (immuniti) ձևը (Birnbaum 38):*

Նվազականը գրեթե ամեն լեզվի մեջ էլ ունի նաև **զգվական** *կամ* **փաղաքշական** *գործածություն, որ կախված է խոսքի կամ գրվածքի բնույթից: Գիտական, ուսումնական լեզուն չի ճանաչում զգվական բառ, ընտաննեկան լեզուն լիքն է դրանցով: Օրինակ, հունարենը, որ վաղուց ևս ստացել էր գիտական ու գրական բնույթ, շատ զգվական բառ չունի, բայց նրանց ընտաննեկան լեզուն, ինչպես ցույց են տալիս կատակերգությունները, հարուստ են այդ կողմից: Լատիներենը, որ ուշ դարձավ գիտական լեզու, այնպես լիքն է նրանցով, մինչև իսկ Կիկերոնի նամակներում: Հին բարձր գերմաներենը, որ ունի միայն կրոնական գրականություն, գրեթե չունի զգվական բառ, իսկ միջին բարձր գերմաներենը, որ սիրային գրականությամբ լիքն է, լիքն է և զգվական բառերով (Meillet, BSL, № 69, էջ 189):*

Նվազական *կարելի է կազմել թե բուն բառի վրա ավելացնելով նվազական մի մասնիկ և թե կազմելով բոլորովին անջատ մի բառ, ինչպես՝*

անտառակ – պուրակ,
գետակ – վտակ, առու,
տնակ – խրճիթ,
իշուկ – քուռակ:

Սակայն այս կարգի բառերի մեջ նվազական մասնիկով կազմվածները միշտ ավելի մեծ են, քան անջատ բառերը, որովհետև հիշեցնում են մեծի անունը: Այսպես անտառակը ավելի մեծ է քան պուրակը, գետակը ավելի մեծ է, քան վտակը կամ առուն...

Կան լեզուներ, որ մեծ ուժ են տալիս նվազականին և պարունակում են բազմաթիվ նվազական բառեր: Այսպիսի լեզուներից է ռուսերենը, որ ժողովրդական բարբառում ամեն մի առարկայի համար ունի նվազական բառ կամ բառեր: дева *«աղջիկ» բառը ունի 21 նվազական ձև, այն է՝* девица, девка, девочка, девушка, девчуга, девчушка, девчура, девчурка, девчурочка, девчонка, девчоночка, девойка, девонька, девоня, девонюшка, девуня, деваха, деушка, девоха, девчина, дивца (Даль, Толковый словарь), *չհաշված բազմաթիվ բարբառային ձևերը:*

Ամերիկյան cri *լեզուն շատ է սիրում նվազական մասնիկների գործածությունը. մասնիկն է* is *կամ* us, *որ կարելի է և կրկնել: Օրինակ՝*

n'temis, n'trmisis
իմ ձիուկը իմ շատ փոքր ձին.
մինչև իսկ կա երեք անգամ՝
n't'anisisis *իմ շատ փոքրիկ աղջնակը*
(ի նշան սիրո և փաղաքշանքի):
(Lacombe, էջ 9)

Ավստրալիո նորպոմներանյան լեզվով **նվազական** *մասնիկն է* ik *(պատահաբար նման հայերենին), ինչպես՝* a tutanaik *մարդուկ:*

Նվազական և առավելական *ձևը այնքան տարածված և սիրելի է իտալերենում, որ մինչև անգամ գոյականներից ու ածականներից դուրս՝ բայերն ու մակբայներն էլ են ստանում այդ ձևը: Օրինակ՝*

poco	*քիչ*	pochétto, pochino, pocolino	*քիչ մը*	
bene	*լավ*	benito,	*բավական լավ*	benone *շատ լավ*
appunto	*ճիշտ,*	appuntino	*շատ ճիշտ*	
adagio	*կամաց,*	adagino	*շատ կամաց*	
rubare	*գողանալ,*	rubacchiare	*ճոպաղ անել*	
piovere	*անձրևել,*	piovigginare	*անձրև չաղել*	
cantare	*երգել,*	canterellare	«chantonner»	
saltare	*ցատկել,*	salterellare	*ցատկոտել*	

(Ferrari, 55)

Աֆրիկյան kikuyu *(բանտու) լեզվով նվազական կազմելու համար բառասկզբում դնում են* ka *մասնիկը, իսկ առավելական կազմելու համար* ke *մասնիկը: Օրինակ՝*

ngondu	*նավ,*	kangondu	*նավակ*
munyu	*աղ,*	kamunyu	*մի քիչ աղ*
kemunyu	*առատ աղ*		
ngombe	*եղ,*	kengombe	*մեծ եղ*

(Hemery, *էջ 3*)

Ռուսերենը դիտե կրկնակ նվազական, ինչպես՝

голубок *աղավնյակ,* голубочек *փոքր աղավնյակ.*

город *քաղաք,* городок *քաղաքիկ,*

городочек *շատ փոքրիկ քաղաք.* душа *հոգի,*

душка *հոգյակ,* душечка *հոգյակիկ:*

Սրանցից կազմվում են նաև այլ տեսակի նվազական-փաղաքշական ձևեր, որոնք արտահայտում են՝

1) սեր, գուրգուրանք, ինչպես՝

муж *ամուսին,* муженек *սիրելի ամուսին,*

сердце *սիրտ,* сердечко, сердечушко, сердеченько *[սրտիկ],*

вино *գինի,* винцо,

щи *ապուր,* щец.

2) անարգանք, նախատինք՝

собака *շուն,* собаченка *անպիտան շուն,*

лошадь *ձի,* лошаденька *ձիուկ:*

Այս կրկին երևույթները սովորական են հատկապես հատուկ անունների մեջ, որոնք խիստ բազմաթիվ են, ինչպես՝

Михаил *Միքայել* – Миша, Мишенька.

Елизавета *Եղիսաբեթ* – Лиза, Лизенька, Лизанька.

Григорий *Գրիգոր* – Гриша, Гришка:

Իտալերենն էլ ունի կրկնակ նվազականներ մի բառի վրա, ինչպես՝ libro *գիրք* – libretto, librettino, libricino, libruccio, librettuccio, libricciuolo, librettucciuolo:

Պորտուգալերենը չատ է սիրում inho, sinho (inha, sinha) *մասնիկներով կազմել* **նվազական և փաղաքշական** *բառեր, ինչպես՝*

beicinho *շրթունք-իկ,*
annelinho *մատանի-յակ,*
riosinho *գետակ,*
cousinha *բան-իկ և այլն* (Anstett 312):

Պորտուգալերենն ունի նաև **առավելական** *մասնիկներ, որոնք են՝* chao, gao, lhao, ao,tao, aco, az, caz, ona, ota.

Իտալ. ino. lino, ello, etto, icello, erello *նվազական են և նրբություն են հայտնում.*

Իտալ. uccio, upola, ame, icciato, icciuola – *անարգանք, օր.՝* dottore, dottorone – *(առավելական՝ լավ),* dottoraccio – *(առավելական՝ վատ),* dottorello – *(նվազական),* dottorino – *(նվազական՝ լավ),* dottoruzzo – *(առավելական՝ վատ):*

Առավելականից դուրս կա նաև **սաստկական** *մասնիկ, որ կցվում է այն բառերին, որոնց վրա առանձին ուշադրություն դարձնել են ուզում: Օրինակ՝ ամերիկյան* tlingit *լեզվի մեջ կա այս նպատակով* -te *մասնիկը, ինչպես՝* qawaq – *աչքեր,* qawagête – *աչքեր,* let – *ոչ,* letate – *ամենևին ոչ և այլն* (Boas 1, *էջ 168):*

Լեհերենն էլ ունի բազմաթիվ նվազական, կրկնակ նվազական և առավելական (– արհամարհական) ձևեր, ինչպես օրինակ՝

որդի-յակ synek – *կրկնակ* syneczek,
կին-յակ zonka – zcneczka,
սիրտ serduszko – serdulenko, serdusienko, serdusienecko,
-isko *մեծ, կոպիտ, ինչպես՝* – drozysko – *վատ ճամփա,*
խղճուկ մի դինվոր – zolnierzysko:
(Joel, 94–98)

* * *

Իկ-*ը արդի բարբառներում չատ սովորական է. օրինակ, Պոլսի մանկական բարբառում ամեն բառ ստանում է* -*իկ մասնիկը, և սրանով բառը դառնում է փաղաքշական, ինչպես՝ հացիկ, ջուրիկ, թաթիկ, տոտիկ, մատիկ և այլն, և այլն: Առափազարում մեծերի լեզվով էլ սովորական են այս կարգի բառերը, բայց ոչ թե փաղաքշական, այլ ավելի լավի կամ քչի նշանակությամբ՝ Ջուրիկ մը ըլլար, խմէի: Կերակուրիկ մը ըլլար, ուտէի: Այս գործածության համար համմտ. ռուսերեն չայկա, վաղնչկա և այլն:*

Զնխարենում բառերի մեծագույն մասը ստանում է փաղաքշական մասնիկ, որ ունի երկու աստիճան, ինչպես՝ les *«անտառ»* – lesik, lesiček, kniha *«գիրք»* – knizka, knizecka *և այլն* (Hansich, Gram tchèque 41):

Սլովակերենում էլ ոչ միայն գոյականները, այլև ածականները ստանում են նույնպիսի փաղաքշական մասնիկներ, ինչպես՝ malý *«փոքր»* – malunký, malulinky, malučky *«չատ փոքր»: Սկովտերեն* wifie *(որ նվազականն է* wife *կին բառի), գործածվում է իբր «կին ընդհանուր»* женщина *(համմտ. կնիկ)* (Grant և Dixon, 87):

Ամերիկյան wiyot *լեզուն բառերի փաղաքչական ձևերը կազմելու համար ոչ թե մեզ նման առանձին մասնիկներ է դնում, այլ բառի բաղաձայնների աստիճանն է փոքրացնում: Օրինակ՝* d *դառնում է* ẓ(y), t > r, s > *երկրորդ տեսակի* š l > r: *Այս ձևով կազմվում են ոչ միայն շատ բազմաթիվ գոյականներ, այլև՝ բայեր և մտնում են նաև խոնարհման մեջ: Այս լեզվի ուսումնասիրողը՝* Richard, *երկար խոսում է այս մասին, էջ 29–35:*

Բանտու լեզուների մեջ հետաքրքրական է նվազականի կազմությունը: Օրինակ՝ gվա լեզվում նվազականը կազմվում է ana *կամ* anyana *մասնիկով, ինչպես՝*

sinya	*ծառ,*	sinyana,	
yivu	*ոչխար,*	yivana	*գառն,*
mufana	*տղա,*	mufanyana	*տղեկ:*

Կարելի է կրկնել այս anyana *մասնիկը, և կստացվի ավելի փոքրիկը, ինչպես՝*

mali	*դրամ,*	malanyana	*շատ փոքր փող:*

Կարելի է երբեմն էլ ավելացնել ši *նախամասնիկը, ինչպես՝*

muti	*գյուղ,*	šimutana	*գյուղակ.*

Նույնը նաև նշան է սիրո, բայց նաև՝ ծաղրի (dérision), *ինչպես՝*

sati	*մեկի կինը,*	šisatanyana	*սիրուն կնիկս:*

(Persson, 33, 35)

Պրովանսալ լեզվի մեջ գոյականները ունեն թե մեծ և թե նվազական ձև, ինչպես՝

pourtau	*մուտք (դուռ),*
pourtalas	*ավագ դուռ,*
pourtalet	*փոքր մուտք:*

as, asso *մասնիկները ավելացնում՝ մեծացնում են իմաստը, երբեմն էլ տգեղացնում, անարգական դարձնում, ինչպես՝*

aubras	*մեծ ծառ,*	capelas	*մեծ գլխարկ,*
aurasso	*մեծ քամի,*	aurihasso	*խոչոր ականջ,*
vidasso	*երկար և դժբախտ կյանք:*		

Ընդհակառակը՝ et, eto, ihoun, ihouno, oun, ouno *մասնիկները փոքրացնում և չնորհալի են դարձնում, ինչպես՝*

ramelet *ճյուղիկ,* aureto *հողմիկ,* enfantat *փոքր տղա,* tourrihoun *աչտարակիկ:*

Բայց կա նաև նվազականի նվազականը, ինչպես՝ enfantounet *շատ փոքր տղա, մանկիկ* (Savinian, 16)*:*

Ամերիկյան quiche *լեզվում երկար ձայնավորը մեծացնում է բառի իմաստը, ասում է* Lewy, 934 *և տալիս է միայն մի հարմար օրինակ՝* če *ծառ,* čē *մեծ ծառ, մյուս երկու օրինակները անարժեք են:*

Առավելական մասնիկ ունի նաև կարաբդի լեզուն, որ է šxo. *օրինակ՝* fendərel šxo *տակառի մեծը: Առավելական մասնիկ ունի նաև լհհերևը, որ միևնույն ժամանակ նախատական է, ինչպես՝* pokoj *«սենյակ» –* pokoisko, dab *«կաղնի» –* dębina *են: Ռումիներենում նվազական մասնիկները խիստ շատ են. գլխավորներն են՝* us, ar, andru, el, uț, șou, iță, uță, içă, oard, *առավելականով* an, oc, ancă, oacă *են:*

Առավելական և նախատական մասնիկներ ունի նաև իտալերենը, որոնք են՝ one, otto, accio, astro, azzo, aglio: *Սրանցից առաջին երկուսը գուտ առավելական են, մյուս 4-ը՝ անարգական, ինչպես՝*

albero	*ծառ,*	alberone	*մեծ ծառ,*
capello	*գլխարկ,*	capellone	*մեծ գլխարկ,*
porta	*դուռ,*	portone	*մեծ դուռ,*
giovane	*երիտասարդ,*	giovanotto	*մեծ երիտասարդ,*
avaro	*ագահ,*	avaraccio	*վատ ագահ,*
medico	*բժիշկ,*	medicastro	*վատ բժիշկ,*
popolo	*ժողովուրդ,*	popolazzo	*ռամիկ,*
villano	*գյուղացի,*	villanaccio	*կոշտ գյուղացի,*
gente	*ազգ,*	gentaglio	*ռամիկ ժողովուրդ:*

Սպաներենի մեջ on, azo, ote, ona, aza *կազմում են առավելական, իսկ* illo, ico, ito, illa, ica *նվազական են, օրինակ՝*

libro *մեծ գիրք,* librote *մեծ գիրք,* librillo *գրքույկ:*

Այս մասնիկները հաճախ անարգական են:

Ամերիկյան Carrier *լեզվի մեջ ամեն բառ ունի նվազական և առավելական ձև. 1-ինը կազմվում է* -yaz *«քիչ» մասնիկով, 2-րդը՝* -co(yo) *«մեծ» մասնիկով: Բացի սրանցից՝ կա նաև՝*

mediatif՝	*կազմված*	-cel	*մասնիկով.*
appreciatif՝	» — »	-ti	» — »:

Հատկապես մեծ տարիք ցույց տալու համար՝

depreciatif	*կազմված*	-ci	*մասնիկով.*
նախատական՝	»		» — ».
սաստկական՝	»	-k'aih	» — ».
բացարձակ՝	»	-zai	» — »:

Օրինակներ՝

netk^{y}et-co	*«սարսափ» (= վախ մեծ)*
mutih-t'i	*«տեր, իշխան» (գլխավոր)*
^{h}lo-çi	*«անպետք ձուկ»*
yezih ^{h}li k^{y}eb	*գրաստ («ձի անպետք»)*
sūniyā-k'aih	*արծաթ գուտ*
t'en-zai	*սառույց (որի վրա ոչ մի կտոր ձյուն չկա)*

Նվազականը նաև սիրային, փաղաքշական է, առավելականը նաև հարգական, պատկառանք է. օրինակ՝ մեծ եղրայրը փոքրի մասին խոսելիս ասում է ṣcel-ço *«կրտսեր եղրայրս—մեծ» (որ հարգանք է):*

Առավելականը, նվազականը և նախատականը հատկապես գործածական են հատուկ անունների հետ (Morrice, Carr. lang., 111—114):

Ռնտոոոման լեզվում բառի իմաստը խոչորացնելու համար դնում են un, atsch, ira: *Օրինակ՝*

cudisch	*գիրք,*	cudischun	*մեծ գիրք.*
porta	*դուռ,*	portun	*մեծ դուռ.*

mansaser	*ստախոս,*	mansaseeâtsch.	
cavali	*ձի.*	cavallâtsch	*խոչոր ձի:*

(Conradi, 14)

Աֆրիկյան վաֆիր լեզվի մեջ առավելականը (augmentatif) *կազմում են* kazi *մասնիկով, ինչպես՝*

umsinga	*հեղեղ.*	umsingakazi	*մեծ հեղեղ.*
umti	*ծառ.*	umtikazi	*մեծ ծառ.*
ilitye	*քար.*	ilityekazi	*մեծ քար.*
umfo	*մարդ.*	umfokazi	*խոչոր մարդ:*

(Laren, *էջ* 7)

Նոր Հիբրիդյան (*Մելանեզիա*) baki *լեզվով առավելականը կազմվում է* buru *մասնիկով, ինչպես՝*

veru	*քար.*	buruveru	*ժայռ, մեծ քար.*
suku	*բլուր.*	burusuku	*լեռ:*

(Macdonald, 77)

Սոլոմոն կղզիների փլորիդա լեզվով tina *«մայր» բառը կազմում է խոչոր բաներ, ինչպես.*

beti	*ջուր.*	betitina	*գետ.*
pari	*հող.*	paritiba	*երկիր:*

(Ivens, 1084)

Suislawan *լեզուն* (*ամերիկյան*), *ինչպես ունի նվազական մասնիկ* (-îskîn), *նույնպես և առավելական մասնիկ* (-îlmä), *բայց կարող է այս երկուսը միացնել մի բառի վրա այն նպատակով, որ մեղմացնի այն տպավորությունը, որ գործում է առավելականը և փոխադարձաբար: Օրինակ՝*

t'āmc «infant», mîlà «mother», t'oāmcîlmásk'în *փոքր խոչոր տղա, ուրեմն՝ փոքր տղա.*

mîlaskîlmä *խորթ մայր, բառացի՝ փոքր ծեր մայր:*

ՀԱՎԵԼՎԱԾ

Դիտարկումներ առանձին ածանցների վերաբերյալ

–ագին կազմում է զգացմունք ցույց տվող ածական. ահագին, զվարճագին, ցավագին, զայրագին, մոլեգին:

–ած (գրբ. **ո** բուն): Բայից կազմվում է գոյական, քիչ է գործածվում, ինչպես՝

1) Գոյական՝ կատարիմ – կատարած,
   առնիմ (արարի) – արարած:

2) Ածական, որ ավելի քիչ է՝ (բունը՝ **ա**)՝ **ողորմած, գթած:**

–ական, –կան (գրբ. **ի–ա** հլ.) կազմում է գոյական և ածական, որ կարող է նաև առնվել գոյականի մտքով, ինչպես՝ աշխարհ – աշխարհական, տարի – տարեկան, աղնիվ – աղնվական, Տարոն – Տարոնական, հելլեն – հելլենական, ազգ – ազգական, կոչունք – կոչնական, վաճառ – վաճառական, առևտուր – առևտրական, թաղ – թաղական:

Կարելի չէ ամեն մի բառի վրա դնել **–ական** մասնիկը, օրինակ, կարելի է ասել սպառնական, բայց չկա սպառնողական (ուստի սխալ է Շիրվանզադեն, երկերի լիակ. ժող., Երևան, 1930, հտ. Դ, էջ 302: Նա ձգեց նրա վրա մի սպառնողական հայացք):

–ական մասնիկը կարելի է կրկնել. վաճառականական, գրականական:

Ածանցվողը գոյական է՝ ուստի ստացել է **–ական** մասնիկ. առևտրականական, աղգականական:

Նման կազմություն ունի նաև փորձնական, որի մեջ **ն**-ն ավելորդ է, որովհետև բառն է **փորձ** և ոչ փորձն. ապացույց՝ ուրիշ ածանցներ նույն արմատից, ինչպես՝ փորձել, փորձառու, փորձառություն, փորձառական:

Գործ բառից էլ ունենք **գործնական,** մինչդեռ պիտի լիներ **գործական:**

Հնից ավանդված են գիտնական, գործնական և յօսնական, բայց չկա փորձնական:

Բարբառներում դառնում է սղմամբ **կան,** օրինակ ծննդկան (ավաղված՝ ծլնդկան), որի օրինակով չինված է **տղոցկան** կամ **տղացկան, մուրացկան:** Սրանից է նաև **գիտնական,** որ հոմանիշ է **գիտուն** բառի, բայց ինչ գործ ունի **ն** բաղաձայնը բառի միջին, քանի որ մասնիկը **ական** է և ոչ **նական:**

Թվում է, թե **գիտուն** բառից է կազմված **–ական** մասնիկով, բայց ինչ միտք ունի **գիտունական:** Ես կարծում եմ, որ նմանողությամբ ձևացած է **ուսումնական** բառից. Պոլսի բարբառում գործածական են թե ուսումնական և թե գիտնական, որ ծաղրով հնչում են քիթնական (քիթը մեծ):

-կան *մասնիկը ի վերջացող բառերի հետ դառնում է* **-եկան**, *ինչպես՝ տարի – տարեկան, նույնի հետևողությամբ բարբառներում ունենք՝* **օրեկան, ամսեկան:** *Կա նաև կանանցեական «կանացի, կնոջական». Վրք. Հյց., 299, 305:*

Կցվելով **ու** *մասնիկի վրա՝* **ուական** *կտա, ինչպես՝ պիտուական, սիրուական, տիրուական միջին հայ. և գավ. ձևերը:*

-ակ, -իկ, -ուկ, *տե՛ս [Փաղաբչական, նվազական և առավելական մասնիկներ]:*

-ակն *Այս մասնիկը գտնում ենք* **արեգակն, փայլակն, կայծակն** *բառերի մեջ: Իրապես մասնիկ չէ, այլ* **ակն** *«աչք» բառն է: Հնդեվրոպացոց մեջ արևը ըմբռնվում էր իբր մի աչք, որ տեսնում է ամեն ինչ: Սրա համեմատ էլ կազմվել է* **արեգակն** *«արև աչք» (եզակի, որովհետև արևը մի հատ է), և սրա նմանությամբ էլ մյուսները: Հայերենին համապատասխան են հունարեն ἀστεροπή, στεροπή, ἀστραπή «փայլակ» և հաթ. tunakalas, tunnakeš-šar, որոնք երկուսն էլ նշանակում են «արևի անիվը». առաջինը կազմված -akalas բառով, որ է լատիներեն oculus «աչք» և երկրորդը -ak- բառով, որ է հայերեն* **ակն** *(Meillet, BSL, № 102, էջ 131):*

-ակն՝ *կայծակն, փայլակն, արեգակն. արդյո՞ք (ըստ իս) ակն «աչք» բառն է, ինչպես լատիներեն -ox և հունարեն -ωπός մասնիկները «աչք» բառից, ինչպես լատիներեն atrox, ferox, հունարեն σκνθρωπος τιενωπύς, (Meillet, Traité 342):*

-աղ *Կան մասնիկներ, որոնք գործածությունից բոլորովին դադարած են, և նրանց հետքը կարելի է գտնել միայն մի քանի ածանցյալ բառերի մեջ, ինչպես՝* **աղ** *մասնիկը – կախաղան, հապաղել, հաշաղել, կենց-աղ...:*

-ային *(գրբ. ո հոլ.) Տեղ ցույց տվող վերաբերական ածական՝ դաշտային, լեռնային, հյուսիսային, հարավային:*

Երբեմն **ական** *և* **ային** *տարբերում են միտքը, օր.՝ ընկերական և ընկերային, աղգական – աղգային, թաղական – թաղային, քաղաքական – քաղաքային:*

-այն *(ո հլ.) Ցույց է տալիս ժամանակը կամ միջոցը.*

առժամայն, նույնժամայն, գիշերայն, լուսի – լուսյայն, ամենայն (ի հլ.), միայն:

Ան- *բացասական մասնիկը միշտ էլ թերացման, նվաստացման գաղափար չի տալիս, այլ նաև հակառակը: Օրինակ՝ երբ ասում ենք* **անբիծ, անմահ,** *սրանք չատ դրական գաղափարներ են արտահայտում:* **Անգին** *«գին չունեցող»՝ չատ դրական գաղափար է, նրա հակառակն է* **անարժեք,** *մինչ «գին չունեցող» երկու իմաստով էլ կարելի է ըմբռնել: Օրինակ՝ Հոգի կտորը, կավիճը գին չունեցող բաներ են, եգիպտոսի պեղումների ժամանակ դուրս եկավ մի չքեղ դամբարան, որի մեջ գտնվեցին անգին՝ գին չունեցող ակունքներ:*

Երբեմն **ան-** *բացասականը ավելի արժեք է ցույց տալիս, քան դրականը: Օրինակ՝ Ա-ը* **գնահատելի** *ծառայություններ է մատուցել գիտությանը: Բ-ը* **ան-գնահատելի** *ծառայություններ է մատուցել:*

Երկրորդը առաջինից չատ ավելի դրական է:

Ան- *նախամասնիկը ցույց է տալիս ի բուն եղած բացասություն, իսկ եթե բացասություններ հետո է առաջացած, դնում ենք* **զուրկ** *բառը, ինչպես՝ անթև (հագուստ, վերարկու) – թևազուրկ (թռչուն), անխելք – խելազուրկ, անգեմ – դիմազուրկ, անկարգ – կարգազուրկ, անընչական – ընչազուրկ, անկյանք – կենդազուրկ:*

Ան- *մասնիկը կարելի չէ դնել սղյալ ձևերի վրա: Օրինակ՝ կարելի չէ ասել* **անանցնելի**, *այլ* **անանցանելի** *(Շիրվանզադե, Երկերի լիակ. ժող., 1930, էջ 330՝ Ջնայելով* **անանցնելի** *ցնխին): Կարելի չէ* **ան-** *բացասականը դնել բառի մնջ, այլ միայն սկիզբը, օրինակ՝ անուշադրություն, անկողմնապահություն, անմեղադրություն, բայց ոչ թե՝ մեղանապահություն:*

Ան- *մասնիկի տեղ այժմ սկսեց սովորական դառնալ* **ոչ** *մակբայը, որ եվրոպական լեզուների հետևողության արդյունք է: Սկզբում բացասականը կազմըվում էր* **ն** *բառիկով, ... հետո* ne *մակբայի, դերբայների և բայաուննների միջոցով: Օրինակ՝ լատիներեն* ne-cessus «անհրաժեշտ» *կազմվեց* ne cessus est **զիջում չկա** *ձևից: Այս ոճը ավելի մեծ տարածում ստացավ բալթիկ-սլավոնականի մնջ, հատկապես ուր* **ան-***ը ջնջվեց իսպառ* (Brug. Abr. § 379):

Իբր նախամասնիկ կցվելով՝ **ան-** *մասնիկը բառին տալիս է բացասական իմաստ, ինչպես՝ անասուն, անբան, անգետ և այլն:*

Ոսկեդարյան հայերենում **ան-** *մասնիկը չի կարող կցվել այն բառերի վրա, որոնք վերջից ունեն* **-ելի** *մասնիկը, ինչպես՝ անչարժելի, անխախտելի, անայլայլելի, անփոփոխելի: Այս բոլորը հետոսկեդարյան ձևեր են, որոնց ոսկեդարյան ձևն է՝ անչարժ, անխախտ, անայլայլ, անփոփոխ:*

Այս կարգի ածականները միաժամանակ թե ներգործական են և թե կրավորական. անխորտակելի նշանակում է թե այն, որին չի կարելի խորտակել (ներգործ.) և թե այն, որ չի կարող խորտակվել (կրավ.): Ուստի սխալ է կազմել **անընկճելի** *ձևով մի բառ, ինչպես ունի Շիրվանզադե (Երկերի լիակ. ժող., հտ. Դ., 1930, էջ 188. արտահայտում էին մի անընկճելի գոռոզություն):*

Ան- *բացասականին համազոր են* **-զուրկ** *և* **-աւտ.** *սրանց նշանակության տարբերությունն այն է, որ մինչդեռ* **ան-** *ցույց է տալիս բնականից չունեցող,* **զուրկ** *և* **-աւտ** *ցույց են տալիս սկզբում ունեցող և հետո զրկված. Համմտ.՝*

անձայն և ձայնազուրկ,
անթև և թևազուրկ (անթև վերարկու, թևազուրկ թռչուն),
անպոչ և պոչատ (անպոչ թռչուն, պոչատ գղալ),
անխելք և խելազուրկ:

-անի *Հավաքական մասնիկ է, որ հետո իբր հոգնակի գործածվեց, օրինակ՝ ընդ անարգանին, ընդ նուագունսն խօսելով, Ոսկ. գծ., 313 (անարգների, նվաստների հետ խոսելով):*

Սովորաբար կազմում է հոգնակի, ինչպես՝ ավագանի, կանանի և այլն. երկոտանի, չորքոտանի և սրանց նմանությամբ՝ միոտանի:

Նոր լեզվի մնջ կազմված բառեր են **նամականի** *«նամակների հավաքածու»,* **տարազանի** formulaire, **առածանի** *«առածների հավաքածու»,* **առականի** *«առակների հավաքածու»:*

Բացի գրաբար բառերից և աչխարհիկ գրական բառերից, ժողովրդական լեզվի մնջ ունենք նաև՝ երկուերեսանի, երկուտեղանի, հինգգլխանի. քանի՞ գլխանի ես. միաչքանի:

-անոց, -ոց *(գրբ.* **ա** *բուն) Տեղ է ցույց տալիս,*
ինչպես՝ սպանդ — սպանդանոց,

զոհ – զոհանոց,
մեղու – մեղվանոց,
ժողովուրդ – ժողովրդանոց,
մոխիր – մոխրանոց,
ձմեռն – ձմեռանոց,
ամառն – ամառանոց:

-ոց *(գրբ. ա բուն) 1. Տեղ է ցույց տալիս՝*
ծաղիկ – ծաղկոց,
մոխիր – մոխրոց,
ձմեռն – ձմերոց:
2) Ցույց է տալիս գործիք՝
կտրել – կտրոց:

-ոց, -անոց՝ *արգելանոց, աղբանոց, արտաքնոց, աբբայանոց, բոզանոց, անկելանոց, գզրոց, գևրեզմաննոց, գաղանանոց, դարբնոց, դպրոց, դպրանոց, գոբանոց, ծաղկանոց, ծերանոց, հյուրանոց, հորմնոց, հայանոց (հայնոց), հնոց, հարդանոց, հովանոց, հիվանդանոց, կուսանոց, չնանոց, չորանոց, վարդանոց, տաճկանոց:*

-անք *(գրբ. ու բուն) Բայից կազմում է գոյական: Անեզական է, ինչպես՝ հալածեմ – հալածանք, յանցանեմ – հանցանք,* **-ամ** *լծորդությունից՝ առանց ց-ի՝ կեամ – կեանք:*

Ապ- *նախամասնիկը իրանական ծագում ունի, բայց գտնվում է թե պարսկերեն բառերի վրա և թե հայերեն բառերի վրա: Առաջին դեպքում պետք է կարծել, որ ամբողջ բառը պարսկերենից է փոխառյալ, իսկ երկրորդ դեպքում՝ հայերենի մեջ է կազմված:*

Օրինակ՝ **ապիկար** *«անկարող». կազմված է* **ապի-** *մասնիկով* **կար** *(ոդություն) արմատից: Ձևով նման է պարսկերեն bīkār «անգործ» բառին, որի հետ, սակայն, կապ չունի: Ռամիկ բարբառում այս պարսկերեն բառը դարձել է Պլ.* **ալչքեար,** *որ նշանակում է «ամուրի», «ազապ»:*

Օրինակներ՝ ապիրատ «անարդար» պհլ. apēdāt, ապաժաման, ապաչնորհ, ապերախտ, ապենիազ «անկարոտ» պհ. apēniyāz, պրս. bē-niyāz:

-ավ, -ով, -իվ

-իվ *գործիականի վերջավորությունը դարձավ մասնիկ, ինչպես՝ ազնիվ (զուտ գործիականը լինում է ազամբ), մեղմիվ, հազիվ, նաև ուրիշ գործիականներ, ինչպես՝ իրավ, համով, ուժով, կաթնով, երեսով, խելոք:*

-ավոր *(գրբ. է-ա հոլ.) Ունեցող նշանակությամբ ածական կամ գոյական է, կազմում. լուսավոր, փառավոր, երկրավոր, հոգևոր, թագավոր, աղեղնավոր, կնդծավոր, դատավոր:*

Առաջանում է «բեր» ձևից համմտ. հպրս. bara ինչպես՝

takabara *թագավոր,* ganjabara *գանձավոր,*
asabara *ձիավոր,* arstibara *ուղտևոր,*

լատիներեն bi-fer, frugi-fer, igni-fer, signi-fer, leti-fer, lucifer, *հունարեն φόρος, ինչպես λευκοφόρος:*

-ար մասնիկը անսովոր մասնիկ է, որ գտնում ենք մի քանի բառերի մեջ, ինչպես՝ մեծ-ար-ել, հարդ-ար-ել, արդ-ար, զ-արդ-ար-ել և այլն:

Նորագույն շրջանում ստեղծեցին կերպ-ար, որ կերպարանք ձևից են հանել, ոմանց չատ սիրելի բառ դարձավ, օր. Մ. Հուսյան երկու տողի մեջ չորս անգամ կրկնում է՝ «կերպարը դառնում է վառ և կենդանի:

Մոր կերպարը Զորյանի ստեղծած հաջող կերպարներից մեկն է: Այդ կերպարը...» Հաջորդ էջում՝

«Մոր կերպարից հետո ուշադրության արժանի է Վիկտորի կերպարը: Այս կերպարը...»:

-արան *(գրբ. ի-ա բուն) ցույց է տալիս՝ 1. Տեղ՝*

զոհ – զոհարան:

Տարբեր առում ունեն՝

նվագ – նվագարան և

կերպ – կերպարան(ք):

2) Գիրք, ինչպես՝ ավետարան, կտակարան, երգարան, տաղարան, սաղմոսարան, բառարան, հնգարան, այբբենարան:

Ցույց է տալիս տեղ, ինչպես՝ թիարան, լսարան, համալսարան, կերպարանք, լողարան, ուսումնարան, տնկարան, խառնարան, ծխարան, ճաշարան, բնակարան, արբայարան, մենարան, կայարան, կացարան, կախարան, սրճարան, թեյարան, զրոսարան, ճնմարան, փոխանորդարան, առաջնորդարան, զուգարան, սերմնարան: Համանիշ է նաև՝ **նոց, անոց:**

-ացի, -եցի, -ցի *(գրբ. -ոյ, -եան): Տեղացի կամ բնակիչ ցույց տվող. աթենացի, կրետացի, զրացի, քաղաքացի:*

Աչխարհաբարում և նոր բարբառներում գործածվում է պարզապես **-ցի,** *իսկ գրաբարում* **-եցի** *կամ* **-ացի,** *որոնց պայմանները հայտնի չեն:*

Ոչ միայն կազմում է (այս մասնիկը) «բնակիչ», այլև մակբայ, ինչպես՝ ձևերացի «ձևերով», հայեցի «հայկական», մուրցացի «բռունցքով»:

Տեղացի ցույց տվողներից օրինակներ. -ե-ով. կարնեցի, վանեցի, աչտարակեցի, նորքեցի, հռոմայեցի, փարպեցի, ջահկեցի, պոլսեցի, մչեցի, վիրապեցի, սասնեցի, խութեցի, տայեցի:

-ա-ով. նարեկացի, երուսաղեմացի, իսրայելացի, խորենացի, հացեկացի, հարքացի, տարոնացի, խորձենացի, սամարացի, սկարիովտացի:

Աչխարհաբարում՝ [Պոլսում,] երբեմն **ցի** *և* **եցի** *գործածվում են միաժամանակ առաջինը նախատական և երկրորդը՝ մաքուր իմաստով, ինչպես՝* **ակնցի, վանցի** *նախատական են, իսկ* **ակնեցի, վանեցի՝** *կանոնավոր:*

Եվրոպական լեզուներից ռուսերենը և ֆրանսերենը այս կողմից չատ բազմազան են:

Ահա ֆրանսերենի և ռուսերենի համար մի խումբ քաղաքների բնակիչների անուններ:

Marseille – marseillais
Lyon– Lyonais
Paris – Parisien
Napoli – Napolitain

Cognac – Cognaçais
Constantinople – Constantinopolitain
Moscou – Moscovite
Rome – Romain
Genève – Genévois
Bordeaux – Bordelais
Москва – москвич
Ленинград – ленинградец
Киев – киевлянин
Рига – рижанин
Ростов – ростовчанин
Новгород – новгородский
Неаполь – неаполитанец
Томск – томич
Тула – туляк
Париж – парижанин
Петербург – петербуржец
Псков – псковитянин
Баку – бакинец
Алма-Ата – алмаатнец
Горький – горьковчанин
Ереван – ереванец
Одесса – одессит
Сибирь – сибиряк
Венеция – венецианец
Днепропетровск – Днепропетровский

-ցի-ն կազմում է՝

1) մի տեղի բնակիչ, ինչպես՝ քաղաքացի, գյուղացի, լեռնցի, սարեցի, ո՞ր երկրացի, տեղացի:

2) Հատկապես գյուղի և քաղաքի անունով, ինչպես՝ աչտարակցի, բյուրականցի, կարնեցի, վաննեցի:

3) Երկրի անուններով, ինչպես՝ եվրոպացի, ասիացի, ամերիկացի, Հնդկաստանցի, Հայաստանցի, պարսկաստանցի, ռուսաստանցի...

4) Սրանց մի մասը ցույց է տալիս ազգ, մյուս մասը՝ բնակիչ:

Ազգի անունը ընդհանրապես արմատով է, ինչպես՝ հայ, թուրք, հույն, լազ, արար, պարսիկ, հնդիկ, քուրդ, չեչեն, չերքեզ, աղվան, բելուջի, ռուս, լեհ, թաթար:

Երբ այսպիսի ձևեր չկան, դնում ենք **-ցի**. *ֆրանսիացի, անգլիացի, գերմանացի, իտալացի, վրացի, ամերիկացի, բրազիլացի, ճապոնացի...*

Երբեմն երկու ձևն էլ կա, ինչպես՝ լեհ – լեհացի, չին – չինացի:

Երբեմն երկու ձևերն էլ կան, մին ազգն է նշանակում, մյուսը՝ բնակիչը, ինչպես՝ հայ – հայաստանցի, ռուս – ռուսաստանցի, պարսիկ – պարսկաստանցի, թուրք – թուրքիացի, տաճիկ – տաճկաստանցի. ունենք նաև չինացի – չինաստանցի, վրացի – վրաստանցի:

-ցի *մասնիկը նշանակում է.*

1) տեղացի կամ բնակիչ, երևանցի և այլն.

2) կերպով, ձևով՝ աքացի, բոնցի, խելացի, մտացի:

Դառնում են մերթ գոյական, մերթ ածական և մերթ էլ՝ մակրայ. օրինակ աքացի գոյական է, խելացի՝ ածական:

Գործ է ածվում հատկապես **-ացի** *ձևով և հոլովվում է* **-ո** *հոլովումով, ուստի ծագում է հնխ. արական ձևից. այս երկրորդական երկու մասնիկներից բաղկացած է, որոնք կցվել են* **ո** *բունով բառերի վրա:*

Այն բառերը, որոնց վերջընթեր ձայնավորն է **ի**, *ստանում են* **եցի** *մասնիկը. ինչպես՝* **կարնեցի:**

-եղ *կազմում է ած.՝ ահեղ, ուժեղ, զորեղ, կարչնեղ:*

-եղեն *(ի-ա հոլ.) ցույց է տալիս նյութը, որից չինված է: Ինչպես՝ մաչկեղեն, հրեղեն, ոսկեղեն: Գվո. զիսկեղեն «զարդեր»:*

-ենի *(գրբ. գործ,* **-նեաւ**) *ցույց է տալիս ծառ.*

ձեթ – ձիթենի,

թուզ – թզենի:

Նաև՝ մաչկ, մորթ, կաչի՝

ուլ – ուլենի:

-ենի *մասնիկը լտ.* inus, ina, inum – **ային** *նշանակությունն է տալիս, բայց իգական ձևը անասնոց անվան վրա նշանակում է նրա միսը, ինչպես՝*

ovina *ոչխարի միս (հյ. ոչխարենի)*

caprina *այծի միս (այծենի)*

ursina *արջի միս (արջենի)*

leovina *առյուծի միս (առյուծենի):*

-եւ (եվ, և) *եվ չաղկապը գործածվում է հաճախ իբր մասնիկ, այսպես՝ իբր – իբրև, մինչ – մինչև, թե – թևե, թեպետ – թեպետև, արդար – արդարև: Այս խմբի մեջ պետք է զանազանել իրարից այն բառերը, որոնց մեջ* **և**-*ը ոչ մի նրանգ չի փոխում բառի նշանակության մեջ, և այն բառերը, որոնց մեջ, ընդհակառակը, իմաստը բոլորովին փոխվում է: Առաջինները իրար հոմանիշ են և գործածության մեջ կարող են ազատորեն փոխանակել իրար, ինչպես՝ իբր – իբրև, մինչ – մինչև, թեպետ – թեպետև, իսկ մյուսները իրարից տարբեր իմաստ ունեն՝ թե – թևե, արդար – արդարև, նա – նաև:*

Առաջին խմբին են պատկանում նաև այն տեղական մակբայները, որոնց մեջ **և**-*ը թարմատար է. վերև, ներքև, ստորև:*

Բոլորովին այլ է **և** *առանձին գործածված, որ պահում է նաև իմաստը, ինչպես՝* **միանգամայն և այլ:**

-երեն *ցույց է տալիս լեզու, օրինակ՝*

Քանզի ոգւոյ և հողմոյ անուն **եբրայեցերէն** *և յունարէն և ասորերէն նոյն է, նա թէ և հայերէն ոք մանր միտ դնիցէ. եզն. 90:*

Եվ էր գիր գրեալ ի վերայ նորա **յունարէն** *և* **դաղմատերէն** *և* **եբրայեցերէն** *գրով: Ղուկ., Իգ., 38:*

Ինչպես նկատելի է, մասնիկը ստանում է երբևմն **արեն** *և երբևմն* **երեն** *ձևը (կա նաև աչխ.* **ռամկորեն,** *որ առաջացած է* **-օրեն** *ձևից): Բացի սրանից՝ մասնիկը կարող է դրվել կամ պարզ ձևի վրա, ինչպես՝* **Հայերեն, Հունարեն, ասորերեն** *և կամ* **-եցի** *մասնիկով, ինչպես՝* **երբայեցերեն,** *աչխ.* **վրացերեն, գոթացերեն** *(վերջին ձևը գործածական է արևմտահայոց մեջ, մինչ արևելահայերն ունեն* **գոթերեն**): *Երկու դեպքում էլ մասնիկը դրվում է ազգ նշանակող բառի վրա և ո՛չ երկիր, ինչպես՝ հայ – Հայերեն, վրացի – վրացերեն, ռուս – ռուսերեն, երբայեցի – երբայեցերեն, բայց նորերը՝ նաև երկրի անունով, ինչպես՝ փրանսերեն, գաղղիերեն և այլն:*

-եցի, *տե՛ս -ացի:*

-եք (-էք) *Այս մասնիկով ունենք՝ հիմնարկէք, տնօրհնէք, գերեզմանօրհնէք՝ աղավ. օրնէնք, որի նմանութեամբ* **ուխտօրենք,** *որ է՝ ուխտօրեայք (և հավելումով և* **օրէնք** *բառի նմանութեամբ): Արժէք՝ աղավ. արժէնք (գին):*

-Ընդ *նախդիրը դարձել է մեր մեջ նախամասնիկ և այս դեպքում գրվում է բառից անբաժան, օրինակ՝ ընդ-արձակ, ընդ-ունել, ընդ-ունարան:*

Հին Հայերենի օրենքով **ընդ** *նախդիրը ամբողջական մնում է ձայնավորի առաջ, ինչպես վերևի օրինակներում, բայց բաղաձայնից առաջ կորցնում է* **դ** *բաղաձայնը, օրինակ՝ ընձեռել, ընկալագիր, ընկեր:*

Այս օրենքի գործադրության աչանչելի օրինակ է **ընդունել,** *ուր* **դ** *մնում է ձայնավորի պատճառով, բայց հենց որ կատարյալի ենք վերածում, դառնում է* **ընկալայ՝** *բաղաձայնի պատճառով:*

Ավելի ուշ այս օրենքը վերացավ և ամեն դեպքում էլ **ընդ-**ի *գործածութիւնը սովորական դարձավ, հնչ.՝ ընդ-ծովնայ, ընդ-գրկել, ընդ-մտատար, ընդ-հատակյա և այլն:*

-ի *(գրբ. գործ.* **-եաւ**) **-ի** *կազմում է ածական, ինչպես՝ ականի, աղի, այլազգի, արամբի, կանամբի, աստի, արծաթի, միակողմանի:*

Շատ սովորական է աներևույթի հետ, ինչպես՝ սիրելի, զարմանալի, լսելի:

-ող *իմաստով՝ հոսելի (հոսող), բանալի (բացող):*

Կարող են մասնիկների հետ ներմուծել և ուրիշ տարրեր՝ հայտ-ն-ի, կեն-դան-ի, հայր-ենի:

Ածանցման ժամանակ այս **ի**-*ն ընկնում է, ինչպես՝ սրանչելապես, սրանչելարար:*

Պատասխանի, արժանի, կարի բառերի վրա եղած **ի**-*ն հայկական մասնիկ չէ, այլ իրանական, քրիստ. սոգդերենում ուղղ. հայց. հոլովի -y(=i) վերջավորութիւնն է, ինչ քր. սոգդ. ուղղ. հյց. ի՛ՙտոց «պատասխանի»* (Bailey, JRAδ, 1930, էջ 9):

-իկ, *տե՛ս -ակ:*

-ին *(գրբ.* **ո** *հոլ.) կազմում է ած.՝ խավարին, դյուրին. հատկապես մակբայներից՝ առաջին, ետին, ներքին, արտաքին, երևկոյին:*

-իչ *Պատահարար նման է թրք. ji=արևել. թրք. či մասնիկին, որ թեև սովորաբար արհեստավոր կամ վաճառող է ցույց տալիս, բայց նաև երբեմն գործող անձ է նչանակում և համապատասխանում է ճիչտ մեր* **-իչ** *մասնիկին, ինչպես*

yalançə (yalançi) «սուտ խոսող, ստիչ», jarçо, çarçi «փներգակ, ճառող, ճառիչ», arayjə «որոնիչ, խուզարկիչ» yazəjə, yazəçi «գրիչ» և այլն:

-իվ, տե՛ս **-ավ**:

-կան, տե՛ս **-ական**:

-ճան Գիտենք, որ մասնիկները նախավոր բառերից են առաջանում: Այսօր **-պես** և **-որեն** արդեն համարում ենք մասնիկ, թեև գիտենք, որ նրանք անկախ բառեր են. **պիտի**-ն մասնիկ է ապառնիի, բայց նաև անկախ բառ էր ե դարում: Կան մասնիկներ էլ, որոնց մասնիկ թե բառ լինելը չենք կարողանում որոշել. այսպիսիներից մեկն է **ճան**, որը այժմ անգործածական է իբրև մասնիկ, բայց նույնիսկ գրաբարում չգիտենք, թե նա անկա՞ախ բառ էր: Սրանով կազմված բառերն են՝ **դավաճան**, **ճակաճան**, **զինճան** և **խրախճան**: Տարբեր են **տիրաճան** և **ցախիճան**. առաջինը բարդ բառ է և անչուշտ կազմված է **ճան**- **ճանաչել** բառից, գործածել են Թր. Ֆեր. և Նչ. Եղեկ. իրենց քերականության մեջ, հայտնապես ասելով, թե կազմված է **ճանաչել** բայից: Բայց կազմությունը բոլորովին խուլ է, պիտի լիներ կամ **տիրաճանաչ** (ինչպես ունենք **պարտաճանաչ**) և կամ **տիրածան**, որովհետև **ճանաչել** բայի արմատն է **ծան** (ծանոթ, ծանեայ) և ոչ թե **ճան**-: Այս բառի նախաձևը եղել է **ծանաչել**, որի նախաձայն **ծ**-ն, ազդվելով վերջավանկի չ-ից, դարձել է **ճ**: Գալով երկրորդ բառին՝ **ցախիճան**, որ նշանակում է «ցախասարսեկ թռչունը», անչուշտ **ցախ** բառից է կազմված, բայց հայտնի չէ, թե ինչ է այստեղ **ճան**-ը:

-յա (**-եայ, ի հլ.**) Ցույց է տալիս, թե՝ 1. Ինչ նյութից է՝ ծաղկեայ, եղևնեայ:

2) Կազմում է ած.՝ երկվորեայ, տասնամեայ, բազմաժամանակեայ, անճնեայ, փախստեայ, ծովեզերեայ:

3) Կազմում է գոյ.՝ պաչտոնեայ:

-յան (**-եան**) (գրբ. **ի-ա** հոլ.) Կազմում է՝ 1. Ազգանուններ՝ Ահարոնեան, Սիմոնեան Հուդա (գՀ. 272), Մամիկոնեան. Ս. Գրքում գործածված է նաև իբր հայրանուն, օրինակ, Եզր, գ. 2. Եվ յարեաւ Հեսու Յովսեդեկեանց... և Զորաբաբէլ որդի Սաղաթիելի, քիչ Հետո (8)՝ սկսավ Զորաբաբէլ Սաղաթիելեանց և Հեսու Յովսեդեկեանց Հն. ζοροβάβελ ὁ του ζαλαθιήλ καὶ Ἰησους ὁτοῦ.

2) Երկրանուններ՝ Այրարատյան գավառ.

3) Թվի և ժամանակի վերաբերյալ ածական՝ չորեքկարգեան, երեմեան (< երիամ-եան), վաղուեան.

4) Պատկանելություն կամ մեկի անունով՝ ցաւ Յակոբեան՝ պտմ. մծբ. 19:

-յուն, -իւն (սխ. **-ման**) Ձայն ցույց տալու համար, ինչպես՝ գոչյուն: Տե՛ս նաև **-ուն**:

-չի մասնիկ՝ լայնչի, բոլորչի, գոլորչի և գվո. նամչել:

-ո(**ոյ**) Կազմում է ածական. հաճո, պիտո:

-ով, տե՛ս **-ւով**:

-ովին Անչուշտ կազմված է գործ. **-ով** և **-ին** մասնիկներով, ինչպես՝ ազգովին, խմբովին, բոլորովին, գլխովին:

Նույնը կա **-ևին** ձևով, ինչպես՝ ամենևին. այս բոլորի մեջ **ն** պետք չէ առնել հոդ: Ժողովրդական լեզուն գիտե **-ովի** ձևով, ինչպես՝ թակովի, չարովի, կծովի, քցովի, քամովի, քաչովի և այլն:

Հին Հայերեն ունենք երկու ձևով. օրինակ՝ իւրովի, իւրովին, առաջինը՝ **-ի** *մասնիկով, երկրորդը՝* **-ին** *մասնիկով, որի* **ն**-ն *դարձյալ հոդ պետք չէ համարել:*

-ոտ *կազմում է ածական՝ լուսնոտ, քոսոտ, բորոտ, նախանձոտ, խնամոտ, պատառոտել, իսկ ածականը՝ պատառոտուն, բայց նաև պատառատուն. բոտ իս հնխ. մասնիկն է, որի ձևերն արդեն ծանոթ են, բայց կա նաև -do, որի համար համմտ. հոլ.* tviu du *կարծր, լատիներեն* odur (ynog wobg) *մերկ, նաև* calidos, horrdus *և այլն:*

-որդ *(գրբ.* **ի–ա** *հլ.) կազմում է ածական՝ հանապազորդ, ավելորդ, ուղղորդ: Ցույց է տալիս անձ՝*

առաջնորդ, հակառակորդ, որսորդ:

կազմում է գոյական՝ մնացորդ:

-ոց, *տե՛ս -անոց:*

-ոք *(օք < -աւք)* **-օք**-*ը աննզական բառերի միջոցով նզ. գործիականի մասնիկ դարձավ, ինչպես՝ Միտքս մեղայս չի դառնար, աչօքս դատաստան տեսայ: Ըրիր աչխարհ* **խելօք:** *Արտասուք կը թափես* **լալօք:** *Տասներկու սուրբ* **առաքելօք** *մեր տերը դիվանը տեսայ (Արևելք, 1889, 130):*

Այժմ էլ ունենք՝ օրօք «օրով», խելօք, իրօք: **-օք՝** *մի քիչ այսպես՝ վարօք, քովօքը, ետևօքը, վրայօք և այլն: Սրա այլ ձևն է* **ւօք,** *ինչպես՝ մորւօք «միրուսավոր»: Կա նաև տարւօք «տարիքոտ» (Անիծեալն, թրգմ. Մամուրյան, Զմյուռնիա, 1875, հտ. Ա., էջ 22):*

-չյա *(-չեայ)* **Առյաւատչեայ:** *Նոր բարբառներում դարձել է* **չէք,** *որ ծագում է* **չեայք** *ձևից, ինչպես՝ կարելիչէք, բերողիչէք, կարողիչէք, չարողիչէք:*

-ստան *(գրբ.* **ի–ա** *հոլ.) Ցույց է տալիս տեղ՝*

Հրեայ – Հրէաստան < Հպ. stānam=զնդ. stānəm,
բոյր – բուրաստան < սնս. sthānam *«տեղ»,*
այգի – այգեստան
Հեռու – Հեռաստան

-ված *(-ուած, գրբ. բունը՝* **ո***) Բայից կազմում է գոյական: Օրինակները չատ բազմաթիվ չեն, ինչպես՝ չինիմ – չինուած, յաւելում (յաւելի) – յաւելուած, ունիմ (կալայ) – կալուած, ընթեռնում (ընթերցի) – ընթերցուած, մնամ (մնացի) – մնացուածք, հարկանիմ (հարի) – հարուած:*

Տ-*ն բացասական իմաստով է գործածվում, ինչպես՝ տգեղ, տգետ, տհաս, տմոլն, տմարդի, տխեղծ, գվո. տհալ:*

Ըստ իս, հնխ. de *«ի բաց» նախդիրն է, որ մի կողմից տվել է հնխ. -ōd ձևով բացասականը (օ բունների հոլովման մեջ) և մյուս կողմից կելտական խմբի մեջ դարձել է* di- *բացասական նախամասնիկը, ինչպես՝ հբիմր.* di-auc *«դանդաղ», հինը *dē-ōc «ոչ արագ»: Նույն մասնիկը՝ նշանակութեյան նոր երանգով դարձել է խոչորացնող մասնիկ, ինչպես՝ լտ. dēmagis «չատ ավելի», հիոլ.* dīmōr *«չատ մեծ» (որ է* **անճոռնի***): Այս վերջին նշանակութեյամբ գտնում ենք նաև Հայերենում, ուր* **տի//տէ** *նշանակում է «մեծ» (պահված միայն տի-կին, տի-և-դերք և տեր// տիայր բառերի մեջ):*

Հայերենում նախամասնիկ ենք համարում **ան, տ, չ** *բացասականները և* **գ** *սաստկացուցիչը:*

–ցի, տե՛ս –ացի, –ևցի, –ցի:

–ու (գրբ. **ա** բուն) կազմում է՝

1) ածական, ինչպես՝ հատու, կծու, թթու, ազդու, ահարկու.

2) անասունի անուններ (ունեցող իմաստով)՝ մեղու, աղջերու.

3) գործող անձ (հատկապես բարդ բառերի մեջ)՝ երկրպագու, նվագածու, վրակացու, բանսարկու:

–ուԹյուն Հայերենի մեջ ամենաչատ գործածություն ունեցող մասնիկն է: Արդի լեզվի մեջ չկա մի ածական կամ ածականաբար առնված մի գոյական, որին կարելի չլինի կցել **–ուԹյուն** մասնիկը: Իմանալու համար, թե ինչ կարող է լինել այդպիսի մի չափազանց մեծ գործածություն ունեցող մասնիկի ուժը, ես մի առ մի հաշվեցի Առաքել բառարանում գտնված **–ուԹյուն** մասնիկով կազմված բառերը: Դուրս եկավ 6054 բառ, որոնցից 1322 հատը ոսկեդարից է: Սրանցից միայն 561 հատը գիտեն համաբարբառը:

–ուԹյուն մասնիկով կան բառեր, որոնք գործածվել են հին լեզվի մեջ, բայց չատ հազվագյուտ են և այսօր էլ անգործածական: Օրինակ՝

ԶայրուԹյուն բառը մի վկայություն միայն ունի ՆՀԲ. Հետևեալ լինի բարկացողուԹիւնն և զայրուԹիւն բարուցն: Արիստ. առաք:

Սրա սովորական ձևն է **զայրուկ, զայրումն, զայրուցք, զայրացուկք, զայրոյԹ:** Աշխարհաբարում միակ ընդունված ձևն է **զայրույԹ** (թեև կա նաև զայրուցք՝ մի քիչ տարբեր իմաստով): Ուստի անտեղի է գործածել **զայրուԹյուն**՝

ԶայրուԹեամբ Մեննելաւի դեմ նետեց (Հոմերի Իլիական, թրգմ. Փ. Վարդանյան, Թիֆլիս, 1886, էջ 63):

1) Գոյականը և ածականը վերածում է վերացական գոյականի, ինչպես՝ փափուկ – փափկություն, առաքինի – առաքինություն, անիրավ – անիրավություն, իմաստուն – իմաստություն, թագավոր – թագավորություն, գերի – գերություն, անմեղ – անմեղություն, քաջասիրտ – քաջասրտություն, ուշադիր – ուշադրություն: Սրանցից ոմանք պարզ գոյական են, այսինքն վիճակ են հայտնում, ուրիշները վերացական են և կամ երկուսը միասին: Օրինակ՝ **ուշադրություն**՝ ոչ թե «ուշադիր լինել» կնշանակե, այլ «ուշք». ապականություն՝ «կղկղանք»:

2) Բայից կազմում է վերացական գոյական, ինչպես՝ փրկել – փրկություն, քննել – քննություն, պատմել – պատմություն, թողուլ – թողություն, համբերել – համբերություն, մնկնել – մնկնություն, աշխատել – աշխատություն, հոգնել – հոգնություն: Սրանցից ոմանք նաև թանձրացյալ իմաստով են: Օրինակ՝ քերականություն, տեղեկություն, դիտողություն, ծանոթություն, սովորություն:

3) Անվանը տալիս է հավաքական իմաստ կամ ընդարձակագույն սահման, ինչպես՝ մարդկություն, գրություն, մանկություն, ընկերություն, գթություն, ամուսնություն, տերություն, աշակերտություն, բնավորություն, ուսուցչություն, գյուղացիություն (բայց ոչ, օրինակ, քաղաքացիություն):

4) Սխալ կազմված ձևեր են՝ հրահանգություն, հանդիսություն, զգացություն, նախանձություն, պետքություն, սխալություն (որովհետև **նախանձ, սխալ** ածական են):

5) Դրական իմաստ՝ ազգարնակչություն, բնակություն (տուն), ազգություն (ազգ): Վրաց -oba մասնիկը, որը -ություն է, նշանակում է նաև ժամանակ, ինչպես rus-oba «ռուսաց ժամանակ»: Erekli-oba «Հերակլի ժամանակ», vard-oba «վարդերի ժամանակ»: Սրա ազդեցությամբ է, որ մեննք մենք էլ **զատկություն...:**

6) Գործածվում է սեռական ձևով՝ իբրև պարզ ածական, օրինակ՝ ի հնարս ննջգութենէ մտանէր, քսիս ստութենան մատուցանէր (Բուզ. Դ. ժե): (Այս բոլորը առած եմ «Պ. Տապագեան, «Թիւն մասնական գործածութենան նկատմամբ դիտողութիւն մը» Հոդվածեն, Արևելք, 1891 թ., 18):

-ուկ, տե՛ս **-ակ:**

-ուհի Ռուսերենի մեջ կա իգականի մի այլ ձև, այն է՝ այսինչ գործով զբաղվող մարդու կինը, և ոչ թե կին, որ այսինչ գործով է զբաղվում: Օրինակ՝

купец վաճառական, купчиха նրա կինը,
башмачницаха կոշկակարի կինը, իսկ башмачница կոշկակարուհի,
офицер սպա, офицерша սպայի կինը,
секретарь գրագիր, секретарша գրագրի կինը,
генерал զորավար, генеральша զորավարի կինը:
(Fuchs, Gram russe, 211)

-ումն Կազմում է գոյականներ բայերից, ինչպես՝ կատարել — կատարումն, ուսանիմ (ուսայ) — ուսումն, երդնում (երդուայ) — երդումն, մոռանամ (մոռացայ) — մոռացումն, հատուցանիմ (հատուցի) — հատուցումն:

Բացառաբար առանց **-ց-ի՝ -ամ** լծորդությունից՝ ողրամ (ողրացայ) — ողրումն:

Սրա հետ պատահական նմանություն ունի թրք. **-ում** մասնիկը, օրինակ՝ սողում, դէօքում, դէօնում:

-ույն (-ոյն) Կազմում է մակրայ՝ կենդանվոյն:

-ուն Կազմում է բայածական, ինչպես՝ խոսուն, չարժուն, գնայուն: Տալիս է կենդանիների անուններ. անասուն, սողուն, գետուն, թռչուն:

Ըստ Meillet (BSL № 68 21) հասարակ սեռի դերբայի -o-mno- վերջավորությունից է ծագում (համմտ. գնդ. barəmno alumnus, Veriumnus) m > **-ուն** փոփոխությամբ, ինչպես ցույց է տալիս **պաչտաւն — պաչտամն.** Հայերենում հասարակ սեռի դերբայը վերածվել է ածականի (այս ենթադրությունը դնում է իբր հնարավոր, բայց ոչ իբրև հաստատուն): Կարող է դրվել նաև գոյականի վրա՝ իմաստուն: Կարելի չէ, սակայն, ածականի վրա դնելով կազմել նոր ածական, ինչպես Հորդուն (Սիրաս, Զգրված օրենք, 143):

Կովկասում համախ չփոխում են **-յուն** մասնիկի հետ, որ գոյական է կազմում: Օրինակ՝ նրա ձայնի այնքան նրբին դայլայլունը (Սիրաս, Զգր. օր., 452) բղհականակը՝ նոր, բողբոջյուն հրապույր (անդ, էջ 532), որ պետք է ուղղել **բողբոջուն:**

-ուն և **-յուն** Կովկասում այս երկուսը չփոխեցին իրար հետ և գոյական ածական դարձրին: Նույնիսկ Վ. Փափազյանը, որ լավ հայերեն իմացողների չարքումն էր, իր **«Ախ»** վեպի մեջ (Թիֆլիս, 1903) հետևյալ սխալներն է թույլ տվել իրեն՝

ԼՋ 21, տող 12. ասաց դողդոջուն ձայնով.
82, 2 (տակից)՝ դողդոջուն ձայնով ասաց.
85, 10՝ հետո դողդոջուն մոտ գնաց.
86, 9 (տակից)՝ խռպոտ ու խորապես դողդոջուն ձայնը.
120, 7 բանաստեղծը դողդոջուն՝ սկսեց.
30, 3 (տակից)՝ մեր փայլուն ու խոխոջուն առուակների:

–ունի *Հավաքական մասնիկ է: Օրինակ՝ արքունի, ծերունի: Ըստ Հյուբշմանի պիտի գա հնխ. cunyo կամ ounyo ձևից: Չի կարող լինել ōnyo, որ պիտի տար* **–ունի**, *հետո ու–ն սղվելով ընկնի >* **–նի** *(Հյուբշման, Հին հայոց տեղան., ԼՋ 283): Ըստ այսմ Մանդակունի, Բագրատունի, Արչակունի և այլն բառերի մեջ՝* **ունի**, *որ համարում են խալդյան մասնիկ, կասկածելի է կամ դուգադիպություն, կարող է լինել փոխառություն խալդերենից, որ հետո այնպես է մարմնավորվել, որ արքունի, ծերունի և այլ բնիկ հայ բառերի մեջ էլ է մտել:*

–ուստ *Մասնիկը կազմում է տեղ ցույց տվող բառերի բացառականը, բայց նաև ներգոյականը (Զալես., 137), ինչպես՝ նկաց յետուստ որմոյն «պատի յետևում կանգնեց»:*

–ուտ *Կազմում է ածական՝ ավազուտ, խավարուտ (խավարչուտ): Նույնն է* **–ոտ** *մասնիկի հետ, իրը –ōd–:*

Թրք. փոխառյալ մասնիկներ: *Պոլսահայ բարբառը թուրքերենից փոխ է առել նաև –ine մասնիկը, որի ծանր ձևն է –əna. Նախ առնվել են զուտ թուրք բառեր, ինչպես* tersine *հակառակ դիրքով,* bol–bolәna *առատորեն և այլն:*

Նույն թրք. մասնիկով հայ բառեր էլ կան, ինչպես **չէվինէ** *«չեղակի»,* **քիթինէ** *«թղթախաղի մի տեսակ, որի մեջ տարվողի քթին խփում են», ռուս.* **«дурачки»** *(բայց թրք. չեմ լսած *burnəna),* **կէսինէ** *«կես առ կես ստանալու պայմանով» (որ և հյ. կէսվակէս), մյուսները տե՛ս «Քնն. Պլ. բարբառի» 178:*

Այս մասնիկով կազմված թուրքերեն մի դարձված էլ կա, նախ դրվում է բառը ə(i) *հանգով կամ հողով, ապա՝ նույնի տրական հոլովը՝* əna(–ine)*, ինչպես՝* əsjajə səjajəna *բառացի՝ «տաքը տաքին», նշանակում է՝ բոլորովին դեռ տաք բոպկին,* deliyi – deliyine, *«ծակը ծակին», այն է՝ ճիշտ ու ճիշտ համաչափ դրված,* ujə ujəna *«ծայրը ծայրին», այն է՝ վերջին կետի վրա, վերջանալու բոպկին,* daban'ə dabanəna *«կրունկը կրունկին»՝ բոլորովին հակադիր:*

Զարմանալի է, որ սրանցից առաջինում, ճիշտ ու ճիշտ ընդօրինակվելով, հայերենում շեշտը ճիշտ տաճկերենի պես դրվում է **ը** *ձայնավորի վրա, ինչ որ հակառակ է հայերենի ձայնական օրենքներին:*

Այս ձևը շատ սովորական է պոլսահայ բարբառում, բայց կարծեմ կա նաև՝ **ծայրը ծարընա,** *ավելի շատ՝ ծարը ծարին,* **ծակը ծակընա՝** *ծակը ծակին:*

Պլ. **ճի»,** *օրինակ՝ գիտեմճի, բարիլուսճի:*

Պլ. **լը»,** *օրինակ՝ փուչփուչանքլը:*

Զարմանալի է, որ բարբառներում նույնիսկ այնպիսի բառերի վրա, որոնք արդեն արհեստ են նշանակում, ավելացել է նաև թրք. **ջի,** *օրինակ, խասար արաբերեն նշանակում է մսավաճառ և բախալ նշանակում է նպարավաճառ, բայց հնդ. խասաբջի, Ասլ. բախալջի: Այսպես է նաև Երև. բաղմանչի, որ կազմված է* **չի** *ավելորդ մասնիկով պարսկերեն բաղման բառից, որ է* bāγbān *«այգեպան»:*

Հայերենի մեջ **ջի** *մասնիկի փոխ առնվելու պատճառը կարելի է կարծել նրա համար, որ հայերեն համապատասխան մի կարճ մասնիկ չկա. դրա դեմ մենք ունենք գործ, արար, ծախ, վաճառ, պան (փոխ. պարսկերենից) և այլն: Օրինակ ածխավաճառ, ածխագործ, դեղագործ, մսագործ, մսավաճառ, այգեպան, գինեգործ, գինեվաճառ, հացթուխ, հացավաճառ, լվացարար, անուշարար, չաքարավաճառ, աղյուսագործ, սևագործ, ոսկերիչ, ժամագործ (բայց այլ բան է ժամավաճառ) ժամարար, ժամակոչ, ժամհար և այլն:*

Թրք. **ջի** *մասնիկը թեև շատ հարմար, բայց այն անհարմարություն ունի, որ չինող և վաճառող խառնում է իրար: Մենք կարող ենք ասել մսագործ և մսավաճառ, բայց թուրքերեն միայն մի բառ կա, որ է խասապ:*

Մենք կարող ենք ասել անուշարար, չաքարավաճառ, բայց թուրքերեն կլինի միայն չեքերջի, նույնիսկ հելվաջի կարող է դառնալ հայերեն հրուշակագործ, հրուշակարար, հրուշակավաճառ: Վերջապես կարող ենք ասել ածխագործ և ածխավաճառ (թրք. քեօմիւրջի), հանքագործ, հանքահան, եթե հարկ լինի՝ նաև հանքավաճառ, բայց թուրքերեն՝ միայն մադենջի:

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ*

Հոգևբանորեն և տրամաբանորեն դատելով՝ նախադասություն է կոչվում բառերի մի չարք, որ կազմում է մի միություն և մի ամբողջական միտք է տալիս: Լեզվաբանորեն դատելով՝ նախադասություն է կոչվում բառերի մի չարք, որոնք կազմում են նույնպես մի միություն, քերականորեն կապված են իրար և ուրիշ ոչ մի չարքից քերականորեն կախում չունեն: Ամեն մի նախադասություն կազմում է մի առանձին և ազատ միություն, որ արտահայտվում է մի դադարով (pausa) հաջորդ և նախորդ նախադասությունից:

Բառ *ասելով հասկանում ենք ձայների մի այնպիսի հավաքում, որ ունի ինքնին, առանձին իմաստ, անկախ է և անբաժանելի: Այսպես՝ գրաբար* **սիրեսցես** *մի բառ է, որովհետև՝*

1) ինքնին ունի մի միտք, առանձին իմաստ, մինչդեռ աշխարհաբար **«պիտի սիրես»** *բառը ձևի մեջ* **պիտի** *ունի ուրիշ իմաստ,* **սիրես***՝ ուրիշ իմաստ, և նրանց միացումը՝ ուրիշ իմաստ.*

2) անկախ է, որովհետև իր այդ նշանակությունը տալու համար ո՛չ մի օժանդակ բառի կամ նախդիրի պետք չունի, մինչդեռ **պիտի սիրես** *ձևի մեջ* **պիտի** *օժանդակի մասնակցությունը անհրաժեշտ է այս իմաստի համար.*

3) անբաժանելի է, որովհետև կարելի չէ նրա որևէ վանկը տեղափոխել կամ միջին որևէ ուրիշ մասնիկ կամ նախդիր ներմուծել, մինչդեռ աշխարհաբար **սիրես**-*ը կարելի է դարձնել «սիրե՛ս պիտի» և կամ նոր տարրեր ներմուծելով ասել՝* **պիտի սիրես**-*ը* **նրան սիրես, պիտի ինձ սիրես, պիտի ինձ միայն սիրես** *և այլն:*

Նախադասության բառերի թիվը չատ փոփոխական է, նա կարող է բաղկացած լինել միայն մի բառից. այսպես միայն մի **կոչական,** *(ինչպես՝ Ղա՛զարէ), կամ միայն մի գոյական «ուշադրությո՛ւն», կամ մի բացականչություն, մի հրամայական կամ միայն մի բայ (ինչ. նկ (արի՛) հաստատական կամ ժխտական մի մակբայ (այո՛, ո՛չ), բավական են մի առանձին նախադասություն կազմելու: Լատիներեն* i *(որ մի ձայն և մի տառ է միայն նշանակում) «գնա» մի ամբողջ նախադասություն է: Մյուս կողմից կարելի է բառերի թիվը ըստ կամս ավելացնել, և դրա համար սահման չկա:*

Նախադասությունը իր կազմությամբ լինում է երկու տեսակ. **անվանական** *և* **բայական: Անվանական** *նախադասությունը ցույց է տալիս, թե այսինչ անձը կամ իրը այստեղ հատկություն ունի, իսկ* **բայական** *նախադասությունը ցույց է տալիս մի գործողություն: Նախադասությունը կոչվում է անվանական, երբ*

---

* **Շարահյուսություն**-*ը թարգմանությունն է* syntaxe *բառի, որ կազմված է հունարեն συν «չարք» և τάσσω «չարել», «դասավորել» բառերից. ոմանք թերևս կարծել են լատիներեն «հյուսել» բառն է և թարգմանել են «չարահյուսություն»:*

բաղկացած է լինում **գոյականից** *ու* **ածականից**, *իսկ բայական է կոչվում, երբ ստորոգյալը* **բայ է**: *Անվանական նախադասությունը սովորական էր հնդեվրոպական նախալեզվում, որից ժառանգաբար անցավ հին լեզուներից և դեռ շարունակվում է, օրինակ ռուսերենի մեջ՝* **Он у тебя нам дедъ мотъ**: *Մյուսները բայական նախադասությունից նմանությամբ ստեղծեցին* **էական** *բայը:*

Սակայն այստեղ էլ լեզվից լեզու տարբեր է ճաչակն ու սովորությունը. ֆրանսերենը չի սիրում լրացուցիչների երկար մի չարք, այսպես նաև անգլերենը, ավելի ազատ է գերմաներենը և շատ ավելի ազատ թուրքերենը, մանավանդ պաչտոնական լեզուն: Հայերենը թեև կարող է, ինչպես վերի օրինակից երևաց, չափազանց երկարել լրացուցիչների թիվը, բայց դա բարձր ճաչակի համար խորթ է համարվում: Այստեղ էլ արևմտահայերը, մանավանդ հները և թուրքերենի հետևող գրողները, ավելի երկարաբան էին, քան արևելահայերը:

*... *գանազան լրացուցիչներով և լրացուցիչների լրացուցիչներով: Ահա մի օրինակ աստիճանի լրացուցիչներով.*

1. Լսեցի հաչոցը:
2. Լսեցի չան հաչոց:
3. Լսեցի հարևանի չան հաչոցը:
4. Լսեցի նկած հարևանի չան հաչոցը:
5. Լսեցի նոր նկած հարևանի չան հաչոցը:
6. Լսեցի գյուղից նոր նկած հարևանի չան հաչոցը:
7. Լսեցի թուրքերի ....
8. Լսեցի վերջերս գաղթած ....
9. Լսեցի Պարսկաստանից վերջերս գաղթած, թուրքերի գյուղից նոր նկած հարևանի չան հաչոցը:
10. Լսեցի մեր դրացի Պարսկաստանից ....

Բայց այս բոլորի վրա կարելի է դեռ նոր հավելումներ անել. օրինակ՝ Լսեցի մեղ դրացի (և բարեկամ) Պարսկաստանից վերջերս գաղթած (աղքատ) թուրքերի (նորաչեն) գյուղից նոր նկած (և քաղաքում մշտական բնակություն հաստատած գնդեցիկ) հարևանի (խոչոր) չան (կատաղի) և գազանային՝ (մարդու ականջ խլացնող) հաչոցը:

Բայց լրացուցիչների այսքան մեծ թիվ հաճելի չի համարվում, պետք է ըստ կարելվույն սահմանափակել նրանց թիվը:

Կանոնավոր բայական նախադասություն կազմելու համար դիմավոր բայը անհրաժեշտ է, դերբայները չեն կարող նախադասություն կազմել, սխալ է օրինակ՝

Նույն օրը Մարիամը, հակառակ իր ցանկությանը, չկարողանալով հաղթել իր սրտի դառնությունը և միևնույն սեղանի մոտ ճաչի նստել տիկին Սոֆիայի և Նատալիայի հետ (Շիրվանզադե, Եր. ժող., հ. Դ, 1930, էջ 230):

---

* *Ձեռագրում բացակայում է նախադասության սկիզբը՝ 2 տող (Հ. Բ.):*

ԶԵՂՉՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Զեղչյալ է կոչվում այն նախադասությունը, որի մեջ դիմավոր բայ չի դրված՝ կրկնությունից խուսափելու համար, կամ եթե ինքնին հասկանալի է: Սովորական գրվածքների մեջ, կամ որևէ միահար պատմվածքի մեջ զեղչյալ նախադասություն չի պատահում, իսկ խոսակցության մեջ, մանավանդ հարցական և բացականչական նախադասությունների մեջ չեղյալ նախադասությունը շատ սովորական է, օրինակ՝

– Հայր ունի՞ս:
– Ոչ (չունիմ):
– Մայր (ունի՞ս):
– Ոչ (չունիմ):
– Եղբայր (ունի՞ս):
– Միայն մի հատ (ունիմ):
– Միայն մի հատ (ունի՞ս):
– Այո (միայն մի հատ ունիմ):
– Իսկ քույր (ունի՞ս):
– Ոչ մի հատ (չունիմ):
– Ոչ մի հատ (չունի՞ս):
– Ոչ մի հատ (չունիմ):
– Իսկ մորաքույր (ունի՞ս):
– Ոչ (չունիմ):
– Հորաքույր (ունի՞ս):
– Ոչ (չունիմ):
– Իսկ հորեղբայր (ունի՞ս):
– Ոչ (չունիմ):
– Իսկ մորեղբայր (ունի՞ս):
– Ոչ մի հատ (չունիմ):
– Զարմանալի բան (է):
– Այո՛:
– Ուրեմն միայն մի եղբայր:
– Այո՛ (Զարմանալի բան է):
– Ինչ վատ բան է:
– Այո, չա՛տ վատ բան (է):
– Մեծ դժբախտություն (է):
– Իհարկե (մեծ դժբախտություն է):
– Ջտևնված դժբախտություն (է), մանավանդ քեզ նման մեննավոր մի երիտասարդի համար:
– Անտարակույս (այդպես է):

Այս երեսուն նախադասությունները, որոնք հաջորդում են իրար, բոլորն էլ զեղչյալ են, որովհետև նրանց մեջ դիմավոր բայը պակասում է: Պակասող դիմավոր բայը մենք դրել ենք փակագծի մեջ:

Բայց այդ գեղչյալ նախադասությունները պահանջում են անպատճառ իրենցից առաջ գործածված մի ամբողջական նախադասություն: Չի կարելի փողոցում հանկարծ տեսած մի մարդու հարցնել. «ե՞րբ»: Այդ հարցումը կարելի է տալ նրան այն ժամանակ, երբ նախապես նա ասած կլինի, օրինակ, «ես համալսարան գնացի»:

Չեղչյալ նախադասության համար սքանչելի օրինակ է գերմանական Morgen*-ի աննկղոտը:*

Տան տերը նստած սենյակում լրագիր է կարդում: Մտնում է սափրիչը և ասում է.

– Morgen *(առավոտ), այսինքն՝ «ես ձեզ մաղթում եմ բարի առավոտ»:*

Տան տերը պատասխանում է.

– Morgen *(այսինքն՝ ընդունում եմ ձեր բարևը և փոխադարձաբար ես էլ եմ մաղթում ձեզ բարի առավոտ): Սափրիչը հանում է ածելին և մոտենում է նրան: Տանտերը ասում է.*

– Morgen *(այսինքն՝ այժմ չեմ ուզում, գնացեք և վաղը առավոտ եկեք):*

Սափրիչը հարցնում է.

– Morgen ? *(այսինքն՝ ուզում եք, որ վաղը առավոտ գամ):*

Տանտերը պատասխանում է.

– Morgen ! *(այսինքն՝ այո՛, վաղը առավոտ եկեք):*

Սափրիչը պատրաստվում է մեկնելու և ասում է.

– Morgen ! *(այսինքն՝ մեկնում եմ մաղթելով ձեզ վաղվա համար բարի առավոտ):*

Տանտերը պատասխանում է.

– Morgen *(այսինքն՝ ես էլ եմ մաղթում ձեզ վաղվա համար բարի առավոտ):*

Այս բոլոր 7 անգամ կրկնված Morgen *բառը կազմում է յոթ տարբեր գեղչյալ նախադասություն, որոնց ամբողջական ձևն էլ չի տրված: Բոլոր տեսակի բարևները գրեթե այսպես են (առանց ամբողջականի գեղչյալ նախադասություն), ինչպես,* **բարև, բարի լույս, բարի երեկո, գիշեր բարի, բարի գիշեր, ցտեսություն** bonjour i Bonsoiri, *անգլ.* Good morning! *կամ նույնիսկ միայն* morn *և այլն: Ռուսերեն միայն* Здравствуйте! *ամբողջական նախադասություն է, ինչպես և թրք.* sabahlar xayr olsun – *ձեր առավոտը բարի լինի:*

Չեղչյալ նախադասության ամենահարմար ձևն էլ կա, դա ձեռքով կամ գլխով և կամ գլխարկ հանելով բարևն է, և կամ նույնիսկ ձեռքի մի անորոշ չարժում, որ դեպի գլխարկն է ուղղված: Կարող է մեկը իր ձեռքը ուղղել դեպի իր ծանոթը և մատը չարժել, ինչ որ նշանակում է «արի ինձ մոտ»: Այս էլ է գեղչյալ և մի չնչին նշանի վերածված նախադասություն:

* * *

Նախադասության կրկնության ժամանակ մի բառի դեղչումը սովորական երևույթ է, բայց մեկից ավելի բառեր եթե դեղչվեն, իմաստը կդժվարանա. օրինակ,

Մենտոր յուր տարիքին համար հրաժարվեցավ, և Ադայել՝ տակաւ առողջությանը (Տելեմաք, Փարիզ, 1860, էջ 95):

Այստեղ կրճատված է **յուր, համար** *և* **հրաժարվեցավ.** *(ամբողջը պիտի լիներ՝ Ազայել յուր տկար առողջության համար հրաժարեցավ): Առաջինը (յուր) և վերջինը (հրաժարեցավ) չուտ ըմբռնելի են, բայց* **համար** *բառի դեղչումը մի քիչ ծանր է, և առանց դժվարության կարելի է ասել՝*

Ազայել՝ տկար առողջության համար:

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հնդեվրոպական նախալեզվում ասվում էր pəter՝ meg'a's, *որ նշանակում է «հայրը մեծ է», բայց բառացի «հայր մեծ»: Բայց նույնը հայերեն «մեծ է հայր», որ դարձյալ անվանական նախադասություն է, ըստ որում հայտնում է, թե ով ինչ է և ոչ գործ: Նույն ոճով ունենք նաև ուրիշ լեզուների մեջ՝ հուն.* χρεὶσσων γαὺ βασιλεύ՛ զօրեղագոյն (է) *քանզի արքայ, πάρ ἔμοιγε καὶἄλλοι առ իս և այլք (են, կան). հին պարսկերեն* mana pita Vistaspa *հայր իմ Վշտասպ (է). լատիներեն* haec admirablia *այս զարմանալի (է): Սանսկրիտերեն* tvám Várunas *Դու Վարունս (ես):*

Նույն ոճով ունենք նաև հայերեն անվանական նախադասության օրինակներ.

Որդի խորագէտ հնազանդ հօր (Առակք, ԺԳ. 1):

Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն (Առակք, Ա. 7):

Պաչտօն բարի առ Աստուած՝ սկիզբն զգոնութեան (Առակք, Ա. 7):

Այր իմաստուն՝ աթոռ հանճարոյ (Առակք, ԺԲ. 23):

Խորհուրդ արդարոց իրաւունք (Առակք, ԺԲ. 5):

Բերունք ամբարշտաց նենգաւորք (Առակք, ԺԲ. 6):

Անուն նմա Յովհաննէս (ՅՀ. Ա. 6):

Աշխարհաբարի մեջ էլ կարող ենք ասել՝

Ինձ մուտ, չրուտ:

Դու այստեղ:

Ահա իմ ընկերները...

Անվանական նախադասության ձևը սովորական է հայերենում երրորդ դեմքի հարաբերական նախադասություններում և մանավանդ բացասական նախադասությունների մեջ.

Լցէք զջուրսդ որ ի ծովս (ՅՆ. Ա,22):

Ձեւ ուրեք որդի ի միջի (Եղն., 123):

Ձիք ոք բարի, բայց մի Աստուած (Աստուած):

Ձիք և չիք իսկ զուրուք զկնանս առանց տրտմութ զտանել, այլ և ոչ յուրախութիւնը անմասն (Ոսկ. մ. ը. 28):

Դատաւոր մի էր ի քաղաքի (ուրումն) (Ղկ. ԺԸ. 2):

Լուարուք զինչ դատաւորն անիրաւութեան ասէր (Ղկ. ԺԸ. 6):

Ո՞վ ով իցէ ի ձէնջ մարդ որոյ իցէ հարիւր ոչխար (Ղկ. ԺԵ. 4):

Սամարացի ոմն ճանապարհորդնալ եկն ընդ նոյն առ (նովաւ) (Ղկ. Ժ. 33):

Ձիք ինչ չար, որ բնութեամբ չար իցէ:

Այս օրենքի վրա է հիմնված նաև էական բայի ետադաս գործածությունը և չաղկապների դիրքը, որ ո՛չ թե երկու բառի միջև է, այլ առաջին բառից հետո, ինչպես հայտնի կերպով ցույց են տալիս սանսկրիտը, հունարենը և լատիներենը:

Հայերենի մեջ լավագույն հետքը այս օրենքի **ս, դ, ն** *դիմորոշներն են, որոնք նախկին բառից՝ չեչտի զրկմամբ, դարձել են* **Հոդ.** *ինչպես՝ որ ծնանելոցն է, որ ընդ նմայն էին, որ գնայն մատնելոց էր:*

Միայն Հնդեվրոպական լեզուները չեն, որ ունեն անվանական նախադասություն, այլ սույնը կա նաև ուրիշ շատ լեզուներում, օրինակ, սեմական լեզվախմբի մեջ, (եբրայերենում, արաբերենում) ուգրոֆիննական լեզուների մեջ) բանտու լեզվախմբի մեջ, չինարենում, ճապոներենում, մինչև անգամ թուրքերենում, ինչպես՝

bu ne güzel!

Սա ինչ գեղեցիկ (է):

duñ bir, buguñ iki

Երեկ մեկ (եղավ), այսօր երկու (եղավ):

Ուգրո-ֆիննական լեզուներում այնքան սովորական է անվանական նախադասությունը, որ կարծել են, թե ռուսերենի մեջ դրա գոյությունն էլ նրա ազդեցությունն է եղել:

արաբ. Zaydun álimun *Ջայտը գիտուն (է):*

Հունգ. az ég kék *երկինքը կապույտ (է):*

սվահիլի simba mui *առյուծը չար (է):*

կամ ննթակայի հետ նաև մի ղերանուն տալով՝

արաբ. Allañu huwa l-hayyu *նա կենդանի (— Աստված կենդանի է):*

չին. žən lao *Մարդ (է) ծեր:*

Առաջինի մեջ անվանական նախադասությունը ցույց է տալիս, թե այսինչ անձր կամ իրը այնինչ հատկությունն ունի:

[ԲԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ]

Բայական *նախադասությունը ցույց է տալիս մի գործողություն, ինչպես՝ «ուտէ» «ննջէ», «ծերացավ», «մեռավ» և այլն: Ըստ որում՝ բայը իր վերջավորությամբ բավական է դեմք և թիվ արտահայտելու, ուստի բայական նախադասությունները կարող են բաղկացած լինել միայն մի բառից, որ* **բայն** *է: Նույնն է նաև անդեմ բայերի գործածության պարագային (ինչպես՝ ձիւն է, անձրև է, փչում է), որովհետև, ըստ Հնդեվրոպական հասկացողության, սրանց մեջ գործող անձր որոշ աստվածություն է: Նույնն է դարձյալ Հրամայական ձևի գործածության մեջ՝ «գնա՛», «բե՛ր», որովհետև, երբ մեկը հրամանն արձակում է, հայտնի է, թե ում է հրամայում: Այստեղ էլ արդեն մի միակ բառը (այն է* **բայը**) *բավական է նախադասություն կազմելու: Մինչդեռ* **անվանական** *նախադասության սովորական տիպարը պետք է բաղկացած լինի երկու բառից, այն է՝* **ննթական** *և* **ստորոգելին,** *այսինքն՝ երկուսն էլ անուն (գոյական և ածական),*

որոնց չարքը արդեն կախված է յուրաքանչյուր լեզվի ոգուց: Այսպես՝ հունարենի մեջ, ինչպես վերի օրինակները ցույց են տալիս, ենթականետադաս է, նույնը նաև պարսկերենում և սանսկրիտում: Ռուսերենում ստորոգելին ետադաս է նույնպես և ունի առանձին ձև, որ տարբեր է համապատասխան ածականից, ինչպես «ДОМ НОВ» տունը նոր է, բայց НОВЫЙ ДОМ նոր տուն: Շարադասության տարբերությունը գտնում ենք նաև հին իսլանդերենի և չինարենի մեջ, օրինակ՝

իսլ. infer maoth *Բարի մարդ:*

maith infer *Մարդը բարի է:*

չին. ta kuok *Մեծ պետություն:*

kuok ta *Պետությունը մեծ է:*

ճապ. čiisai kodomo *Փոքր տղա:*

kodomo wa čiisai *Տղան փոքր (է):*

Անվանական նախադասության վերածումը բայականի առաջացավ բայական նախադասության նմանությամբ: Սրան նպաստեցին մի քանի հանգամանքներ, նախ՝ երբ անվանական նախադասության ենթական հիշված չլինելով՝ բայի ներկայությունը անհրաժեշտ էր, այսպես՝ երբ ասենք **դու մեծ ես** *կամ՝ անվանական նախադասություն* **դու մեծ** *(ես), էականի գոյությունը ավելորդ է, բայց երբ* **դու** *ենթական դնդչելով՝ ասենք պարզապես* **մեծ,** *նախադասությունը կկորցնի իր արժեքը, և բայի գործածությունը անհրաժեշտ կդառնա:*

Բայի կարևորությունը անհրաժեշտ է դառնում հատկապես այն ժամանակ, երբ հարկ էր որոշել եղանակը կամ ժամանակը, երբ ասենք՝ **երկինք կապույտ,** *դեռ միտքը հասկանալի է, բայց երբ ուզեննայինք ասել «երկինքը կապույտ էր» կամ «պիտի լինի», առանց բայի ոչինչ չի դուրս գա:*

Զանազան ձևեր կան լեզուների մեջ այս պաչտոնի համար. սվահիլի լեզվում մի ուժեղ շեշտ ստորոգյալի վրա բավական է բայական գաղափարի համար, հաճախ ավելացնում են մի դերանուն, ինչպես՝

mti n mkulu *(Ծառը նա մեծ է),*

և սվահիլին ֆրանսերեն էլ խոսելիս ասում է L'homme lui fort, *փոխանակ ասելու՝* l'homme est fort.

Անվանական դերանվան տեղ կարելի է դնել և անորոշ դերանուն i, *որ խառնվելով ցուցականի հետ, ստանում է էական բայի պաչտոն. այսպես՝*

mti ni mkulu

Ծառը է մեծ:

Հնդեվրոպական լեզուներից չատերի մեջ էականը կազմված է es *արմատից, որ նշանակում է բուն «գոյություն, կյանք». այսպես՝*

esmi *եմ,* essi *ես,* esti *է,* smes *ենք,* sthé *եք,* snti *են.*

լատիներեն
հունարեն } *օրինակներ չի բերում (Ա. Բ.):*
սանսկ.

Բայց կան նաև ուրիշ արմատներից կազմված էականներ, որոնցից կարելի է հիշել՝

1) «աճել, բուսնել» բայը (հն. φύειν), որից սանսկրիտերեն դառնում bhavati *«է», անգլերեն* beo *«իմ», իռլանդերեն* biu *«եմ», լատիներեն* fuit *«եղավ», հո-*

լանդներն byti «լինիլ», bychu «եղայ», ռուսերեն был, գերմաներեն bin «եմ» և այլն.

2) γιφνμαι «դառնալ, լինել».

3) լատիներեն versor «դառնալ, լինել».

4) լատիներեն stare «կանգնել», որից ֆրանս. j'étais. «էի».

5) բնակել vásati բայից գերմաներեն ich war էի gewesen «եղած», անգլերեն was «էի»:

Ռուսերենում կան էականի բազմաթիվ ձևեր, ինչպես՝ сидеть (նստել), лежать (պառկել), стоять (կանգնել), состоять (բաղկանալ), представлять собой (իրենից ներկայացնել) և այլն:

Հայերենի մեջ բացի **եմ** էական բայից ունենք՝ **լինիլ, եղանիլ, դառնալ:**

Սանսկրիտ լեզվի մեջ կա նախադասության մի այլ ձև, ուր ենթակայի տեղ դրված է հոլովյալ ձև և բայի տեղ՝ ներբայ. ինչպես՝

mayā vrta upādhyāyas

Ինձ ընտրյալ տեր:

(փոխանակ ասելու «ես ընտրեցի մի տէր»):

Կելտական լեզուների մեջ աներևույթն է, որ սովորաբար փոխանակում է դիմավոր բայի: Իռլանդերեն creud adhbhar na moichéirghe sin ort «ինչո՞ւ այսպես վաղ վեր կացար» բառացի (Ինչ պատճառ այս վաղ վերկենալու քեզանից):

Արդի պարսկերենում անցյալ ներբայը սովորական է դիմավորի տեղ բաղադրյալ բայերի մեջ.

man xorda ես կերել (եմ):

Երբ բայական նախադասության մեջ կարիք կա չեչտելու գործող անձի վրա, կամ եթե բայը բավական չէ մեննակ հայտնելու այս, այն ժամանակ բայի վրա ավելանում է ենթական.

Մեք իսկ լուաք ականջօք մերովք:

Պետրո՛ս, արի՛:

Շատ անգամ երկու տիպի նախադասություն միանալով կազմում են մի նախադասություն, որ անվանական և բայական է միանգամայն. այսպես՝

Սա կոչեցի կին (Մն. բ. 23):

Կոչեցիա զանուն նորա Յիսուս (Մտթ. ա. 21):

Միանգամայն անվանական և բայական են, որովհետև կազմված են

Սա՝ կին:

Անուն նորա՝ Յիսուս:

Անվանական նախադասություններից և **կոչեցի, կոչեցիա** բայական նախադասությունների միացումից: Այսպես նաև՝ Որդի նորա Հիվանդ կույր (ՅՀ. դ. 46), Այսու մնծարոյ երևին առաջնորդք քիչին (Եզն. 116), որոնց մեջ կա միշտ մի բայ և մի prädicat:

Ամեն մի նախադասություն կարող է ընդարձակվել բազմաթիվ գոյականներով, ածականներով, մակբայներով և նախդիրներով: Գոյականները կարող են լինել ամեն տեսակ հոլովներով. այսպես՝ **լսել** մի բայ է, որ կարող է կազմել մի

*առանձին նախադասություն (**լսեցի**), բայց կարելի է դանազան հոլովներով ընդարձակել. օրինակ՝*

տր. Լուր, որդեա՛կ, խրատու հօր քո (Առակ. Ա. 8):
հյց. Լուացք զհայհոյութիւն դորա (Մտթ. իգ. 65):
ներգ. Լուայ զձայն քո ի դրախտի (Ծ. գ. 12):
պատմ. Լուան զնմանեն աղգք:
բաց. Մեք լուաք ի դմանէ (Միք. ժդ 58):
գործ. Ականջօք մերովք լուաք:

*Այս բոլոր բառերը առանձին և անկախ են և ոչ մեկը անձկորեն կապված չէ բայի հետ, այնպես որ կարող է և բնավ չդրվել կամ առանձին հիշատակվել և կամ ըստ կամի՛ տեղափոխվել, ինչպես. **ականջօք լուաք, լուաք ականջօք, լուաք, ականջօք:** Նույնիսկ նախդիրները, հնդեվրոպական նախալեզվի մեջ, ինչպես տեսանք, առանձին գոյություն ունեցող բառեր էին և ոչ թե գոյականներին և բայերին անձուկ կերպով միացած երկրորդական բառեր, ինչպես եղան հետո՝ ժառանգ լեզուների մեջ:*

Ածականը, որ գոյականի հետ անձկապես միացած մի գաղափար է կազմում մեզ համար, հնդեվրոպական նախալեզվի մեջ գոյականին հարադրվող առանձին բառ էր, այնպես որ կարող էր բոլորովին անջատ գործածվել, ինչպես ցույց է տալիս՝

հունարեն	*χρυτὴν*	*τούτου τινά ζητοῦμεν*	*ἴσον*
	դատավոր	*սմին խնդրեմք*	*արդար*

Այս բոլորից հետևում է, որ հնդեվրոպական նախալեզվի մեջ նախադասությունը կազմող բառերը հարադրված են իրար և առանձին ու անկախ գոյություն ունեն, բոլորովին տարբեր ֆրանսերեն կամ անգլերեն նախադասության կազմությունից, ուր բառերը առանձին գործածություն չունեն և կառավարվում են մեկ գլխավոր և հիմնական բառի միջոցով, ինչպես.

ֆրանս. tu ne me le dis pas

Դու ոչ ինձ այն ասես, ոչ ինձ չասես (Ոչ ասես):

*Բայց նաև այն բոլոր բառերը, որոնք իբրև լրացուցիչ դրված են բայական նախադասության մեջ՝ մի բայի հետ, և կամ անվանական նախադասության մեջ՝ մի անունի վրա, կարող են իրենց կարգին ստանալ դանազան լրացուցիչներ, գոյականը կարող է ստանալ մի ուրիշ գոյական (սեռական հատկացուցիչ), մի ածական, մի ցուցական, մի թվական և այլն, որոնք նույնպես իրենց կարգին կարող են ստանալ ուրիշ լրացուցիչներ: Բայց կարող են նաև լրացուցիչները, ինչպես և ենթական, ոչ թե յուրաքանչյուրը մեկ-մեկ լինել, այլ կրկնվել և բազմապատկվել և այն ժամանակ մեկին հարադրելի կրկնակ և ավելի բառերը կապվում են իրար հետ **և, ու, թե, կամ** և այլ նման շաղկապներով, որոնք անշեղ և երկրորդական բառեր են: Եվ այստեղ տեսնում ենք, թե ինչպես կարող է նախադասության բառերի թիվը **անհուն** ընդարձակվել:*

Նախադասությունը բաղկացած է լինում մի բառից (գոյական կամ բայ) և կամ մի քանի, նույնիսկ բազմաթիվ բառերից, որոնցից մեկը բայ է: Օրինակ՝

«Կրա՛կ».- գոչում է զորավարը իր բանակին:

«Լևո՛ն».- կանչում է ընկերը իր ընկերոջը:

Մենք այս բառերով հասկանում ենք «կրակ բացե՛ք», «Լևոն, արի» և համարում ենք գեղչյալ նախադասություն, բայց կան քերականներ, որոնք այս վիճակի մեջ համարում են դրանք ամբողջական նախադասություն:

Բայց մի բառով էլ կարելի է կազմել ամբողջական նախադասություն, և այդ դեպքում այդ մի բառը կլինի անհրաժեշտաբար մի դիմավոր բայ. օրինակ՝ **արի՛, գնա՛, ասա՛, կորի՛ր** *և այլն:*

Կեսարի նշանավոր խոսքը՝ **«եկի, տեսի, յաղթեցի»,** *երեք նախադասություն է:*

Ահա բազմաթիվ բառերով կազմված մի նախադասություն, որի մեջ միայն մի դիմավոր բայ կա: «Երեկ գիշեր մի խումբ ընկերներով հավաքված, մեր տունում ուտելուց, խմելուց, պարելուց, խաղալուց և զանազան զվարճություններով ուրախ և հաճելի ժամանակ անցկացնելուց հետո **քնեցինք»** *(22 բառ):*

Տաճկերենում, մանավանդ պաչտոնական լեզվում, նախադասությունները կարող են էջեր գրավել և վերջանում են **մի էական** *բայով:*

Անվանական նախադասություն կարելի է կազմել հայերենում **չիք** *բառով, որ թե* **գոյական** *է և թե* **բայ:** *Գոյական լինելու ապացույց է նախ իր կազմությունը, արդարև* **չիք** *բառի արմատն է* **ի** *«բան», որից* **ք** *մասնիկով* **իք** *«մի բան» և* **չ** *բացասականով՝* **չիք** *«ոչինչ, ոչ մի բան», ինչպես ուննք* **«ո»** *«մի մարդ», ք մասնիկով* **ոք: Չիք** *բառի գոյական լինելուն իրրև ապացույց է նաև այն, որ կազմում ենք նրանից* **-ոտի** *մասնիկով* **չքոտի,** *ինչպես* **ոսկր** *բառից* **ոսկրոտի: Նաև աւոր** *մասնիկով՝* **չքավոր** *«ոչինչ ունեցող, աղքատ»:*

Բայց նաև **չիք** *բայ է: Եղնիկը էջ 10-ում ասում է.* **Չիք** *ինչ չար, որ բնութեամբ չար իցէ, և* **ոչ է** *արարիչ չարաց իրաց, այլ բարեաց: Չիք այստեղ բայ է, որովհետև նշանակում է «չկայ», նույնը կրկնում է եղնիկը իր սովորությամբ հոմանիշ, բայց տարբեր բառով՝* **ոչ է,** *որ նույնպես նշանակում է «չկա»:*

ԱՆԿԱՊ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Կան մարդիկ, որոնք այնքան են խճողում իրենց գրվածքը բազմաթիվ հարաբերականներով և ներբայներով, որ իրենք էլ չուտով թելը կորցնում են: Ահա մի ամբողջական պարբերություն, նոր տողից նոր տող. Սմբատյանց Մեսրոպ եպիսկոպոսի «Գեղարքունի» գրքից, էջ 446.

«Այսքան ծանրութիւն Ազատ քաղաքից ստանալով, և այս քաղաքի նընջեցելոց համար «Հոգւոցն Հանգուցելոց» աղօթքը կարդալով, որոց յիշատակներն հարիւրաւոր տարիներէ հետէ կանգուն մնացածն մեզ խրատ են կարդում նոցա նման յիշատակներ թողնելու և խօսելով նախնեաց բարեպաշտութեան վերա և հիշելով նախնի իշխանքն՝ մանավանդ մեր Բագրատունեաց թագաւորաց ժամանակի, որոց մեծագործութեանց ապացոյց Շիրակայ հոյակապ փառաւոր վանքերն ու եկեղեցիքն են, և նոյն իսկ Անի քաղաքի անուանի շենքերն, որք տեսողաց զարմացնում են՝ դեռ այսքան դարեր անցնելուց հետո»:

* * *

Ավելորդ – *Նա վերցրեց թեյի բաժակը և սկսեց* **թեյ** *խմել (թեյ բառը բոլորովին ավելորդ է):*

Մոնղոլերենն ունի 2 դերանուն bida «**մենք**» (inclusive) *(ես և դու միասին) և* ba «**մենք**» (exclusive) *(միայն խոսողը), խալխա-մոնղոլերենում* t̄ā «**դուք**» *(քաղաքավարական), իսկ* t̄ānar «**դուք**» *(հոգնակի* **դու** *բառի սովորական* **դուք**), *բուրյաթ-մոնղոլական* t ānar «ihr, Sie» (ün̄ höflich) tanus «ihr» (verächtlich):

ՀԱՄԱԴԻՐ ԵՎ ԱՆՀԱՄԱԴԻՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անկանոն նախադասությունների ամենասովորական ձևը **անհամադիր** *նախադասությունն է: Երբ պարբերությունը բաղկացած է մի քանի նախադասություններից, առաջին նախադասության ենթական, որ հանդիսանում է իրր հիմնական գործող, պետք է ենթակա մնա նաև մյուս նախադասությունների մեջ: Այս պարագային նախադասությունները* **համադիր** *են: Իսկ երբ գրողը կամ խոսողը մտածման ձևը փոխելով առաջին նախադասության ենթական չդնի երկրորդի մեջ և փոխարինի մի ուրիշ բառով (թեև նրան պատկանող), կստացվի անհամադիր նախադասություն: Օրինակ՝*

«Ռամիկը» ոչ թե հոմանիշ է «չինական» բառի, այլ նրա նշանակությունն ավելի ընդարձակ է ու ընդհանուր (Մանանդյան, **Ֆեոդալիզմը** *Հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 152): Առաջին նախադասության ենթական է* **ռամիկը**, *երկրորդինը՝* **նշանակությունը**, *իսկ* **ռամիկ** *դարձել է հատկացուցիչ. նախադասությունը անհամադիր է, պետք էր ասել՝*

Ռամիկը *ոչ թե հոմանիշ է* **չինական** *բառի, այլ ունի ավելի ընդարձակ և ընդհանուր նշանակություն: Այս դեպքում երկու նախադասությունների մեջ էլ ենթական կմնա* **ռամիկը**, *և նախադասությունները կդառնան համադիր:*

Հաճախ միայն մի բառ կարող է նախադասության ընթացքը փոխել և համադիր նախադասությունը դարձնել անհամադիր, օրինակ՝

Էհէհ, Ռուբեն,- ավելացրեց **նա** *(բժիշկը),* **հառաչելով և գլուխը** *երերալով,- մի ոգևորվիլ, վատ բան է չքավորությունը (Շիրվանզադե, Երկ. լիակ. ժող., 1930, հտ. Դ, էջ 248):*

Այստեղ անհամադիր են «հառաչելով և գլուխը երերալով», որովհետև առաջին դերբայի ենթական է **նա** *(բժիշկը), իսկ երկրորդինը՝* **գլուխը**. *պետք էր ասել* **գլուխը երերցնելով**, *որով ենթական կմնար նույն բժիշկը:*

Անհամադիր նախադասության մի այլ ձևն է այն, երբ բայը երկու նախադասությանց մեջ էլ չի դրվում համապատասխան ձևով, օրինակ՝

Ինչքան մոտենում եմ մեր այսօրվա կյանքն ստեղծագործող մարդկանց, այնքան բուռն է իմ մեջ ապրելու ցանկությունը (Սիրաս, Զգրված օրենք, 88) պետք է ասել **բուռն է լինում:**

Նմանապես մի բառ նթե առաջին նախադասության մեջ մի հոլով է, մյուս նախադասության մեջ ուրիշ հոլով, առաջ է բերում անհամադիր նախադասություն: Օրինակ՝

Ուքանը չինել է Հաղպատի մի նկեղեցին, որ Քուրդն էր սկսել, բայց չվերջացրած մնռել էր:

Թևև երկու նախադասության մեջ էլ **եկեղեցին** *է խնդրի առարկան, բայց առաջինում հայցական է, երկրորդի մեջ ղրվել է ուղղական. պետք է առնել նույնպես հայցական, որով նախադասության ձևն էլ կփոխվի և կդառնա «Ուքանը չինել է Հաղրատի մի նկեղեցին, որ Քուրդն էր սկսել, բայց չվերջացրած մնռել էր»:*

Անհամադիր նախադասության երրորդ ձևն է անհարիր բառերի գործածությունը: Օրինակ՝

Վանա լիճն ունի մի տեսակ ձուկ (տառեխ) և չորս կղզի:

Համադանը արտադրում է սպիտակ աղ և խոչոր էչեր:

Այս կարգի նախադասությունները կանոնավորելու համար պետք է փոխել ձևը և ասել, օրինակ՝

Վանա լիճն ունի մի տեսակ ձուկ (տառեխ), լճում կա չորս կղզի:

Համադանը արտադրում է սպիտակ աղ, կենդանիներից նշանավոր է էշը...

Ես ժողովել եմ մի երկար շարք բառախմբերի (Վ. Արծրունի, Ռուս-լատին-հայ բժշկական գիտական բառարան, Երևան, 1924, էջ 5):

Հեղինակը մտածել է նախ ասել «մի երկար շարք բառերի» բայց հետո **շարք** *բառերի զուգորդությամբ մտածել է* **խումբ** *բառի մասին և ավելացրել է* **բառախմբերի:**

ԱՆԿԱՆՈՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամեն լեզվի մեջ էլ հաճախ կարելի է գտնել այնպիսի նախադասություններ, որոնք քերականական կանոններին ու չարադասության ձևերին համաձայն չլինեն: Այսպիսի նախադասությունները կոչում ենք **անկանոն նախադասություններ:**

Անկանոն նախադասությունների բազմաթիվ օրինակներ գտնում ենք առհասարակ սեմական լեզուների մեջ, բայց մասնավորապես արամերենում: Օրինակ՝

ubayθa dᵉ nā saθrē-h

և այս տունը, նա նրան քանդեց

դանիերեն, բ. 23 millaθ malkā hoðᵃ tanā

թագավորի գործը, դու մեզ դայն հայտնեցիր

դանիերեն, բ. 32 hu ṣalmā reṣe-h ḍiðᵉhaƀ tāƀ

այն արձանը, նրա գլուխը մաքուր ոսկուց էր

Նման ձևով նախադասություններ ունենք Հին պարսկական բևեռագրության մեջ. hauv kāra hya manā Kanpada nāmā dahyāuš mādaiy avadā mām amāniya

Իմ այս բանակը Կամպադա նահանգը Մարաստան այնտեղ ինձ սպասեց (իմ բանակը սպասեց ինձ Մարաստանի Կամպադա նահանգում):

aita xšassam tya gaumāta hya magušˊ adinā kanbujiyam aita xšassam hačā parviyata amāxam tauxmāyā āha

Այս թագավորները, որ Գավմատա մոգը հափշտակել էր Կամբիայից, այս թագավորությունը սկզբից պատկանում էր մեր տոհմին: (Benveniste, Sur la syntaxe du vieux-perse, MSL, 23, 179–181):

Այսպիսի նախադասությանց հիմնական հորինվածքը հետևյալն է: Նախադասության մեջ որոշ դեր ունեցող մի բառ դրվում է, նախ նրա տեղը մոռացվում է, հետևում են մյուս բառերը և հետո, երբ նրա հերթը գալիս է, կամ կրկնում է ամբողջությամբ, և կամ նրա տեղ դրվում է մի որևէ դերանուն կամ մակբայ: Այսպիսով առաջին բառը մնում է անկախ:

Այսպիսի ձևեր գտնում ենք նաև հայերենի մեջ, ինչպես՝

Այս ամբողջ խոսակցությունը, որ լսեց Ռաֆայելը, քիչ էր մնում ուշաթափվեր (Սիրաս, Զգրված օրենք, 208):

Իսկ աչքերը, ածուխի պես սև, և հաստ հոնքերի տակից նայող աչքերի հրացայտ փայլին օրիորդ Նատաչան չդիմացավ (անդ. 33):

Եվ այն հանգամանքը, որ նա արդեն Շաբոյին բավական մտերիմ էր զգում իրեն, և՛ այն հանգամանքը, որ Շաբոյի հոգում կարդում էր այն տվայտանքները, որպիսին ապրում էր ինքը՝ նա մտերմորեն բռնեց նրա թևից ու առաջնորդեց իր սենյակը (անդ. 336):

Ուրախացանք չատ, երբ լսեցինք, թե ահա վանքի կաթողիկեն ծառերի միջովն սպիտակափառ երևեցավ, ուստի և չտապեցնել կամեցանք թեև ձիանքս, որ չուտով հասեննք, սակայն մի կողմից ծառերի մացառները, և մյուս կողմից ճանապարհի վատությունը, որ պատճառել էր անձրևը, չէինք կարողանում չտապով առաջ գնալ, այնպես որ չատ տեղ ոտքով էինք չափում (Մ. արք. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի, Վաղարշապատ, 1896, էջ 171):

Անկանոն նախադասությունները առաջ են գալիս ոչ թե տրամաբանության բացակայությունից կամ լեզվական առանձին օրենքներից, այլ մտածողության արագությունից և փոփոխությունից: Արդարև, միտքը չատ ավելի արագ է, քան լեզուն, և այն ժամանակ, երբ լեզուն սկսում է արտահայտել մի միտք, միտքը արդեն պատրաստ է ամբողջովին: Հաճախ պատահում է, որ խոսողը իր միտքը արտահայտել սկսելուց անմիջապես հետո մի ուրիշ ընթացք տա իր մտքին, և որովհետև արդեն նա սկսել էր արտահայտվել, խոսքի առաջին մասը մի ուրիշ մտքի կիսատ արտահայտությունն է լինում, երկրորդը մի ուրիշի: Եվ երկուսը միասին դուրս են գալիս անհարիր, այսինքն կազմում են **անկանոն նախադասություններ:**

Այս է պատճառը, որ անկանոն նախադասությունները սովորական են խոսակցական լեզվի մեջ, իսկ գրավորում բացակայում են առհասարակ, որովհետև գրողը կարող է իսկույն անդրադառնալ և գրվածքը փոփոխել:

ԿԻՍԱՏ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

«Այնինչ Հեղինեն նստած էր ապարանքում, մի հրաչակերտ ծիրանի ոտայն գործելով, որի վրա նկարված էին պատկերներ հունաց և տրոյեանց պատերազմից»: (Հոմերոս, Իլիական, թրգմ. Փ. Վարդանյան, Թրխլիսի, 1886, էջ 58): Այստեղ պարբերությունը վերջանում է, և սկսվում է նոր գլուխ: Նախադասությունը մնացել է կիսատ:

ԱՆՀԱՐԻՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ահա անհարիր նախադասության մեկ օրինակ՝ «Այս ժողովածուի այն երկերը, որոնց ներքևում աղբյուրը ցույց է տրված Հե տառերով, դրանց առաջին հրատարակիչը՝ Արիստակես Վ. Տեկանց, առանց որևէ հիմքի, լոկ խոսքով վերագրել է 16-րդ տարում ապրող իր հայրենակից Նահապետ վարպետ Աչուղ Քուչակին»: (Արեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 5):

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Միջանկյալ, հարաբերական և երկրորդական նախադասություններ կամ ասույթներ հաճախ մտնելով գլխավոր նախադասության մեջ, նրա մասերը անջատում են իրարից: Այստեղ էլ չափավորությունը անհրաժեշտ է, պետք է այնպես անել, որ երկու չատ հարակից բառեր (խնդիր և խնդրառու) անջատ կերպով չդաժանվեն իրարից: Օրինակ՝

Թվում էր, որ բոլորը հպատակվում են նրա, իբրև մի տեսակ գլխավորի, խոսքին (Շիրվանզադե, Եր. լիակ. ժող., Երևան, 1930, հտ. Դ, էջ 363): Այստեղ ընդհատված է **նրա խոսքին,** երկու անբաժանելի բառեր, լավագույն էր ասել՝ «... նրա խոսքին, իբրև մի տեսակ գլխավորի»:

Եվրոպական լեզուները այս կողմից մի քիչ ավելի ազատ են, բայց աչխարհաբարի չարադասությունը այնպես է, որ թույլ չի տալիս նման ընդհատումներ:

Շատ լեզուներ երկրորդական նախադասություններ չունեն և կազմում են դերբայներով կամ հոլովյալ ձևերով, այսպես. թրք. **երբ եկավ** geldikde գալիս, հայերեն **գալու միջոցին, ժամանակ:**

Մինչդեռ ես ուտում էի «ուտելիս, կերածս միջոցին»:

Քրդերենի մեջ նախադասության կազմությունը չատ նախնական է, չգիտեն երկրորդական, ստորադասական նախադասություններ և դերբայական կազմություն (Justi, Kurdische Geam, էջ 28):

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարաբերական նախադասությունը սկսվում է **որ** *հարաբերականով, ինչպես.*

Եւ ամենքին՝ որ լսէին՝ զարմանային վասն բանիցն, զոր խոսեցան ընդ նոսա հովիւքն. (Ղկ. ը. 18):

Սպասաւորք գիտէին, որք արկին զջուրն (ՅՀ. բ. 9):

Աղգական այնորիկ, զորոյ զունկն եհպտ Պետրոս (ՅՀ. ԺԸ. 26):

Որդի Աստուծոյ զորոյ ի ձեռն արար նա զաշխարհս (Ագաթ., 63):

Ի բուն աշխարհն փափագէր՝ որ Պաղհաւն կոչէր (Ագաթ., 32):

Արդ արասցե՞ս գկամս իմ, Գրիգորիոս, որ յայդպիսի տանջանս մատնեցար, (Ագաթ., 111):

Որ հարաբերականից պետք է զանազանել **որ** չաղկապը, որ երկրորդական նախադասությունը կապում է գլխավորի հետ (փոխանակ դի), օրինակ՝

Այսքան ժամանակք են, որ առ մեզ բնակեալ է (Ագաթ., 121):

Երբ հարաբերյալը գոյական է, շատ վայելուչ է **որ** հարաբերականի գործածությունը հաջորդ հարաբերական նախադասության մեջ լինի: Բայց երբ հարաբերյալը բայ է կամ մի ամբողջ գործողություն, անպատեհ է լինում **որ** հարաբերականի գործածությունը: Օրինակ՝

Սկսեց սաստիկ ցավել գլուխս, որ սովորական չէր ինձ համար:

Կարծես թե գլուխն էր սովորական: Այսպիսի դեպքերում հարաբերականի փոխարեն պետք է դնել **ինչ որ** (ce que) *կամ* **մի բան որ:** *Ըստ այմ՝ Սկսեց սաստիկ ցավել գլուխս, ինչ որ (կամ մի բան որ) սովորական չէր ինձ համար:*

Երբ հարաբերականը և հարաբերյալը տրված են, ավելորդ է երկրորդ անգամ կրկնել հարաբերյալը ցուցականով. *ինչպես՝ Մուղանի ընդարձակ դաշտը, որ Կասպից ծովին արևմուտքը կը մնայ, և Կովկաս լեռներեն մինչև Ատրպատական կը տարածվի, և մեղմ օդովը, հուռթի արոտներովը ու առատ փայտովն ու ջրովը հանգիստ ձմերոյ կը կազմեն, թաթարները* **զայն** *իրենց կենտրոն ընտրեցին (Ալդաշ., էջ 1619).- **զայն** բառը այստեղ ավելորդ է:*

Հարաբերական նախադասությունը կարող է գլխավոր նախադասության մեջ մտնել և նրա անդամները բաժանել իրարից. *օրինակ՝*

Վարագի, որ գաղանագոյն է քան զամենայն գաղանս, ուստի միսն և ոչ մնասէ (Եզն., 66):

Առն՝ **զոր** *ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն* **որոյ** *և փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշտոց անուն (Կորյուն):*

Հարաբերական նախադասության սկիզբը գտնված **որ** կարող է դրվել ամեն հոլովով, ինչ հոլով որ պահանջում է նախադասությունը: Հաճախ հարաբերականից հետո ավելադրությամբ դրվում է համապատասխան դերանուն, եթե հարաբերականը ուղղական կամ հայցական չէ: *Օրինակ՝ Անդ էր Թագաւորազն մի, որոյ որդի* **նորա** *Հիվանդ կայր (ՅՀ. դ. 46):*

Յարարչէն, որոյ են ստացուածք իւր երևելի և աներևոյթ արարածք (Ագաթ., 54):

Պաշտել զդիսն, զորոյ դու ասեալ զնոցա պատիւն, ումպետ կարդաս արարիչ (Ագաթ., 68):

Հարաբերականը կարող է դրվել հայցական, իսկ նրա հոլովը վերցնել ավելադրությամբ դրված մի դերանուն, *ինչպես՝*

Մի՛ ուտիցէք յայդմ ծառոյ, զոր պատուիրեցի չուտել ի դմանէ (Ագաթ., 75) – փխ. յորմէ պատուիրեցի չուտել:

Հարաբերական նախադասության մեջ հարաբերյալը կարող է դրվել հարաբերականի հոլովով, ինչպես՝ Զրանն՝ զոր ես խոսեցայ ընդ ձեզ. հոգի է և կենաք – փխ. բանն: (ՅՀ. գ. 64): Իսկ հլուացն, որոց ականջք սրտիցն բացեալ էին, զնոսա բանիւք քարոզութեանն ածէր ի հաւանութիւն (Բուզ. Դ. 4) – փխ. զհլուսն: Վերջինիս մեջ **զնոսա** *դրուած է ավելաղրութեամբ և ստացել է այն հոլովը, որ պիտի ուննար հարաբերյալը:*

Հարաբերականը ավելաղրութեամբ ուղղական հոլովով դրված է բացահայտիչի և բացահայտյալի միջև: Անուն Աստուծոյ, **որ** *տեառն արարածոց (Եղն., էջ 246):*

Որ *հարաբերականից առաջ հաճախ* **նա** *դերանունը կրճատվում է և* **որ** *այս դեպքում նշանակում է* **նա՝ որ:** *Այս պարագային* **որ** *հարաբերականին հաջորդող բառի վրա դրվում է* **ն** *հողը, ինչպես՝*

Որ գայ առ իս՝ ո՛չ քաղցիցէ (ՅՀ. գ. 35):

Որ յառաջնումն չկարաց յաղթել, յայտ է թէ և ի վախճանի չկարէ յաղթել (Եղն. 71): Նույնը նաև հոլովյալ ձևերով, ինչպես՝

Եկեսցեն արտաքս. որոց բարիս գործնալ իցէ (ՅՀ. ե. 29) – զեղչյալ է **նոքա:**

Տաց պատասխանի ոյք նախատեն զիս բանիւք (Սղ. ՃԺր. 42) – զեղչյալ է **նոցա:**

Այս պարագային **որ** *հարաբերականը կարող է ստանալ զեղչյալ դերանվան հոլովը, ինչպես՝*

Երկիր պագանեմք, որում գիտեմք (ՅՀ. գ. 22) – փխ. **նմա, զոր:**

Որում խնդրէ ի քէն՝ տուր (Մտթ. ե. 42) – փխ. **նմա, որ:**

Նույնը առանց հարաբերականի փոփոխության.

Եւ որ (փխ. յորմէ) կամի փոխ առնուլ ի քէն՝ մի՛ դարձուցանի՛ր զերեսս – չկա **ի նմանէ** *) (Մտթ. Ե. 42):*

Որ *հարաբերականը ստանում է անորոշ ձև՝ ավելացնելով* **ինչ** *կամ* **միանգամ** *բառը, ինչպես՝*

Իւրաքանչիւր ոք որ զինչ առնէ, զրարին, նոյն ընդունի ի Տէառնէ (Եփես. գ. 8):

Որ միանգամ են իրրեւ զքեզդ ... արդարեւ իսկ եր յուսահատ (Ագաթ., 58):

Այլ մարդիկ, որ միանգամ իջուցեալ էր անդր, ամենևին մեռեալ էին (Ագաթանգեղոս, § 124):

Որ *հարաբերականով նախադասությունը, հատկապես դրված գլխավոր նախադասությունից առաջ, նշանակում է երբեմն «ինչ վերաբերում է, գալով այն մասին» ... ինչպես՝*

Վասն որոյ կախեցիր ինձ **աղ** *... յուսամ ես ի Տէրն իմ (Ագաթ., § 72):*

Որ ասացերդ, թէ ես գիտեմ զի ... (Ագաթ., § 61):

Հարաբերական նախադասությունները կարող են մի քանիսը լինել, որոնք կարող են սկսվել **որ** *հարաբերականի զանազան հոլովներով, ինչպես՝*

Եգիպտացիք ստեղծել էին մի տեսակ գիր, **որ** *(ուղղական) ծանոթ է մեհենագիր անունով,* **որից** *(բացառական) մի նմուշ դնում ենք ներքևում, և* **որով** *մշակել են նրանք շատ ճոխ գրականություն:*

Գլխավոր նախադասության մեջ ներմուծված հարաբերական նախադասությունը կարող է ոչ թե միայն մեկ, այլ մի քանիսը լինել: Այս պարագային հարաբերականը, որ դրված է առաջին հարաբերական նախադասությունում, կարող է կրկնվել մյուս հարաբերական նախադասությունների սկզբում կամ ոչ, ուղղական կամ հոլովյալ ձևով, օրինակ՝

*Այն բոլոր պատմական երևույթները, **որ** նկարագրեցինք վերը, **որոնք** դուրս ենք բերել ժամանակակից և ականատես անձերի պատմածներից, և **որոնց** մասին մենք էլ մեր կողմից ավելացրինք մեր դիտողությունները, կարող են բացատրվել երկու տեսակետով:*

Այսպիսի դեպքերում կարող է տեղի ունենալ չփոթություն, և երկրորդ կամ երրորդ հարաբերական նախադասությունը համարվել գլխավոր, օրինակ՝

*Նույնիսկ **նի** հոգնակերտ մասնիկը,*

1) որ այնպես ընդհանուր էր Կիլիկյան Հայերենում,

2) գործածական է այժմ էլ զանազան բարբառներում և

3) նույնիսկ կենդանի է ստացական հոդերի մեջ,

4) զրկված է անկախ գոյությունից:

*Այս օրինակում հարաբերական են 1, 2, 3 նախադասությունները, բայց և գլխավորն է 4. չփոթմամբ կարելի է գլխավոր կարծել 3: Այս չփոթությունից խուսափելու համար անհրաժեշտ է 3-ն էլ սկսել **որ** հարաբերականով:*

*Գրողների անուշադրությունից կամ անփութությունից պատահում է երբեմն, որ **որ** հարաբերականն ու հարաբերյալը իրար հետ լավ չեն կապվում, և հարաբերականը մնում է անտեր, օրինակ՝*

Այն սպան, որ հաստատված էր իմ անցած սահմանի վրա, և որ ինձ տեսած չլինելով՝ ձախողած էր հաղորդել իմ ժամանումը, առանց հապաղման նրա ականջը պիտի կտրվեր (Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, Ջ. 405): Հանելով երկրորդական մասերը, կմնա հետևյալը.– Այն սպան նրա ականջը պիտի կտրվեր. պետք էր գոնե ասել՝ Այն սպան ... անհապաղ պիտի կորցներ իր ականջը ի պատիժ:

Հասկանալի է, որ այդ ժամանակ չէր կարող լինել այնպիսի դպրոց, որի միջոցով հավասար գիտություն ստանային ազնվականն ու ռամիկը: Բայց այն տենդը, որ ամենուրեք առաջ էր մղում այդ գործը, նրա հիմքում ընկած էր հետևյալ ցանկությունը (Պետ. հմլս. գիտ. աչխ. XIII): Հանելով երկրորդական մասերը, մնում է հետևյալը.– բայց այն տենդը նրա հիմքում ընկած էր ... Պետք էր գոնե ասել՝ Բայց այն տենդը իր հիմքում ուներ հետևյալ ցանկությունը:

Տգեղ է հարաբերականի բազմիցս անգամ կրկնությունը մի պարբերության մեջ, օրինակ՝

*Մեր ժամանմանը այնտեղ վխտում էին փաշայի զինվորները, **որոնք** եկել էին հարևան մի գյուղի համար, **որի** բնակիչները թալանվել էին քուրդ մի ավազակախմբի կողմից, **որոնք** պատկանում էին մի ցեղի, **որ** անվանապես գտնվում էր Երևանի կառավարության տակ (Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, Ջ. 820): Հինգ տողի մեջ ուներ այստեղ 4 հարաբերական, երրորդը սխալ՝ փոխանակ ասելու՝ **որ**: Պետք է դնել այսպիսի դեպքում սովորական դերանուններ, ինչպես՝ Մեր ժամանմանը այնտեղ վխտում էին փաշայի զինվորները:*

Նրանք եկել էին Հարևան մի գյուղի համար, որի բնակիչները թալանվել էին քուրդ մի ավազակախմբի կողմից: Դա պատկանում էր մի ցեղի, որ անվանապես գտնվում է ...: Այսպիսով՝ չորսից երկուսը զեղչվում է, մնում է միայն երկուսը, որ հինգ տողի համար չափավոր է:

Նախադասության մեջ **որ** հարաբերականից առաջ գտնված բառը (հարաբերյալը) զորեղացնելու համար կարելի է ամբողջովին կրկնել ոչ միայն մի բառը, այլև ավելին, ինչպես՝ «Այս գործունեությունը սերտ կերպով կապված է Վատիկանի քաղաքական գործունեության հետ, քաղաքական գործունեություն, որը բանադրվել է Հայ եկեղեցու կողմից» («Էջմիածին», 1946, օգոստոս, էջ 21 ա):

Այսպիսի հարաբերական նախադասությունների կուտակումը, հաճախ մրթնեցնում է իմաստը, հեղինակի միտքը անհասկանալի դարձնում, օրինակ, (Մխիթար Գոշ. **Հրտր.** Հայապատում, 387):

Յետ այսորիկ որդի Դարին՝ Տօղան անուն, իշխան աչխարհին Ճաուարերդոյ և նորին Դղևակին ամբաստանեալ և կամեցեալ տիրել Առասանայ, միանգամայն զի եկեալ ոմն որդի սուլթանի առ նա, որում անուն էր Զախրչահ, և առեալ զնա և զաներ իւր զԳրիգոր իշխան որդի Վասակայ տեառն Խաւախան բերդոյ, որոյ եկեալ առ նա՝ զի նովա վրէժ առցէ ի Հասանայ որդւոյ Դեմոյ, յաղագս եղբօր իւրոյ Սմբատայ, զոր սպաննալ էր նա պատերազմի պատճառաւ, զոր ունէին ընդ միմեանս վայրապար:

Այստեղ ամեն ինչ խառնիխուռն է և չփոթ, և եթե չլինեին հաջորդ տողերը, չպիտի հասկացվեր, թե ով ում հետ է միացվել, ում հետ է կռվել և այլն:

Հարաբերական նախադասությունից առաջ գտնված **ենթական** հարաբերական նախադասությունից հետո էլ որևէ դերանունով կրկնել անտեղի է: Օրինակ, Մեզ հայտնի ուսումնասիրողներից մի քանիսը, որոնք այս կամ այն առիթով հիշել են այդ չրջանի դպրոցները, նրանք տարակուսել են, թե հայ մանուկները ինչպես էին սովորում ասորերեն և հունարեն լեզուներով (Պատ. համ. գիտ. աչխ. XIII, էջ 358):

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդի, մանավանդ եվրոպական լեզուները չատ հարուստ են երկրորդական և հարաբերական նախադասություններով, որոնք կապվում են գլխավոր նախադասության հետ զանազան թեական, պայմանական և այլն չաղկապներով և **որ** հարաբերականով: Նախալեզուն առհասարակ երկրորդական նախադասություններ չէր ճանաչում, իր ընդունած ձևն էր մի քանի գլխավոր նախադասությունների պարզ հարադրությունը, ինչպես օրինակ, Կեսարի հայտնի խոսքը՝

veni, vidi, vici
Եկա, տեսա, յաղթեցի:

Կամ ի հարկին առոգանության որոչ եղանակով, ինչպես՝

Կգա, կ'ասեմ:

փոխանակ՝ Երբ որ գա, այն ժամանակ կ'ասեմ:

Երկրորդական նախադասությունների պակասը լայն չափով լրացնում էին դերբայները և բարդ բառերը, որոնք արդի վերլուծական լեզուները հարաբերական նախադասություններով պիտի թարգմաննեին, ինչպես՝

Վասն բազում անգամ ոտնակապօք և չղթայիւք կապելոյ և խզելոյ ի նմանէ չղթայս եւ զոտնակապս խորտակելոյ (Մրկ. ե. 4) – Որովհետև, թեև շատ անգամ ոտնակապերով և չղթաներով կապել էին, սակայն նա չղթաները պոկել և ոտնակապերը խորտակել էր:

Զէրն չէին վասն չէին յաչտ առներ (Եզն.):

– Նա՝ որ չկար, նրան՝ որ չկար, զոհ էր անում նրա համար՝ որ չկար (Զեղողը չեղածին չեղածի համար զոհ էր անում):

Փախիցուք յաչխարհամոլէն (Ոսկան. ա. Թես.) – Փախչենք նրանից՝ որ աշխարհի սիրով մոլի է:

Զայրն արդար աչխարհահայր երկրակալ յաւիտենադիր ուխտին կացուցեալ (Ագաթ.) – Այն արդար մարդուն աշխարհների հայր և երկիրների տեր դարձրեց մի այնպիսի ուխտակ, որ հավիտենական ուխտադրություն էր:

Եւ ապրեալք՝ յայնժամ գիտացաւ մի Մելիտինէ իր անուն կղզւոյ (Գծ. իր. 1) – Երբոր աղատեցանք, այն ժամանակ... եւ յԱթենս ի մնալն նոցա Պաւղոսի (Գծ. ժէ, 16) – Երբ որ Աթենքի մնջ Պողոսը սպասում էր նրանց...

Այնուամենայնիվ պետք չէ ասենք, թե երկրորդական նախադասության զարգացումը բոլորովին անծանոթ էր հնդեվրոպացիներին: Այն բառիկները, ինչպես kʷe *«և»,* ve *«կամ» որոնցով հնդեվրոպական նախալեզուն երկու բառ հարադրում էր իրար, կարող էին նաև գործածվել երկու նախադասություն կապելու իրար: Նախադասության սկիզբը դրված* to- *ցուցականը ծառայում էր կապելու այդ նախադասությունները մի նախորդի հետ, սրանով էլ հետո դարձավ հարաբերական, այդպես՝ գերմաններենի մնջ* der, *որ նախ պարզ ցուցական էր, հետո դարձավ հարաբերական: Ժառանգ լեզուներից չատերի մնջ երկրորդական նախադասություն կազմելու համար գործածված զանազան բառերը այսպիսի ծագում ունեն, սրանք մեծ մասամբ երկրորդական անչնչատ բառիկներ էին՝ կցված մի գլխավոր բառի, որ հնդեվրոպական նախալեզվի օրենքով դրված էր լինում նախադասության սկիզբը: Բայց հենց այն հանգամանքը, որ նրանք նախադասության առաջին բառին էին կցված, կարծել տվեց, թե իրենք են կազմում նախադասության կապը, և այսպիսով դարձան չաղկապ: Այնպես որ հունարեն δε նախապես ուրիչ բառերի կցվող վերջարար էր, հետո դարձավ երկու հակադիր նախադասությունների միջև չաղկապ,* **բայց, սակայն, ապա, ուրեմն** *և այլն իմաստով: Նմանապես սանսկրիտերեն* hi, *որ նույն հունարեն* -χι *ձևի հետ նախապես գործ էր ածվում միայն իբրև զորացուցիչ, ինչպես հունարեն* μήχι *«բնավ ոչ»,* ναίχι *«այո իհարկե», սանսկրիտերեն «ոչ բնավ», սակայն ավելի հետո սանսկրիտի մնջ դարձավ չաղկապ* **քանզի, որովհետև** *նշանակությամբ:*

Երկրորդական նախադասությունների մնջ հնդեվրոպական նախալեզուն ամենից ավելի ծանոթ էր **հարաբերականին,** *որի ներկայացուցիչներն են սանսկրիտերեն* yás, yā, yát, *զննդերեն* yō, yā, yat, *հունարեն* ὅς, ἥ, ὅ, *հոլանդերեն* ji-že, ja-že, je-že, *լիտվերեն* ja- *(մակբայների մնջ), այս բոլոր լեզուներն էլ, իրենց հնագույն վիճակից սկսած, գիտեն գործածել հարաբերական նախադա-*

սութիւններ, մերթ հարաբերյալից հետադաս և մերթ նրանից նախադաս, մերթ նրան ուղղակի հարակից (ինչպես պահանջում է արդի լեզուների ոգին) և մերթ նրանից անջատ, համաձայն հնդեվրոպական նախալեզվի չարադասութեան ազատութեան:

Հայերենը ընդունակ է կազմելու զանազան երկրորդական և հարաբերական նախադասութիւններ. երկրորդական նախադասութիւնները գլխավորի հետ կապվում են սովորաբար **թե** (**եթե**) շաղկապով, ինչպես՝

Լաւ է քիչ, եթէ մի յանդամոց քոց կորիցէ:
Հավատայք, եթէ կարող եմ առնել:
Գիտասջիք, եթէ իշխանութիւն ունի:

Եթե երկրորդական նախադասութիւնը սկսվում է **ով, ուստի, յո, երբ, ինչ** և այլն հարցականներով, **եթե** շաղկապը կարող է իսպառ դեղչվել, իսկ հարցականը ստանում է չեզոք (փոխանակ պարույկի): Օրինակ՝

Գիտէր Յիսուս ի սկզբանէ՝ ո՛վ են այնոքիկ, որ ոչն հաւատան և
ով այն է, որ մատնելոցն է զնա (ՅՀ. գ. 65):
Դուք ո՛չ գիտէք՝ ուստի գամ կամ յո երթամ (ՅՀ. ը. 14):
Ահաւասիկ նոքա գիտեն՝ ինչ ասացի (ՅՀ. ժը. 21):

Շատ հաճախ երկրորդական և հարաբերական նախադասութիւնները կարելի է միախառնել գլխավոր նախադասութեան մեջ մի երկու բառով՝ իբրև լրացուցիչ, օրինակ՝

Թե նա պիտի գա՝ վստահ եմ:
(Գալուն վստահ եմ):
Այն, ինչ որ դուք ասացիք՝ ճշմարիտ է:
(Ձեր ասածը ճշմարիտ է):
Զգիտեմ, թե նա որտեղ է ծնվել և որ քաղաքում է ապրել:
(Զգիտեմ ծննդավայրն ու բնակավայրը):
Ուր որ է, կգա:
(Իսկույն կգա):
Նա ինչեր էր մտածում անել, ես գիտեի:
(Իր մտադրութիւնը ես գիտեի):

Թե ովքեր էին այս գործի հեղինակները և թե ինչ էին մտադրված անել, դուք լավ գիտեիք:

(Լավ գիտեիք այս գործի հեղինակներին և նրանց մտադրութիւնը):

Երբ մի քանի հարաբերական նախադասութիւններ հաջորդում են իրար, եթե նրանք բոլորն էլ սկսվում են ուղղական **որ** հարաբերականով, կարելի է և պետք է խուսափել այդ **որ**-ի կրկնութիւնից: Օրինակ՝ Ահա այսպիսի կարեվոր մի գործ է ներկա աշխատութիւնը, որ թեև տպագրութեամբ դեռ հրապարակ չէ դուրս եկած, բայց (որ) ծանոթ է ինձ ձեռագիր վիճակում:

Բայց երբ հարաբերականը տարբեր հոլովներով է, կրկնութիւնը անհրաժեշտ է, ինչպես՝ Ահա այսպիսի մի գործ է ներկա աշխատութիւնը, որ թեև տպագրութեամբ դեռ հրապարակ չէ դուրս եկած, բայց որից հատվածներ կան տրպված ռուսերեն թարգմանութեամբ:

Որ հարաբերականը՝ թե՛ ուղղական է և թե՛ հայցական, թեև ձևով սրանք նույնն են: Իհատ տրամաբանությունը պահանջում է ըստ իս, որ հոլովի այս տարբերությունն դնպքում էլ կրկնվի որ հարաբերականը: Օրինակ՝

Ահա այսպիսի մի գործ է ներկա աշխատությունը, որ թեև տպագրությամբ դեռ հրապարակ չի դուրս եկած, բայց որ չուտով հեղինակը մտադիր է հրատարակել:

Եւ որ դաղաւնիան վաճառէին, ասէ ցնոսա ... (ՅՀ. Բ. 16): — Որ հարաբերականը նախադաս է և առանց թվի և հոլովի համաձայնության, իսկ թիվն ու հոլովը դրած է դերանունի վրա:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ
(subordonnée)

Տեսակներն են՝

Ժամանակական	(temporel)	Ես այստեղ էի, երբ նա գնաց:
Պայմանական	(conditionnel)	Կասեի, եթե տեսած լինեի:
Պատճառական	(consécutif)	Այնքան վատ ընդունեցիր, որ նա վչտացավ ու գնաց:
Վերջնական	(final)	Ստիպեցին, որպեսզի գնա:

Իսկ յոր քաղաք մտանիցէք, և ոչ ընդունիցեն զձեզ ... — (Ղուկ. ժ. 10): Եւ որ ոչ ընկալցի զձեզ և ոչ լուիցէ բանից ձերոյ (Մտթ. ժ. 14):

Երբ նախադասությունը բացասական է՝ բայը դրվում է ստորադասական, ինչպես՝

Ձի լաւ է զքեզ, եթէ մի յանդամոց քոց կորիցէ (Մտթ. Ե. 29) եւ մի՛ ամենայն մարմինդ քո անկանիցի ի գեհենն (Մտթ. Ե. 30):

Երկինք և երկիր անցցեն և բանք իմ ոչ անցանիցեն (Ղուկ. Իա. 33):

Երկու բացասական կազմում է մի դրական, օրինակ, երբ ասում ենք՝ «Նա անարժան չէ», հասկացվում է որ արժանավոր է: Ըստ այսմ չքավոր չեմ, այն է «ունևոր եմ»: Նաև ոչինչ չունի, որ սովորական է արևելահայոց մեջ, անիմաստ է արևմտահայոց մեջ:

Երանդի սաստկությունից Նօտարք հայոց (տպ. Պոլիս, էջ 163) ծան. Նիկոլ անարժան եպիսկոպոսին ծաղրելու համար դրել է երկու բացասական, բայց ստացվել է հակառակը.- «Ձչանարժան Նիկոլն, որ եղև ժանտախտ Իլովայ»:

ԲԱՑԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բացասական նախադասություն կազմելու համար դրվում է հնխ. ne, որ ժառանգների մեջ դառնում է սանսկրիտերեն na, հոլանդերեն ne, լատիներեն ne, լիտվերեն ne և այլն:

Արգելականի համար գործ է ածվում հնխ. me, որ գիտեն միայն արիականը, հունարենն ու հայերենը (առաջինը ստորադասականի հետ, մյուս երկուսը հրամայականի հետ). ինչպես՝ հունարեն (օրինակը չկա — Խ. Բ.), հայերեն մի՛ բերիր — սանսկրիտերեն ma bharas.

Հայերենի մեջ բացասական է **ոչ**, որ կարող է նաև կրճատ չ ձևով միանալ հաջորդ բային, ինչպես՝ Արձակել զդուստ նօթիս չկամիմ, (Մտթ. ժե. 32): Ինքն նեղ իցէ եւ նեղ չիցէ՝ զայն ոչ գիտէ (Եզն. 14): Կարելի էր ասել նաև՝ ոչ կամիմ, նեղ ոչ իցէ... ինչպես՝ Զէ արժան քեզ անել (Մտթ. ժտ. 4): Ոչ է արժան (Մտթ. իը. 6): Ոչ իցէ ընթերցեալ ձեր (Մտթ. ժը. 3): — Զիցէ՞ ընթերցեալ ձեր (Մտթ. իա. 16):

Ոք, ինչ, անորոշների հետ դրվում է միշտ **ոչ** բացասականը, և «ոմն» բառի հետ չ. **ևս** բառի հետ **ոչ.**

Ոչ զոք տեսանէր (Եզ. բ. 12):
Ոչ ինչ ունիմք աստ (Մտթ. ժդ. 17):
Զեւ է կատարած (Մտթ. իդ. 6):
Ոչ ևս ...

Մի՛ գործածվում է ներկա հրամայականի հետ և հաճախ ստորադասականի հետ.

Մի՛ լքանէր.
Մի՛ եղիցի քեզ այդ (Մտթ. ժզ. 22):
Դրանք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն (Մտթ. ժզ. 18):

Մի՛ գործածվում է նաև առանձին.

Կամի՞ս զի երթիցուք քաչեսցուք զայն ի բաց, և նա ասէ ցնոսա, մի՛ (Մտթ. ժզ. 28–29):

— Եթե արգելք չկա, այլ միայն կանխազուշակութիւն, **մի**-ի տեղ դրվում է **ոչ** նաև ստորադասականի հետ.

Ոչ ճաչակեսցեն զմահ, մինչև ... (Մտթ. ժզ. 28):

Բացասականը իրեն քաշում և առաջ է գցում, բայը և խնդիրները ետ թողնում, օրինակ՝

Զեւ էր հասեալ ժամ նորա (ՅՀ. է. 31) Համմտ. հակառակը՝
Հասեալ է ժամ նորա (ՅՀ. ժզ. 21):
Զէ արժան քեզ անել զդա (Մտթ. ժզ. 4) Համմտ. Ոչ է արժան (Մտթ. իը. 6):
Ի տուն քում արժան է ինձ ագանել (Ղկ. ժթ. 5):
Զէ սատանայ բռնաւոր և կանխագէտ, (Եզն. 77):
Ոչ ետ նմա պատասխանի (Մտթ. ժե. 23) Համմտ. պատասխանի ետ նմա:
Մի՛ տացես նմա պատասխանի (Դ. թգ. դ. 29):
Ջտայք թոյլ մտանել (Մտթ. իգ. 13) թոյլ տուր այժմ (Մտթ. Գ. 15):

Բացառականի հետ հաճախ դրվում է **ինչ** (ավելաղրութեամբ):

Ոչ ինչ են պիտոյ բժիշկք ողջոց (Ղկ. և. 31):

Բացառականը կարող է բայից, հատկապես անորոշից հետու մնալ.

Ոչ չար և ոչ բարի ումիք ինչ կարին առնել (Ագաթ. 59):

Ո՛չ-ը կարող է կրկնվել և նույնիսկ գոյականի վրա դրվել.

Ոչ գիտէք զօրն եւ ոչ զժամն (Մտթ. Իե. 13):
Զիք նշանակում է «չկայ»:
Զիք ոք բարի (Ղկ. ժը. 19):
Զիք ինչ որ բնութեամբ է չար (Եզն. Ա. 15):
Նշանակում է նաև **«չէ, ո՛չ է»:**
Զիք երևեալ քեզ Աստուծոյ (Եզ. դ. 1):

ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հարցական կազմելու համար հնդեվրոպական նախալեզուն որևէ մասնիկ չուներ. նա բավականանում էր միայն բարձրացնելով ձայնը կամ տալով որոշ երանգ: Թե ինչումն էր կայանում ձայնի այս տարբերությունը, ո՛չ մի կերպով կարելի չէ իմանալ:

Հայերենի մեջ էլ հարցական նախադասությունը ո՛չ մի առանձին կազմություն չունի. նախադասության մեջ ամեն մի բառ կարող է հարցական դառնալ, որը պետք է այդ անի միայն տոնի բարձրացմամբ և ստանում է՞ նչանը.- (այս մասին տե՛ս Meliet, *տե՛ս* Sun qunlques évangéliairen arméniens acuntuis).

Հարցականը կարող է լինել մի քանի տեսակ.

1) նախադասությունը պարունակում է մի հարցական բառ. այս դեպքում հարցումն էլ փոխադրում է միչտ նրա վրա. ինչպես՝

Որո՞վ իշխանութիւն առնես զայդ, և ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ (Մտթ. իա. 23):

Մկրտութիւն Յովհաննու ուստի՞ էր (Մտթ. իա. 25):

Ընդե՞ր ոչ հաւատացեք նմա (Մտթ. իա. 26):

Մինչև ցե՞րբ իցեմ ընդ ձեզ, մինչև յերբ ուսուցցեմ ձեզ (Մտթ. ժէ. 16):

Զի՞նչ անուն է քեզ (Ղկ. ը. 30):

Այս կարգի նախադասությունները ի բնե հարցական են, և նրանց պատասխանը մի բացատրություն է լինում:

2) Հարցական նչանը դրվում է նախադասության որևէ մի անդամի վրա, որ ըստ տիպի հարցական է և կարող է մի ուրիշ դեպքում հարցական չլինել: Այս կարգի նախադասությունների պատասխանը լինում է պարզապես **այո** *կամ* **ոչ,** *որին հարցնողը նախապես տեղյակ չէ:*

Հաւատա՞ք, եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա.

Այո՛, տէ՛ր (Մտթ. Թ. 28):

Ո՞չ իցեն ընթերցեալ ձեր (Մտթ. ժբ. 3):

3) Կասկածը կարող է լինել երկու և ավելի բառերի վրա, որոնց մեկի կամ մյուսի ընտրությունը կախված է պատասխանողից. այս դեպքում հարցումը միայն առաջին բառի վրա է դրվում, մյուսը միանում է նրան **թե** *չաղկապով: Օրինակ՝*

Ուստի՞ էր, երկնի՞ց թէ ի մարդկանէ (Մտթ. իա. 23):

4) Այս պարագային կարելի է ավելացնել նաև **արդյոք** *բառը, որ ծառայում է կասկածը կամ տարակույսը զորացնելու. ինչպես՝*

Մարմնաւո՞րք էին արդեաւք դիքն, թե անմարմինք (Եզն. 100):

5) Բայց եթե պատասխանը արդեն հայտնի է հարցնողին, և նա գիտե, որ պատասխանը «այո» պիտի լինի, հարցումը կրում է լոկ իբրև **ճարտասանական** *ձև, տրվում է* **ո՞չ ապաքէն.** *օրինակ՝*

Ընդէ՞ր օրենք ի թագաւորաց դնիցեն, ո՞չ ապաքէն վասն կարճելոյ չարեացն (եզ. 59):

6) Հարցականը գործածվում է իբրև ճարտասանական ձև՝ փոխանակ բացասականի, ինչպես՝

Ո՞վ ասաց:

Ո՞վ գիտե = Ջասացի: Ջգիտեմ:

Ո՞վ է տեսել այսպիսի բան:

Կովկասյան չատ լեզուներում հարցական նախադասություն կազմելու համար բայից հետո դրվում է մի առանձին մասնիկ:

Հարցական մասնիկ ունի չեխերենը (li), ռուսերենը (ли), մոնղոլերենում կան մի քանի այդպիսի մասնիկներ, որոնք կցվում են բային:

Ջինարեն հարցական ձևը.

Šan kao nsŏ – *Լեռը բա՞րձր է:*

no - kŏ čie čang mŏ – *Այս փողոցը լա՞յն է:*

ni yāo mai če-kŏ má mó – *Կուզնի՞ք ծախել այս ձին:*

Թուրքերենի մեջ էլ հարցական mi չի դրվում, երբ նախադասության մեջ հարցական բառ կա. օրինակ՝ Kim geldi:

Վրացերենում հարցական կազմելու համար վերջնավանկի վրա դնում են ուժեղ և խիստ չեչո՝ հարցական տոնով, ինչպես՝ կիխուո՞ր, կիխուորա՞ ?

(Dirr, Gram georg. 4):

Կարաբղինյան լեզվով հարցական կազմելու համար բայի վերջում դնում են ri *կամ* re, *կամ* pere:

Հարցականի համար նույնպես առանձին ձև չկա (հայերենի-պես), չեչոր բավական է. օրինակ՝

Éxris – *ունի՞ս:*

Éxritr – *ունի՞ք:*

Աչխարհաբարում բացասական հարցականի մեջ բայն է հարցնում, գրաբարում՝ ոչ. **Զկերա՞ր, ո՞չ եկիր:**

Հարցական նախադասությունը աննամերենում կազմվում է բացասականով. փոխանակ ասելու «եկե՞լ է», ասում են «եկե՞լ է, թե չէ»:

Շատ անգամ հարցական նախադասությունը բացասականի նչանակություն ունի. ինչպես՝

«Ես գիտե՞մ» – նչանակում է «չգիտեմ»:

Ճիչտ հայոց պես:

Ջավայերենում նախադասությունը հարցականի վերածելու համար դնում են punnára *բառը, որ նչանակում է* **ի՞նչ** – punnára sampéyan murugegi kard ?

(Bohatta, Gr. jov. 45):

Ջինարենում էլ սիրում են հարցականը կրկնել բացասականով, օրինակ՝ lai pu lai – *եկա՞ = «չեկա»:*

Շվեդերենում հարցական կազմելու համար բայը տանում են առարկայից առաջ, ուրիչ որևէ նչան չկա:

Ճապոներենում հարցականի նչանն է՝ ka, *ինչպես՝* anata-wa ikimas-ka ? – *Դուք գնո՞ւմ եք:*

Ամերիկյան sionan *լեզվի մեջ 3 տեսակ հարցական կա. սովորաբար նախադասության ծայրը դնում են* he *հարցականը. եթե անձը, որին ուղղված է հարցումը, բավական հեռու է, հարցականը դառնում է* hwo *կամ* to, *իսկ երբ հարց տվողը անմիջական պատասխան է պահանջում, հարցականը դառնում է* če (Boas, Handbook, I, 934):

Լենթիներենում հարցական կազմելու համար նախադասության սկիզբը դնում են waj *հարցականը. ինչպես՝*

es sinu – *Ես գիտեմ:*
waj es sinu – *Գիտեմ:*
(Brenfano, 9)*

ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

(ԲԱՌԵՐԻ ՇԱՐՔԸ)

Ամեն մի լեզու ստեղծել է բառերի **չարադասության** *մի ընդհանուր և սովորական կարգ, որից չեղվում է միտքը ավելի արտահայտիչ դարձնելու համար:*

Ընդունված կարգ է՝ նախադասության մեջ բառերը դասավորել ըստ իրենց կարևորության աստիճանի՝ նախ դնել **ենթական,** *ապա՝ ստորոգյալը. թեև հայերենում ենթական կարող է բայից և՛ առաջ դրվել՝ «Արքայ ասէ» (Ագաթ. § 53), և՛ հետո՝ «Ետ պատասխանի Գրիգորիս» (Ագաթ. § 52):*

Երբ կարիք կա առանձին ուշադրություն հրավիրելու որոշիչի վրա, չարքը փոխվում է: Այսպես, լատիներեն homines tres, *նշանակում է ո՛չ թե պարզապես «երեք մարդ», այլ հատկապես «մարդիկ», որոնք թվով երեք են:*

Երբ հայերեն ասում ենք «Հայր սիրէ զորդի», հասկացվում է, որ **Հայրը** *(ենթական) սիրում է որդուն, իսկ երբ ասում ենք «Որդի սիրէ զհայր», որդին է դառնում ենթական:*

Նախադասության առաջին կարևոր բառից անմիջապես հետո հաջորդում են բառիկները, անորոշները և վերջահար անձնական դերանունները, այս բոլորը երկրորդական արժեք ունեն և հաճախ անշեշտ են: Այս մասին հունարենը տալիս է լավագույն օրինակները, իր δε, τε, τες և այլն, և այլն բառիկներով: Բայց հայերենն էլ ունի բազմաթիվ օրինակներ, որոնք նույն հնդեվրոպական օրենքի չարունակությունն են, ինչպես՝

Զի՞ դու, զի՞՝ ընդ քեզ, զի՞՝ նլէք **դուք այժմ ամենեքեան** *ի տունիս նանրութեան (Ես, Իր, 1):*

Գան **ոմանք** *ի տանէ ժողովրդապետին (Մրկ. Ե. 35):*

Դուստրն **քո մեռաւ** *(Մրկ. Ե. 35):*

Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել ի Գալիլեա (ՅՀ. ա. 43):

Ի սերմանելն **իւրում էր որ** *անկաւ առ ճանապարհաւ (Ղկ. ը. 5):*

---

* *Հարցական նախադասություններից հետո Աճառյանը պլանավորել է գրել նաև* **«Զարմացական նախադասության»** *մասին, սակայն ձեռագրում միայն վերնագիրն է գրված, և ամբողջ էջը դատարկ է (Ն. Բ.):*

Հին պարսկերենի սովորական չարքն է ննթակա, սեռի խնդիր, լրացուցիչ, բայ (բայց սկիզբը չի դրվում) օրինակ pasava kanbujiya avam Bardiyam avāja *Հետո այս Կոմբուջիան այս Բարդիային սպանեց: Խնդիրը* կարող է դրվել ամեն տեղ: Լեզուների այս անհամաձայնությունը ցույց է տալիս այն, որ նախալեզվի մեջ չարադասությունը բոլորովին ազատ էր, որի հետքերը մնում են դեռ ամեն լեզվի մեջ:*

Այստեղ դնում ենք մի քանի օրինակ հին հայերենից, որոնցից հետևում է, թե միշտ աչխատում էին նախադասության կարևորագույն բառը դնել սկզբում:

Ձիք ինչ չար որ բնութեամբ չար իցէ և ոչ է արարիչ չարաց իրաց, այլ բարիաց:

Ձի մի մթարքն որ զբբոք չողայցին, **արգել** *Հայելոյ ի յատակութիւն լուսոյն լիցին:*

Ձազատութիւն ակնդեցվոյ արկանէր ի ծառայութիւն (եղիչէ). կարևոր բառը ազատութիւնն է, իսկ նրա դեմ **ծառայութիւն,** *դրված է խոսքի վերջը:*

Ձի ակնդեցվոյ փառս աղաւաղեացն (եղիչէ): Կարևորը **եկեղեցին** *է, որ սկիզբն է անցել, նույնիսկ կանխելով հատկացյալը:*

Ձևոան և նոքա անծխական հրով (եղիչէ), կարևորը բայն է, որ սկիզբն է անցել:

Սակայն երբ ասում ենք, թե չարադասությունը ազատ է, պետք չկա կարծելու, թե նա բոլորովին անկանոն է, առհասարակ բառերի սովորական խմբավորության մեջ որոշիչը որոշյալից առաջ է դրվում, այսպես՝

լատիներեն trēs hominēs *երեք արք (մարդ).*

հունարեն ἀγαθὸς ἀνήρ *բարի այր.*

սանսկրիտ devānām dik *աստուածոց բնակարան.*

Հայերեն **առատ պարգեւօք** *(ածականը գոյականից առաջ, իսկ երբ վերջն է՝ հատուկ ուշադրություն է հրավիրում, ինչպես՝* **պարգեւօք մեծամեծօք**):

Սակայն հին լեզուների մեջ բառի վերջավորությունը բավական է ցույց տալու, թե նա ինչ հոլով է և հետևաբար ինչ պաշտոն ունի նախադասության մեջ: Դրա համար էլ անհրաժեշտ չէր որևէ հաստատուն կարգով որոշել դիրքը: Հին լեզուները և հատկապես հնդեվրոպական նախալեզուն ընդունում են **ազատ չարադասություն,** *բառերը դասավորվում են ո՛չ թե ըստ պաշտոնի, այլ համաձայն այն կարևորության, որ ունեն նրանք այս կամ այն նախադասության մեջ, և որի վրա ունկնդրի ուշադրությունն է ուզում հրավիրել խոսողը: Կարճ խոսքով,* **չարադասությունը ճարտասանական էր և ո՛չ քերականական:**

Ամենից ավելի հունարենն է, որ պահել է հնդեվրոպական նախալեզվի ազատ չարադասությունը, նրանից ետ չեն մնում հայերենը և լատիներենը: Հայերենը հատկապես այնպես նման է հունարենի չարադասությանը, որ կարելի է դնել թարգմանել ամբողջ ս. Գիրքը բառ առ բառ՝ հետևելով հունարենին, առանց սակայն սրանով ստրկացնելու լեզուն, որովհետև այդ թարգմանության լեզուն ոչնչով չի տարբերվում ինքնագիր հայերեն գրվածքների լեզվից: Օրինակ, կարելի է լատիներեն և հայերեն ազատորեն ասել.

---

* *Երբ տեղ ցույց տվող մի խնդիր պատահի, վերջը կդրվի և բայը այսպիսով առաջ կանցնի* hauv xtayadiya abava Mādaiy — *նա եղավ արքայ ի Մարս* (Meiller gran dn 239–240) *բայց կան և դեպքեր երբ այս չարքը խանգարվում է:*

pater filium amat — *Հայր զորդի սիրէ:*
filium pater amat — *զորդի սիրէ Հայր:*
amat filium pater — *սիրէ զորդի Հայր:*
amat pater filium — *սիրէ Հայր զորդի:*

Մյուսները աշխատել են կամաց կամաց չարադասության մեջ մտցնել որոշ կարգ: Օրինակի համար սանսկրիտը արդեն ունի մի հաստատուն կարգ: Բայց այս կարգը դանդաղնում է լեզվից լեզու. օրինակ՝ բայը սանսկրիտի մեջ դրվում է սովորաբար նախադասության վերջը, այսպես նաև կամիսերենում (Barton, A hittite manuel, p. 23). *մինչդեռ հին իռլանդերենի մեջ դրվում է սկիզբը, իսկ հունարենի, հայերենի, լատիներենի և հին սլավերենի, ինչպես և հնագույն իրանական բնագրերի մեջ նրա տեղը չարժական է:*

Ահա մի կտոր հունարեն Ավետարանից, հանդերձ հայերեն թարգմանությամբ:

ἄςετr τὰ παιδία ἔρχεσθαι πρὲς ρς,
թոյլ տուք մանկտւոյդ գալ առ իս,
μὴ κωλύςτε α'υτα τῶν γαρ τοιούτων
եւ մի՛ արգելուք զդոսա, զի այդպիսեացդ
ἐοi ἰν ἡ βασιλεία τοῦ Ιεοῦ
է արքայութիւն Աստուծոյ:

Մնջտեղ են մնում միայն հոդերը, որոնք չկան հայերենում:

* * *

Այսպիսով, ինչպես ներածության մեջ ասել ենք, չարադասությունը լեզվաբանական գիտության այն ճյուղն է, որ ուսումնասիրում է բառերի առնչությունը իրար հետ, նրանց պաշտոնը, կարգը և դասավորությունը իբրև **անդամ նախադասության**, *մի խոսքով,* **չարադասությունը նախադասության կազմի ուսումնասիրությունն է** *և տարբերվում է ձևաբանությունից, որ միայն բառերի ձևի ուսումնասիրությունն է: Ուրիշ մի գիտությունից օրինակ առնելով՝ ձևաբանությունը բառերի անդամազննությունն է, չարադասությունը՝ նրանց* **բնախոսությունը:**

Նոր լեզուները հներից մի հիմնական տարբերություն ունեն: Որովհետև բառը, հոլովական վերջավորություններից զուրկ լինելով, հայտնի չէ, թե ինչ հոլովի է պատկանում, և միաժամանակ կարող է և՛ այսինչ հոլովին պատկանել և՛ այնինչ հոլովին, ուստի դիմել են մի ուրիշ միջոցի՝ **բառի դիրքով** *որոշել նրա հոլովը և պաշտոնը: Ըստ որում՝ նոր լեզուների մեջ չարադասությունը ունի որոշ կարգ, և ամեն մի բառի տեղը որոշված է համաձայն իր պաշտոնին, հակառակ պարագային, իմաստը խանգարվում է: Օրինակ, ֆրանսերենում և արևմտյան հայերենում Պօղոս և Պետրոս թե՛ ուղղական են և թե՛ հայցական, այնպես որ երբ հարկ լինի ասել թե* **Պողոսը ծեծել է Պետրոսին,** *անհրաժեշտ է Պողոսը (ենթակա) դնել սկիզբը և Պետրոսը (սեռի խնդիր) դնել վերջը, այսպես՝*

Պողոսը ծեծեց Պետրոսը:
Paul a battu Pierre.

Հակառակ դիրքով անկարելի է, որովհետև այն ժամանակ Պետրոսը ծեծող և Պողոսը ծեծ ուտող կդառնա:

Այսպես ուրեմն, նոր լեզուների մեջ բառերի կարգը որոշ և հաստատ է: Այսպես է նաև սեմական լեզուների մեջ. սեմական լեզուների մեջ բառերի կարգի փոփոխությունը կիսակատար չափով ուշ ժամանակի գործ է:

Ջինարենում, ուր հոլով չկա, երբ բառը դրվում է բայից առաջ, ուղղական է, իսկ երբ բայից հետո՝ տրական, հայցական է: Գերմաներենում թեև համախ ուղղականը և հայցականը ձևով տարբեր են իրարից, չփոխություն երկուսը չկա, բայց որովհետև ուրիշ դեպքերում տարբեր չեն, և չփոթություն կարող է ծագել, ուստի որոշված է նույնպես դնել նախ **ենթական,** *հետո՝* **սեռի խնդիրը,** *ինչպես՝* der Löwe sieht den Hasen, die Frau sieht die Blume (Brockelmann Priеu de lina sem 1910, *էջ 15*): *Շվեդերենի մեջ ուղղական, տրական, հայցական միևնույն ձևն ունեն, ուստի դանաղանելու համար իրարից որոշված է սկիզբը դնել ուղղականը, հետո բայը, հետո տրականը և հետո հայցականը, օրինակ՝*

Gud har givit männiakan förnuft

Աստված տվել է մարդոց բանականություն:

Բասկերենն ունի ճիշտ ու ճիշտ տաճկերենի (աչխարհարարի) չարադասությունը. օրինակ՝

aurr-a-ri	eman	diod-an	liburu-
տղայ(ը)ին	*տված*	*եղածս*	*գիրքը.*
չօճուղա	*վերմիչ*	*օրտղում*	*բիթապ.*

it ederr-a da
չօր կյղիսի տիր
շատ լավ-ն է:

Ֆիջի կղզու լեզվով խոսքի սկիզբը դրվում է բայը, հետո սեռի խնդիրը, հետո ենթական.

Դանիերենում սեռականը գոյականից առաջ է դրվում, ինչպես՝ faderens befaling *Հետ հրամանը.* barnets bog *տղայի գիրքը. Սա արաբական ձևն է, որ կա և գերմաներենում –* Vaters Brfehl, des Kindes Buch, *կամ անգլերենում –* Father's sin

Այսպես է չվեդերենում en flickas lynne – *մի աղջկա քմահաճույքը* kenungens dotter – *թագավորի աղջիկը:*

Հինդուստանի լեզվի մեջ չարադասությունը ճիշտ հայերեն աչխարհարարի պես է. ենթական, սեռի խնդիր, բայ. նախադրությունը դրվում է գոյականից հետո, մակբայը՝ բայից առաջ, ածականը գոյականից առաջ, հատկացուցիչը հատկացյալից առաջ (Bonnerjea, 41):

* * *

Բառաքաժանումն *էլ իր որոշ օրենքներն ունի. այսպես՝ նախդիրները առանձին են գրվում, բայց մասնիկները կցված են բառին, այսպես նաև բոլոր տեսակի վերջավորությունները:* **Հոդը** *բոլոր լեզուների մեջ էլ, եթե նախադաս է, գրվում է առանձին, իսկ եթեետադաս է, կցվում է բառին. օրինակ՝*

ֆրանս. **le** père,
գերմ. **die** Katze,
անգլ. **the** world,
իտալ. **la** madre,
Իսկ հայերենում կցվում է բառին, ինչպես՝
մարդը, մարդն, ձուկը, ձուկն, կատուն, այգին և այլն:

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Նախադասության ամեն մի բառը անկախ և ինքնուրույն լինելով՝ նրանց կապակցությունը միայն համաձայնության մեջ է:

Համաձայնություն ասելով հասկանում ենք այն, թե ինչ որ է մեկը, նույնպես է լինում և մյուսը, բայց այս համաձայնությունը ո՛չ թե մեկ բառի կողմից մյուսի համար պարտադիր մի պահանջ է, այլ ինչպես անունն էլ ցույց է տալիս, երկու կողմից միաժամանակ կատարված համապատասխանություն:

Բայական նախադասության մեջ համաձայնությունը կայանում է բայի և ենթակայի միջև: Սեմական լեզուների մեջ այդ երկուսի համաձայնության եղրերն են **սեռ** *և* **թիվ**, *որովհետև սեմական բայը* **սեռ** *ունի: Ըստ այսմ, երբ ենթական արական եղակի է, բայն էլ լինում է արական եղակի, եթե ենթական իգական երկակի է, բայն էլ լինում է իգական երկակի և այլն: Սակայն հնդեվրոպական բայը սեռից դուրկ լինելով, համաձայնությունը լինում է միայն թվի մեջ:*

Իսկական համաձայնությունը տեղի է ունենում երկու անունների կամ մի ածականի ու մի գոյականի միջև, պայմանով որ տարբեր հոլովներով չլինեն, ինչպես՝

Արարից զձեզ որսորդս մարդկան (Մտթ. դ. 20):
Ետես այլ երկուս եղբարս, զՅակովբոս Զերեդևայ եւ
զՅովհաննէս զեղբայր նորա, ի նաւի Զերեդևաւ
հանդերձ հարբն իւրեանց (Մտթ. դ. 21):
Մի՛ ոք իմասցի ինչ ի բանից այտի յայդցանէ (Երեմ. լը. 24):
Այսպիսի դանդաղանաց բանից տխմարաց մտաց կարկատելոց:

Այս նախադասությանց մեջ անմիջապես իրար հետ կապ ունեցող համաղիր բառեր են զձեզ և որսորդս, երկուս և եղբարս, զՅովհաննէս և զեղբայր, Զերեդևաւ և հարբ, ի բանից և յայտցանէ, բանից և տխմարաց և այլն, ուստի և համաձայնվել են իրար հետ: Բայց իրար հետ չկապվող զանազան տարբեր լրացուցիչներ են **որսորդ** *և* **մարդկան**, *ի նաւի և հարբ, բանից և պատասխանի և այլն, ուստի և չեն համաձայնում իրար հետ:*

Վերի օրինակների մեջ համաձայնությունը եղել է թվով և հոլովով, որովհետև հայերենի մեջ միայն այս կարգերը (catégorie) կան: Իսկ հնդեվրոպական նախալեզվի մեջ (ինչպես և այն ժառանգների մեջ), ուր կա նաև սեռ, համաձայնությունը լինում է սեռով, թվով և հոլովով, այսինքն այն բոլոր տարբերով, որ հավասարապես ունեն գոյականներն ու ածականները. երբ գոյականը

գուրկ է ածականից կամ ցուցականից, ոչ մի նչան չունի իմանալու, թե ինչ սեռի է:

Ֆրանսերենում համաձայնությունը համախ կեղծիք է. գրական ուղղագրության մեջ գրվում է aimé, aimmée, aimés, aimées *(եզակի արական, եզակի իգական, հոգնակի արական և հոգնակի իգական), բայց այդ բոլորը ժողովրդի մեջ հնչվում են միատեսակ: Նույնպես միատեսակ են հնչվում* fini, finie, finis, finies, *կամ թե* nu, nue, nus, nues, *այսպես նաև* aime-aiment, aimait-aimaient *և այլն: Այս բոլորը, գիտնականների հնարած ձևերն են, որոնք իրականության մեջ չկան: Այս բանը այնքան ճշմարիտ է, որ նույնիսկ մեծ հեղինակներ սխալվել են համաձայնության օրենքների մեջ կամ թույլ են տվել իրենց չգործադրել օրենքը:*

Այսպես, օրինակ, սխալ է Victor Hugo Ovils marchands d'euso-même immonde abaisse ment *(պիտի լիներ* l'eux-mêmes*) սխալ է գրում նույնպես* Malherbe les lois, dont la rigueur Tiennent nos souhaits en longueur *(պիտի լիներ* tient*),* (Meillet BSL № 66, էջ 79)*:*

Երբեմն այս երկուսը միանում են իրար հետ կամ նույնանում: Այս երևույթը հատկապես նկատելի է անջատական լեզուների մեջ: Օրինակ, չինարենում, ուր հոլովները առանձին վերջավորություններ չունեն, ուրիչ խոսքով՝ հոլով, հետևաբար **ձև չկա:** *Բառի դիրքն է նախադասության մեջ, որ որոշում է հոլովը, ձևաբանությունը և շարադասությունը նույնանում են: Այնուամենայնիվ, պետք չէ կարծել, թե շարադասությունը, իբրև գիտություն, արժեք չունի, որովհետև հենց սրանով էլ իր արժեքը բարձրանում և գերակշռում է ձևաբանությունից: Կան դեպքեր, երբ շարադասությունն է միայն, որ կարող է որոշել, թե այսինչ բառը ինչ ձև է, օրինակ, Գրիչը Կարապետին տվի և Կարապետին գովում են, առաջինում իբր տրական, երկրորդում իբր հայցական:*

Պորտաղլերենում կարելի չէ ասել as linguas grega e latina **Հունարեն և լատիներեն** *լեզուները, այլ պետք է ասել* a lingua grega e a latins (Anstett, 549)*:*

Կանոնն այն է, որ երբ մի գոյական մի քանի ածական ունի, նրանք պետք է հետևեն գոյականին և ո՛չ թե գոյականը ածականներին. Ուստի այլ ոճ է ռուսերեն в русском и армянском языках*:*

Բրետոն լեզվում ածականը եոադաս է և միշտ անփոփոխ թե սեռով և թե թվով, ինչպես՝

un ty caër	*մի տուն գեղեցիկ.*
un dén brahue	*մի մարդ սիրուն.*
ur soudard mad	*մի զինվոր լավ:*

Սա է լեզվի ընդհանուր և սովորական ձևը: Բայց կարելի է երբեմն ածականը դնել նախադաս, այդ դեպքում գոյականը դրվում է սեռականով, ինչպես՝

ur hür heër a dy	*մի գեղեցիկ տուն.*
ur brahue a zen	*մի սիրուն մարդ.*
ur mad a soudard	*մի լավ զինվոր:*

Հոգնակիում այս ձևը երբեք չի գործածվում (Guillome, 18, 100)*:*

Երկարատև պատերազմների ժամանակաշրջանում **առաջ են եկել** *հայ պատմագիրների մի ամբողջ* **շարք** *(դոկտ. Ս. Տեր-Ավետիսյան, Արր. Կրետացու Հիշատակարանը, գիտ. աշխ. XIII, էջ 285): Մտածել է պատմագիրների մասին, բայց ենթակա է* **շարք,** *որ եզակի է:*

Սխալ համաձայնություն – *Հետևա(կա)զորին հաջորդում էր մյուս հատվածը,* **դա** *հնծյալ գնդերն* **էին:** *Ապա գալիս էր մյուս հատվածը:* **Դա** *ահռելի փղերի երամակներն* **էին** *(Դեմիրճյան, Վարդանանք, Ա, 402):*

Երևում էին շատ սաղավարտներ: **Դա** *մարտիկներ* **էին,** *որ այս գիշերի առիթով դրել էին իրենց սաղավարտները (անդ. էջ 371):*

Լսվեց հնծկլտոց: Դա կանայք էին, որ բազմության մեջ հառաչանքով նայում էին Վարդանին (անդ. էջ 37):

Համաձայնության մեջ նախապատիվ – *Երբ տարբեր դեմքի դերանուններ գործածվում են միասին, համաձայնումի մեջ նախապատվությունը տրվում է հետևյալ ձևով.*

ա դեմքը նախապատիվ է բ-ից և գ-ից:

բ » » » գ-ից:

Երբ տարբեր սեռի գոյականները տրվում են միասին, ածականը դրվում է նախապատիվ սեռով. այսպես օրինակ, չեխերենում՝ արականը նախապատիվ է իգականից և չեզոքից, իգականը նախապատիվ է չեզոքից (Hantich, Gram. tchèque, 53):

Բրետոներենում եթե ենթական դրված է բայից հետո, նախապատվության օրենքը պահվում է, իսկ եթե նախադաս է, բայը դրվում է ոչ թե նախապատիվ դեմքով, այլ երրորդ դեմքով, ինչպես

Pierre, hui ha mé en des studiet

Պետրոսը, դուք և ես սովորեցինք.

իսկ հակառակը՝ Studiet hun nès Pierre, hui ha mé:

(Guillome, 108)

ԲԱՌԱՆՋԱՏ

Երկու բառից բաղկացած բայական միացությունները կարելի չէ անջատել իրարից դանադան միջանկյալ բառերով, օրինակ, կարելի չէ ասել՝

Ես անց այնտեղից կացա փոխանակ Ես այնտեղից անցկացա:

Ես ի նկատի մի մատաղահաս երաժշտության վարժուհի **ունեմ** *(Պատկ., Ընտիր երկ., 1893, հտ. բ, էջ 133): Փոխանակ՝ Ես ի նկատի ունեմ երաժշտության մի մատաղահաս վարժուհի:*

ԲԱՌԵՐԻ ՇԱՐՔԸ

Թեև բառերի չարքը ազատ է, բայց հաճախ անհրաժեշտ է պահել որոշ կարգ, առանց որի կամ տգեղ է լինում նախադասությունը, կամ սխալ: Օրինակ՝ *Այս* **Ուրարտու** *անունը մենք համարում ենք բնիկ, տեղական, որպես սկզբում*

թերևս որոշ տոհմերի – ցեղեր ընդհանուր անուն (Ղափանցյան, Ուրարտուի պատմություն): Կարելի չէ **որպես** բառը պահել սկզբում թերևս բառերից առաջ, այլ պետք է ասել սկզբում **թերևս որպես** որոշ ... ըստ որում **որպես** բառը պատկանում է անորոշին:

Վրաց բառերի չարքը՝ ննեակա – սեռի խնդիր – բայ.
օրինակ՝ մուչերմա սասախլն աափենքես –
բանվորի գտունն պայթեցրին:

Անվանական նախադասության մեջ՝
ննեակա – ստորոգելի – բայ.
կացի մդիդարի ա –
մարդը հարուստ է:

Որոշիչ բառերը նախադաս են որոշյալից. այսպես՝ օրինակ, սեռականը, ածականը, թվականը և դերանունը դրվում են առաջ, իսկ հատկացուցիչը, գոյականը՝ հետո (vogt, 269):

Միայն expressive նախադասության մեջ կարող է չարքը փոխվել:

Շատ դժվար է բառերի չարքը դուրս բերել այնպես, որ միայն մի իմաստի համապատասխանի և երկդիմության տեղիք չտա:

Օրինակ՝ հայերեն «ոչխարի լավ մածուն» ասելու փոխարեն հաճախ ասում են՝ «լավ ոչխարի մածուն»:

ֆր. bouches d'oreilles large comme des bracelets
(Lamartine, Grazielles)

Այստեղ ըստ գրվածքի պետք է հասկանալ, թե ականջներն են ապարանջանի պես լայն, մինչդեռ հեղինակի միտքը այն է, թե գինդերն են լայն:

Նույնը հայերեն պիտի լիներ՝
Ապարանջանի պես լայն ականջի օղեր, որ դարձյալ երկդիմի է:

Բոլոր այս դեպքերում չնչտի և դադարի փոխհարաբերությունն է, որ երկդիմության առաջը առնում է, և որ գրի առնել չատ անգամ անհնար է:

Անկախ նախադասության կազմից դուտ թվումներ անելու ժամանակ էլ կա բառերի մի չարք, որ սովորության և գործածության արդյունք է միայն, օրինակ, ասում ենք **հայրս ու մայրս, հորից ու մորից** և ոչ թե մորից ու հորից:

Ընդհանուր օրենք է, որ կարճ բառերը առաջ են անցնում, այսպես՝

Հայր ու մայր, քույր ու եղբայր, տեր և տիրական, օր ու գիշեր, եղ-քացախ, աղ-պղպեղ, մարդ ու կնիկ, մարդ-մարդասանք, գյուղ ու քաղաք, տունն ու դուրսը, ճիշտ ու անճիշտ, ծուռ ու սխալ, լուռ ու մունջ, տղի-անտղի, կոչտ ու կոպիտ, սև ու ճերմակ, կանաչ-կարմիր, տղի-անտղի: Հավասար վանկերով բառերի համար կանոն չկա. գիշեր-ցերեկ, չուն ու գել, աուտ ու դորտ, թեր և դեմ, երկար-բարակ, երկար ու բարակ:

Այսպես նաև անգլերեն.

bread and butter	from top to bottom
bread and water	rough and ready
milk and water	rough and tumble

cup and saucer	free and easy
wind and weather	high and mighty
head and shoulders	fits and snatches

(Jespersen, Grouth and Structure... 215)

* * *

Առհասարակ ընդունված է ասել, թե հին լեզուներում նախադասության մեջ բառերի շարքը բոլորովին ազատ է, իսկ, ընդհակառակը, նոր լեզուներում նախադասության մեջ բառերը ունեն պարտադիր որոշ շարք:

Ոչ մեկը բացարձակ ճիշտ չէ:

Ոչ հին լեզուներն են բացարձակապես ազատ, ոչ էլ նոր լեզուներն են բացարձակապես ստրկական: Հին լեզուներն էլ ունեն երբեմն պարտադիր շարք, նոր լեզուներն էլ ունեն որոշ ազատություններ:

Գրաբարում կարելի է ասել՝

Տուն իմ մեծ է:

Մեծ է տուն իմ:

Բայց մի՞թե կարելի է ասել

Տուն մեծ իմ է:

է տուն մեծ իմ:

Երկուսն էլ՝ ոչ:

Աշխարհաբարում ասում ենք՝

Իմ տունը մեծ է:

Բայց նաև՝

Մեծ է իմ տունը:

Նույնիսկ ֆրանսերենում, որ շատ վերլուծական շարադասություն ունի, թեև սովորական ձևով պետք է ասել

Son aspect est terrible

Իր երևույթը սոսկալի է:

Կարելի է նաև շարքը փոխելով ասել՝

Terrible est son aspect

Սոսկալի է իր երևույթը:

Ուրեմն չափավորելով մեր լեզուն, հնի և նորի համար էլ պետք է ասենք, թե հին լեզուները բառերի շարադասության մեջ ավելի ազատ են, քան նորերը և, նոր լեզուների մեջ բառերի շարքը ավելի պարտադիր կարգով է, քան հին լեզուների մեջ: Տարբերությունը երևում է հայտնի կերպով, երբ աշխարհաբարը համեմատենք գրաբարի հետ, կամ ֆրանսերենը՝ լատիներենի հետ:

Այդ համեմատությամբ պիտի երևա նաև, որ հնից դեպի նորը գալու ժամանակ ազատությունը հետզհետե պակասում է, և պարտադիր կարգը հետզհետե ավելանում:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ

Ըստ ընդհանուր քերականական օրենքների գլխավոր նախադասություն պետք է դրվի առաջ, իսկ երկրորդականը նրանից հետո: Այսպես՝

Առավոտը վաղ եկա քեզ մոտ, որպեսզի քեզ տանը գտնեմ:

Բայց այս ընդհանուր և սովորական ձևից դուրս, երկրորդական նախադասությունը կարող է ստանալ նաև հետևյալ ձևերը:

1. Կարող է գլխավոր նախադասությունից առաջ անցնել, օրինակ՝

Որպեսզի անպատճառ քեզ տանը գտնեմ, առավոտը չուտ եկա քեզ մոտ:

Որովհետև ինձ կանչել էիր, ես էլ եկա:

Երբ որ ուզես, պատրաստ եմ:

2. Երկրորդական նախադասությունը կարող է գլխավոր նախադասությունը ձեղքել և նրա այս կամ այն անդամը հետացնելով՝ մեջ մտնել:

Այսպիսի երկրորդական նախադասությունը կոչվում է **միջանկյալ**, *ինչպես՝*

«Այն մարգագետինը, ուր արածում էին մեր ոչխարները, գտնվում էր գյուղից հետու և նրա միջով անցնում էր հեզասահ մի առու»:

3. Երկրորդական նախադասությունը իր բայական ձևից զրկվում է և վերածվելով մի կամ մի քանի բառի՝ իբրև անդամ միանում է գլխավոր նախադասության, ինչպես՝

Ուզողը եկավ, չուզողը չեկավ (=ով որ ուզեց՝ նա եկավ, իսկ ով որ չուզեց՝ նա չեկավ):

Նրա գալուստը տեսնելով՝ չտապեցի, եկա (=երբ տեսա, որ նա գալիս է, ես էլ չտապեցի և եկա):

Ուզած բոպիդ արի՛ (ո՛ր բոպեին որ ուզես, արի):

Կարդացածդ հասկացա՞ր (հասկացա՞ր այն, ինչ որ կարդացիր):

Երկրորդական նախադասությունը երբ կցվում է գլխավորին, կարող է զրվել փակագծի մեջ (երբ զրավոր է), կամ ստանալ թուլացած ձայն կամ շեշտ (երբ բանավոր է), ինչպես այս վերջին պարբերության մեջ:

Հարցական նախադասության պատասխանը տալու ժամանակ սովորաբար բուն պատասխանը առաջ է դրվում և կարող է մնալ մենակ, և կամ չարունակել մնացյալ մասը: Օրինակ՝

– Ո՞ւր ես գնում:

– Տուն (կամ տուն եմ գնում):

ԴԵՄՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Կարելի է նախադասության ձևը փոխել և ուղղակի կամ խոսակցական ձևը փոխելով՝ դարձնել անուղղակի կամ պատմողական: Այս պարագային դեմքը անհրաժեշտաբար փոխվում է, օրինակ՝

Հարցրին նրան: – Ասա, ո՞նց լավացավ աչքդ (=նրան հարցրին, որ ասի, թե ոնց լավացավ իր աչքը):

Ընդհակառակը, պատմողը կարող է սովորական պատմողական ձևը թողնել, և երևակայելով իրեն մի րոպե ննթակայի վիճակում, առնել նրա դերը, օրինակ՝

Կանգնած ջրի առաջ՝ նայում էր հոսանքին և մտածում էր, թե ինչպես անցնի՝ լողա՞, ցատկե՞, թե մի նավակ կանչի. (=կանգնած ջրի առաջ, նայում էր հոսանքին և մտածում. «Ինչպես անցնեմ, լողա՞մ, ցատկե՞մ, թե՞ մի նավակ կանչեմ»):

ԲԱՌԵՐԻ ՏԵՂԸ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Հատկացուցիչը հատկացյալից հետո է դրվում, բայց կարող է նաև լինել հակառակը:

Սկիզբն չարնաց (Եղն. 49):

Զարնաց արարիչ (Եղն. 51):

Հին լեզուներից հին պարսկերենն ունի հակառակ շարքը, ինչպես՝

Yištaśpahya pitā *Վչտապի հայրը,*

բայց ֆորմուլների մեջ՝

xšāyadiya asayadiyanam *արքա արքայից:*

Ածականը դրվում է գոյականից առաջ, բայց կարող է նաև դրվել հետո, և այն ժամանակ համաձայնում է:

Մեծ գործ (Եղն. 55):

Խռովութիւն մեծ (Բուզ. գ. 4):

Առն իմաստնոյ (Մտթ. է. 24):

Ժամանակս բազումս (Ղկ. ի. 9):

Հոգովք աչխարհականօք (Ղկ. իա. 34):

Հին պարսկերենում ածականը կարող է դրվել գոյականից առաջ կամ հետո, թվականը միչտ առաջ չի դրվի, ինչպես՝ aniyā dahyāva *այլ գավառք,* kārpa parsa *բանակն պարսիկ:*

Ավելի ազատ չարադասության մեջ՝ կարող են ածականը գոյականից և հատկացյալը հատկացուցիչից բաժանվել ու հեռանալ՝

Մասանց չարնաց գտանի մարդն արարիչ (Եղն. 35):

Առաջ դրվելու դեպքում չի համաձայնում.

Բազում գործս բարիս (ՅՀ. ժ. 32):

Գեղեցիկ վիմօք (Ղկ. իա. 5):

Բարձր բազկաւ (Ել. գ. 6):

Մեծամեծ վարազաց վայրենեաց (Ագաթ. 727):

Միավանկ ածականը այս դեպքում էլ համաձայնում է բոլոր հոլովներով:

Նորոյ ուխտի (Մտթ. իզ. 28):

Ի նոր գերեզմանի (Մտթ. իե. 69):

Նորոց կտակարանաց (Բ. կոր. գ. 6):

Մեծի արքայի (Մտթ. և. 35):

Քիչ անգամ կարող է պատահել, որ բազմավանկ ածականն էլ, թեև նախադաս, համաձայնի, ինչպես՝

Բոլորով սրտիւ իմով (Սղմ. Թ. 2):

Սուտ *ածականը (նախադաս) և* **արքունի** *ածականը (ետադաս) միշտ մնում են առանց համաձայնության:*

Ստացական, հարաբերական և հարցական ածականները սեռական, տրական, ներգոյական, բացառական, գործիական հոլովներում համաձայնում են, իսկ հոգնակի ուղղական, հայցական, ներգոյական հոլովներում հոգնակիի նշան չեն ստանում, ինչպես՝

Տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա չիջանին լապտերքս մեր (Մտթ. իե. 8–9):

Ի փառս քում (Մրկ. ժ. 37):

Գոյականները միշտ համաձայնում են, սակայն հոգնակի գոյականի մոտ մնում են եզակի, ինչպես՝

Ցետ այսր ամենայնի հաւանութեանց (Եղն. 59):

Եթե թվականը հոլովված է, գոյականը դրվում է հոգնակի, ինչպես՝ երկու ճնճղուկք (Մտթ. ժ. 29): Զերիս տիւս (Մտթ. ժբ. 40): Ի չօրից հողմոց (Մտթ. իե. 31):

Եթե թվականը չի հոլովված, գոյականը դրվում է եզակի. եթե ետադաս է, և դրվում է հոգնակի, եթե նախադաս է, ինչպես՝ Ոչ ինչ ունիմք, բայց հինգ նկանակ և երկուս ձկունս (Մտթ. ժե. 17), բայց՝ Լուծս հինգ (Ղկ. ժդ. 19), սակայն՝ Տասն կուսանաց (Մտթ. իե. 1):

Կարող է և թվականը հոլովվել՝ ամացն քառասնից (Գծ. է. 30):

Երբ տարբեր բայեր հաջորդեն իրար, որոնց հետ խնդիր ունեն միևնույն բառը տարբեր հոլովներով, նախ պետք է դնել առաջին բայի խնդիրը, հետո մյուսները, որոնք կարելի է նաև դեղչել: Օրինակ՝

Հանկարծ ձեռքը տարավ ճակատին, չփեց...

Պետք չէ ասել՝ Հանկարծ ձեռքը տարավ, չփեց ճակատը (Սիրաս, Զգրված օրենք, 319):

ՏՈՆԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հակառակ արդի լեզուներին, Հնդեվրոպական նախալեզվի մեջ **տոնը** *նպատակ չուներ կարևորագույն բառերը ի վեր հանելու (չեշտելու), այդ դերը վերապահված էր* **չարադասության**՝ *բառերի կարգին: Այդ նրա նպատակն էր իրար հետ անձուկ կերպով կապված բառերի միութիւնը ցույց տալ: Ըստ այսմ, միևնույն բառը կարող է այսինչ նախադասության մեջ տոն ունենալ, մյուսի մեջ՝ ոչ:*

Ընդհանուր օրենքն այն է, որ երբ մի քանի բառեր կողք կողքի չարված, ըստ իմաստի կազմում են մի խումբ, դրանցից մեկն է միայն ունենում տոն: Վեդայական Հնդկերենի մեջ կարող է պատահել, որ ամբողջ նախադասության մեջ միայն մեկ անգամ տոն լինի:

Որոշելու համար բառերի տոնը կարելի է տալ հետևյալ կանոնները:

1) Երբ բայը դրված է նախադասության սկիզբը, սովորաբար ունի տոն, իսկ երբ ներսումն է, չունի տոն: Այսպես է հատկապես սանսկրիտի մեջ, որ այս կետում ամենից ավելի ավանդապահն է: Հունարենը և լատիներենը ջնջել են այս կանոնը, և ամեն մի բայական ձև ունի իր չեչտը, որ մշտապես անփոփոխ ու հաստատուն է: Սակայն հունարենում, ինչպես և հայերենում, դեռ մնում են հին կանոնի հետքերը է=ἔστι բայի գործածության մեջ. որոնք ունեն «կա, ունի» իմաստով, դրվում են նախադասության սկիզբը և ստանում են չեչտ, իսկ «է» կական բայի իմաստով դրվում են ենթակայից հետո և չեչտից զուրկ են: Օրինակ՝

Են իմ երկու դստերք (Մն. ժթ. 8).

Է՞ ով քո աստ փեսայ (Մն. ժթ. 12).

բայց՝ Ես հող եմ եւ մոխիր (Մն. ժը. 28):

*2) Երբ բայն ունի **մի** նախդիր, կամ **մի**-ն է ստանում տոնը և կամ մյուսը, այսպես է սանսկրիտում՝* pra bharati *կամ* prá bharati, *հունարենում նախդիրը միշտ անչեչտ է՝ թե բայից անմիջապես առաջ և թե նրանից հետո գտնված պարագային: Նույնպես են նաև նախադրությունները, որոնք իրենց հաջորդող գոյականի հետ կազմում են իբր մի բառ, ինչպես՝ ἀπὸ τοραμοῦ: Այդպես է նաև հայերենում, ինչպես՝ **ըստ նմա, ընդ նմա, առ այնոսիկ, վասն այնորիկ** և այլն:*

Ընդհակառակը, սլավականում հաճախ նախդիրն է չեչտյալ և գոյականը անչեչտ, ինչպես՝ ռուսերեն на берег, по морю: *Նման գործածության հետքեր կան նաև հունարենում (ինչպես՝ διαπέντε հինգ ձայն, ὑπέρμορον հակառակ ճակատագրին), որոնք ցույց են տալիս, որ կանոնը հնագույն հունարենում էլ կար:*

3) Երբ երկու բառ միանալով կազմում են մի բարդ բառ, սովորաբար մեկը միայն ստանում է տոն, ինչպես՝ սանսկրիտ dvā́– daga, *հունարեն* δώ – δεκα *«երկուտասան» Νέαπολις «նորաքաղաք» χνόσονρα «չնագի» և այլն: Բայց վեդայական հնդկերենում ունենք* jā́spátis *«ընտանիքի գլխավորը» մի տոնով կամ* jā́spátis *երկու տոնով:*

4) Ցուցականները, հարաբերականները, որոնք անկախ գործածությամբ տոն կամ չեչտ ունեն, կցվելով ուրիշ բառերի հետ, տոնից զրկվում են, օրինակ՝

Զայս արարէք և ապրիք (Մն. խբ. 18):

Յետ բանիցս այսորիկ (Մն. խբ. 1):

5) Նախորդ գլխում տեսանք այդ արդեն վերջահար (enclitique) *կոչված ձևերը: Մի խումբ բառեր կան, որոնք երկրորդական արժեք ունեն և, կցվելով իրենցից առաջ գտնված մի կարևոր բառի ծայրին, գործ են ածվում նրա հետ իբր մի բառ և ըստ այսմ կորցնում են իրենց տոնը: Տրված օրինակների վրա կարող ենք ավելացնել արևմտյան հայերենի **մը, մըն,** բարբառների մեջ **ըմ, մ,** որ զրարարի **մի, իմն** ձևից են:*

Միօրինակության սկզբունքը լեզվի մեջ ուժում է, որ միևնույն պաշտոնն ունեցող բառերը նույն ձևն էլ ունենան, օրինակ, բոլոր հոգնակիները միատեսակ կազմվեն, բայերի բոլոր առաջին դեմքերը նման ձև ունենան, նույնը՝ երկրորդը, երրորդը, բոլոր դերանունները նման ձևով հոլովվեն և այլն:

CATACHRÈSE*
[Զարաչահույթ]

Կոչվում է այն ձևը, երբ մի բառ գործ է ածվում ոչ իր տեղում (անհամատեղելի բառերի կապակցություն, համմտ. դառը ժպիտ)

օրինակ՝ նավթի ջրհոր
քամու ջաղաց
ֆր. ferré d'argent
aller à cheval sur un bâton.

Ստորադաս parataxe hypotaxe *(կամ* subordonnée) Parataxe *(անչափակապ նախադասություն – Խ. Բ.) ենք կոչում, երբ մի քանի անկախ նախադասությունները իրար հետ զուգահեռ ու համադիր չարված են կողք կողքի՝ հարադիր ձևով:*

Բարևկամս նկավ ինձ մոտ, ես ասացի նրան. «Այսօր ինձ մոտ մնա ճաշի». Ասաց. «Ոչ. Գործ ունեմ. չեմ կարող. վաղը կարծեմ ազատ կլինեմ. կգամ»:

Hypotaxe *(չաղկապավոր ստորադասական նախադասություն – Խ. Բ.) կկոչվի, երբ այդ բոլորը կապված են իրար զանազան չաղկապներով ու մակբայներով, և ամբողջը կազմում է մի միություն, օրինակ՝*

Երբ բարևկամս նկավ ինձ մոտ, ես առաջարկեցի, որ մնա ճաշի, բայց նա մերժեց՝ առարկելով, թե չի կարող, որովհետև գործ ունի. սակայն խոստացավ վաղը գալու, ըստ որում կարծում էր, թե վաղը ազատ կլինի:

Paratèxe *ձևը ժողովրդական է. մյուսը ուսումնական և հատուկ գրքի. Ս. Գրքի լեզուն* parataxe *է, բայց հասցրած գեղեցիկ վանմության, կատարելության:*

ELLIPSE (ՋԵՂՋՈՒՄ, ԲԱՑԹՈՂՈՒՄ)

Այս բառով հասկանում են զեղչումը կամ ջնջումը այն բառերի, որոնք ինքնին հասկացվում են, և նրանց գործածությունը ավելորդ է:

Ellipse *երկու տեսակ է, բառի և նախադասության:*

Առաջինից օրինակներ.

Իշխան եմ ծախում (ձուկը).

Կարմրաշապայտ (ձուկ) ուտո՞ւմ եք.

Արաբական fondeq *հայերեն* **պնդուկ** *և* **«կաղին»**, *ձևն էր հունարեն* **կարիոն պոնտիկա**, *որ է* **«կաղին պոնտական»** *(այսինքն Տրապիզոնի, որ լավագույն տեսակն է),* **կաղին** *բուն բառը ջնջելով՝ պահել են ածականը, որ է* **«պոնտական»:**

Լուսավորիչի **աջը** *(այն է՝ ձեռքը). մինչև անգամ Օրմանյանի Ազգապատումի մնջ կարդացել եմ «այդ* **աջը** *ա՞ջն է, թե՞* **ձախն** *է» (զեղչված է ձեռքը – Խ. Բ.):*

Նախադասությունների զեղչումը ավելի սովորական է և շատ անգամ դրվում է հարցականի տակ, օրինակ՝

1. Այլևս չեմ գալու քեզ մոտ: – Որովհետև՞: – Որովհետև ոչ մի անգամ չեկար ինձ տեսնելու:

---

* *Տե՛ս* **Armand Nazarian,** Dictionnaire pratioque français-russe-armenien ges termes linguistiogues (**Ա. Հ. Նազարյան,** *Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Երևան, 1993, էջ 92*): (**Խ. Բ.**):

2. Մինչև վաղը պետք է վերադարձնես.– Եթե ոչ.– Եթե ոչ, այլևս գիրք չեմ տա քեզ:

3. Եղբայրս ծանր հիվանդացավ.– Նորի՞ց:

4. Դասերդ հաջող գնո՞ւմ են.– Ոչ այնքան:

5. Երբ որ տեսնեմ, մի լավ պիտի խայտառակեմ նրան.– Արժե՞:

6. Ես խնդրում եմ, որ վաղը անպատճառ գաս ինձ մոտ.– Որպեսզի՞.– Որպես դի գնանք պտույտի:

7. Գլխին կանաչ է կապել.– Այսի՞նքն.– Թուրքացել է:

8. Ասացի՞ր.– Տեսա՞ր, որ... (տեսա՞, որ ասեի):

Ռուսերեն всё, *գերմաներեն* alle *հաճախ նշանակում են «չկա», այսինքն բոլորն էլ վերջացել է:*

9. Գնալո՞ւ ես բժշկի մոտ.– Երկու շաբաթից:

10. Կատարեցի՞ր նրա ասածը.– Անմիջապես:

11. Մի բաժակ ջուր տուր.– Իսկույն:

12. Ո՞ւմ համար են այս բոլոր պատրաստությունները.– Հյուրերի:

13. Շուկայում վաճառո՞ւմ են սրանից.– Կարծեմ:

14. Կարո՞ղ եք այս տետրակը արտագրել մի օրվա ընթացքում.– Իհարկե:

[ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ]

ԵՆԹԱԿԱ

Ենթական Արիստոտելյան տրամաբանությամբ հունարեն ὑποκείμενον բառի թարգմանությունն է, սրա արմատն է ὑπο-κεῖται «տակը պառկել» այն է՝ «ծառայել իբր հիմք», որից և «խոսքի նյութ կամ առարկա լինել»: Ենթական նա է, որ կազմում է խոսակցության նյութը կամ առարկան, մինչդեռ նրա մասին տրված տեղեկությունը կամ ասված բանը կազմում է κατηγόρημα «ստորոգելին»:

Մալայան Ple-Temer *լեզվի մեջ, որ գտնվում է շատ նախնական վիճակում, ենթական դրվում է նախադասության սկզբում, բայից առաջ, և ենթակայից հետո դրվում է համապատասխան դեմքի դերանունը, իսկ եթե ենթական դերանուն է, նույնը կրկնվում է: Օրինակ՝*

Karēi na guri balign te –

Կարևին (նա) նստած է վերևում:

iurl na akogn Galogn-adek

Մեռելների ոգին (նա) կախված է Գալոգնադևկի վրա:

Ugn ī url ugn gēi lanoi hubi –

Նրանք հոգիները (նրանք) ուտում են ստվերները yam-*երի* (shadow op yams)

ha ha-tugn –

Դու-դու վախեցել ես:

iē i-tugn –

Ես – ես վախեցել եմ:

(Schebesta, IRAS 1931, 647)

Հնդեվրոպական նախալեզվում երբ ենթական չեզոքի հոգնակին էր, բայը դրվում էր եզակի, որովհետև, ինչպես հայտնի է, չեզոքի հոգնակին իրապես հոգնակի չէր, այլ հավաքականի եզակին: Այս կանոնը չարունակվում է Հին Ավեստայում (Գաթաներում) և ավելի հաճախ՝ Հունարենում:

Ինչպես՝ τα τῶα τρέχει

Այս կանոնի հետևանքն եղավ այն, որ բալթյան խմբի մեջ բայերի հոգնակի 3-րդ դեմքը ընկավ, և եզակի 3-րդ դեմքը բոնեց նաև նրա տեղը (չեզոքը ընդհանրացնելով):

Թուրքերենի մեջ այս կանոնը ավելի ընդհանուր է, ամեն հոգնակի ենթակա կարող է ստանալ եզակի բայ, ինչպես՝ ǒojuklar geldi *տղայքը եկավ (փոխանակ՝* **եկան***):*

Նույն ազդեցությամբ անչուշտ հայերենի մեջ էլ ունենք՝

Աս բանները վերջացավ.

Երբ ենթական եզակի է, բայն էլ եզակի է:

Երբ ենթական հոգնակի է, բայն էլ հոգնակի է:

Երբ ենթական մի քանի բառից է, բայը հոգնակի է, ինչպես՝ Որմիզդ և Արհիմն յղացան յարգանդի մօր իւրեանց (Եղն. 113):

Երթային զՀետ Յիսուսի՝ Սիմուէլն Պետրոս և միւս աչակերտն (ՅՀ. ժր. 15):

Երբ ենթական երկու հոմանիշներից է բաղկացած, բայը եզակի է մնում:

Դողումն և սոսկումն ունի զարարածսն (Եղն. 16):

Երբ ենթական հավաքական բառ է, թեև եզակի, բայը լինում է հոգնակի:

Դիպեալ կային ամբոխն (Բուզ. դ. 3):

Թվականի հետ դրված ենթական, երբ եզակի է, բայը մնում է եզակի, ինչպես՝

Եւթն աստղ միայն է գնայուն (Եղն. 199):

Եթե գոցի ի Սողոմ յիսուն արդար (Մն. ժր. 26):

Զի կարելի ենթական դնել և բայը թողնել անհայտ, օրինակ՝

Ինֆորմացիոն բյուրոյի հաղորդագրությամբ, Նորվեգիայի առափնյա ջրերում գտնվող ձկնորսական **նավերը** *ոչ երկարատև գնդակոծությունից հետո (իրենք են գնդակոծվել, թե իրենց են գնդակոծել), անգլիական զինվորներն ափ են դուրս եկել և գերի են վերցրել գերմանական և նորվեգական մի քանի ձկնորսներ (Սովետական Հայաստան, 1941, մարտ 6, ա էջ, 5-րդ օրինակ): Ենթական է* **նավերը**, *բայը չկա, այնպես որ հայտնի չէ, թե ինչ եղան այդ նավերը կամ ինչ արին:*

Ենթական կարող է մի քանիսը լինել և նույնիսկ աննգական բառ ունենալ իր մեջ, և բայը նորից դրվել եզակի, օրինակ՝ **զի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք:**

Կոչեցաւ եւ Յիսուս եւ աչակերտքն նորա ի հարսանիսն (ՅՀ. բ. 2):

Գրաբարի մեջ աննգական ենթական ստանում է հոգնակի բայ:

Աչխարհաբարում աննգական բառերը եզակիի վերածված լինելով՝ ստանում են եզակի բայ, օրինակ՝

Շրթունքը կարմրել էր:

Աչքը ուռել էր:

Արցունքը հոսում էր:
Սրանց հոգնակին լինում է՝
Շրթունքները կարմրել էին:
Աչքերը ուռել էին:
Արցունքները հոսում էին:
Ըստ այսմ սխալ են հետևյալ ձևերը.
Նրա բարակ շրթունքը կապտել էին (Շիրվանզադե, Եժ., 1930, Դ. 222):
Օրիորդի շրթունքը դողում էին (ՀՀ 242):
Մաքուր արցունքը դուրս ձգտեցին (ՀՀ 368):

*Երբ ենթակաները միացած են **կամ** բառով, բայը եզակի է դրվում. «Պատմագետը կամ քննադատը ձգտում է ամեն կերպ ապացուցել». սխալ է ասել՝ «Պատմագետը կամ քննադատը ձգտում են ամեն կերպ ապացուցել» (Տերտերյան, Նոր ուղի, 1927 թ., ՀՀ 252):*

Հավաքական անունների հետ կարելի է դնել նաև հոգնակի բայ. այսպես անգլերեն people *«ժողովուրդ», բառը միշտ հոգնակի բայ է պահանջում. ինչպես՝*

The people are never satisfied
Ժողովուրդը երբեք գոհ չի լինում:

Բայց ֆրանսերենը՝ միայն եզակի՝ le peuple n'est jamais content.

Ուրիշ բառեր կարող են լինել թե՛ եզակի և թե՛ հոգնակի.

օր. the jury was *կամ* were unanimous
ժյուրին էր կամ էին միաձայն
the committee have made their report
Հանձնաժողովը տվին! իրենց! տեղեկագիրը:

Բրյուսներեն երկու ենթակա երբ բայից առաջ են դրված, պահանջում են հոգնակի բայ, բայց երբ հետո են դրված, բայը եզակի կլինի, ինչպես՝

Pierre ha Jacq ne hrant nitra
Պետրոս և Ժակ չեն անում ոչինչ.

բայց՝ me gred ne hra nitra Pierre ha Paul.
Կարծես չի (եզ.) անում ոչինչ Պետրոս և Պողոս:
(Guillome, p. 108)

Գրողները երբեմն այլ բան են մտածում և այլ բան են գրում, որով նախադասության մեջ բառը դուրս է գալիս այլ ձևի, մյուս մասը մի ուրիշ ձևի, ուրիշ խոսքով իրար հակասական կամ քերականական կանոններին հակառակ: Օրինակ՝

*Հին հոգևորականության ավատական կենցաղի առանձնահատուկ այդ կարգերը, որ հետևանք էին նախարարական միջավայրի և զինվորական ազնվականության ազդեցության, այնքան կարևոր մի փաստ է, որ... (Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, 1934, ՀՀ 145): Գրողն անչուշտ մտածել է **«... կարգերի գոյությունը»** որով և դրել է «մի փաստ է», բայց գրել է «կարգերը», ուստի և առաջացել է «կարգերը մի փաստ է» անկանոն ձևը:*

Այնպես չոր, այնպես սառն էին մոր խոսքերի տոնը (Միրաս. Զգրված օրենք. 56).- Հեղինակը մտածում է խոսքերի մասին և չի հիշում տոնը, ուստի դուրս է նկել **տոնը էին** *(նզակի ննթակա և հոգնակի բայ):*

Բարբարոսները յուրաքանչյուրն ըստ իր բնավորության է վարվում. (մտածել է **յուրաքանչյուրի** *մասին, բայց մոռացել է բարբարոսները). պետք էր ասել՝* **բարբարոսներից յուրաքանչյուրը:**

Երբ նախադասությունը այնպես է կազմված, որ նեթ ննթական կապես հոգնակի է, բայց ձևապես եզակի է, բայը դրվում է եզակի:

Սխալ է ուրեմն ասել՝

Ութ տարի էր, որ նա իր քրոջ հետ հորեղբոր հովանավորության ներքո էին (Շիրվանզադե. երկ. լիակ. ժող.. 1930, հտ. Դ, էջ 211):

Արաբերենում երբ ննթական դրված է բայից հետո, բայը կլինի միշտ եզակի, նույնիսկ եթե ննթական հոգնակի լինի:

ՍԵՌԻ ԽՆԴԻՐ

Սեռի խնդրի հայցական ձևը ուղղականին կամ տրականին նմանվելուց առաջանում էին զանազան թյուրիմացություններ, օրինակ՝

Սակայն հայեր արթուն կը գտնուին, լատիններն ալ կը կզգուշացնեն, և թարգմանը կը յաջողի... (Ազգապատում, 4094):

– Հայտնի չէ, թե հայե՞րը լատիններին են զգուշացնում, թե լատիններ՝ հայերին:

Նրան հանձնեցին Մարտիրոսին. հայտնի չէ, թե **զնա՞** *յանձնեցի Մարտիրոսին, թե զՄարտիրոս յանձնեցի նրան:*

Ադաղ-Նիրարին այս ներքինիին հանձնեց Շամիրամին (Հայոց անձ. բառ. Դ. 138).- Հայտնի չէ, թե զներքինի՞ն հանձնեց Շամիրամին, թե զՇամիրամ հանձնեց ներքինիին: Հասկացվում է միայն պատմության ընթացքից:

Իսպաներենի մեջ էլ սեռի խնդիրը ճիշտ արևելահայերենի պես անչունչների համար դրվում է հայցական, շնչավորների համար՝ տրական, օրինակ՝

he olvidado la flave
մոռացել եմ բանալին.
he visto a su hermano
տեսել եմ եղբորդ:

ԲՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

Շվեդերենում հոլովի վերջավորություններ չլինելով՝ տեղից է իմացվում, որ տրական հայցական նույն են, ուստի նախ դրվում է **տրականը,** *հետո* **հայցականը,** *օրինակ՝*

Modern gav sin son en bok
Մայրը տվեց իր որդուն մի գիրք:

Բայց երբ մի նախդիր լինի, որ որոշի տրական լինելը, չարքը փոխվում է, այսպես, վերի խոսքը դառնում է՝

Modern gav en bok åt sin son.
Մայրը տվեց մի գիրք **ցիւր որդի**:
(Poestion, Schwed. 148)

ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ

Հատկացուցիչը հատկացյալից կարող է բաժանվել մի ամբողջ հարաբերական միջանկյալ նախադասությամբ, օրինակ՝

Եւ ամենեցուն, որ ի ժողովրդեանն էին, աչք ի նա հայէին (Ղկ. գ. 20):

Այսպես է նաև հունարեն բնագրում.

καὶ πάντων ἐν τῇ συναγῇ οἱ᾽ ὀφθαλμοὶ
ἦσαν ἀτενίξοντες αὐτῷ,

որին նման է նաև լատինը՝

et omnium in synagoga oculi erant intendentes in eum.

Բայց նույնը չէր կարողացել պահել ֆրանսերեն et les yeux de tous, dans la synagogue étaient fixes sur lui *անգլերեն* and the eyes of all in the synagogue were fastened on him *(Թիրաքեան, Հայ-երեւան, ուսումնասիրութիւն, էջ 173):*

Հատկացուցիչը կարող է հատկացյալից առաջ դրվել, ինչպես՝

Ընդ **եղեզան** *փող ծուխ ելանէր,*
Ընդ **եղեզան** *փող րոց ելանէր (Վահագնի ծնունդը):*

Կարող է այս դիրքի մեջ նաև մի հարաբերական նախադասությամբ բաժանվել, ինչպես՝

Զի ծանիցես զրանիցն որոց աչակերտեցար զճշմարտութիւն (Ղկ. Ա 4):

Այսպես է նաև լատինը՝

ut cognoscas earum verborum, de quibus eruditas es, veritatem.

Երբ երկու հատկացուցիչ ունեն միևնույն հատկացյալը, այս հատկացյալը դրվում է հոգնակի, օրինակ՝

Երեւանի թեմական դպրոցը և Ղարաբաղի թեմական դպրոցը. ասելու փոխարեն ասում ենք, Երեւանի և Ղարաբաղի թեմական դպրոցները:

Բայց սա հաճախ տեղիք է տալիս թյուրիմացության, և կարելի չի լինում որոշել յուրաքանչյուր հատկացուցիչի պատկանող հատկացյալի թիվը: Այս դեպքում կարող է լինել չորս դիրք. 1) երկու հատկացյալներն էլ եզակի են, 2) երկու հատկացյալներն էլ հոգնակի են, 3) առաջին հատկացյալը եզակի է, երկրորդը՝ հոգնակի, 4) առաջին հատկացյալը հոգնակի է, երկրորդը՝ եզակի: Այս դեռ եթե հատկացուցիչը երկու է, իսկ եթե երեք կամ ավելի լինի, տեսնք ինչպիսի թյուրիմացություններ և սխալներ կառաջանան:

Այսպիսի թյուրիմացության մի օրինակ տալու համար հիշենք հետևյալը:

Հ. Բ. Սարգսյան իր «Ագաթանգեղոսը և յուր բազմադարյան գաղտնիքը» գրքի մեջ, էջ 140, ասում է, «Տոհմային մատենագիրք մեր, Ագաթանգեղեայ յոյն օրինակի և Մակաբեացւոց գրոց **թարգմանիչներէն** *սկսեալ»: Այստեղից քաղելով բ. Կիւլիսերեան, Եղիշէ (Վիեննա, 1907), էջ 133–134 ծանոթագրությունում ասում է, թե «Մակաբեացոց թարգմանիչը միակ հոգի մը չէ», մինչդեռ Սարգսյանի միտքն այն էր, որ Ագաթանգեղոսը ունի մի թարգմանիչ, մակաբեացիք՝ ևս մի թարգմանիչ, երկուսը միասին լինում են* **թարգմանիչներ**:

Այսպիսի թյուրիմացությունների տեղիք չտալու համար լավագույնն է հատկացուցիչները հիշել առանձին-առանձին: Այսպես՝ վերի օրինակը՝

Ագաթանգեղոսի թարգմանիչը և Մակաբայեցոց գրքի թարգմանիչը և այլն:

Անգլերենում հատկացուցիչը ըստ սովորականին դրվում է հատկացյալից հետո, բայց կա նաև մի հին ձև, որ նրա հակառակն է, օրինակ՝

The house of my father
My father's house
Հորս տունը,

կամ ավելի երկար՝

the fortune of the sister of the wife of my brother
my brother's wife's sister's fortune,
իմ եղբոր կնոջ քրոջ հարստությունը...

ԲԱՑԱՀԱՅՏԻՉ–ԲԱՑԱՀԱՅՏՅԱԼ

Գրաբարի մեջ բացահայտիչի համաձայնությունը կարող է երբեմն տեղիք տալ թյուրիմացության և իմաստի երկդիմության, այսպես՝ Խորենացու գրքում, կա

*Ոմանք ի չարաբաստացն ասեալ զդիրսն Թևադորոսի մամուսատացվոյ, զվարդապետին Նեստորի և զաշակերտին Թևոդորի, գնային յաչխարհն Հայոց.– ուր վարդապետ **Նեստորի** և աշակերտ **Թևոդորի** լոկ բացահայտիչ են Թևոդորոսի, կարելի է առնել իբրև անկախ հատկացուցիչ և հասկանալ տարբեր մարդիկ (այս մասին տե՛ս վերը):*

Նույնպես Սեր. (կամ Անանուն պատմիչ, էջ 2–6):

*Եւ ի ժամանակի մահուան իւրոյ ետ (Հայկ) զնա կալուած ժառանգութիւն կադմեայ թոռին իւրում, որդւոյ Արամանիկայ, **եղբոր** Արամայիսի:*

Եղբոր *բառը կարելի է առնել թե իբր բացահայտիչ Արմենակի և թե իբր Կադմոսի, առաջին դեպքում Արմենակը լինում է Արամայիսի եղբայրը, երկրորդ դեպքում Կադմոսն է Արամայիսի եղբայրը: Եվ որովհետև գիտենք պատմությունից, որ Հայկը պապն է, որդին՝ Արմենակը, սրա որդիքը՝ Արամայիսը և Կադմոսը, ուրեմն երկրորդ ձևն է ճիշտ:*

Աշխարհաբարում բացահայտիչը կարող է բացահայտյալից առաջ դրվել և մնալ անփոփոխ և կամ ետ դրվել և այն ժամանակ համաձայնում է: Առաջին դեպքը կարճ ձևերի համար է, երկրորդ դեպքը՝ բառերի երկար շարքի համար, օրինակ՝

Ավարայրի դիւցազն Վարդանի եղբայրն էր:

*Կառուցման հաջող ընթացքը մեծապես կախված էր Ռաֆայելից՝ այդ գործի անմիջական պատասխանատուից: Այս դեպքում հաճախ դրվում է «իբրև» բառը, որպես օրինակ՝ «Կառուցման հաջող ընթացքը մեծապես կախված էր Ռաֆայելից՝ **իբրև** այդ գործի անմիջական պատասխանատուից»:*

*Բայց այս դեպքում անկարելի է բացահայտիչը դնել **իբրև** բառի պատճառով սեռական, օրինակ՝ ... իբրև այդ գործի անմիջական պատասխանատուի (Միրաս, Զգրված օրենք, 42):*

Բացահայտիչը և բացահայտյալը ընդհանրապես դրվում են նույն հոլովով, սակավ դեպքերում այս օրենքը չի գործադրվում, և բացահայտիչը մնում է ուղղական, օրինակ՝

Զայնու ժամանակաւ էր դուստր մի գնդեցիկ Անդովկայ ուրումն, մի ի նախարարացն նահապետին Սիսեաց (Բուզ. դ, ևժ):

ՍՏՈՐՈԳԵԼԻ

Թե անվանական և թե բայական նախադասությունների մեջ, եթե բայը ստորոգելիից հետո է, ստորոգելին հոգնակիի նշան չի վերցնում և միայն բայն է, որ դրվում է հոգնակի:

Ապա ուրեմն ազատ են որդիքն (Մտթ. ժե. 25):
Դուք յոյժ մոլորեալ էք (Մրկ. ժբ. 27):
Արթուն կացէք (Մրկ. ժգ. 35):
Սուրբ արա զնոսա (ՅՀ. ժէ, 17):

Եթե ստորոգելին բայից հետո է, կարող է ստանալ հոգնակի նշան կամ ոչ:

Դուք եղերուք պատրաստք (Մտթ. իդ. 44):
Շատ հեռի են և աննմանք (Փարպ., էջ 48):
Հանդերձք նորա եղեն սպիտակ (Մտթ. ժէ. 2):
*Հինգն ի նոցանէ **յիմարք** էին և հինգն՝ իմաստունք (Մտթ. իե. 2).*

*առաջինը հոգնակի չպիտի լիներ, բայց դրվել է վերջինի պատճառով: Ստորոգելին **միայն** ուղղական-հայցական հոլովով կարող է լինել:*

Աշխարհաբարում ստորոգելին չի համաձայնվում. սխալ է գրել օրինակ՝ «Խաղարք մահմեդականներ, քրիստոնյաներ, հրեաներ և կռապաշտներ են» (Խալաթեան, Արաբ. մատեն. տպ. Վիեննա, 1919, էջ 28): Պետք է ասել մահմեդական...:

ՀՈԼՈՎՆԵՐ

ՈՒՂՂԱԿԱՆ

Ուղղականը *բառի ուղիղ ձևն է. շատ դեպքերում նույնանում է* **հայցականին:** *Ուղղականով են դրվում* **ենթական, ստորոգելին, կոչականը:**

ՍԵՌԱԿԱՆ

Սեռական հոլովն ունի մի քանի վերջավորություններ:

Genetivus subjectivus – *օրինակ՝ Միքայելի մահը, արյան հոսումը,*
Genetivus possesivus – *ձիու ոտքը,*
Genetivus originis – *Համադանի էշ, Թուշի պանիր,*
Genetivus objectivus – *Բարեկամիս հիշատակը, գերու սպանությունը,*
Genetivus partitivus – *տես վերը,*

Genetivus qualitativus — *ծովի ձուկ, գինվորի գլխարկ.*

Genetivus epexegeticus — *Շիրազի նահանգը, իսլամի կրոնը:*

Սեռականը Հնդկական sindhī *լեզվում չորս տեսակ վերջավորություն ունի* jo, sandō *և սրանց նվազականը* jaṛō, sandiṛō: *Վերջին երկքը գործածական են* **ի բանաստեղծութիւնս,** *իսկ* jō *սովորական է: Ուրիշ Հնդարիական լեզուների նման սեռականը համարվում է* **ածական** *և հոլովվելուց հետո՝ սեռով, թվով և հոլովով համաձայնում է այն գոյականի հետ, որին վերաբերում է (հատկացյալ), մոտավորապես նեմ հայերեն ասելիք* **Լևոնի գրքերից** *ասելու տեղ՝* **Լևոններից գրքերից** (Grierson, *Հտ. 6, մաս 1, էջ 32*):

Այսպես է նաև Հնդկական Քաշմիրի լեզվում: Օրինակ՝ ṣūra *գող,* gara *տուն բառերով* sondu *սեռականի մասնիկով՝*

ṣūra-sondu gara *գողի տունը.*

ṣūra-sandis garas *գողի տան (տր. հլ.).*

ṣūra-sandi gara *գողի տնից (բց.).*

ṣūra-sandyau garau *գողի տներից:*

(Grierson, *Հտ. 8, մասն 2, էջ 275*):

Garier *ամերիկյան լեզվի մեջ սեռականը կազմվում է այսպես. դրվում է հատկացուցիչը, հետո հատկացյալը՝ ստացականով, ինչպես՝* tsuten u-tserh — **տղա իւր գլխարկ** *«տղայի գլխարկը»* (Mirice, Carr, Languge, *էջ 105*):

Այս ոճն ունի կովկասյան լեզուներից արխազ, ուրիխ, կաբարդին, օրինակ՝ արխզ. a-cə a-xə — **ձին իւր գլուխ** = *«ձիու գլուխը»* (Dirr, Einfutr, 40), *որ նույնն է մնում թուրքերեն* labam- -ń evi, *Հունգար.* azatyá-nak a háza, *գերմ.* meinem Vater sein Hans *ձևերի հետ:*

Պոլինեզյան լեզուների մեջ երկու տեսակ սեռական կա, տևական և ժամանակավոր. օրինակ՝ «մարդու տունը» ուրիշ տեսակ է արտահայտում և «մարդու գլուխը» ուրիշ (անդ, էջ 95): Wöundt, Vlkerps. 1, Բ *մաս, էջ 93. նեգրական* wolof *լեզուի մեջ 4 տեսակ սեռական կա. 1) չատ մոտիկ է. օրինակ՝* kar u burbā *թագավորի տունը (չատ հետու),* kar burbā *(քիչ հետու),* kar u burbi *(մոտ),* kar u burbu *(չատ մոտ) (անդ, էջ 95):*

* * *

Ամերիկյան, մալայան, ալթայական և այլն լեզուների մեջ սեռականը ստացականով կկազմվի. օրինակ՝ թուրքերեն *էվ քափուսու (տուն դուռ. իր) — տան դուռը:*

Սեռականի տեղ երբեմն գործ են ածում տրական. ինչպես՝ ժողովրդական գերմաներեն dem Peter sein Haus *(իմա՝ Պետրոսի տունը), ստորին լատիներեն* tribunus plebi, *փոխանակ՝* tribunus plebis (Wundt, Völerps. 1, Բ *մաս, էջ 93*):

Հետաքրքիր են հատուկ անուններից և մականուններից առաջացած բառերի նորանոր առումները: Օրինակ՝ **կայսր** *(տե՛ս Արմ. բառ., էջ 940): Այս բառի ծագմանը և ստուգաբանությանը ծանոթ է նույնիսկ Վարդան Պատմիչը, որ գրում է իր Պատմության մեջ, տպ. Վենետիկ, 1862, էջ 33. «Եւ օգոստոս երկրորդ ինքնակալ գնի Հուլիոսի որ ասին Փորահան, որ և կայսր կոչեցաւ»:*

ՏՐԱԿԱՆ

Տրական հոլով **բնության խնդիրը** *ձևով նույնն է սեռականի հետ և երբեմն չատ չնչին կետով միայն տարբերվում է նրանից, պետք չէ սխալմամբ չփոթել այդ երկուսը, օրինակ՝*

Շապուհ հայոց թագաւոր եղաւ.

Շապուհ հայոց թագաւորն եղաւ:

Առաջինի մեջ **հայոց** *տրական է, իսկ երկրորդի մեջ՝ սեռական, և այդ որոշում է միայն* **թագավոր** *բառի վրա դրված* **հոդը,** *բայց կարելի էր նաև առանց որևէ տարբերության ասել՝*

Շապուհ հայոց թագավոր դարձավ (տր.).

Շապուհ հայոց թագավոր դարձավ (սեռ.):

Արևելյան հայերենում երկուսի տարբերությունը ավելի պարզ է, այնպես որ վերի ձևերը պիտի ասեինք՝

Շապուհ հայերին թագավոր դարձավ (տր.).

Շապուհ հայերի թագավոր դարձավ (սեռ.):

Եվ եթե արևմտահայ մի հեղինակ ուշադրություն չդարձնելով **ն** *ձայնը մոռանա, սխալ գրած կլինի, օրինակ՝ Մեր գործարանը և նրանց դպրոցը միաժամանակ շնչին են միևնույն գյուղին (Սիրաս, Ձգրված օրենք, էջ 34), այստեղ* **ն** *հոդը պետք է հանել շնչ բառի վրայից, եթե ուզում ենք, որ* **գյուղին** *տրական մնա, կամ պետք է հանել* **գյուղին** *բառի վրայից, եթե ուզում ենք, որ* **գյուղին** *սեռական լինի, երկուսը միասին (ինչպես է վերևում) ճիշտ չէ արևելյան հայերենում:*

Ուղղականի և հայցականի նույնությունը պատճառ չէ, որ ենթական ու սեռի խնդիրը չփոթվեն իրար հետ: Եվրոպական լեզուներում այդ չփոթությունը վրացվում է դասավորությամբ, նույնը նաև կատարվում է արևմտյան գրականում: Բայց այստեղ կա նաև մի ուրիշ միջոց: Ամենից ավելի դժվար դեպքում, այսինքն երբ ենթական ու սեռի խնդիրը հատուկ անուն են, արևմտյան գրականը դժվարությունից դուրս է գալիս՝ ենթական թողնելով առանց որոշիչ հոդի (ինչ որ սովորական երևույթ է արևմտյան գրականում), և որոշիչ հոդով օժտելով սեռի խնդիրը (որ նույնպես օրինական ու սովորական երևույթ է արևմտահայ գրականում): Օրինակ՝

Բայց օրին մեկը Գամերը-Սուլթան է (ուղղ.), յանկարծ իր մոտ հրավիրեց Խօճա-Պաշին (Հյց.): (Տե՛ս Լևոն Մնսրոպ, Ջատե, Փարիզ, 1945, էջ 149):

Տիգրան իր քով կանչեց Միհրդատը:

Լևոն իրեն ժառանգ և հաջորդ նշանակեց Ջապելը:

Սեռականը տրականի հետ ձևով նույն լինելու պատճառով կարող են նախադասության մեջ չփոթվել իրար հետ, ուստի կարևոր է, որ գրողը սեռականը գոյականի մոտ, իսկ տրականը բայի մոտ դնի: Օրինակ՝

Դժվար թե կարելի լինի այդ աքսիոմները մի բուչմինի կամ ավստրալիացի մի նեգրի ապացույցի միջոցով հասկանալի դարձնել (Էնգելս, Բնության դիալեկտիկա, Թրգմն. Հ. Հարությունյան և Ա. Առաքելյան, Երևան, 1936, էջ 118):

Պետք էր ասել ... մի նեգրի հասկանալի դարձնել ապացույցի միջոցով: Վերևի ձևով այնպես է հասկացվում, իբր թե ապացույցը նեգրը կամ բուշմեննն է տալիս: Խոսակցության մեջ այդպիսի զգուշությունների կարիք չի լինում, որովհետև չնչտը, տոնը կամ դադարը ճշտում են իմաստը:

Հայցական սկսեց գործածվել նաև «միջով» նշանակությամբ. Գնաց ի Հորդանան գետ և անցաւ զնա («ընդ այն») (Վրք. Հայ. 115):

Զուվաչներենում տրական և հայցական բոլորովին նույնն են թե եզակի և թե հոգնակի, դրա համար էլ քերականության մեջ իրը մի հոլով են համարում (Ашмарин, Матер., էջ 118–119):

Հինդուստանի լեզվի մեջ ուղղական և հայցական նույն են թե եզակի և թե հոգնակի, բայց երբ չփոթություն ծագի, և հարկ լինի խուսափել այդ չփոթությունից, հայցականը տրականի ձևով են դնում, օրինակ՝ ուղղական mard, տրական mard-ko, հայցական mard, բայց նաև mard-ko, այսպիսի հայցականը կոչվում է **ուղիղ հայցական**, մինչդեռ ուղղականի նմանը կոչվում է «անուղղակի»: Ուղիղ հայցականը հատուկ է ամեն տեսակի բառերին և հոլովման մեջ բռնում է առանձին տեղ (տե՛ս Bonnerjea, Gram. hindi, էջ 5–6):

Վրացերենում տրականը նաև իբր հայցական է գործածվում (Dirr, Einführ. 58):

Ռուսերենում չատ անգամ հայցականը անչունչ առարկաների համար ուղղական ձևով է, անչունչների համար սեռականի ձևով: Բայց— а հանդող բառերը ունեն առանձին հայցական, որ ձևով տարբեր է ուղղականից և սեռականից և տրականից: Դերանունների մեջ հայցականը միշտ սեռականի պես է:

Արխազները տրական չինելու համար գոյականը չեն հոլովում, այլ բայի վրա դերանուն են դնում, այսպես՝

Sara s-ad a-ci-s-t ueit — *Ես հայրս ձին իրեն ես տվի.*

«Ես ձին հորս տվի» (Dirr, Rinf. 41):

ՀԱՑՑԱԿԱՆ

Արևելյան հայերենում **հայցականը** ուղղականից չչփոթելու համար տրվում է նրան տրականի ձևը, բայց այսպիսով հիմա էլ տրականի հետ է չփոթվում: Օրինակ՝ Բաղեշյանը չտապեց Շահյանին ներկայացնելու պանի Զդանևիչին (Նար-Դոս, Մահը, էջ 206):

Եթե չգիտեիք թե քաղաքավարությունը պահանջում է նախ տղամարդին ներկայացնել կնոջը, չպիտի իմանայիք, թե ով ում են ներկայացրել, Շահյանը՝ պանի Զդանևիչին, թե՞ պանի Զդանևիչը՝ Շահյանին: Այստեղ էլ դարձյալ միակ ելքը բառերի չարքն է, նախ դրվում է հայցականը և հետո՝ տրականը, ինչպես և վերևի տողերում (տղամարդին ներկայացնել կնոջը):

Ի՞նչն էր, որ Մուշեղին հաճելի էր դարձնում Նատաչային, իսկ իրեն՝ վանելի (Սիրաս, Զգրված օրենք, 254):

Այստեղ ուրիշ ելք չկա դուրս գալու երեք ձևերի միջից, եթե ոչ պատմական ծանոթություններ, ուրիշ խոսքով տեղից է իմացվում, քերականական ուժ չունի:

Ջանազան լեզուների պատմական կյանքում առաջանում է հարցականի ձևի փոփոխուք: Պարսկերենի մեջ հարցականը միշտ նման է տրականին, ինչպես՝ ōrā dādam **նմա տուի, զնա տուի:** Marā gulf **ինձ ասաց.** mara kušt **զիս սպանեց:** *Սապաներենում անչունչ առարկաների հարցականը նման է ուղղականին, բայց չնչավորներինը նման է տրականին (օրինակ* a un hombre *զայր ոմն): Սլավերենում եղակի արականում անչունչ հայցականը նման է ուղղականին, չնչավորներինը՝ սեռականին: Ռուսերենում ավելի տարածվելով այս երևույթը՝ անցել է նաև հոգնակիին:*

Լհհերենում ավելի է բարդացել գործը. եզակիում արականի մեջ չնչավորի և անչունչի հոլովաձևի տարբերությունը պահելով հանդերձ՝ հոգնակիում արականի հետ մտցրել է «անձնականի» (personnel) *և ոչ անձնականի տարբերությունը: Անձ ցույց տվող առարկան բառերը հոգնակիում հայցականում լինում են սեռականի նման, իսկ ոչ անձնականները (անասուն և իրեր) ուղղականի նման է: Այսպիսով, հոլովման մեջ բացի սեռից, մտնում է նաև եզակիում անչունչի և չնչավորի տարբերությունը, իսկ հոգնակիում՝ անձնականի և ոչ-անձնականի տարբերակումը:*

Հինդուստանի լեզվում հայցական և ուղղական նույնն են և թե եզակի և թե հոգնակի. ուր որ դա չփոթի տեղիք է տալիս, գործածվում են տրական, այսպիսով, հոլովման մեջ մտցրել են անուղղակի հայցական (որ նույն է ուղղականի հետ) և ուղիղ հայցական (որ է տրականաձև հայցական): Անձնական դերանունների մեջ բոլորը ուղիղ հայցական են, անուղղակի չկա (այսպես նաև Պոլսի բարբառում), միայն երրորդ դեմքի մեջ չնչավորը տրականի նման է, անչունչը հայցականի (Bonnerjea, Gram. hindi, *էջ 12):*

Պորտուգալերենում հայցականը նման է ուղղականին. ուր որ չփոթություն է առաջանում, դնում են տրական, բայց հաճախ առանց որևէ պատճառի էլ դնում են տրական: Օրինակ՝

A espingarda tem ferdido (a) dous soldados.
Հրացանը ունի վիրավորած (տր.) երկու զինվոր:
A espingarda nao tem ferido (a) soldados
Onde e quando tem visto a men irmao?
Երբ և ուր տեսել եք (տր.) իմ եղբորը:
(Anstett, *էջ 175*)

Օսերենում հայցականը նման է ուղղականին, ուստի որոշյալ լինելու դեպքում սեռականը գործ են ածում իբր հայցական (Miller, Die Sprache des Oss. *էջ 44):*

Շնչավոր առարկաների հայցականը տրականի պես դնելու կանոնն էլ հաճախ անուշադրության է առնվում արևելահայ բարբառում, մանավանդ երբ գրողը ծագմամբ արևմտահայ է: Օրինակ՝

Նոր ու նոր թափով երևման սեղմեց կրծքին և ագահաբար սկսեց համբուրել նրան (Սիրաս, Զգրված օրննք, էջ 527):

Շնչավոր առարկաների համար հայցականի տեղ տրական դնելու կանոնը կամաց-կամաց տարածվում է նաև անչունչների վրա: Շատերը ուշադրություն չեն դարձնում դրա վրա, օրինակ՝

Դալկութիւնը պատում էր աչնան տերևներին (Միրաս, Զգրված օրննք. էջ 229):
Ջի բավարարում նոր դպրոցի պահանջներին (անդ. 252):
Ջովացներ իր խնամած, պահած ու պահպանած տունկերին (անդ. 315):
Մութին արդեն պատել է քաղաքին (335):
Որի մեջ զգացումը սպանել է դատողութիւնը (238):
Որպեսզի չարախինդ դիտեր աչխարհին (507):
Սկսեց խրախուսել իր անուչ հույսերին (Շիրվանզադե, հտ. Դ, էջ 242):

ՏՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՑՑԱԿԱՆ

Եթովպական kunama *լեզվում տրական և հայցական միչտ նույն ձևն ունեն և կազմում են* si *նտնադրութեամբ, օրինակ՝*

salanga gabara-si ibinke

Շնագայլը ագռավին բոնեց:

Իսկ երբ տրական և հայցական միասին լինին (օրինակ՝ ես աղջկանս տվի զորապետին), այդ դեպքում միայն տրականը կստանա հոդ:

Կոչել, անվանել *բայերը պահանջում են երկու հայցական, ինչպես՝ երկիրը կոչեց Հայաստան և այլն:*

Բայց կարելի չէ երկու հայցականներն էլ դնել որոչյալ, մանավանդ միացած ցուցական ածականով: Օրինակ, Բացարձակ սխալ է ասել՝

Սալմանասար Ա-ը Ուրուտարին կոչում է այն լեռնոտ երկիրը, որ... (Զափանցյան, Ուրարտուի պատմ., էջ 13):

Պետք է ասել Սալմանասար Ա-ը Ուրուտարի է կոչում **այն** *լեռնոտ երկիրը....*

Եվ կամ եթե չատ անհրաժեչտ է **այս** *ցուցականը, պետք է ասել՝*

Սալմանասար Ա-ը **այս** *Ուրուտարի բառով (կամ անունով) կոչում է այն լեռնոտ երկիրը...*

ՆԵՐԳՈՅԱԿԱՆ

Արևմտահայը վարժված չէ ներգոյականի գաղափարին, ուստի նույնիսկ [այն] հեղինակները, որոնք արևմտահայ ծագում ունեն, արևելահայ լեզվով գրելու ժամանակ հաճախ ներգոյականի սխալներ են անում, օրինակ՝

Հաջողվեց անցնել Հողժողկոմատում պաչտոնի (Միրաս, Զգրված օրննք, 52):
Աչխատեց նայել Մուչեղի աչքերում (անդ. 357):
Շարոն ուղղվեց և նայեց Ռաֆայելի աչքերում (անդ. 400):

ԿՈՋԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Կոչականը նախալեզվում կարող էր ստանալ իրենից առաջ o ձայնարկութիւնը, ավելի չեչտելու համար, այս սովորութիւնը պահում են հունարենն ու լատիներենը, օրինակ՝ ὦ ἄνδρες Ἀθηναῖοι..!

Բայց այս սովորությունը հետզհետե կրճատվեց թե հունարենում և թե լատիներենում, այնպես որ արդի հունարենում, ինչպես և եվրոպական նոր լեզուներում ծ բացականչությունը անսովոր է: Այսպես և հայերեն: (Meillet, Traité 499).

Կոչականը այն է, որին ուղղվում է խոսքը, բնականաբար դա կարող է լինել միայն անձ և կամ անձնավորյալ մի էակ.- Հայր, թո՛ղ դոցա, զի ոչ գիտեն: Պատանի՛ դու, արի:

Կոչականը իսկապես հոլով չէ, որովհետև նախադասության ոչ մի բառի հետ որևէ առնչությամբ կապված չէ, այլ մի պարզ ձայնարկություն է (Henry, Gram. comp. gr. 198): *Հայաստա՛ն, երկի՛ր դրախտավայր:*

Հայերենի մեջ ուղղական և կոչական նույն ձևն ունի, և մեզ համար կոչականը առանձին հոլով չէ:

Կոչական հոլովը կազմելու համար հայերենը առանձին մասնիկ չունի, ուղղականը նույնն է կոչականի հետ, ինչպես էր նաև հնդեվրոպական նախալեզվում, առհասարակ երկակիի և հոգնակիի մեջ, երբեմն նաև եզակիում: Հայերենի մեջ կոչականի նշանն է **չեչտը**, *որ դրվում էր նախավանկի վրա, այնպես էր նաև հնդեվրոպական նախալեզվում: Ռուսերենն էլ կոչական չունի, բայց բուլգարերենը ունի, թեև ուրիշ չատ հոլովներ ջնջել է. բուլգարերենում կոչականը կազմվում է մեծ մասամբ* **e, o** *վերջավորություններով և հատուկ է միայն անձ ցույց տվող բառերին և կամ անձնավորվող առարկաներին* (Щепкин, էջ 28):

Բարբառներում քրդերենից փոխառյալ կա կոչական ըստ սեռի՝ արական **ۆ**, *իգական* **ێ**:

Այսպես, քրդերեն babo *«ով հայր»,* daie *«ով մայր»: Վրացերենում ևս կոչականն ունի* **ո** (**ი**), *ինչպես,* **կացի մեփեո** [კაცო მეფეო] (Dirr, rinf, 58):

ՀՈԼՈՎՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ճիշտ որոշել յուրաքանչյուր հոլովի գործածությունը կամ սահմանը, դյուրին գործ չէ, որովհետև ազգերի հոգեբանությունը դանազան առնչությունների ըմբռնման մեջ նույնը չէ, ինչպես հաջորդ հատվածի մեջ պիտի տեսնենք: Այնուամենայնիվ, կարելի է տալ հնդեվրոպական հոլովների մասին հետևյալ ընդհանուր սահմանները:

[ՈՒՂՂԱԿԱՆ]

Ուղղական *հոլովը ցույց է տալիս գործողությունը կատարողը, այն որ նախադասության մեջ կոչվում է* **ենթական**, *երբ ենթական ունի ստորոգելի, այդ ստորոգելին էլ դրվում է ուղղական.-* **Հայրդ կանչում է, Հայրդ բարի է: Կոյրք տեսանեն, Լին արդարք երկոքին:**

ՍԵՌԱԿԱՆ

Սեռականն *ունի երկու գործածութիւն.*

1) Ցույց է տալիս ամբողջի մի մասը (իբրև ֆրանս. partitif) (Genetivum partitivus) *(և այս պարագային գործ է ածվում թե գոյականի և թե բայի հետ), այսպես՝*

լատ. unus eorum *նրանցից (սեռ) մեկը.*
fortis sinus virorum *մարդկանց հզորագույնը.*
ubicunque terrarum *երկրներից ո՛ւր էլ լինի.*

սանս. dvir ahnas

ընդ – ընդ այլ ճանապարհ գնացին. Մտթ. բ. 12
ընդ որ հաճեցայ. Մտթ. գ. 17:
եթե ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի
ըստ – ըստ երկիր անդր ոչինչ է (եզն. 219):
ըստ այն մի գիշերն այլ ոչ եմուտ առ կինն իւր (Բուզ. գ. 5):

«երիցս յաւուր», հունարեն τρὶς τῆς ἡμέρας *«երիցս յաւուր» համեմ.* τυρῶν ἀνυμένους *«պանիր վերցնելով».* λωτοτο φαγών *«լոտուս ուտելով».* լիթ. důk man důnos – *«տուր ինձ հացից» (հայցական* důna *«հացը» ձևով պիտի հասկացվեր՝ «ամբողջ հացը», մինչդեռ այստեղ միայն մի մասն է ամբողջութիւն): Այս ձևը չէ պահված հայերենի մեջ, այնուամենայնիվ հազվագյուտ ձևով կա, ինչպես՝* **ի միում աւուրց** *«(Ղկ. ե. 17): «յայլս արարածոց» (եզն. 108): «Մինչ աւուր կայ» (ՅՀ. թ. 4):*

2) Ցույց է տալիս պատկանելութիւն, ինչպես «տուն Մարկոսի» = լատիներեն՝ Marci domus (Genetivus possessivus) *և բայի հետ* ea domus Marci est **նրա տունը** *Մարկոսինն (սեռ) է և հայերեն՝ այր իցեն երկու հանդերձ, բացի սրանից երկու պարտապանք էին ուրումն փոխատուի (Ղկ. է. 41): Բացի սրանից գոյականի բոլոր խնդիրները դրվում են սեռական, ինչպես էլ որ լինի նրանց տրամաբանական կապը, օրինակ՝* **թշնամիների երկյուղը** – *լատիներեն՝* metus hostium *կարող է* **ըստ տեղույն** *նշանակել «երկյուղը՝ որ կրում էին թշնամիները մեղանից» և «երկյուղը՝ որ մենք կրում էինք թշնամիներից»: Կրկին սեռականների հաջորդութեամբ ասվում է հունարեն՝* τὴν τον λάχητος τῶν νεῶν ἀρχήν *«Լաբեսի հրամանատարութիւնն նաւուց», այսինքն՝ Լաբեսի կատարած հրամանատարությունը նավերի վրա:*

Ջանազան լեզուներ սեռականի այս գործածութեան տեղ դնում են **ածական,** *ինչպես՝ հռոմաներեն՝* domu Petrovu – *տուն Պետրոսեան, այսինքն՝ «Պետրոսի տունը»: Հոմերոսի մեջ ποιάντόν υἱόν զորդին Պոյասեան, այսինքն «զորդին Պոյասի՝ հոր Փիլոկտետի». նույնիսկ ասվում է «Նոյեան տապան», այսինքն՝* **Նոյի տապանը:**

Ածականի այսպիսի գործածութիւնը սովորական երևույթ է ռուսերենում, և թվում է, թե այդպես էր նաև հնդեվրոպական նախալեզվում:

Հայերենի մեջ, որովհետև սեռական և տրական նույն ձևն ունեն, ուստի դժվար է դանազանել ըստ ձևի, Թե ո՛րն է սեռական և ո՛րն է տրական: Այդ դանազանությունը երևում է սակայն ըստ պաչտոնի և մանավանդ նույնը դերանունի վերածելիս, որովհետև դերանունների մեջ սեռականն ու տրականը տարբեր են: Այսպես՝ երբ ասում ենք «Ձվախճան արդարոց, երանիմք արդարոց», առաջինի մեջ **արդարոց** *սեռական է, երկրորդի մեջ տրական, ըստ որում Եթե նույնները վերածենք դերանունի, կլինի* **զվախճան ձեր, երանեմք ձեզ,** *ուր* **ձեր** *սեռական է և* **ձեզ** *տրական:*

Ընդհանուր կանոնով պետք է ասել, Թե ուր որ բառի առնչությունը **գոյականի** *հետ է, հոլովը* **սեռական է,** *և ուր որ առնչությունը* **բայի** *հետ է, հոլովը* **տրական է:** *Այսպես՝ վերևում առաջինի մեջ* **արդարոց** *կապված է* **վախճան** *գոյականի հետ, ուստի սեռական է, երկրորդի մեջ՝* **երանել** *բայի հետ, ուստի տրական է:*

Սեռականը ավելի հաճախ գործածվում է նախադրությունների հետ, որոնց գոյական ծագումը հայտնի է մեծ մասամբ, ինչպես՝

Հետ, Հետո *(< Հետք բառից).*

ընդդեմ (դէմք *բառից)* *– ընդդեմ այսր բանի ասէ.*

Առանց *– առանց յապաղելոյ.*

ի վերայ *– ի նոյն յառաջին բանին վերայ պնդևալ (Բուզ. Դ. 3):*

Առաջ, առաջի
Վասն
Աղագաւ
Ցաղագս
} *(օրինակներ չի բերում– Խ. Բ.)*

Սեռականը *գործ է ածվում իբրև* **ենԹակա** *երկու պարագայում.*

1) Եթե դիմավոր բայի հետ կա նաև **անցյալ** *դերբայ, որ անմիջապես կապվում է նրա հետ:* **«Նորա** *հանևալ զամենեսին արտաքս, կալաւ զձևռանէ նորա (Ղկ. ը. 54): Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդն, ասէ ցնոսա (Մտթ. ժե. 10): Մատուցեալ աշակերտացն նորա ասին ցնա (Մտթ. ժե. 12): (Բայց սա անհրաժեշտ մի ձև չէ, և ունենք նույնը ուղղական՝ Մատուցեալ աշակերտքն նորա՝ ուղարկէին զնա (Մտթ. ժե. 23):*

2) **Հարակատարի** *և* **զերակատարի** *եզակի երրորդ դեմքի հետ. «եւ էր նորա հրաման, զոր չինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի» (Բուզ. գ. 6): Այսպես նաև՝ ասեալ* **իմ,** *ասեալ* **մեր,** *ասեալ* **ձեր** *և այլն: Զպայն իսկ իմ աչօք տեսեալ է (Եզն. 25): Ո՞չ իցէ ընթերցեալ ձեր (Մտթ. ժբ. 3):*

Այսպիսի դարձվածը Meillet, esq. 68 *կարծում է, որ կովկասյան աղդեցությամբ է և ենթադրում է, որ* **–եալ** *ձևով դերբայները նախապես գոյական էին:*

Սեռականը *հայերենում ցույց է տալիս* **ժամանակի տևողություն:** *Օրինակ՝ Աւուր միոյ ճանապարհ (Ղկ. ը. 44): Երկու օրվա ճամփա: Հինգ ամսվա ցորեն: Այսպես է նաև դանիերենում:*

Սեռականը ցույց է տալիս **գին, արժեք:** *Դանգի միոջ վաճառին (Մտթ. ժ. 29):*

Նախդիրների հետ քիչ է գործածվում. օրինակ՝

ընդ– *«փոխարեն, տեղը» («Բերէր ընդ միոյ երեսուն» (Մրկ. դ. 8):*

առ– *«համար» Առ ամոթոյ ձերոյ ասեմ (Ա. կոր, Ջ. 5):*

ի ներքս –
ի ներքոյ } *(օրինակները չի բերում – Խ. Բ.)*
Զկնի –
ի մէջ –

Սեռականը գործածվում է նաև **պարունակում** *ցույց տալու համար, ինչպես՝*
Ունէր չիչ իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ (չիչը դատարկ չէր, այլ յուղով լիքը) (Մրկ. ժդ. 3):

Ֆրանսերենում այդ դեպքում զանազանում են de *և* à:

ՏՐԱԿԱՆ

1) Տրականը ցույց է տալիս այն անձը կամ իրը, որին որ հատկացված է, գործ է ածվում բայի հետ:

Երանեսցեն ինձ ամենայն ազգք, զի արար ինձ մեծամեծս Հզօրն (Ղկ. ա. 49):
Ուլ մի երբէք ոչ ետուր ինձ (Ղկ. ժե. 29):
Ցուցէք ինձ գդահեկան (Մտթ. իզ. 19):
Կին քո Եղիսաբեթ ծնցի քեզ որդի (Ղկ. ա. 19):
Արբո ինձ սակաւ մի ջուր (Մն. իդ. 17):
Դուք ձեզէն վկայէք ինձ (Յհ. գ. 28):
Եղև նմա չար և ոչ ինչ (Գծ. իբ. 5):

2) Գործածվում է անվանելու համար մեկին՝

Մաքսաւոր մի, որում անուն էր Ղևի (Ղկ. և. 27):
Անուն նմա Յովհաննէս (Յհ. ա. 6):

Այս ձևը գիտի նաև լատինը՝ est tibi nomen

3) Մի խումբ բայերի հետ գործածվում է իրրև լրացուցիչ, այն է՝ **տիրել, իշխել, առաջնորդել, սաստել, թագավորել, հաղթել, հնազանդել, ծառայել, հավատալ, ողորմիլ, սպասել, ներել, կարոտել, կարոտանալ, ցանկանալ, վնասել, բարկանալ, սպառնալ, տեղեկանալ:**

Ապա թե ոչ տիրեսցեն **ինձ** *(Սղ. ժը. 14):*
Ինձ *ոչ յաղթեցին (Սղ. ճիը. 2):*
Ինձ *սպասեցին մեղաւորք (Սղ. ճժը. 95):*
Ներեցէք **ինձ** *(Յոր. իա. 3):*
Ցանկասցիս **նմա** *(Օր. իա 11):*
Որ բարկանայ **եղբօր** *իւրում (Մտթ. և. 22):*
Տեղեկացաւ Հայրենի **գործոցն** *(Ագաթ. 37):*

4) **Լսել** *բայի հետ գործածվելով, տալիս է նրան «հնազանդել» իմաստը.*

Դա որդի իմ ընտրեալ, **դմա'** *լուարուք (Ղկ. Թ. 35):*
Որ **ձեզ** *լսէ,* **ինձ** *լսէ (Ղկ. ժ. 16):*

Իսկ հայցականի հետ «լսել» իմաստն ունի:

Լսեր զրանս նորա (Ղկ. ժ. 39):

Այսպես է նաև սանսկրիտ, հունարեն և լատիներեն լեզուներում:

5) Մի խումբ ածականների հետ գործածվում է իբրև խնդիր այն է՝ **նման, հասարակ, համեմատ, արժանի, գիտակ, տեղյակ, հմուտ, խելամուտ, պիտանի, պիտո, անպիտան, հաճո, վնասակար, պատրաստ, պարտական:**

Այսպես և սրանցից ածանցված բայերի հետ.

Երկրորդն նման **սմին** *(Մտթ. իբ. 39):*

Ո՞ հաւասարեսցէ **ինձ** *(Սղ. ղգ. 16):*

Մեռեալք ոչ էին գիտակ և ոչ իմիք (Ժող., Թ. 5):

ԶՈնեսիմոս, որ երբեմն անպիտան էր քեզ, բայց արդ քեզ և **ինձ** *պիտանի (Փիլ. 11):*

Զէ՛ այնմ պարտական Աստուած (Եզն. 83):

Պարտական եղիցի մարմնոյ և արեան (Ա. Կոր. ժա. 27):

6) Անորոշ դերբայի հետ իբրև ննթակա.

Ի կալ նմա յաղաւթս՝ եղև տեսիլ երևսաց նորա այլակերպ (Ղկ. Թ. 29):

Ոմանք ի հրոյ էութենէ համարեն ունել սմա զբնութիւն (Եզն. 205):

7) Նախդիրների հետ զանազան իմաստով.

ըստ *«համեմատ, համաձայն»* **«Ըստ** *այնմ զոր ասեն» (Եզն. 108):*

Կացոյց սահմանս ազգաց **ըստ** *թուոյ հրեչտակացն Աստուծոյ.*

Ընդ *«հետը» խաղայր* **ընդ** *Իսահակայ որդւոյ իւրում (Մն. իա. 9):*

8) Զանազան նախադրութիւնների հետ.

Առընթեր *– Առընթեր նմա (Եզն. 25):*

ՀԱՅՑԱԿԱՆ

Հայցականն ունի *զանազան գործածութիւններ.*

1) Ներկայացնում է այն անձը կամ իրը, որի վրա կատարված է գործողութիւնը: Լուաւ զձայն երգոյ և զպարուց: Եղին հայր քո զեզն պարուրակ: Ուլ մի երիվք ո՛չ ետուր ինձ:

2) Ցույց է տալիս չարժում, այսինքն այն տեղը՝ ուր դիմում են.

Գնաց ի տուն իւր (Ղկ. Ա. 23): Լատիներեն eo Romam:

Հասաներ ի հրամայեալ տեղին (Բուզ. դ. 6):

Հայերենի և ուրիշ լեզուների մեջ չատ անգամ այս պարագային հայցականը ստանում է նախդիր, ինչպես հայերեն, **ի, առ, ընդ, ց,** *բայց նախնական վիճակում այդ անհրաժեշտ չէր, ինչպես վերի լատիներեն օրինակում և հայերեն՝*

Գնացին ճանապարհ՝ դառնայ յերկիրն:

Եղին աւուր միոյ ճանապարհ (Ղկ. բ. 44):

3) Ցույց է տալիս չափ կամ տարածութիւն և կամ տևողութիւն, ինչպես՝

Եկաց ամիսս երիս– Հուն. ἔμεινεν μῆνας τρετς

Թող **զդա** *այս ամ եւս (Ղկ. ժգ. 8):*

Լատիներեն quindecim pedes latus. *Հունարեն δέκα ϖαὶ διηκοσίους σταδίους ἀπεχοντι:*

Զվեց ամ ծառայեսցէ քեզ (Ել. իա. 2):

Իր զանազան գործածութիւններով հայցականը որոշում է բայի նշանակութիւնը, որ առանց նրան պիտի մնար անորոշ, ըստ որում հնդեվրոպական բայը հասարակ է, ունենալով թե ներգործական և թե չեզոք սեռ:

Նախալեզվում սովորական էր բայի հետ դնել մի հայցական խնդիր, որ բայի հայտնած գաղափարը նորից էր կրկնում (Meillet, Traité, 50) ինչ. հն. μάχην μάλεσθαι, λοῖγν λετσθαι, լատ. servitutem servire.

4) Զանազան լեզուների մեջ հայցականը գործ է ածվում բայի հետ իրրև ներքին լրացուցիչ, ինչպես՝ երկնան երկիւղ մեծ (Մրկ. դ. 40): Հունարէն ἐφοβήθησαν φόβο μέγαλ, սանսկրիտերէն capatham cepe «երդում երդուեց»— գերմաներէն er 'schwur einen schwur: *Այս խնդիրը կարող է լինել նույն բայի արմատից (ինչպես վերի օրինակներում), կամ նույն իմաստով՝ առանց նույն արմատից լինելու, ինչպես՝ εὔδειν γλυκύν ὕπνον ἄλγεα πολλα μογεειν. նույնը կարող է նաև ուրիշ լրացուցիչ ստանալ, ինչպես՝* ludum insolentem ludere.

Այս նույն ձևը ավելի սովորական է հայերենում ի, յ նախդիրներով, օրինակ.

Որ մկրտեցան ի մկրտութիւն Յովհաննու. (Ղկ. է. 29):

5) Յույց տալու համար լրացուցիչի վիճակը, իրը ստորոգեալի. Արձակեմ զդուստ նօթիա (Մրկ. ը. 3) Ստոիկեանքն ... զամենայն ինչ մարմինն կարծէին (Եղն. 227):

6) Առանձին դարձվածների մեջ, որոնք կազմված են գոյականից ու բայից, գոյականը առնելով հայցական.

Մշակքն գան հարին դնա (Ղկ. Ի. 10):

7) Ձև, օրինակ, կերպ, եղանակ ցույց տալու համար:

Զայն օրինակ.
Զնոյն օրինակ: { *(օրինակները չի բերում— Ա. Բ.)*

8) Անուն տալու համար.

Աս կամոի ումեմն Լիկիանոս կոչեցելոյ (Ագաթ. § 37):

9) Զանազան նախդիրներով.

Առ *— Առաքեն առ նա զոմանս ի փարիսեցւոց (Մրկ. ժր. 13):*

Եւ էին մերձ առ նա (Ղկ. ժե. 1):

Ց- *Առ, ցնա*

Ի *— զանազան իմաստներով, ինչպես՝*

Ի *ձեր կողմն է (Ղկ. Բ. 50):*

Բնակէր յերկրին ի կողմն Հարաւոյ (Մն. իդ. 62):

Որ կայր յոյն կորս ծովուն (ՅՀ. դ. 22):

Յամենայն ժամ տուր մեզ զՀացն զայն *(ՅՀ. դ. 34):*

Որոք ընկալցի զմանուկս զայս յանուն իմ (Ղկ. Բ. 48):

Նիւթոյ անուն ի նոցա լեզու ի մրուր մերձ է (Եղն. 110):

Յուսացի ի նա (Սղ. 49, 11):

Ոչ ինչ կարի յօգուտ էր (Եղն. 223):

Որ ասացան ի ձին Եսայեայ (Մտթ. ը. 17):

Ի *Հնգետասան օր Հասանէր (Բուզ. դ. 6):*

10) Զանազան նախադրութիւնների հետ.

Մոտ *զի մօտ էր ի քաղաք անդր տեղին ուր... (ՅՀ. ԺԲ. 20):*

Քան, *Ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր (ՅՀ. ժգ. 16):*

Իբրև *Մի՛ լինիք իբրև զկեղծաւորան տրտմեալք (Մտթ. գ. 16):*
Ոչ Սողոմոն... զգեցաւ իբրև զմի ի նոցանէ (Մտթ. գ. 29–30):
ընդ – *ընդ այլ ճանապարհ գնացին (Մտթ. բ. 12):*
ընդ *որ հաճեցայ (Մտթ. գ. 17:*
Եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի (Ղկ. իգ. 31):
ըստ – *ըստ երկիր անդր ոչինչ է (Եղն. 219):*
ըստ *այն մի գիշերն այլ ոչ եմուտ առ կինն իւր (Բուզ. գ. 5):*

* * *

Նոր հնդկական լեզուներից շատերը խտրութիւն են դնում չնչավորի և անչունչի միջև՝ հայցական հոլովում. այսպես է և բենգալին: Այս երևույթը դրավիդյան լեզուներից է անցել հնդկերենին, բայց մերը փոխ. **քեզ, զքեզ** *ձևերի չփոթումից է* (Chatterji, էջ 722): *Հնդկական մարաթի լեզվում հայցականը նման է ուղղականին, բայց նաև առնում է տրական ձև* (Seddon, 10):

Եթովպական kafa *լեզվում տրական և հայցական հոլովները նույն ձևով են* (Reinisch 96):

Համմտ. օրինակ հուն. ἔχω բայը՝ հաջորդ խոսքերի մեջ.
οὕτως ἔλα «այսպես կամ» (առանց Հայց.),
ἔχωτι «մի բան ունիմ» (Հայցականով):
Առաջինում ἔχω «ունիմ» չեզոք է, երկրորդի մեջ ներգործական:
Նույնպես սանսկրիտ. dart *բայը.*
aparo dart *«մյուսը պայթեցավ» (առանց Հայցական)*
piero dart *«պայթեցրեց բերդերը» (Հայցականով)*
Ահա այս պատճառով հայցականը քերականական վերլուծության մեջ կոչվում է **սեռի խնդիր, լրացուցիչ** *կամ* **որոշիչ:**

ԲԱՑԱՌԱԿԱՆ

Բացառականը *օսերենում ծառայում է նաև իբր գործիական, օրինակ՝* ḍidäi färätäi *կացինով,* zärdäyä *սրտից,* äxcaye *փողով* (Meillet, die Sprache d oss, 44).

Կա **բացառականի** *մի ձև, որ տրական է. ինչպես՝*

Մենք այնքան գուպարինք, մինչև որ աստուածները յաղթող չանեն մեզնից մեկին (Հոմերի Իլիական, թարգմ. Փ. Վարդանյան, Թիֆլիս, 1886, էջ 95):

* * *

Բացառականը ցույց է տալիս **մեկնակետը,** *ինչպես՝*
լատիներեն Romā venit,
սանսկրիտ tásmād ga nás chidyate,
նրանից ամբողջը բաժանվում է:

Այս օրինակները ներկայացնում են բացառականը առանձին, բայց հաճախ բացառականը ընկերացած է լինում նախդիրով, ինչպես՝ լատ. ex illo loco venit «այնտեղից նկավ»:

Հայերենի մեջ էլ բացառականի հնագույն ձևը **աննախդիրն** է, որ պահված է միավանկ գոյականների կրկնության ժամանակ, որոնցից առաջինը բացառական է, երկրորդը՝ նախդրիվ հայցական, ինչպես՝

ժամէ ի ժամ (Եղնիկ դ. 10):
ամ յամէ (Բուզ. գ. 6):
տանէ ի տուն (Ղկ. ժ. 7):
աղգէ յազգ (Սղ. ճգ. 31):
տեղւօջէ ի տեղի (Վեցօր. 80):

Հակառակ չարքով է՝

Մինչեւ ի նաւասարդէ նաւասարդ (Եղիշե. էջ 42). (այսինքն՝ նաւասարդէ. մինչեւ ի նաւասարդ):

Բայց բացառականի սովորական ձևը նախդիրովն է, ինչպես՝

Որ գայր յանդէ (Ղկ. իգ. 26):
Ի սկզբանէ էր բանն (Յհ. ա. 1):
Հատ գնա եւ ընկեա ի քէն (Մտթ. ե. 30):
Զնս Հեռի յարքայութենէ Աստուծոյ (Մրկ. ժբ. 34):

2) Կրավորական բայերի հետ ցույց է տալիս գործողություն կատարող անձը, ինչպես՝

Որ կոչեցեալ էր ի հրեշտակէն (Ղկ. բ. 21):
Մկրտէին ի նմանէ (Մտթ. Գ. 6):

3) Գործածվում է ամբողջի մի մասը ցույց տալու համար, ինչպես՝

Մի ի նոցանէ:
Ի մի ի քաղաքացն (Ղկ. ե. 12):
Ետ ի սերմանէ իւրմէ իշխանին (Ղևոնդ ք. ի. 3):

4) Մի խումբ բայերի հետ՝ գործածվում է իբրև **բնության խնդիր**, ինչպես՝

Ետ ծածկեալ ի նոցանէ (Ղկ. Թ. 45):
Որ խնդրէ ի քէն (Ղկ. Զ. 30):
Լուեալ ի նմանէ՝ բազում ինչ առնէր (Մրկ. Զ. 20):
Դադարեաց ի խոսելոյ անտի (Ել. լդ. 33):
Երկնչէին ի նմանէ (Մրկ. ժա. 18):
Գարշեցայ ես ի նոցանէ (Ղև. ի. 23):
Սարսեսցեն յինէն (Իմ. բ. 15):
Մի՛ զարհուրիցիք յայնցանէ (Ղկ. ժբ. 4):
Կասկածէր ի տեսլինեն զոր նտես (Բուզ. գ. 5):

5) Գործածված **ածականի** հետ.

Որք մնացաք ի ձէնջ (Ա. Թես. բ. 17):
Կաղ յերկոցունց ոտից (Բ. Թգ. Թ. 1):

Բացառականը զանազան **նախդիրներով** նշանակում է՝

Զ *նախդիրով՝ «վրա, մասին».*

Քանի՞ ամբաստանն զքէն (Մրկ. ժև. 4):

Եղև գնմանէ ամբաստանութիւն (Ղկ. ժզ. 1):

Կալաւ զլեզուէ նորա (Մրկ. է. 33):

Զնա կախեցի զփայտէ (Եսթեր, ը. 7):

Ընդ *նախդիրով՝ «կողմը».*

Նիստ ընդ աջմէ իմմէ (Մտթ. իբ. 44):

Առ *նախդիրով՝*

Առ իմէ՞ ինչո՞ւ (Ծն. իև. 32):

Առ ի *նախդիրներով՝ առ ի չգոյն հիւթոյ երկրին (Մտթ. ժզ. 6):*

Ըստ *նախդիրով՝*

Օր ըստ օրէ (Բ. պետ. ը. 8):

Մի ըստ միոջէ (Եղն. 246):

Աչխարհաբարը ցույց է տալիս **պատճառ**, *օրինակ՝*

ինչպե՞ս եղավ...

Դերբայի պես գործողությունը կատարելով՝

Ուտելն կերթար:

ԳՈՐԾԻԱԿԱՆ

Գործիականը *աֆղաններենում իբր ննթակա է գործածվում հետևյալ ձևով.*

Gulandāmē yam lēžalai

Գուլանդամով իմ առաքեալ.

(Գ-ի կողմից) ուղարկված:

(Gram. ir phil. I. 214)

Այսպես է նաև բելուջներենում, օրինակ՝

ē mardā ā mard jat

Այս մարդով այն մարդը ծեծյալ:

Բայց որովհետև այստեղ նախադասության միտքը այն է, թե «այս մարդը այն մարդուն ծեծեց» և երկրորդը՝ հայցական սեռի խնդիր, ուստի հաճախ երկու ձևերը չփոթելով՝ երկրորդն էլ դրվում է հայցական հոլովով և անտրամաբան ձևով ասվում է՝

e marda a mardara jat

Այս մարդով այն **զմարդն ծեծեալ**,

որով գործիականը դառնում է իբր ուղղական:

(Gram. ir phil. I. 239).

Այսպիսի ձևեր կան նաև Պամիրի զանազան իրանյան բարբառներում, ինչպես օրինակ՝ վախի, ասրիկոլի, չիղրի և այլն:

Ես նրան ծեծեցի > ես ինձնով **զնա ծեծեալ**:

Դու ինձնից հաց խնդրեցիր > դու հաց քեզնով ինձնից **խնդրեալ**:

(անդ, էջ 325)

* * *

1) Գործիականը ցույց է տալիս թե **որի՞ կամ ինչի՞ հետ (կամ միջոցով) է կատարված գործողությունը**, ինչպես՝

Արար զորութիւն բազկաւ իւրով (Ղկ. ա. 51):
Մնձէին զգուշան եղեգամբ:
Բաժանիցեն զհանդերձս նորա վիճակաւ:
Որո՞վ մահու մեռանելով իցէ:
Ոչ ոք գայ առ Հայր, եթէ ոչ ինեւ (ՅՀ. ժդ. 6):
Խօսէր ընդ նոսա բազումս առակօք (Մտթ. ժգ. 3):
Զոքանչ Սիմովրի տագնապէր ջերմամբ մեծաւ (Ղկ. դ. 39):

2) **Միասին, ընկերակցությամբ:**

Յիսուս աչակերտաւքն իւրովք գնաց (Մրկ. գ. 7):
Հաւատաց ի Տէր ամենայն տամբ իւրով (Գծ. ժբ. 8):
Սպարապետն Հասանէր իւրով զտուն (Բուզ. ե. 37):

Համաձայն այս պարագային դրվում է **հանդերձ** նախադրությունը.

Անդ նստէր աչակերտօքն հանդերձ (ՅՀ. դ. 3):

3) **Ձև, կերպ, եղանակ:**

Ելեալ... ի գերեզմանէ անտի ահիւ և խնդութեամբ բազմաւ (Մտթ. իբ. 8):
Որեարն այն խաղաղութեամբ են ընդ մեզ (Ժն. լդ. 21):
Մեր կեանքս չեն յուսահատութեամբ (Ագաթ. 60):
Իշխանութեամբ էր բանն նորա (Ղկ. դ. 32):
Կերպարանօք ասեն զխաչն և զմահն և ոչ ճշմարտութեամբ (եղն. 265):

4) **Ձափ, ժամանակի տևողություն**

Նաեւ մեկնեալ էր ի ցամաքէն բազում ասպարիսօք (Մտթ. ժդ. 24):
Երկու ամսով հնոացա:
Ամսով բաժանորդ եմ գրվել:
Նովին թուով կան (եղն. 102):
Յիսուս վեց աւուր են յառաջ քան զզատիկն եկն ի Բեթանիա (ՅՀ. ժբ. 1):
Արկ գոյիւ չափ զկեանս իւր (Մրկ. ժբ. 44):

5) **Ժամանակ**

Գիշերով ինչի՞ ես եկել:
Ցերեկով, օրը ցերեկով:
Երկու տարով նա մեծ է ինձանից:

6) **Տեղ, ճանապարհ**

Երեւանով եկա, Թիֆլիսո՞վ գնամ, թե՞ Բաքվով:
Այս կողմո՛վ արի:

7) **Մակբայաձև**

Պատահմամբ տեսա:
Նրա համեմատությամբ սա մեծ է:
Գալով եղբորս:
Ուտելով չերթար:

ԳՈՐԾԻԱԿԱՆԸ ՋԱՆԱԶԱՆ ՆԱԽԴԻՐՆԵՐՈՎ

Առ «մոտը» – կայր առ ծովեղերբն (Մտթ. ժգ. 2):
Ընդ «տակը» – նիՀ ընդ յարկաւ իմով մտցես (Մտթ. ը. 8):
Զ «չուրջը» – Յամենայն տեղիս չուրջ զգաւառսն (Ղկ. դ. 37):
Զ «դևն, այն կողմ» – Անցանեն զորապետութեամբ (Մտթ. ժե. 2):
Զանազան ածականների՝
Լի խնկով (Թուոց, է. 26):

ՆԵՐԳՈՑԱԿԱՆ

Ներգոյականը *ցույց է տալիս*
1) գործողության **տեղը.**
Եւ էր նրանց որդի նորա յազարակի.
Յայնմ կղզւոջ ոչ գտանէր ոչ ջուր... և ոչ... (Բուզ. դ. 6):
Ոչ այնպէս իցէ և ի ձկրում միջի (Մտթ. ի. 26):
Երթ իջիր բազմնջիր ի յետին տեղւոջ (Ղկ. ժդ. 10):
2) Գործողության **ժամանակը կամ միջոցը.**
Եկին ոմանք ի նմին ժամանակի:
Յամին ևւթներորդի գնասցէ ազատ ձրի (Ել. իա. 2):
Յամսեան առաջնում, որ օր մի էր ամսոյն.
Ուրախ լեր, երիտասարդ, ի մանկութեան քում (Ժղ. ժա. 9):
Հասանէ ի նոյն տեղի... ի տացւոջ (Եղն. 199):
Յելանելն նոցա յերիքով է (Մտթ. ի. 29):
Այսպես՝ Հատկապես անորոշ դերբայի Հետ.
Ի սերմաննելն իւրում (Մտթ. ժգ. 4):
3) **Հեծեալ** *բայի Հետ «վրա» իմաստով:*
Հնծեալ էիչ և ի յաւանակի իչոյ (Մտթ. իա. 5)
Հուն. ἐπὶ ὄνον:

Անչուշտ օրինակների այս առատության մեջ մաս ունեն նաև ձեռագրական սխալ գրչություններ, և ահա այս պատճառով զանազան քննիչներ առաջարկած են սրբագրել վերի ձևերից ոմանք և վերածել իրենց բնական ձևին:

Այսպես, օրինակ, Եղն. **ի մարդկանէ Հնարողութենէ** *կարելի է սրբագրել ի մարդկան Հնարողութենն,* **ի կնոջէ թագաւորէն** *կարելի է սրբագրել ի կնոջէ թագավորին և այլն*:*

Ճիշտ այսպես Հնութ. դ. 2 Vogt*-ի կոչման մեջ ունենք՝*
Եւ առ Բոոս տասն այր ի ծերոց քաղաքէն (Պոլսի, 1895 թ.): Տպագրության մեջ **դրված է ի ծերոց քաղաքին:**

Բայց ինչ որ էլ լինի, կարելի չէ այս բոլորը գրչագրական սխալի վերագրել. Հոլովների ձգողությունը մի երևույթ է, որ պետք է ստանա իր բացատրությունը:

---

* *Հակառակ կարծեաց Վարդանյանի (Ե Թաղ, էջ 84–86):*

4) Այս բոլոր օրինակներում **ներգոյականը** գործածված է **ի, յ** նախդիրով: Բայց ինչպես հայցականի **զ** նախդիրը նչան չէ հայցականի, այսպես և այստեղ **ի** նախդիրը նչան չէ ներգոյականի, որին ապացույց է, օրինակ, **գիչերի** «գիչեր ժամանակ» (փխ. **ի գիչերի**) առանց նախդիրի:

Ուրիչ նախդիրներով ունենք՝

առ — Նստեր **առ** դուրս (ՄՆ. ժր. 1):

Նստեր **առ** դրան (ՄՆ. ժԲ. 1):

Աչխարհաբարի մեջ նախդիրը զնդչվելով՝ ներգոյականը նույնացել է տրականի հետ, օրինակ՝ տանն է — **ի տուն** է:

Այսպես է նաև մոնղոլերենում, ուր տրականը նաև ներգոյականի նչանակություն ունի (Каюкин, էջ 67):

ՀՈԼՈՎԱԿԱՆ ՁԳՈՂՈՒԹՅՈՒՆԸ*

(attraction des cas)

Նախադասության մեջ յուրաքանչյուր բառ ընդունում է բնականաբար այն հոլովը՝ որ պահանջում է արտահայտելու համար նրա առնչություններ մյուս բառերի հետ: Սակայն նկատված է, որ երբեմն բառերի մի անձուկ խմբակցության մեջ մի բառ թողնում է իր հոլովը և ստանում է այն բառի հոլովը, որի հետ կապված է առանձնապես:

Այսպես, երբ ասում ենք «թագավորի կնոջից» = «ի կնոջէ թագաւորին», **թագավորի** սեռական է, **կնոջից** բացառական: Գրաբարում տեղ-տեղ գործածված է այս ձևի փոխարեն՝ «ի կնոջէ թագաւորէն»՝ հետևելով նախորդ **ի կնոջէ** բառին (իբր թե աչխարհաբար ասեինք «թագավորից կնոջից»):

Հոլովների այսպիսի ձևափոխությունը կոչվում է **ձգողություն:**

Գրաբարի մեջ ձգողությունը պատահում է միայն հատկացուցիչի և հատկացյալի միջև, և սեռականը դրվում է բացառական կամ գործիական, թիչ անգամ նաև նախդրիվ հայցական:

Ահա օրինակներ:

Նախդրիվ հայցական (սեռականի տեղ).

Եւ դարձեալ (դառնալով) ի կինն կողմն (Ղուկ. ե. 44).

(փխ. **ի կնոջն կողմն**):

Բացառական (փխ. սեռականի).

Օտար են ի խնամոց եւ ի սիրոյ մարդասիրութենէ, անտի նորա (Ագաթ. 119):

---

* Հոլովների ձգողության մասին խոսել է նախ Hübschmann, Kazusa traction im Armenischen, 480, որ թարգմանված է հայերեն ՀԱ, 1907, էջ 252, Meillet, Altarmenische Elementarbuch, էջ 87, երբորդ՝ Վարդանեան, Եւթագ. էջ 84-86, և վերջին անգամ Vogt, Les groupes nominaux en arménien et georgien anciens, որ նույն նյութի վերաբերյալ ամենից ընդարձակ ուսումնասիրությունն է: Նա բաժանել է ամբողջապես Ս. Գրքի հնագույն մասերը (Այն է Ավետարան, Գործք Առաքելոցք, Պողոսի թղթերը, Հնգամատյանը և Սաղմոսը), հետո՝ եղնիկը, Եղիշեն և Ագաթանգեղոսը: Մասամբ նաև Բուզանդը, Խորենացին և Փարպեցին: Այս բոլորի բովանդակություններ ամփոփում ենք այստեղ:

Ունէին սակաւ մի խորհուրդ համարձակութեան ի կնոջէ
թագաւորէն (Բուզ. 8):
Յետ այսորիկ լուր լուաւ յերկրէն Հայաստանէ (անդ, 24):
Ածից նա զգերութիւն ի վերայ նոցա ի ծագաց երկրէ (Յուդիթ, ը. 5):
*(փխ. **երկրի**, ինչպես ունի Հունարէն):*
*Գոհութիւն նորա ոչ առ յայտնի ականէ **մարդկութեննէ**, այլ առ*
*ի ծածուկ ականէ **աստուածութեննէ** (Եփր. Գ. 12):*
Յերեսաց երկրէ (Ծն. դ. 7, էջ 5: ը. 8, ը. 13):
Ի ծագաց երկրէ (Սղ. կ. 3 և ճլդ. 7. Եզն. 212):
Ի խորոց անդնդոց երկրէ (Սղ. Հ. 20):
Ի խորոց երկրէ (Սղ. 21):
Եւ խաղացոյց տանել գնալ ի սահմանս հայոց ի Գանձակէ կուսէ
յԱտրպատական տանէ (Բուզ. 205):
Ի միջոյ ծոցոյ քումմէ (Սղ. 11):
Ի պտղոյ որովայնէ քումմէ (Սղ. ճլա. 11):
Կորուսեալ ի միջոյ մարդկանէ (Ագաթ. Տփղ., 1882, 101, 425):
Կերթա զողկոյզս յայգւոյ երկրէ (Յայտ. ժգ. 18):
Ի գլխոյ լսոնէն (=լերին) (Ագաթ. Տփղ., 1882, 105, 445):
Ի բարձրագահաց Տեառնէ (Ագաթ. 66, 396):
Ի նոյն հոգեւոր ցողոյն գիտութենէ ըմպիլ (Բուզ. գ. 5, 26):
Լուծին գնա ի պատուոյ իշխանութենէն (Սեբ. 139):
Ի գեղջէ Բագարանէ (Կիր. 29):
Յերկրէն թագաւորութենէն Յունաց (Բուզ. 1832, էջ 231):
Ի նահանջէն Տարօն գաւառէն (Բուզ. 1832, էջ 123):

*Նոյնը կարելի է նաև **նախդիրի կրկնութեամբ**՝*

Նուաղեցան ճչմարտութիւնք յորդւոց ի մարդկանէ (Սղ. ժա. 2):
Կորիցէ զաւակ նոցա յորդւոց ի մարդկանէ (Սղ. ի. 11):
Անժառանգել զանձն իմ խորհեցան յորդւոց ի մարդկանէ (Սղ. լդ. 12):

Սղ. ճլա. 11 հատվածը, որ վերը հիշեցինք (ի պտղոյ որովայնէ քումմէ) կրկնված է Ագաթ., Տփղ., 1882, 43, 230, անփոփոխ ձևով, իսկ նախդիրի կրկնությամբ՝ «ի պտղոյ յորովայնէ յումմէ»:

Յամենայն կողմանց յաշխարհէն հայոց (Եղիշ, Վեն., 1864, Գ, 99):
Յամենայն կողմանց յաշխարհէն Յունաց. Փարպ. Սսի., 1904, էջ 2):
Ի ժամանակաց թագաւորութենէ Տրդատայ (Բուզ. գ. 17):
յերկրէն յիշխանութենէն հայոց (Բուզ., 1832, 21):

Հատկացուցիչը նախադասելով՝

*Եւ ոչ ամենայն թուլանալ եւ ցնորել մարդկան ի տիւէ է, այլ է՝ որ ի մաղձոյ է, եւ է՝ որ ի մաղասէ, եւ է՝ որ յուղղոյն սնանալ, եւ է՝ որ **ի ստամոքսէ**՝ խանգարելոյ, եւ է՝ որ **յորովայնէ** խոտանալոյ (Եզն. 179–180).– իմա՛՝ ի խանգարելոյ ստամոքսի, ի խոտանալոյ որովայնի, այսպես և՝ ի սնանալոյ ուղղոյն, որ սակայն երկդիմի է, որովհետև կարող է լինել թե՛ սեռական և թե՛ բացառական:*

*Լուցեալ յանկարծօրէն փայտակերտն հրդեհեցաւ ի տերունական խաչէն զօրութենէ (Ագաթ. 108, 453) (փխ. ի զօրութենէ տերունական **խաչին**):*

Եւ ոչ քաւիցի երկիրն յարննէն հեղելոյ ի վերայ նորա թիւղէ. 33 Հրաժարեալ ամենեին ի մեռելոտուց եւ յարենէ ուտելոյ (Բուզ. Գ. 404):

Ի մարդկանէ հնարողութենէ (եզն. 121). (փխ.՝ ի մարդկան հնարողութենէ), կամ՝ ի մարդկանէ առ ի **սրտնութենէ** *կողմանէ խուսափեալ փախչիմք (Եւագր. 42):*

Սկսայց քեզ և որ ինչ զկնի այսոցիկ ի հրաման պատմութենէ պիտոյից (Խոր. Ա. ժթ.). (իմա՝ ի պիտոյից հրաման պատմութեան):

Ի ճչմարտութենէ աչակերտացն (փխ. յաչակերտացն ճչմարտութեան) (Եւթաղ. 83–84):

Յաներոց պարանոցէն չղթայիցն (Բուզ., 1832, էջ 207):

Երբեմն էլ դերանունն է, որ հպատակվում է ձգողութեան, և այն ժամանակ ստացվում են տարօրինակ ձևեր (ստացականի տեղ անձնական և այլն):

Եղիցի յինէն կողմանէ այսու (Կոր. ա. 17). (փխ.՝ ի կողմանէ իմմէ, կամ յիմ կողմանէ):

Ի ձերմէ կողմանէ (Ոսկ. Մտթ. ա. 57):

Ի նմանէ կողմանէ, ինչ պարտ էր լինել՝ եղև (Ոսկ. Պօղ. ա. 60):

Ի մէնջ կուսէ ամենայն ինչ ի գլուխ ել (փխ.՝ ի կուսէ մերմէ, կամ ի մեր կուսէ) (Ոսկ. Մտթ. գ. 26):

Ի նոցանէ կողմանէ նորա պարտապանք էին (Եփր. Գ. 7):

Ի նմանէ կուսէ (Բուզ., 1832, 11):

Գործիական (փխ. սեռականի).

Միամտութեամբ սրտիւ (Ժղ. ա. 1). (փխ. սրտի)

Կրօնիւք աստուածպաչտութեամբն (Ե. Թող. 85). (փխ.՝ աստուածպաչտութեան, ինչպես ունի Հուն. εὐσεβείας δογμάτων).

Զորականաւ օգնականութեամբ ... ի կեսարիա առաքէր: (Եւթաղ., էջ 87): (Համմտ. Հուն. μετὰ στρατιωτικῆς βοηθείας).

Կրել զամենայն բանիւ **զօրութեամբ** *(Բուզ. 82):*

Լի առնէր զամենեսեան ողջունիւ աւետարանաւն Քրիստոսի (Ագաթ. 427):

Կենդանի եմ ես զօրութեամբ թագաւորութեամբ իմով (Յուդ. ր. 6): (փխ. թագաւորութեան, ինչպես ունի Հունարէն՝ καὶ τὸ κράτος τῆς βασιλείας μου).

Հասարակաց թշնամի է, սահնալ զամենայն ազգաւ մարդկաւ, (Ոսկ. Մտթ. Ա. 446). (փխ. մարդկան, համմտ. Հուն. τοῦ τῶν ἀνθρώπων γενους).

Ընկալցուք խնդութեամբ սրտիւ (փխ. սրտի), (Եղիշէ, 1864, 5, 177):

Մի՛ թուլութեամբ լքանիցիմք, այլ պնդութեամբ սրտիւ և հաստատուն հաւատով կամակարութեամբ յարձակեսցուք (Եղիշէ, 5, 192):

Ահա ի քեզ կերպարանեալ տեսանեմք զամենեսեան զհրաժարեալսն յուսով յարութեամբ և զկապեալսն ակնկալութեամբ արձակելով (Եղիշէ, 5):

Սուրբն Ղևոնդ իրենց միաբանութեամբ առաջին խորհրդակցօքն և բազում ուխտիւ (Եղիշէ, 1864, Գ. 96):

Հեղմամբ արեամբն արդարացաւ:

-»- քաջացեալք (Ագաթ., 1882, Տփղ., 99, 421):

Երազովքն և պատիր խաբեութեամբ ցնորիւքն (63, 301):

Իւրովք մարգարէիւքն ձայնիւք (Ագաթ. 39):

Ամենայն բանակօրն բազմութեամբք (Բուզ. գ. 12, 47):

Բազմութեամբ զօրօքն Հայոց (Բուզ. գ. 8, 84):

Բազում արեամբ հեղմամբ:

Զնուագեցուցանել զեղեալսն և կարճակտուր պատմել բանիւք անվրիպութեամբ (Փարպ., 1904, 6):

Բանիւք աղտեղութեամբ (Եւս, պտմ. 432):

Հանդերձ միաբանութեամբ ամենայն Հայաստանեաւք (Սեր. 26):

Բանակեալ հոծ բազմամբոխ լիութեամբ աւարաւ իւրեանց (Սբր. 40):

Կամին ... հակառակութեամբ ստարան ստախորհուրդ **զժտութեամբ** *խոտորել զպարզամտութիւն (Թղ. Պրոկղի, Լ 38), փխ.՝ զիտութեան, ինչպես ունի Հունարէնը:*

Բայց քանզի **առաւել** *իմն արբեցութեամբ* **ամպարշտութեամբն** *թմրրեալ էին (Ոսկ. ես. 372):*

Եւ կլ ընդ կողմանս Ասորեստանեայց բանիւ խաղաղութեամբ (Ա. մակ. ժա. 2):

Վարեցաւ նա ամենայն աստիճանիւ պատուով որ ի թագաւորէ տունալ լինէին (Եւս, պտմ. 642), (փխ.՝ պատուոյ, ինչպես ունի ասորին «պատուոյ»):

Ոչ եթե բանիւք **ճշմարտութեամբ** *զարձուցանեն զնոսա (Եփր., Լ 116):*

Այլ եւ զօրութեամբ հոգւով սրբոյ (անդ, Լ 175):

Զի ոչ երբէք բանիւք ողոքանօք եղեաք մեք (անդ, Լ 176):

Ոչ իրր զոհիւք պատարագաց, այլ մտաւք **սրբութեամբ** *(անդ, Լ 248):*

Խոսեցաւ ընդ նոսա բանիւք խաղաղութեամբ (Եղիշ, 1864, 8, 349):

Եւ Յեսու որդի Նաւեայ լցաւ հոգւով իմաստութեամբ (Երկ. լտ. 9):

Թագաւորն Տրդատիոս հանդերձ միաբանութեամբ կնաւ իւրով Աչխեն տիկնաւ եւ քերր Խոսրովիդխտով (Ագաթ., 1882, Լ 111, 460):

Դատել ճշմարտութեամբ զամենայն տիեղերք հրով բարկութեամբ իւրով (Ագաթ. 6, 64):

Քաղցրութեամբ սիրով քով (Ագաթ. 6, 64):

Լնուլ սիրմամբ աստուածապաշտութեամբ զամենայն լեզուս (Ագաթ. 92, 394):

Զայլս գնալք փրկանօք ազատէր (Բուզ., Դ. 4, 106):

Ծնիւք լերամբք (փխ. լերանց) և եղերօք պաչտին (Խոր., ա. ժբ.):

Նկատելի է, որ այսպիսի օրինակներ ավելի հաճախակի են **կոյս** *և* **կողմն** *բառերի համար:*

Համաձայնության այս ձևը, որ տրամաբանորեն անբնական է, կարելի է բացատրել միայն այն անձուկ կապակցությամբ, որ ունեն իրար հետ խնդիրն ու խնդրառուն: Մանավանդ եթե այդ բառերը շատ կարճ են և անմիջապես հետևում են իրար: Հատկապես ներկա դեպքում՝ հատկացուցիչ և հատկացյալ միասին կազմում են մի ամբողջություն:

Հոլովների ձգողությունը *հաճախական երևույթ չէ հայերենում, այլ բացառիկ: Բննությունը ցույց է տալիս, որ այդ երևույթը նկատվում է Ս. Գրքի հին մասերի մեջ, բացի Ավետարանից, որի թարգմանիչը ուղղով հարազատորեն*

Հետևել բնագրին՝ խուսափել է անկանոն ձևերից: Այդպես է նաև եղնիկը, ուր ձգողության օրինակներ հազվագյուտ են: Օրինակներ ամենաշատ պատահում են Ագաթանգեղոսի և Բուզանդի մոտ, որոնցից մի քիչ պակաս չափով Եղիշեի մոտ: Օրինակներ կան նաև Եւսեբիոսի, Եւթաղի, Ոսկեբերանի և ասելի ուշ Սեբեոսի և մինչև Կիրակոսի և Ուռհայեցու մեջ:

Ձգողության օրենքը նկատվում է նաև հաբերների մեջ (տե՛ս Vogt, էջ 67), բայց ընդհանրապես հնդեվրոպական երևույթ չէ: Ընդհակառակը, ամենատարորակ երևույթն է վրացերենում, ուր ընդհանուր օրենքով բառերի ամեն մի անձուկ խմբակցության մեջ որոշիչը ստանում է որոշյալի վերջավորություններ: Օրինակ՝

մկ դր նի իգի բաբիլովն-իա-նի –

«բնակիչք բաբելոնի».

այս ձևի մեջ **մկդրնի** հոգնակի ուղղական հոլով է, որի վերջավորությունն է **նի**. **բաբելովն-իա** սեռական է, բայց նա ստացել է նաև հատկացուցիչի **նի** վերջավորությունը, իբր թե ասենք՝

բնակիչքն բաբելոնքն

կամ աչխարհաբար՝

բաբելոնիները բնակիչները:

Միայն հոգնակի ուղղական հոլովի վերջավորությունը չէ, որ վրացերենում կրկնվում է որոշիչ բառի վրա, այլ ամեն մի վերջավորություն, որ կրում է որոշյալ բառը: Այսպես՝

բաբելոնիներից բնակիչներից,

բաբելոնիներով բնակիչներով և այլն:

Այս երևույթը առաջին հայացքով տարօրինակ է թվում, բայց իրապես նույնն է, ինչ որ ածականի համաձայնությունը գոյականի հետ:

Այսպիսի անհաւատ և դանդաղանաց բանից տխմարաց մտուց կարկատելոց... (Եղն. 115):

Բացի սրանից, գրաբարի մեջ երևույթը տարօրինակ է թվում, որովհետև որոշիչ բառի իրական հոլովական վերջավորությունը ջնջվում է, և դրվում է միայն որոշյալի վերջավորությունը, մինչդեռ վրացերենում վերջավորությունները բարդվում են իրար վրա, և ստացվում է գրեթե ածականների համաձայնության նման մի բան.

մկ դր նի իգի բաբելովն-իա-նի –

«բնակիչք բաբելոնի»:

Եթե վրացերենի մեջ երևույթը սովորական է և ունի իր տրամաբանական բացատրությունը, մինչդեռ հայերենի մեջ բացառիկ է և չի բացատրվում հնդեվրոպական լեզվի օրենքներով, ուրեմն կարելի է հետևցնել ըստ Vogt 78, թե նա մի մնացորդ է Հայաստանի հին բնիկների լեզվից: Երևույթը, թվում է, թե գոյություն ունի նաև միտաաներենում, խուրրի լեզվի մեջ, թերևս և խալդերենում և Տրուսկերենում, այսպիսով ստեղծվում է թերևս մի կապ ասիական և կովկասյան լեզուների միջև:

Թ Ի Վ

ՀՈԳՆԱԿԻ

Հոգնակին ցույց է տալիս մոտավոր մի բան. ինչպես՝

Այս օրերս կգամ:
Վերջերս գողերը չատացել են:
ԺԴ դարի վերջերը:
Վերջին ամիսներում:

Գրաբարի աննեզական բառերը աչխարհաբարում վերածված են եզակիի, ուստի սխալ է նրանք իբրև հոգնակի միացնելով՝ հոգնակի բայ տալ, օրինակ՝

Իսկույն աչքերևն կաթ-կաթ **սկսան արտասունքը** *գետին թափել (Պատկ., Ընտիր երկաս., 1893, հտ. Բ., էջ 145):*

Գուցե իրերի **ընթացքը կլուծեն** *այս հոգևբանական առեղծանելիքը (անդ, էջ 133):*

Նրա նիհարած, դեղնած **դեմքը** *ցույց էին տալիս, որ նա կատարում է տևական ծառը գործ (Դեմիրճյան, Վարդանանք, Ա. 327):*

Բայց հանկարծ իրադարձությանց **ընթացքը փոխուեցան** *(Կիլիկյան տարեցույց, 1922, էջ 171):*

Եւ կնայիս, որ այս **փականքը** *նոր* **են** *(Անիծեալն, Թրգմ. Մամուրեան, Զմյուռնիա, 1875, հտ. Դ., էջ 12):*

Վերապատուելի Պազիլ հօր քահանայական **վարքը** *նորատի հովուին ալ օգտակար պիտի* **դառնան** *(նույն, հտ. Բ., էջ 10):*

Բայց հնդկին փրփրադեղ **ալիքը** *սոսկալի* **էին** *և թևրևս նորէն թալուկ* **պատճառէին** *օտարականին և ի վերջ անոր կենաց թելը կտրէին (անդ, հտ. Բ., էջ 24–25):*

Բոլոր այս **մտածմունքն** *իրեն սոսկում* **պատճառեցին** *(անդ, էջ 60):*

Այսօր իսկ հալածանքը դայն **կնուիրագործեն** *(անդ, հտ. Ա, էջ 189):*

Թրք. երբ մի քանի գոյականներ հաջորդեն իրար, միայն հոլովական մասնիկը կարելի է դնել մի անգամ, և վերջինը ստանում է հոգնակի նշան, օրինակ՝

kitab ve defterler
adam ve hayvanlaron:

Ընտաննկան լեզվի մեջ ազգերի անունը երբեմն հոգնակիի տեղ եզակի է դրվում. օրինակ՝ ֆրանսըզը ինկիլիզին հետ կռուի էր բռնուեր: Նույնը նաև ժողովրդական ռուսերենում **я ходил под шведа и под турка; мы победили француза** *(ես զարկի չվեստացոց և թուրքերին, մենք հաղթեցինք ֆրանսիացոց)* – Fuchs, Gram. russe 236.

Կան բառեր, որոնք իրենց նշանակության պատճառով հոգնակի չունեն, ինչպես՝ **վերացական բառեր,** *հատկություններ և այլն: Այսպես ֆր.* les sagesses, les abstinences, *անգործածական ձևեր են, հայերեն էլ՝* **իմաստություններ, բարդություններ** *և այլն, ռուս.* **память** *«հիշողություն»,* **нерешительность** *«անվճռականություն» և այլն, չունեն հոգնակի* (Fuchs, Gram. russe 236):

Ռուսերենում հոգնակի չունեն մետաղների և զանազան նյութերի անունները, ինչպես՝ **золото** *«ոսկի»,* **соль** *«աղ»,* **баранина** *«ոչխարի միս» և այլն: Մի քանիսը այս կարգի բառերից հոգնակիում նշանակում են տեսակներ, ինչպես* **мяса** *«զանազան տեսակի մսեր»,* **сыры** *«զանազան տեսակի պանիրներ» և այլն:*

Վերջապես կան բառեր, որ եզակիում ուրիշ իմաստ ունեն, հոգնակիում ուրիշ, ինչպես՝ **вес** *«կշիռ»,* **весы** *«կշեռք»,* **час** *«ժամ»,* **часы** *«ժամացույց»:*

* * *

Անեզական *բառերը աչխարհաբարում վերածվել են եզակիի, և սխալ է այնես նրանց հոգնակի բայ տալ, ինչպես՝*

Նրա աչքերից ջերմ արտասուք **հոսեցան** *(Հոմերի Իլիական, Թրգմ. Փ. Վարդանյան, Թիֆլիս, 1886, էջ 156):*

Եթե երկինք ինձ ողջ **պահեն** *(և. տ., էջ 112):*

Արտասուքը հեղեղի պես **ոռոգում էին** *նրա աչքերն (և. տ., էջ 45):*

Խոստովանում եմ՝ կչտամբանքդ **արդար են** *(և. տ., էջ 56):*

Կչտամբանքդ **արդար են,** *եղբա՛յր (և. տ., էջ 89):*

Եւ հենց որ նա ետ քաչվեցավ բանակից, մեր չարիքն էլ **սկսան** *(և. տ., էջ 104):*

Թվականից հետո գոյականը եզակի է դրվում՝ **հինգ** *հոգի,* **տասը** *ձուկ: Այսպես և վրացերեն, թուրքերեն, այսպես նաև գերմաներենում, դանիերենում թիվ չունի կչիռ ցույց տալու համար, օրինակ՝*

en haer paa tredive tusind mand,
ein Heer von 30.000 Mann
մի բանակ 30.000 մարդուց:

Բայց ֆրանսերեն պիտի ասվեր hommes:

Քրդերենում սովորական է եզակի ձևը, բայց կարելի է և հոգնակի, ինչպես՝ haft mī – *7 ոչխար,* haft miān – *7 ոչխարք* (Justi, Kurd. Gram. 246):

Անգլերենում էլ համախ գոյականը թվականի հետ եզակի է դրվում, ինչպես՝ ten thousand foot and two thousand horse, six mille fantassins et deux mille chevaux:

Երկու հարակից և համախ միասին գործածվող բառեր կարող են երբեմն իրր մեկ բմբռնվել և ստանալ մի հատիկ հոգնակի մասնիկ, օրինակ՝

Ահա ինչի վրա մեծ և առանձին ուչադրություն պիտի դարձնեին մեր Հայր ու մայրերը... (փխ. Հայրերն ու մայրերը), (Պատկ. Ընտիր երկաս., 1893, հտ. Բ., էջ 144):

Կրկնակիի գաղափարը կապված է հոգնակիի գաղափարի հետ, օրինակ՝ փոխանակ ասելու **բազմաթիվ մեծ տներ,** *կարող ենք ասել «մեծ-մեծ տներ», քանի որում, երբ ածականը կրկնված է, գոյականն էլ պիտի դրվի հոգնակի, և ոչ բնավ եզակի, օրինակ, կարելի չէ ասել՝ նոր-նոր փոթորիկներ նոր-նոր ալեկոծություն էին առաջացնում նրա ներսում (Սիրաս, Զգրված օրենք, 28).*

այլ պիտի ասել՝

– ... նոր-նոր ալևկոծություններ:

Երբ կարիք լինի ածականի գաղափարը սաստկացնել առանց բազմացնելու, այն ժամանակ պետք է միացնել և, ու չաղկապներով: Նոր ու նոր թափով սեղմեց իր կրծքին (Սիրաս, Զգրված օրննք, 527):

Կան բառեր, որոնք ինքնին հոգնակի գաղափար են ցույց տալիս, և հետևաբար իրենց հետ կապվող բառն էլ հոգնակի պետք է դրվի, օրինակ՝ **բազմաթիվ փողոցներ, շատ տներ....**

Կարելի է սակայն նույն բառերի հետ դնել հավաքական բառեր, ինչ, որ դարձյալ հոգնակի է նշանակում, օրինակ՝ **բազմաթիվ հասարակություն էր հավաքված:**

Կարելի չէ սակայն եզակիով ասել: Օրինակ՝

Բազմապիսի **վերելքով** *ու* **վայրէջքով** *գալիս զարնվում էին Մանյակի ուղեղին (Սիրաս, Զգրված օրննք, 123), պետք էր ասել* **վերելքներով** *ու* **վայրէջքներով:**

Հայերենի մեջ հոգնակին հաճախ մոտավոր իմաստ է տալիս, օրինակ՝ **այս օրերս, վերջերս, անցյալ տարիներում, վերջին ժամանակներս, այն դարերում** *և այլն:*

Նոր Նախիջևանի բարբառը, ավելի առաջ տանելով այս երևույթը, ժամերի թիվն էլ հոգնակի է գործածում՝ մոտավորություն ցույց տալու համար, ինչպես՝

ութերու արի, հինգերու պիտի գամ, *և այլն:*

ՀՈԳՆԱԿԻ – ԵԶԱԿԻ

Հոգնակի գաղափարը իրրև մի ամբողջություն ըմբռնվելուց հետո կարող է բնականաբար համարվել եզակի, ինչպես՝

Հճ. լադհայ (լաթեր, դգեստ).

Հճ. դաշնյ (յօնք) Թրք. ges մէկ դաշէյ.

Արդ. **ցիան մը ունիմ** *«ձի մը ունեմ»:*

Այսպես է նաև պրս. dendān *«ատամ, որ իրապես նշանակում է* **ատամներ,** *հիմա եզակի, որից* dendānhā yerdan, *նաև «Աստված» (եզակի եղել է* ized), *նաև* muzgān *(եզ.* muža) *«թարթիչքն» հոգնակի* mužgānā. *այսպես են նաև* gīhān *«աշխարհք».* Iran *«Պարսկաստան» և այլն:*

(Jensen, Newperc. Gram. 33)

Ա Ծ Ա Կ Ա Ն*

Երբ մի քանի գոյական հաջորդում են իրար, և նրանց հետ կա մի **ածական** *(որ դրված է աչխարհաբարում սկիզբը, գրաբարում սկիզբը կամ վերջը), կարելի չէ իմանալ, թե այդ ածականը պատկանում է մեկի՞ն, թե՞ բոլորին: Օրինակ՝*

---

* *«Շարահյուսություն» բաժնում Ածայանը* **Գոյական, Ածական, Թվական, Բայ, Դերբայ, Մակբայ, Նախադրություն, Շաղկապ, Ձայնարկություն** *հատվածներում անդրադառնում է դրանց շարահյուսական գործառույթներին (Խ. Բ.):*

Այգում ման Լին գալիս սիրուն, սիրուն աղջիկներ և տղաներ. (որովհետև սիրունությունը միայն աղջկանց հատկություն չէ, այլև՝ տղաներին, ուստի Հայտնի չէ, թե **սիրուն** *աղջիկնե՞րն են, թե՞ նաև տղաները):*

Մեռնիմ սիրուն աչքերիդ.

Անուշ ձայնիդ ու խելքիդ:

Երկրորդ տողում **անուշ** *պատկանում է* **ձայնին**, *որովհետև* **անուշ խելք** *չի լինում. բայց եթե ասած լիներ՝* **զորեղ ձայնիդ ու խելքիդ**, *դարձյալ անորոշ պիտի մնար:*

Այսպիսի դեպքերում ո՛չ մի լեզու ելք չունի. հեղինակին է մնում նախապես մտածել և ստեղծել մի ելք. ամենահասարակ ձևը ստորակետով բաժանելն է.-

անուշ ձայնիդ, ու խելքիդ:

ԱԾԱԿԱՆԸ ԳՈՅԱԿԱՆԻ ՀԵՏ

Ածականը վերաբերում է հաջորդ գոյականին ամբողջությամբ և ոչ թե նրա մի մասին, ըստ որում, երբ գոյականը բարդ է, կարելի չէ տալ նրան մի այնպիսի ածական, որ միայն առաջին եղրին վերաբերի, կարելի չէ ասել, օրինակ՝

Օգտակար գրավաճառ=օգտակար գրքեր ծախող:

Հայաստանի գունավոր մետաղարդյունաբերությունը (Խորհ. Հայաստան, 1938, Հունիս 18, 2-րդ էջ, Հոդվ. Հ. Ջալլաղյանի):

ԱԾԱԿԱՆԻ ՏԵՂԸ

Թեև պարսկերենում ածականը միշտ գոյականից հետո է դրվում, բայց թաթերենի մեջ, որ պարսկերենի զավակն է, ածականը նախադաս է դարձել, օրինակ՝ xuba xuna *գեղեցիկ տուն (պրս.* xana-i xub).

pura k'asa *լի գաւաթ,*

(*պրս.* kāsa-i pur):

Այս չրջադարձությունը անչուշտ թրքական լեզուների ազդեցությամբ է, բայց զարմանալին այն է, որ իգաֆենեի ձայնավորը պահված է հակադարձ ձևով:

Զևսերենում ածականը գոյականից առաջ է դրվում, երբ հատկապես չեչտվում է, ածականը ետադաս կլինի. ետադաս են նաև **աչք, կրոն, տիտղոս** *ցույց տվող կամ գոյականից ավելի երկար ածականները (*Hantich, Gram. tchèque, *էջ 53):*

Անգլերենում ածականը գոյականից առաջ է դրվում և միշտ անփոփոխ է, բայց երբ ածականները մի քանի հատ են, կարող են նաև գոյականից հետո դրվել. ինչպես՝

a horse old, lame and blind

մի ձի ծեր՝ կաղ ու կույր:

Իսպաներենում ածականը, եթե characteristique *է, առաջ է դրվում, իսկ եթե որոշիչ է՝ հետ. օրինակ՝* la dulce miel *քաղցր մեղր.* paño negro **ևս հաց:**

*Պորտուգալերենում ածականը, եթե էական մի հատկություն է ցույց տալիս, առաջ է դրվում, իսկ եթե պատահական մի հատկություն, հետո է դրվում, բայց հաճախ նայում են ներդաշնակությանը (*Arstett, *էջ 29): Երբ գոյականն ունի*

մի քանի ածական, սրանք կցվում են և, կամ չաղկապներով, ածականները մնում են նոտադաս օրինակ՝ O pintor tem quadros ricos e bonitos *նկարիչը ունի հարուստ և սիրուն նկարներ* (Anstett, *էջ 57*):

Պորտուգալերենում, երբ մի քանի գոյական ունի նույն ածականը, փոխանակ [ածականը] կրկնելու՝ վերջում դրվում է մի անգամ, վերջին բառի սեռով, իսկ գերմաներենում ամեն մեկը առանձին. ինչպես՝ ich habe eine hübsche Tochter und einen hübschen Sohn.

Պորտ. tento uma filha e um filho bonitos (Anstett 238):

Ածականը դարմանալի կերպով մի քանի լեզուների մեջ պահանջում է **սեռական հոլովով խնդիր.** *ինչպես՝*

ֆր. ce fripon de valet *այս խաբեբա ծառան.*
un drôle de nom *տարօրինակ անուն.*
իտալ. quel ciarlatano din dottore *ինչ չառլատան ննք.*
quel pover nomo di tuo padre *ինչ խեղճ հայրդ.*
անգլ. a devil of a fellow.
գերմ. ein alter schelm von lohnbedienter.

Գրեթե նման ձևով հայերեն էլ ասում ենք՝

կաթի լավը, թղթի սպիտակը, մածնի յուղոտը *և այլն.*

նույնը թրքերենում՝

սյուտին էյիսի, յօղուրթըն յաղլըսը *և այլն:*

ԱԾԱԿԱՆԸ ԳՈՑԱԿԱՆ

Ջուվաչներենում ածականը գոյականաբար կարող է առնվել 3 ձևով.

1) առանց որևէ փոփոխության.

2) ստանալով ստացական հոդի երրորդ դեմքը.

3) sker *վերջավորությունը, որ թերևս «բան» իմաստն ունի, օրինակ՝* usal *«վատ» բառից՝ 1)* usal *վատ,* usalli *«վատը» (այս ինչին վատը),* usalsker *«վատ մը, վատ բան»* (Ашмарин, Материалы... 164): *Սրանցից երկրորդը, որը նշանակում է՝*

1) ընդհանուր սեռ. այսինքն այն բոլորը, որ ունի նրա հատկությունը կամ

2) նմանների միջից հատկապես մեկը, որ այն հատկությունը մյուսներից ավելի ունի, որով և դառնում է գերադրական. օրինակ՝

asli aslā pultār kes ĕnni kes en pultār –
բ ձև ա ձև բ ձև ա ձև
մեծը մեծ թող լինի, փոքրը փոքր թող լինի:

esc aslā *դու մեծ (ես),* esc asli *դու մեծն ես, օրինակ, եղբայրներից:*

Ռուսերեն **ты тот, который велик, ты самый страший** (Ашмарин, Матер. 169—171):

Այսպես և հայերենը:

Անգլերենում ածականը եղակիում չի կարող առնվել գոյականաբար, այլ միայն հոգնակիում, եղակի դեպքում միշտ հետը գոյական է պետք. գոյական

չլինի, ուրեմն հասկանալի է, որ հոգնակի է, և այս դեպքում հոգնակիի նշան չի դրվում. օրինակ՝ he is a blind man=c'est un avengle, The idle man does not learn=le paresseux n'apprend pas, The English woman that we have seen=l' Anglaise que nous avons vue, *իսկ հոգնակի՝* the blind are to be pitied – *կույրերը խղճալի են,* the deaf and dumb communicate their ideas by signs – *խուլերն ու համրերը հաղորդում են իրենց գաղափարները նշաններով:*

Արխազերենում (այսպես նաև ուբիխերեն և գաբարդիներեն) ածականը դրվում է գոյականից հետո, կցվում է նրան իբր մի բառ, այնպես որ գոյականի ստանալիք նախամասնիկները դրվում են ամբողջի սկիզբը, իսկ ետամասնիկները՝ ամբողջի վերջը. օրինակ՝

p'səʒ (*փսըձ*) – *ձուկ* bziâ *լավ.*

a-pésəʒ – bziâ-k'ua *լավ ձկներ.*

Հոդ – ձուկ – լավ-ներ (Dirr, Einf. 54):

Ածականը վրացերենում այժմ դրվում է առաջ և չի համաձայնում գոյականի հետ: Հին լեզվում դրվում էր առաջ և համաձայնում էր՝ թվով և թև հոլովով. օրինակ՝

ուղղ.	[კეთილი კაცი] –	*կեթիլի կացի – բարի մարդ.*
սեռ.	[კეთილისა კაცისა] –	*կեթիլիսա կացիսա – լավ մարդու*
Հոգ. ուղղ.	[კეთილნი კაცნი] –	*կեթիլնի կացնի – լավ մարդիկ*
Հոգ. սեռ.	[კეთილთა კაცთა] –	*կեթիլթա կացթա – լավ մարդկանց*

Կա նաև մի այլ գրական ձև, որ գոյականից առաջ ածականը դրվում է սեռական հոլովով, ինչպես՝

[შვენიერის შცვანჯს ბალახით]

մչվննիերիս մցվանիս բալախիթ

գեղեցիկ կանաչ խոտով:

(Dirr, Einf. 60)

ԱԾԱԿԱՆԻ ՏԵՂԸ ԳՈՅԱԿԱՆ

Անսովոր չէ մեր լեզուների մեջ ածականը գոյականի վերածելով առարկայական ձևի տակ գործածել. օրինակ՝

Նա լուծեց Հարցի դժվարությունը:

Նա լուծեց դժվար Հարցը:

Նա գնաց ճանապարհի ամբողջ երկարությունը:

Նա գնաց ամբողջ երկար ճամփան:

Նա քաշեց օրերի մեծ ծանրությունը:

Նա քաշեց շատ ծանր օրեր:

Այս կողմից նշանավոր է ամերիկյան Chinook *փոխառնված լեզուն, որ ածականի տեղ միշտ սիրում է գործածել գոյական, օրինակ՝ փոխանակ ասելու* **Վատ մարդը սպանեց խեղճ երեխային,** *ասվում է «Մարդի վատությունը սպանեց երեխայի խեղճությունը»:*

Փոխանակ ասելու **Հիվանդացա** *կամ* **եղա Հիվանդ,**
ասում է՝ **իր Հիվանդությունը եկավ մնալ նրա վրա:**
(Boas, Handbook I, p. 657–658).

Մուռդա խմբից Rolh *լեզվում ածականը կարող է ազատորեն գոյականից առաջ էլ դրվել, վերջն էլ դրվել և միշտ էլ բնավ չի համաձայնում* (Nottrott, 10):

Աֆրիկյան agni *լեզվում ածականը իրրև գոյական գործածելու համար ծայրին ստանում է* fwekpri. *օրինակ.* kprifwe ka – *փոքր,* ma mi kafwe, yaki kprifwe – *խոչոր: Տուր ինձ փոքրը, թող խոչորը* (Delafosse, 41):

Ածականը չի համաձայնում գոյականի հետ, եթե քաղաքավարության համար դրված է հոգնակի. օրինակ՝

ֆրանսերենում ասում են՝
Seriez-vous assez aimable de nous dire –
Բարի կլինե՞ք ասելու մեզ:
Mais vous étiez fou!
Գի՞ժ ես, ի՞նչ է:

Ռուսերենում վեճի առարկա է դարձել այն, թե այսպիսի դեպքերում պե՞տք է ածականը համաձայնեցնել, թե ոչ: Օրինակ՝ ընդհանրապես ասում են Вы один? *Դուք մենակ(նե՞ր) եք. և ոամիկ է համարվում* Вы один? *Դուք մենա՞կ եք. բայց ընդհանուր ընդունված է՝* Вы сумасшедший? *Դուք գի՞ժ եք [եզակիի դերպքում]:*

Թեև բաղմավանկ ածականը նախադաս լինելու դեպքում օրենքով չպետք է համաձայնվի, բայց կան բացառություններ: Բանաստեղծական լեզվի մեջ դա կոչվում է ազատություն և շատ սովորական է, բայց նույնիսկ Ավետարանում գտնում ենք Ղկ. Թ. 13-ում՝ Եւ գոցեն կերակուր, զի աստ յանապատի տեղւոջ եմք:

ԱԾԱԿԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՅԱԿԱՆԻ ՀԵՏ

Հնդեվրոպական նախալեզվի մեջ ածականը գոյականի հետ համաձայնում էր սեռով, թվով և հոլովով: Այս վիճակը չարունակում են դեռ հին լեզուները, ինչպես հունարենը, սանսկրիտը, լատիներենը և այլն: Նոր լեզուները սկսում են հետզհետե ածականը վերածել անփոփոխ վիճակի: Այսպես, չեխերենում և ռուսերենում տակավին չարունակվում է սեռով, թվով և հոլովով համաձայնությունը, գերմաներենում, ֆրանսերենում, իտալերենում համաձայնությունը միայն սեռով ու թվով է (բայց ոչ հոլովով), իսկ անգլերենում բոլորովին անփոփոխ է:

Հին հայերենի մեջ սեռը ջնջված լինելով՝ համաձայնությունը կատարվում է թվով և հոլովով, այսպես՝ որակական, թվական, ցուցական, ստացական ածականները, օրինակ՝ **իմոց բանից, բանից իմոց, այսց բանից, բանիցս այսոցիկ, գործոց մեծաց** *և այլն:*

Հայերենի մեջ V դարից չատ առաջ արդեն սկսել էր ձգտումը՝ վերացնելու համաձայնութիւնը, որոչ դեպքերում այդ կատարված է:

Ջանազան ներքին և արտաքին պատճառներ կարող են դրդիչ հանդիսացած լինել ածականի անհամաձայնութեան: Ներքին պատճառներից գլխավորը թերևս այն է, որ եզակի ուղղական և հայցական հոլովները նման լինելով իրար, բնականաբար, այս երկու դեպքում ածականը առանց համաձայնութեան պիտի մնար:

ԱԾԱԿԱՆԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Իտալերենում բաղդատականը սովորաբար առնում է սեռական խնդիր

il zio è più ricco del nipote –

Հորեղբայրը ավելի հարուստ է եղբորորդուց.

և կամ che *չաղկապով՝*

il sole è più grande che luna –

Արևը ավելի մեծ է, քան լուսինը.

երբեմն էլ di quello che.

mi ha dato più di quello che io voleva –

Ինձ տվեց ավելի, քան որ կուզեի:

ԳԵՐԱԴՐԱԿԱՆ

Մեծամեծ *իրենից հետո պահանջում է* **հոգնակի.** *ինչպես՝ Տեսա մեծամեծ տներ, մեծամեծ ծառեր, մեծամեծ մարդիկ և այլն:*

Ըստ այմ, սխալ է ասել՝

Պղինձը բովերից դուրս են բերել **մեծամեծ** *քանակով (Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929, էջ 226). և որովհետև կարելի չէ ասել քանակներով, ուստի պետք է ասել* **մեծ քանակով,** *իսկ հեղինակը մտածել է ասել* **չատ մեծ քանակով:**

Այսպես են նաև ուրիշ կրկնական բառեր. ինչպես՝ **զանազան ձևեր...** *Միայն մակրայ լինելու դեպքում կմնա եզակի՝* **չարաչար տանջեցին, չարաչար տանջանքով տանջեցին:**

Ամենեն (ամենքից) *բառը որ* **գերադրական** *կազմելու համար է գործածվում, կարող է երբեմն թյուրիմացութեան տեղի տալ՝ առնվելով իբր անկախ գոյական. օրինակ՝*

«Ամենեն *եռանդուն և ուռուցիկ ուղերձներ արտասանվեցան» (Ազգապատում, էջ 5001):*

Այսպիսի դեպքերից կարելի է խուսափել լոկ բառի տեղափոխութեամբ. օրինակ՝ վերի դեպքում պետք էր ասել՝ «եռանդուն և ուռուցիկ ուղերձներ արտասանվեցան ամենեն»:

ԳՈՅԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ԱԾԱԿԱՆ

1) Գոյականը կարող է առանց փոփոխության իբրև ածական առնվել, ինչպես՝ **ոսկի մազեր, արծաթ դրամ, մարմար լանջ, երկաթ կամք, քար սիրտ, ձյուն ձեռներ, կին գրող.**

2) Տեղի անունները գործ են ածվում ճիշտ այս ձևով.

Երևան քաղաքը, Եփրատ գետը, Մասիս սարը, Հայաստան աշխարհ. *ուրիշ լեզուներում այս դեպքում դրվում է սեռական, ինչպես՝ լատիներեն* urbs Romae, *ֆրանսերեն* la ville de Rome, *անգլերեն* the city of Rome *և այլն.*

3) Գոյականը իբր ածական գործածության սովորական ձևերից մեկը սեռական հոլովն է. ինչպես՝ **զինվորի զխարկ, ոչխարի միս, Ս. Պողոսի եկեղեցի:**

ԱԾԱԿԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Պոլինեզյան լեզուների մեջ ածականը իր գոյականի հետ մի ամբողջական գաղափար է ներկայացնում. այնպես որ երբ ածականը դնում ենք գոյականի վրա, և հարկ է լինում հոգնակի կազմել, ածականն է միայն հոգնակի դառնում՝ վերջնավանկի կրկնությամբ. օրինակ՝ սամոսական լեզվով՝ laau telele – *մեծ ծառ,* laau telele – *մեծ ծառեր, մաորի լեզվով՝* ika pai – *մի լավ ձուկ,* ika papai – *լավ ձկներ (*Wundt, Völkerpsychol. I, *հտ. 2 մաս, էջ 12):*

Հնդկական brokpa *լեզվում ածականը դրվում է միշտ գոյականից հետո և գոյականի հոլովական մասնիկները ինքն է վերացնում. օրինակ՝*

mūś nōrō-ra *բարի մարդուն (տր.)*

մարդ բարի-ին

*(*Grierson, *հտ. 8, մաս 2, էջ 213):*

Ածականը կարող է գոյականից չատ հետո դրված լինել, այսինքն՝ գոյականի և ածականի միջև բազմաթիվ բառեր մտած լինելով՝ գոյականն ու ածականը իրարից չատ անջատված լինել. այս դեպքում համաձայնությունը չի կորցնում ուժը և միջոց է դառնում որոշելու, թե ածականը որ բառի հետ պետք է կապել. օրինակ՝

«Վասն որոյ բաղում իսկ գովութիւնք յեպիսկոպոսաց սիրոց և յամենայն եկեղեցւոց բարձրանային ի փառս Աստուծոյ և ի մխիթարութիւն աշակերտելոցն ոչ սակաւք (Կորիւն):

Այստեղ **սակաւք** *ածականը պատկանում է* **գովութիւն** *բառին, որից անջատված է 9 բառով. բայց նա չի կարող պատկանել ոչ* **աշակերտելոցն** *բառին, ոչ* **մխիթարութիւն** *բառին և ոչ էլ* **փառս** *բառին, որովհետև հոգնակի ուղղական հոլով է:*

Ածականի և գոյականի համաձայնության միջին վիճակը ներկայացնում է վրացերենը, ուր ածականը որոշ հոլովներում համաձայնում է գոյականի հետ և որոշ հոլովներում՝ ոչ: Հոգնակին երկու տեսակ է վրացերենում -ebi *և* -ni:

Երկրորդ տեսակի հոգնակիի հետ ածականը թվով և հոլովով համաձայնում է, իսկ առաջին տեսակի հոգնակիի հետ հոլովով համաձայնում է, բայց թվով՝ ոչ. օրինակ՝

նգ. [ვეთალი კაცი] *վեթիլի կացի – բարի մարդ*
հոգ. [ვეთალი კაცერი] *վեթիլի կացերի կամ վեթիլնի կացնի*
[ვეთალნი კაცნი] *«բարի մարդիկ»*
հոգ. սեռ. [ვეთალთა კაცთა] *վեթիլիա կացիրա կամ վեթիլիձա կացձա*
[ვეთალთა კაცთა] *«բարի մարդոց»*

Ուրիշ դեպքերում ածականը մնում է անփոփոխ (Dirr, Gram. georg. 46).
մեծավաստակ վաստակոց քոց և այլն (MSL., 204, 179...).
կին մի ի կանանց (MSL., 204, 182):

ԱԾԱԿԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Ամեն մի ածական, նայած իր իմաստին, ստանում է այս կամ այն հոլովով խնդիրը. օրինակ՝ ասում ենք **փողի կարոտ, խելքից զուրկ, հարստություն փափագող, փողով հարուստ** *և այլն, և այլն:*

Այս երևույթը ընդհանուր է բոլոր լեզուներին. միայն թե մեկի խնդրառության դրությունը համապ նույնը չէ մի ուրիշ լեզվի հետ:

ԳՈՅԱԿԱՆ ԵՎ ԱԾԱԿԱՆ

Թեև գոյականը կարող է առնվել իբր ածական, օրինակ (**Էչ մարդ**) *և ածականն էլ իբր գոյական (Կարմիրները եկան), բայց կան դեպքեր, երբ գոյականը կամ ածականը իրենց* **ինքնուրույնը** *կորցրած են լինում: Օրինակ՝* **թագավոր, գործավոր, բանավոր, զինվոր** *բառերը լապա (ըստ կազմության)* **ածական** *են, բայց ո՞վ է, որ դրանք իբրև ածական է գործածում: Գրաբարում կարելի է ասել* **այր թագաւոր** *«մի մարդ, որ գլխին թագ ունի», բայց աշխարհաբարում* **թագավոր** *բառը իբրև ածական կարո՞ղ ենք գործածել:*

Նմանապես **վաճառական** *բառը, որ* **ական** *մասնիկով կազմված բառ է, հետևաբար և* **ածական** *է, մենք այժմ գործածում ենք միայն իբր գոյական և այնքան, որ նրանից ածական կազմելով ասում ենք* **վաճառականական:**

Թուչուն, սողուն, անասուն *նույնպես ածական են, կազմված* **ուն** *մասնիկով, բայց այժմ բոլորն էլ* **գոյական** *են և ածականաբար չենք գործածում:*

Երրայեցերենում ածականը միշտ ետադաս է:

Քրդերենում ածականը միշտ ետադաս է և չի կարող բնավ լինել նախադաս (Beidar, Gram. Kurde, էջ 18):

Հինդուստաներենում ածականը նախադաս է. համաձայնության կողմից ածականները բաժանվում են երկուսի. **փոփոխական և անփոփոխ.** *մի մասը՝ (նրանք որ վերջանում են ā կամ wān) թվով և սեռով համաձայնում են (բայց ոչ հոլովով). մյուս ավելի ստվար մասը (դանադան վերջավորությամբ) բնավ չեն*

համաձայնում (Bonnerjeri, Gram. hindi 9): Այստեղ երևում է հին համաձայնության շրջանից դեպի նոր անհամաձայնության շրջանի փոխանցումը:

Քրդերեն չարադասության բնական շարքը հետևյալն է.

Xude ǧennat baldšə da bo einsani

Աստված արքայությունը ձրի տվեց մարդուն:

(ըստ Beidar, Gram. Kurde 42).

Աննամերենում ածականը նոադաս է:

Ուգրո-ֆիննական լեզուների մեջ ածականը գոյականից միշտ առաջ է և ոմանց մեջ (օրինակ, ֆիններենում) համաձայնում է և ոմանց մեջ (օրինակ հունգարերեն)՝ ոչ: Օրինակ՝

ֆիններ. matala-ssa möki-ssä

ցած(ում) խրճիթ(ում).

հունգ. kiš fiū փոքր տղա, kiš fiūt փոքր տղաները:

Արաբերենում ածականը դրվում է գոյականից հետո և համաձայնում է սեռով, թվով, հոլովով և նույնիսկ ȣ հոդով, որ կրկնվում է թե որոշյալ և թե անորոշ:

Դանիերենում ածականը միշտ նախադաս է և գոյականի հետ համաձայնում է թվով և սեռով, բայց ոչ հոլովով. հոլովը ստանում է միայն գոյականը.

ung Kone երիտասարդ կին, ungt trae մատղաշ ծառ.

սեռ. unge Kones.

հոգ. ուղղ. unge Koner.

հոգ. սեռ. unge Koners:

Շվեդերենում թեև ստացական ածականը առաջ է դրվում, բայց ընտանեկան լեզվով նոադաս է. օրինակ, far min հայր իմ, mor din մայր քո, syster hans քույր նրա և այլն:

(Poestion, Schwed. 148):

ՀՈԴ

Հատուկ անունները բոլոր հին լեզուների մեջ հոդ չեն ստանում. նոր լեզուները չարունակում են այս վիճակը, բայց ոմանք սկսել են հատուկ անունների վրա էլ հոդ դնել. այսպես մեր արևելյան գրականում՝ Ներսեսը, Գրիգորը, Մեծն Տիգրանը և այլն:

Կան լեզուներ, որ անցման շրջանի մեջ են և երկուսի վրա տատանվում են. իտալերենում ընդհանրապես հատուկ անունը հոդ չունի. ասում են Pietro, սեռ. di Pietro, բաց. da Pietro և այլն, բայց իգական անունները կարող են հոդ էլ ստանալ. եզ. l' Anna, սեռ. dell' Anna, տր. all' Anna.

Մաքուր գրականի մեջ այս ձևը լավ չի համարվում, բայց ժողովուրդն ունի: Ճիշտ այսպես նաև մեր արևմտյան Հայերենում ժողովուրդը գործածում է հոդ՝ Ներսեսը, Լևոնը և այլն, իսկ գրական լեզվում հաճախ՝ ոչ, մանավանդ, երբ խոսքը նշանավոր մարդկանց մասին է: Օրինակ՝ կարելի է ասել՝ **Աբեղյանը գրել է ուղղագրության մասին. Կոստանյանը գրել է Հայոց հեթանոսական**

կրոնը. Ալիչան և Տաչյան մեր մեծագույն բանաստեղծներն են. *բայց՝* **Մեծն Տիգրան տիրեց... Մեսրոպ հնարեց հայերեն գրերը** *(հակառակ արևելյան գրականության, ուր այս բոլորը արտացոլվում են Հոդով): Հակառակն է իտալերենը, ուր նչանավոր մարդիկ ստանում են Հոդ. ինչպես՝*

il Tasso, il Tiziano.

il poeta Tasso, il pittora Tiziano:

Հայցականում միշտ դրվում է Հոդ.

ինչպես. Հայկ սպանեց **Բելը:**

ՄԻ ԱՆՈՐՈՇ ՀՈԴ

Այսպիսի, այդպիսի *բառերի հետ երբեմն դրվում է* **մի** *անորոշը և երբեմն՝ ոչ. օրինակ՝*

Այդպիսի մարդ չկա այստեղ.

Մի այդպիսի բան լսել եմ.

բայց կարելի չէ ասել. օրինակ. (առանց **մի** *անորոշի)՝*

Անհանդուրժելի էր դառնում նրան այն փաստը, որ այնպիսի թույլ արարած, ինչպիսին Նատաչան էր, ինքը չէր կարող իր իշխանության տակ պահել (Միրաս, Ձգրված օրենք, 252):

Ասացինք, որ անորոշ Հոդը գործածվում է հատկապես տևական ցույց տալու: Այս գործածության պատահում ենք համախ բառարանների մեջ. օրինակ՝ **ուտեմ-տիտեմը** *Ղրր. մի տևական ուտելի խոտ.*

նոճի. *մի տևական բարձր ծառ.*

դլփին. *մի տևական ձուկ.*

կվարց. *մի տևական Հանք:*

Արևմտյան Հայերենը այս դեպքում չատ կարճ ձևով ասում է «բույս մը, Հանք մը, քար մը» և այլն, ինչպես գրաբար՝ «բոյս ինչ, խոտ ինչ, Հանք ինչ», իսկ արևելյան Հայերենը ստիպված է երկարաբանությամբ ասել «մի տևական ձուկ, մի տևական Հանք, կամ «ինչ-որ բույս, ինչ-որ Հանք»: Կարելի չէ ասել «կվարց «Հանք» կամ «դլփին ձուկ», որովհետև այն ժամանակ կարելի էր Հասկանալ ընդՀանուր սեռ, և Հանկարծ անգիտակ մեկը կարող էր ասել, օրինակ. «խամսին դլփին է», փոխանակ ասելու «խամսին ձուկ է», և այս՝ Հատկապես օտար լեզուների Համար:

Անորոշ Հոդը սովորաբար գոյականից առաջ է դրվում. **մի մարդ, մի կին.**

Երբ մի որևէ ածական դրված է գոյականի վրա, Հոդը կարող է երկու տեղ էլ դրվել. ինչպես՝ **մի մեծ մարդ, մեծ մի մարդ. վիթխարի մի գործ, մի վիթխարի գործ. այսպիսի մի մարդ. մի այսպիսի մարդ:**

Այսպես է նաև գերմաներենում, ուր թեև անորոշ Հոդը սկիզբն է դրվում սովորաբար, բայց կարող է և հետո դրվել. ինչպես՝ ein reicher Mann, solch' ein Mann.

Դանիերենում սովորական ձևն այն է, որ Հոդը մեջը մտնի. ինչպես՝ saa rig en mand, *այսքան Հարուստ մի մարդ. թեև կարելի է նաև ասել* saa rig mand.

Անորոշ հոդը ցույց է տալիս երբեմն տեսակ. ինչպես՝ սա մի խոտ է. սա մի ձուկ է. սա մի անասուն է. ուր գերմաններեն ասում են eine Moosart, eine Heuart *և այլն: Դանիերենն էլ միայն հոդ է դնում հայերենի պես.* et hø *մի տեսակ խոտ (խոտ մը),* et graes *խոտ մը:*

Անորոշ հոդը թվականի հետ ցույց է տալիս մոտավորություն. ինչպես՝ **3 օր մը կեցա. 8 հոգի մը կլինի. մի հինգ տանձ կլիներ.** *այսպես է նաև դանիերենում. օրինակ՝* en fjorten dage **մի 14 օր.** en tredive mennesker **50 մարդ մը.** *(բայց դանիերենում գոյականը միշտ հոգնակի կլինի), նաև չվեդերենում՝* vi voro en personer fume *(քսան հոգի մը կայինք):*

Հոգնակիի վրա էլ կարելի է դնել **մը.** *օրինակ՝ ընդհանուր խոսքեր մ'ըսելով կանցնի (այսպես է գրել Տաչյան, Թրգմ. Հերթերի Հայկ. աշխ., Վիեննա, 1895, էջ 64):*

Հին իտալերենում հատուկ անունը կարող է ստանալ որոշիչ հոդ. օրինակ՝ in Cathub *Կաթուբը:*

Ամեն տեղ էլ կա մի չրջան, երբ հոդի գործածությունը տատանվում է. այսպես՝ ականդինավյան հին գրողների մոտ ոտանավորների մեջ հոդ չի գործածվում, բայց արձակի մեջ գործածվում է. դա նրանից է, որ բանաստեղծները հետևում են հին լեզվին, իսկ սովորական գրողները՝ ժամանակակից լեզվին, որից էլ հետևում է հոդի ժամանակ: Մեր մեջ էլ արևմտյան գրողները որոշ տեղեր հոդ չեն գործածում գրականության մեջ, թեև խոսակցության մեջ՝ միշտ, օրինակ՝ **Ներսես** *մի նշանավոր պատրիարք էր, և* **կանչէ Ներսեսը:**

Աշխարհաբարի մեջ երբ գոյականը ցուցական կամ ստացական ունի, հոդ անպատճառ ստանում է. ինչպես՝ **այս տունը, իմ գրիչը:**

Եվրոպական լեզուները, ընդհակառակը, հոդ չեն ստանում. օրինակ՝ mon livre ma maison, mein Hans.

Միայն իտալերենն է, որ այս դեպքում նման է աշխարհաբարին. ինչպես՝

il mis giardino *պարտեզս.*
la tua penna *քո գրիչը.*
i miei giardini *իմ պարտեզներս:*

Այսպես նաև հունարենի մեջ. օրինակ՝

ἠκούσατε τήνετόηνιν ταύτην կամ՝
ἀντὶ τὴν ξτόησω
լսեցիք այս լուրը.
ἐκεῖνος ὁ ἄνθρωπος այս մարդը.
ἡώραία αντη οἰκία այս սիրուն տունը.
ὁ ῥίχος μου բարեկամս, իմ բարեկամը:

Եվրոպական լեզուների մեջ տեղանունները զանազանվում են հոդի գործածության կողմից. այսպես՝

Ֆրանսերենում երկրները, նահանգները, գետերը և լեռները հոդ ստանում են, իսկ քաղաքները, գյուղերը չեն ստանում.

իտալերենում լեռների, գետերի, ծովերի, լճերի, նահանգների և երկրների անունները որոշ դեպքում հոդ ստանում են և որոշ դեպքում՝ ոչ. ինչպես՝ Europa

կամ l' Europa. բայց ծովերի և գետերի անունները գրեթե միշտ հոդ են ստանում, ինչպես՝ l' Atlantico, il Po. նոր հունարենում անձանց, երկրների, քաղաքների, կղզիների և գետերի անունները հոդ ստանում են, ինչպես՝

ὁ Δημήτριος ἡ Εὐρώπη τὸ Βξολτνον

Դիմիտրի, Եվրոպա, Բելին

Իտալերենում հատուկ անունը հոդ ստանում է՝ 1) երբ նրանից առաջ կա ածական, l'amica Roma. 2) երբ հատուկ անունը առավելական կամ փաղաքշական մասնիկ ունի. խոչոր Կարլը, il Carlone, il Giovannino Հովհաննեսիկը. 3) իբր հատուկ անուն գործածվելիս, i Ciceroni, i Virgilii. 4) կանանց անունը ընտանեբար խոսելիս, la Teresa. 5) ազգանունները, il Petrarca, l' Alighieri. 6) քաղաքների անունները հոդ չեն առնում. 7) լեռ, լիճ, գետ, ծովատ և երկիր ստանում են որոշ դեպքերում:

Ֆրանսերենում եզակի հատուկ անվան առաջ դրված որոշիչ հոդը նչան է նախատիների կամ ծաղրի (Gram. de l'acad. francaise, էջ 40, 1932):

Langue d'Oc լեզվում անձնանունների վրա դրվում է որոշյալ հոդ և ցույց է տալիս ընտանութիյուն, մտերմութիյուն, ինչպես՝

lo Jan, la Jana

(Salvat, Gram. Occ. 18):

Հին ֆրանսերենում արական և իգական անձանվանց վրա կդնելին en և ne որոշիչ հոդերը, այժմ Langue d'oc լեզվում մնում է միայն արական en ձևը, ինչպես՝ En Raimon (=Mr Raimond, անդ. էջ 22):

Կատալան լեզվում հատուկ անունը հոդ կստանա,

l'Andreu Անդրեասը, la Maria Մարիամը,

el Tomas Թոմասը

Արական և իգական անվանց պատվո հոդ են ստանում այն է՝

En Josep պր. Հովսեփ,

N' Antoni պր. Անտոն, Na Elsa կամ՝

N' Elsa տիկին Էլզա, որոնց կրճատ ձևերն են լա. domine տեր,

domina տիկին ձևերից (Huber, 25):

Հատուկ անվանց մակդիրը ստանում է որոշիչ հոդ. օրինակ՝ **Քաջն Վարդան, Մեծն Տիգրան**, բայց անսովոր է աշխարհաբարում կրկնել հոդը նաև հատուկ անվան վրա. միշտ չէ ասել քաջակորովն Մանասեր (Միրաս, ՀԳր. օր. 222):

Պորտուգալերենում տեղվո հատուկ անունները հոդ են ստանում (Anstett, էջ 55):

Հոդը կրկնվում է ֆրանսերեն գերադրականում, օրինակ՝ la maison la plus belle, բայց la grande maison:

Արաբերենում որոշիչ հոդը կրկնում են, el walad el kabir մեծ տղան:

Որոշիչ հոդը երբեմն արտահայտում է մի կարևոր տեղեկութիյուն, որ առանց այդ հոդի՝ անհրաժեշտ էր ուրիշ բառերով բացատրել. Համմ. Թեմականից ուսուցիչներ են եկել քեզ տեսնելու, կամ՝

Թեմականի ուսուցիչներըՀ եկել են քեզ տեսնելու:

Առաջին դեպքում միայն մի քանի ուսուցիչներ են եկել և ոչ թե բոլորը. երկրորդ դեպքում բոլորն էլ միասին եկել են:

Եթե գիշերը գող գա, կրոնվի:

կամ՝

Եթե գիշերը գողը գա, կրոնվի:

Առաջին դեպքում հայտնի չէ, թե գող պիտի գա՞. կարող է պատահել որ գա, և կարող է պատահել, որ չգա, բայց երկրորդ դեպքում, հայտնի է, որ **գողը անպատճառ պիտի գա** *կամ նրա մասին նախապես խոսակցություն եղել է:*

Նույնպես և գրաբար.

Արթուն կացէք, զի ոչ գիտէք յորում ժամու **Տէրն** *ձեր գայ: Զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն, յորում պահու* **գող** *գայ, հսկէր և ոչ տայր ական հատանել տունն իւրոյ (Մտթ. իգ. 42–43):*

Առաջին դեպքում **Տէրը** *անպատճառ պիտի գայ, երկրորդ դեպքում գալուստը երկրայական է:*

Երբ գոյականը ունի ածական, հոդը դրվում է գոյականի վրայ. ինչպես՝

Յիններորդ ամսեանն (Բ. եզր. ժ. 9):

Յամսեանն իններորդի (Ա. եզր. Թ. 5):

իսկ երբ գոյականը հատուկ անուն է, հոդը դրվում է ածականի վրա.

Մեծն վարդան. Սուրբն Սահակ.

այսպես նաև ուրիշ լեզուներում. ինչպես՝ il grande Alessandro *կամ* Alessandro il grande.

Եթե գոյականից հետո ցուցական կա դրված, գոյականը անպատճառ հոդ է ստանում. իսկ եթե ցուցականը նախադաս է, հոդ չի դրվում.

Յաւուրն յայնմիկ (Մտթ. Ը. 13):

Յայնմ աւուր (Մտթ. ԺԸ. 1):

Եթե գոյականը ունի հատկացուցիչ, հոդը դրվում է հատկացուցչի վրա՝

Այս ցքահանայապետն և ցիչխանս տաճարին և ցծերսն (Ղկ. ԻԲ. 52):

Փարիսեցիքն եւ օրինացն վարդապետք (Ղկ. Ե. 17):

Եթե հատկացուցիչը հատուկ անուն է, հոդը դրվում է հատկացյալի վրա՝

Ջաքեոսն Դաւթի (Ղկ. ա. 32):

Եթե հատկացուցիչները երկուսն են, հոդը ստանում է երկրորդը՝

Եղև պատճառ մահուան մարդոյն (Եզն. 47):

Օրինակ՝

Ես նրա քույրն եմ. Դու նրա եղբա՞յրն ես:

Կարապետն էր թե Գրիգորը. ես տանն էի.

Մարդն էլ, կինն էլ — մարդն ալ. կինն ալ.

Քույրն ու եղբայրը. Հացն ու պանիրը.

Կաթին անգամ դժվար եմ մարսում:

Փույրն իակ հեռացել է նրանից:

Անախորժ է **անգամ** *բառից առաջ դնել* **ը**, *օրինակ.*

Նրա դնմքի մկանունքը անգամ չէին չարժվում

(Շիրվանզադե, Երկերի լիակ. ժող., 1930, հտ. Դ., էջ 331):

Մինչև անցյալ դարի վերջը երկու գրական լեզուների մեջ օրենք էր, որ երբ որոշյալ բառին հաջորդում էր ձայնավորով սկսող մի բառ, հողը լինում էր **ն**, *իակ բաղաձայնով սկսող բառի մոտ դրվում էր* **ը**,

Անձրևը սաստկացավ:

Անձրևն ուժեղացավ:

ե *և* **ո** *տառերով սկսող բառերն էլ մտնում էին ձայնավորների չարքը.*

Արևնելավ:

Արևն ոսկեզօծում էր լեռների գագաթները:

Նաև **ս, չ, գ** *բաղաձայններով սկսող բառերը, իրենց հենարանը* **ը** *ձայնի պատճառով, ստանում էին իրենցից առաջ* **ն** *հողը. ինչպես՝*

Արևն սկսեց թեքվել:

Շուշիկն չտապում էր տուն:

Սարգիսն զգեստները հանեց:

հ *բաղաձայնով սկսող բառերն էլ համախ ունենում էին նույն իրավունքը՝*

Մի եղբայրն հովիվ էր, մյուսը՝ բանվոր:

Այս օրենքները այժմ հնացած են համարվում, և ամեն տեղ էլ որոշիչով հողն է բաղաձայնահանդ բառերի համար **ը**. *– Արևը այժմ ավելի էր բարձրացել.*

Լուսինը արդեն թաքնվել էր լեռների ետևում:

Քաջերն են միայն, որ դեռ ուզում են չարունակել նախորդ օրենքը:

Անորոշ գաղափարի համար կարելի չէ դնել որոշիչ հող. օրինակ՝ սխալ է ասել՝ Բազմաթիվ մտքերը գալիս ու բախում էին նրա ուղեղին (Միրաս. Զգրված օրենք, 132):

Որոշիչ հող դնել հաճելի չէ գրական լեզվի մեջ [հետևյալ դեպքերում]՝

1) **ութիւն**-*ով վերջացող բառերի հոլովման ժամանակ, բացի ուղղականից, օրինակ՝ Ուշադրութիւնդ եմ քո պատմութիւնը, բայց՝ պատմութեան աղբյուրները. եթե ասենք* **պատմութիւնը**, *պիտի հասկանայինք իր պատմութիւնը (***ը** *դիմորոշ և* **ոչ** *որոշիչ հող):*

2) **բացառական հոլովի** *վրա՝ արևելյան հայերենում, օրինակ՝ քաղաքից եմ գալիս, թեև արևմտահայերեն՝ քաղաքէն կուգամ:*

3) **գործիական հոլովի** *վրա, թե՛ արևելահայերեն և թե՛ արևմտահայերեն բարբառներում:*

4) **–ումն** *(ում)* **հանգող** *բառերի սեռականը:*

Զհասավ իր մտադրութիւնների իրագործման:

Մի *անորոշը գործ է ածվում գոյականներից հետո. ինչպես* **այր մի:**

[«Որսորդ **մի** *կալաւ կաքավ* **մի»**] *և այլն: Բայց ասվում է* **մի ոմն.** *հետևաբար, այս ևս փոխելով, գտնում են* **ոմն մի** *(Վրք. Հց. ա. 356, 358):*

Ակնա բարբառով ցայժմ կրսվի՝ նուռ մի, պաղ մի...
է ոմն տեղի յեգիպտոս (Պղատ. տիմ. 83). երկաթ ոմն (Պղատ. Օրին.) 70. ութոնօք ոմամբք ասպարիսօք (Պղատ. Օրին. 116). Գիտ ոմն Հոսի (Վրք. և վկ. ա. 323):

Նույնպես **ոք** *դարձավ անորոշի նշան, որ մինչև անգամ հոգնակիի հետ գործ էր ածվում.*

Եղբարք **ոք** *(փխ. ոմանք) (Վրք. Հց. ա. 226):*
Ո՞ է քաղաքս այս (այս ո՞ր քաղաքն է) (Վրք. և վկ. ա. 498).
ոմն, *սեռ. որումն (փխ. ուրումն (Վրք. Հց. ա. 20/7 անգամ).*
վասն չար ունակութեան ոման մարմնոյն (Պղատ. Տիմ. 167).
ըստ մարմնոյ իմիք)

և այլն *ձևը հետամուտ է:*

Ոսկեդարի մեջ գործածված բոլոր օրինակները պետք է փոխել. ըստ որում նկատված է, որ բնագիրը ամբողջ հատվածը դրած է, որուն համեմատ պիտի լիներ նաև հայ թարգմանությունը. նոր արտագրողները խուսափելով երկվությունից, իրենց կողմից գրած են **հայր,** *որով Ոսկեդարուն բառերքի մը մեջ մտած է նորամուտ ձև (այս մասին խոսված է Վարդանեան, Բառաքննական դիտող. (Ա., էջ 18):*

* * *

Որոշիչ հոդ չունեցող բարբառները հոդ արտահայտելու համար կարող են դիմել նաև **չեչտի օգնության:** *Օրինակ Վանի բարբառով (որ հոդ չունի), եթե ասենք՝*

«Կողինք կծնծնմ, որ թօզ դուրս գայ»

այս նշանակում է, որ մի որևէ աննկողին է ծնծում, որպեսզի օդի մեջ փոչի բարձրանա (երկուսն էլ՝ **կողինք** *և* **թօզ** *անորոշ են):*

Իսկ եթե ասենք՝

Կողինքը *կծնծնմ, որ* **թօզը** *դուրս գայ,*

այդ նշանակում է որ այն **աննկողինը** *(որոշյալ) ծնծում է, որպեսզի մեջի* **փոչին** *(որոշյալ) դուրս գա ու մաքրվի:*

Այսպիսով ուրեմն, չեչտյալ գոյականը անորոշ է, իսկ անչեչտ գոյականը, որին հաջորդում է չեչտյալ բայը, որոշյալ է:

* * *

Աշխարհաբարում, երբ հատկացուցիչը և հատկացյալը որոշյալ են, արևմտյան գրականում երկուսն էլ ստանում են **որոշիչ հոդ,** *արևելյան գրականում հատկացուցիչ հոդ չի ստանում, իսկ հատկացյալը ստանում է: Գրաբարի մեջ, հակառակ վերջինիս, հատկացուցիչն է ստանում հոդը և հատկացյալը մնում է առանց հոդի: Օրինակ՝*

Գրաբարում՝ Գոյն թղթոյն – աշխարհաբար արևմտահայերեն՝ Թուղթին գույնը – արևելահայերեն՝ Թղթի գույնը:

1. Այս դեպքում, եթե հայցական հոլովով է դրված հատկացյալը, գրաբարում դրվում է միայն **զ** նախդիրը, իսկ հոդ չի դրվում, ինչպես՝

զպղտորութիւն աչացն — աչքերի պղտորությունը:

2. Եթե սակայն հատկացուցիչից հետո դրված են ուրիշ հատկացյալներ, որոնք նույն հատկացուցիչին են պատկանում, **ն** հոդն ստանում են, ինչպես՝

զպղտորութիւն աչացն, զաղտն և զրիժն:

Այս բոլոր պայմանները ներկայանում են մեզ եզնիկի հետևյալ հատվածում:

Նա եւ որ ընդ ճառագայթս արեգականն (1) հայել կամիցի, պարտի զպղտորութիւն աչացն (2), զաղտն և զրիժն (3) ի բաց պարզել, զի մի մթարքն որ զրօք չողայցեն,՝ արգել հայելոյ ի յատակութիւն լուսոյն (1) լիցին (եզ. 5–6):

Նա էլ, որ արևի ճառագայթներին նայել է ուզում, պարտավոր է աչքերի պղտորությունը, աղտը և բիժը մաքրել, որպեսզի չլինի թե բիրերի չուրջը երևվացող ճիպոները՝ լույսի հատակության նայելու արգելք լինին:

Թ վ ա կ ա ն

Թվականները, բացի **մի**-ից, պահանջում են հոգնակի գոյական, աչխարհաբարի մեջ կարող է դրվել եղակի. սրա հին օրինակներն են՝

Հրամայեաց երկու առիւծուն (Վրք. Հց. ա. 348):

Հյ. եռասուն (30) (Պգատ. Օրին. էջք 389, 188, 222, 298):

վեցատասան (16) (Ն. տ., էջ 222):

Դասական թվական

Դասականները կազմելու մասնիկն է **բորդ**, որ հին լեզվի մեջ դրվում է թվականը կազմող բոլոր անդամների վրա, իսկ նոր լեզվում՝ միայն վերջում:

Առհասարակ չարքը այն է, որ նախ դրվում է տասնավորը և հետո միավորը, բայց հաննիք իրրև բացառիկ օրինակ. առաջներորդ, քսաներորդ, երկրորդ քսաներորդ, երրորդ քսաներորդ, չորրորդ քսաներորդ (Ա. մնաց. իդ. 17–18 նորագիտին մեջ), իսկ սովորականը ունի քսաներորդ առաջներորդ և այլն). թվի սովորական ազդեցություն:

Անձնական թվականներն էլ չփոթվեցին ուղղական և հայցական, որովհետև **ք** և **ս** չփոթվել էին, օրինակ՝

Գիտասջիք դի այս երեսեան («երեքին») են չարհոդք մարմնոյն.

(Վրք. Հց. ա. 597):

Միոջ տրականն ունեն՝

ի ժամանակեան **միոջ** (Բուզ. 3-րդ):

Յամուր տեղւոջ **միոջ** (Բուզ. Դ. խր. 162):

ի **միոջ** վայրի (Բուզ. Ե. ԽԳ., էջ 261):

ի քաղաքի **միոջ** (Բուզ., էջ 103):

Դեպ եղև նոցա դիպել այլ քաղաքի **միոջ** (Բուզ. 103):

Յաւուր **միոջ** (Բուզ. 243):

ՄԻԻՍ (ՄՑՈՒՍ)

Նախ նյութեր հավաքելը մի՛ բան է, գրելը՝ **միւս** *բան (Շահազիզ, («Էջմիածին», 1950, սեպտ., էջ 52ա):*

Մ Ի

Թեև բառը առանց **մի** *հոդի անորոշ է համարվում, բայց դեպքեր կան, երբ* **մի** *հոդի գործածությունը անհրաժեշտ է. հակառակ դեպքում ուրիշ իմաստ է ստացվում: Օրինակ՝*

Ինչպես կարդում ենք Մննուասի **մի** *արձանագրության մեջ:*

Այստեղ **մի**-*ն ցույց է տալիս, որ Մննուասը մի քանի կամ շատ արձանագրություններ ունի: Իսկ եթե առանց* **մի** *հոդի ասենք՝*

Ինչպես կարդում ենք Մննուասի արձանագրության մեջ...

այդ նշանակում էր, թե Մննուասը միայն մի հատ արձանագրություն ունի: Իսկ եթե հարկ լինի հատկապես այդ էլ շեշտել, պիտի ասենք՝

Ինչպես կարդում ենք Մննուասի մի՛ (մի՛ միակ) արձանագրության մեջ (այն միակ):

ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԸ

Կարարդինական լեզվում թվականը դրվում է գոյականից հետո և այնպես է կրճատվում, որ դառնում է մի մասնիկ. ինչպես՝

ցրխութ՝ 2 մարդ,

ցրխուփս՝ 10 մարդ,

նույնիսկ 100-ավորները կազմում են այս ձևով. ինչպես՝

ṣṣc 100, *որից* ṣətᶜ 200, ṣəṣ 300.

ṣəpʻtl 400, ṣəx 600 *և այլն, իբր թե* ṣṣcxtᶜū.

100×2 = 200 և այլն:

Ռուսերենում թվականը, դրվելով գոյականից **առաջ, ճիշտ թիվն է նշում, դրվելով վերջը՝ մոտավոր թիվ է նշանակում.** *օրինակ՝*

Приду часа в три, или четыре.

Կգամ 3-ին կամ 4-ին.

У меня приятелей пять, шесть.

5–6 բարեկամ ունեմ:

Իտալերեն vent'uno, trent'uno *բառերից հետո եկող գոյականը միշտ եզակի կլինի, իսկ սրանք նոտագաս են՝ հոգնակի. ինչպես՝*

vent'un anno 21 = anni vent'uno (Ferrari, 63):

Ֆրանսերեն թվերից կա մակրայ prièmierement, troisièmement:

Իտալերեն կա միայն primieramente, seconduriamente *իսկ հետո՝* in terzo lungo, in quanto lungo, *հայերեն՝ երկրորդաբար, երրորդաբար և այլն։ Ֆրանսերեն* un à un, deux à deux, *իր* ad uno ad uno, ax due a due, *հայերեն՝* **մի առ մի, երկու առ երկու։**

* * *

Երբ թիվը անորոշ է, կարելի է արտահայտել **մոտ, մոտավորապես, չուրջ, գրեթե** *և այլն ձևերով. բայց կարելի է նաև դնել կողքին հաջորդ թիվը կամ ավելացնել* **մի** *թվականը. օրինակ՝*

«Մոտ հինգ հոգի էինք». «Մի հինգ հոգի կային». «5–6 հոգի կլիներ». «մի 5–6 հոգի կլիներ»։

Այսպես է նաև թուրք. և թաթար լեզուների մեջ, ինչպես և պարսկերենում.

beš – alt kiši

bir beš nefer adam (Казем-бек, *էջ 430*)։

Թվականները, ըստ լեզվի, գոյականից առաջ կամ վերջ են դրվում, ոմանք այստեղ նրբություն են մտցրել. ռուսերենում առաջ դնելով ճիշտ թիվն է հասկացվում, վերջը դնելով՝ մոտավոր թիվն. այսպես նաև պարսկերեն **երկու տարի,** du sāl, sāī du *մոտ երկու տարի (բայց «երկու տարի մը»), ընդհակառակը՝ ջավայերենում, ուր թվականը սովորաբար առաջ է դրվում. վերջը դրվելով ցույց է տալիս բացարձակ ճիշտ թիվ. ինչպես՝*

rong rupiyah *2 ռուփի,*

rupiyah loro *ճիշտ 2 ռուփի և ոչ ավելի։*

(Bohatta, Gr. jav. 50)

Ոչ եթե ի ծովաւ էր որս նորա, այլ ի **լճակի միոջ** *փոքրկան (Ոսկ. յհ. ա. 1). երկու ակունք ի միոջ վայրի կային (Ոսկ. Բ. տիմ., էջ 232)։*

Որպէս **օրէնսգէտի միոջ** *հրաման ետ նմա գործել։*

(Եփր. Ծն. տե՛ս ՆՀԲ օրէնսգէտ)

Մի *թվականը հաճախ աղվում է, ինչպես՝* **ամսական, տարեկան, օրական, օխանոց, արշինանոց** *և այլն, բոլորն էլ* **մի-** *այսպես և յատիններեն* anniculus *«մի ամսայ», վրացերեն տարիպի, հայերեն ամիկ, կարևոր։*

Դրվում է ավելադրությամբ, իբր մեղմացուցիչ, «մոտ». ինչպես

մի հինգ հոգի. վեց. հոգի մը կըլլայ.

Թուրքերեն՝ պիր իչ էվ օլուր։

Ոմանք էլ (հաչվապահական լեզվով) ասում են **մի հարյուր, մի հազար,** *որոնք ըստ օրինի* **մի** *չունեն, բայց* **միլիոն, միլիարդ** *միշտ* **մի-**ով *են։*

Թվականի բացարձակը կարող է ստանալ **ստացական** *հող և այն ժամանակ նշանակում է* **մենք, դուք երկուս.** *ինչպես՝* **երկուքնիս, երկուքնիդ, երկուքնին, երեքնիս, երեքնիդ, երեքնին,** *սկսյալ չորսից կա միայն հոգնակի ձևով.* **չորսերնիս, հինգերնիդ** *և այլն։ Նույնը կա նաև թուրքերեն. ինչպես՝* ikimiz, -niz *և այլն. այսպես նաև չուվաշերեն* tăvat-săr **դուք չորդ,** tăvattăšc *չորսերնին.* iksemer **երկուքնիս** *և այլն* (Ашмарин, Матер. 183).

ԹՎԱԿԱՆԻ ՀՈԳՆԱԿԻՆ

Աչխարհաբարում Թվականից հետո հաճախ գոյականը հոգնակի չի դրվում, օրինակ՝ 9 հոգի, 2 տուն, այս երևույԹը սովորական է չատ լեզուների մեջ, ինչպես պարսկերեն, Թուրքերեն, հունգարերեն. նույնիսկ անգլերենում կան այսօրինակ ձևեր.

much fruit *չատ պտուղ.*
four hundred men *4 հարյուր մարդ.*
two dozen collars *2 դուժին վզնոց և այլն:*
(Jespersen, Growht and ... 175)

Բրետոներեն քերականուԹյան մեջ էլ հատուկ կանոն կա, որ ասում է, Թե Թվականներից հետո գոյականը հոգնակի չի դրվում. ինչպես՝

dec dén	diüe verh
10 մարդ,	*2 աղջիկ,*
cand	soudard
1000,	*զինվոր:*

(Guillome 103)

Առանց համաձայնուԹյան Թողնելու մտայնուԹյունը, որ և հետո տարածվեց մյուս հոլովների համար և առաջին դեպքում՝ հոգնակի ուղղականի համար: Ըստ այմ **ցուցական, ստացական ածականները** *Թեև զանազան հոլովներում համաձայնում են, բայց հոգնակի և հայցական հոլովներում չեն համաձայնում. օրինակ՝* **իմ բանք, բանց իմ, զիմ բանս, զբանս իմ, այս բանք:**

ՄԱՍՆԱՎՈՐ ՊԱՐԱԳԱՆԵՐ

Որակական ածականը, դրվելով գոյականից առաջ, մնում է միչտ անփոփոխ. գոյականից հետո՝ համաձայնում է. ինչպես՝ **բազում աւուրք, աւուրք բազումք, բազում աւուրց—աւուրց բազմաց:** *Շիչ իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ (Մրկ. ԺԴ. 3): Յորժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի՝* **Դանիել** *անուն կոչեցելոց (Կորյուն):*

Միավանկ ածականները համաձայնում են երկու դեպքումն էլ, բացի նախադաս հոգնակի ուղղական և հայցական հոլովներից.– ինչպես՝ **մեծ արքայք, մեծի արքայի, մեծաց արքայից, արքայից մեծաց** *և այլն:*

Եթե ածականը ստորոգելի է և անմիջապես բայից առաջ է դրված, չի համաձայնում. ինչպես՝ **Լի են:**

Երբ Թվական ածականը նախադաս է, մնում է անփոփոխ, իսկ գոյականը մնում է եզակի. ինչպես՝ **Հինգ այր, Հինգ աւուր** *և այլն: Բայց հոգնակի կլինի, եթե նադաս է, ինչպես՝* **աւուրք Հինգ, աւուրց Հինգ.**

«Անդ էին Թակոյկք կճեայք վեց»... (ՅՀ. բ. 6):

ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընխերենում 1 և 2 թվականները համաձայնում են գոյականի հետ ամեն կողմով, իսկ մնացյալ թվականները համաձայնում են միայն հոլովով, սեռով ու թվով չեն փոխվում: Երբ միավորը տասնավորից առաջ է դրվում, մնջտեղը մտնում է a (և) չաղկապը և իրը մեկ բառ համարվելով՝ վերջին մասն է միայն, որ հոլովվում է: Իսկ եթե միավորը հետո է, կազմում է երկու բառ և երկուսն էլ հոլովվում են (Hantich, Gram. tchèque, էջ 56–58):

Ընխերենում թվականներից հետո գոյականը հոգնակի կդրվի, իսկ բայը՝ 2–4, **հոգնակի** *կդրվի, 5-ից սկսած՝* **եզակի.** *օրինակ. ասում են «հինգ դասեր կայ»* (Hantich, Gram. tchèque, 59):

Դասականի փոխարեն բացարձակ թվական է դրվում. այսպես փրանսերեն Napoléon II *և այլն: Հայերենը չունի այսպիսի բան. նույնպես է նաև չխերենը, ուր ասվում է հայերենի պես՝* **Հինգերորդ գլուխ, № տասներորդ տունը, Նապոլեոն 2-րդ, չորրորդ հատոր** *և այլն:*

Ռուսերենում **один** *«մի» բառից հետո գոյականը դրվում է եզակի ուղղական,* **два** *«երկու», три «3», четыре «4» բառերից հետո՝ եզակի սեռական (որ հին եզակին է), իսկ* **пять** *«5»-ից սկսած՝ հոգնակի սեռական:*

Թվականից հետո եզակի գոյական դնելը սկսած է արդեն պահլավերենից. այդպիսի օրինակներ ամեն մի էջում կարելի է պատահել (այդպես են նաև թուրքերենում, վրացերենում [შვიდი შანერა] **չվիդի մանների** (Spiegel, Gram. huzv. 152):

Գերմաներենում էլ թվականից հետո կարելի է դնել եզակի. ինչպես՝ «3 փունդ, 2 զույգ», բայց նույնը կարելի չէ փրանսերենին:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ

Ժողովրդական լեզվում **որ** *դրվում է ավելաբերությամբ, իրը իմաստի սաստկում տալու համար. այսպես և պարսկերեն, թրքերեն.*

Ես **որ** *նրան չեմ տեսել.*
men **ki** ōrā né dīde em
ընթրիքի **որ** *հրավիրված եմ:*
šām-rā ki mev ud em
(Jensen, Newper. gram. 295):

Որ *հարաբերականի տեղը սխալ դրվելով անպատեհությամբ.*

Տիկին որ Պրիոն, Գաղղիոյ նախկին ատենակալ Պ. որ Պրիոնի **կին, որ** *բավական ատեն կայ ինքզինքը պահանջեց, ինքնասպանեցին՝ որու պատճառը չեն գիտեր. Տրէօի Վէր վանքին մէջ մնաւ (Ա. Տիւմա, Կնոջ մը վեպը. Զմիւռնիա, R հատ., էջ 500).* **-որ**-*ից երևում է, թե կինն է անձնասպանողը, մինչդեռ կինը նոր է մեռնում, անձնասպանողը Պրիոնն է:*

Հարաբերականը թվով համաձայնում է հարաբերյալի հետ. սխալ է, ասել՝ օրինակ.

*Այլևս ոչ մի իր, **որոնք** հիշեցնում էին իր անցյալը, նրա աչքին չէին գալիս (Սիրաս, Զգրված օրենք, 277):*

Երբ հարաբերյալը հոգնակի է, հարաբերականը կարող է դրվել եղակի, բայց միայն բաց ձևի. ըստ իմաստի նա դարձյալ հոգնակի է և պահանջում է հոգնակի բայ. օրինակ՝

Նրա ատելությամբ լի հայացքները, որ մեկ-մեկ հառվում էին Նատաչայի վրա, ցույց էին տալիս, որ աղջիկը լիովին համամիտ է հոր վարմունքին (Սիրաս. Զգրված օրենք, 280):

Որ *հարաբերականը չի կարող նաև նախորդ բառերի մի մասի հետ կապվել: Այս սկզբունքի վրա մի գվարճալի բառախաղ ունի, օրինակ, Բօլ տը Քօք, պարոն Շուպլան (թրգմ. Կ. Պոլիս, 1885, էջ 32):*

– Տիկին Բրնար և իւր աղջիկը կը ճանչնամ, խիստ սիրուն տիկիններ... որոնք ամուսնացած չեն:

– Իՙնչ, մաՙյրն ալ ամուսնացած չէ:

Ո Ր

*Հաճախ հոգնակի հարաբերյալի հետ զրաբար դրվում է եղակի հարաբերյալ. օրինակ՝ Ահա ոտքն (արքն) որ թաղեցին զայրն քո (Գծ. Ն. 9): Այս օրենքը այնպես է ազդել գրողների մտքին, որ մինչև անգամ ունենք՝ թէ **վասն որոյ իրաց** մերձեցաւ ի նա (Ղկ. ը. 47):*

Հարաբերականի պատճառով ընդմիջումը հաճախ չատ անճոռնի արդյունք է տալիս, օրինակ. Ս. Հայկունի, «Հուսեփցի աղգատոհմ» գրքում (տպ. Վաղարշապատ, 1905, էջ 35):

Այդտեղ աղբիւրի վրայ լուացք կանէր իր հօրեղբօր՝ որ Քէօր Օղլի ևս կը կոչուէր, աղջիկը:

ՈՐ–Ի ՍԽԱԼ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ

Նաթանեան, Արտաս Հայաստանի, էջ 61.

*Այս մասին անձամբ ալ բողոքեցինք կետրոնական Վարչութենան, **որ** ցարդ գոհացուցիչ պատասխան մը չեմ առած (իմա՝ **որմէ**).*

*Անգլերենի նման բրետոն լեզուն կարող է չգրել **որ** հարաբերականը, ինչպես՝*

er verh péhani e ziméamb

աղջիկը դոր ամուսնացնում ենք.

կարելի է ասել առանց péhani *«դոր», և այս ձևը չատ ավելի ընդունված է: (Guillome, 36)*

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆԻ ՏԵՂԸ

*Օրենք է, որ **որ** հարաբերականը դրվի հարաբերյալի կողքին, բայց դա չատ անգամ անկարելի է լինում. ուստի կամ պետք է խուսափել այդպիսի հանդիպումներից և կամ հարաբերյալը երկրորդ անգամ առանձին կրկնելով:*

Ոմանք հետևում են խստիվ օրենքին և կազմում են այնպիսի նախադասություններ, որոնք հաճելի երևույթ չունեն. օրինակ՝ «Այն տեղեաց, որոնց լեզուն ասորերենի հետք կը կրէ, կարգէն համարելու ենք նաև սա տեղերը» (Հայկ. ալֆ. ֆեթիներք. թրգմ. Հ. Տաչեան, Վիեննա, 1895, էջ 154). այստեղ **տեղեաց ... կարգէն,** *բավական դժվարալուր է մեր ականջին:*

Այս ձևը հնամոլների սովորությունն է:

Որ *հարաբերականի վրա արևելյան բարբառում հաճախ դրվում է հոդը, որ նույնիսկ ձայնավորի և* **հ**-*ով սկսող բառերի մոտ դառնում է* **ն**. *օրինակ.*

Սիրենների կղզու իշխանուհին է, որը կախարդում է բոլորին (Սիրաս. Ջգրված օրենք, 442).

Վաստակած մարդու էր նման, որն հանգիստ էր որոնում (անդ, 492).

Սիրող սիրտը, որն այդպես ահավոր վիրահատության էր ենթարկվել (էջ 531):

Երբ հարաբերականը դառնում է անորոշ ածական, այն ժամանակ **ը** *հոդը անհրաժեշտ է. օրինակ՝ Դատապարտյալ, դեպի* **որը** *գթո ոչ մի զգացում չունի: Եվրոպական լեզուների ձևով երբեմն հարաբերականից առաջ կրկնվում է հարաբերյալը, և այդ մանավանդ, երբ հարաբերյալը բաժանված է հարաբերականից դանագան բառերով, և հարաբերյալ ու հարաբերական չեն հաջորդում իրար. օրինակ՝*

Շարոն, ինչպես դահիճը, որ գտել է դատապարտյալին, դատապարտյալ, դեպի որը գթո ոչ մի զգացում չունի... (Սիրաս, Ջգրված օրենք, 480).

Գիտենք, որ հարաբերականը պետք է գտնվի իր հարաբերյալի մոտ, որի ճիշտ ներկայացուցիչն է, իսկ եթե դանագան միջանկյալ խանգարում են երկուսի հարաղրությունը և բաժանում են նրանք իրարից, պետք է կրկնել հարաբերյալը և նրան կից դնել հարաբերականը:

Այս դեպքում, եթե հարաբերյալը սեռական կամ այլ հոլով է, կրկնության միջոցին դառնում է ուղղական եզակի հոլովը:

Մարդն, որ հասարակապետության աւերակաց վրայ բարձրացեր և հանրապետությունն իր ոտից ներքև բռներ էր, իր ծրագիրը պիտի փոխեր և **ազգայնութեան** *դիմնալ հրամանապետը պիտի դառնար,* **ազգայրանութիւն** *մը, որ վերծանել կուգեր (Անիծեալն, թրգմ. Մամուրեան, Հտ. Բ., Զմիւռնիա, 1875, էջ 121):*

Որ *հարաբերյալի այսպիսի կրկնությունը ավելի շատ պատահում է եվրոպական լեզուներում և առաջանում է նրանից, որ հաճախ հատկացուցիչ-հատկացյալը գտնվելով կողք կողքի,* **որ** *հարաբերականը պատկանում է առաջին բառին և եթե դրվի* **որ** *իր բնական տեղում, թյուրիմացություն կառաջանա, օրինակ՝*

[օրինակ չի բերում – Խ. Բ.]:

Այսպիսի դեպքում կարող է ոչ միայն մեկ բառ, այլև իր խնդիրն էլ հետը կրկնվել, օրինակ. «Դրանով իսկ մերկացնելով որպես իտալական պրոֆաշիստական ռեակցիայի բարեկամներ ու ոգեշնչողներ, պրոֆաշիստական ռեակցիա, որը փորձում է երկրում քաղաքացիական պատերազմ հրահրել» (Սովետական Հայաստան, 1946 թ., № 142, էջ 9, սյունակ 6):

Այս չնորհալի բնակարանին իրենց վերջին հրաժարական բարևները տալ ուզեցին, բնակարան մ' որ իրենց առաջին խաղերուն ականատես վկան եղեր էր (անդ, էջ 138):

ԱՆՈՐՈՇ ԱՆՈՒՆՆԵՐ

Անորոշ անշեշտ անունները դրվում են շեշտյալ բառից անմիջապես հետո. Եթե կարող ոք ինչ էր (Եղն. 70):

ԱՆՈՐՈՇ – ԱՄԵՆ

Ամեն *բառը պահանջում է եզակի բայ:*

Սխալ է դնել հոգնակի ձև. ինչպես՝

Ամեն *արարած, չնչավոր ու անչունչ, նոր փայլ, նոր թափ, նոր երանգ* **ստացան** *(Սիրաս, Զգրված օրենք, 530):*

Այսպիսով, պետք չէ չփոթել **ամեն** *ածականը* **ամենը** *գոյականի հետ, որ իրոք հոգնակի է պահանջում:*

Աշխարհում ոչ մի դատարան, ոչ մի օրենք և ոչ մի սկզբունք չեն կարող արդարացնել երեխաների առևանգումը: (Սովետական Հայաստան, 1948 թ., հուն. 15, էջ 2, սիւնակ 6):

Կ Ե Ս

Կես–*ը իբրև ածական միացնում ենք հաջորդ գոյականին. ինչպես՝* **կես ժամ, կես հաց** *և այլն:*

Հետում կար նաև մի այլ ձև. **իբրև գոյական** *դնում էին հաջորդ սեռականի հետ. ինչպես՝*

Իբրև կես ժամու միջ «գրեթե կես ժամ» (Վրք. Հց. ա. 257):

Շիրակացին իբրև թվաբանական տերմին գործ է ածում **Հասարակ** *(փոխանակ* **կէս***) (տե՛ս Գ. Տէր-Մկրտչեան, Անանիա Շիրակացի, էջ 14):*

Նոյնպես կոտորակները՝

այժմ ըստ արևմտահայերենի 1 հինգերորդ, 6 ութերորդ և այլն (1/5, 6/8). արևելահայերենում – **ական** *մասնիկներով [է գործածվում], իսկ Շիրակացվոյ մեջ* **երորդ** *(1/3),* **չորրորդ** *(1/4), արդեն այդ ժամանակ չկա այնպիսի կոտորակ, որի համարիչը մեկից ավելի լիներ (Գ. Տէր-Մկրտչեան, Անանիա, էջ 14 և 17): Խորենացու աշխատություն՝ չորեակ 1/4, յօթնեակ 1/7, քսաներեքեակ 1/23: Երկաքանչիւր ոսկեղարյան չէ և բնագրաց մեջ հետո է ներմուծված, որ երբեմն լավագույն ձեռագիրներով ալ կրնանք սրբագրել (ինչպես կրնն Վարդանեան, Բուսաբ. տետ. Բ., էջ 39):*

Յուրաքանչյուր բառին հետևող գոյականը ուղղականում չի ստանում հոդ. իսկ հայցականում ստանում է. օրինակ.

յուրաքանչյուր (ամեն մի) **տուն** ներկված է մի առանձին գույնով.

յուրաքանչյուր տունը մի առանձին գույնով ներկեցինք.

յուրաքանչյուր տողը, յուրաքանչյուր բառը միտքս եմ պահել: Կարելի չէ ասել հոդով՝ օրինակ՝

յուրաքանչյուր ժամանակն ունի իր գրված օրենքը (Միրաս. Չգրված օրենք. 257):

Ամենայն չունի հոգնակի. ինքը հոգնակիի գաղափար է և ստանում է հոգնակի:

Այլ **ամենայն** առասպելք են և պառաւաց տրտջիւնք (Եղն. 99):

Ամենայն ինչ. որ ի նոցանէ ասի (եզ.), առասպելք են և անոտի պատմութիւնք (Եղն. 140):

Ֆրանսերենում on, գերմաներենում man ձևը կազմելու համար, ամերիկյան zoque լեզվում դնում են namba «ասել», որ միայն խոնարհվում է. օրինակ.

vica namba? «mange-t-on?» ուտո՞ւմ են.

vica namba â «on Mange» ուտում են:

(Grasserie, Langue zoque, էջ 20)

Անորոշ արտահայտելու համար կան հետևյալ ձևեր զանազան լեզվաց մեջ.

1. Հոգնակի առաջին դեմքով (— Միրում ենք լինել խնայող)
2. Հոգնակի երրորդ — » են » » »
3. Եզակի երկրորդ — գնում ես պարտեզ, տեսնում ես մարդ չկա.
4. Հոգնակի երկրորդ — գնում եք պարտեզ » » » ».
5. անդեմ — լսվում է մի աղմուկ ...
6. Համաբական բառով — մարդիկ վազվզում են:

Որևէ գործածվում է միայն եզակի գոյականով. անախորժ է հոգնակին. օրինակ.

Բոլորովին հիմնավորված չէ վաստակաւոր **որևէ** համոզիչ վկայություններով (Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, 1954, էջ 174), պետք էր ասել «որևէ վկայությամբ», մանավանդ որ այստեղ պահանջ կա դնել մի՛ հատիկ վկայություն:

Եթե անգամ Փիլոնի ու Իրենեոսի թարգմանիչների նույնացման դեմ լինեն որևէ, առարկություններ (Մանանդյան, Հունարան դպրոցը, էջ 236):

Ինչ-որ-ը, թեև սովորաբար գործածվում է եզակի գոյականի հետ, բայց իհարկե, կարող է ստանալ նաև հոգնակի, ինչպես՝ **ինչ-որ մարդիկ են եկել, քեզ են հարցնում:**

ԱՆՈՐՈՇ ԱԾԱՆՑ

Ոմն *գործ է ածվում* **անձանց** *համար. բայց կա նաև* **իրերի** *համար, օրինակ. Մրկ. գ. 3–4. Ահաւասիկ ել սերմանող սերմանել: Եւ եղև ի սերմանելն,* **ոմն** *անցաւ ասս ճանապարհաւ:*

ՈՎ *ասկու տեղ երբեմն դրվում է* **«ո՞վ է որ»**. *այսպես նաև պորտուգալերենում* quem é que *օրինակ՝*

quem é que o meu bonito çapato
ով է որ ունի իմ գեղեցիկ կոշիկը:
(Anstett, *էջ 34*)

ՈՒՐԻՇ ԵՎ ՄԻՒՍ

«Առայժմ անցնում եմ **Տեր-Մինասեանի ուրիշ** *կարևորագոյն առարկութիւններին» (Մալխասեան, Տեղեկագիր, Ամստերդամ, 1944 թ., № 3–4, էջ 40):*
(Ձևագրում ամբողջ մի էջ ազատ է – Խ. Բ.):

ԱՆՈՐՈՇ

Ոմն *գործածելով իբր անորոշ հոդ՝ ստանում է հոգնակի ձև. այսպես նաև պորտուգալերենում* um *(ար),* uma *(իգ), որ «մի» բառն է* **հոգնակի,** *իբր անորոշ հոդ լինում է* uns, umas. *օրինակ՝* Vejo umas casas *տեսնում եմ (մի քանի) տներ* (Anstett, 530–532):

* * *

Ինչո՞ւ և ինչի՞:

Իսկ հիմա **ինչո՞ւ** *է նման... (Դևմիրճյան, Վարդանանք, Ա, 161). պետք է ասել՝* **ինչի՞** *«ինչ բանի». իսկ* **ինչո՞ւ «վասն էր»:**

Ինչ *գործածվում է իրերի համար՝ իբրև անորոշ,* **ինչ որ, որևիցե** *իմաստով. նեմ բնութեամբ «զուր ինչ էր օձ, կամ չարի իրիք արարած» (Եղն., էջ 63): յԱստուծոյ* **ինչ** *ի փառս (Եղն. 80): Սակայն են և այլ* **ինչ** *պատճառք (Եղն. 80), (ուր է իբր անորոշ հոդ):*

Բացառականի հետ անորոշութիւնը ավելի զորացնելու համար.

Ինքեանք յոգիս **ինչ** *ոչ վնասեն (Եղն. 84):*

Ամեն հոդովի հետ էլ կարող է գործածվել, օրինակ՝ Ջիա՞րդ համարիցին զԱստուած, իբրև ի տեղւոջ **ինչ** *յամենայնի ի հիւդն լինել, նեմ ի միում* **ինչ** *ի մասին նորա (Եղն. 23), (ներգոյականի հետ է).*

Ի մեծ **ինչ** *վայտից (Բուդ. գ. 10), (բացառական):*

ՈՄՆ

Ոմն *գործածվում է իրրև անորոշ հոդ անձերի համար. այր* **ոմն** *և այլն:*

ԻՄՆ

Գործածվում է իրերի համար, իրրև անորոշ հոդ, բայց ո՛չ այնչափ, որչափ **ինչ**. *չի հոլովվում, կա միայն Բուզանդի մոտ* **իմնմնէ:**

ԿԷՍՔ

Կէսք *«ոմանք». գործածական է միչտ հոգնակի. բստ Էմինյան պիտի նչանակեր «կեսը», բայց այս իմաստը բոլորովին կորցրած է, և մի բանի համար երկուսից չատ ավելի* **կեսեր** *կարող են գոյություն ունենալ. օրինակ «կէսքն չտեսին,* **կէսքն** *հպատակությունս մատուցանեն,* **կէսքն** *սեղանակիցք լինին,* **կէսքն** *ակնառությունս կատարեն,* **կէսքն** *առաջի սուրհանդակք,* **կէսքն** *յետոյ առնեն պատիւ, ընթանան աստի և անտի» (Վեցօր., էջ 85–86):*

Կէսք, ոմանք, այլք *համանիչներ լինելով՝ կարելի է նրանք գործածել փոխադարձական դանազանակերպության համար. այսպես ուչ ժամանակի մի հեղինակ (Աբրահամ Երևանցի, Պատմություն պատերազմաց, Երևան, 1938, էջ 40) գրում է,* **«Ոմանք** *ասէին, թե Տեսանենաք, զի հուր երկնից տեղայր ի վերայ մեր:* **Այլքն** *ասէին, թե թևաւոր օձք բազումք յարձակէին ի վերայ մեր:* **Կէսքն** *ասէին, թե երկիրն ծովացեալ զրոհէր առաջի մեր ի պատերազմին»:*

ՄԻՒՍ ԵՒ ՈՒՐԻՇ

Միւս *և* **ուրիշ** *բստ Էմինյան միևնույն բաներն են և չատ լեզուների մեջ բացատրվում են միևնույն բառով. օրինակ, ֆրանսերեն* autre, *գերմաներեն* ander, *պարսկերեն* dīgar *և այլն: Հայերենի մեջ* **ուրիշ** *նչանակում է բազմաթիվ նմաններից որևէ մեկը, իսկ* **միւս** *միայն* **մի հատ** *է և նախապես հայտնի: Օրինակ, եթե տան մեջ կան մի բանի սենյակներ, կարող ենք ասել.— «Նա դուրս եկավ իր սենյակից և մտավ* **ուրիշ** *սենյակ», իսկ եթե սենյակների թիվը ընդամենը երկու է, կասենք.— «Նա դուրս եկավ իր սենյակից և մտավ* **մյուս** *սենյակը»: Ըստ այմ* **ուրիշ** *պահանջում է միչտ անորոշ գոյական, իսկ* **մյուս** *պահանջում է միչտ որոչյալ գոյական:*

Սխալ է ասել՝

Ահա ինչու նա չկարողացավ գտնել իրան, անցավ **մյուս** *սենյակ (Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, 1930, հտ. Դ., էջ 285):*

Նա ուրախ-ուրախ սուլելով, գնաց **մյուս** *սենյակ (անդ, էջ 309):*

Երկուսն էլ պետք է ուղղել **մյուս սենյակը** *կամ (մի)* **ուրիշ սենյակ:**

Երբ գոյականը այնպիսի մի ձև ունի, որ թեև որոշյալ, բայց հոդ չի ստանում, բնականաբար կարելի է գտնել **մյուս** *բառը. օրինակ՝*

Նա քնում էր **մյուս** *սենյակում (այն մեկելը).*

Նա քնում էր **ուրիշ** *սենյակում (մի որևէ).*

* * *

Այս, այդ, այն *բառերի հին հոլովումը հետո եղծվելով՝ առաջացան դանազան ձևեր.*

1) վերջադաս երկար ձևերի փոխարեն դրված կարճ ձև. ինչպես՝ Ոչ է քեզ արժան ի քաղաքիս **յայսմ** *բնակել (Վրք. Հց. ա. 320) – ընդ ժամանակն ընդ* **այնս.** *(անդ., 113):*

2) Հոգնակիի թվականի տեղ եզակի. զերծուցից զքեզ **յայդմ** *տանջանաց:*

3) **Հոլովի չփոթություն.**

կացաք ընդ առն այնորիկ (նրա հետ) (Վրք. Հց. ա. 184): **Զայնք** *(փխ. զայնս) (Վրք. Հց. ա. 189),* **յայսմ** *լերին վերայ կայ 349.* **այսմ** *պատրողական բանիւքս խարեցար. 393.* **յայսմ** *ճանապարհաւս 394. անարժան կարգիդ* **այդորիկ** *640 (փխ.* **այդմիկ**). *վասն* **այսու** *ժամու ր. 21. բնակչացն քաղաքիս* **այսմիկ** *(Պղատ. Տիմ. 83):*

4) **Տարբեր հոլովում.**

այսիւ *աղախնաւ քով (Վրք. Հց. ա. 313),* **այնիւ** *հաստատեաց. (Բ. 45),* **յայսոց** *պատճառաց (Բ. 45), դկնի* **այսոց** *բանից. (Բ. 53),* **այնիւ** *(Պղատ. Տրմ. 121): Սեռական՝* **այսոյ** *(Վրք. Հց. ա. 49),* **այսոքիմբք** *(ասոնցմով) (Եւսեբեոս, Պատմութիւն, 550, 662) և այլն:*

5) **Ետադաս անհոլով.**

ազգեաց սրբոյ ծերոյն **այն** *(Վրք. Հց. ա. 392):*

Նա և ինքը,

Նա և իր.

Այս բառերի գործածությունը հաճախ չփոթության տեղիք է տալիս. Ստեղծեց (Աստված) նրան (Ադամին), որ **սա** *սքանչանայ իր վեհ գործերի վրայ (Ավ. Իսահակյան, Ընտիր երկեր, հտ. Բ, Երևան, 1940, էջ 277):*

Դ Ե Ր Ա Ն ՈՒ Ն

Արևելյան հայերենում ուղղական ենթակայից հետո սովորություն դարձան ավելորդությամբ դնել **դա, դրանք** *դերանունները.*

Օրինակ՝ **Կանայք, դրանք** *թռչունների այն երամն էին, որոնց այնպես հեչտ պիտի որսար ինքը (Սիրաս, Ջգրված օրենք, 252):*

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Անձնական դերանունը կարող է բայից առաջ կրճատվել, որովհետև բայի վերջավորութիւնը բավական է դերանունը ցույց տալու, այն լեզուների մէջ սակայն, ուր բայի խոնարհման մէջ միշտ միևնոյն ձևն ունի, անհրաժեշտ է դնել դերանունը:

Դերանունը հայերենի մէջ էլ պարտադիր է այն դեպքում՝

1) որ մի քանի ենթական միասին են, օրինակ՝

Ես ու եղբայրս գնացինք:

Դուք և ձեր հարևանը չկայիք:

2) Դերանունը դնել պարտադիր է, երբ կան տարբեր նախադասութիւններ տարբեր ենթականերով՝

Ես դպրոց եմ գնում, իսկ նա տուն է գնում:

3) երբ դերանունը տարբեր բառերի լրացուցիչ ունի՝

Ես, խեղճս մենակ եմ մնացել:

Դու, որ մինչև երկինք էիր բարձրացել, այժմ ընկար:

4) երբ չնչտված է՝

Ե՛ս եմ ուզում:

* * *

Ժողովրդական լեզվով Պոլսում հաճախ եզակիի տեղ հոգնակի է դրվում, օրինակ՝

Գնանք սա տեղ նատենք:

Սա բանն ալ բննենք:

Սա անչուչտ թուրքերենի ազդեցութիւնն է, օրինակ՝ **չունու տա ալալըմ** *և այլն: Նույնը կա նաև պարսկերենում օրինակ՝*

māōra dīdīm *կամ* biz onə gördik

փխ. ես նրան տեսա,

և այս բանը այնքան է առաջ գնացել, որ **մենք** *և* **դուք** *բառերի տեղ դրվում է նոր հոգնակի ձև.* biz-ler, siz-ler, *պարսկերեն* sumāyān. (Казем-бек, էջ 115):

Մալանեզյան լեզվում nguna, *երբ մի եզակի դերանուն միանա մի եզակի գոյականի հետ, դերանուններ հոգնակի կդրվի. ինչպես՝*

kinami ma mama

մենք և Հայրս — *փխ. ես և Հայրս,*

nara ma supe

նրանք և Աստված — *փխ. Նա և Աստված:*

(Ray, 207):

ԴԵՐԱՆՎԱՆ ՏԵՂԸ

Դրվում է բայից անմիջապես հետո.

Պատրաստեմ **ձեզ** *տեղը (ՀՀ. ԺԴ. 2):*

Յամենայն դորութենէ քումմէ, ծառայեցեր **դու ինձ** *միամտութեամբ. (Ագաթ. 51):*

Այստեղ **դու** *վերջահար է, ուստի առաջ է դրված և հետո՝* **ինձ.**

Յայնժամ տայր **նմա** *պատիւ (Ագաթ. 30):*

Լուաւ **զայս** *ամենայն թագաւորն (Ագաթ. 35):*

Ի վախճանի յաղթէ **նմա** *բարին (Եղն. 71):*

ՑՈՒՑԱԿԱՆ ԵՎ ՍՏԱՑԱԿԱՆ

Երբ միասին են, նախ դրվում է **ստացականը,** *հետո* **ցուցականը.** *ինչպես՝* **իմ այս տղաս. Քո այդ** *ձևերը և այլն:*

Նոր բանաստեղծական ձևերում հակառակ չարքն. ինչպես՝ **այս իմ** *տղան,* **այդ քո** *ձևերը և այլն:*

Ժողովրդական լեզվի մեջ ընդունված է միայն առաջին ձևը, բայց կարելի է նաև՝ **ան իմին աղվոր աղջիկս. ան քուկին կիւզելիմ տուները.** *իբրև ածական և իբրև դերանուն ունենալով միևնույն ձևը՝ հաճախ տեղի պիտի տար չփոթության, օրինակ՝*

Այդ *մեծ վճռի պատճառ դարձավ:*

Կարելի է հասկանալ երկու իմաստով էլ: Խոսակցության մեջ կարելի էր խուսափել երկդիմությունից, մի կարճ դադարով անջատելով ցուցականը հաջորդ բառից: **Այդ** *– մեծ վճռի պատճառ դարձավ:*

Իրոք էլ տեղ-տեղ գտնում ենք ցուցականը բաժանված բութով՝ իբրև դերանուն գործածված. օրինակ՝

Այդ՝ *համայնական հողատիրության խնդիրն է (Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, 1934, էջ 190), փոխանակ պարզ ձևով ասելու «Դա համայնական հողատիրության խնդիրն է»:*

Այս, այդ, այն *ցուցականները հաճախ գործածվում են չկրկնելու համար պարբերության մեջ գործածված զանազան գոյականները: Այս դեպքում* **այս** *ցուցականը ներկայացնում է* **մոտավոր** *գոյականը,* **այն** *ներկայացնում է հեռավոր գոյականը: Եթե այս կանոնը չպահվի ճշտիվ, կարող է առաջանալ բոլորովին սխալ իմաստ. օրինակ՝*

Գիւմրիից քիչ հեռու տեսնում են մի գիւղի աւերակները, որտեղ երբեմն 200 թուրք խնդրել էին տեղի հայ բնակիչների հիւրասիրութիւնը, և միևնոյն գիշերը **այս** *բարբարոսները կոտորել էին նրանց (Յ. Յակոբեան, Ուղեգրութիւններ, Ջ. 402):* **Այս** *ցուցականը ակնարկում է «հայ բնակիչներին», որովհետև այս է վերջին գոյականը. սրանով դուրս է գալիս, որ հայ բնակիչները կոտորել են թուրքերին. բայց անշուշտ հեղինակը հակառակն է ուզել ասել:*

Գրաբարի մեջ կարող է **ն** դիմորոշը դրված դեպքում **այն** ցուցականը կրճատվել, բայց աշխարհաբարում նույնը հաճախ անկարելի է. օրինակ. կարելի չէ ասել՝

*Ինչքան ուշանում էր անձնավորությունը, որին սպասում էր, այնքան ավելանում էր նրա ջղայնությունը (Սիրաս, Ջգրված օրևնք, 114): – Պետք է ասել «**այն** անձնավորությունը»:*

*Երբ մի քանի գոյական հաջորդում են իրար և ունեն միևնույն ցուցականը, կարող է ցուցականը կրկնվել կամ ոչ. օրինակ՝ **Այս** տունը և **այս** պարտեզը իմն են – **այս** տունն ու պարտեզը իմն են:*

Բայց փրանսերեն կարելի չէ ցուցականը կրճատել. հենց թեկուզ այն պատճառով, որ սեռերի տարբերության պատճառով ցուցականները հաճախ տարբեր են լինում. օրինակ...*

Այսպես նաև ռումիներեն, ուր անհրաժեշտ է ասել

aceste mere si aceste pere sunt dulci

այս խնձորք և այս տանձք են քաղցր,

բայց գերմաներեն կրճատմամբ սովորական է ասել՝

Diese Äpfel nud Birnen sind süsg:

*Ցուցականները, ինչպես նաև սրանց փոխարեն դրված դանագան բառեր (**առաջինը, վերջինը, նախորդը, այս վերջինս, Հետևյալը** և նմանները), պետք է ճշտիվ պահեն իրենց դիրքը, ապա թե ոչ սխալ իմաստ կտան: Օրինակ. «Այս Թարգմանիչ հայ քաղկեդոնականները խոսքով ու գրով մաքառում էին հակաքաղկեդոնականների դեմ. **սրանց** թվին պատկանում էր և Խորենացին» (Մալխասեան, Տեղեկագիր. Ակադ., 1944 թ., № 3–4, էջ 51): **Սրանց** պիտի նշանակեր «հակաքաղկեդոնական» և որովհետև գիտենք, թե Մալխասյանը սկսել էր քարոզել, թե Խորենացին կաթոլիկ է, ուստի պետք էր ասել **նրանց**:*

*Աշխարհաբարում ցուցականը դրվում է գոյականից առաջ. եթե գոյականը ունենա մի կամ ավելի ածական, ցուցականը դրվում է բոլորից առաջ. **այս** մարդը, **այս** գեղեցիկ երկիրը: **այս** մեծ ու լայնածավալ աշխարհը:*

*Նորահն երևույթ է. երկրորդ դեպքումն էլ ցուցականը պահել գոյականի վրա. ինչպես՝ գեղեցիկ **այս երկիրը**. մեծ ու լայնածավալ **այս աշխարհը**:*

Բանաստեղծական գրվածքների մեջ այս ձևը բավական հաճելի է, բայց արձակի, մանավանդ դուտ գիտական գրվածքների մեջ դուրեկան կարելի չէ համարել: Այսպես օրինակ. Մանանդյան, «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» (Երևան, 1934) դուտ բանասիրական գրվածքի մեջ գործածում է միշտ այդ ձևը՝ անհամ կերպով: Բայց բոլորովին անախորժ է դառնում երևույթը, երբ ասում է որ.

Եթե «Կարճագատացն» այս ընթերցվածն աղճատված չէ, ... (էջ 173):

*Լավագույն կլիներ ասել պարզապես՝ եթե այս «Կարճագատացն» ընթերցվածը... բայց ավելի լավ կլիներ բոլորովին չդնել **այս** ցուցականը:*

---

* *Բնագրում օրինակը բացակայում է (Խ. Բ.):*

Ս, Դ, Ն

Հարաբերական նախադասության մեջ առաջին չնչտյալ բառից հետո դրվում է հաճախ սաստկության համար՝ դեմքի համեմատ՝ **ս, դ, ն.** *ինչպես՝*

Ոչ ոք կարէ զայդ նչանաւ առնել, զոր դուդ առնես (ՅՀ. Գ. 2):

Բանիցդ առասպելաց ... զոր ոչդ վայել է քեզ խոսել (Ագաթ. 68):

Պետրոս, եւ որ ընդ նմայն էին (Ղկ. Թ. 32):

Զի ուր **եան** *իցեմ, եւ* **դուք** *անդ իցէք (ՅՀ. ԺԴ. 3):*

(Նկատելի է 3-րդ դեմքի տեղ **ն***)*

Սակայն **դուք** *ինքնին խեղճ քոյրդ գտնելու համար պէտք եղած խուզարկութիւններն ընելու պարտաւոր ես: (Անիծեալն, Թրգմ. Մամուրեան, Զմիւռնիա, 1875, հտ. Գ., էջ 59):*

* * *

Ստացականը, դրվելով բարդ բառի ծայրին, ստեղծում է որոշ անպատեհություն. օրինակ ասում ենք քեռակինս, հորեղբայրս, եղբորորդիս և այլն, որով հասկացվում է այնպես, իբր թե իմ կինն է, իմ եղբայրն է, իմ որդին է, մինչդեռ իրոք իմ քեռու կինն է, իմ հոր եղբայրն է և իմ եղբոր որդին է: Բայց իրոք ոչ ոք ուշադրության չի առնում այդ հանգամանքը, որովհետև բարդ բառերը կազմում են մի և անբաժան միություն:

Նմանապես տեսած տունս, տեսած աղջիկս և այլն խոսքերի մեջ ոչ թե տունն է իմը կամ աղջիկն է իմը, այլ տեսնելն է իմը: Դրա համար շատ ավելի պատշաճ է արևելահայ ձևը, որ ասում է **իմ տեսած տունը** *կամ* **տեսածս տունը:** *Այսպես նաև թուրքերեն* gördiyim ev *կամ* benim gördiyim ev.

* * *

Պորտուգալերենում ստացականը վերջը դնելով՝ **փաղաքշանք** *կարտահայտվի, ինչպես՝*

meu querido filho

իմ *սիրելի որդի կամ սիրելի որդի* **իմ,** *ինչպես՝*

querido filho **meu** (Anstett, 109):

Իտալերենում ստացականը առնում է որոշյալ հոդ. ինչպես՝

il mio cavallo, la sua casa, il tuo libro,

միայն աղգականական բառերը չեն ստանում (il չկայ):

(Ferrari, Gram. ital. 20)

ՅՈՒՅԱԿԱՆ

Կելտական welsh *լեզվով յուցականք են*

hwn **այս,** hwnnw **այն.**

դրվում են գոյականից հետո, որ ստանում է որոշիչ հոդ.

y gŵr hwn

մարդ այս — այս մարդը:

(Jones, *էջ 294*)

զբէնէն (փխ. զբէն) (Վրք. Հց. ա. 158):

զդոցանէ ասես եւ զբէնէ (Ավ. գիրք. Նոր Կտակարան, 165):

Համնի բարբառ.

աս, էս, իսօ
ադ, էդ, իդօ } *այս, այդ, այն.*
ան, էն, ինօ

սա — սնօ — սարա *(փխ. սորա) (Փիլիսոփայական այլաբանութիւն, 124, 125, 156).*

Հոգնակի — **սացա** *(անդ, 157):*

Ջնոյն և տո՛ւն արա (Ոսկ. մ. գ., էջ 132):

Անիկա՝ *ձևը գիտեն նաև Ասլանբեկի բարբառը:*

Մենք — **ն** *հառաջացել է մ-ի պատճառով. սրա օրինակով Համչենի՝* **դունք:** *Հայերենում՝* **դու** > **դուն** *ունի մի* **ն** *ավելի, որ հիշեցնում է հնդեվրոպական լեզուների հավելյալ* **n** *ձայնը.*

Համմտ. Հուն. ատտ. ἐγὼ Հոմեր. ἐγών
νό τον, τουν Հոմեր. τύνη

բայց մեր **դուն** *ձևը նույն ծագումը չունի. այլ* **ան** *բառին է ուղղված՝* **դուն–ան:**

Բ Ա Ց

ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեև ամեն մի ժամանակ ունի իր իրական արժեքը և գործածության որոշ տեղը, բայց երբեմն մտքի արագության պատճառով կարող են նրանք իրար փոխանակել: Օրինակ, մեկը հագնված պատրաստ է, վերցնում է գլխարկը և ձեռնափայտը և ասում է. «ես գնացի»: Իհարկե, նա դեռ չի գնացել, նա գնում է (ներկա) կամ ավելի ճիշտ պիտի գնա (ապառնի), և սակայն նա արդեն վճռական գործունեության վերջին կետի վրա լինելով՝ մտքով չտապում է և ասում է «գնացի»: Կարող է նույնիսկ հանկարծ մի բան հիշել և ետ դառնալ, բայց նա ասել է «գնացի». փոխանակ ասելու «գնում եմ»:

Նաև մեկը ասում է ապագա գործողության համար «վաղը գնում եմ»՝ և ամեն մարդ էլ հասկանում է, թեև վաղը պիտի գնա. արդեն երբ **վաղն** է կատարվելու գործը, անչուշտ ապառնի է. բայց մտքի արագության կամ գործողության վճռականության պատճառով ասում է՝ «վաղը գնում եմ»:

ԷԱԿԱՆ ԲԱՑ

Երբ չնչայալ կամ հարցական մի բառ կա նախադասության մեջ, նույն նախադասության **էական բայը** առաջ է դրվում ստորոգելիից կամ հարակից բայից. օրինակ՝

Ո՞ւր ես գնում:
Ո՞վ է ասել: Ո՞վքեր են եկել:
Ե՞րբ ես եկել. Ե՞րբ եք ուզում գալ:
Ե՞ս եմ այս տան տերը:
Ի՞նքն է ձեռնարկել այս գործին:
Որո՞նք են մեր նախնիք:

Նմանապես բայական կազմությանց մեջ. ինչպես՝

Վեր կենալ.– *Ես առավոտները վեցին եմ* **վեր կենում:**
Անց կենալ.– *Դու այնտեղո՞վ էիր* **անց կենում:**
Դուրս տալ.– *Ինչ ես հիմար-հիմար* **դուրս տալիս:**

Այս կարգի բայերի չարքն են նաև **վեր** բայով կազմված բառերը. ինչպես՝ **վեր կենալ, վեր ածել** և այլն:

Վերջին տարիներս սովորություն դարձավ մի խումբ գրողների մոտ, **վեր ածել** «փոխվել» բայի նման **վերածել** «դարձնել» բայն էլ, իր մասերին վերածել և շրջմամբ ասել՝

Անգլիական ստերլինգը **վեր ենք ածում** ռուբլու (փխ. ասելու անգլիական ստերլինգը վերածում ենք ռուբլու): **Վեր ենք ածում** նշանակում է **փոխում ենք:**

Կարելի չէ նաև բարդ բայերը բաժանելով նման շրջումներ կատարել. օրինակ՝

Հումբոլտը իր ուսումնասիրություններում **կիր էր առում** *դիալեկտիկան (տե՛ս Ղափանցյանի հոդվածը, Մառը և հնդեվրոպաբանությունը, Սովետական Հայաստան, 1943, մայիսի 16 (№ 103, էջ 3-րդ, սյունակ 2-րդ):*

Այս ոչ հայերեն դարձվածը հայերենի վերածելու համար պետք է ասել պարզապես՝ **կիրառում էր** (արդեն «կիր էր առում» հայերեն չէ նաև այն պատճառով, որ չի կարելի ասել **առում եմ, այլ առնում եմ**):

* * *

Երկու և ավելի բայեր, որոնք հոմանիշ են կամ միևնույն գործողության հետ կապված գաղափարներ են, հաճախ իրար հետ միասին են գործածվում: Օրինակ՝ փոխանակ ասելու **մնայ,** հաճախ ասվում է **կայ մնայ** (Ագաթ. 108), կամ **կայ և մնայ** (Սղ. Թ. 8), իչխան Յունաց ի հալածել **կայր** զնկեղեցի Աստուծոյ (Ագաթ. 38):

Այսպիսի օրինակներ են՝

Եկն *թափեցաւ – յաչխարհն նորա (Բուզ. Գ. 10):*

Արի *կաց (Ղկ. Ը. 55):*

Եկն *բնակեցաւ (Մտթ. Դ. 13):*

Երթայք *ասացէք (Մտթ. իր. 7):*

Փութո էջ *(Ղկ. ԺԹ. 5):*

Կապեցին կախեցին (Բուզ. Գ. 6):

Լքին, խոտեցին, մերժեցին, անարգեցին զտերութիւն Պարթևաց (Ագաթ. 18):

Այսպիսի խումբերը կազմում են իբր մի միութիւն, և այն ժամանակ նախահավելվածը չի դրվել (իբր թե մի բազմավանկ բայ լինի) ինչպես՝ կաց պատմաց (Ագաթ. § 44):

Էական բայը *կազմում է* **անվանական** *նախադասութիւն, երբ ցույց է տալիս, թե* **ով ինչ է.** *բայց հաճախ նա ցույց է տալիս գոյութիւն ունենալ, գտնվել, կամ, և այն ժամանակ ո՛չ թե անչէտ է, այլ ստանում է առանձին և անկախ չէչտ, և կազմում է* **բայական նախադասութիւն.** *ինչպես՝*

Ապա ուրեմն է՛ ինչ զօրութիւն ծածուկ (Եզն. 11):

Այսպիսի էական բայը մեր քերականութեան մեջ կոչվում է **«չեզոք բայ»:**

Անվանական նախադասութեան մեջ **էական** *բայը կարող է դրվել ստորոգելիից հետո. ինչպես՝*

Օդ ընդ ջուրս եւ ընդ երկիր խառն է (Եզն. 219):

Ճշմարիտ է բան գրոյն (Եզն. 217):

Երբ ստորոգելին երկու բառ է, **էականը** *կարող է երկուսի մեջտեղում կամ նաև վերջը դրվել.*

Արդարեւ չահապէտ է զերեզմանաց եւ պահապան (Ագաթ. § 64):

Վնասակար եւ ապականիչ է (Եզն. 10):

Երբ ստորոգելին ունի խնդիր, **էականը** *դրվում է նախադաս. օրինակ՝*

Միայն ինքն կանխագետ է հանդերձելոց (Եզն. 54):

Այս բոլորը կմնա նույնք, եթե էականի տեղ դրվի **լինիմ.** *օրինակ՝*

Առանց արեան և կոտորածոյ **լեցի** *չինուի կողմանցս երկոցունց (Ագաթ. § 39):*

ԱՊԱՌՆԻ

Ապառնին հաճախ ստանում է պարտավորականի նշան, և երկուսը միանում են իրար. օրինակ՝

Ես պետք է գնամ – ես պիտի գնամ:

Պիտի երթայ = Անհրաժեշտ է երթայ:

Այսպես նաև պորտուգալերէնն, ուր ապառնին գործածվում է իբր պարտավորական. ինչպես՝

Amarás a Deos de todo teu coracao

Պետք է սիրես զԱստուած ամրողջ քո սրտով,

Não mentirás *(ապ.) չստե՛ս.*

չպետք է ասես.
que farei ? *(ապառնի)*
ինչ պետք է ասեմ:
(Anstett, 302)

Բայը հաճախ իր գոյականով խնդիր է առնում. ինչպես՝ **քուն քնել**.... *այսպես է նաև ռուսերենում, ուր ստացվում է իմաստի որոշ սաստկություն. ինչպես՝*

Խոր մտածմունքի մեջ ընկնել (Fuchs, Gram. russe, 352):

Նույնը և իտալերեն.

Questa vita, che noi viviamo...

[ՊԻՏԻ]

Աշխարհաբարում **պիտի** *մասնիկը, որ դեռ մասնիկ լինելու ճանապարհին է, կարող է բաժանվել իր բայից զանազան երկրորդական բառերով և կրկնության դեպքում էլ դեղչվել. օրինակ՝*

Քեզ հետ **պիտի** *աշխարհք ու երկիր* **ման գանք,** *գտնենք նրան ու հետո հալալ մոր ու տղի պես ապրենք (Սիրաս, Զգրված օրենք, 393). վերջին* **ապրենք** *բառը* **պիտի** *մասնիկից անջատված է ամբողջ մի տողով և հետո դրկված է.* **պիտի** *դեղչված է:*

Այս երևույթը կա նաև բարբառներում, ինչպես Մշո բարբառում «Պտի մեր մալ փիտցուն» – «մեր եղը պիտի սատկեցնեն»:

Կարելի է բայը դնել անդեմ բայի ձևով, որին հաջորդում է հոգնակի ենթակա. օրինակ՝

Aussitôt que tout le monde eut pris sa plau, il entra des chanteurs et des joueurs d'instruments qui commencrent un Cincert fort agréable. (les mille et un jours, Paris, 1844, *էջ 160):*

[ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ]

Բայի հաստատականն ու բացասականը միասին գործածվելով տալիս են զանազան առումներ. ինչպես՝ **տեսավ – չտեսավ, տեսած – չտեսած, տեսար – չտեսար, եկավ – չեկավ** *և այլն, որոնք նշանակում են «հենց որ, հազիվ թե (ֆրանսերեն* à peine*»): Նույնն է թրքերեն.* görur görmez, gelir gelmez *և այլն:*

Նման ձևեր ունեն ռոմանական լեզուները՝ մի քիչ տարբեր առումով. ինչպես՝ սպաներեն.

a eso de si son luces o no son luces

«լույս է, լույս չէ» (առավոտը լուսանալու մոտ):

Կատալան el posa caych no caych en es cantells de sus penyes *կրնկննմ– չեմ ընկնի ժայռերի եզրին:*

Իտալերեն՝

improvvisamente, che è che non è, le pupille della fanciulla si accendono

Հանկարծ, ինչ է, ինչ չէ, աղջկա բիբերը փայլեցին...

(Այս ձևերի վրա տե՛ս Léo Spitzer BSL, *Հտ. 35, № 104, էջ 89):*

[ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ]

Պատմելու ժամանակ կարելի է գործածել երեք ձև՝ **ներկա, անկատար** *և* **կատարյալ.**

օրինակ՝ **գնում է** *նրա մոտ,* **տեսնում է** *իր եղբորը,* **բռնում է** *ձեռքից և* **բերում** *իր տուն:*

Նույնը կատարյալով.

Գնաց *նրա մոտ,* **տեսավ** *իր եղբորը,* **բռնեց** *նրա ձեռքից և* **բերավ** *իր տուն: Երբ նույն երևույթը մի քանի անգամ կրկնվում է, գործ է ածվում* **անկատար,** *ինչպես՝*

Հաճախ **մտնում էր** *պարտեզ,* **ման էր գալիս** *ածուների մեջ, խաղում,* **դեն էր գցում** *ավելորդ խոտերը, վնասակար ճճիներն* **էր կոտորում** *և այլն:*

Անընդունելի է միայն այն ձևը, ուր այս երեքը միասին են գործածվում, օրինակ՝

Երբ «ամենային այունախաղաղ ցրտութիւնն **անցաւ»,** *ոսկեսար երիվարներ, ոսկի թագ և ոսկեճամուկ զգեստներ ընծայ* **ղրկեց** *Ամրատին, նույնպէս եւ անոր Աչոտ որդւոյն* **կը նուիրեն** *«օդապարիկ իմն երիվար եւ կամար ականակապ» եւ* **իշխան իշխանաց Հայոց** *տիտղոսը* **կուտայ** *անոր (Ղուրբան. Ազգ. պատ., 314):*

Առաջին երկու բայերը **կատարյալ** *են, վերջի երկուսը՝ ներկա:*

ԲԱՅԻ ՏԵՂԸ

Պատմողական լեզվի մեջ բայը սկիզբն է դրվում.

Խաղացին նկին Հասին յեկեղեցս գաւառս, իջին բանակեցան առ ափեն գետոյն (Ագաթ. § 48):

Բայը կարող է խնդրի և խնդրատուի միջև մտնել.

Ամենայն ծննդոց յետ ծննդեանն դին անուանք (Եզն. 123):

Մահուամբ դոյս Հատանեմ կենաց (Ագաթ. § 58):

«Պետք է» ձևի տեղ որոշ դեպքերում դրվում է **ուզել** *բայը.- օրինակ՝ Լեզու սովորելու համար շատ ժամանակ* **կուզե.** *այսպես է նաև թուրքերեն և իտալերեն.*

ci vucle del tempo per imparare una lingua (Ferrari, 116):

L'enfant tremblant	L'enfant mangeait en tremblant
դողդողացող տղան.	(gérondif) *դողդողալով.*

[ՀԱՐԱԿԱՏԱՐ ԵՎ ԱՊԱՌՆԻ]

Հարակատարը ցույց է տալիս մի գործ, որ կատարվել է առաջ, բայց նրա հետևանքը տևում է խոսված րոպեին, ինչպես՝ Քանի որ դու գործը արդեն վերջացրել ես, կարող ես գնալ:

Ֆրանսերեն ապառնին Հրամայականի մեղմն է, ինչպես՝

ես պիտի խնդրեմ որ լռես.

je vous demanderai de vous taire:

Ֆրանսերեն երրորդ դեմք հրամայականը կդնեն ստորադասական, ինչպես՝ qu'il se taise *թո՛ղ լռի՛:*
Անորոշ դերբայ–հրամայական aller au pas! Ralentir!
Սրանք **վճռական** *հրամայական են:*

ԺԱՄԱՆԱԿԻ ՍԽԱԼ

Եթե մայրը ժամանակին ղգաստանար, գուցե գործն այլ ընթացք ստանար (Միրաս, Զգրված օրենք, 532). Հեղինակը պատմում է մի անցյալ դեպք, ուստի պիտի ասեր «ղգաստացած լիներ», անցյալ է նաև «ստանար» և ոչ ապառնի. ուստի այդ էլ պետք է փոխել «ստացած լիներ»:

Հեղինակը հաճախ տեսնելով, որ միատեսակ ձևը (ներկա կամ կատարյալ) ձանձրալի է, փոխում է պատմելու ձևը և ներկայից անցնում է կատարյալի և կամ կատարյալից՝ ներկայի: Բայց այս անցումը այնպիսի ճարպիկ ձևով պետք է անել, որ աննկատելի լինի և ականջ չծակի:

* * *

Ժամանակների հաջորդության մեջ առանձնապես կարևոր է հիշել **ասեմ** *բայը*:*

Այս բայը երբ անկախ չէ և կապված է նախադասության մեջ մի գլխավոր բայի հետ, ներկայի անկատարի և ապառնիի մեջ հետևում է նույն գլխավոր բային. ինչպես՝

Եւ ահա մատուցեալ բորոտ մի, երկիրպագանէր նմա եւ ասէր.
(Մտթ. Ը. 2):
Մատեաւ առ նա հարիւրապետ մի, աղաչէր զնա եւ ասէր:
(Մտթ. Ը. 5):
Եւ Յովհաննէս արգելու զնա եւ ասէ (Մտթ. Գ. 14):
Յայնժամ պատասխանի տային նմա արդարքն եւ ասասցեն
(Մտթ. Իե. 37):

Իսկ եթե գլխավոր բայը դրված է **կատարյալ, ասեմ** *բայը դրվում է* **ներկա.** *ինչպես՝*

Հարցին ցնա եւ ասեն (Մտթ. ԺԲ. 10):
Այլ առաջ խոսեցաւ ընդ նոսա եւ ասէ (Մտթ. ԺԳ. 33):
Նա պատասխանի նոր այնմիկ որ ասացն ցնա եւ ասէ (Մտթ. ԺԲ. 48):

Երկու ձևերի գործածության համար համմտ.

Ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երևեցաւ նմա եւ ասէ (Մտթ. Ա. 20):
Ահա հրեշտակ երևէր ի տեսլեան Յովսեփու եւ ասէր
(Մտթ. Բ. 13):

---

* **Vogt,** Les deux thèmes verbaux de l'arm. 142–144.

ԲԱՑԱՍԱԿԱՆ ԲԱՑ

Կան դարձվածներ, որոնք թեև ձևով դրական, բայց իմաստով բացասական են, օրինակ, ֆրանսերեն.

je suis trop faible pour le vaincre

Շատ տկար եմ նրան հաղթելու համար (իմա՝ ես այնքան տկար եմ, որ չեմ կարող հաղթել նրան):

Նույնիսկ հայերենի մեջ ստրկաբար թարգմանված՝ «Վասնզի չատ ատուր տղայ մ' է բարի ամուսին մը ըլլալու համար» (Ա. Տիմայ որդի. Կնոջ մը վեպը. Թարգմանություն. Զմիռնիա. 1881. Ա. Հտ., էջ 199).– ուզում է ասել «Նա գեղեցիկ երիտասարդ է և չի կարող լավ ամուսին լինել».– Համմտ. հայկական առածը Երևանում՝ Սիրուն կինը իր մարդի կինը չէ. կամ Սիրուն մարդը իր կնկա մարդը չէ:

[ՆԵՐԿԱ՝ ԱՊԱՌՆԻԻ ՓՈԽԱՐԵՆ]

Ապառնի դնելու փոխարեն կարելի է գործածել **ներկա.** *բավական է, որ նրա հետ լինի մի այնպիսի բառ, որ ապագան ցույց տա: Այսպես՝ ֆրանսերեն սովորական ձևեր են՝*

je me repose en juillet prochain

je quitte Paris le 2 août.

Հայերեն կարելի է ասել՝

Էգուց գնում եմ:

Եկող չարաթ քննություն եմ տալիս:

Մի ամիս հետո պսակվում ենք:

ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Սահմանականը *ցույց է տալիս իրողություն, իսկ* **ստորադասականը՝** *միայն կարելի կամ ցանկալի մի բան, օրինակ՝*

Թէ յառաջին ժամանակս արարեդք[1] լիզէին զվիրաւորս եւ[2] ողջացուցանէին, արդ ընդե՞ր ոչ[3] լիզիցեն եւ[4] ողջացուցանիցեն. ո՞չ նոյն պատերազմունք[5] են եւ նոյնպես վիրաւորք[6] անկանին (Եզն. 100):

1 և 2 Հաստատ իրողություններ են, ուրեմն՝ սահմանական են,

3 և 4 կարելիություններ միայն, անհավատալի, ուստի ստորադասական են,

5 և 6 Հաստատ դեպքեր են, ուստի սահմանական:

Ոչ որ[1] ըմպէ, զհինն եւ[2] կամիցի զնորն (Ղկ. ե. 39):

Առաջինը (1) **խմելը** *արդեն հաստատ երևույթ է, իսկ 2 (կամիցի)՝ միայն կարելիություն:*

[1]երթայք ի գեղդ... եւ անդ[2] գտանիցէք էշ (Մտթ. ԻԱ. 2).
1) հաստատ է, 2) ցանկալի:
Հարցից ինչ գձեզ (Ղկ. դ. 9) (ուզում եմ հարցնել):
Կերիցուք և ուրախ լիցուք (Ղկ. ԺԵ. 29) (ցանկություն):
Այս պատճառով ահա ապառնին հաճախ ստորադասական է դրվում. ինչպես՝
ապաշխարիցեն (Ղկ. Ժդ. 30) (առանց վախճանի):
Հաւանեսցեն (Ղկ. ԺԶ. 31) (վախճանը հայտնի):
Ստորադասականը գործածվում է նաև իբրև պատվեր. ինչպես՝
բերիցէ կամ բերցէ:
*Այս պարագային ավելանում է հաճախ **թո՛ղ**.*
Թո՛ղ նկնացէ դմա ուրախութիւն (Ագաթ. § 105):
*Այս դեպքում ավելի գործածվում է **-իջիք**.*
ի նմին տան ագանիջիք, ուտիջիք և ըմպիջիք ի նոցանէ (Ղկ. Ժ. 7):
Անկատար չունի ստորադասականը. ուստի դրվում է սահմանական անկատար.
Սա թէ մարգարէ որ էր, ապա գիտէր (Ղկ. է. 39) (անիրական բան):

ԿԱՏԱՐՅԱԼ ԵՎ ԳԵՐԱԿԱՏԱՐ

Ենթադրվում է (Lyonnet, BSL, 35, № 104, էջ 49–50), թե հայերենի գերակատարը ցույց է տալիս մի դրություն, որ դեռ չարունակվում է, մինչդեռ կատարյալը ցույց է տալիս մի դրություն, որ փոխված է (այլևս չի չարունակվում): Օրինակ՝

Եղ ի կոածոյ գերեզմանի ուր չէր բնաւ դոք եղեալ
(և այն ժամանակ էլ դեռ գրված չէր և հին դրությունը
չարունակվում էր (Ղկ. ԻԳ. 53–54):
Յորում ոչ որ երբեք էր եղեալ (ՅՀ. ԺԹ. 41):
Տեսին զտեղին ուր (Մրկ. ԻԵ. 47) կամ՝
Տեսին ... որպես իջաւ մարմին նորա (Ղկ. իգ. 55):

Հայերենի մեջ անկատարը ցույց է տալիս մի գործողություն, որ տևական էր անցյալում. այսպես է նաև անկատարը հունարենի մեջ և ընդհանրապես հնդեվրոպական նախալեզվում: Լատինը ձևափոխելով այս նշանակությունը վերածվել է մի գործողության, որ մի ուրիշ գործողությունից առաջ է եղել: Հայերենում անկատարը ծառայում է նաև պայմանական նախադասության համար, որովհետև հայերենը չունի ստորադասական անկատար ձևը: Օրինակ՝

Սա մարգարէ որ էր՝ ապա գիտէր (Ղուկ. Ե. 39):

*Կատարյալը (aoriste) ցույց է տալիս մի գործողություն, որ վերջացած է, առանց նկատի առնելու տևողությունը: Երկու ձևերի հակադրությունը ցույց տալու համար՝ դիտենք հետևյալ օրինակը. Եւ եղեալ վաղվաղակի ի գերեզմանէ անտի ահիւ և խնդութեամբ բազմաւ՝ **ընթանային** պատմել աշակերտացն: Եւ ահա **պատահեաց** նոցա Յիսուս և ասէ (Մտթ. ԻԸ. 8–9):*

Երբեմն միևնույն պատմությունը պատմված ենք գտնում մեկ կատարյալ և մեկ անկատար ձևով. օրինակ (Մտթ. Իէ. 48–49):

Եւ վաղվաղակի ընթացաւ մի ոմն ի նոցանէ. առ սպունգ մի քացախով. հարեալ յեղեգան՝ եւ ըմպել նմա: Եւ կէսքն ասէին. Թող. տեսցուք եթէ գա՞յ եղիա փրկել զդա:

Մարկ. Ժե. 36

*Եւ ընթացեալ մի ոմն՝ եղից սպունգ մի քացախով եւ հարեալ յեղեգան՝ **տայր** ըմպել նմա եւ ասէ. Թոյլ տուր տեսցուք. գա՞յ եղիա իջուցանել զդա: Հունարէն բնագրում երկու դեպքումն էլ գրված է ἐπότιζεν ինչպես որ մենք էլ այսօր պիտի ասինք «տուեց խմելու» կամ «տուաւ որ խմէ» և կամ «խմցրեց», ինչպես աշխարհաբար թարգմանության մեջ էլ (Գոլիս. 1906) ունենք Մտթ. նորան տուաւ, որ խմէ. Մրկ. տուաւ նորան՝ որ խմէ. կամ ֆրանսերեն թարգմանություն (New York, 1880) երկու տեղն էլ lui en donna à boire: Գրաբարում երկուսի տարբերությունը (Vogt, Les thème verbaux, էջ 131) բացատրում է նրանով, որ երբ գործողության վերջացած լինելը կարևոր չէ հայտնել, ընտրություն ապատ է լինում, բայց կարելի է կարծել նաև, որ թարգմանիչը ըմպելու գործողությունը տևական է ըմբռնել և իբր թե խմած միջոցին է ասել, թե «Թող տեսնենք...»:*

Ըստ այսմ պատմական ոճի մեջ, մինչդեռ հունարենը դնում է չարունակ aoriste, հայերենը ըստ իմաստի պահանջի դնում է մերթ կատարյալ, մերթ անկատար, այսպես՝ Մատթ. Իէ. 28–30. «Մերկացին զնա, եւ արկին զնովաւ քղամիդ կարմիր. եւ բոլորեալ պսակ ի փշոց՝ եդին ի գլուխ նորա, եւ եղէգն յաջոյ ձեռին նորա... կատակէին եւ ասէին. Ողջ լեր, թագաւոր հրէից: Եւ թքեալ ի նա՝ առնուին զեղէգնն եւ ծնծղին զգլուխ նորա: Եւ յորժամ ձաղկեցին զնա, մերկացուցին ի նմանէ զքղամիդն...»:

*Այստեղ, ուր գործողությունը կրկնվում է, հայերենը դնում է **անկատար**, իսկ ուր որ մի անգամ եղել վերջացել է՝ դնում է **կատարյալ**: Ամբողջ Մարկոսի ավետարանում, հունարենը ունի չուրջ 150 պատմական ներկա (չհաշված բայի ձևերը), որոնց դեմ հայերենը միայն 90 է պահել, որի մոտավորապես կեսը **զալ** բայով (Vogt, անդ. էջ 132):*

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

*Հայերենի ստորադասականը, թեև բոլորովին նոր կազմություն ունի հայերենի մեջ, ճիշտ ու ճիշտ համապատասխանում է հայերեն նախադասությունների ստորադասականին և մասամբ էլ ըղձականին: Ներկայացնում է մի գործողություն, որ կարելի կամ ցանկալի է: Այս ձևի մեջ է, որ ներկայի և aoriste-ի նշանակությունների տարբերությունը զգալի կերպով երևում է. **ներկան** ցույց է տալիս տևական գործողություն, իսկ aoriste-ը՝ կատարված, վերջացած: Շատ լավ ցույց է տալիս հաջորդ օրինակը այս երկու ձևերի տարբերությունը. **Կին յորժամ ծնանիցի** (տևական. Հունարէն τίκτῃ), տրտմութիւն է, նա, զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի» (վերջացաւ γεννήσῃ) «զմանուկն, ոչ եւս յիշէ զնեղութեան վասն խնդութեանն, զի ծնաւ մարդ յաշխարհ» (Յհ. ԺԶ. 21–22):*

Հունարենի ապառնիի դեմ սովորաբար հայերենում դրվում է ստորադասական aoriste, *դրա համար էլ այս ձևը հայերեն քերականության մեջ կոչվում է* **«ապառնի»**. *որ սխալ բացատրություն է:*

Կատարյալ *կոչված ձևը մոտավորապես իմաստով և ծագմամբ համապատասխան է հունարեն* aoriste*-ին, այսպես՝* **լքի-** *ἔλιπον և այլն:*

[ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՎ ԱՊԱՌՆԻ]

Ստորադասականը հաճախ գործ է ածվում իբր **ապառնի,** *և միևնույն պատմության մեջ երկու ձևերը կարող են խառն գործածվել. օրինակ. Մատթ. ժ. 7–23:*

«Մատնեսցեն զձեզ յատեանս եւ ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ եւ առաջի դատաւորաց եւ թագաւորաց **տանիցին** *զձեզ վասն իմ...», «մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, եւ հայր՝ զորդի. եւ* **յարիցեն** *որդիք ի վերայ հարց եւ* **սպանանիցեն** *զնոսա»: (Մատթ. ԻԴ. 9): Յորժամ մատնեսցեն զձեզ ի նեղութիւն եւ* **սպանանիցեն** *զձեզ»:*

Ղկ. ԺԸ. 31–33. «Ահաւասիկ կ՚ելանեմք յերուսաղեմ, եւ կատարեսցին ամենայն գրեալքն...», «զի մատնեսցի հեթանոսաց, եւ կատակեսցի. եւ **հարկանիցեն** *եւ* **սպանանիցեն** *զնա եւ յերիր աւուր յարիցէ»:*

Այս ձևերի դեմ հունարենն ունի միչտ ապառնի, հետևաբար հայերենի նրբություններից մեկն է, մեզ անծանոթ, որ պահանջում է մերթ ապառնի, մերթ ստորադասական (Vogt, des deux thème. *էջ 135):*

Vogt *(անդ, 136) գտնում է, որ ստորադասականը գործ է ածվում* **ընդհանուր** *խոսքերի համար, իսկ ապառնին՝* **մասնավոր և որոշյալ** *դեպքերի համար:*

Օրինակ՝ Մատթ. ԺԸ. 18. Երբ Յիսուս խոսում է ընդհանրապես բոլոր աչակերտների մասին՝ ասում է. «Զոր **կապիցէք** *յերկրի՝* **եղիցի** *կապեալ յերկինս, եւ զոր* **արձակիցէք** *յերկրի՝* **եղիցի** *արձակեալ յերկինս»: Իսկ երբ խոսում է միայն Պետրոսի հետ մասնավորապես և որոշ կերպով՝ ասում է (ապառնի). «Դու ես վէմ եւ ի վերայ այդր վիմի չինեցից զեկեղեցի իմ, զրունք դժոխոց դնա մի՛ հաղթահարեսցեն. եւ տաց քեզ զփականս արքայութեան երկնից եւ զոր միանդամ* **կապեսցես՝** *(յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս. եւ զոր* **արձակեսցես** *յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս» (Մտթ. ժզ. 18–19):*

Vogt *(էջ 137)* հիշում է նաև մի ուրիշ օրինակ, որ գրված է երկու ձևով.

Մտթ. Ը. 8 «Տէ՛ր, չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտցես».

Ղուկ. է. 6 Տէր.... » » » » » » » մտանիցես».

երկու դեպքումն էլ հարյուրապետն է խոսում, բայց առաջինում իբր իր անվան համար հատկապես, երկրորդում՝ իբր իր աստիճանի համար՝ ընդհանրապես (այսպես է փաստաբանում Vogt):

Ստորադասականը հայտնում է **կասկած, տարակույս,** *ենթադրություն, որի համար չատ դեղեցիկ օրինակ է հետևյալը* (Vogt, *էջ 137).*

«Սադուկեցիք, որ չէին հավատում հարության, գալիս են

Հիսուսին և ասում են.

Արդ ի յարութեանն յորժամ յառնիցեն» (տարակույս) (Մրկ. ԺԲ. 23):

Հիսուս, որ հավատում է հարության, ասում է.

«Զի յորժամ ի մեռելոց յարիցեն» (Հաստատ) (Մրկ. ԺԲ. 25):

Համեմատել նաև հետևյալ օրինակները.

«Արդ երթայք յանցս ճանապարհաց և զորս միանգամ **գտանիցէք»** *(անորոշ)՝ «կոչեցէ՛ք ի հարսանիսս: Եւ նովաւ ծառայքն ի ճանապարհս՝ ժողովեցին զամենեսեան զոր եւ գտին» (որոշ) (Մտթ. ԻԲ. 9–10):*

«Հարցիւ *(որոշ) եւ ես զձեզ բան մի, զոր թէ* **ասիցէք** *(անորոշ) ինձ, եւ ես ձեզ* **ասացից»** *(որոշ) (Մտթ. Իա. 24):*

«Զի որ **սպանանիցէ** *(անորոշ), պարտական* **լիցի** *(որոշ) դատաստանի» (Մտթ. Ե. 21):*

«Թէ եւ մեռանել **հասանիցէ** *(անորոշ) ընդ քեզ. զքեզ ոչ ուրացայց» (որոշ) (Մտթ. իզ. 35):*

Եթե պայմանը երկու է, առաջինը կմնա պայման (ստորադասական), իսկ երկրորդը, որ կապված է առաջինի լրացման հետ, կդառնա արդեն իրր Հաստատ (ապառնի), օրինակ.

«Եթէ **մատուցանիցես** *(ա պայման) պատարագ քո ի վերայ սեղանոյ եւ անդ յիշեացես (բ պայման) եթէ եղբայր քո ունիցի ինչ խէթ զքէն...» (Մտթ. Ե. 23):*

«Եթէ երկու ի ձէնջ **միաբանիցեն** *յերկրի վասն ամենայն իրաց, զինչ և* **խընդրեսցեն՝** *եղիցի նոցա» (Մտթ. ԺԸ. 19). (Համմտ. Մտթ. Իա. 22. «Զամենայն ինչ զոր եւ* **խնդրիցէք...** *առնուցուք»:*

Որովհետև ստորադասականը անկատար ձև չունի հայերենում, ուստի երբ խոսքը անցյալի մասին է, դրվում է **պարզ անկատար.** *օրինակ.*

«Եթէ էաք յաւուրս Հարցն մերոց, ոչ հաղորդէաք արբան մարգարէիցն» (Մտթ. ԻԳ. 30):

«Վա՛հ, որ քակէիր զտաճարն եւ զերիս աւուրս չինէիր զնա» (Մտթ. իէ. 40):

Նույնը ապառնիի համար.

«Եւ եթէ ոչ կարճէին աւուրքն այնոքիկ. ոչ ապրէր ամենայն մարմին» (Մտթ. ԻԴ. 22).

«Էաւ էր նմա, թէ վէմ երկանաքար **կախէր** *զպարանոցէ նորա եւ* **անկանէր** *ի ծով, քան թէ* **գայթակղեցուցանէ** *զմի որ ի փոքրկանցս յայսցանէ» (Ղկ. ԺՀ. 2).– առաջին երեք դեպքում դրված է* **անկատար** *(իրր ստորադասական), բայց վերջինը՝* **ներկա** *(որ պիտի լիներ նույնպես անկատար): Միևնույնը դրված կա նաև ստորադասական ձևով. «Էաւ է նմա եթէ* **կախիցի** *երկան իշոյ ընդ պարանոց նորա եւ* **ընկղմիցի** *ի խորս ծովու» (Մտթ. ԺԸ. 6):*

Հարցումն էլ իրր անորոշ կամ անստույգ բան դրվում է ստորադասական, նույնիսկ երբ հարցումը լոկ հռետորական է, այսինքն հարցնողը գիտե, թե պատասխանը դրական է: Օրինակ՝

«Հարցանէր ի նոցանէ, թէ ո՞ւր ծնանիցի Քրիստոս» (Մտթ. Բ. 4). իսկ «Աստված ո՞չ առնիցէ վրէժխնդրութիւն ծառայից իւրոց» (Ղկ. ԺԸ. 7), որի դեմ կա նաև պատասխանը հարցանողի կողմից. «Այո՛ ասեմ ձեզ զի **արասցէ** *վրէժխընդրութիւն նոցա վաղվաղակի»:*

«Գտանիցէ՞ արդեաւք հաւատս յերկրի» (Ղկ. ԺԸ. 8).

«Զրաժակն զոր ետ ինձ, Հա՛յր. ո՞չ ըմպիցեմ զնա» (ՅՀ. ԺԸ. 11):

Նման երկդիմի դեպքեր ներկայացնում են հետևյալ օրինակները, որոնցից մեկի մեջ խոսքը ընդհանուր է, մյուսի մեջ՝ մասնավոր.

ՄատԹ. ե. 13. «Ապա ԹԷ աղն անհամի, ի՞ յաղիցի». =

= Մրկ. Թ. 49. «եւ ևԹԷ աղն անհամնմնսցի, ի՞ համնմնսցի».- Ղուկ. ԺԴ. 34. «Ապա ԹԷ՝ աղն անհամնսցի, ի՞ համնմնսցի».

Մտթ. ԻԲ. 24. «եԹԷ ոք մնոցի անորդի» = Ղկ. Ի. 28. «նԹԷ ուրուք եղբայր մնոանիցի».

Ղկ. ԺԲ. 37. «երանի իցէ ծառայիցն այնոցիկ զորս նկնալ տէրն գտցէ արԹունս». = Ղկ. ԺԲ. 43–44. «երանի իցէ ծառային այնմիկ զոր նկնալ տէր իւր գտանիցէ արարևալ այնպէս».

Մտթ. Զ. 25. «Մի՛ հոգայք վասն ոգւոց ձերոց՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք. եւ մի՛ վասն մարմնոյ ձերոց ԹԷ զինչ ազանիցիք». = Մտթ. գ. 31. «Մի՛ այսուհետեւ հոգայցէք եւ ասիցէք. Զի՞նչ կերիցուք կամ զի՞նչ արբցուք կամ զի՞նչ զգեցցուք». = Ղուկ. ԺԲ. 22, «Մի՛ հոգայք ընդ ոգւոյ ԹԷ զինչ ուտիցէք, եւ մի՛ ընդ մարմնոյ ԹԷ զինչ զգենուցուք».

Մտթ. ժ. 41. «Որ **ընդունի** *զմարգարէ յանուն մարգարէի՝ զվարձս մարգարէի առցէ. եւ որ* **ընդունի** *զարդար յանուն արդարոյ՝ զվարձս արդարոյ ասցէ».- որի դեմ համմտ. Մտթ. ժ. 42. «Եւ որ արբուսցէ միում ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն՝ յանուն աշակերտի, ... ոչ կորուսցէ զվարձս իւր»:*

Ղկ. Թ. 48. «Որ ոք **ընկալցի** *զմանուկս զայս յանուն իմ... եւ որ զիս* **ընդունիցի...»** *= Ղկ. Թ. 5. «Եւ որք ոչ ընդունիցեն զձեզ...»:*

[ԲԱՑԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՆԵՐ]

Բայական դարձվածներ կոչում ենք այնպիսի կազմություններ, որոնց մեջ մի բայ միանալով մի գոյականի կամ ածականի և կամ մակբայի հետ, տալիս է մի պարզ բայի միտք. ինչպես՝ **աղօԹս առնել, յաղօԹս կալ, աղօԹս մատուցանել** *= «աղոթել»:*

յայդ առնել = յայտնել.
ի բաց առնել, ի բաց առնուլ
Թույլ տալ = Թոյլ տուք դոցա երԹալ (ՅՀ. ԺԸ. 8):
Ոչ տայր նոցա Թոյլ խօսել (Ղկ. Դ. 42):
Ի քուն եմ (Մտթ. ԻԸ. 13):
Պատասխանի տալ, պատասխանի առնել.
դհետ երԹալ.
ի խաւար դառնալ.
պաշտոն առնուլ, պաշտօն մատուցանել:

Նույնը կրկին գոյականով՝

ծաղր և այպն առնէր անօրէնն Մանաճիրհ (Բուզ. Գ. 10):

Այսպիսի կազմությանց մեջ երբեմն գոյականը ունի առանձին ձև. օրինակ.

Մնդրել վրեժ. *բայց առանձին* **վրեժք.**

Այսպիսի դարձվածները կարող են գործածվել և ներգործական և կրավորական իմաստով. և երբեմն բայի փոփոխությամբ ձեռք է բերվում սևոր. ինչպես՝ **պաչտօն առնուլ, պաչտօն մատուցանել.**

Դարձվածը կարող էր այլ բառերով բաժանվել. երկու բառի հարակցություն անհրաժեշտ չէ.

«Ոչ տայր նոցա թոյլ խօսել» (Ղկ. Դ. 42)։

Որ *հարաբերականից հետո չի ասվում «պատասխանի տալ». այլ «տալ պատասխանի».*

Որոց ետու պատասխանի (Գծ. Իե. 16)։

Ոսկեդարյան հայերենում սիրում են բայը կրկնել իր խնդրով. նման ձևեր կան հին իրանական լեզուների մեջ. օրինակ՝

Հայ. avam hubrtam abaram *Հետը լավ վարված վարուեցայ.*

Հպ. avam hufrastam aprsam *նրան լավ պատժելով պատժեցի.*

գնդ. hu irixtəm irinaxti *լավ նետերով նետում է.*

գնդ. huframəratəm framarəmnəm *լավ արտասանված կարտասանի։*

Պարսկերենում քաղաքավարության համար թեև կա հոգնակի թիվ. բ. (երկրորդ) դեմք. բայց ավելի քաղաքավարի է հոգնակի գ. (երրորդ) դեմքը. ինչպես՝

sarafrāz farmūdand *պատվեցին դիս.*

sarafraz farmūdīd *պատվեցիք դիս,*

նույնիսկ երրորդ դեմքի համար՝

padišāh ōrā dādand

թագավորը նրան տվեց (տվեցին).

vazīr xāhand āmad *վեզիրը պիտի գա։*

ԲԱՐԴ ՁԵՎԵՐ

Նախադրությունները բայերին կպցնելով ստացվում են նոր բարդ ժամանակներ. ինչպես՝

ուտելու **վրա էի.**

Ճիշտ այսպես նաև անգլերեն he is on hunting, *որ հիմա չի գործածվում. ֆրանսերեն՝*

il était à se raser, quand

ածելվելու վրա էր. երբ...

Վերջինս մեր ՈՒՄ ներկայի ձևն է։

Միաժամանակ՝ և՛ հաստատական և՛ բացասական, կամ նչանակում է անմիջապես, **Հենց որ.** *օրինակ.*

տեսա — չտեսա *«Հենց որ տեսա»,*

տեսնում եմ — չեմ տեսնում՝ *փախչում եմ.*

կերթամ — չեմ երթար, *կսկսի գանգատվել։*

Կա կրկնությամբ՝ առանց այս պայմանի.

ուզես — չուզես *պիտի երթաս.*

գիտե — չգիտե, *կխոսի։*

Այս ձևերը գործածական են նաև Թրքերենում։

ԲԱՑԸ ԻՐ ԽՆԴՐՈՎ

Բային ուժ տալու համար իր հետ գործածվում է նաև իր՝ [բայի] արմատը. այսպես նաև ռուսերենում **службу служить** *ծառայությամբ ծառայել.* **суд судить** *դատ դատել* (Fuchs, Gram. russe, 291).

Բայի կատարյալի եղակի և հոգնակի **դ** *(երրորդ) դեմքը դրականով և բացասականով կրկնվելով, կազմում է առանձին դարձված, որ ցույց է տալիս անփութություն: Օրինակ՝*

Եկավ՝ եկավ, չեկավ՝ չեկավ – *«եթե եկավ, լավ է, որ եկավ, իսկ եթե չեկավ, ինչ փնաս, նշանակություն չունի»:*

Եղավ՝ եղավ, չեղավ՝ չեղավ – *«եթե հաջողվեց լավ է, իսկ եթե չհաջողվեց, ինչ փույթ»:*

Եկան՝ եկան, չեկան՝ չեկան:

Եղան՝ եղան, չեղան՝ չեղան:

Կարելի է կատարյալի բոլոր դեմքերն էլ այս ձևով կրկնել: Իսկ բայի մյուս ժամանակները կրկնության դեպքում ստանում են հրամայական ձև. օրինակ՝

Գալիս է՝ թող գա, չի գալիս, թող չգա:

Գալիս ես՝ արի, չես գալիս՝ մի՛ գայ:

Պիտի տաս՝ տուր, չպիտի տաս՝ մի՛ տուր:

Այս ձևը գործածություն ունի նաև պարսկերենի և թուրքերենի մեջ, օրինակ՝

sud, sud, ne sud, ne sud *«եղավ՝ եղավ, չեղավ՝ չեղավ»:*

A med, amed, ne amed, ne amed *«եկավ՝ եկավ, չեկավ՝ չեկավ»:*

Xahi amed leya ne xahi amed mga *«գալիս ես՝ արի, չես գալու մի արի»:*

Geldi, geldi, gelmedi, gelmedi *«եկավ, եկավ, չեկավ չեկավ»:*

Ուրիշ լեզուներ այսպիսի ձև չունեն: Ռուսերեն չի կարելի ասել. **пришел, пришел, не пришел, не пришел,** *այլ միայն* **пришел, хорошо, а если не пришел, ничего,** *կամ մի ուրիշ ձև: Նմանապես ֆրանսերեն չի կարելի ասել* venu, il est venu, il n'est pas venu, il n'est pas venu, *այլ* s'il est venu, bien, s'il n'est pas venu, tant pis pour *և այլն:*

Գրաբարում էլ չկա այդպիսի արտահայտություն, ուստի կարելի է ասել, որ արտահայտության այս ձևը ընդօրինակություն է պարսկերենից կամ թուրքերենից:

Դիմավոր բայից առաջ դնելով իր աննրևույթը, կստացվի «թեև, թեպետ և, ճշմարիտ է որ...» նշանակությունը, որին հաջորդում է **սակայն, բայց** *բառով մի հակառակ նախադասություն: Օրինակ՝**

Էական *բայը աննրևույթ չունենալով՝ վերի իմաստը ստանալու համար* **դիմավորն** *է կրկնվում՝ առանց չաղկապի. ինչպես՝ է առաջնորդ մեղաց բանսարկուն... բայց մեղաւ ոչ եթէ... (Կոչ., էջ 12):*

---

* *Բնագրում օրինակը բացակայում է (Ա. Բ.):*

Էականը նեին ունի **ածական**, *կրկնվում է* **ածականը**. *ինչպես՝ «Մեծ. մեծ է օրինակդ դոր ասաջին, սակայն տկար է առ որ ասեմքս եւ անկար (Կոչ., էջ 89): Մեծ. մեծ է եւ այս... բայց սակայն փոքր է առ այն՝ զոր ասելոց եմ (Կոչ., էջ 22): Զար չար է կամակորութիւն... (Կոչ., էջ 9):*

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԵՒ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ

Հայերենի մեջ կան մի խումբ ոճական արտայություններ, որոնք բուն իմաստով ներգործական են, բուն գործածության՝ չեզոք, և հետևաբար առնում են **տրական** *խնդիր և ոչ* **հայցական** *սեռի խնդիր. այսպես օրինակ՝* **ականջ դնել՝** *իմաստով («լսել») ներգործական է, բայց կարելի չէ ասել «ականջ դնել պատմութիւնը», այլ «ականջ դնել պատմութեան», ուր բուն ձևի* **դնել** *ներգործական բայ է,* **ականջ** *նրա սեռի խնդիրը,* **պատմութեան** *տրական խնդիր:*

Բայց նեին նույն բայից կազմենք **ունկնդրել**, *որ նույնպես, լսել իմաստն ունի, այլևս կարելի չէ ասել «ունկնդրել պատմութեան», այլ* **ունկնդրել պատմութիւնը** *(Հայցական):*

ՀԱՐՑԱԿԱՆ

Հարցականի համար բրետոներենում նախադասության սկիզբը դնում են a (est-ce que), *ինչպես՝*

me gâre *սիրում եմ* – a me gâre? – *սիրո՞ւմ եմ,*
ean e gâre *նա սիրում է* – Pierre a ean e gâre?
Պետրոսը սիրո՞ւմ է (Guillome 112):

Համախ մեր գրողներն էլ չփոթում են չեզոքն ու ներգործականը և բուն այնմ դնում սխալ խնդիր. օրինակ՝

«Նա դավանել էր այն սկզբունքին» (*Միրաս. Զգրված օրենք, 50*), *անչուշտ հեղինակը սկզբունքին չի դնում իբր Հայցական, այլ տրական, ուրեմն դավանել նրա համար ոչ թե ներգործական է, այլ չեզոք, իբր թե դավանող լինել:*

«Նչանակում էր վնասել միւս ամենի կարևոր գործերը» (*անդ, էջ 84*), *գործերը դրված է Հայցական. ուստի վնասել ներգործական է, համարում, մինչդեռ* **վնասել** (*վնաս պատճառել մեկին*) **չեզոք** *է, և պետք է ասել* **վնասել գործերին.** *ինչպես ասվում է նաև ֆրանսերենում՝* nuire (*չեզոք*) aux vignes (*վնասել այգիներին*).

«Որպեսզի չարաբաստիկ դիտեր աչխարհին» (*անդ, էջ 507*)... **Դիտել** *ներգործական բայ է, ուստի պիտի լիներ Հայցական՝* **աչխարհը.** *անչուշտ հեղինակը* **դիտել** *համազոր է դնում* **նայել** *բային և սրա նման համարում է չեզոք:*

* * *

Որ հարաբերականից հետո թե **էական** *պատահի,* **էական**-*ը ստորոգելիից առաջ կդրվի. ինչպես՝*

Որում և'ս եմ վկայ (Ագաթ. § 53):
Որ է փառք ազգիս մերոյ (Ագաթ. § 53):

ճիշտ այս ձևն է՝ (օրինակը բացակայում է – Խ. Բ.)։

Արևելյան բարբառներում սովորական է միևնույն բայի անորոշը իր դիմավորով խոնարհել, հաստատելու համար որոշ գործ, բայց բացասելու համար մի ուրիշը. ինչպես՝ **ասելը ասացի,** *բայց* **ականջ չտուեց:** *Այս դարձվածքի համար ահա հին էր.*

Ջսաղմոսեն ի միասին սաղմոսեմք (Վրք. հց. ա. 280)։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԱՆՑՑԱԼ

ԵԹԷ հնազանդեալ էր հրամանին Տ-ն՝ կերեալ իցէր զպտուղ ծառոյն կենաց. (Մանդ. սիր. 5)։

Բուդ. 207. ինձ այսպես թուէր՝ ԵԹԷ հուր բոց ի գնդէն ելանիցէր (ուղղել ելանիցէ).

Ուրիշ օրինակներ՝ տե՛ս Նորայր. Հայկական բառաքննութիւն, էջ 62–63։

Զի մի դինից իւր նոցա յաւելուած (Մծս., էջ 58)։

Այս մասին մանրամասն տե՛ս Վարդանեան, Բառաքննական տետրակ, Ա. 44–47։

Այսօր ֆրանսերենից ջնջված է Subj. imperfait *և միայն քերականության մեջ է, որ չարունակում է իր ձևական գոյութիւնը, գիտունները պահանջում են, որ այդտեղից էլ վտարվի։* Meillet, BSL № 77, 104*-ում գրում է. «Այդ ձևը մեռած է. մինչև իսկ ամենախնամոտ գրավոր լեզվի մեջ նա դարձել է այնքան պակասաւոր, որ միայն ավելորդ նեղութիւն է. նա դարձել է վնասակար, և պետք էր ունենալ քաջութիւն իսպառ դուրս վռնդելու համար։ Ֆրանսերենում այլևս չեն ասում* tu avais voulu que je vinsse *այլ* tu avais voulu que je vienne»։

ՀՐԱՄԱՑԱԿԱՆ

Թո՛ղ *գործ է ածվում իրր մասնիկ.*

առանձին և տարօրինակ ձև մ'է (Վրք. վկ. ա. 417).

Ջիս **Թո՛ղ** *անարգեցէր, ա՛յ կնղծաւոր, դեմագաւորն եւ զԱստուածն ընդէ՞ր յանդգնեցար հայհոյել։*

Թո՛ղ *իրր նչան հրամայականի, ունեն նաև՝*

գերմ. lass uns lieben!

չվեդ. lat oss älska, *սիրենք,*

անգլ. let us love *սիրենք,* let me eat *թող ուտեմ։*

Աչխարհաբարում հրամայականի հետ հաճախ դրվում է **արի.**

Արի տե՛ս որ. Արի դու նրան հասկացրու...

Այսպես և քրդերեն, բայց թուրքերեն gel *«արի» բառով. ինչպես՝* gīr gel *առ (արի)* (Justi, Kurd gram. 251)։

Հինդուստանիում կա **խնդրական–հրամայական.** *ինչպես՝* bol *«խօսիր», «խնդրեմ խօսիր»,* boliye, boliyo *– «խնդրեմ խոսեցեք». մասնիկն է եղ. -iye, հգ. -iyo* (Bonnerjea, Gram Hindi, *էջ 17)։*

Մեղմացնելու համար հրամանը դնում ենք ապառնի. «կներե՛ս կասե՛ս այդ մարդուն, որ այլևս...». սա ավելի պատվեր է, քան հրաման. նույնը և ֆրանսերեն՝ vous ferez ceci. մեղմացրած հրաման է և ոչ ուժգին հրաման, որ պիտի համարվեր կոչտ:

Ա յծորդության հրամայականի վերջավորությունն էր **ա**, *որ ձայնարանորեն պիտի դառնար հետո* **է**. *այսպես է և արևմտյան բարբառներում. սրա ավելի հին օրինակներն են.*

Ընկէ (փխ. ընկնա՛, այն է «գցի՛ր» (Վրք. հց. ա. 225):
Եփե «եփիր» (Վրք. հց. ա. 226):
Գնա և ապաչխարէ (Վրք. հց. ա. 332):

-անել > նել *միացել է արմատին, որով՝*
հրմ. օծնէ՝ «օծէ՛, քսէ՛» (Մխ. բժշ. 10):

* * *

Պարսկերենում հրամայականը սաստկացնելու համար դրվում են զանազան բայեր. dih *տո՛ւր,* gu *ասա՛,* biya *արի՛, ինչպես՝*

dih biro *գնա՛.*
gu kuni *արա՛,* gu ne kuni *մի՛ անիլ.*
biya bigu *ասա՛ (ճիշտ ինչպես հայերենում՝* **արի՛, արա՛**):
(Jensen, Newper. gram, 258)

Հրամայականը ներկա և ապառնի նույնն է, բայց իրապես ներկա է, քանի որ կա հրաման և ենթադրվում է, որ գործադրությունը հրամանից հետո պիտի լինի:

Լեհերեն հրամայական կազմելու համար (առաջին դեմք) դնում են niech, *որ հին* niechac *«թողնել» բայից է կրճատված* (Joel, *էջ 278*):

Քաղաքավարության համար. Voudriez-vous rendre ce service Connaitriez-vous une de ers personnes.

Ցույց է տալիս պայման. ինչպես՝ dans le cas ou il se deciderait, je vous avertirait – *հայերեն՝ եթե նա վճռի, կհայտնեմ (բառացի՝ եթե նա վճռեր, կհայտնեի)* (Clédat, gram hist. *էջ 235*).

Հայերեն՝ եթե նա վճռի, կհայտնեմ (բառացի եթե նա վճռէր, կհայտնէի) (Clédat, gram hist. *էջ 235*):

* * *

Սերբերենում հրամայականի եզակի երկրորդ դեմքը կարող է գործածվել նաև ներկայի զանազան դեմքերի փոխարեն՝ կենդանի պատմվածքների մեջ. ինչպես՝

ka"d t čujēm, a jâ be"ʒ i do"ma
որ այդ ասում եմ, ես փախի՛ր տուն –
(տուն եմ փախչում, փախոյ տուն):
Kad sti"goše nèprijatelji, a òni ùdri nà njih

Նրանք հարձակվի վրանները –
(հարձակվեցան վրան):
(Meillet, Gram. serb. 171).

ԱՐԳԵԼԱԿԱՆ

Մի՛ այդպես պատասխանի տաս (Վրք. և վկ. բ. 229):
Մի՛ տա, մի՛ արգիլես (Մխ. բժշ. 82, 83), մի՛ մտիկ դնես:
Մի՛ ընդունիս (ԼՂ 88):
Մի՛ չտապիս (Մխ. բժշ. 104). մի՛ տաս (104, 107):
Հաճնի բրբ. **թող** *դարձած է իբր մասնիկ* **թ.**
Թասէ «թո՛ղ ասի»,
Թնաչտօ «թո՛ղ նրթայ»,
Թրխրմէ «թող խմի»,
Թաբրիլլէ «թող բերէ»:

Շամախիում **մի**–*ն կրճատվում է՝* **մ**, *և չեչտը անցնում է հաջորդ ձայնավորին. ինչպես՝* **մ**'*ասիլ,* **մ**'*օռթնիլ, «մի՛ օրհնիր»,* **մ**'*ուրախանալ,* **մ**'*ընգնիլ «մի՛ ընկնիր»,* **մ**'*ըրվիլ «մի՛ այրուի» և այլն:*

ԳԵՐԱԿԱՏԱՐ

Անկատարի նման գերակատարն էլ հաճախ ցույց է տալիս չարունակական տևողություն. ինչպես՝ երբ բարկացրած էին լինում, նա իրան բոլորովին կորցնում էր:

ԿԱՏԱՐՅԱԼ

Կատարյալի եղակի երրորդ դեմքի վրայի հավելումը իր արժեքը կորցնելուց հետո՝ նույն ոճով կազմեցին կատարյալներ նաև բազմավանկ բայերից. ինչպես՝

Արարեալ աղօթս, **արձակ** *դնա (փխ. արձակեաց) (Վրք. Հց. ա. 600): Եւ մինչդեռ հակէր նա ի գիշերին,* **արձակ** *ի վերայ նորա զգազանս առ հասարակ զանապատին այնորիկ (Վրք. Հց. ա. 53):*

Թրմեաց հաց եւ **արձակ** *ձեթ եւ աղ եւ կերաւ (Վրք. Հց. բ. 295):*

Զոտս արձակ եւ փախեաւ (Եւսեդիոս, Պատմութիւն, 192):

Մերկաց *(իմա՛ մերկացավ) Պետրոս զսուր իւր (Սերեր. 213):*
կամ ուրիշ խոնարհմամբ՝

Գնաց *ի Յորդանան գետ եւ անցաւ դնա (Վրք. Հց. ա. 115):*

Եճեւղք *զառիւծն (–***ճեղքեաց***) (Փիլ. սամփս. 565):*

Մոնղոլերենում կա կատարյալի մի ձև, որ մեղմացնում է դնպքերի հանկարծակի և անսպասելի լինելը. կազմվում է čuxuy *մասնիկով. ինչպես՝*

oxa irečuxuy *եղբայրը եկավ*
(և ահա եղբայրը եկավ).
morin unačuxuy *ձին բնկավ*
(և ահա ձին բնկավ).
(Клюкин, 81).

ԱՆԿԱՏԱՐ

Կարնո բարբառում ունենք **-իր** *վերջավորությունը. փխ.* **-եր**. *օրինակ՝* **կլինիր** *(փխ. կլիներ)։ Սրա հին վկայություններն ունենք Պղատ. Տիմ. 126՝ փոխիր, ծնանէր, վարիւր, որոնք ձեռագրին մեջ գրված են* **փոխիր, ծնանիր, վարիր**, *էջ 154, ապականէր (ձեռ. ապականիր). նաև՝* **գտանիր**, *Պղատ. Օրին. 78, վարիր 92, պահիր 92, թուիր 98, փրկիր 100, լինիր 182։*

Կրավորական **բերիւր** *ձևը* Pokorny *և* Hermann, Silbenbildung, *էջ 330, կրացատրեն հնխ.* bhereto, *որուն հակառակ չէ* Meillet, BSL № 77, *էջ 54։*

Գործածվում է ներկայի տեղ իբր քաղաքավարական ձև. ինչպես՝ Ի՞նչ կուզնիք, «ի՞նչ եք ուզում» –

պրս. či čīz mi mi-xastud։

Անկատարը ցույց է տալիս նաև չարունակ կատարված մի գործողություն. օրինակ՝ «Առաջ հաճախ նամակներ ստանում էի». այսպիսի անկատարը ֆրանսերեն կոչվում է imparfait d'habitude.

ՊԱՏՄԱԿԱՆ ՆԵՐԿԱ

Անցյալ մի դեպք կամ մի պատմություն պատմելիս թեև բնականաբար գործ է ածվում **անցյալ կատարյալ** *ձև, բայց հաճախ, իբրև թե մտքով* **ներկա** *լինելով դեպքին, պատմում են* **ներկա**. *ինչպես՝ «Լինում է չի լինում, մի աղբատ մարդ է լինում. ունենում է մի որդի. այս որդին մի օր գնում է,...»*

Այսպիսի ներկան կոչվում է **պատմական ներկա** (historique)։ *Հաճախ ձանձրույթից խուսափելու համար միևնույն պատմվածքի մեջ մերթ ներկա և մերթ կատարյալ են գործածում, բայց այս դեպքում անցումը այնպես արվեստով պետք է լինի, որ աչքի չզարնեն։*

ԱՆՍՈՎՈՐ

Բայերի անսովոր կազմությունը «Մի մատակ արջ դեհաց լալկանչ երեխային և կաթնով **աննդեց** *ութ օր և ութ գիշեր (Հոմերոսի Իլիական, թարգմանություն, Փ. Վարդանեան, Թիֆլիս, 1886, էջ 4)։*

ՀՈԼՈՎՑԱԼ ԲԱՑ

Լազերեն և վրացերեն բայի խոնարհյալ մի ձևը կարող է նաև հոլովական մասնիկ ստանալ. ինչպես՝ լազերեն՝

կատարյալ gecebilckediŝ-kule nachdem ich an
mir hinuntergeschaut hatte

անկատար ըղձական և ստորադասական – ստանալով տրական հոլով՝ ցույց են տալիս գործողության ձևը.

va miŝk'urtu-**ŝa** *երբ չգիտեի (անսպասելի)*
p'uji xoji var ta-**ŝa** stier *եթե չուննար,*

վրաց.-

moft'i-s-**is** *երբ նկա,*
moxt' un-**es** *երբ գալիս են,*
vubirat'-**is** *երբ մենք նրա մոտ* spielen,
va nanču-ŝi nan *որովհետև չէր հասնում:*
(Dirr, Einf. 113)

Դ Ե Ր Բ Ա Յ

Դերբայը *հայերենի մեջ չատ սիրված ձևերից չէ, և մանավանդ նրանց հաճախակի կրկնությունը խոտելի է: Այսպես, Ավետարանի թարգմանության մեջ չատ անգամ, երբ հունարենը դնում է* **դերբայ**, *հայերենը դնում է* **դիմավոր բայ.** *օրինակ՝ Մտթ. Դ. 23–24:*

«Եւ չրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց ուսուցանէր ի ժողովուրդս նոցա եւ քարոզէր զաւետարանն արքայութեան, եւ բժշկէր զամենայն հիւանդութիւնս եւ զամենայն ախտս ի ժողովրդեանն». Հունարեն καὶ παριῆγεν... σιδάσæων... æηρìσσων... ὗιραπ εύων.

ԱՆԵՐԵՎՈՒԹ

Եգիպտացներենում **անեղևույթը** *նույն բայի հետ գործածվելով՝ իմաստը սաստկացնում է. օրինակ՝*

ẖnn. ṡn hn. t *թիավարեն թիավարել (եթե լավ՝ եռանդով թիավարեն).*
ṡḏm sḏm. t w *որ լսել լուիցէ:*
(Roeder, Ägyhtisch 43)

Բրըտոներենում կա միայն **անցեալ** *դերբայ. ուրիշ տեսակի դերբայներ գոյություն չունեն. և երբ հարկ լինի, բայը դիմավորի վերածելով են արտահայտում* (Guillome, *էջ 116):*

Հայերենի մեջ **անեղևույթը** *թեև ձևով պատկանում է ներկայի բունին, բայց նշանակությամբ ներկա չէ, և չկա անեղևույթի* aor., **անեղևույթը** *կարող է թե՛ իբր ներգործական և թե՛ իբր կրավորական գործածվել. ինչպես՝* **վասն կարճելոյ չարեացն** *եղև. 59 կրավորական է, բայց* **վասն կարճելոյ զչարիս** *ներգոյական:*

Անեղևույթը *գոյական է և ունի վերացականի իմաստ.* **առանց յապաղելոյ** *նույնն է, ինչ որ* **առանց յապաղութեան** *կամ* **առանց յապաղման:**

Իբրև գոյական, աներևույթը կարող է ամեն հոլովով հոլովվել, ինչպես՝

Ուղղական – Լավ է ոչ ուտել միս (Հռ. ԺԴ. 21), ինձ լիցի պահել զուխտ (Ագաթ. § 111):

Սեռական – Արարեք ձեզ քսակս առանց հնանալոյ (Ղկ. ԺԲ. 33),
Վասն իմոյ տանջելոց ի քէն (Ագաթ. § 71):
Տրական – Ակն ունէին ջրոյն յուզելոյ (ՅՀ. ե. 3):
Հայցական – Զետ ոգի կլանել (Եզն. 90):
Զղջացաւ զամուսնանալն (Բուզ. Գ. 5):
Յառաջ քան չլինելն աչխարհի (ՅՀ. ԺԷ. 5):
Զի՞նչ եղիր ի մտի, լինել կցորդ կենաց իմոց, եթէ մնռանել (Ագաթ. § 100):
Նախդրավոր հարցական – Յամուսնանալն բռնադատեցաւ (Բուզ. Գ. 5):
Բացառական – Գտաք զսա զի արգելոյր ի տալոյ հարկս կայսեր (Ղկ. ԻԳ. 2):
Գործիական – Զայդ բանս ասելով եւ զմեզ թէչնամանս (Ղկ. Ժա. 45), Հանին նմա կոուիս ի գլուխն,
Հարկանելով զնա անհնարին (Ագաթ. § 105),
Գումարելով զգօրսն եւ հանելով զթէչնամին յաչխարհէ, ցուցանեն եթէ ոչ ըստ սահմանելոյ,
ինչպես՝ Հրամանի կոտորածն գործիցին (Եզն. 162):
Ներգոյական – Ի բառնալ տերութեանն յԱրտաւանայ,
ի սպանանել զնա Արտաչրի (Ագաթ. § 18):
Ի սերմանելն իւրում (Ղկ. ը. 5):

Գործիականը և ներգոյականը իրար հետ միասին գործածվում են հին վիպասանական մի հատվածում՝

Իբրև զսեզն Տրդատ, որ սիգալովն աւերեաց զթումբս
գետոց եւ ցամաքեցոյց իսկ ի սիգալով իւրում
զյորձանս ծովուց (Ագաթ. § 123):

Հաճախ աներևույթը ուղղական-հայցական անփոփոխ ձևով դրվում է, որևէ հոլովի փոխարեն, ինչպես՝ «եկն Մարիամ տեսանել զգերեզմանն» (Մտթ. Իր. 1), (փս. ի տեսանել).

Երկիրս երթալ անդր (Մտթ. Բ. 22), (յերթալոյ).
իշխանութիւն ունիմ արձակել զքեզ (ՅՀ. ԺԹ. 10), (փս. սեռ.):
Աներևույթը իբրև բայ առնելով վերցնում է
տրական ենթակա. ինչպես՝ Զիա՞րդ մարթի,
այդմ լինել (ՅՀ. Գ. 9): Լաւ է առն միում
մնռանել ի վերայ ժողովրդեանն (ՅՀ. ԺԸ. 14):
Կայ և հայցական՝ Ոչ եթող զնա հանապազ
խառն ի խուռն վարել (Եզն. 21):

* * *

Աչխարհաբարի դերբայական ձևերից է **անեղևույթի** *գործիականը՝ – լով. որ կարող է երկու նույն ժամանակի բայ միացնել. օրինակ՝ գնացի տեսա > գնալով տեսա. պիտի գնամ պիտի տեսնեմ > գնալով պիտի տեսնեմ:*

Այս ձևը չատ զարգացած է ինչպես թուրքերենում, նույնպես և ճապոներենում, ուր կա առանձին բայական ձև – և վերջավորությամբ և կոչվում է **ստորադաս** (subordinations form).

setomonoya ye **itte** hanaike wo **katte** nedan wo **haratte** uci ye kaerimāsta

(Հանճապակու խանութը **գնալով***, մի ծաղկաման* **գնելով***, գինը* **վճարելով***, տուն վերադարձայ* (Plaut, 14):

Այս ձևը սակայն նույնիսկ ածականների վրա է գործածվում. ինչպես՝ **սև նիհար ու տգեղ է** *ասելու փոխարեն ասենք՝* **սևով նիհարով տգեղ է:** *Այս ձևը չգիտեն հայերենը:*

ԱՆՑՅԱԼ ԴԵՐԲԱՑ

Կարող է գործածվել իբրև գոյական, իբրև ածական և իբրև բայ:

Առաջին դեպքում հետևում է **-ո** *հոլովման և կարող է գործածվել ամեն հոլովով.*

Ուղղական –
Սեռական – } *(օրինակներ չի բերում – Խ. Բ.):*
Տրական –
Հայցական – Թող գնեռևալս թաղել գնեռևալս իւրեանց (Ղկ. Թ. 60), փրկել դյուսացեալս իւր (Ագաթ. § 64):
Բացառական – Պարտ է նմա ի մեռելոց յառնել (ՅՀ. ի. 9):
Գործիական – } *(օրինակներ չի բերում – Խ. Բ.):*
Ներգոյական –

Իբրև **ածական** *գործածվում է իր հարադիր գոյականի հետ* **ետադաս** *և* **նախադաս** *և ըստ օրինի համաձայնում է կամ ոչ. ինչպես՝*

Ուղղական – Առեւծ քաղցեալ և գայլ ծարաւի (Առ. ԻԸ. 15). կինս այս ըմբռնեալ (ՅՀ. Ը. 4):
Սեռական – Կոտորած զօրացն հարելոց (Բուզ. Գ. 7):
Տրական – (օրինակներ չկան – Խ. Բ.):
Հայցական – Յաճախես ինձ զպատրաստեալ ուրախութիւնն Քրիստոսի (Ագաթ. § 55):
Վաղվաղակի զտուեալ հրամանս նորա կատարէր (Բուզ. Դ. 11). – Ածին առ նա... կին մի ըմբռնեալ ի չնութեան (ՅՀ. Ը. 3):
Բացառական – (օրինակներ չկան – Խ. Բ.):
Գործիական – Գայ Յիսուս դրօքն փակելովք (ՅՀ. Ի. 26):
Ներգոյական – (օրինակներ չկան – Խ. Բ.):

Հին Հայերենի սովորական ձևերից է **անցյալ** *դերբայի գործածութիւնը դիմավոր բայի հետ թէ՛ ներգործական և թէ՛ չեզոք նշանակութիւամբ. նրա ներգործական է, կարող է ունենալ սեռի խնդիր.*

Դիզեալ կային ամբոխ (Բուզ. Գ. 3):

Գտաւ յղացեալ ի հոգւոյն սրբոյ (Մտթ. ա. 18):

Ի գնաւդն որ անուանեալ կոչի Ամարաց (Բուզ. Գ. 6):

Յայնմ ամենայնէ ուրացեալ Հրաժարէր (Բուզ. Գ. 5):

Աւար առեալ զերկիրն ամենայն՝ քաջութեամբ դառնային (Ագաթ. § 23):

Տեսեալ զՀաւատան նոցա, ասէ (Ղուկ. ե. 20):

Այս պարագային դերբային վերաբերող ենթական կարող է լինել ուղղական կամ սեռական.

Նորա առեալ տանէին զնա (ՅՀ. ԺԹ. 17):

Զայն ամենայն տեսեալ Լիկիանոս զարմացաւ (Ագաթ. § 43):

Նորա ընկեցեալ զձորձս իւր յարեան առ Յիսուս (Մրկ. Ժ. 50):

Ասել և տեսանել *բայերի հետ, երբ դրվում է հայցական սեռի խնդիր և մի դերբայ, ստացվում է այնպիսի մի նախադասութիւն, ուր հայցականը դերբայի ենթական է, դառնում:*

Տեսին զնա յարձակեալ ի վերայ նոցա (Բուզ.):

Լիուղ... ուստի ասեն Յունաց իմաստունքն զարարածս արարեալ:
(Եզն. 235):

Դերբայը **եմ, լինիմ, եղանիմ** *օժանդակ բայերի հետ կազմում է* **բայի բաղադրեալ ձև,** *ներգործական և կրավորական իմաստով. ինչպես՝* **ծնեալ եմ, ծնեալ էի, ծնեալ իցեմ.** *և այլն:*

եմ– *Ի բարւոյ արարչէ արարեալ է (Եզն. 66):*

Հրամայեալ է յԱստուծոյ (Ագաթ. § 52):

Ժամանակ իմ չեւ է հասեալ (ՅՀ. է. 6):

Ոչ եմ մեռեալ է աղջիկդ, այլ ննջէ (Մտթ. Թ. 24):

իցեմ– *Արդ Հոտեալ իցէ (ՅՀ. ժա. 39):*

լիցիմ– *Թողեալ լիցին քեզ մեղք քո (Ղկ. Ե. 20):*

Մարմնաւոր լեալ է (Եզն., էջ 5):

եղէ– *(օրինակ չի բերում – Ա. Բ.):*

էի– *Զաչխարհն յինքեանս գրաւեալ էին ի ծառայութիւն (Ագաթ. § 47):*

Օժանդակ բայը այս դեպքում համախ դրվում է եղակի երրորդ դեմքով (որով վերածվում է անդեմ բայի), և այն ժամանակ ենթական լինում է սեռական.

Առ եկեղեցեաւն զոր չիննալ էր մեծին Գրիգորի, որոց տեսեալ էր զնա (ՅՀ. Թ. 8 և Բուզ. Գ. 1):

Վասն չարագործաց էր չինեալ զայն տեղի (Ագաթ. § 124).
(անորոշ ենթական. ֆրանսերեն on):

Կարելի է նաև դերբայ առանց օժանդակի.

Ես եմ Հացն կենդանի, որ յերկնից իջեալ (ՅՀ. դ. 51):

Եւ արդ եղեալ որոտումն յերկնից (Ագաթ. § 175):

Սովորական կանոնին հակառակ ձևով ունենք՝

Եւ ոչ որս երբէք՝ որպես մարտեան՝ արարեալ են վիշապաց,
կամ առնիցեն (Եղն., էջ 104).

ուր են հոգնակիի **աց**-*ի փոխարեն պիտի դրվեր* **ե***:

Ներկա դերբայը իբրև բայ ըմբռնվելով կարող է ստանալ սեռի խնդիր. ինչպես՝

Զարմացմամբ օրհնէր զԱստուած՝ զպարգևիցէ այնպիսի
զօրութիւն և ժուժկալութիւն մարդկան (Վրք. հց. ա. 382):

Այս ոճը հայկական չէ և գտնվում է միայն թարգմանական գրվածքներում: Այս դերբայի ներկան չլինելով հայերենում՝ հնարվել է մի նոր ձև համմտ.

Ամենայն իրողութիւնք լեալք եւ լինելով եւ լինելոց (Պղատ. Օրին., 354):

[ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ]

Դերբայները, նախադասության մեջ գործածված ժամանակ իբր բայ համարվելով, ստանում են **խնդիր** *և այդ խնդիրն էլ դրվում է այն հոլովով, որ հոլովով որ պիտի դրվեր, եթե այդ դերբայը դիմավոր բայ լիներ: Ստորև տալիս ենք մի քանի օրինակ դերբայական ձևերի, իրենց համապատասխան դիմավոր բայի հետ միաժամանակ.*

հյց. { *Այս գիրքը կարդացողը –*
Ով կարդում է այս գիրքը:

տր. { *Այդ մարդուն դիմողը –*
Ով դիմում է այդ մարդուն:

բց. { *Նրանից բան հարցնողը –*
Ով նրանից բան է հարցնում:

գրծ. { *Այդ միջոցով հարստացողը –*
Ով հարստանում է այդ միջոցով:

հգ. բց. { *Այդպիսի չարիքներից խուսափողը –*
Ով խուսափում է այդպիսի չարիքներից:

---

* *Այս մասին խոսում է Դուրեան, Ուսումն և քնն., 1935, էջ 187:*

հգ. գրծ. { *Այդպիսի դեղերով բուժող անձը –*
Այն անձը, որ բուժում է այդպիսի դեղերով:

ներգ. { *Այս հարկում բնակվողները –*
Ովքեր բնակվում են այս հարկում:

Երբ դերբայը իր բայական ուժը կորցնելով վերածվի գոյականի, այն ժամանակ խնդիրը կջնջվի և կվերածվի **հատկացուցչի.** *օրինակ՝*

Ֆրանսերեն le porteur de lettre, *բայց* celui que porte cette lettre. *Հայերեն ասում ենք՝ «այս նամակը (հայց.) կրողը», որովհետև* **կրող** *դերբայ է, իսկ ֆրանսերեն դնում ենք սեռ* de cette lettre, *որովհետև* porteur *գոյական է, հայերեն էլ ասում ենք՝*

Այս քաղաքում բնակվողները, բայց՝
Այս քաղաքի բնակիչները.

որովհետև առաջին դեպքում **բնակվող** *դերբայ է, երկրորդ դեպքում՝* **բնակիչ,** *գոյական:*

Նույնիսկ միևնույն բառը մի անգամ կարող է դերբայ լինել և մի ուրիշ անգամ գոյական՝ նայելով իմաստին, և ըստ այնմ փոխել խնդիրը: Օրինակ՝ Այս գաղափարը (հյց.) ծնողները նշանավոր մարդիկ են եղել: Կարապետի (սեռ) ծնողները աղքատ էին:

* * *

Կան լեզուներ, որոնք սիրում են նախադասության միայն հիմնական բայը դնել **դիմավոր,** *իսկ մյուս երկրորդականները՝* **դերբայներով,** *այս կարգի լեզուների մեջ առաջին տեղն է բռնում տաճկերենը. երկրորդ կարգին կարող ենք դնել եվրոպական լեզուներից լատիներենը* (Brentano 44), *ռուսերենը և այլն: Հայերենի մեջ՝ արևմտահայերը, մանավանդ Հները, հետևելով տաճկերենին, գործածել էին դերբայական ձևը, որ հիմա ընդունված չէ:*

* * *

Անցյալ դերբայը վրացերենում ևս կարող է ստանալ սեռական ենթակայ. օրինակ՝

[ხმა გავრცელდა როსაფის სახლი]
ხმა გავრცელდა როსაფის სახლი
լուր տարածվեց Ռոսափիի տունը:
[თარის დამწვარაო]
Ოთარი დამწვარიაო –
Օթարի այրածն է.
«Լուր տարածվեց, Թե Ռոսափիի տունը Օթարն է այրել» (Vogt 254–255):

Թև աներևույթը նույնն է գոյականի հետ, ցույց են տալիս այնպիսի օրինակներ, ուր մեկի տեղ մյուսը կարելի է գործածել. օրինակ՝ «զոհաբերելու ոչխար կամ զոհաբերության ոչխար». «պարսավանքի թուղթ» և «պարսավելու թուղթ» և այլն. բայց այնուամենայնիվ աներևույթը զուտ գոյական չէ և խընդրառությամբ հետևում է բային. օրինակ՝ կարելի է և պետք է ասել՝

«Զոհաբերում է այն ամենը, ինչ զոհաբերելու նա ընդունակ է». բայց կարելի չէ ասել՝

«Զոհաբերում է այն ամենը, ինչ զոհաբերության նա ընդունակ է» (Սիրաս, Զգրված օրենք, էջ 9):

Առաջին դեպքում **զոհաբերել** *իրրև* **բայ** *ստացել է հայցական սեռի խնդիր (ինչ) երկրորդ դեպքում զոհաբերություն իրրև* **գոյական** *կարող չէ ստանալ սեռի խնդիր, այլ առավելն պետք է ստանար* **ածական** *«Զոհաբերում է այն ամենը, ինչպիսի զոհաբերության նա ընդունակ է»:*

Այս կանոնի դեմ մեղանչելու սխալներ.

Սոքա պատմեցին մեզ, որ ականատես իսկ լեալ էին զտեսիլս զարմանալի (Գր. Դարանաղցի, Ժամանակագրութիւն, տպ. Երուսաղեմ, 1915, էջ 49): Կարելի էր ասել «տեսեալ էին զտեսիլս զարմանալիս» կամ «ականատես իսկ լեալ էին տեսլեանն զարմանալւոյ»:

Այսպես նաև ներկա դերբայը. օրինակ՝ **սպանող, այրող** *և այլն. տարբեր են՝* **իր սպանող հայացքը** *և* **իրեն սպանող հայացքը.** *առաջինի մեջ* **իր** *ստացական ածական է, ուղղական հոլով և պատկանում է* **հայացք** *բառին. իսկ երկրորդի մեջ* **իրեն** *հայցական է՝ սեռի խնդիր* **սպանող** *դերբայի: Առաջինում հայացքը* **իրն** *է, երկրորդում՝* **ուրիշի:** *Եթե ասինք* **սպանիչ,** *այն ժամանակ դերբայի հետ գործ չէինք ունենալ, ուստի կարելի կլիներ ասել միայն՝* **իր սպանիչ** *հայացքը, բայց ոչ՝* **իրեն** *սպանիչ հայացքը:*

Երբ դերբայը բարդ բառ է, ստացականի գործածությունը երկբայական է դառնում. օրինակ՝ հետևյալ հատվածի մեջ.

Ամեն մեկի հայացքում նա կարդում էր իրեն **սրտամաչող** *կասկածը (Սիրաս, Զգրված օրենք, 306):*

Այստեղ **կասկածը** *իրենն է, ուստի պիտի ասվեր* **իր** *սրտամաչող կասկածը, բայց այդ կասկածը մաշում է* **իրեն,** *ուստի ճիշտ է* **իրեն սրտամաչող** *ձևը. միևնույն ժամանակ* **իրեն** *կարող է առնվել* **սրտի** *համար, իբր թե* **իր սիրտը** *մաշող, բայց այն ժամանակ հարկ կլինի դնել* **իր** *և ստացականը պատկանած կլինի բարդության մի մասին, ինչ որ աննպատակ է. այս բոլոր երկդիմություններից դուրս գալու համար անհրաժեշտ է ասել «իր սիրտը մաշող կասկածը»:*

Պես *բառը անորոշ սեռականի հետ նշանակում է «անմիջապես որ». օրինակ՝* **ուտելուն պես** *գնաց: Այս ոճը զուտ թրքական է:*

Արևմտահայ բարբառում գոյականի նման ստանում է ստացական հոդ. այսպես՝ ուտելուս պես, ուտելուդ պես, ուտելուն պես, հոգնակի՝ ուտելնուս պես, ուտելնուդ պես, ուտելնուն պես. անսովոր է՝

ուտելներնուս պես, ուտելներնուդ պես, ուտելներնուն պես:

Արևելահայ բարբառում այս ոճը չկա, բայց արևմտյանի օրինակով վերջերս սկսեցին գործածել, սակայն առանց հոդի. ուտելու պես և այլն:

* * *

Դերբայները կրկնութեամբ գործածվում են իրր գոյական, նաև բացառականով, ինչպես՝

երթալ-գալը,
տանել-բերելու ժամանակ,
կերած-չկերած մեկ է,
կերածդ-խմածդ քեզի, տենածդ պատմէ՛,
առնել-տանելը մեկ ըրավ,
առնելու-տալու ատեն:

Անցյալ դերբայն էլ մերթ **դերբայ** *է և մերթ* **ածական,** *գործածութեան ժամանակ երբեմն չփոթում են այս երկուսը իրար հետ, օրինակ՝*

Տարված աշխատանքով՝ նա հաճախ չէր կարողանում գյուղ վերադառնալ (Սիրաս, Զգրված օրենք, 314):

Տարված *կարելի է առնել իրր* **ածական** *աշխատանքի, այսինքն այն աշխատանքով՝ որ տարված էր, բայց խոսքի մտքից հայտնի է, որ դերբայ է, իրր «զրավված»: Այսպիսի դեպքերում երկդիմութեան առաջն առնելու համար լավագույն է* **դերբայը** *դնել միշտ ետադաս, օրինակ՝ ասել վերևի դեպքում՝*

Աշխատանքով տարված՝ *նա հաճախ չէր կարողանում գյուղ վերադառնալ:*

Դերբայը առնվելով գոյականաբար՝ հոլովվում է, բայց զանազան հոլովների փոխարեն կարող է մնալ անփոփոխ, օրինակ՝ Նա արտասովոր պահանջ զգաց՝ տեսնել ու խոսել որևէ մեկի հետ (Սիրաս, Զգրված օրենք, 59), սեռ.

Արտակարգ ցանկութիւն զգաց ավելի երկար ու ավելի մտերմորեն խոսել նրա հետ (էջ 61), սեռ.՝ [խոսելու].

Սիրտ չարավ այլևս որևէ բան հարցնել (էջ 62), սեռ.՝ [հարցնելու].

Մուշեղի լրջութիւնը նրան զրկում էր ավելի առաջ գնալ (էջ 88), բացառական՝ [գնալուց].

Խուսափում էր մարդկանց, մանավանդ ծանոթներին հանդիպել (էջ 522), բացառական՝ [հանդիպելուց]:

Խնդիրը կարող է լինել թե՛ գոյականի ձևով և թե՛ բայի, օրինակ՝ քեզ սիրողը-քո սիրողը:

«Խոսրով Ա եղաւ Սասանեան տան Հզորագոյն դէմքը, յիշեցնող Հին արեմնեան Հարստութեան անուանի **արքաները»** *(Ակինյան, Եղիշե, Ա., էջ 250), ավելի լավ պիտի լիներ ասել* **արքաների,** *որից հետևում է, թե նախադաս ձևով պիտի լիներ Հայցական (***արքաները** *հիշեցնող), ետադաս ձևով՝ սեռական:*

Մինչև անգամ գործածուած կա **-իչ** *վերջավորութեամբ դերբայը՝ Հայցական խնդրով: Այսպես՝ Կոստանդին Բ Կաթողիկոսի սրբարանի արձանագրութեան մէջ (Հրտր. Սիսուան, էջ 108 ա.) կարդում ենք.*

«Յորում գլուխն պատուական
Նստիւր ի գահն պետական,
Հայրն Հանուր Հայոց լրման,
Որ Յիսուսի գալով փախան,

Յաջորդ գնդին սուրբ Գրիգորևան,
Լուսաւորչին ըզ Հայաստան.

փոխանակ ասելու Լուսաւորչին Հայաստանի: Այստեղ Թերևս հայցականը դրված է հանգի համար:

ԳՈՑԱԿԱՆ*

ԱնորոշուԹյունը հոգնակի կարտահայտվի օրինակ՝ **հինգերու կուգամ** *(հնխ.).* **աս օրերս, ան ատենները:**

– Երբ ամեն անգամ նույնն է՝ հոգնակի է՝ **գիշերները կը բանի, ցորեկները կը քնանայ:**

– Ընդհանրական – գաղափարներ կան, որ հոգնակի անհարմար է. «գետերից չոգիներ են բարձրանում»:

– **tabou** *է. սատանայ, գրող և այլն. որ կրսուի* **մենէ աղեկ.**

– Շնչավոր բառի մը տեղ դրվածն ալ սեռական-տրական սեռի խնդիր կառնե. Գուրգենը գնում էր Ռշտունենց ոստանը՝ իր սրտի հատորին գտնելու. երկրորդ անգամ կարդացի ձեր հատորը: Ուրեմն բառը չէ, որ հոլովվում է, այլ բառին իմաստը:

– **Վերացական** *բառերը* **հոգնակիի** *տեղ կը գործածվին իբր* **հավաքական.** *օրինակ՝*

Համդաչիմանի հասարակուԹյունը ներկա էր. ՈւսուցչուԹյունը բողոքում է. ՀոգևորականուԹյունը բացակայում էր. ԱչակերտուԹյունը դժգոհ է:

– Զի ետ զորդին իւր Աստուծոյ իւրոյ (Եփր. Մն., էջ 83):

– Գրծ. քաղաքաւք > քաղաքօք բանիւք > ի՞ւք Թե ի՞վք. համմտ. արհաւիրք, սեռ. արհաւրաց, ուրեմն աւ բաղաձայնի քով փոխված չէ ըստ analogie. *բայց ունենք նաև արհօրաց (Իգնատ. Ղկ. 272):*

– Գոյականն էլ ունի ներգործական և կրավորական. սպանուԹյուն – մահ, հաղԹուԹյուն – պարտուԹյուն:

Բառի յամառօտագրուԹեան և համառօտուԹիւն գրվածք *տարբեր բաներ են:*

անցողականի ձևեր.– Լամարթինի Ռաֆայել վեպում (Զմիւռնիա, 1867)՝ հասկցունել 62, կորուսընել «կորցնել» 63, վերցունել 60:

– Մի քանի առարկաների քննուԹյունները (թէև յուրաքանչիւր առարկայ մի քննուԹիւն ունի).

ԱԾԱԿԱՆ [–ԹՎԱԿԱՆ]

– Ամեննեն դժվար փոխառյալ բառերն են **Թվականները.** *սրա համար չատ դարմանալի է հայ բարբառների մեջ եռմիշ, սէքսէն, տօխսան Թվականների փոխառուԹյունը: Ըստ իս, սրա պատճառն է* **իծծուն** *և* **ուծծուն** *բառերուն նմանուԹյունը, որ չատ կը չփոթեցնեն. ուստի* **ուծծուն** *դարձուցած են* **սէքսէն,** *որից աղղված են նախորդ և հաջորդ Թվերը, որովհետև դժվար էր ըսել* **սէքսէն –**

* *Այս և հաջորդ բաժինների ձեռագրերից միայն պատառիկներ կան, որոնք Աճառյանը բերում է գծիկներով. բերում ենք նույնությամբ (Ա. Բ.):*

իննսուն, յոթանասուն – սէքսէն: *Մինչև այժմ ալ չատ կը պատահի նույնիսկ գրագետ մարդկանց մնջ, երբ* **ութսուն** *չեն հասկանում, պետք է բանել ուրիչ լեզուներով, որ հասկանան:*

– Թվական-ածական նարդիի մնջ կգործածվի պարակներեն՝ **վեցտասան** *(Նորագիւտ Յայտ, ԺԹ. 18):*

– «Զևոր» մեր մնջ ալ **հինգ** *գաղաբարն ունի. ինչպես՝* **ձեռք մը լաթ** *(որ նաև հասպես հինգ կտոր էր. փալեօ, ելեկ, չապիկ, վարտիք, փանթով):*

*– **Մեկ** թվականը կը ջնջվի և կըսվի. Արչին ու կնս, ժամուկնս, օր ու կնս, վերստ ու կնս և այլն:*

*– **կնս** բառը գոյական կառնե կամ՝ ոչ. ինչպես՝* **վերստ ու կնս, մեկ ու կնս վերստ:**

– Ժամացույցի հաչիվը. յոթ ու կնս, ութին կնս, երեքին բան է արել և այլն:

– Նոր Նախիջևանի գերադրականի համար չնչտ է դրվում, օրինակ՝ Կաֆմիր, Երկայն, Ձերմակ:

– Թվականի հետ հոգնակի կդրվի Նոր Նախիջևանի բարբառում **մոտավոր** *իմաստով. օրինակ՝ 3 գաղեր կ'նրթայ. 3 գաղեր առի. սահաթը հինգերու կուգամ:*

– Ածականը կրկնվելով կստանա գերադրական. Համմտ. իտալերեն il nostro amico ha due occhi neri neri *«չատ սև աչքեր ունի»:*

***– Մի քանի** չընդուներ հոգնակի. սխալ է բսել՝ մի քանի հոգիներ եկան:*

– Հետաքրքիր.

– Իգական ածական **մանկամարդ**, *բնավ* **տղամարդու** *հետ չի գործածվի:*

– Պաս եմ (ի պահս եմ), քուն է (ի քուն է) ներգոյական հոլովը ածական է դարձել:

– Կելտական լեզուների մնջ «երկրորդ» այլ բառ են ինչպես՝* alos, allos *«երկրորդ» հին* goneloi *լեզվով:*

– Սկովտերեն two three *նչանակում է* **մի քանի, մի քիչ** *(ինչպես Հայերենում՝ 2-3)* (Grant et Dixon, 105):

Դ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն

– Քաղաքավարական **Դուք** = **Հրամանքդ:** *Գերմաներեն՝ հոգնակի երրորդ դեմք. իտալացիք՝ եզակի երրորդ կամ հոգնակի երկրորդ. Հիմա տարածվել սկսաւ երկրորդ դեմքը. «պարոնը չի՞ փափաքեր». «Զևրդ մեծութիւնը կը ցանկա՞յ». «Զևրդ վեհափառութիւնը համաձա՞յն է»:*

– Հարաբերականը հարաբերյալին թույլ դնելու օրենքը կարելի չէ խստիվ գործադրել աշխարհաբարի մնջ, ուր չատ անգամ անկարելի է, օրինակ՝ «Թորոս Լևոնի» վեպը ներկայացնում է Թորոս Բ-ի ապստամբութիւնը Հունաց դեմ և Ռուբինյանց իշխանութեան վերականգնումը, **որ** *Լևոն Ա-ի գերութեամբ կործանվել էր: Կարելի չէ* **որ**-*ը դնել* **իշխանութեան** *թույլ. չատ տգեղ է բսել՝ «Իշխանութիւն, որ Լևոն Ա-ի գերութեամբ կործանվել էր, վերականգնումը». երկար է բսել. «... վերականգնումը, այն իշխանութեան, որ Լևոն Ա-ի գե-*

* *Բնագրում բառերի տեղը բաց է թողնված (Ն. Բ.):*

րութիւնով կործանվել էր». Թուրքի ոճ է ըսել՝ «և Լևոն Ա-ի գերութիւնով կործանված Ռուբինյան իշխանութեյան վերականգնումը»: Ուստի պետք է օրնք դնել, որ ուր **որ** *երկդիմութիւն չկա, կարելի է* **որ**-*ը հնոացնել, ինչպես վերի օրինակում, ուր կարելի չէ հասկնալ, թե «վերականգնումը կործանվեց»:*

– Երբեմն հարաբերյալը եղակի, հարաբերականը հոգնակի դնել պետք է լինում. այն ժամանակ **նմանները** *և այլն նույնը պետք է ավելացնել. օրինակ՝ Դիտում էի այն գեղեցիկ տեսարանը, որի նմանները (որպիսիները) հաճախ չեն պատահում այդ լեռներում:*

– Հարաբերականը դնելն հետո նորեն հայցական մը դնել սխալ է. օրինակ՝ Ինչ դրութեյան մեջ պիտի լինի իմ հայրենիքը, որը քանի-քանի տարիներ թշնամիները ոտնակոխ էին անում այդ երկիրը:

ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ*

– Համար-ը ցույց է տալիս թե՛ **պատճառ** *և թե՛* **նպատակ**: *Ինչո՞ւ համար «ի՞նչ նպատակով»: Բայի մոտ հոդը կը դանադանի երկու իմաստները.* **ուզելու համար** *«որպեսզի ուզէ, ուզելու նպատակով»,* **ուզելուն համար** *«ուզելուն պատճառով, ուզած ըլլալուն համար»:*

– **Բացի, դեպի** *կազմված են* **ի** *նախդիրով, որ հաջորդ բացառականին համար է: Գրաբարականները կգրեն* **բաց ի, դէպ ի.** *բայց ի զուր է, որովհետև առնք արդեն մեկ բառ կազմած են. համմտ. պարսկերեն դայրաչ, որ նույնպես* **բաց** *(դայր) և* **ի** *(բացառական աչ) ձևերն է: Իսկ* **ի** *սկիզբը նգած ժամանակ դեռ սովորութեյուն է անջատ գրել, թեև օր մը անչուշտ պիտի կցվի.* **ի դեպ, ի վեր:**

– **Քան**-*ը գոյականի հետ ալ կը դրվի, բայի հետ ալ և այլն: Ավելի կուլայ, քան կը ծիծաղի: – Երբ առարկան հիմա չկա, կրնա առնել* **էր.** *այս գիրքը ավելի մեծ է, քան այն (ներկա է). այս գիրքը ավելի մեծ է, քան այն գիրքն էր (չկա):*

– **Զի** *գոհասցեն վասն խորհրդոյն* **այնմիկ՝** *որ արար ծնունդներ ի մկրտութիւն աւազանին (Եփր. Մն., էջ 80),* **(վասն** *տրականով):*

– **Նախդրի կրկնութեյուն.** *Բացիր զբերան՝ ոչ զուղղոց զատուգոց զարդարոց զբաջաց զյաւաց զառաքինեաց, այլ զամպարշտաց զամբարհաւաճից զուրացողաց զհայհոյողաց (Եփր., Թգ., էջ 397):*

– **Դեպի**-*ն վերցնում է հայցական և ոչ տրական. «խոսքերը դարձնելով դեպի Աստծուն» չըսվիր, այլ՝ «դեպի Աստված»:*

– **Հակառակ** *նախադրութեյունը կամ* **գոյական** *է, իսկ ընդհակառակը* **մակբայ** *– ոմանք* **հակառակը** *գործ են ածում իբր մակբայ. սխալ և գեղջուկ է:*

– **«Մոտ»** *առնում է բացառական արարներեն, օրինակ՝ Մտթ. Իա 1. Իբրև մօտ եղեն յեմ... (Ձեռագիրը ընդհատվում է – Ա. Բ.):*

---

* *Ձճաոյանը* **նախադրութեյուն** *ասելով՝ նկատի ունի և՛* **նախադրութեյունները** *և՛* **ետադրութեյունները** *(կապերը), իսկ՝* **«նախդիր** *են կոչվում մի կամ երկու ևս երեք ձայներից բաղկացած այն* **բառիվները,** *որոնք իրրև բառ առանձին գոյութեյուն չունեն...»: Տե՛ս Հ. Աճառյան Լիակատար բերականութեյուն հայոց լեզվի, հտ. 5, եր., 1965, էջ 60 և հաջորդ (Ա. Բ.):*

* * *

Բայի ներկայի **կը, կ, կու** *մասնիկները. ոմանք միասին. ոմանք անջատ կը գրեն. վիեննացիք կը գրեն* **կու գամ, կու լամ, կու տամ.** *մինչդեռ արևմտյան գրականը միշտ միասին կը գրե:*

– Այն մասնիկները, որ արդեն գուտ մասնիկ ըմբռնված են, տեղը չեն փոխեր. իսկ որոնք որ դեռ բառ են, կրնան տեղը փոխել. օրինակ՝ **պիտի ըսիմ, ըսիմ պիտի. թող բերէ՛, բերէ՛ թող.** *բայց* **չբերի** *(չբավի՛ր* **բերի ոչ**): **Թօ/լա** *(թող ըլլա),* **թօ բերե,** *պիտի գամ և այլն. կարելի չէ չբջնել, որովհետև գուտ մասնիկ է, այնքան որ մինչև իսկ համաոտված դարձած է* **թօ.** *նույնիսկ* **թո՛ղ** *ձևը հոս վերացած է և տեղը դրված* **ա տուր:** *Ինչպես՝* **թօ անէ:**

– Անկատար ձևը խնդրական է. պիտի **խնդրեի,** *որ եթե կը* **հաճեի՛ք,** *ինձ 200 ոսկի փոխատվություն մը* **ընեի՛ք.** *կը* **փափաքեի** *հարցում մը ընել Ձեզ:*

– Ցրվել *կրավորական բայ չէ իբր* **ցրել** *բայի. որովհետև* **ու**–*ն արմատական է. օրինակ դրդել. դրդուել. գգուել և այլն: Կրավորական պիտի ըլլար* **ցրուըվիլ. ցրուիլ – չեզոք է:**

– Քաղաքավարական ձևը հոգնակին է. բայց բայեր կան, որ չեն ընդունիր հոգնակի. ինչպես՝ **կարծես, գրեթե, համարյա թե. գոգցես:** *«Թող ուտե», չբավիր՝ «թողնք ուտե». ռուսերեն* **пусть** *և ոչ բնաւ* **пустите:**

– Ընդհանուր իմաստով գործողությունը կպատմվի **մարդ** *(բառով, կամ երրորդ դեմքով. տեսնում են նրա գործերը և դատում.* **մարդ չիք՝ մարդ չկա.** *տեսնում և չի խոսում: Ռուսաց ձևով ոմանք սկսած են երկրորդ դեմքով պատմել. «Տեսնում ես նրա վատ արարքները, դիտում ես, բայց ի՞նչ անես, չեզուղ քեզ ես քաչում ու լռում»: – Այս ձևերը բնավ կարելի չէ հոգնակի դնել՝ իբրև քաղաքավարություն: – Սակայն շատ տգեղ կը լինի, եթե անվայել բառեր պատահի. ինչպես՝ «Տեսնում ես նրա արածը, զարմանում ես, էչ ես կորում, լռում ես, կամ չան նման գնում ես՝ քավում» և այլն:*

* * *

– Դերբայի սեռը անորոշ է. *չարժում կը նշանակե «չարժուիլը» և ոչ թե «չարժիլը», կրակի բորբոքումը (կրավորական). Թագավորին հայտարարությունը (ներգործական). Սիրելուց մնկնումը (չեզոք). Եապիայ մարգարեության մնկնությունը (կրավորական). քու մնկնությունդ չայծող չէ (ներգործական). Ասոր համար է, որ տարբեր սեռերի համար տարբեր* **բառ** *ունենք. ինչպես՝* **պարտություն** *(կրավորական),* **յաղթություն** *(կրավորական),* **յաղթութիւն** *(ներգործական): Ձուններ* **սիրումն սիրվումն:**

– Վերնագրերի մեջ [հիմնականում] բայ չի դրվիր, *և միշտ* **անորոշ** *կրավի. օրինակ՝ «Լևոնի փախուստ»* (և ոչ թե *Լևոնը փախաւ*). *«Գայլ ու աղվես»* (ոչ թե *գայլը խաբում է աղվեսին: Կան նաև բայով. ինչպես՝ «Թե ինչո՞ւ կը սիրեմ ժօլին և ոչ Ժիլին», «Թե ինչու ամեն գլխարկավոր բժիշկ չէ». առաջ ալ թեև*

բայ ունեն, նորեն սակայն անորոշութեամբ մը կը ներկայացնեն: Ավելի բայական վերնագրեր են. «Իսահակը օրհնում է Յակորին», «Աբրահամը բաժանվում է Ղովտից». առաջ ալ կարճ դեպքերում՝ իբրև կոնսպեկտ:

– Ձեղոքին ալ կրավորականը կա՝ հետևութեամբ թուրքերենին. օրինակ՝ ըլլըցուիլ, երգըցուիլ, տաճկերեն օլընտը. օգունդը:

– Բացասականին չ-ն շարքի մը մնջ կրնա կրճատվիլ. «Աղեկ պահե, չերթա ան ալ կորավի»: «Գաղութ մը պետք է, որ միչտ խմբական մնա, ու դանազան կողմ չցրվի, որով նորեն անհատականի չվերածվի ու կորավի»:

– Եթե երրորդ դեմքի բառ մը ուրիչ դեմքի տեղ դրված է, բայը վերջնույս դեմքով կըլլա. **Հրամանքդ կուզե՞ս զալ. ոչ թե կուզե զալ: Ծառադ կը փափաքիմ** պատկերդ քաչկ. ծառադ 6 տարի Եվրոպա մնացած է. գիչերները քունս ծախած և աչխատած եմ:

– Ռուսահայերեն **-ում** գնչ է անոր համար, որ կրնա ներգոյական հասկցվիլ. «Այն տղան լա՛վ է խաղում» (լավ կը խաղա, խաղի մնջ լավ է):

– Ոսկանի տպագրութեյան հետևեցին բոլոր ապագա հրատարակիչները. սխալ է. պիտի գրել ... պիտի հետևին բոլոր ապագա... կամ հետևեցին բոլոր հաջորդ կամ պիտի հետևին բոլոր ապագա...

-ում մասնիկի ծագումը կը ցուցնե. «Ահավասիկ մեք յողրումն և յաչխարումն եմք (կողրանք) վասն չարիդ, որ պատահեցաւ մեզ, եւ դու անփույթ կաս եւ ոչ յաս (Անկ. գիրք առաք., էջ 224):

– Առաջին դեմքով խոսել երրորդի տեղ. համմտ. թուրքերեն, արաբ. «Նեսվանլարը՝ պէօյիւք կէօրիւնեյիմ տէյու պէտէնինէ նաստըք պաղլարլար»:

Բայերի ժամանակները կարող են իրար փոխարինել օրինակ՝ անցյալ դեպքը պատմել ներկայով (գուցե **եկավ** – կարելի է կգա, իմաստով):

ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՑԼՆ

-Ուքիւն մասնիկը կշնջվի չատ անգամ. օրինակ՝ հեղինակավոր (ոչ թե հեղինակ՝ այլ հեղինակություն ունեցող). իշխանավոր, մեծավոր. բայց աստիճանավոր, գլխավոր և այլն կանոնավոր են:

-Ոց, անոց, նոց մասնիկը հազուստ կը չինե. օրինակ՝ կրկնոց, օթոց, թիկնոց, ձեռնոց, գլխանոց, վզնոց, գոգնոց, թևնոց:

-Ստան մասնիկը՝ վայրենի երկիր, իսկ **իա**՝ կրթված. ինչպես՝ Գերմանիա, Ռուսաստան, Հնդկաստան. բայց նաև Լեհաստան, Արաբիա, Եթովպիա և այլն: Պատճառը ծագում է. **որը արևելքեն ծանոթ է՝ ստան, որը արևմուտքեն՝ իա.** իսկ Ռուսիա–Ռուսաստան: Կա և **Քորէա:** Փորթուկալ, ճարոն, որ Ռուսահայք բրած են Պորտուգալիա, ճապոնիա:

Անարժեք և **անգին.** իրարու հականիչ են: – **Հետաքրքիր** և **հետաքրքրական** տարբեր բաներ են. սխալ գործածությունը ընդհանրացած է:

-Վի մասնիկը պետք չէ չփոթել **ածականին** հետ. եթե ջնջելով՝ մնա **բայ**՝ մասնիկ է, թե ոչ՝ բարդ՝ **լի** բառով, օրինակ՝ **հրաչալի** «հրաչքով լի», դի հրաչալ բայ չկա, իսկ **անմոռանալի**՝ ածանց է:

– **Տեղացի** *կազմելու* **-ի** *մասնիկը գանազան բառերի մեջ ջնջվում է. գյուղերինը չատը մնում է. ինչպես՝ Սամաթիացի, Թարարիացի, Սուեդիացի (ացի), և այլն, բայց՝ կեսարացի: Երկրները ոմանք* **այո**, *ոմանք* **ոչ**. *ինչպես՝ Ֆրանսացի, ապանացի, գերմանացի, Ճապոնացի, արաբացի, անգլիացի*, *գաղիացի, փոռթիացի, Հոլանդացի, իտալացի, քորեացի, բայց ռուսահայը ավելի պահելու կողմն են. ինչպես՝ Ֆրանսիացի:*

-իչ և ող մասնիկները. *նրանց գրավող երգերը. նրանց գրավիչ երգերը (տարբեր իմաստով):*

– *Այս օրիորդները Հիվանդանոցի մեջ ծառայելու պատրաստականություն ունեն, բայց պատրաստություն չունեն:*

– *Մենք ձեզ կուզեկցենք (և ոչ թե կուզևորենք):*

– *Ծտար ձայն չի կարող մտնել լեզվի մեջ. ուստի իզուր է ասել քայցօ, քայցօ և այլն:*

– *Դերբայով կազմած երկրորդական նախադասության ենթական կարող է ջոկ լինել. ինչպես՝* **Ինքը** *ծերացած լինելով / նրա որդին նստավ թաղավոր.– բայց կարծեմ ռուս. կասվի միայն. «որովհետև նա ծերացած էր, որդին նստավ...»:*

ՄԱԿԲԱՑ ԵՎ ԱՑԼՆ

– **Ներտե և ներեյե** – где *և* куда **ո՞ւր** *և* **յո՞** *տարբերություններ օրնցօր վերնալու վրա է. օրինակ Ֆրանսերեն օմ, գերմաներեն ue, Հայերեն՝* **ո՞ւր ես, ո՞ւր կերթաս,** *Թուրքերեն և ռուսերեն ունեն այս տարբերությունը, բայը էլի չէ ազդած նոր լեզուին վրա: Նոր Նախիջևանի ժողովրդական խոսվածքում ռուսերեն* где *կը յո՞* где пойдёшь*-ի համար ոմանց մտցրած (***որտե՞ղ է***) և* **ո՞ւր** *(***կերթաս***) տարբերություններ բոնի է: Կրնայինք մտածել և* **ո՞ւր** *(կերթաս) թե* **հոս և այստեղ, հոդ և այդտեղ, հոն և այնտեղ** *նույնպես կրնային գոյություն ունենալ, եթե պետք բլլար:*

– **Որ** *հարաբերականի քով չատ անգամ կրկնում են հարաբերյալը, եթե հետու ինկած է. «Մտիպված է բաղմաթիվ սխալներն ուղղել, սխալներ, որոնք սպրդած են լինում բնագրի մեջ՝ արտագրողների անզգուշությունից»:*

– **Մի փոքր** *իբր մակբայ կգործածվի. օրինակ* **մի փոքր** *նստի. բայց պետք չէ գոյականի քով ձգել. օրինակ՝* **մի փոքր** *հաց ուտելով քնել. այս պարագային կրնա հասկցվիլ* **հացը փոքր էր:**

– *Ջ պետք չկա գրել՝ չը կամ չ՝:*

– **Մինչև անգամ** *պետք չէ գործածել, երբ կա* **անգամ.** *«մինչև անգամ երկրորդ անգամ լուր տվի. գարձյալ չլսեց. բավ՝ Մինչև իսկ...*

– **Շնորհիւ** *և* **պատճառաւ,** *մեկը լավ բանի համար. մյուսը՝ դեչ.*

---

* *Անգլիացի (լի-ի բնդգծումը իրենն է – Ա. Բ.), բառի մեջ Աճառյանը լի-ն կատակով արմատ է համարում՝* **անգլ լի ա:** *(Տե՛ս մեր «Աճառյան մարդը և գիտնականը» գրքի, եր., 2005 «Զանգակ» հրատ., 219 էջը – Ա. Բ.):*

Շ Ա Ղ Կ Ա Պ

–Ալ կամ ել չնչտյալ կամ անչնչտ տարբեր իմաստ ունի. Եւփիմէն մի ընտիր բարեկամ ուներ, որ .... Թորոսն **ալ** *ուներ մեկ ծառա և այլն: Իսկ եթե ըսենք Թորոսն* **ալ** *ուներ մեկ ծառա՝ կհասկացվի, թե Եւփիմեն ծառա մը ուներ, Թորոսն* **ալ** *ուներ:*

*–***կամ.** *կրնայ գործածվիլ երկու բառի մեջ կամ՝ ոչ. եթե երեք բառ ըլլալ կրսենք՝ ջուր, գինի* **կամ** *օղի – ջուր կամ գինի և կամ (կամ թե) օղի:*

Սկիզբը եթե լինի՝ կը չնչտվի. կա՛մ ես, կա՛մ դուն:

կամ–*ին հարցականն է* **թե.** *ես թե՞ դուն. բայց ֆրանսերեն երկուքն ալ՝* ou:

*–***եւ**=**ու** *չարկապով* **ու**=**վ** *(Աստուած), մայր* **ու** *տղա, քոյր* **եւ** *ախպար. տասվերկու, տասվիրեք.*

– Հոմանիշների մեջ չատ անգամ **և** *չի դրվիր. կեղտոտ, պատռտած, ծվիկ-ծվիկ եղած ցնցոտիների մեջ:*

– Հաճնի բարբառում բայերի հետ **«և, բայց»** *իմաստով ունենք* **չէք՝** *գաձձի չէք իգի «գացի ու եկա». բիչտի* **չէք** *չգաձձի «պիտի երթայի, բայց չգացի»:*

Ձ Ա Ց Ն Ա Ր Կ ՈՒ Թ Ց ՈՒ Ն

– Խոսք մը կրնա այնքան կրճատվել, որ **ձայնարկութիւն** *դառնա, օրինակ՝ Ղարարադում՝* **ի՛** *«ինձ տուր». (Էն ջուրը ի՛): Նախիջևանում ի՞ «մի՞թե». (այս պարագային կպահև բառին չնչտը կամ չնչտերը. մի՞թե=ի՞):*

Երևանում՝ ես իմ՝ ես ի՞նչ իմանամ, չգիտեմ:

*Վանի բրբ. = այո (***խա** *< հա ձևեն կրճատ). ճիշտ, ինչպես՝ ֆրանսերեն* **oui** *ըսելու տեղ կա ձայնը խմելու ձևը:*

– Շատ գործածական բառեր կրճատվելով դառնում են ձայնարկութիւն. Շամշադինում՝ **ա՛ քած** *(կին, աղջիկ կանչելու ձև է) > որից հա՛քա, քա՛. նաև՝* **ծօ՛լու** > **ծօ՛**, ay gädä > ädä > **արա:**

Հ Ո Դ

– Պատմության մը մեջ առաջին անգամ հիշվածը **անծանոթ– անորոշ է,** *երբ երկրորդ և ավել անգամ կհիշվի, արդեն դառնում է* **ծանոթ՝ որոշիչ: Մուկ մը և կատու մը կար. մուկը ըսավ կատուին...**

– «Այս տեղեկութիւնները քաղած եմ ճեմարանի ուսուցիչներեն (ուրեմն բոլոր ուսուցիչներեն (կամ ուսուցիչներե» (ուրեմն մեկ քանի հատ են):

– «Բերելու համար» (որպեսզի բերե). «բերելուն համար» (որովհետև բերած էր):

– «Մատուռին մեջ գտնված երեք խաչքարերու տակ» (միայն 3 հատ չեն ուրեմն), իսկ «3 խաչքարերուն տակ» (միայն 3 հատ կա), գրաբար «ի ներքոյ երից խաչաքարիցն, է ի ներքոյ երից ի խաչաքարիցն»:

– Զարուհին ասում է. «քնից գալիս է Աննայի անկողին չինելուց»: (Շինողը Աննան է, իսկ երբ ըսենք **անկողինը՝** շինողը Զարուհին է):

– «Վարվելուս համար, վարվելու համար» (պատճառ, նպատակ):

Անորոշը չեշտ կառնն, որոչյալը՝ ոչ. **գա՛յլ** նկավ, գայլը **եկա՛վ**. բուռ այամ վանեցի մը չի հասկնա գա՞յլ եկավ, թե՞ գայլը եկա՛վ:

– Հայերենի հոդակապն է **ա, ե,** բայց օտար բառերի հետ առնում ենք նաև **ո** ինչպես՝ փիղիկո-մաթեմատիկական, էլեկտրոտեխնիկական, որոնք իրապես ամբողջական փոխառություններ են, ինչպես՝ կիլոգրամ:

ԵՐԿԻՄԱՍՏ ԽՈՍՔԵՐ

Ձիու վրա նստած կրնա՞նք հանել (նկարել – **Ա. Բ.**): Ձին վազցնելով սակայն: – Ո՞վ է նստած կամ կը վազցնե, պատկերահա՞նը, թե՞ նկարվողը:

– Կովկասի հասարակ ժողովրդի մեծ մասին ուսեւրենը չէ ավելի սովորական օտար լեզուն, այլ դարձյալ երբերենը (ՀԱ, 1891, էջ 3 բ): Պետք էր ըսել **մեծ մասին համար:**

Արաբկիրի, Տիվրիկի, Կյուրինի, Տարենտեի, ինչպես և Կեսարիո պատկանող բանի մը **գյուղերու հայերենը՝** ունենալով ընտիր հայ բառեր... (գյուղերը կպատկանեն Կեսարիո և ոչ մյուսներու, իսկ հայերենը՝ բոլորին):

Պաշտոնավարած եմ Շուչիի և Նոր Նախիջևանի թեմական դպրանոցը: (եթե ըսեմ **դպրանոց,** կը հասկցվի, թե երկուքը միասին մեկ դպրանոց ունեն: եթե ըսեմ՝ **դպրանոցները,** կկարծվի, թե Շուչին և Նոր Նախիջևանը ունեն մի քանի դպրանոց: Ձիկա կարճ ձև մը ըսելու, թե «Շուչիի դպրանոցը և Նոր Նախիջևանի դպրանոցը»):

Հիմարի պես վարվեցավ հետս (ո՞վ է հիմարը. վարվո՞ղս թե՞ վարվածը. պարզ կըլլա ըսել՝ **վարվեցավ հետս իբր հիմար, կամ իբր հիմարի հետ):**

«Ես Զարուհուն քեզնից ավելի կսիրեմ» (այսինքն ավելի կը սիրեմ Զարուհին, քան քեզ, կամ թե՝ «ե՛ս ավելի կսիրեմ Զարուհին, քան դու կսիրես»):

Կզարմանար անոր տանը և պարտեզին մեծութեյան վրա (մեծութեյունը միայն տա՞նն է, թե՞ նաև պարտեզին):

Նա սկսավ քննել գյուղերու տուները և առուները (առհասարակ առուները և ոչ թե գյուղերուն առուները):

12000 գերի բռնված էին ապստամբներեն (այսինքն՝ des insurgés, թե՞ par les insurgés):

Անհնարին էր մտնել ավստրիացոց բանակը (չէր հնար ավստրիացոց մտանել ի բանակն, կամ՝ չէր հնար մտանել ի բանակն Ավստրիացոց):

Կարելի՞ է ձեզ ուտել (Ձեզ համար կամ դձեզ): **(Կարելի է՞, որ Դուք ուտեք):**

Ներելի՞ է ձեզ խոսել այսպիսի խնդրո մասին **(ձեզ համար կամ ընդ ձեզ):**

– Կովում վիրավորվում ու մնռնում է (կովի մե՞ջ, թե՞ կովելով):

ԲԱՌԵՐՈՒ ՇԱՐՔԸ

– Տեսակ մը փայտե փայլուն զարդ *պետք չէ ըսել, դի հասկցվի* **տեսակ մը փայտ,** *այլ տեսակ մը փայտյա փայլուն* **զարդ** *կամ փայտե* **փայլուն տեսակ** *մը զարդ է և այլն:*

Տարբեր են՝ «Գրական առաջին շրջանի դասախոսություն» և «գրական շրջանի առաջին (ած) դասախոսություն»:

Աչխարհիկ ձևով շարված – *Մեք դմեր իշխան որո՞վ երևսօք տեսանեմք:*

Որ քո զօրքդ դիմ երկրիս զխորս ես կերեալ (է դար). (Մասխ, 1892, հոկտ. 10):

ՇԵՇՏ ԵՎ ԱՑԼՆ

Նոր Նախիջևանի բարբառում շէշտը առաջին վանկում իմաստը զորացնելու համար է. կա՛րմիր, դե՛ղին – չա՛տ կարմիր, չա՛տ դեղին. պահլավերենում նույնը վերջին վանկում է՝ կարմի՛ր, դեղի՛ն:

Ը Նշանը (պատիվ) *իբր իսկական պատիվ ըմբռնվելուն համար է [օրինակ՝ ած = Աստված, ը = սուրբ]:*

Բութ (՝) – Ծերենցը հայտնի է իր վեպերով. գրական մյուս սեռերին պատկանող նրա գործերը՝ հրապարակախոսություններն ու ճառերը այնքան նշանակություն չունեն: (Բութ նշանը կը ցուցնէ, թէ նրա գործերն են հրապարակախոսությունները և ճառերը, իսկ եթէ (,) ստորակետ լիներ, կիմացվեր հրապարակախոսություն, ճառ և այլն):

– Ուրիշի խոսքը դնելիս « » պետք է. բայց վեպերի մեջ երկու անձանց խոսակցությունը սովորաբար դնում են նոր տողով և մի – (գծիկ) քաշելով: Անգլիական վեպի մը մեջ «Պոմպեի վերջին օրերը», այս ընդգծված դրությունը և ամեն խոսք նոր տողով սկսած ու գծի տեղ չակերտներ դրված է:

– Տե՛ս նէլուն պես, լսե՛լուն պես. հետևությամբ թուրքերենի, ուր ունենք ալտրդը կիպի, քա՛չտրը կիպի (շէշտը առաջին վանկին վրա. հոս ը ձայնն ալ շէշտ կառներ մեր մեջ, մինչ այլուր անշէշտ է): Բայց շէշտ չունի ալտրդը՛ կիպի վերտի «առածի՛ն պես տվավ», ինչ ձևով որ առած էր, անաղարտ ետ տվավ:

– Խոնա՛րհաբար, մեծա՛պես, սա՛ստկապես, խրո՛խտորեն – կա՛ռնեն շէշտ մասնիկն առաջ, հետևությամբ ֆրանսերենի. բայց **ռամկորեն** *իբր գոյական՝ չունի շէշտ:*

– Առա՛ջին, ե՛րկրորդ, ե՛րրորդ, չո՛րրորդ, հի՛նգերորդ, վե՛ցերորդ, յո՛թներորդ, ո՛ւթերորդ, տասներկո՛ւերորդ և այլն, և այլն:

Հունարեն և լատիներեն հեղինակները ունեն Ἀρταεατα (Ստրաբոն). այս վերջին պատմիչն ունի և Αρταειασατα (XI, 14, 16) կցուցնեն Արտա՛շատ Արտա՛շարար (շէշտը վերջընթեր վանկին վրա):

– Լա՛վ երգ է, լա՛վ երգն՛ կլսվի միևնույն ձևով:

– Տողաղարձել հայ-նացք, թէ ոչ կկարդացվի հայ-յնացք:

– *Ձակերտը տողադարձ չըլլար. կետերը կպատկանին բառավերջին:*

Հարցնում է, թե «քանի տարեկան է»: Ձակերտը պետք չէ:

Հին տպագրության մեջ կային զանազան ձակերտներ. օրինակ՝ Պոլիս. 1717 թ. տպված Ոսկեբերանի Հովհաննու մեկնության մեջ Ավետարանից բերված հատվածները տրված են հունական խաչից հետո փակագծի մեջ, իսկ Թղթերից և հին կտակարանից նղածները՝ աստղանիշից հետո՝ փակագծի մեջ. այսպես՝ † (չեն է հասեալ...): Կամ՝ ·×· (ի հարւածս....):

*Նոր պարբերություն և նոր տող կսկսի միշտ աստղանիշով. այնպես որ առանց աստղանիշի վերջակետը միջակետ պետք է համարել. այսպես * բայց այս բան ...:*

– **Ա՛յլ** (չնչտով) = **ուրիշ**, *իսկ անչնչտ՝* **բայց.** *օրինակ՝ Ա՛յլ էր նրա վիշտը:*

– *Բութը անհրաժեշտ է ցուցականների համար. օրինակ՝ Մինչ այդ՝ պատանին լուռ էր. թե չէ կլլայ՝ մինչ այդ պատանին լուռ էր:*

– **Հարցական նշանը** *միշտ հարցված վանկի վրա պետք է դնել:*

– *Մի՝ չնչտով* ne!, *անչնչտ* un.

– *Սովորաբար կասվի՝ «արդյօք կերթա՞յ», ուրիչներ՝ «արդյո՞ք կերթայ»:*

– *«Սովորությունները կախված են հաչակից, և ժամանակի ու քաղաքակրթության հետ փոփոխվում են».- Այստեղ պետք է* **և**-*ից առաջ ստորակետ (,) դնել:*

– **Կոչականից** *հետո՝ միջանկյալ «ըսավ նա»-ից հետո դնում ենք ստորակետ (,), բայց հնչում, [որպես միջակետ]:*

Ախ *ու* **վախ** *բառերի վրա չնչտ չի դրվում, որովհետև գոյականներ են:*

Ց Ա Ն Կ Ե Ր

ԼԵԶՈՒՆԵՐ

Արխաղներեն – 139, 240, 242, 265
Ագնի (agni) – 266
Այրաններեն – 69, 89
Ալթայական – 240
Աղվաններեն – 153, 253
Ամերիկյան – 160, 164, 240
Անգլներեն – 15, 27, 29–31, 37, 39, 40, 43, 47, 52, 55, 57–60, 69, 73, 79, 101–104, 106, 108, 113, 114, 119, 125, 140, 141, 142, 147, 157, 158, 196, 198, 201, 202, 203, 222, 223, 226, 235, 238, 264, 265, 281, 283, 309
Անգլոսաքս(ոն)ներեն – 53
Աննամներեն – 69
Անջատական լ-ներ – 169, 224
Ասիական լ-ներ – 260
Ասորերեն – 13, 107
Ավստրասիական լ-ներ – 162
Արաբերեն – 13, 15, 28, 46, 47, 68, 77, 91, 109, 116, 123, 149, 150, 162, 191, 200, 221, 232, 236, 271, 274
Արամներեն – 221
Աֆղաններեն, տե՛ս Աղվաններեն

Բալթյան լ-ներ – 234
Բակաիրի (bakairi) – 49, 120
Բակի (baki) – 178
Բանտու – 160, 174, 176, 200
Բասկերեն – 118, 171, 222
Բելուջներեն – 153, 253
Բերբեր (berero) – 118
Բրբտոներեն, Բրբտոն (բրետոն) – 28, 224, 225, 281, 308, 313
Բրոկպա (brokpa) – 269
Բուլգարերեն, տե՛ս Բուլղարերեն
Բուլղարերեն – 158, 159, 245
Բուրյաթ-մոնղոլերեն – 205

Գաբարդիներեն, տե՛ս Կաբարտիներեն
Գալլերեն – 64, 70
Գերմանական լ-ներ – 80, 158, 202
Գերմաներեն – 19, 22, 24, 26, 27, 30, 37, 39, 40, 43, 48–52, 56, 60, 64, 69, 70, 75, 79, 80, 89, 101–104, 113, 119, 125, 141, 143, 147, 156, 157, 159, 165, 167, 171, 196, 198, 202, 221, 222, 223, 233, 240, 262, 265, 267, 272, 273, 282, 286, 288, 292, 309
Գնչուներեն – 32, 73, 74
Գոթերեն – 37, 49, 65, 70, 71, 119

Դանիերեն – 55, 73, 79, 104, 206, 222, 262, 271, 272, 273
Դրավիդյան լ-ներ – 155

Երբայեցերեն – 47, 141, 200, 270
Եգիպտացերեն – 313
Եվրոպական լ-ներ – 39, 79, 181, 208, 212, 241, 245, 273

Զենդերեն (զանդկերեն) – 57, 58, 65, 69, 70, 162, 171, 213

Էսկիմոսերեն – 121, 123
Էթրուսկերեն – 260

Թաթարերեն – 98, 264, 280
Թամի(ու)լերեն – 155
Թինգիթ (thingit) – 175
Թոխարերեն – 169
Թրքական լ-ներ – 264, 280
Թրքերեն, Թուրքերեն – 13, 14, 28, 29, 47, 52, 55, 64, 67, 68, 73, 78, 79, 84, 89, 93, 94, 97, 101–103, 109–110, 113, 114, 116, 142, 147, 149, 154, 166, 186, 191, 192, 198, 200, 208, 218, 234, 240, 261, 262, 280, 282, 290, 293, 298, 307, 309, 315, 326

Ինդոնեզիական լ-ներ – 28, 101, 103
Իլանդերեն – 64, 70, 119, 201, 202, 273
Իսպաներեն – 30, 37, 40, 45, 57, 78, 101, 118, 177, 236, 243, 264
Իտալերեն – 20, 22, 30, 44, 50, 60, 71, 73, 92, 101–103, 106, 119, 142, 174, 175, 177, 223, 265, 267–268, 271–275, 279, 280, 293, 297, 298
Իրանական լ-ներ – 102, 153, 169, 221

Լազերեն – 163, 312
Լակ – 174
Լանգդոնկ – 274
Լատիներեն – 14, 19, 20, 22, 24, 27

29–32, 37, 39, 40, 42, 43, 45, 47, 49, 50, 52, 53, 55, 57–60, 64, 65, 69, 70, 89, 105, 117, 119, 122, 143, 145, 147, 152, 155–157, 159, 162, 167, 169, 171–173, 180, 181, 182, 184, 188, 199, 201, 212, 219–221, 227, 231, 240, 244, 246, 249, 251, 267, 269, 318, 329

Լատիչներեն, Լեթթներեն } – 219

Լեհերեն – 157, 175, 176, 243, 310

Լիտվաներեն – 49, 69, 70, 71, 119, 120, 171, 213

Մալդներեն – 190, 260

Մալխա-մոնդոլներեն – 205

Մուրրի – 260

Կարաբդիներեն – 176, 218, 240, 266, 279

Կաբիլ (kabyle) – 172

Կամիներեն – 169, 221

Կատալան – 274, 297

Կատե (kāte) – 119

Կարիեր (carrier) – 160, 172, 240

Կելտական լ-ներ – 70, 188, 202, 322

Կիզրաթի (gizrati) – 173

Կիկույու (kikuyu) – 173

Կիմրերեն – 65

Կիչե (quiche) – 176

Կովկասյան լ-ներ – 139, 218, 260

Կվակիութլ (kwakiutl) – 164

Կրի (cri) – 173

Կունամա (kunama) – 244

Հաֆներեն – 179, 260

Հարավսլավական լ-ներ – 40

Հաուսա – 156

Հին Ավեստա – 234

Հին բարձր գերմաներեն – 64, 173

Հինդուստանի – 222, 242, 243, 270, 309

Հին իռլանդերեն – 52, 188, 201, 221

Հին իրանական լ-ներ – 306

Հին սլաբակերեն – 32, 182, 199, 206, 220, 229

Հին սլուսերեն – 69, 70, 162

Հին սլավոներեն – 29, 64, 65, 70, 119, 169, 176, 221

Հին փիմերեն – 188

Հին փրանսերեն – 70, 93, 103, 162

Հնդարիական լ-ներ, տե՛ս Հնդեվրոպական լ-ներ

Հնդեվրոպական լ-ներ – 200, 201, 223, 240

Հնդեվրոպական նախալեզու – 14, 21, 30, 31, 35, 36, 40, 49, 63–65, 70, 80, 89, 143, 147, 152, 156–159, 162, 165, 169, 171, 180, 185, 188, 190, 199, 203, 213, 214, 220, 223, 230, 234, 246, 250, 267

Հնդիկ-իրանական լ-ներ – 169

Հնդկերեն – 121, 251

Հոլանդերեն – 52, 53, 57, 187, 201, 202, 213, 246

Հունարեն – 14, 20, 24, 29, 32, 40, 42, 43, 45, 53, 57, 60, 64, 69, 70, 107, 110, 114, 119, 122, 142, 154, 156, 157, 159, 162, 166, 168, 169, 171, 173, 180, 182, 187, 199, 201, 203, 213, 215, 219, 220, 221, 231, 233, 234, 244, 245, 246, 249, 250, 267, 273, 294, 302, 303, 313, 329

Հունգարերեն – 200, 240, 281

Հուրոն (huron) – 121

Ճապոներեն – 115, 156, 160, 200, 201, 218

Ճավայերեն – 162

Մալայան լ-ներ – 240

Մալայերեն – 101

Մելանեզ(յան)իական լ-ներ – 120, 290

Մենգրելերեն – 161

Մենթավայ (mentawai) – 162

Միջին բարձր գերմաներեն – 173

Միվոկ (mivok) – 160

Միտաններեն – 260

Մոնղոլերեն – 205, 218, 256, 311

Յաագան (yaagan) – 142

Յուկի (yuki) – 160

Նագա (naga) – 100

Նամա – 118

Նգունա (nguna) – 290

Նորալատին, տե՛ս Ռոմանական լ-ներ

Նոր Հնդկական լ-ներ 251

Նոր Հունարեն – 57

Նորսոմերական լեզու – 174

Շվեդերեն – 70, 218, 222, 236, 271, 273, 303

Ջամ լ-ներ – 162
Ջնխներեն – 218, 264, 267, 284
Ջերոկի (cherokee) – 120
Ջիմշիան (tsimshian) – 163
Ջինարեն – 32, 122, 140, 141, 165, 200, 201, 218, 226
Ջինուկ (chinook) – 165, 172
Ջուվաչներեն – 47, 242, 265, 280

Պահլավերեն – 16, 32, 153, 170–172, 282
Պարսկերեն – 13, 32, 40, 41, 42, 44, 47, 52, 54, 55, 65, 67, 75, 84, 89, 92, 101, 103, 108, 114, 115, 142, 147, 149, 153, 172, 181, 182, 201, 202, 243, 263, 264, 280, 281, 282, 288, 290, 306, 307, 310
Պլե-տեմեր (ple-temer) – 162, 233
Պոլինեզյան լ-ներ – 160, 240, 269
Պորտուգալերեն – 175, 224, 243, 264, 265, 274, 287, 293, 396
Պրովանսալ – 22, 176

Ջավայերեն – 218, 280

Ռետոռոման – 177
Ռոլհ (rolh) – 267
Ռոմանական լ-ներ – 22, 297
Ռումիներեն – 176, 292
Ռուսերեն – 13–15, 20, 23, 24, 29, 30, 32, 34, 37, 41–43, 47, 52–54, 60, 64, 67, 70, 72, 73, 75, 78, 81, 89, 91–93, 97, 98, 100–103, 105, 106, 109, 110, 114, 123, 140, 141, 147, 149, 159, 172, 173, 175, 183, 184, 189, 196, 201, 202, 218, 224, 231, 233, 242, 245, 246, 261, 265, 266, 267, 279, 282, 297, 307, 318, 326

Սամոական լեզու – 269
Սանսկրիտ(երեն) – 32, 45, 49, 53, 64, 65, 69, 70, 101, 152, 156, 157, 162, 171, 199, 201, 202, 213, 215, 220, 221, 231, 246, 251, 267
Սանտալի (santali) – 161
Սեմական լ-ներ – 200, 206, 221, 293
Սերբերեն – 310
Սիոնան (sionan) – 219
Սլավոնական լ-ներ – 231
Սկոտերեն – 175, 322
Սպաներեն, տե՛ս Իսպաներեն
Սվահիլի – 200, 201
Սուիսլավան (suislawan) – 178
Սումերերեն – 71
Վապպո (wappo) – 160
Վաֆիր – 178
Վեղայական հնդկերեն – 230, 231
Վելշ (welsh) – 294
Վիյոթ (wiyot) – 176
Վոթյակերեն – 155
Վոլոֆ (volof) – 240
Վրացերեն – 98, 114, 163, 164, 189, 218, 226, 242, 260, 262, 266, 269, 282, 312, 313, 318

Տարնսարան – 160
Տակելմա (takelma) – 161
Տամիկերեն – 23, 41, 52, 92, 108, 116, 150, 204, 318
Տամաշեկ (tamachek)
Տուարեգերեն } *–172*

Ցվա – 176

Ուրիխ(երեն) – 139, 240, 266
Ուգրոֆիննական լ-ներ – 70, 200, 271

Փանջաբի (panjābī) – 171

Քաչմիրի – 240
Քրդերեն – 84, 89, 153, 245, 270, 271, 309
Քուչերեն – 206

Օյրոտերեն –
Օսերեն – 153
Օս(կ)երեն – 243

Ֆիններեն – 271, 306
Ֆիջի – 221
Ֆրանսերեն – 15, 18–20, 22–27, 29–32, 34, 35, 37–43, 45–50, 51–60, 66, 68, 69, 71–73, 75, 76, 78, 79, 84, 89, 93, 98, 100–110, 113, 114, 117, 119, 122, 125, 139, 140, 142, 143, 145, 147, 155, 157, 167, 183, 196, 198, 201, 203, 221, 223, 224, 226, 227, 235, 237, 246, 248, 261, 265, 266, 267, 269, 273, 274, 279, 280, 282, 286, 288, 292, 298, 299, 300, 307–310, 312, 316, 318
Ֆլորիդա – 178

ՀԱՑԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐ, ԵՆԹԱԲԱՐԲԱՌՆԵՐ ԵՎ ԽՈՍՎԱԾՔՆԵՐ

Ագուլիս – 88, 97
Ախալցխա – 71
Ակն – 81, 88
Առտիալ – 156
Ասլանբեգ – 190
Առափազար – 175
Արդվին – 263

Եվդոկիա – 150, 157
Երևան – 64, 67, 68, 88, 89, 147, 148, 190, 327

Թավրիզ – 40, 81, 88
Թրիլիսի – 89
Թևհրան – 55

Լոռի – 71

Խարբերդ – 90

Կարին – 81, 88, 89, 312

Հաճին – 18, 54, 98, 263, 294, 327
Համչեն – 67, 89, 95
Հունգարահայ – 190

Ղազախ – 81, 88

Ղարաբաղ – 14, 47, 54, 67, 90, 97, 102, 107, 150, 272, 324
Ղրիմ – 55, 108
Մարաղա – 40
Մեղրի – 102
Մուշ – 81, 88, 297

Նոր Նախիջևան – 47, 49, 52, 57, 88, 101, 147, 148, 154, 327, 329

Շամախի – 47, 67, 311
Շամչադին – 327

Պոլիս – 13, 47, 48, 54, 55, 68, 71, 78, 79, 81, 88, 89, 91, 94, 100, 147, 148, 150, 158, 175, 179, 182, 190, 191

Սեբաստիա – 70, 150
Սեղնջ (Բութանիա) – 35
Սյունիք – 47
Սվեդիա – 19, 35, 67, 68
Սուչավա – 147

Վան – 64, 81, 88, 89, 277, 327

Ուրմիա – 81, 88

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա. ԼԵԶՈՒՆԵՐ

(Բառասկզբում՝ հ = հին, մ = միջին, ն =նոր)

Աբխազ. – աբխազերեն
ալբ(ան). – ալբաներեն
աղվ. – աղվաներեն
անգլ. – անգլերեն
անգլոսաքս.
անգսք. } – անգլոսաքսոներեն
աննամ. – աննամերեն
աչխ. – աչխարհաբար
արաբ. – արաբերեն

բասկ. – բասկերեն
բելոռ. – բելոռներեն
բուլղար. – բուլղարերեն
բրետ(ոն). – բրետոներեն
բրբտոն. – »

գալլ. – գալլերեն
գերմ. – գերմաներեն
գնչ. – գնչուերեն
գոթ. – գոթերեն
գրբ. – գրաբար

դան. – դանիերեն
դրավիդ. – դրավիդյան

եբր. – եբրայեցերեն
եվր. – եվրոպական

ղնդ. – ղեռնդերեն

էսկիմ. – էսկիմոսերեն

թամիլ. – թամիլերեն
թրք. – թուրքերեն
թուրք. – »

իտլ. – իտալերեն
իսպան. – իսպաներեն
իտալ. – իտալերեն
իրան. – իրանական

լատ., լտ. – լատիներեն
լեզդ. – լեզգիերեն
լեթթ. – լեթթերեն
լեհ. – լեհերեն
լիթ.
լիտ(վան). } – լիտվաներեն
լտ. – տե՛ս լատ.

կամխ. – կամխերեն
կելտ. – կելտերեն, կելտական
կիմր. – կիմրերեն
կով. – կովկասյան
կորն. – կորներեն
կումուխ. – կումուխերեն

հաթ. – հաթերեն
II հյ.
I հայ. } – հայերեն
հիթիթ. – հիթիթերեն
հիտլ. – հին իտալներեն
հյ. – հայերեն
հն. – հունարեն
հնդ. – հնդկերեն
հլ. – հոլանդերեն
հնխ. – հնդեվրոպական նախալեզու
հպրս. – հին պարսկերեն
հպ.
հպրուս. } – հին պրուսերեն
հսլ. – հին սլավոներեն
հուն. – հունարեն
հունգ(ար). – հունգարերեն
հքիմր. – հին քիմրերեն
հֆր. – հին ֆրանսերեն

ճապոն. – ճապոներեն

միջ. հյ. – միջին հայերեն
մոնղոլ. – մոնղոլերեն

յապոն. – տե՛ս ճապոն.

նհն. – նոր հունարեն

չվ(եղ). – չվեդերեն

չեխ. – չեխերեն
չին. – չինարեն
չուվաշ. – չուվաշերեն

պահլ. – պահլավերեն
պհլ. – տե՛ս պահլ.
պորտ. – պորտուգալերեն
պրով. – պրովանսալ
պրս. – պարսկերեն

ռ. – ռուսերեն
ռոման. – ռոմանական
ռումին. – ռումիներեն
ռուս. – ռուսերեն

սանս., սնս. – սանսկրիտ
սեմ. – սեմական
սերբ. – սերբերեն
սլ. – սլավոն(երեն), սլավոնական
սլավ. – »
սլով(են). – սլովեներեն
սլովակ. – սլովակերեն

սկանդ. – սկանդինավյան
սնս. – տե՛ս սանս.
սվան. – սվաներեն
սում. – »
սումեր. – սումերերեն

վր., վրաց – վրացերեն

տճկ. – տաճկերեն

ուբխ. – ուբիխերեն
ուզբեկ. – ուզբեկերեն
օսմ(ան). – օսմաներեն

քրդ. – քրդերեն

փիւն. – փիւնիկերեն
փր., փրանս. – փրանսերեն

բ. ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐ, ԵՆԹԱԲԱՐԲԱՌՆԵՐ ԵՎ ԽՈՍՎԱԾՔՆԵՐ

Ասլ. – Ասլանբեգ
Ատ(ափ). – Ատափազար
Արբ. – Արաբկիր
Արդ. – Արդվին

Եվդ. – Եվդոկիա
Երև. – Երևան

Թավր. – Թավրիզ
Թր. – Թրիփոլի
Թհհ. – Թեհրան

Խրբ. – Խարբերդ

Կր. – Կարին

Հմ. – Համին
Հմշ. – Համշեն
Հունգ. – Հունգարահայ

Ղր. – Ղրիմ
Ղրբ. – Ղարաբաղ

Մղ. – Մեղրի
Մչ. – Մուչ
Մրդ. – Մարաղա

ՆՆխ. – Նոր Նախիջևան

Շմ. – Շամախի
Շմչ. – Շամչադին

Պլ. } – Պոլիս
Պոլ. }

Սեբ. – Սեբաստիա
Սչ. – Սուչավա
Սվեդ. – Սվեդիա

Վն. – Վան

Ուրմ. – Ուրմիա

գ. ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ՀՂՈՒՄՆԵՐ

Առաջարկվող հատորի օրինակների աղբյուրների համառոտագրությունները հիմնականում նույնանում են Արմատականի հղումների հետ: Այդ պատճառով գրական հին աղբյուրների համառոտագրությունների ցանկում աղբյուրների մատենագիտական լիակատար բնութագրում չի տրվում՝ հետաքրքրվողներին խորհուրդ տալով օգտվել «Հայերեն արմատական բառարանի» առաջին հատորի սկզբում դրված ցանկերից:

Արևելահայերեն գեղարվեստական գրականության օրինակները քաղված են երեք հիմնական աղբյուրներից՝ Հ. Սիրաս, Ձգրված օրենք («Անահիտ» վեպի նախնական անվանումը), Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, Դ. Դեմիրճյան, Վարդանանք՝ հիմնականում ցուցադրելու համար լեզվական չեղումները: Այս աղբյուրների համառոտագրությունները համատեքստից հասկանալի են ընթերցողին, այդ պատճառով ցուցակում չեն ընդգրկվում:

Ագաթ. – Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց
Անկ. գիրք առաք. – Անկանոն գիրք առաքելականք
Առաք. – Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ Պատմութիւն...
Արմ. – Արմատական բառարան
Բուզ. – Պատմութիւն Բուզանդ Փաւստոսի
Եղն. – Եղնկայ Կողբացւոյ... Եղծ աղանդոց
Եղն. խրատ. – Եղնկայ վարդապետի Խրատք...
Եփր. մատ. – Ս. Եփրեմի մատենագրութիւնք (ծն. ել ևն)
Եւս. պատմ. – Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ...
Ք.ր. – Եսերի Պամփիլիայ Կեսարացւոյ, Ժամանակականք (Քրոնիկան)
Թր. քեր.
Թրակ. քեր. } *– Արուեստ Դիոնիսեայ քերականի...*
Իգնատ Ղկ. – Մեկնութիւն Ս. Աւետարանին Ղուկասու՝ Իգնատիոսի վարդապետի
Խոր. – Մ. Խորենացւոյ Պատմութիւն Հայոց...
Կոր. – Կորիւն վարդապետի Պատմութիւն Ս. Մեսրոպայ
Մանդ. սիր. – Յովհան Մանդակունի, Յաղագս սիրոյ...
Մխ. բժշկ., Հեր. – Մխիթարայ բժշկապետի Հերացւոյ Ջերմանց Մխիթարութիւն
Մտթ. ևագր. – Մատթէոս վարդապետի ... Գիրք ութն խորհրդոց...
ՆՀԲ. – Նոր բառգիրք Հայկազեան լեզուի
Նչ.
Եզեկ. } *– Եսայի վրդ ... Նչեցւոյ ... Մեկնութիւն ...*
Ոսկ. – Ոսկերերան
Ոսկ. (պօղ.) – Յովհաննու Ոսկերերանի Մեկնութիւն թղթոցն Պօղոսի...
Պղատ. տրմ. – Պղատոնի Տրամախօսութիւնք
տիմ. – Պղատոնի առ Տիմէոս ...
տրմ. օրին. – Պղատոնի օրինաց և օրէնսդրութեանց...

ՍԳր. – Աստուածաչունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց
Ծն. – Ծնունդք
Ել. – Ելք
Թգ. թագ. – Գիրք թագաւորութեանց...
Ա. բ. եզր. – Եզր, գիրք ա, բ.

Առակք – Առակք Սողոմոնի
Սղ (մ.) – Գիրք սաղմոսաց Դաւթի
ժղ. ժող. – ժողովող
երգ. – երգ երգոց
ես. – Մարգարէութիւն Եսայեայ
Հռ. – Թուղթ Պօղոսի առաքելոյ առ Հռովմայեցիս
Յովել – Մարգարէութիւն Յովելայ
Միք. – Մարգարէութիւն Միքիայ
Մտթ. – Աւետարան ըստ Մատթէոսի
Մրկ. – Աւետարան ըստ Մարկոսի
Ղուկ.
Ղկ. } *– Աւետարան ըստ Ղուկասու*
Յհ. – Աւետարան ըստ Յովհաննու
Գծ. գործ. – Գործք առաքելոց
Կոր. ա. թ. – Թուղթ Պօղոսի առ Կորնթացիս
Եփես. – Թուղթ Պօղոսի առ Եփեսացիս
Թես. ա. թ. – Թուղթ Պօղոսի առ Տիմոթէոս
Տիմ. – Թուղթ Պօղոսի առ Տիմոթէոս
Սերեր. – Սերերիանոսի Եմեսացւոյ ճառք
Սեր. – Պատմութիւն Սերէոսի եպիսկոպոսի

Վրք. Հց. – Վարք սրբոց Հարանց...
Փարպ. – Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց
Փիլ. – Փիլոնի Հերրայեցւոյ ճառք
Փիլ. սամփս. – Փիլոնի առանց պատրաստութեան ի Սամփսոն

դ. ԱՅԼ Ք

անձ. բառ. – Անձնանունների բառարան
աչխ. – աչխարհաբար
արք. – արքեպիսկոպոս
բաց.
բց. } *– բացառական (հոլով)*
բնձ. – բնաձայնութիւն, -ական
գավ.
գվռ. } *– գավառական*
գիտ. աչխ. – գիտական աչխատութիւններ
գործ.
գրծ. } *– գործիական (հոլով)*
եժ. – երկերի ժողովածու
եպս. – եպիսկոպոս
եր. լիակ. ժող. – երկերի լիակատար ժողովածու
երկ. – երկեր
երկաս. – երկասիրութիւններ
ընկ. – ընկեր
թրգմ. – թարգմանութիւն, -ական
ժող. – ժողովրդական

ինչ. – ինչպես
Ծան. – ծանոթագրություն
հարգ. – հարգական
հ.
հտ. } *– հատոր*
հգ., տե՛ս Հոգ
համմտ. – համեմատե՛լ, -ի՛ր
հյց. – հայցական (հոլով)
հոգ. – հոգնակի
հրմ. – հրամայական
հրտր. – հրատարակություն, հրատարակված (է) ևն
ներգ. – ներգոյական (հոլով)
նախ. – նախապես
նշանակ. – նշանակություն, -թյամբ, նշանակում է ևն
պատմ. – պատմական (հոլով)
պետ. համլս./համ. – պետհամալսարան
սեռ. – սեռական (հոլով)
վրդ. – վարդապետ
տպ. – տպագրություն, -գրված
տր. – տրական (հոլով)
փխբ. – փոխաբերություն, -աբար
օր. – օրինակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրաչյա Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» մենագրության «Իմաստաբանություն, Բառաքննություն, Եարահյուսություն» հատորը 5

ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 9

Իմաստ 11

Բառի իմաստը 13

Իմաստի փոփոխություն 14

Իմաստի տարատեսություն 15

Սխալ իմաստ 16

Բազմիմաստություն և համանմանություն 18

Բառերի նախանշանակությունը 20

Բառի [արտաքին ձևի] և իմաստի հարաբերությունը 21

Իմաստի փոփոխության ժամանակը 26

Հակառակ իմաստ 27

Բառերի իմաստի փոփոխություն նյութականից վերացական 29

Մասնավոր և ընդհանուր փոփոխություն 30

[Անպայմանականը և պայմանականը] 31

Իմաստի հարաբերականությունը 33

Նոր իմաստի տարածումը 35

Իմաստի փոփոխության պայմանները 35

Իմաստի փոփոխության դասակարգությունը 36

Նմանողությամբ անվանում 39

Սեռը դառնում է տեսակ 40

Տեսակից տեսակ 40

Տեսակը դառնում է սեռ 40

Բառի իմաստի [փոխվելը տեղափոխությամբ] 41

Մասնավորից ընդհանուր 41

Ընդհանուրից մասնավոր 43

Իմաստի մեջ դպայնությունը 44

Քաղաքավարական բացատրություն կամ պարկեշտաբանություն 47

Իմաստի մեղմություն 47

Հեգնանք 48

Դրականը բացասական 48

Աստիճություն 49

Գրվական բառեր 50

Իմաստի բարձրացում կամ ազնվացում 50

Նախատական կամ արհամարհական լեզու 51

Ստորացում կամ հոսեցում 51

Նշանակության աստիճաններ 54

Տարանշացում 54

Սխալ թարգմանություն 55

Փոխաբերություն 55

MÉTONYMIE [փոխանունություն], SYNECDOQUE 57

Մասը ամբողջի տեղ 57

Պարունակողը պարունակյալի տեղ 58
ELLIPSE [կրճատում, դնդչում] 59
ԲԱՌԱԴԱՐՈՒԹՅՈՒՆ 61
Մուտք 63
Արմատ 63
Անպարկեշտ և պարկեշտ բառեր 66
Ժողովրդական բառեր 68
Նախատական բառեր 68
Արգելված բառեր 69
ARGOT 71
Մածկալեզու 73
Մածկալեզվի ձևեր 73
Մածկալեզուներ 74
Սրախոսություն 76
Կատակ 78
Կատակով բառեր 79
Բնաձայն բառեր 79
Մանկական բառեր 80
SUBSTRAT 90
Գավառական բառեր 90
Ժողովրդական խոսքեր 91
Առած 93
Ասացվածք 95
Հոմանիշներ 95
Հոմանիշների չարքեր 100
Համանուն 101
Փոխառյալ բառեր 101
Միջազգային բառեր 103
Նորակերտ բառեր 104
Բարդ բառ 106
Մասունք բանի փոխանակություն 107
Մարդու անունից բառ 108
Տեղանունից բառ 109
Բացարձակ և Հարաբերական, պայմանական 111
Լեզվի կապը տրամաբանության հետ 115
Սեռ և տեսակ բառի մեջ 117
Բառի Հորինման պատմություն 121
Բառերի Համախմբականություն 124
Բառերի անՀատականությունը 132
Բառը նախադասության մեջ 140
Իրականության երեք ձևերը 141
Անհատական բառապաշար 141
Լեզվի Հիմքը նյութական է 143
Նախ գաղափար, Հետո բառ 143
Բառերի կյանքը 145
Բառերի մրցում 145
Բառերի ինքնամբ [մահը] 146

[Տեղաշարժեր բառապաշարում] 149
Արմատների կորուստը 151
Բառերի կորուստը 153
Անվան փոփոխում 154
[Բառ և մասնիկ] 155
Միջամասնիկ 161
Նախդիր և բայ 163
Նախամասնիկ 163
Ածանցում 166
Գոյականից կամ ածականից կազմված ածանցները 167
Մասնիկները [Հին Հայերենում] 168
[Փաղաքշական, նվաղական և առավելական մասնիկներ] 170
ՀԱՎԵԼՎԱԾ 179
Դիտարկումներ առանձին ածանցների վերաբերյալ 179
-ագին 179
-ած 179
-ական, -կան 179
-ակ, -իկ, -ուկ, տե՛ս [փաղաքշական, նվաղական և առավելական մասնիկներ] . 180
-ակն 180
-աղ 180
-ային 180
ան- 180
-անի 181
-անոց, -ոց 181
ապ- 182
-ավ, -ով, -իվ 182
-ավոր 182
-ար 183
-արան 183
-ացի, -եցի, -ցի 183
-եղ 185
-եղեն 185
-ենի 185
-եւ (և) 185
-երեն 185
-եցի, տե՛ս -ացի 186
-եք 186
ընդ- 186
-ի 186
-իկ, տե՛ս -ակ 186
-ին 186
-իչ 186
-իվ, տե՛ս -ավ 187
-կան, տե՛ս -ական 187
-ճան 187
-յա 187
-յան 187

-յուն ... 187
-չի ... 187
-ո ... 187
-ով, տե՛ս -ավ ... 187
-ովին ... 187
-ոտ ... 188
-որդ ... 188
-ոց ... 188
-ոք ... 188
-չյա ... 188
-ված ... 188
ու- ... 188
-ցի, տե՛ս -ացի ... 189
-ու ... 189
-ուքյուն ... 189
-ուկ, տե՛ս -ակ ... 190
-ուհի ... 190
-ուան ... 190
-ույն ... 190
-ուն ... 190
-ունի ... 191
-ուտ ... 191
Թրք. փոխառյալ մասնիկներ ... 191
ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ... 193
Նախադասության կազմը ... 195
Ձեղյալ նախադասություն ... 197
Անվանական նախադասություն ... 199
[Բայական նախադասություն] ... 200
Անկախ նախադասություն ... 204
Համադիր և անհամադիր նախադասություններ ... 205
Անկանոն նախադասություններ ... 206
Կիսատ նախադասություն ... 208
Անհարիր նախադասություն ... 208
Միջանկյալ նախադասություն ... 208
Հարաբերական նախադասություններ ... 208
Երկրորդական և հարաբերական նախադասություններ ... 212
Ստորադասական նախադասություն ... 215
Բացասական նախադասություն ... 215
Հարցական նախադասություն ... 217
Շարադասություն (բառերի չարքը) ... 219
Համաձայնություն ... 223
Բառանջատ ... 225
Բառերի չարքը ... 225
Նախադասությունների չարք ... 228
Դնման փոփոխություն ... 228
Բառերի տեղը և համաձայնությունը ... 229
Տոնի գործածությունը ... 230

CATACHRÈSE 232
ELLIPSE (դեղչում, բացթողում) 232
[Նախադասության անդամներ] 233
Ենթակա 233
Սեռի խնդիր 236
Բնության խնդիր 236
Հատկացուցիչ 237
Բացահայտիչ-բացահայտյալ 238
Ստորոգյալ 239
Հոլովներ 239
Ուղղական 239
Սեռական 239
Տրական 241
Հայցական 242
Տրական և Հայցական 244
Ներգոյական 244
Կոչական Հոլով 244
Հոլովների գործածություններ 245
[Ուղղական] 245
Սեռական 246
Տրական 248
Հայցական 249
Բացառական 251
Գործիական 253
Գործիականը դանազան նախդիրներով 255
Ներգոյական 255
Հոլովական ձգողություններ 256
Թիվ 261
Հոգնակի 261
Հոգնակի-եզակի 263
Ածական 263
Ածականը գոյականի հետ 264
Ածականի տեղը 264
Ածականը գոյական 265
Ածականի տեղը գոյական 266
Ածականի համաձայնություններ գոյականի հետ 267
Ածականի աստիճանները 268
Գերադրական 268
Գոյականն իբրև ածական 269
Ածականի համաձայնություններ 269
Ածականի խնդիրը 270
Գոյական և ածական 270
Հոդ 271
Մի անորոշ հոդ 272
Թվական 278
Դասական թվական 278
Միւս (մյուս) 279

Մի 279
Թվականի տեղը 279
Թվականի հոգնակին 281
Մասնավոր պարագաներ 281
Թվականի համաձայնություններ 282
Հարաբերական 282
Որ 283
Որ-ի սխալ գործածություն 283
Հարաբերականի տեղը 283
Անորոշ անուններ 285
Անորոշ-ամեն 285
Կես 285
Անորոշ ածանց 287
Ուրիշ և միւս 287
Անորոշ 287
Ոմն 288
Իմն 288
Կէսք 288
Միւս և ուրիշ 288
Դերանուն 289
Անձնական դերանուն 290
Դերանվան տեղը 291
Ցուցական և ստացական 291
Ս, Դ, Ն 293
Ցուցական 294
Բայ 294
Ժամանակների փոխանակություն 294
Էական բայ 295
Ապառնի 296
[Պիտի] 297
[Հաստատական և բացասական] 297
[Բայի ժամանակները] 298
Բայի տեղը 298
[Հարակատար և ապառնի] 298
Ժամանակի սխալ 299
Բացասական բայ 300
[Ներկա՝ ապառնիի փոխարեն] 300
Եղանակները հայերենում 300
Կատարյալ և դերակատար 301
Ստորադասական 302
[Ստորադասական և ապառնի] 303
[Բայական դարձվածներ] 305
Բարդ ձևեր 306
Բայը իր խնդրով 307
Ներգործական և կրավորական 308
Հարցական 308
Ստորադասական անցյալ 309

Հրամայական 309
Ապրելական 311
Դերակատար 311
Կատարյալ 311
Անկատար 312
Պատմական ներկա 312
Անսովոր 312
Հոլովյալ բայ 312
Դերբայ 313
Անեղևույթ 313
Անցյալ դերբայ 315
[Դերբայների գործածություններ] 317
Գոյական 321
Ածական [—թվական] 321
Դերանուն 322
Նախադրություն 323
Բարդություն և այլն 325
Մակբայ և այլն 326
Շաղկապ 327
Ձայնարկություն 327
Հոդ 327
Երկիմաստ խոսքեր 328
Բառերու չարքը 329
Շեչտ և այլն 329
Ցանկեր 331
Լեզուներ 333
Հայերեն բարբառներ և խոսվածքներ 336
Համառոտագրություններ 337
ա. Լեզուներ 337
բ. Հայերեն բարբառներ, ենթաբարբառներ և խոսվածքներ 338
գ. Օրինակների հղումներ 339
դ. Այլք 340
Բովանդակություն 343

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԲԱՌԱՓՆՈՒԹՅՈՒՆ
ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Տեխնիկական խմբագիր՝ **Վ. Զ. Բդոյան**

Կազմի ձևավորում՝ **Գ. Վ. Մարիկյան**

Համակարգչային շարվածքը
և ձևավորումը՝ **Ֆ. Շ. Վարդանյան**

Սրբագրիչ՝ **Վ. Վ. Դերձյան**

Ստորագրված է տպագրության՝ 31.10.05. Ֆ.: Չափսը՝ 70×100 1/16
Թուղթ՝ օֆսեթ: Տպագրություն՝ օֆսեթ:
Հրատ.՝ 25.0 մամուլ: տպագր. 22.0 մամուլ+28.6 պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 300: Պատվեր՝ 50-1:

Երևանի Համալսարանի Հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Երևանի Համալսարանի տպարան, Երևան, Աբովյան 52

Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հովանավորությամբ Երևանի համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել հետևյալ գրքերը

1. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 3, 1998:
2. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 4, 1998:
3. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 5, 2001: (Բառարանը 2002 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին «Մարդկային զարգացման և հումանիստական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ծեռքբերված նվաճումների համար»):
4. **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ** - Տիեզերական պատմություն (աշխարհաբարի վերածեց Վ. Վարդանյանը), 2000 թ.:
5. **Հրաչյա Գաբրիելյան** - Հայկական լեռնաշխարհը, 2000 թ.:
6. **Ալեքսանդր Մարգարյան** - Հայերենի հոլովները, 2000 թ.:
7. Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, աշխատասիրությամբ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի, Եր., 2001 թ.:
8. Շարական (ժողովածու) - Աշխարհաբարի վերածեցին **Ա. Մադոյանը և Գ. Մադոյանը**, 2001 թ.:
9. **Հրաչյա Միրզոյան** - Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, 2001 թ.:
10. **Ռուբեն Ղազարյան** - Միջին գրական հայերենի բառապաշարը, 2001 թ.:
11. **Բաբկեն Հարությունյան** - Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի», 2001 թ.:
12. **Վարդան Արևելցի** - Տիեզերական պատմություն, (աշխարհաբարի վերածեց Գ. Թոսունյանը), 2001 թ.:
13. **Գևորգ Մադոյան** - Գրիգոր Անավարզեցին շարականագիր, 2001 թ.:
14. **Գևորգ Աբգարյան** - Հայ տպագրության նախապատմություն, 2001 թ.:
15. **Փայլակ Անթապյան** - Հովհաննես սարկավագ Իմաստասեր, 2001 թ.:
16. **Յոզեֆ Կարստ** - Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, 2001 թ.:
17. **Ռաֆայել Մաթևոսյան** - Կուբան ապագայի որոնումներում. իրադարձություններ և դասեր, 2001 թ.:
18. **Խաչիկ Բադիկյան** - Ուսումնական դարձվածաբանական բառարան, 2002 թ.:
19. **Հրաչյա Գաբրիելյան** - Հայոց բնաշխարհը (դասագիրք), 2002 թ.:
20. **Էդուարդ Աղայան** - Լեզվաբանական հետազոտություններ, 2003 թ.:
21. **Արտակ Մովսիսյան** - Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթը, 2003 թ.:
22. **Հրաչյա Աճառյան** - Քննություն Կիլիկիայի բարբառի, 2003 թ.:
23. **Պիոն Հակոբյան** - Գիտական ուսումնասիրություններ, 2003 թ.:

24. **Աշոտ Սուքիասյան** - Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան (2004 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին «Մարդկային զարգացման և հումանիտարական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ձեռք բերված նվաճումների համար»), 2003 թ.:
25. **Երջանիկ Գևորգյան** - Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան (Շարժութաբան), 2003 թ.:
26. **Հայնրիխ Հյուբշման** - Հայերենի քերականություն, առաջին մաս, Հայերենի ստուգաբանություն, 2003 թ.:
27. **Հայնրիխ Հյուբշման** - Հայագիտական ուսումնասիրություններ, 2004 թ.:
28. **Ալեքսանդր Մարգարյան** - Հայոց լեզվի քերականություն (Շևաբանություն) 2004 թ.:
29. **Ռամազ Գորգաձե** - Հայերեն-վրացերեն զրուցարան, 2004 թ.:
30. «Ժուռնալ Ազիատիկ» հանդեսի հայագիտական նյութերի ծանոթագրված մատենագիտություն, 2004 թ. (ռուսերեն):
31. **Հրաչյա Աճառյան** - Հայոց պատմություն, հյուսված ընդհանուր պատմության հետ, 2004 թ.:
32. **Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէր** - Լուծմունք «Սահմանաց գրոց», 2004 թ.:
33. **Սանդրո Սարդարյան** - Հայաստանը քաղաքակրթության օրրան, 2004 թ.:
34. **Կարէն Իւզբաշեան** - Աւարայրի ճակատամարտից դէպի Նուարսակի պայմանադրութիւնը, 2005 թ.:
35. **Հարություն Դելլալյան** - Ժողովածու, 2005 թ.:
36. **Բախտիար Հովակիմյան** - Հայոց ծածկանունների բառարան, 2005 թ.:
37. **Գառնիկ Անանյան** - Ակնարկներ հայոց հին և միջնադարյան հրապարակախոսության, 2005 թ.:
38. **Վահան Տեր–Ղևոնդյան** – Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները (1145-1226 թթ.), 2005 թ. (ֆրանսերեն):
39. **Գառնիկ Ստեփանյան** – Երգնկա (Հնագույն դարերից մինչև մեր օրերը), 2005 թ.:
40. **Հրաչյա Աճառյան** – Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզուների / Իմաստաբանություն. Բառաքննություն. Շարահյուսություն), 2005 թ.:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220090693

A II 90693